



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1670

9(47-925)

W-20

169 - 170





9(47,925)

Ա-20

Ա-70

Ա-11

ՄԵՐ ԴԵՊՔԵՐԸ

ՎՍՍՊՈՒՐԱԿԱՆՈՒՄ

Կարգ-հարկային
1914—1915

ԹԻՆԿԱՆՆԵՐԻՆ

1005
20847



Երևան

Տպարան «ԼՈՅՍ» Բենբուդեան փող. № 12

1917



80622-4-2

2004

183-899

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Այն զէպքերը, որ տեղի ունեցան Տաճկաստանի հայաբնակ Քոլոր շրջաններում ներկայ համաերոպական պատերազմի ընթացքում, կազմում են Հայ ցեղի տարեգրութեան գերագոյն էջը:

Հայ ցեղը իր գոյութեան ընթացքում շատ անգամ է տեսել աղէտներ, նրա գլխով շատ են եկել ու անցել ջարդերի ու գաղթների փոթորիկներ և նա շատ անգամ է ապրել ծանր տառապանքների օրեր, բայց ներկայ աղէտը, կարելի է ասել, բացառիկն է եղածների մէջ:

Միւս կողմից հայ ցեղը իր գոյութեան ընթացքում շատ անգամ է փարել զէնքին, իր գոյութիւնը պահելու համար, շատ անգամ է հրապարակ բերել կորով, բայց այն կորովը, հերոսական այն ճիգը, որ նա հրապարակ բերեց մի քանի վայրերում իր ներկայ գոյութիւնը պահելու համար, նոյնպէս, կարելի է ասել, բացառիկ է եղածների մէջ:

Գերագոյնը աղէտների և գերագոյնը հերոսամարտի՝ ահա այն զէպքերը, որ տեղի ունեցան և կազմելու են հայ ցեղի տարեգրութեան գերագոյն էջը:

Այդ էջը շատ մեծ է լինելու իր ծաւալով ու որակով, որ կարելի լինէր մէկէն լցնել այն. հարկաւոր են հարիւրաւոր պատմողներ, հարիւրաւոր գրի առնողներ, որ կարող լինէին լցնել այդ էջը: Մենք հանդիսանում ենք մէկը այդ պատմողներից և ընտրում ենք մէկը այն շրջաններից, ուր կատարեցին մեծ զէպքեր, դա վաստուրականն է, հայ ցեղի սրբորաններից մէկը:

Մենք այցելեցինք վաստուրականի մի քանի կենտրոնները ուսանելի գրաւումից յետոյ. տեսանք ջարդերի և հերոսական զէպքերի վայրերը, լսեցինք ականատեսներին ու զործող մարդկանց, տեսանք հայ ցեղի կարող ուժը վանի ժամանակաւոր Հայ կառավարութեան ընթացքում, ականատես եղանք վաստուրականի մեծ գաղթին՝ կողք կողքի քայլելով և գաղթականութեան ապրումները ճաշակելով:

Եւ անա գրի ենք առնում Վասսուրականում տեղի ունեցած այդ դէպքերը, երբեմն ոտք գնելով նաև այլ սահմաններ: Ու այս աշխատանքը նւիրում ենք աղէտների գէմ պայքարող Հաջցեղին:

Գրի ենք առնում, աշխատելով արձանագրել դէպքերը այնպէս, ինչպէս նրանք հղի են և որքան մեր ուժերը ներիլ են. բայց թէ այդ որքան է մեզ յաջողուել, թողնում ենք դատելու սերիշներին:

ՓՈՔՐԻԿ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ

Նախ քան բուն դէպքերին անցնելը կարևոր ենք համարում մի փոքրիկ ծանօթութիւն տալ Վանի շրջանի տեղագրութեան և հայ ժողովրդի վիճակագրութեան մասին, շրջան, որին վերաբերում է մեր այս պատմութիւնը:

Հայաբնակ այն վիլայէթները, որոնք համարում են հայկական ընթորմները շրջանը՝ վեց են. դրանք են Վանի, Բիթլիսի, Էրզրումի, Սարբերդի, Սւազի և Դիարբէքիւրի վիլայէթները: Այս վեց վիլայէթները կազմում են Տաճկաստանի Կոսկասամերձ երկրամասը, ամեն անգամ, երբ ծագել է պատերազմ Ռուսաստանի և Տաճկաստանի մէջ հանդիսանալով թատերարքիմ արիւնոտ անցքերի:

Հայաբնակ այդ վեց վիլայէթները մէջ իր աշխարհագրական կազմութեամբ և պատմական անցքերով առաջին տեղը բռնում է Վանի վիլայէթը: Ընդ ա է, միւս հինգ վիլայէթներում կան հացառատ դաշտեր, ծխախոտ, խաղող և նոյնիսկ բամբակ արտադրող շրջաններ, որոնց չենք հանդիպում Վանի վիլայէթում, սակայն Վանի վիլայէթը իր ամբողջութեամբ— իր լեռներով, իր գետերով ու փոքրիկ պտղաբեր դաշտերով, իր կապուտակ լճով ու կլիմայով և իր պատմական յիշատակաբաններով ու աննման տեսարաններով բացառիկ տեղ է գրաւում այդ վիլայէթների շարքում:

Վանի վիլայէթը, որ հանդիսանում է ծայրագաւառ, արևելեան կողմից սահմանակից է Մակուի խանութեանը և Դիլմանի ու Ուրմիի շրջաններին, հիւսիսային կողմից՝ Էրզրումի վիլայէթին, արևմտեան կողմից՝ Բիթլիսի վիլայէթին, իսկ հարաւային կողմից՝ Դիարբէքիւրի և Մուսուլի վիլայէթներին:

Վանի վիլայէթը ըստ տաճկական բաժանման բաղկացած է Վանի և Հէքեարիի սանջագներից: Առաջ Հէքեարին առանձին վիլայէթ էր կազմում, նա յետոյ միացւեց Վանի վիլայէթին քաղաքական նկատումներով: Հէքեարիի սանջագը բռնում է վիլայէթի հարաւային մասը. իսկ Վանի սանջագը՝ հիւսիսային մասը:

Հէքեարիի կենտրոնավայրը Բաշկալէն է, ուր նստում է սանջագի կառավարիչը—մութասարիֆը: Այստեղ հայերը շատ փոքր թիւ են կազմում, ամբողջ շրջանը համարեա թէ բնուած է քիւրդերով, միակ տեղը, ուր այժմ հայեր կան Աղբակն է Ս. Բարդուղիմէոսի վանքով, որը մի ժամանակ բազմահայ մի շրջան էր: Հէքեարում գտնուում է Ջուլամերիկը, ուր ապրում են 80,000-ի չափ ասորիներ իրենց կրօնապետ մարշիմօնով:

Բոլորովին այլ պատկեր է ներկայացնում Վանի սանջագը կամ Վասպուրականը իր նոր յաւելումներով: Այստեղ հայերը կազմում են հոծ բազմութիւն, այստեղ հայ ժողովուրդը հրապարակ է գալիս իր կարող ընդունակութիւնով և ազգային ձգտումներով, որի պատճառով էլ Վասպուրականը հայ իրականութեան մէջ խաղում է խոշոր դեր:

Վանի սանջագը կամ Վասպուրականը բնութեան մի զարդ է, որի նմանը չէք գտնի մի այլ տեղ, այս շրջանում փուած է Վանի լիճը իր աւազանով իրրև աննման մի պանօրամա:

Լճի հարաւային ափերի ուղղութեամբ բարձրանում են Կորդաց լեռները իրենց բազմազան կուտակումներով, որոնց զարդն են կազմում Արաօս և Եղբրով կատարները. արևելեան ափերի ուղղութեամբ բարձրանում են երկզգաթ Վարագը—Վասպուրականի նահապետը և Թիմարի լեռները. հիւսիսային ափերի ուղղութեամբ նախ խոյանում է գէպի վեր ըմբոստ Սիփանը—այդ շրջանի սրբազան Մասիսը, և մի փոքր հեռու տարածւում են հրաշագեղ Ալազգի կամ Ծաղկանց լեռները. իսկ արևմտեան ափերի վրա բազմած են լայնանիստ Ենթրութը և նրա ըմբոստ ճուտիկը—պատմական Գրգուռը: Այսպիսով սիրուն լեռնաշարքերը և սրածայր կատարները կերտել են մի զեղեցիկ աւազան, որի մէջ հանդչում է Վանի լիճը իր ծփանքով և որի մէջ գալիս թափւում են բազմաթիւ գետեր, մեծ ու փոքր՝ ոռոգելով անհամար հովիտներ ու լանջեր:

Վասպուրականի կլիման նոյնպէս աննման է, ձմեռը այստեղ այնպէս դաժան չէ, ինչպէս օրինակ Էրզրումում, և ոչ էք տամառը ասթագին, ինչպէս օրինակ Դիարբէքիի դաշտերում, այլ մեղմ է. նոյնիսկ այնպիսի տափարակներում, ուր բուսնում են խաղող և ծառապտուղներ, ինչպէս օրինակ Վանում և Արճէշում, կլիման մեղմ է, չափաւոր, մինչև անգամ հաճելի և այդ

շնորհիւ Վանի լճի ու երկրի լեռնային կազմութեան:

Վանի լիճը իր ընդարձակութեամբ հանդիսանում է մի շատ կարևոր հազորդակցութեան միջոց, ծովափինեայ ճանապարհները պայմանաւորւած են անասելի դժւարութիւնների և օրերի վատնումի հետ, օրինակ Վանից Դատւան, այսինքն լճի արևելեան ափերից արևմտեան ափը գնալու համար ցամաքով հարկաւոր է երեք օր, մինչդեռ նաւերն այդ տարածութիւնը կարում են 12 ժամում: Երբ արեւելքի լիճը այդ համեմատութեամբ դիւրանում է նաև ծովամերձ բոլոր գաւառների մէջ և շնորհիւ նաւագնացութեան ինչպէս երթևեկութիւնը, այնպէս էլ մթերքների փոխադրութիւնը Վանի լճի շրջապատի մէջ շատ աւելի դիւրացել է:

Ինչ վերաբերում է Վասպուրականի արտաքին տեսքին ու զեղեցկութեանը, այդ արդէն դուրս է ամեն գովեստից, դա մի չքնաղ մեծ աւազան է իր չքնաղ լճով, նրա չորս կղզիներով, դա մի աւազան է իր սիրուն օղակով, դա բնութեան մի աննման կտոր է, ուր մարդը կարող է անհուն քաղցրութիւն զգալ, նրանով ոգևորել ու շնչել: Այս բնութեան ծոցում մարդիկ առողջ են, կենսունակ ու կարող:

Սրանով էլ պիտի բացադրել այն առանձնայատուկ տեղը, որ նա ունի զրաւած պատմութեան մէջ հին դարերից սկսած, իր վրա գրաւելով մի շարք աշխարհակալների ուշադրութիւնը, հանդիսանալով գիւցազներգութիւնների և սեպածև արձանագրութիւնների խորհրդաւոր մի վայր:

Եւ իսկապէս Վանի լճի ափերի վրա հին դարերում ծագկեցին մի շարք քաղաքներ և բազմեցին մի շարք բերդեր. դրանք էին Արճէշի, Ալջաւազի, Խլաթի, Դատւանի, Ոստանի բերդերը. դրանցից մէկը ու նշանաւորն էր Վանի բերդը, ըմբոստ ժայռերի այն կերտածքը, որի վրա եկաւ բազմեց հին դարերի գեղեցկուհին—չքնաղ Շամիրամը գմայլելու զեղածիծաղ լճի տեսարաններով:

Անա այս լճի ափերի վրա և նրան շրջապատող լեռների ու շղթաների հրաշագեղ հովիտների մէջ ընկած է Վասպուրականը իր գաւառներով:

Վանի լճի հարաւ-արևելեան ծովափին մի գեղեցիկ տափարակի վրա ընկած է Վանը իր արւարձաններով, որը կոչւում է Վան-Տոսպի գաւառ: Վան-Տոսպից սկսած դէպի հիւսիս և սպա

դէպի արևմուտք ծովափի վրայ շարքով ընկած են Վանի չորս գաւառները, զրանք են Թիմարը, Բերկըրին, Արճէշը և Ալջավազը: Վան-Տոսպից դէպի արևմուտք հարաւային ծովափի վրայ շարքով ընկած են Վանի երեք գաւառները, այն է Հայոց-Չորը, Գեաւաշը և Կարճկանը: Այսպիսով ութ գաւառներ, հաշւած նաև Վան-Տոսպը, կազմում են ծովափնեայ առաջին գիծը:

Երկրորդ գծի վրայ Բերկըրից սկսած դէպի հարաւ և ապա դէպի արևմուտք շարքով ընկած են Վանի եօթ գաւառները. զրանք են, Արճակի, Սարայի, Պոշարի, Նորդուզի, Շատախի, Մոկսի և Կարկառի գաւառները:

Վան-Տոսպը նշանաւոր է իր պողաբերութեամբ, Շամիրամի ջրանցքով, Այգեատանով, Վանի բերդով և արևելեան սահմանի վրայ ցցւած երկգագաթ Վարագով: Վարագի երկու լանջերի վրայ գտնուում են Վարագի և Սուրբ Գրիգորի վանքերը: Վան-Տոսպում գտնուում է Աւանց մեծ գիւղը, որը հանգիստանում է Վանի նաւահանգիստը, և պատմական Արտամեա գիւղը, որը յայտնի է իր հռչակաւոր խնձորով:

Թիմարը նշանաւոր է իր լեռնային կազմութեամբ. գաւառի միջով հոսում է դէպի լիճը Սև կամ Մարմէտ գետը: Թիմարի փեղի ուղղութեամբ լճի մէջ գտնուում են երկու պատմական կղզիներ իրենց մենաստաններով. զրանք են Լիմ և Կտուց անապատները, որոնք պաշտամունքի տեղ լինելով հանգերձ, կոտորածների ժամանակ ահագին ժողովուրդ են պատսպարում ու կերակրում: Գիւղերից նշանաւոր են Զանիկը, Մարմէտը, Ալիւրը. վերջինը ամենաբազմամարդ գիւղն է և յայտնի է խաղողի այգիներով:

Բերկըրին նշանաւոր է իր երկու գաշտերով, զրանք են Բերկըրի-Օվան, ընկած ծովի ուղղութեամբ և գեղեցիկ Արագան, մի ժամանակ բազմահայ այժմ ամայի, ընկած Մակուռի խանութեան սահմանի մօտ: Արագայի հիւսիսային կողմի վրայ գտնւում են Թանդուրէքի և Թափարիզի բարձունքները: Երկու գաշտերը միացած են պտոյտկէն մի երկարուկ ձորով. այս ձորի միջով հոսում է ահեղաշունչ Բանդի-Մահուն—Վանի լճի մէջ թափւող ամեամեծ գետը՝ առատաջուր ու ձկնառատ: Գաւառի կենտրոնը կազմում է Բերկըրի-Կալան. գիւղերից նշանաւոր են Գործութն ու Պատիկ-գիւղը:

Արձէշը նշանաւոր է իր պաղարերութեամբ և խաղողի այգիներով: Այս գաւառի միջով հոսում են երեք գետեր, Գալի-Չալը, Իրիշատը և Օրօրանը յայտնի ձկնառատութեամբ: Կենտրոնը հանդիսանում է Ականցը, մի փոքրիկ քաղաք հարուստ այգիներով: Գաւառում գտնւում է Զիլանա-ձորը, ուր ապրում են աւազակաբարոյ քիւրդեր: Գաւառի հիւսիսային սահմանը կազմում է գեղեցիկ Ալազաղի շղթան:

Ալջաւազի գաւառը նշանաւոր է իր հացահատիկներով, թէև մի քանի տեղերում կան և խաղողի այգիներ: Գաւառի կենտրոնը կազմում է Արձկէն, լճի ափին ցցւած իր հինաւուրց բերդի մնացորդներով: Գաւառի կենտրոնում բազմած է գեղեցիկ Սիփանը՝ միայնակ, համաչափ, սրածայր ու բմբուս:

Հայոց-Չորը նշանաւոր է իր երկարուկ հացոտատ հովիտով, որի միջով հոսում է Սոշար գետը: այս շրջանից սկիզբն է աւնում Շամիրամի ջրանցքը: Գիւղերից նշանաւոր են Կեմը, Ալգղը, Բերժը, Մուսանը:

Գեաւաշը նշանաւոր է շատ բանով, նախ հարուստ է բուսականութեամբ և ունի լաւ գիւղեր, որոնցից յայտնի են Նաբեկը, Մոխրաբերդը, Նոր-գիւղը, Բէլուն. հարուստ է նաև գետերով ու գետակներով, որոնցից են Ոստանի, Տըշողի, Փշաւանցի և Մոխրաբերդի ջրերը: Գաւառում ցցւած է պատմական Արտօսը, որի ստորոտում դէպի լիճք փուած է Ոստան աւանը մի քանի բուսապարզ թաղերով, սակայն զուրկ հայրից, այստեղ գտնւում էր Ռշտունեաց իշխանի սպարանքը: Գեաւաշի ափերի ուղղութեամբ գտնւում են Ախթամար և Առտէր կղզիները իրենց վանքերով, և բացի այդ, գաւառում գտնւում են Նարեկի և Չաղար-Սուրբ-Նշանի վանքերը, որոնցից մէկում ամփոփւած է տաղերգու Գրիգոր Նարեկացու աճիւնը, իսկ միւսում քաղցրախոս Եղիշէի աճիւնը:

Կարճկանը նշանաւոր է իր բուսական լեռներով, անտառապատ թեք լանջերը յաճախ շեշտակի իջնում են մինչև լճափը՝ տալով նրան գեղեցիկ տեսք, թէև անտառները ոչնչացնում են անխնայ կերպով: Գաւառում աչքի են ընկնում Սորը իր նաւահանգստով և Օրանց ու Եղեգիս գիւղերը:

Երկրորդ գծի վրա՝

Արձակը նշանաւոր է իր համանուն լճով, թէև ջուրը խիստ

աղի է: Այս դաւառում մշակում են հացահատիկներ: Գիւղերից աչքի են ընկնում Արճակը և Սառակոնիսը:

Շատախը նշանաւոր է իր կազմածքով, սա գերազանցօրէն լեռնային դաւառ է, հարուստ է արօտներով, բայց աղքատ հացով. երկու փոքրիկ դաշտեր—Փեսանդաշտն և Սորդանքը: Էրայն ապիս են առատ հաց: Ժողովրդի գլխաւոր զբաղմունքն է ոչ-խարաբուծութիւնը և շալագործութիւնը: Կատարներով հարուստ գաւառը ակոսւած է մի քանի խոշոր ձորերով, այդ ձորերի միջով հոսում են Սիվակին գետը և Արևելեան-Տիգրիսի վերին հոսանքը, որոնք գալիս միանում են երեք ձորերի մի հանգոյցի մէջ՝ կաղմելով մի բանաստեղծական վայր: Այստեղ ընկած է գաւառի կենտրոնավայրը—Թաղը, զուտ հայաբնակ մի սիրուն աւան: Շատախի ժողովուրդը աչքի է ընկնում իր քաջութեամբ և տոկունութեամբ:

Մոկսը նոյնպէս նշանաւոր է իր լեռնային կաղմութեամբ: Այստեղ էլ դաշտեր չը կան և գաւառը ակոսւած է բազմաթիւ ձորերով: Գաւառի հիւսիսային սահմանի վրա ցցւած է Եղերովը. սրա լանջերից սկիզբն են առնում գետակներ, որոնք միանալով այլ ձորակներից հոսող գետակներին կաղմում են Մոկաց ջուրը և գնում թափւում են Արևելեան-Տիգրիսի մէջ: Ժողովրդի գլխաւոր զբաղմունքն է խաշնարածութիւնն ու շալագործութիւնը:

Գաւառի կենտրոնավայրն է Քաղաքը իր չորս թաղերով ընդամենը 100 տուն բնակիչներով:

Նոյն պատկերն է ներկայացնում նաև Կարկառի գաւառը: Սա բազկացած է երկու մասից՝ վերին և ներքին Կարկառներից: Ներքին Կարկառը վարչական բաժանմամբ պատկանում է Իրիթլիսի վիլայէթին:

Ահա ընդհանուր գծերով այն պատկերը, որ ներկայացնում է Վանի սանջագը կամ Վասպուրականը և որը կաղմում է մեզ զբաղեցնող վայրը:



ՎԻՃԱԿԱԳԻՐ

ՎԱՆԻ ՎԻԼԱՅԷԹԻ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ(1

ՎԱՆ-ՏՈՍՊԻ ԳՍԻԱՌ

№	Քաղաք և գիւղ	տուն	շունչ
	Վան	4230	22470
	Արւարձաններ		
1	Աւանց	339	1592
2	Լէզկ	192	1178
3	Շահրաղի	167	895
4	Սխդեա	104	660
5	Զորովանց	14	100
6	Կողպանց	32	218
7	Շուշանց	80	559
8	Կուսուբաշ	108	698
9	Կինդանանց	49	285
10	Բերդակ	56	581
11	Ծւտտան	80	530
12	Արտամէտ	130	720
13	Լամդղերա	35	206
14	Դարման	68	482
15	Փառուղ	35	210
16	Ոսկեբակ	45	270
17	Էրմանց	3	24
18	Սևազբակ	2	16
19	Տօնի	25	198
20	Առեղ	28	192
		1592	9614

1) Վիճակագրական այս տախտակները՝ կազմւած 1913 և 1914 թւականներին՝ բացառութեամբ մի երկուսի քաղել ենք Վանի և Ախթամարի թեմական գործերից։

ԹԻՄԱՐԻ ԳԱԻԱՌ

№	Գ ի լ Վ Պ	տուն	շունչ
1	Արտաւէղ	15	118
2	Կոճ	26	137
3	Աղիդիւհողալ	31	226
4	Կիւսնեհնց	138	825
5	Բայրակ	28	195
6	Տրլաշէն	95	657
7	Աանականց	31	247
8	Ծակտար	38	231
9	Ամենաշատ	40	204
10	Աննավանք	50	254
11	Մարմէտ	153	811
12	Թրքաշէն	5	35
13	Բաղ	8	69
14	Ջանիկ	100	714
15	Նորշէն	45	270
16	Քեօփրիքեօյ	3	21
17	Ատեռ	71	444
18	Փիրկարիբ	57	373
19	Գոմս	53	340
20	Աղջալէրան	32	147
21	Մէյդանջուղ	8	56
22	Դարարէկ	37	243
23	Սօսրաթ	42	251
24	Շահդիալի	22	156
25	Նորովանց	37	215
26	Խժիշկ	132	775

№	Գ ի լ Վ Ղ	սուսն	շունչ
27	Ամուկ	40	212
28	Էրերին	151	938
29	Քոչանի	111	705
30	Գեօլու	15	91
31	Խաւհնց	106	633
32	Ալիւր	343	1955
33	Եկմալ	31	226
34	Ասուածածին	63	462
35	Բողանց	71	451
36	Աւերակի	187	1061
37	Ջիրաշէն	76	475
38	Բերդ կամ Նոր գիւղ	30	210
39	Շւաքար	3	22
40	Տաշօղլի	1	7
		2525	15411

ԲԵՐԿՐԻԻ ԳԱԻԱՌ

№	Գ ի լ Վ Ղ	սուսն	շունչ
1	Կորական	8	80
2	Սալախանէ	8	56
3	Դէրօն	22	150
4	Սընդ	20	140
5	Աշէգէնան	10	70
6	Աւասօր	13	91
7	Խան	15	105
8	Ղայմաղ	30	210
9	Խաչան	60	600
10	Նաղարաւա	28	196
11	Ալիքալէն	2	14

№	Գ ի լ ղ	սուևն	շուևն
12	Եկմալ	18	110
13	Զըբխու	13	91
14	Բայաղիտ-աղա	2	11
15	Գօնդուրմա	1	19
16	Կանէդաւան	4	28
17	Թիքմա	20	140
18	Քեաբարիկ	51	379
19	Ս. Թաթոս	25	211
20	Անդիւղակ	59	311
21	Գործութ	128	790
22	Քեօշկ	10	70
23	Անձաւ	17	108
24	Ասեղ	15	105
25	Պատիկ-գեղ	74	447
26	Բերկըթ	25	187
27	Կղլթիլիսէ	5	58
28	Փշիգմբէթ	5	47
29	Խառաշիկ	1	8
30	Գոմս	3	20
31	Մուճա	3	21
32	Դաւղար	1	10
33	Փէտանց	1	10
34	Բերդ	6	42
35	Մէթղուլ	7	49
36	Իլրաքլի	6	42
37	Նարաֆիտանա	1	7
38	Շէյխ-Հայդար	2	14
39	Կհճան	2	14
40	Խժիժ-խաթուն	9	63
41	Բիշի	4	28
		734	5152

ԱՐՃԷՇԻ ԳԱԻԱՌ

№	Քաղաք և գիւղ	տուն	շունչ
1	Ականց	304	2078
2	Բլուրձակ	90	645
3	Խարկէն	35	285
4	Իրիշատ	29	304
5	Օրօրան	36	410
6	Փափշկէն	8	85
7	Մաճառս	24	160
8	Ջիգրաշէն	5	61
9	Հասպսինակ	31	254
10	Յարութիւն	22	180
11	Սօսկուն	84	615
12	Խօջալու	12	84
13	Աղս	3	31
14	Արձւարեբի վանք	20	120
15	Փայ	5	46
16	Գօղ-նեբբին	15	145
17	Գօղ-վեբին	11	105
18	Քալաքիւ	2	18
19	Կարած-քար	32	250
20	Աղսրաֆ	56	491
21	Գանձակ	26	206
22	Ջուղղեաճ	38	390
23	Ծայծակ	28	211
24	Բանոն	22	180
25	Փայխնեբ	34	273
26	Մոյ	7	78
27	Բեբղաղ	44	318
28	Չախր-բեկ	5	49


№	Գ ի լ ղ	սուսն	շունչ
29	Անձաւ	5	37
30	Փիրօմար	5	46
31	Հազրակ	7	85
32	Հաղի	4	31
33	Քօքն	3	16
34	Քեարթիս	7	110
35	Սինամէշ	3	19
36	Ինջասու	4	55
37	Ուաչերով	12	110
38	Մեծոփա վանք	34	305
39	Դադալու	4	23
40	Չէւէ	3	25
41	Կարաշալու	5	29
42	Քօզեր	60	360
43	Շկաւտեան	3	25
44	Գէլկան	2	14
45	Գօմէշուան	10	67
46	Կրադոմ	50	411
47	Մատղավանք	9	68
48	Դիլան	9	67
49	Արմիդօնք	26	241
50	Արճրոնից վանք	5	61
51	Կենարորի վանք	5	37
		1303	10313

ԱԼԶԱՒԱԶԻ ԳՍԻԱՌ

№	Գ ի լ յ	տուն	շունչ
1	Արձկէ	80	535
2	Առէն	117	698
3	Նորշէն	34	211
4	Էգեձօր	17	143
5	Զիրաբլու	45	330
6	Քաղոյ	17	118
7	Սիփաններ	100	675
8	Փէշնագոմեր	32	255
9	Սոսանց	47	433
10	Ղուղէլ	20	120
11	Անուշ-Աղբիւր	10	43
12	Նորշնջուղ	48	403
13	Վիչկացուկ	16	119
14	Բարկաթ	15	139
15	Կոճեր	56	401
16	Կարաբէշիշ	40	489
17	Արճրա	33	189
18	Անջկոյս	55	421
19	Ուռու	6	28
20	Գատըքիօյ	4	27
21	Տանձուտ	8	47
22	Սորերոյ	3	19
23	Օրանկաղի	7	46
		810	5889

20847

183-89



ՀԱՅՈՑ-ՉՈՐԻ ԳԱԻԱՌ

№	Գ ի լ զ	տուն	շունչ
1	Տօնի	13	120
2	Նոր-դեղ	88	513
3	Առեղ	26	175
4	Հնդասան	37	209
5	Ուրթուկ	42	247
6	Խէք	34	219
7	Ասաւածաշէն	48	351
8	Ա. ատենց	40	235
9	Անկշտանց	67	411
10	Էրէմէրու	82	432
11	Կղղի	44	312
12	Ոչխրանց	11	67
13	Պժնկերու վեր	7	53
14	Խոսոյ	52	291
15	Հիրճ	30	205
16	Կղղաշ	51	314
17	Քերճ	104	637
18	Պլթենց	65	386
19	Մուլք	7	33
20	Խարականց	36	219
21	Թրքաշէն	12	60
22	Մարքս	20	170
23	Կեմ	100	547
24	Անդդ	108	678
25	Մաշտակ	64	394
26	Իշխանի-գոմ	70	409
27	Քեօշի	40	232
28	Ս. Վարդան	18	114
29	Խորղոմ	65	435
30	Քարվանց	2	14
		1383	8482

ԳԵԱԻԱՆԻ ԳԱԻԱՌ

№	Գ Ր Լ Ղ	տուն	շունչ
1	Ախանաց	65	372
2	Սպիտակ վանք	18	124
3	Յիւի	28	153
4	Քարաղաշա	19	130
5	Պատականց	75	406
6	Տշող	50	330
7	Հիրիճ	41	225
8	Փշաւանց	60	310
9	Պախւանց	42	215
10	Հարբերդ	42	350
11	Բողանիս	18	120
12	Նարեկ	123	610
13	Փայիւնեք	100	520
14	Սարէ	17	105
15	Մոխրաբերդ	103	550
16	Նոր-դիւղ	87	413
17	Ընձակ	34	286
18	Բէլու	77	443
19	Շատւան	20	170
20	Թիմար	27	174
21	Յաղուն	18	134
22	Վատենց	31	176
23	Գանձակ	60	366
24	Նանիկանց	35	231
		1180	6213

ԿԱՐՃԿԱՆԻ ԳԱԻԱՌ

№	Գ ի լ յ	տուն	շունչ
1	Փրխուս	31	180
2	Կանդու	17	143
3	Կանչարս	27	162
4	Ուրեղուս	15	119
5	Սմբոն	20	134
6	Սուս	30	230
7	Կարր	25	175
8	Մրորս	16	97
9	Կենդրանց	32	260
10	Վանիկ	40	313
11	Օղւանց	57	403
12	Ստուս	17	126
13	Կութ	45	350
14	Հնձան	8	80
15	Օրանց	96	805
16	Սարր	40	279
17	Քարւակ	20	145
18	Ուսունց	10	70
19	Փեկանց	8	60
20	Եղէկիւ	69	510
21	Գոմս	60	394
22	Առանց	25	182
23	Խարձիթ	30	220
24	Վանիկ	15	110
25	Խնձորկէն	50	362
26	Պաշւանց	25	185
27	Ծաղօն	12	84
		840	6178

ԱՐՃԱԿԻ ԳԱԽԱՌ

№	Գ ի ւ ղ	տուև	շուևշ
1	Խառակոնիս	230	1525
2	Արճակ	180	1170
3	Հաշիշատ	18	126
4	Կղլջա	65	423
5	Նարաթ	25	165
6	Մխկնեբ	48	308
7	Զօպանօղլու	26	168
8	Պախեզէկ	15	98
9	Էրմանց	5	35
10	Մեան	67	439
11	Զառանց	37	240
12	Լիմ	22	143
13	Մանդան	60	390
14	Կարթալան	3	21
15	Հասիստան	22	154
16	Շամշաղին	70	465
17	Հազարա	45	305
18	Բօղազքեասան	12	84
19	Զախմախ	12	78
20	Տաղվերան	37	244
21	Աղղաշ	7	49
22	Եակղուղաղաջ	7	49
		1013	6679

ՍՍ.ՐԱՅԻ ԳԱԻԱՌ

№	Գ ի լ լ ղ	տուն	շունչ
1	Սաթմանց	30	210
2	Ախոռիկ	50	350
3	Աւղարիկ	11	77
5	Հասան-Թամրան	27	189
		118	826

ԽՕՇԱԲԻ ԳԱԻԱՌ

№	Գ ի լ լ ղ	տուն	շունչ
1	Սալախանա	28	130
2	Զէնիս	5	32
3	Քրլիսա	5	30
4	Պըհանա	3	20
5	Փութ	3	20
6	Քոէլ	70	567
7	Հուրթուկ	52	420
8	Փակագեհադուկ	15	80
9	Կանգւառ	32	205
10	Կասրիկ	6	34
11	Հոգոց վանք	3	28
12	Կասր	30	180
		252	1746

ՀԱՏԱԽԻ ԳԱԻԱՌ

№	Գ ի ւ ղ	տունն	շունչ
1	Թաղ — — — —	219	1095
2	Նաւհանդ — — — —	4	28
3	Շիվրաշ — — — —	4	28
4	Մաքօշկ — — — —	10	63
5	Կասր — — — —	1	9
6	Վախրոզ — — — —	12	88
7	Աքրուս — — — —	2	14
8	Առիգոմ — — — —	10	64
9	Քրմենց — — — —	7	43
10	Պապոնց-Մզրէն — — — —	12	84
11	Մարդակերոց — — — —	3	21
12	Բաղչկանց-Մզրէն — — — —	9	63
13	Շինօ-Մզրէն — — — —	4	28
14	Յարօ-Մզրէն — — — —	2	14
15	Շեղջանց — — — —	3	24
16	Կվերս — — — —	8	96
17	Շամօ-Մզրէն — — — —	12	84
18	Աոսսիկ — — — —	6	34
19	Երիցու-Մզրէն — — — —	4	28
20	Մուսկաւէն — — — —	10	67
21	Գեօրանդաշա — — — —	12	87
22	Նառ — — — —	8	63
23	Կարադէր — — — —	1	19
24	Դարենց-վեր. — — — —	4	29
25	» վար. — — — —	6	34
26	Սիւտկնա-գոմեր — — — —	21	151
27	Սիւտկիւն — — — —	45	310
28	Հաշկանց — — — —	15	105
29	Բոլս — — — —	13	132
30	Քօսենց-Մզրէն — — — —	10	59

31	Ծուռ	—	—	—	4	37
32	Յիզի	—	—	—	17	97
33	Սողանց	—	—	—	10	85
34	Պաղկ	—	—	—	9	58
35	Մարծեղ	—	—	—	2	12
36	Տղաս դար	—	—	—	14	102
37	Ծիծ սնց	—	—	—	25	196
38	Ճընուկ	—	—	—	25	230
39	Յինենց	—	—	—	21	205
40	Կաղալի	—	—	—	66	431
41	Կոռովանք	—	—	—	6	71
42	Սադ	—	—	—	12	48
43	Կաճէթ	—	—	—	92	452
44	Արմշատ	—	—	—	64	675
45	Սարկէթ	—	—	—	20	104
46	Խուճար	—	—	—	15	75
47	Ասեղ	—	—	—	28	206
48	Կայնէմէրան	—	—	—	12	107
49	Շիղան	—	—	—	42	302
50	Կաղաղիս	—	—	—	30	214
51	Մարթանս	—	—	—	8	50
					999	6721

ՄՈԿՍԻ ԳԱԻՍ.Ո.

№	Գ Ր Ը Դ	տուն	շունչ
1	Կճողս — — — —	9	35
2	Ծառտանց — — — —	6	33
3	Թառամաղ — — — —	3	21
4	Հողմղոունս — — — —	3	21
5	Մակնի — — — —	5	25
6	Տմնիս — — — —	15	95
7	Գոմանց — — — —	18	100
8	Խրէր — — — —	11	123
9	Ծափանց — — — —	25	175
10	Կճաւ — — — —	14	115
11	Հաւարիս — — — —	12	63
12	Հացարլուր — — — —	11	66
13	Հողին — — — —	45	204
14	Հեր — — — —	6	41
15	Սակս — — — —	5	25
16	Գիարբս — — — —	20	148
17	Գոմեր — — — —	17	76
18	Սորս — — — —	26	194
19	Բուլինց — — — —	25	152
20	Վանքիկ — — — —	4	30
21	Բառ — — — —	20	111
22	Գնեկանց — — — —	32	188
23	Բիւրանդ — — — —	7	45
24	Էճան — — — —	7	38
25	Յառնանց — — — —	18	130
26	Լուլինց — — — —	5	39
27	Կայթանց — — — —	31	222
28	Նանեանց — — — —	20	173
29	Շէն — — — —	4	29
30	Հասկնջաւ — — — —	19	104

31	Անապատ	—	—	—	4	33
32	Փէտատեղ	—	—	—	5	39
33	Նորովանց	—	—	—	13	66
34	Կասր	—	—	—	7	38
35	Ստըճանց	—	—	—	16	81
36	Կարկճանց	—	—	—	21	121
37	Առինջ	—	—	—	30	217
38	Դէմկառ	—	—	—	11	46
39	Խալինց	—	—	—	5	28
40	Մարահանց	—	—	—	13	52
41	Սպըկանց	—	—	—	14	85
42	Հաղլւան	—	—	—	13	96
43	Բրտնուտ	—	—	—	2	9
44	Սիւլ	—	—	—	16	124
45	Անձղանց	Թաղ	—	—	19	128
46	Դաշտի	»	—	—	44	204
47	Աբրահամինց	»	—	—	26	127
48	Քաղաքի	»	—	—	19	144
					721	4459

ԿԱՐԿԱՌԻ ԳԱԻԱՌ

№	Գ ի ւ ղ	առւն	շուշ
1	Աւղու — — —	8	75
2	Թացու — — —	64	400
3	Եղէղիս — — —	56	400
4	Բերկըրի — — —	25	200
5	Հալս — — —	7	60
6	Խնձարուս — — —	20	130
7	Յարրհնց — — —	30	282
8	Հուկուրձու — — —	9	70
9	Չկոր — — —	17	144
10	Որիգ — — —	27	174
11	Չախոդ — — —	5	30
12	Ծօկու — — —	21	86
13	Խրորսենց — — —	45	350
14	Տափ — — —	9	88
15	Մճկանց — — —	15	128
16	Մուլք — — —	3	22
17	Կիճի — — —	20	121
18	Յարկենց — — —	13	108
19	Յաղթ — — —	26	170
		420	3038

ԱՂԲԱԿԻ ԳԱԻԱՌ

№	Ք ա ղ ա ք և Գ ի ռ ղ	տուն	շունչ
1	Բաշկալէ — — —	200	1645
2	Ս. Բարդուղիմէոս — — —	40	244
3	Հասպատան — — —	45	260
4	Մայրաւան — — —	16	70
5	Էրնդեանի — — —	27	205
6	Բժնկերս — — —	15	112
7	Խոռատուն — — —	11	65
8	Սորաղէր — — —	4	18
9	Փխ — — —	4	24
10	Բաղ — — —	5	49
11	Սորան — — —	24	163
12	Հերեսան — — —	11	74
13	Ալաս — — —	35	280
14	Ալալեան — — —	7	45
15	Բեղա — — —	9	79
16	Ռասուլան — — —	8	54
17	Զուխ — — —	15	96
18	Պաղլճասան — — —	5	18
19	Քարաբլուր — — —	1	4
		482	3505

ՆՈՐԴՈՒԶԻ ԳՍԻՍՈՒ

№	Գ ի լ Վ Ղ	սոււն	շունչ
1	Աղսին — — — —	12	70
2	Փիրբաղալան — — — —	35	327
3	Կողան — — — —	20	218
4	Հէքեան — — — —	5	28
5	Հօսթայեան — — — —	27	145
6	Նորաբեր — — — —	10	48
7	Դիմ — — — —	32	179
8	Սքիւնս վեր. — — — —	} 54	} 340
9	» ներք. — — — —		
10	Շամանս — — — —	45	275
11	Մաքօշի — — — —	17	137
		257	1767

ԶՈՒԼԱՄԵՐԻԿԻ ԳՍԻՍՈՒ

№	Գ ի լ Վ Ղ	սոււն	շունչ
1	Փական — — — —	39	270
2	Սալիլան — — — —	22	175
3	Սերման — — — —	4	30
4	Սանաս — — — —	5	32
5	Փիրան — — — —	3	27
		73	534

ԳԵՍԻՍՈՒԻ ԳՍԻՅՈՒ

№	Գ ի լ Վ Ղ	սոււն	շունչ
1	Դիղա — — — —	200	1200
2	Կարպէլ — — — —	80	480
		280	1680

ԲՈՂՈՐ ԳԱԽԱՌՆԵՐԸ

№	Քաղաք և գաւառներ	տուն	շունչ
1	Վան — — —	4230	22470
2	Վան-Տոսպի գաւառ — —	1592	9614
3	Թիմարի » — —	2525	15411
4	Բերկերի » — —	734	5152
5	Արճաշի » — —	1303	10313
6	Ալջաւաղի » — —	810	5889
7	Հայոց Չորի » — —	1383	8482
8	Գեաւաշի » — —	1190	6913
9	Կարճկանի » — —	840	6178
10	Արճակի » — —	1013	6679
11	Սարաշի » — —	118	826
12	Սոշարի » — —	252	1746
13	Նորգուիզ » — —	257	1767
14	Շատախի » — —	999	6721
15	Մոկսի » — —	721	4459
16	Կարկառի » — —	420	3038
17	Աղբակի » — —	482	3505
18	Ջաւամէզբիկի » — —	73	534
19	Գեաւառի » — —	280	1680
		19222	121377

ՆՈՐ ԹՈՒՐՔԻԱՆ

1908 թւի յուլիսի 11-ին Տաճիկ պետութեան երկնակամարի տակ տեղի ունեցաւ քաղաքական մի խոշոր ակտ. զս սահմանադրութեան հռչակումն էր, որով իրաւագօրկ այդ երկրի վրայից վերանում էր բռնակալութեան ծանր շունչը:

Մէկ օր առաջ այդ ակտից Տաճկաստանը ներկայացնում էր քարայրման դատապարտւած և զգայազօրկ մի գանդւած: Երկրի վրա թագաւորում էր սուլթան Համիդի բռնակալ կամքը իր բոլոր խտտութիւններով: Հասարակական ու անհատական որեւէ ձեւնարկութիւն հիմք չէր գտնում այդտեղ: Երկիրը պատած էր լրտեսների ցանցով, բանգիրը լցւած էին ժողովրդի լաւազոյն տարրերով: Պետական գանձարանը կողոպտում էր ու գատարկւում: Կուսակալներից պահանջւում էր գումարներ ժամանակից ու շափից գուրս, իսկ կուսակալները իրենց հերթում բարզում էին ժողովրդի վրա կամայական տուրքեր: Շնորհիւ գատարկ գանձարանի դօրքը ապրում էր կարիքի ու զրկանքների մէջ, պաշտօնէութիւնը ոտճիկ չէր ստանում, և այստեղից էլ կաշառքը գնալով թափ էր ստանում ու դառնում պաշտօնէութեան ապրուստի գլխաւոր աղբիւրը: Դատարանում գործում էր կաշառքը, դիրքը, սղղեցութիւնը և որ ամենավատթարն է վարչական մարմինների թելադրանքը. իսկ կրթական հիմնարկութիւնները գտնւում էին ագէտ և ֆանատիկոս մարդկանց ձեւում. ինչ վերաբերում է մամուլին, այդ արդէն ներկայացնում էր բռնակալ կառավարութեան թելադրանքների մի ասպարէզ— գրաբնութեան կամքը:

Այսպէս էր երկրի գրութիւնը ընդհանրապէս, հպատակ քրիստոնեայ ժողովուրդների դրութիւնը մասնաւորապէս աւելի ևս վատթար էր: Քրիստոնեայ ժողովուրդները բռնապետական կարգերի բոլոր շարիքները կրելուց, գատ ենթակա էին անօրի-

նակ ցեղային զրկանքների, որոնք արտասովոր բնոյթ ստացան։ Հալածոււմ էր եկեղեցին ու կրօնը, հալածոււմ էր դպրոցն ու լեզուն։ Քրիստոնեաներին պաշտօններ չէին տրոււմ, զինուորական ծառայութեան նրանք չէին կանչոււմ, մի հանգամանք, որով աւելի ևս շեշուււմ էր խտրականութիւնը մահմեդականի ու քրիստոնեայի մէջ։ Վարչական տեղերու քրիստոնեաները պաշտպանութիւն չէին գտնոււմ, պաշտպանութիւն չէին գտնոււմ մանաւանդ դատարանոււմ, ուր թագաւորոււմ էր Շարիաթը։

Քրիստոնեայ ժողովուրդները հալածոււմ էին առանձնապէս մեղադրելով հակապետական շարժումների մէջ, մի երկոյթ, որ բխոււմ էր անօրինակ կարգերից. անուէր երիտասարդ ձգոււմ էր երկիրը և պանդխտութեան դիմոււմ, եթէ չէր ուզոււմ բանդերը մաշիկ կամ լեռները քաշել պարտիզանական խմբերին միանալու համար։

Միակ տարրը, որ այդ երկրոււմ ազատ էր կեղեքումներից ու հալածանքներից, դա օտարահպատակներն էին, որոնք վայելոււմ էին արտակարգ արտօնութիւններ։ Օրինակ, տաճիկ կառավարութիւնը իրաւունք չուէր օտարահպատակի բնակւոյրանը խուզարկելու, նրան դատելու կամ բանդ նստեցնելու. դատելն ու պատժելը կատարոււմ էր հիւպատոսների ներկայութեամբ, յաճախ հիւպատոսների ձեռքով։ Այս բաւական չէ, օտարահպատակը աղբելով այդ երկրի մէջ, ունենալով իր զրազմունքն ու գործը միանգամայն ազատ էր որիէ տուրքից։

Այսպիսի և նման արտօնութիւններ իրենց հպատակներին համար ձեռք էին բերել եւրոպական պետութիւնները անցեալոււմ մի շարք կապիտալիզմի մտնների ուժով, որոնք հետեանք էին Տաճկաստանոււմ տիրող աննօրմալ կարգերի, և որքան այդ կարգերը շարունակոււմ էին գոյութիւն ունենալ, այնքան օտար պետութիւնները միջամտութիւնը Տաճկաստանի ներքին գործերի մէջ իրաւական էր դառնոււմ. այսպէս, օրինակ, եւրոպական պետութիւնները Տաճկաստանոււմ հիմնած ունէին իրենց սեփական պօստային հիմնարկութիւնները, որոնք ազգաբնակչութեան կողմից աւելի վստահութիւն էին վայելոււմ, քան պետական պօստը։ Եւ այս բոլորը շնորհիւ նրա, որ եւրոպական պետութիւնների համար միանգամայն անհանդուրժելի էին Տաճկաստանոււմ տիրող ներքին կարգերը։



Ահա այս կարգերը գալիս էր հիմնովին խորոշակեցրելու
կազման սահմանադրութիւնը:

1908 թւի յուլիսի 11-ին սուլթան Համիդի լեքրաքով տարարւեց անձի ու բնակարանի անձեռնմխելիութիւնը, իրողձի ու խօսքի ազատութիւն, ազատութիւն նաև մամուլի ու ժողովների: Եւ այս բարիքները տարածելու էին իւրաքանչիւր հպատակի վրա առանց աղղի ու կրօնի խտրութեան: Այդ օրւանից թագաւորելու էր օրէնքն ու արդարութիւնը, իսկ օրէնքներ մըշակելու համար հրաւիրւելու էր տաճկական պարլամենտ՝ կազմւած ընդհանուր ձայնատուութեան սկզբունքով:

Յուլիսի 11-ից սկսած նոր կարգեր ու նոր օրեր էին ծագում Տաճկաստանի վրա, որին իրրև ապացոյց հանդիսանում էր յայտարարւած ընդհանուր ամնխատիան:

Բացւեցին բանդերի զոնները և ազատ արձակեցին տարիներով գատապարտւած երկրի լաւագոյն ուժերը, բացւեցին երկրի սահմանները և հայրենիք վերադարձան հազարաւոր տարագիրներն ու փախստականները. լեռներից իջտն հայկական, մակեդոնական և ալբանական յեղափոխական խմբերը ու կրէկաթ շնամի ժողովուրդները եղբայրացած խանդավառ ցոյցերով ու աօնեցին սահմանադրութիւնը:

Սանդավառ ցոյցերով ընդունեցին սահմանադրութիւնը առանձնապէս քրիստոնեա ժողովուրդները, որոնց նկատմամբ, ընդհանուր շնորհումներից զատ, վերացւում էին մի շարք սահմանափակումներ. օրինակ քրիստոնեաները կանչւելու էին զօրքերի շարքերը, ազատւելով գինւորական ծանր տուրքերից, վարելու էին պետական ու զինւորական պաշտօններ, մասնաւորապէս հայերին վարչական կարգով պիտի վերադարձէին այն հողային ու գոյքային բոնի գրաւումները, որոնք տեղի էին ունեցել իրաւազրկութեան ծանր տարիների ընթացքում:

Ու այսպէս 1908 թւի յուլիսի 11-ը գալիս էր նոր դարազրուխ կազմելու Տաճկաստանի ժողովուրդների, մասնաւորապէս քրիստոնեաների համար:

Սուլթան Համիդը—բռնակալների այդ բռնաւալը, որի թագաւորութիւնը բազմամիլիօն ժողովուրդների նգովքների վրա էր թառած, որի ձեռքերը քրիստոնեաների արիւնտով էր ներկւած, ստորագրելով սահմանադրութիւնը յօժարակամ չէր, որ նա զի-

Չու՛մ էր իր իրաւունքները ժողովուրդին: Ոչ մի միապետ, ոչ մի բռնակալ ինքնակամ չի հրաժարուել իր իրաւունքների մի մագից անգամ, ամէն տեղ ամէն ժամանակ բռնի ուժն է եղել, որ ստիպել է բռնակալներին գլուխ խոնարհելու երկրի պահանջներէ առաջ: Այդպէս էլ եղաւ սուլթանն Համիդի նկատմամբ:

Որն էր Տաճկաստանում գործող այդ ուժը, որի դէմ զըլուխ խոնարհեցրեց սուլթանն Հէմիդը, ժողովուրդը արդեօք, ոչ տարբարախտարար: Մահմէտական մասսաները դեռ քնած էին, խաւարը և կոյր Փանատիկոսութիւնը դեռ անթափանցելի մշուշով էին պատել նրանց գիտակցութիւնը, որ ընդունակ լինէին զղալու զրկանքները, գիտակցելու մարդկային իրաւունքները: Արթուն էին քրիստոնեա ժողովուրդները և գիտակցում էին ամէն ինչ, բայց նրանց ջանքերը բախուում էին մահմետական մասսաների անշարժութեան ու խորատկուում:

Տաճկաստանում բռնակալ կարգերը յեղաշրջող ուժ հանդիսացաւ զինւորական տարրը—բանակում գործող սպաների մի շրջան, որը յետոյ, երբ կառավարութեան զըլուխ անցաւ, այն արագութեամբ, ինչ արագութեամբ որ իրագործել տւեց սահմանադրութիւնը, նոյն արագութեամբ գլխիվայր դիմեց դէպի բռնակալ կարգերը՝ իշխանութիւնը իր ձեռքը պահելու համար, միանգամայն անտես առնելով ժողովրդական մասսաները, որոնք ինչպէս առաջին, այնպէս էլ այս դէպքում շարունակում էին անտարբեր մնալ:

Ահա այս կազմում է տաճկական յեղափոխութեան արտաւոր կողմը, որից և ծագում են յետագայ դէպքերը այնքան փոթորկաբեր:

Սուլթանն Համիդը դեռ ևս իր բռնապետական կարգերի արթուն հսկողութեան մէջ էր գտնուում, երբ Մակեդոնեայում—Սալօնիկում ու Մօնաստիրում գտնուող հրրորդ զօրաբանակի զինուորականների մէջ, զինւորականներ, որոնցինց շատերը եւրոպական կրթութիւն էին ստացել, սկսեց յեղափոխութեան խմորումը: Շուտով նոյն խմորումով վարակւեց նաև Ազրիսանուպօլսում գտնուող երկրորդ զօրաբանակի զինւորական կազ-

մը: Զինւորականներէ մէջ կազմեցին յիղափոխական կոմիտէներ, որանք կապեր հաստատեցին վաղուց Պարիզում գործող կոմիտէի հետ: Գնալով Մակեդոնեայում սկսուած շարժումը թափ ստացաւ շնորհիւ նրա, որ Պօլսի մէջ շատ ու քիչ աչքի քնկող կասկածաւոր գինւորները քշուեմ էին Մակեդոնիա, որով և դժգոհներէ թիւը աճուեմ էր արագ կերպով:

Յեղափոխութեան գլխաւոր վայր հանդիսացաւ Մօնաստիրը, ուր գործի գլուխ անցան երկու երիտասարդ սպաններ—Էնվեր և Նիազի բէյերը: Այս երկու սպանները Րեանէի մէջ ապրատամբութեան դրօշակ պարգեցին, ապատամբութիւնը ճնշելու համար Իգմիրից գորքեր ուղարկեցին, սակայն փոխանակ ապրատամբներէ վրա գնալու Իգմիրի գորքերը անցան նրանց կողմը: Այդ օրերի մեծ եպարքոս Ֆէրիդ փաշան, որը ստեղծուած դրութեան միակ էլքը համարուեմ էր սահմանադրութեան հռչակումը, պաշտօնանկ եղաւ և նրա տեղ անցաւ Սայիդ փաշան:

Դրութիւնը մնաց սպառնալից, գնալով խմորումը ծաւալ էր ատանում: Յուլիսի 10-ին Չաթալջայում գտնուող գորքը պատրաստուեց արշաւել Պօլսի վրա, արիւնհեղութիւնը մայրաքաղաքի փողոցների մէջ անխուսափելի դարձաւ. և ահա յուլիսի 11-ին, երբ սելամլիկը պիտի կատարէր, սուլթան Համիդը սարսափեալ տակ զոգոջուն ձեռքով ստորագրեց սահմանադրութիւնը: Նորակտը յայտարարեց ազգաբնակչութեանը թնդանօթածղութեան քրտնեղով և Տաճկաստանի յիղաշրջումը տեղի ունեցաւ առանց արիւնհեղութեան:

Յեղաշրջումը կատարեց, երկրի մէջ նոր կարգեր յայտարարեցին, բայց կառավարութեան ղեկը մնաց մեծ մասամբ հին ղէժիմի մարդկանց ձեռքում: Այսպէս կոչուած «երիտասարդ թուրքերը» կամ «միութիւն և առաջադիմութիւն» կոչուող կուսակցութիւնը, որ անցաւ յիղափոխական շարժման գլուխ, սահմանադրութիւնը հռչակելուց յետոյ երկրի ղեկը իր ձեռքը վերցնել չը կարողացաւ, նա ղեռ ևս շատ անփորձ էր մի երկիր կառավարելու համար, ուստի նա մնաց կառավարութեան գործադրութիւնների վրա հսկելու ղեռի մէջ, և տաճկական սահմանադրութեան մեղրամիսը սահեց խաղաղ:

Երիտասարդ թուրքերը հետո մնալով բարձր պատասխանատու պաշտօններից, կարողացան միառժամանակ հաւատա-

ըիմ մնալ իրենց սկզբունքներին, որի էութիւնը կազմում էր լայն քաղաքացիական պատուիթիւն առանց ցիղի ու կրօնի խտրութեան, ընդհանուր ձայնաաւուիթիւն, պարլամենտական կարգեր և պատասխանատու մինիստրութիւն:

Բայց շուտով նոյն երիտասարդ թուրքերը յայտնւեցին կառավարութեան գլուխը, երկրի ղեկը ամբողջապէս առած իրենց ձեռքը ու այդ օրից տեղի ունեցաւ այն, որը անխուսափելի էր լոկ զինւորականութեան ձեռքով կաղձակերպւած մի յեղափոխութեան: Եւ այս կատարւեց հետեւեալ պարագաներում:

Երիտասարդ թուրքերը զեռ ևս կառավարութեան գլուխ չ'անցած, դեռ ևս գեղեցիկ ծրագիրներ իրագործման ճանապարհին հանդիպեցին մի շարք դժւարութիւնների կաղձակերպւեց հակադիր մի ուժեղ հոսանք. օրհնակ նրանց ղէմ գուրս եկան արձակւած պաշտօնէութիւնը, ասպարէզից քաշւած լըրտեսներ զհակադիր բանակը, Ահրարներ ի կուսակցութիւնը, որի մէջ մտնում էին նաև քրիստոնեա տարրեր. բացի այդ, նրանց ղէմ սկսեց գործել դաւառական այն պաշտօնէութիւնը, որը թէև առերես յարել էր երիտասարդ թուրքերի կուսակցութեանը, բայց պատկանելով հին ըէժիմին չէր կարողանում հաշտել նոր կարգերի հետ, կարգեր, որոնք եկել էին դապելու անձայր կայմականութիւնները:

Այսպիսով երիտասարդ թուրքերը իրենց ղէմ ունէին արդէն մի ուժեղ հոսանք, երբ տեղի ունեցան պարլամենտական ընտրութիւնները և 1908 թւի զեկտեմբերի 4-ին բացւեց տաճական պարլամենտը:

Պարլամենտի կազմի մէջ մտան բուսականաշափ այլ ազգի պատգամաւորներ. այսպէս, օրինակ, 60 տեղ զբաւեցին արաբները, 25 տեղ ալբանացիները, 23 տեղ յոյները, 12 տեղ հայերը և 13 տեղ բուլղարները, սերբերը և հրէաները, այնպէս որ 275 տեղ ունեցող տաճական պարլամենտի մէջ 133-ը բռնել էին այլացեղ պատգամաւորները: Սակայն մահմեդական պատգամաւորները, շնորհիւ երիտասարդ թուրքերի ձեռք առած միջոցների, աննշան բացառութեամբ, ընտրւեցին միութեան և տաջադիմութեան կողմնակից մարդիկ: Չը նայած այդ բանին երիտասարդ թուրքերը պարլամենտում զեկտեմբերի 31-ին ձեռնարկելով անխտաճութիւն յայտնել նախարարապետ Քեամիլ փուշա-

ցին, պարտութիւն կրեցին. պարլամենտը ձայները մեծամասնութեամբ վստահութիւն յայտնեցին Քեամիլ փաշային: Երիտասարդ թուրքերի ղէմ ձայն տւին այլացեղ պատգամաւորները, ինչպէս և մանմատականների մի մասը:

Այս դարձաւ մի ազդեակ երիտասարդ թուրքերի համար, նրանք հաւաքեցին բոլոր ուժերը պարլամենտը իրենց յետևից քարշ տալու համար և ստիժը շուտով հանդիսացաւ: Պարլամենտի վստահութիւնը շահելով Քեամիլ փաշան հեռացրեց ներքին գործերի նախարար Հիլմի փաշային և արդարադատութեան նախարար Թէֆիկ փաշային, որոնք պատկանում էին երիտասարդ թուրքերի կուսակցութեանը: Սակայն 1909 թւի յունւարի 31-ի պարլամենտական նիստը եկաւ ապացուցելու, որ երիտասարդ թուրքերը յինւելով զօրքի վրայ միշտ կարող են սպառնալիքի տակ խեղդել պարլամենտի ձայնը: Այդ նիստում նաւատորմիցի կողմից յայտնւեց, որ նա չի ենթարկւի ծովային նախարարին. քացի այդ, պատգամաւոր ղինուրական Հարիր բէյը մի շարք ձառախօսութիւններից յետոյ ամբիօն բարձրանալով յայտարարեց, որ զօրքի սկիները կ'դառնան Քեամիլի ղէմ, խօսքեր, որոնց ձայնակցեցին հանդիսականների տեղերը բննած բազմաթիւ ղինուրականներ:

Այս սպառնալիքի տակ պարլամենտը 198 ձայնով ընդդէմ 8-ի անվստահութիւն յայտնեց Քեամիլ փաշային. Քեամիլը անմիջապէս հրաժարական տւեց և նրա տեղ անցաւ Հուսէին Հիլմի փաշան:

Այս ղէպքից յետոյ երիտասարդ թուրքերի ղէմ ղժգոհութիւնը աւելի մեծացաւ. Ահրարների կուսակցութիւնը և այլացեղ շրջանները սկսեցին մեղադրել Միւթեան և Առաջադիմութեան կոմիտէն պարլամենտի վրայ բռնութիւններ գործելու մէջ. միւս կողմից զլուխ բարձրացրին հողեօրականներն ու սօֆիստները՝ մեղադրելով նրան անհաւատութեան և Իսլամը կոքուստի մատնելու մէջ:

Ահա ստեղծւած այդ գրութիւնը հաշի տաւ Ելիզիէ ճիւղը — սուլթան Համիդը իր շրջապատողներով, որոնք լուռ ըստաւում էին յարմար ստիժի նրանք առաջ քաշեցին ղժգոհ տարրերը, սօֆիստների միջոցով պրօպագանդա մղեցին Պօլսում գաղտնի զօրքի մէջ և 1909 թւի մարտի 31-ին սուլթանների մայ-

բաքաղաքում տեղի ունեցաւ մի նոր յեղափոխութիւն զարձեացը զօրքի աջակցութեամբ. բայց այս անգամ զօրքը կանգնեց սահմանադրութիւնը տապալելու և Շարիաթը վերականգնելու զրօշտակ:

Մարտի 31-ին զօրքը ապստամբեց օֆիցերութեան դէմ. մի քանի օֆիցերներ ընկան սրախոխող, զինւորները դուրս եկան փողոցները ու զբաւեցին Այա-Սօֆիայի հրապարակը և պահանջեցին նախարարական կազմի արձակումը, թուրք ղեկավարներէ հեռացումը ասպարէզից ու Շարիաթի վերականգնումը:

Երիտասարդ թուրք ղեկավարները անակնկալի գալով փախան զուխները կորցրած, պարլամենտը ազմկող զօրքերի հրացանաձգութեան ժխորի տակ կազմեց ժողովըզին ուղղած մի կոչ, որով իր համաձայնութիւնն էր յայտնում ասպտամբներէ դրած պահանջներին, իսկ սուլթան Համիդը ներուսն շնորհելով ասպտամբներին՝ յանձնարարեց Թէֆիկ փաշային կազմել նոր նախարարութիւն, պատուիրելով հետեւի Շարիաթի սկզբունքներին: Այսպիսով սուլթան Համիդը ձեռքի մի շարժումով տապալեց այն կարգերը, որ նա ընդունել էր 1908 թւի յուլիսի 11-ին:

Սակայն այս տեղի ընդամենը մի քանի օր, 1909 թւի ապրիլի 13-ին Մահմուդ Շէֆքէթ փաշան անցնելով Սալօնիկի զօրքերի գլուխը շարժեց Պօլսի վրա. սուլթանների մայրաքաղաքի փողոցները սկանառես եղան արխանահեղ ընդհարումների և Սալօնիկի զօրքերը զբաւեցին Պօլսը, որից յետոյ ապրիլի 14-ին Սան-Ստեֆանօ հաւաքւած տաճկական պարլամենտը Շէյխ-Ռալիսլամի ֆէթիաայի համաձայն գահընկեց յայտարարեց Աբդուլ-Համիդին և գահ բարձրացրեց Մահմէդ-Րէշադին:

Մարտի 31-ին Պօլսում տեղի ունեցած բէակցիօն այս շարժման հետ միաժամանակ գաւառները զնայցին զրգուիչ հեռագրերներ քրիստոնեաների, առանձնապէս հայերի դէմ. զրգուսնն ու խմորումը գաւառներում ծաւալ ստացաւ, կոյր ֆանատիկոսութիւնը ծայր տեղի և Աղանայում տեղի ունեցան հայկական ջարդեր: Աղանան իր շրջակայ հայաբնակ վայրերով մի քանի օր շարունակ զարձաւ վայրագութիւնների ու գազանութիւնների:

վայր, կատաղի ամբոխը յարձակում ու սպանում էր պատահած հային, մտնում էր թաղերն ու տները, թալանում ու այրում էր գոյքն ու հարստութիւնը և պաշտօնէութեան ու աստիկանութեան խրախուսիչ հանդիսատեսութեամբ գործում էին անպատիժ կերպով սոսկալի խժոժութիւններ: Հազարաւոր ղրակներ ընկան Աղանայի մէջ, շրջակայ դաշտերում և գիւղերում, որոնց հետքը բոլորովին կորցնելու համար սալլերով կրեցին Սինունի գետը և յանձնեցին նրա ալիքներին Միջերկրականի ծոցը տանելու համար:

Աղանայի ջարդերի մանրամասն նկարագիրը, որը կազմում է հայ ժողովրդի տարեգրութեան մի արիւնտտ էջը, բերել այստեղ դուրս է մեր նպատակից, այդ մասին յատուկ գրածքներ կան մի քանիսը. մենք բաւականանում ենք արձանագրելով միայն այն, որ այդ սոսկալի աղէտին զոհ գնացին աւելի քան 18,000 հայեր, որից 7000-ը Աղանայի մէջ, իսկ աւելի քան 11,000-ը շրջակայ դաշտերում և գիւղերում: Այսպիսով իր զոհերի քանակով հազարէկոյ Աղանայի աղէտը հկաւ նոր թուրքիայի պատմութեան մէջ մի նոր էջ բացելու:

Եւ եթէ Մահմուդ-Շէֆքէթ վաշայէ բանակը մի երկու օրով ուշ շարժէր տեղից և մի երկու օրով ուշ զբաւէր Պօլիսը, սոսկալի աղէտը պիտի ծաւալէր հայկական վիլայէթներում ու գաւառներում և մենք ակնատես պիտի լինէինք մի սոսկալի ամայացման, որպիսին նոյն իսկ նման էջերով հարուստ հայ տարեգրութիւնը տեսած չը լինէր: Բարբրազդարար յաղթական բանակը շուտ մտաւ Պօլիս և հայկական ջարդերը սահմանափակեցին Աղանայի աղէտով:

Երիտասարդ թուրքերը 1908 թւի յուլիսի 11-ին սուլթան Համիդի ձեռքով հռչակել տալով տաճկական սահմանադրութիւնը, ապա արագօրէն ճնշելով 1909 թւի մարտի 31-ի բէակցիօն շարժումը ու գահընկեց անելով սուլթան Համիդին, թւում էր որ այս երկու պատմական ակտերը կատարելուց յետոյ աւելի հաստատուն քայլերով պիտի առաջ տանեն սահմանադրութեան մէջ ընդգծած սկզբունքները, սակայն այդպէս չհղաւ:

Մարտի 31-ին բէակցիօն շարժումը ճնշելուց յետոյ երի-

տասարդ թուրքերը, որոնք մինչև այդ, կարելի է ասել, գործում էին զեռ ևս վարագոյրի տակ, դուրս եկան հրապարակ և երկրի զեկը առան իրենց ձեռքը: Նախարարական կաղմը անցաւ թալաթ, Ջաւիդ, Հաջի Աղլի և Սալիլ բէյերին, իսկ Մահմուդ-Շէֆքէթ փաշան ստանձնեց զինուորական նախարարի պատասխանատու պաշտօնը:

Պետական կարեւոր հարցերը նախ քննուում ու որոշուում էին Միւսթեան և Առաջագիմուսթեան կոմիտէի նիստերում և ապա գործադրութեան տրւում: Ընդհանուր է նախարարապետներ նորից նշանակուում էին հին բէյիմի փորձառու մարզկանցից, բայց նրանք համարեա ոչ մի դեր չէին խաղում, կամ կուրօրէն հպատակուում էին կոմիտէի վճիռներին և կամ հեռացուում էին պաշտօնից, եթէ նրանք փորձում էին հակառակ գնալ կոմիտէի թիւղորոնքներին: Օրինակ այդ ձևով հեռացեց նախարարապետութիւնից Հիլմի փաշան:

Երիտասարդ թուրքերը անցնելով կառավարութեան գլուխ բնականաբար իրենց ղէմ ստեղծեցին հակադիր մի ուժ: Սուլթան Համիդի հետ քչեցին նրա բէյիմի մարզիկ, բազմաթիւ պաշտօնեաներ ու անհատներ, որոնք կասկածուում էին բէյեզիտն շարժման մասնակցելու մէջ պատժեցին և աքսորեցին, գնալով դժգոհների թիւը մեծացաւ ու ծաւալեց և նոր կառավարութիւնը երկրի զեկը իր ձեռքում պահելու համար զիմեց միջոցների, որոնք գնալով յանգեցին այլակերպ ձևերի՝ հանդիսանալով երիտասարդ թուրքերի տրագիկան:

ժողովրդական ռը խաւերի վրա պիտի յինւէին նրանք, ասա այն հարցը, որ սկսեց զբաղեցնել երիտասարդ թուրքերին:

Կանգնել ընդգծած սկզբունքների վրա, առաջ տանել նախկին ծրագիրը, այդ պահանջում էր երկրի շահը, պետութիւնը վերլուծելով իրաւական կարգերի, երկիրը ոչ միայն տնտեսապէս կը բարձրանար և ժողովրդական խաւերը կառաջադիմէին, այլ և կը բաւարարէին դժգոհ արարական ցեղերը և քրիստոնեա ժողովուրդները, որովհետև ընդմիշտ վերջ կը տրէր եւրոպական պետութիւնների միջամտութեանը Տաճկաստանի ներքին գործերում: Սակայն նոր իրաւակարգի հետ չէր հաշուում հին բէյիմը—նախկին պաշտօնեաների ու լրտեսների բանակը և հոգևորականութիւնը: Չէր հաշուում նաև մահմեդական տղէա մասսան,

որը հակառակ իր շահերի հեշտութեամբ նեղուում էր մոլորութիւնների մէջ և գնում էր կոյր, ֆանատիկոս հոգևորականութեան յետևից, հոգևորականութեան, որի նշանաբանն էր Շարիաթը:

Երկրի շահը, առողջ տրամաբանութիւնը թելադրում էր նոր իրաւակարգ, ազէտ մասսան, նրա հետ միասին նաև գծողն տարրերը թելադրում էին հին իրաւակարգ—Շարիաթը:

Եւ երիտասարդ թուրքերը գնացին Շարիաթի յետևից: Եւ շուտան քիչ բան էր աւել նրանց, անցնելով կառավարութեան գլուխը չը կարողացան ազատ մնալ մահմեդական մասսայի հոգեփանութիւնից ու բռնեցին շիկ ճանապարհը:

Սահմանադրութեան տեկտի մէջ մտցրին մի կէտ, որով պարտաւորեցնում էին սուլթանին պահպանել Շարիաթը և մի այլ կէտ, որով խստումն էր արւում որ օրէնքները պիտի կազմւին Շարիաթի ոգուն համաձայն: Միաժամանակ Շէյխ-Ռւլ-Քալամը ուզողն ժողովրդին մի կոչ, որով յայտարարում էր, որ կառավարական սահմանադրական ձեւը Շարիաթին հակառակ չէ:

Այսպիսով երիտասարդ թուրքերը մտան Իսլամի պաշտպանութեան տակ և աստիճանաբար յանգեցին պանիսլամիզմին:

Ազգային քաղաքականութիւնը պետական կազմերի մէջ մի կատարեալ շարիք է, մանաւանդ այն պետութիւնների, որոնց ազգարնակութիւնը կազմւած է բազմաթիւ այլատարր և այլապիկ ժողովուրդներից, ներկայ դէպքում կառավարութիւնը մոռանալով համապետական շահը, առաջ է քաշում տիրող ցեղի առաջնութեան քաղաքականութիւնը և զբաժնով էլ զարկ է տալիս ցեղային կռիւների, ներքին խլրտումների երկրի մէջ, որից և սուժում են ամենբը:

Երիտասարդ թուրքերը սկսելով ժողովրդական մասսաների ազատագրման գեղեցիկ սկզբունքներից՝ անցան յեղափոխութեան, հասան պետական ժողովրդական կազմի և ապա այստեղից գլխիվայր իջնելով գէպի Շարիաթը, յանգեցին պանիսլամիզմին, որի ընթացքը եղաւ այն, ինչ որ այժմ տեսնում ենք:

Այսպիսով երիտասարդ թուրքերի կառավարութեան գլուխ անցնելը դարձաւ մի կատաստրոֆ ոչ միայն Միութեան և Առաջադիմութեան կուսակցութեան համար, այլև օսմանեան ամբողջ պետութեան: Կուսակցութեան շարքերը նօսրացան ու նօս-

բացան, մաքուր տարրերը քաշեցին ասպարէզից, գործի գլուխ մնացին մի քանի անհատներ, որոնք խրաեղով պետականութեան տիրմի մէջ յանգեցին հին կարգերին և եւրոպական կարգերի զիմակի տակ գնացին իրագործելու Սուլթան Համիդի ծրագիրը:

Այդ ծրագիրը շատ աւելի յայտնի է, որ կարիք լինէր նրա էութիւնը պարզել. դա քրիստոնեաներին, մասնաւորապէս հայերին բնաջնջելու ծրագիրն էր, որին և զիմեցին հեանողական կերպով երկտասարդ թուրքերը:

Դիմենք փաստերին:

Նախ Ազանայի ջարդը: Այդ ջարդը, ինչպէս տեսանք, տեղի ունեցաւ մարտի 31-ին բէակցիօն շարժման հետ միաժամանակ և տեղի ունեցաւ բէակցիօն շարժումը ծրագրող հոսանքի թելադրութեամբ, այլ խօսքով հին բէժիմի ձեռքով: Այս է գէպքի առերևոյթ փաստացի կողմը, բայց թափանցելով գէպքի էութեան մէջ, պարզ երևաց երկտասարդ թուրքերի մեղսակցութիւնը այդ գործում: Ազանայի ջարդը կատարւեց կուսակալի և ստաիկանութեան ներկայութեամբ ու խրախուսանքով, պաշտօնեաներ, որոնք յարել էին երկտասարդ թուրքերի կուսակցութեանը և հանդիսանում էին նրա ներկայացուցիչները, բայց այդ, սճրագործութեան մէջ մասնակցութիւն էին ունեցել խաղաղութիւնը վերականգնելու համար ուղարկւած զօրքերը: Երկտասարդ թուրքերը այդ ոճիբի պատասխանատուութիւնը վերցրին իրենց վրա նրանով, որ գործի քննութեան ժամանակ ոչ միայն Ազանայի կուսակալ Ալի-Ջէւազը և մութասարիֆները, այլև զինւորական ատեանները ամեն կերպ աշխատեցին, որ ջարդի գլխաւոր յանցագործները հրապարակ չը գան և միաժամանակ մեղադրւեն նաև ինքնապաշտպանութեան զիմած հայերը:

Ուշագրաւ է այն, որ ջարդերը քննելու Ազանա ուղարկւած զինւորական ատեանը նոյնիսկ տաճիկների կողմից ճանաչւեց անարդար, և երբ զինւորական ատեանի անարդարութիւնը քննելու համար Ազանա ուղարկւած Լսմայիլ Ֆազլի փաշան — մի արդարամիտ մարդ — վերադարձաւ ատեանը կողմնակալութեան մէջ մեղադրող զեկուցումով, մի առ ժամանակ անց պաշտօնանկ եղաւ կենսաթոշակի կարգւելով:

Ձինւորական ատեանը յետ կանչւեց և ուղարկւեց երկրորդ զինւորական ատեան, սա նոյնպէս չուզեց արդարադա-

տութիւնը հրապարակ հանել և հաստատ համոզմունք մնաց, որ երկրորդ զինւորական ատեանը գնաց մի զաղանի հրահանգով, այն է; շարժել առաջին ատեանի ընթացքով:

Վերջապէս Ազանա ուղարկեցին պարլամենտի կողմից երկու անդամներ—մէկը տաճիկ—Իւսուֆ Բէմալ բէյը, միւսը հայ—Ռօզօսթոյի պատգամաւոր Յակոբ Պապիկեանը, բայց քացարձակ կատարւած ոճրագործութիւնների դէմ կոյր մնաց տաճիկ պատգամաւորը և երկու պատգամաւորները վերադարձան միանգամայն միմեանց ժխտող զեկուցումներով:

Այս բոլորից յետոյ եղաւ այն, որ ինքնապաշտպանութեան դիմած և թուրք խուժանի վրա կրակած հայերը ճանաչեցին ջարդարար խուժանին համահաւասար յանցագործներ, և մայիսի սկզբին զինւորական գատարանի ալձակած վճռի հս մաձայն Ազանայում ինը ոճրագործ մահմեդականների հետ միասին կախադան հանեցին նաև վեց հայեր: 18,000 հայեր էին ընկել: 18,000 ոճիրներ էին դարձել և այդ ծով ոճրագործութեան մէջ երիտասարդ թուրքերի կոտորուածութիւնը ինը ոճրագործ գտաւ ու պատժեց. մինչդեռ ինքնապաշտպանութեան դիմող փոքրաթիւ հայերից վեցին մահապարտ ճանաչեց:

Ազանայի ոճիրների սրտաճմլիկ մանրամասնութիւնները մէկ կողմից, զինւորական ատեանի և քննիչ յանձնաժողովի անարդար վերաբերմունքը զէպի ոճրագործ մահմեդականներն ու անմեղ հայերը՝ միւս կողմից հայ պատգամաւոր Պապիկեանի վրա այնպիսի դարձուրելի տպաւորութիւն գործեցին, որ նա Պօլիս վերադառնալով անասելի հոգեկան տանջանքներ կրեց և գերեզման իջաւ, թողնելով մի տեղեկագիր, որը ահագին լոյս էր սփռում Ազանայի ոճիրների վրա:

Երկրորդ առիթը, որ եկաւ տպացուցելու երիտասարդ թուրքերի հակակիր վերաբերմունքը զէպի հայերը, դա վարչական կարգով բոնի գրաււած հոգերի վերադարձնելու խնդրի ձգձգումն էր: Հին բէթիմի օրօք կատարւած կողոպուտներն ու հողային գրաւումները հայերի նկատմամբ շատ ազդակաղ, անթիւ ու անհամար էին, որ կարելի լինէր երկրին երկրին խաղաղութիւն աւետող սահմանադրութեան հետ միաժամանակ չը յայտարարել նրանց կարգաւորելու անհրաժեշտութիւնը: Յայտարարեց, այո, որ կեղիքւած, հողազուրկ դարձած հայերը վարչական կարգով պիտի յետ ստանան:

Քրիստոսը կորցրած հողերը, բայց իրականութեան մէջ այդ որոշումը մնաց անկատար, շատ տեղերում նոյնիսկ անուշաղբի: Հայերի անթիւ դիմումներն ու բողոքները մնում էին անհետեանք: Այս օրինակ ձգձգումները վերադրել գաւառական պաշտօնեաներին, բացառել գաւառական վարչական մարմինների անփութութեամբ միամտութիւն կը լինէր. խնդրի ձգձգումը տեղի էր ունենում Պօլսից կընող ներշնչութիւնով: Տեսականօրէն ուղելով վճռել այդ կնճռոտ խնդիրը, զործնականապէս երիտասարդ թուրքերը ուղիցին թաղել այն: Շատ աւելի վաղ նրանք յարեցին պանիսլամիզմին և դարձան ղէպի հայերը աններողամիտ, որ կարելի լինէր այդ խնդիրը լուծել: Ու գաւառներից տեղացող բազմաթիւ դիմումները այդ առիթով պատրիարքարան և պատրիարքարանի գլխումները կառավարութեանը մնում էին անուշաղբի, մինչև որ նորանոր ղէպերը գալիս էին այդ կարևոր խնդիրը մոռացնել տալու:

Իսկ նորանոր ղէպեր սկսեցին տեղի ունենալ այն օրից, երբ երիտասարդ թուրքերը կառավարութեան ղլուխը անցնելով աստիճանաբար յանգեցին սուլթան Համիդի նեղսիրտ քաղաքականութեանը ղէպի քրիստոնեաները:

Երիտասարդ թուրքերի նեղսիրտ քաղաքականութիւնը արտայայտութիւն գտաւ նախ Մակեդոնիայում ու Ալբանիայում, հակառակ նրանց արած խոստումներին: Մահմանադրութեան մեղրամտում հաստատւած կազմակերպութիւններն ու ժողովարանները Մակեդոնիայում փակեցին. փակեցին նաև բոլջարուսուցիչները ժողովարանները: Կառավարութիւնը սկսեց գիւտաթափ անել քրիստոնեաներին, պատրակ բռնելով յեղափոխական խմբերի գոյութիւնը դիմեց բռնի միջոցների՝ աջակցութիւն գտնելով մահմեդական ազգագնակութեան կողմից: Հալածանքը քրիստոնեաների ղէմ աւելի սուր բնոյթ ստացաւ Ալբանիայում, որը ներառող թուրքերի 1910 թիւն Ջաւիդ փաշայի արշաւանքով, որի ժամանակ տակն ու վրա եղաւ հիւսիսային Ալբանիայի մեծագոյն մասը.

Սահմանադրութեան առաջին շրջանում սկսւած ազգային և կուլտուրական զործնելութիւնը հայկական գաւառներում նոյն

պէս ենթարկւեց հետապնդման երիտասարդ թուրքերի կողմից։ Առ երես բարեկամ մնալով հայ ժողովրդի ծոցում գործող Դաշնակցութեան ներկայացուցիչներին հետ, այն Դաշնակցութեան, որը ձեռք ձեռքի տւած երիտասարդ թուրքերին ոչ մի ջանք չէր խնայել տապալել սուլթան Համիդի բէժիմը և իրաւակարգ հաստատել բազմատարր օսմանեան պետութեան մէջ, նոյնիսկ այդ կուսակցութեան ներկայացուցիչներին դէմ սկսեց գաղանի հալածանք։ Պօլսից գաղտնի հրահանգներ էին գնում գաւառները հետապնդելու հայ գործողներին, այս հրահանգներին պիտի վերագրել Ախթամարի թեմական տեսուչ Ռափայէլ Երիցեանի ըստ պանութիւնը կարկառում 1911 թւին տեղի ունեցած։

Երիտասարդ թուրքերի վերաբերմունքը չը փոխւեց նոյնիսկ 1910 թւից սկսւած քրիստոնեաների զինւորագրութիւնով, ճիշտ է, այդ ահտը գալիս էր հարթելու խտրականութիւնը գէպի քրիստոնեաները, սակայն, կարծէք, այդ հակառակ հետեանք ունեցաւ այն տէսակէտից, որ մահմեդականները չէին կարողանում հաշտ աչքով նայել երէկւա բայաների ներկայութեանը գորքի շարքում, իսկ քրիստոնեաները չէին կարողանում մտնել երէկու կեղեքողների դրօշակի տակ այն ոգևորութեամբ, ինչպէս հարկաւոր էր։

Դրութիւնը չը փոխւեց նաև Սերբիայում ու Միջագետքում, դժգոհ արարական ցեղերը չստացան այն խոստումները, որ արել էին նրանց սահմանադրութեան հռչակումով, տեղական ինքնավարութիւնը մնում էր լոկ խոստում։

Երիտասարդ թուրքերը գործի մէջ հետզհետէ շեղւելով իրենց դաւանած նախկին սկզբունքներից, կտրելով իրենց կապերը իրաւակարգի ձգտող այլացեղ ժողովուրդների հետ և քրիստոնեաների վերաբերմամբ բռնելով սուլթան Համիդի ուղին, այնու ամենայնիւ անկարող եղան ներքին կապ ստեղծել գոնէ տիրող տաճիկ տարրի բարձր խաւերի մէջ, որի վրա յենւել կարողանային։ Այս էլ ոչինչ, եթէ միայն համերաշխութիւն լինէր Միութեան և Առաջադիմութեան կուսակցութեան մէջ։ Շուտով երկպառակութիւն ծառայեց կուսակցութեան շարքերում և անբաւ պարլամենտական Ֆրակցիայի մէջ, որի հետեանքը եղաւ այն, որ Ֆրակցիան բաժանեց երկուսի և անազին թուով պատգամաւորներ գաւառելով կազմեցին նոր խմբակ իր յատուկ ձեռարդով։

Այս խմբակը զեկավար ունեցաւ յեղափոխութեան մէջ անուն հանած գնդապետ Սաղղին, որ քաշուելով կուսակցութիւնից, սկսեց մի ուժեղ պայքար իր նախկին գաղափարակիցների դէմ: Երիտասարդ թուրքերը հետզհետէ կորցնելով թէ հեղինակութիւն և թէ իրենց ընկերներէից շատերին՝ զիմեցին բռնի ուժի և նոյնիսկ տերրորի: 1911 թւի մայիսի 27-ին դաւադրութեամբ սպանւեց գնդապետ Սաղղի համախոհ լրագրական աշխատակից Զէքիին:

Միւս կողմից երիտասարդ թուրքերը կորցնելով ձայներէ մեծամասնութիւնը պարլամենտում, զիմեցին պարլամենտը արձակելու շեղ միջոցին, յոյս ունենալով նոր ընտրութիւններէ միջոցին ձայներ շահել:

1912 թւի յունւարի 5-ին պարլամենտը արձակւեց շնորհիւ այն օրէնքի մերժման, որ ներկայացրել էր կառավարութիւնը պարլամենտը արձակելու սուլթանական իրաւունքը ընդլայնելու առիթով:

Նոր ընտրութիւնները տեղի ունեցան բռնութիւնների ու ճնշման տակ և նոյն թւի ապրիլի 5-ին հրաւիրւած պարլամենտում ճնշող մեծամասնութիւն կազմեցին երիտասարդ թուրքերի կողմակիցները: Ընդգրկմադիր կուսակցութիւնների քաշուելը ասպարէզից աւելի ևս խորացրեց դժգոհութիւնը և շուտով այն զօրքը որ պնոււմ էր երիտասարդ թուրքերի յետևից, դարձաւ նրանց դէմ: Օրինակ Մժնաստիրում գտնուող մի քանի զինւորականներ իրենց բոտաներով քաշուեցին լեռները և զիմեցին կառավարութեանը՝ պահանջելով չը խախտել սահմանադրութիւնը: Մրա հետեանքը եղաւ այն, որ զինւորական նախարար Մահմուտ-Շէֆքէթ փաշան մի օրէնք մտցրեց պարլամենտ, որով արգելք էր դրւում զինւորականների մասնակցութեանը քաղաքական կուսակցութիւնների մէջ: Սակայն այս նոր օրէնքը ոչ միայն հետեանքի չը հասցրեց, այլև նոր երևոյթների ազդակ դարձաւ, այսպէս, շուտով կազմւեց մի նոր կուսակցութիւն, որը կոչւեց «Հայրենիքը փրկողները» զինւորական լիգա:

Այս նոր կուսակցութիւնը քննադատելով կառավարութեան սխալ ընթացքը, որը տանում էր երկիրը դէպի կորուստ և դէպի Եւրոպայի միջամտութիւնը, պահանջում էր.

1. Կառավարական ներկայ կազմը փոխարինել Եւրոպայի

վատահուծիւնը վայելող նոր կազմով:

2. Հեռացնել ասպարէզից պետական ներքին գործերին միջամտող անպատասխանատու մարդկանց:

3. Արձակել պարլամենտը և նշանակել նոր ընտրութիւններն առանց օստիկանութեան միջամտութեան:

Զինուորական լիզան շուտով իր շուրջը համախմբեց զինուորականութիւնը և յատուկ պատուիրակութեան միջոցով իր պահանջները դրեց սուլթանի առաջ: Գրութիւնը բարդացաւ, քաղաքական կռիւնները դարձան անխուսափելի և երիտասարդ թուրքերի կառավարութիւնը տեղի տւեց: Կառավարութեան զբաղուիս անցան հակառակ մարդիկ, ինչպէս էին, Ահմէդ-Մուխթար փաշան՝ նախարարացեալ, Քեհամիլ և Նազիմ վաշանները՝ նախարարներ: Այս կազմի մէջ արտաքին գործերի նախարար կարգուեց Նորատունկեանը:

Մուխթար փաշան արձակեց պարլամենտը, նշանակեց նոր ընտրութիւններ, որի միջոցին գործադրւեցին նոյն միջոցները, որոնց զիմել էին երկտասարդ թուրքերը նախորդ ընտրութեան ժամանակ:

Ահա այս միջոցին պայթեց բալկանեան պատերազմը: Ճիշտ է բալկանեան պատերազմի մեղքը ամբողջովին ծանրանում էր երիտասարդ թուրքերի վրա, իբրև հետևանք նրանց յետապայ գործնէութեան, որը յանգել էր սուլթան Համիդի քաղաքականութեան, բայց այն հանգամանքը, որ այդ պատերազմը տեղի ունեցաւ այն միջոցին, երբ կառավարութեան զուլիս էր կանգնած հակառակ հոսանքը, նաև այն հանգամանքը, որ բալկանեան պատերազմը ունեցաւ տաճիկների համար միանգամայն անյաջող էլք, այդ իսկ պատճառով անյաջողութիւնների մեղքը բարդուեց երիտասարդ թուրքերի հակառակ կառավարութեան վրա:

Բալկանեան պատերազմը սկսել էր արդէն, երբ Տրիպուլից վերագարձաւ Լնվեր բէյը—երիտասարդ թուրքերի ետանդուն գործիչը՝ բաւականին ժողովրդականութիւն ձեռք բերած և ամբողջապէս նետուեց պատերազմի մէջ, միաժամանակ ձգտելով բարձրացնել կուսակցութեան խախտւած հմայքը: Սակայն պատերազմը վերջացաւ տաճիկների պարտութեամբ և 1913 թւի յունւարի 4-ին Էրուպական վեց պետութիւնների ներկայացուցիչները կառավարութեանը յանձնեցին մի նոտա, որով խոր-

հուրդ էին տալիս զիջիլ Բօլշարխային Ազրիանուպօլիսը: Այս միջոցին նախարարապետ էր Քեամիլ փաշան, իսկ զինւորական նախարար էր Նազիմ փաշան: Յունւարի 9-ին նախարարապետ Քեամիլ փաշայի նախագահութեամբ կազմւած պալատական ժողովը ձայն տւեց յօգուտը խաղաղութեան, իսկ այս եղաւ այն առիթը, որին անհամբեր սպասում էին երիտասարդ թուրքերը:

Պալատական ժողովից մէկ օր անց, յունւարի 10-ին երիտասարդ թուրքերի երկու տաքազլուխները— Էնվիր և Թալաթ բէյերը երկու հարիւր հոգու զլուխ անցած ներս խուժեցին Բարձր Դուռը այն ժամանակ, երբ տեղի ունէր նախարարական ժողով, սպանեցին զինւորական նախարար Նազիմ փաշային, ըստորագրել տւին նախարարապետ Քեամիլ փաշային հրածարական իսկ այդ նոյն օրը Մահմուդ-Շէֆքէթ փաշան կարգւեց նախարարապետ, որով և կառավարութիւնը նորից անցաւ երիտասարդ թուրքերի ձեռքը: Մահմեդական մասսաները այս անգամ էլ անտարբեր կերպով ընդունեցին կատարւած յեղաշրջումը, մի երեւոյթ, որը կազմում էր տաճկական սահմանադրութեան առանձնայատկութիւնը:

Կառավարութիւնը նորից անցաւ երիտասարդ թուրքերի ձեռքը, բայց զրութիւնը ոչնչով չը փոխւեց, այլ կարելի է ասել տւելի ևս վատացաւ: Նազիմ փաշայի սպանութիւնը զրգուում առաջ բերեց զօրքի մէջ, նա ունէր բազմաթիւ համակրողներ: Բացի այդ, 1913 թւի մայիսին Լօնդօնում ստորագրւեց հաշտութեան նախնական պայմանագիրը, որից պարզւեց, որ Ազրիանուպօլիսը չը կարողացաւ փրկել նաև երիտասարդ թուրքերի կառավարութիւնը: Եւ աստիճանաբար ձևակերպւող դժգոհութիւնը արտայայտւեց Նազիմ փաշայի վրէժխնդրութեամբ, նոյն թւի յունիսի 2-ին աւտօմօբիլով Բ. Դուռը գնացած միջոցին սուրթան Բայազիտի հրապարակում Մահմուդ-Շէֆքէթ փաշան ըսպանւեց:

Անա այստեղից սկսեց երիտասարդ թուրքերի կառավարութեան այն շրջանը, որը յայտնի է իր տերբօրներով, շրջան, որը ընթացաւ արիւնոտ ուղիով մինչև Համակրողական պատերազմը:

Մահմուդ-Շէֆքէթ փաշայի սպանութեան հետեանքով տեղի ունեցան բազմաթիւ ձերբակալութիւններ, դատեր ու աքսորներ: Նոյն սուլթան Բայազիտի հրապարակում կառուցեցին մի շարք կախաղաններ, որոնց վրա յուսիսի 11-ին կախաղան հանեցին 12 զինւորականներ ու պաշտօնեաներ. դրանց մէջ էին սուլթան Համիդի փեսան—Գամաղ-Սալիհ փաշան, թօփալ Թէֆֆիկը, հարիւրապետներ Քեազիմ և Մուշիպ բէյերը: Բացի այդ, զինւորական ատեանը մահուան վճիռ արձակեց արտասահմանում գտնուող 11 նշանաւոր մարդկանց նկատմամբ, որոնցից էին Սարահ-Էդգինը, Շէրիֆ փաշան և նախկին ներքին գործերի նախարար Բէշիդ բէյը: Այս աքսորներէց յետոյ կառավարութիւնը իրենց ձեռքն առան երիտասարդ թուրքերի երեք ներկայացուցիչները—Էնվեր, Թալաաթ և Ջէմալ բէյերը: Էնվեր բէյը բռնեց իր ձեռքով ըսպանւած նազիմ փաշայի տեղը:

Էնվիրը նշանակելով զինւորական նախարար, դարձաւ միանգամայն անզուսպ, մանաւանդ երբ բալկանեան ներքին պատերազմից օգուտելով անցաւ զօրքերի գլուխը և առանց զիմադրութեան 1913 թւի յուլիսին շարժեց Ադրիանուպօլսի վրա և գրաւեց քաղաքը: Բուզարական զօրքերը զբաղւած Սերբիայի դէմ մղւած պատերազմով հնարաւորութիւն չունեցան զիմադրել տաճիկներին և Ադրիանուպօլսը նորից անցաւ Տաճկաստանին:

Այս յաջողութիւնից յետոյ երիտասարդ թուրքերի, աւելի ճիշտ Էնվեր-Թալաաթ-Ջէմալ խմբակի կառավարութիւնը այնքան երես առաւ, որ սկսեց արհամարհել ամեն ինչ, թէև իտալական ու բալկանեան պատերազմի հետեանքով կորցրել էր Տրիպօլիսը և Եւրոպական Տաճկաստանի խոշորագոյն մասը: Արտասցնելով հալածանքը հակառակ հոսանքների դէմ, շարունակից հալածանքը նաև քրիստոնեաների դէմ:

Այսպէս, օրինակ, յետ գրաւած Ադրիանուպօլսի և նրա շրջանի քրիստոնեա ազգաբնակչութեանը ջարդերի սպառնալիքով ստիպեցին զաղթել իրենց տեղերից: Նոյն ձևի հալածանք սկսեց նաև Փոքր-Ասիայում, որի նպատակն էր զաղթեցնել քրիստոնեաներին, իսկ նրանց տեղ բերել բնակեցնել կորցրած Մակեդոնեայի մահմեդականութիւնը:

Նման հալածանքները շարունակեցին ու թափ ստացան նաև հայերի նկատմամբ:

Այսպիսով երիտասարդ թուրքերի կառավարութիւնը իբր գոյութեան կարճ ընթացքում ապացուցեց, որ ինքը ընդունակ չէ երկրի մէջ կարգ ու կանոն մտցնելու, որ քրիստոնեա ժողովուրդներ, ինչպէս և հայերի գրութիւնը մնում է նոյնը, ինչ որ առաջ էր, և որ ապիկար կառավարիչներէ շնորհիւ երկիրը մնում է բաց դուռ եւրոպական պետութիւնների միջամտութեան, որոնք հետ միասին նաև նրանց շահերի մրցման առաջ: Սրա զօրաւոր ապացոյցը հանդիսացաւ այն անց ու դարձը, որ տեղի ունեցաւ հայկական վերջին բեֆօրմներէ շուրջը:

1913 թւի յունիսի 8-ին Պօլսի ուստական ղեսպան Գիրսը եւրոպական մեծ պետութիւնների ներկայացուցիչների խորհրդակցութեանը յանձնեց հայկական բեֆօրմներէ մի նոր ծրագիր:

Երիտասարդ թուրքերի կառավարութիւնը մոլեգնեց, ատամներ արեց հայերէ դէմ և դաւաճներում զլուխ բարձրացրին բռնութիւններն ու հալածանքները: Կառավարութիւնը հայկական բեֆօրմներէ դէմ սկսեց գործել մի կողմից զրգոհլով մահմեդական մասսաների ֆանատիկոսութիւնը, միւս կողմից յենւելով եւրոպական պետութիւնների երկու խմբակներէ— ուստանգլօ-ֆրանսիական և զերմանօ-աւստրօ-իտալական բախւող հակադիր շահերի վրա, իսկ և իսկ համիդեան մեթոդի կիրառումն:

Բեֆօրմների ուստական ծրագրի էական կէտերն էին.

1. Հայկական վեց—վանի, Բիթլիսի, Էրզրումի, Սարքերդի, Սւազի և Դիարբէքիւրի վիլայէթներից կազմել մէկ ընդհանրակ հայկական նահանգ, դուրս ձգելով նրանից այն մասերը, ուր հայերը աննշան թիւ են կազմում:
2. Հայկական նահանգը կառավարելու համար նշանակել քրիստոնեա մէկ ընդհանուր վերատեսուչ՝ եւրոպական պետութիւնների կողմից ընտրւած:
3. Հայկական նահանգի բոլոր պաշտօնեաներին մինչև նահանգապետները անխտիր նշանակելու է ընդհանուր վերատեսուչը:
4. Հայկական նահանգը ունենալու է իր յատուկ խորհուրդը, որը կազմւելու է հաւասար թւով ընտրւած քրիստոնեա

Ա մահմեդական անդամները, ինչպէս և պաշտօնեաները նշանակ-
ւելու են հաւասար շարժով քրիստոնեաներից ու մահմեդական-
ներից:

Բէֆօրմների այս ծրագիրը քննութեան առարկա դարձաւ
վեց մեծ պետութիւնների դեսպանների կողմից յուլիսի 3-ից
սկսած մինչև 24-ը:

Ինչպէս և սպասելի էր տարածայնութիւններ առաջ եկան
ծրագրի շուրջը, ուստի անգլո-ֆրանսիական հռապետեան համա-
ձայնութեան դէմ ծառայու գերմանո-աւստրո-իտալական հռա-
պետեան զաշնակցութիւնը իր հակադիր շահերով: Հայկական
քրիֆօրմների հարցում մասնաւորապէս շահագրգուած էին Ռու-
սաստանն ու Գերմանիան: Ռուսաստանը պնդում էր իր ծրագրի
վրա, իսկ Գերմանիան ամեն կերպ աշխատում էր ի չիք դար-
ձնել այդ ծրագիրը՝ արամադրելով տաճիկ կառավարութեան-
ընդ ձգձգել հարցը, կազմել ինքնուրոյն ծրագիր անբողջ երկրի
համար և իւրաքանչիւր անգամ մի պատճառ առաջ քաշել ու
այդպիսով ժամանակ շահել:

Այսպէս էլ եղաւ, հայկական բէֆօրմների ծրագրի քննու-
թիւնը ձգձգուեց ամբողջ եօթ-ութ ամիս, որի միջոցին Գերման-
իան կարողացաւ ճարպիկ կերպով իր նոր բարեկամութեան ա-
ղայցոյցները առլ տաճիկ կառավարութեանը և իր ունեցած աղ-
ղեցութիւնը աւելի ևս ամրապնդել սուլթանների մայրաքաղաքում:

Եւ մինչդեռ երիտասարդ թուրքերի կառավարութիւնը
զաղտնի հրահանգներ ընդունելով Գերմանիայից, ձգձգում էր ու
պատճառաբանում ծրագրի իւրաքանչիւր կէտը՝ շահելով օր ու
ժամանակ, միւս կողմից զաղտնի հրահանգներ էր ուղարկում գա-
ւառները ձնշելու հայերին: Եւ շուտով արդիւնքը յայտնի դար-
ձաւ, բողոքի ու յուսահատութեան ձայնի հասան գաւառներից:

— Ութ ամսից աւելի է, ինչ Տաճիկ-Հայաստանի այս
պատմական քաղաքը ենթարկւում է արտասովոր ձնշումների,
սպանութիւնների ու թալանի, — գալիս էր այսպիսի ձայն Եր-
զնկայից:

— Ալան թալանը և սպանութիւնները կատարւում են քթի
տակ, իսկ կառավարութիւնը անտարբեր է, — գրում էին Եր-
զրումից:

— Հայերը քաղաքի մէջ և գաւառներում գինաթափ են

արևում, իսկ մահամեղականները զինւում են. փոխադարձ վստահութիւնը նորից վերացել է, — հասնում էին այսօրինակ ազդակներ վանից:

Իսկ Պօլսում սկսել էր բօյկօտ հայերի դէմ. «Ազատամարտ» թերթը ստանում էր սպառնական նամակներ, և Բ. Դըրան ու ազգային ժողովի մէջ տեղի էին ունենում ձգձգուող բանակցութիւններ պարլամենտում հայերին 20 օրոք յաակացնելու հարցի շուրջը:

Ու Գերմանիայի խարդաւանանքների շնորհիւ երիտասարդ թուրքերի կառավարութիւնը հայերի դէմ յարուցած զրգուով բայտիկ հասցրեց, որ ղեկամերի մէջ հայկական նոր ջարդերի ուրախանքը հրապարակ եկաւ և այն էլ այն միջոցին, երբ հայկական բէֆօրմներ ծրագիրը իր վերջին ձևակերպումն էր ըստանում:

— Մի շարաթ առաջ էր, որ հայերի երեսին ուրախութեան ժպիտ փայլեց, երբ լուր հասաւ, որ կառավարութիւնը սկզբունքով ընդունել է Եւրոպայի կօնարօլը, և ահա այսօր ուրախութեան ժպիտը չբացել է ու նրա տեղ թագաւորել է կոտորածի գարհուրելի ուրախանքը:

Ահա այսպիսի ազդակներ հասնում էին պատրիարքարան էրզրումից և այլ վայրերից, յիշեցնելով այն անցած օրերը, երբ գործում էր սուլթան Համիդի ոճրագործ ըէժիմը:

Սակայն երիտասարդ թուրքերի կառավարութիւնը զգուշացաւ այդ ոճրագործ քայլն անել, զսպելով ոուս կառավարութեան այն ծանուցումից, որով նրա առաջ զրւում էր պատասխանատուութեան հարցը. և 1914 թւի յունւարի 26-ին նա — տաճիկ կառավարութիւնը, ստորագրեց բէֆօրմների ծրագիրը:

Հայկական բէֆօրմների ծրագիրը ընդունուեց վերջապէս, բայց Գերմանիայի ցանկացած ձևով և նրա ցանկացած փոփոխութիւններով, որի էութիւնը հետեւեալն էր:

1. Հայաստանը բաժանուում էր երկու շրջանների. առաջին շրջանի մէջ մտնում էին էրզրումի, Սւազի և Տրապիզոնի վիլայեթները, իսկ երկրորդի մէջ՝ Վանի, Բիթլիսի, Պարսերզի և Դիրարէքի վիլայեթները: Իւրաքանչիւր շրջան կառավարելու էր մեծ պետութիւններից ընտրւած և Բ. Դրան հաւանութիւնը գտած մէկ քրիստոնէա ընդհանուր վերահսուել:

2. Ընդհանուր վերատեսուչներին իրաւունք էր տրուում հսկելու վարչական և օրէնսդրական մարմինների վրա, նշանակելու ու արձակելու բոլոր պաշտօնեաներին, բացի նահանգապետներին, ստանձնելու իրենց շրջանի զօրքերի հրամանատարութիւնը և լուծելու հայ-քրդական հողային վէճերը:

3. Իւրաքանչիւր վիլայէթի վարչութեան գլուխ կանգնելու էր օրէնսդիր ժողով կամ ընդհանուր խորհուրդ, որը վերատեսչի մասնակցութեամբ լսելու էր նահանգապետի զեկուցումը, քննելու էր վիլայէթի եւ և մտից նախահաշիւը, վերաքննելու էր հարկատուութեան սրտեմը, զրազւելու էր վարչութիւնների կատարած գործերով և վճռելու էր հասարակական աշխատանքներին, ժողովրդական կրթութեան և առողջապահութեան վերաբերեալ հարցերը:

4. Խորհուրդների կազմերի մէջ լինելու էին՝ Վանի և Բիթլիսի վիլայէթներում հաւասար չափով քրիստոնեաներ ու մահմեդականներ, էրզրումի վիլայէթում նոյնպէս, մինչև որ կը կազմէր նոր մարդահամար, իսկ Յնացեալ չորս վիլայէթներում խորհուրդները կազմւելու էին քրիստոնեա և մահմեդական անդամների համեմատական քանակով:

5. Ընդհանուր խորհուրդները իրենց միջից ընտրելու էին գաւառական կոմիտէներ 4-ական հոգուց բաղկացած՝ խորհուրդների կազմերի համեմատական նօրմայով, որոնք պատրաստելու և խորհուրդների քննութեանն էին ներկայացնելու կարևոր հարցերն ու նիւթերը:

6. Դատարաններում տաճկերէնի հետ միասին գործադրւելու էր նաև հայերէն լեզուն:

7. Հայկական վիլայէթների ազգաբնակչութիւնը զինուորական ծառայութիւնը կատարելու էր իր ծննդավայրում:

8. Համիդէական գնդերը վեր էին ածւելու պահեստի հեծելազօրքի և խողաղ ժամանակ նրանք զէնքերն վայր էին դնելու:

Ինչպէս տեսնում ենք առասկան նախկին ծրագրերը ենթարկւել էր փոփոխութեան ի միաս հայերի, և իրրև հատուցում այդ ծառայութեան, որ Գերմանիան ցոյց տուց երիտասարդ թուրքերի կառավարութեանը, տաճիկ զօրքերի ընդհանուր քննիչ կարգուց Ծօն-Սանգիւսը, որով նոր սկիզբն էր դրում գերմանական ազդեցութեան:

Հայկական բեֆօրմների ուսական ծրագիրը փոփոխուեց՝ ու այն աստիճան, որ նախկինից քիչ քան էր պահպանուել նորի՝ մէջ, սակայն հրիտասարդ թուրքերի կառավարութիւնը, որը շեղուելով իր նախկին դաւանանքներից, բռնել էր վերջնականապէս սուլթան Համիդի կործանարար քաղաքականութեան ուղին, այդ փոփոխուած ծրագրի հետ անգամ չուզեց հաշուել և ընդունելով հանդերձ այն՝ սկսեց նոր ստնձգութիւններ, նոր արգելքներ հանել, որը հանդիսանալու էր նրա գործողութիւնների վերջին ակտը:

Եւրոպական վեց մեծ պետութիւնները պիտի ընտրէին երկու վերատեսուչներ և ներկայացնէին սուլթանին ի հաստատութիւն. ահա այս հարցը եկաւ նոր ձգձգումների առիթ՝ ծառայելու: Պէտք էր ձգձգել, պէտք էր ժամանակ շահել, այս քաղաքականութիւնը աւանդ էին ստացել հրիտասարդ թուրքերը սուլթան Համիդից. գործելու այս ձևի մեթոդ փոփոսաց այդ նոյն հրիտասարդ թուրքերի ականջին Գերմանիան— համաշխարհային այդ Կոմիտե-Վոյաժօրը. և սկսուեց սակարկութիւնը վերատեսուչների անձնաւորութիւնների շուրջը, որը տևեց երկար շաբաթներ, մինչև որ ապրիլի 14-ին Բ. Դուռը վերջապէս ընդունեց վեց պետութիւնների կողմից ներկայացրած հնգանուն ցանկից երկու անուններ:

Ապրիլի 25-ին Պօլիս հասան հայկական նահանգների երկու վերատեսուչները Բ. Դրան հետ պայմանաւորուելու համար: Երկաթուղու կայարանը ընդառաջ գնաց նախարարապետութեան թարգման հասց րէյը, իսկ յաջորդ օրը վերատեսուչները ճաշ հրաւիրուեցին ներքի գործերի նախարար Թալասթ քէյի մօտ, ու այժմ էլ սկսուեց զուտ արևելեան բարքերին յատուկ շոգոքորթութիւնը:

Ո՞վքեր էին վերատեսուչները:

1. Վեսթենենկ՝ վերատեսուչ Վանի, Բիթլիսի, Սարբերդի ու Դիարբէքի շարջանի՝ ծագումով հոլանդացի ու հոլանդական-Հնդկաստանում երկար տարիներ պաշտօն վարած:

2. Հօֆֆ՝ վերատեսուչ Էրզրումի, Սւադի, Տրապիզոնի շրջանի՝ ծագումով նորվեգիացի, երկար տարիներ զինւորական-վարչական պաշտօններ վարած:

Առերես սիրալիր մի քանի ընդունելութիւններից յետոյ Բ. Դուռը անցաւ նոր վերատեսուչների հետ կնքելիք պայմա-

նազրին, որը նոր ձգձգումների ու սակարկութիւնների ասպարէզ դարձաւ: Խնդիրը պատում էր վերատեսուչների զինուորական ու քաղաքացիական լիազօրութիւնների շուրջը: Երկու շաբաթից աւելի ձգձգում էր խնդիրը և բանակցութիւնները այնտեղ հասցրին, որ վերատեսուչները մայիսի 6-ին սպառնացին թողնել Պօլիսը:

Ահա այս սպառնալիքից յետոյ միայն, մայիսի 10-ին, կնքուեց պայմանագիրը և երկու վերատեսուչները վերադարձան հայրենիք, իրենց անձնական զործերը կարգի դնելու և վերջնականապէս նոր պաշտօնատեղին ուղևորելու համար:

Յուլիսի առաջին կիսամսեակում վերատեսուչները վերադարձան Պօլիս, ուր մի քանի օր զբաղւելով օգնականներ ու թարգմաններ ընտրելու խնդրով ճանապարհ ընկան՝ Վեսթնհենկը դէպի Սուսզ, իսկ Հօֆֆը Տրապիզոն—Երզրուսի վրայով դէպի Վան:

Ճանապարհ ընկան վերջապէս հայկական վիլայէթների երկու վերատեսուչները դէպի իրենց նոր պաշտօնատեղին՝ տանելով իրենց հետ մի կողմից հայ ժողովրդի համակրանքն ու յոյսերը, միւս կողմից երիտասարդ թուրքերի լուռ թշնամանքն ու ատելութիւնը. բայց դեռ տեղը չը հասած փոթորկուեց ամբողջ Եւրոպան, պայթեց մէկէն ահռելի պատերազմը. Եւրոպայի խոշոր պետութիւնները—Գերմանիա, Աւստրիա, Ռուսաստան, Ֆրանսիա, Անգլիա, Սերբիա, Իելլիա նետուեցին աշխարհաւեր պատերազմի մէջ, զէնքի տակ կանչուեցին զօրքերը նաև մնացեալ պետութիւններում, զօրաժողով յայտարարեց նաև Տաճկաստանը փրկութիւն որոնելով նրա մէջ:

ՀԱՄԱԵՒՐ ՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Մենք տեսանք, երիտասարդ թուրքերի կառավարութեան վերաբերմունքը դէպի հայերը լաւ չէր:

Հայերը պահանջում էին վերջ դնել հողային հարցին, կառավարութիւնը ուշ չէր զարձնում:

Հայերը պահանջում էին իրենց թւի համապատասխան տեղեր գրաւել պարլամենտում, մերժումն էին ստանում:

Գաւառներում սկսել էին բռնութիւններ ու անկարգութիւններ, կառավարութիւնը ոչ միայն միջոցներ ձեռք չէր առնում կարգը վերականգնելու, այլև հայերին պինաթափ էր անում:

Վերջապէս հայերը գաւառներում պատրաստում էին մեծ հանդիսաւորութեամբ ընդունելու հայկական նահանգների վերատեսուչներին— Հօֆֆին ու Վեստենենկին, իսկ կառավարութիւնը գաղտնի հրահանգներ էր ուղարկում գաւառական վարչութիւններին, ոչ մի կարևորութիւն չը տալ վերատեսուչների գալուն և հնար եղածին չափ խանդարել հայերի կողմից պատրաստուող ցոյցերը, ինչպէս այդ կը տեսնենք յետոյ:

Եւ մինչդեռ այս լարւած դրութիւնը շարունակում էր հայերի ու կառավարութեան միջև, մէկէն պայթեց համաւերոպական պատերազմը:

1914 թւի յուլիս ամսի կէսերին Եւրոպայի սրտի մէջ պայթեց մի հրդեհ, որը տարերային ուժով և կայծակի արագութեամբ ծաւալւելով բռնկեց ամբողջ Եւրոպան: Իսկ համաւերոպական պատերազմն էր, որին ամբողջ աշխարհը սարսափով էր սպասում:

Ի՞նչ պատճառներ առիթ հանդիսացան այդ պատերազմին, դրանց քննութիւնը դուրս է մեր ծրագրից, այսքանը միայն կասենք, որ նրանք շատ խորն են և կազմում են ներկայ միջազգային յարաբերութիւնների բարդ հանգոյցը, միևնոյն ժա-

մանակ դարերի անլուծելի առեղծւածը:

Ընդհանրացած բացատրութիւնը այս է. հաստատել զազուէթներ, ձեռք բերել շուկաներ, կապել նպաստաւոր առևտրական զաշնագիրներ և վերջապէս թելադրել աշխարհին իր կամքը: Սըրանք կազմում են ներկայ ևրոպական պետութիւններին, աւելի ճիշտը ժողովուրդներին՝ զբաղեցնող առաջնակարգ խնդիրները, միևնոյն ժամանակ մրցման էութիւնը, ուզն ու ծուծը:

Այս հողի վրա կատարւում են համախմբումներ, այս հողի վրա էլ տեղի է ունենում սպառազինում: Իւրաքանչիւր պետութիւն սպառնազինում է անաւոր մրցման մէջ օտի տակ չը գնալու համար, իւրաքանչիւր պետութիւն որոնում է զաշնակից՝ խելակորոյս պայքարի մէջ մենակ չը մնալու համար:

Աւրոպայի մէջ վերջին տասնամիակներում կազմուեցին երկու ուժեղ հակախմբումներ. մէկը դրանցից Գերմանիայի, Աւստրո-Սլոնգարիայի և Ռուսիայի 1) զաշնակցութիւնն էր, միւսը իբրև հակակշիռ առաջինի Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի համաձայնութիւնն էր: Մնացեալ միւս պետութիւնները չուրիայն հետևում էին այս կամ այն խմբակցութեանը:

Իւրաքանչիւրը այս խմբակցութիւններից աշխատեց զինուել, ուժեղանալ թէ ծովի և թէ ցամաքի վրա և այսպիսով ըստեղծուեց սպառազինման մի անօրինակ մրցութիւն երկու խմբակցութիւնների մէջ: Առանձնապէս առաջին խմբակցութիւնը, մանաւանդ նրան տոն տուող Գերմանիան իր բոլոր ուժերն ու հոռանդը վերջին քառասուն տարիների ընթացքում սպառեց պատերազմական տեխնիկան զարգացնելու վրտ, որով և ստեղծեց մի բանակ՝ կազմ ու պատրաստ, զօրեղ ու վճռական, որպիսին չէ ունեցել ոչ մէկը ևրոպական պետութիւններից:

Քանի որ սպառազինումը արագ թափով շարունակւում էր, միևնոյն է, նա մի տեղ պիտի յանգէր, և դա պատերազմն էր, պատերազմի առիթներ նա պիտի փնտտէր, որը ուժեղ էր, իսկ ներկայ գէպքում ուժեղը Գերմանիան էր, և նա փնտտեց ու զըտաւ առիթը:

Ո՞րն էր այդ առիթը:

1878 թւի Բերլինի վեհաժողովի որոշման համաձայն Տաճ-

1) Ներկայ պատերազմի ընթացքում Ռուսիան անցաւ հակառակ խմբակցութեան կողմը:

կաստանի երկու նահանգները— Բօսնիան և Հերցեգովինան ան-
ցան Աւստրօ-Ռենգարիայի իշխանութեան տակ։ Այդ երկու նա-
հանգների ազգաբնակչութեան մեծագոյն մասը սերբեր են, որոնք
անկախութիւն ստացած Սերբիայի կողքին չէին կարողանում
հաշուել աւստրիական այն ճնշումներին հետ, որը յատուկ է բազ-
մացիդ Աւստրիայի պետական մեխանիզմին։ Եւ Բօսնիայում՝ նրա
Աւստրիայի իշխանութեան տակ անցնելու առաջին իսկ օրից
ծնունդ առան դէպի Սերբիան ձգտող զաղտնի ընկերութիւններ։
Աւստրիան ճնշում էր այդ շարժումը, իսկ շարժումը, ընդհակա-
ռակը, ուժեղանում էր՝ խոր արմատներ ձգելով ժողովրդի մէջ,
ինչպէս այդ յատուկ է բոլոր ստրուկ ժողովուրդներին և ձեռ-
նարկելով մի շարք յիդափոխական ակտերի։ Այդ ակտերից մէկը
տեղի ունեցաւ Սարաեօյում— Բօսնիայի մայրաքաղաքում, ուր
նստում է աւստրիական կառավարութեան ներկայացուցիչը—
Բօսնիայի փոխարքան։

1914 թւի յունիսի 15-ին Աւստրօ-Ռենգարիայի թագաժա-
ռանդ Ֆրանց-Ֆերդինանդը իր ամուսնու հետ այցելութեան էր
եկել Սարաեօ. ի պատիւ նրա քաղաքային տան մէջ հանդէս պի-
տի կատարուէր։ Երբ թագաժառանգը իր ամուսնու հետ աւտօմօ-
բիլով հանդիսի տեղն էր դնում, ճանապարհին Յաբրինովիչ ազ-
գանունով մի սերբ աւտօմօբիլի մէջ մի ումը նետեց, թագաժա-
ռանգը անմիջապէս վիցրեց ումբը և նետեց փողոց, ումբը
պայթեց և նրա կտորներով վիրաւորւեցին երկու հոգի շքամբից
և վեց հոգի ժողովրդից։ Սակայն սպանութեան փորձը սրանով
չը վերջացաւ։ Հանդիսից յետոյ, երբ թագաժառանգը ամուսնու
հետ տուն էր վերադառնում, դարձեալ ճանապարհին Պրեցիսլ ազ-
գանունով մի սերբ գիմնազիստ երկու անգամ ատրճանակից
կրակեց և մահացու կերպով վիրաւորեց թագաժառանգին ու նր-
բա ամուսնուն, տուն հասնելով երկօսն էլ մեռան։

Մարդասպանները ձերբակալւեցին, սկսեցին խուզարկու-
թիւններ ու ձերբակալութիւններ։ Միւս կողմից Սարաեօյում
ու Բօսնիայի զանազան կողմերում տեղի ունեցան ցոյցեր, ո-
րոնց ժամանակ ջարդում էին սերբերին և քար ու քանդ անում
նրանց տներն ու խանութները։

Մի քանի օրից յետոյ երկիրը խաղաղւեց և թոււմ էր թէ
ամեն ինչ անցել է, մինչդեռ այդ դէպքից դեռ մի ամիս էլ չան-

ցած, յուլիսի 10-ին, Բելգրադի աւստրիական դեսպանը սերբ կա-
ռավարութեանը յանձնեց մի վերջնագիր: Աւստրո-Ունգարիան
մեղադրելով Սերբիային նրանում, որ Սարաեօյի սպանութիւնը
ծրադրելու կատարել է Սերբիայում գոյութիւն ունեցող ըն-
կերութիւնների և նոյնիսկ զինւորականների ու պաշտօնեաների
աջակցութեամբ, դնում է նրա առաջ մի շարք պահանջներ, պա-
տասխանելու համար նշանակելով 48 ժամ ժամանակ:

Վերջնագրի համաձայն Սերբիան պարտաւորում էր:

1. Գատապարտել ու հալածել հակաւստրիական պրօպա-
գանդը Սերբիայում:

2. Փակել Վնարօզնայա Օդրբանա ընկերութիւնը:

3. Դուրս ձգել ժողովրդական դպրոցների ծրադրից այն-
բոլորը, որոնք ուղղւած են Աւստրո-Ունգարիայի դէմ:

4. Արձակել ծառայութիւնից այն բոլոր սպաներին ու պաշ-
տօնեաներին, որոնց մասնացոյց կանի Աւստրո-Ունգարական
կառավարութիւնը:

5. Թոյլ տալ Աւստրո-Ունգարական ոստիկանութեանը
սերբիականի հետ միասին ճնշելու Սերբիայում եղած հակաւս-
տրիական շարժումը:

6. Սարաեօյի դաւադրութեանը մասնակից սերբիացիների
քննութիւնը կատարել Աւստրո-Ունգարիայի ներկայացուցիչնե-
րի մասնակցութեամբ:

7. Զերբակալել պաշտօնեաներ Վոյտանկիւիչին և Միլան
Յիզանովիչին:

8. Պատժել Շարացի և Լոզնիցի պաշտօնեաներին, որոնք
թոյլ են տւել մարդասպաններին սահմանն անցնելու:

Սերբիական կառավարութիւնը վերջնագրին աւելց բարեկա-
մական տոնով գրւած պատասխան, որով ընդունելով պահանջնե-
րի մի մասը, հրաժարւում էր ընդունել այն առաջարկը, որը
վերաբերում էր աւստրիական ոստիկանութեան ու ներկայացու-
ցիչներին գործողութիւններին Սերբիայի մէջ, համարելով այդ
խախտումն Սերբիայի անկախութեան:

Աւստրո-Ունգարիան Սերբիայի պատասխանը համարելով
անբաւարար, յայտարարեց զօրածողով և կարգապահից իր դեսպա-
նին անմիջապէս թողնել Բէլգրադը: Զօրածողով յայտարարեց
նաև Սերբիան:

Սակայն նախ քան Սերբիայի պատասխանը, Վենայի սուսայգիսպանը դիմեց Աւստրո-Ունգարական կառավարութեանը, առաջարկելով երկարացնել պատասխանի համար Սերբիային տւած ժամանակամիջոցը: Բայց այս առաջարկը մերժեց, ուստի Ռուսաստանը նոյնպէս յայտարարեց զօրածողով:

Ապա հրապարակ եկաւ Անդրիան և դիմելով Գերմանիային, Ֆրանսիային ու Իտալիային առաջարկեց Լօնդօնում զումարել կօնֆերենցիա, վէճը խաղաղութեամբ լուծելու համար, բայց Գերմանիան այդ առաջարկը մերժեց: Բացի այդ, Գերմանիան յայտարարեց որ Աւստրո-Սերբիական վէճը նրանց երկուսի հարցն է, և եթէ մէկ երրորդ պետութիւն միջամտի այդ վէճին, ստիպւած կը լինի ինքն էլ միջամտելու հարցին: Այս յայտարարումից յետոյ Գերմանիան նոյնպէս յայտարարեց զօրածողով:

Ապա մէջ եկաւ Ֆրանսիան, փորձելով վէճը լուծել խաղաղ ճանապարհով, սակայն Ֆրանսիայի փորձն էլ անյաջող անցաւ:

Եթէ ընդունենք այն հանդամանքը, որ Աւստրո-Ունգարիան իր իւրաքանչիւր քայլը անում էր դաշնակից Գերմանիայի խորհրդով, այն ժամանակ հասկանալի կը լինի, թէ ինչպէս Գերմանիան վարպետօրէն կազմել էր աւել Աւստրո-Ունգարիայի անհաշտ վերջնագիրը, ինչպէս ճարպկօրէն մերժում էր Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի առաջարկները՝ վէճը խաղաղ ճանապարհով լուծելու նկատմամբ:

Եւ իսկապէս ոչ ոք երոպական պետութիւններից այնպէս շահագրգռւած չէր այդ պատերազմով և իրենք այնպէս պատրաստ չէր զգում, ինչպէս Գերմանիան:

Գերմանիան պատերազմ էր ցանկանում, իսկ ներկայ դէպքից յարմար դէպք դժւար էր գտնել:

Նախ Սարաևոյի սպանութիւնը մի լաւ առիթ էր պատերազմի հանել Աւստրո-Ունգարիային և իր ուղածի պէս քարշտալ յետևից:

Երկրորդ, այդ ժամանակ հակառակ խմբակցութեան պետութիւնները—Ռուսաստանը, Ֆրանսիան և Անգլիան զբաղւած էին մի շարք ներքին խնդիրներով:

Օրինակ, Ռուսաստանի գործարանական քաղաքներում—Պետրօգրադում, Մոսկւայում, Վարշաւայում, Բազում տեղի ունէին բանւորական խռչոյր գործադուլներ. շատ գործարաններում

աշխատանքները միանգամայն դադարեցւած էին:

Անզլիայում հասարակական միտքը զբաղւած էր հոմբուրի-քննութեամբ, տասնեակ տարիներ ամբողջ պետութիւնը զբաղեցնող Իրլանդիայի ինքնավարութեան այդ կարգինալ հարցը՝ քանի-քանի անգամ լորդերի պալատի կողմից մերժուելով նորից հրապարակ էր եկել: Եւ որովհետեւ երեք անգամ երեքական ընթերցանութեամբ պարլամենտի հաւանութիւնը շահելով, այս անգամ նրա օրէնք դառնալը այլ ևս անխուսափելի էր, ուստի հոմբուրի հակառակորդները նոր ռոմանովութիւններ էին անում՝ մտցնելով օրէնքի մէջ Ուլեստրի շրջանը գատկու ուղղումը, որի պատճառով էլ կրօնքը լարեւել էին այն աստիճան, որ քիչ էր Քուսմ պայքարը կուսակցութիւնների մէջ քաղաքական կուրբնոյթ ստանար:

Ներքին աղմուկներից ազատ չէր նաև Ֆրանսիան: Աւստրո-Սերբիական յարաբերութիւնների լարման նախօրեակին Պարիզում տեղի ունէր մի նշանաւոր սպանութեան գործի քննութիւն: Նոյն տարւա մարտի սկզբին ֆինանսների նախարար Կայօի կինը—տիկին շենրիէտան մտնելով «Ֆիգարօ» թերթի խմբագրատունը, ատրճանակի մի քանի հարւածներով սպանեց թերթի խմբագիր Կալմետին: Այս սպանութիւնը քաղաքական բնոյթ ստացաւ: «Ֆիգարօն», որը հանրապետական կարգերին խիստ հակառակորդ մի թերթ էր, արշաւանք էր սկսել նախարար Կայօի դէմ, չը քաշուելով հրապարակ հանել այնպիսի գրութիւններ, որոնք վերաբերում էին Կայօի բնատանկան կեանքին և ամուսնական հարցերին: Չը կարողանալով տանել այդ վարմունքը տիկին Կայօն, որին վերաբերում էին այդ մերկացումները, որոշեց սպանել «Ֆիգարօյի» խմբագրին և իր որոշումը իրագործեց:

Ահա այս սպանութեան գործը, սպանութիւն, որը իր ժամանակին մեծ աղմուկների և նոյն իսկ մի շարք փողոցային ցոյցերի առիթ դարձաւ միապետականների ձեռքում, քննուում էր Պարիզում՝ նորից հրհրելով կրօնքը հանրապետականների ու նրանց հակառակորդների մէջ:

Ու Գերմանիան, որը աչքերը չորս արած, լրտեսների ցանցերով աշխարհը պատած՝ ուշի ուշով հետևում էր թէ ինչ է կատարուում իր շուրջը, յարմար մօմենտ համարեց իր երկար տա-

քիների պատրաստութիւնը հրապարակ բերել, ու բերեց:

Այն ժամանակ, երբ դիւանադիտական յարաբերութիւնները խզումը Աւստրիայի և Սերբիայի մէջ և սկսած ընդհանրումները այդ երկու երկիրների սահմաններում ամեն կերպ աշխատում էին կանգնեցնել, երբ Ռուսաստանը, Ֆրանսիան և Անգլիան անընդհատ բանակցելով ոչ մի ջանք չէին խնայում սկսած համակրպական հրդեհը հանգցնել և Աւստրո-Ունգարիայի, այն Աւստրո-Ունգարիայի, որը առաջինը մերկայրեց սուրբ՝ համողւած որ ոչ մի պետութիւն չի միջամտի իր ու Սերբիայի մէջ ծագող պատերազմին, պալատական շրջաններում սարսափելով ահաւոր փոթորիկից արամադրւել էին բանակցութիւնների առաջարկն ընդունել, ահա հէնց այդ միջոցին, յուլիսի 19-ին, Գերմանիան Ռուսաստանին պատերազմ յայտարարեց և դրան հետ միաժամանակ պատերազմական դորժողութիւնների դիմեց Ֆրանսիայի դէմ, սաի տակ տալով մի կողմից Լիւկսեմբուրգի դքսութիւնը, միւս կողմից Բելգիան՝ խախտելով այդ երկու երկիրների չեղոքութիւնն ու անկախութիւնը:

Իրանից յետոյ համակրպական հրդեհը կանգնեցնել այլ ևս անկարելի էր, նա բռնկւեց մի անօրինակ թափով, նա ծաւալեց ու ծաւալեց ընդունելով ահաւոր չափեր, և հրդեհը բռնեց ամբողջ Եւրոպան, իր հնոցի մէջ քաշելով Գերմանիան, Աւստրո-Ունգարիան, Ռուսաստանը, Ֆրանսիան, Անգլիան, Բելգիան, Սերբիան, Չեռնագօրիան, ապա անցաւ հեռաւոր արեւելք առաջ քաշելով Յապօնիան:

Ու այդ օրից աշխարհին մնունդ տուող եղաւ վառօղբ իր աւերումներով ու կառափնարաններով:

Մի բոպէ ներքին պառակտումները կանոյ առան, սկսեցին չը տեսնւած հայրենասիրական ցոյցեր յօգուտ պատերազմի, բոլորը, բոլոր երկիրներում ձեռք ձեռքի տւած շարժւեցին դէպի թշնամին, լսեց խաղաղութեան կոչը և Պարիզում մի խիլառգնդակով յուլիսի 18-ին ընկաւ Ֆրանսիական սօցիալիստների պարծանքը, Ֆրանսիական ժողովրդի մեծագոյն զաւակներից մէկը.— Ժօրէսը:

ՍԷՖԵՐ-ԲԷՐԼԻԿԸ ԿԱՄ ԶՕՐԱԺՈՂՈՎԸ

Համահերոսական պատերազմը որքան որ դիւրութեամբ ալայթեց և ահաւոր հետեանքներ առաջացրեց, նոյնքան դիւրութեամբ դէպի ինքը քաշեց պետութիւններ ու ժողովուրդներ: Ամենքը նետուում էին այդ պատերազմի մէջ այն համոզմունքով, որ իրենք յաղթող պիտի դուրս գան և պիտի շահեն նրանից:

Այսպէս լինելով, բնական է, որ սահմանադրական Տաճկաստանը, այն Տաճկաստանը, որը իր վեց տարիների գոյութեան ընթացքում երեք անգամ սուր էր մերկացրել՝ մէկ անգամ Իտալիայի դէմ, մէկ անգամ Ալբանիայի, իսկ երրորդ անգամ Բալկանեան պետութիւնների դէմ: Եւ երեք անգամ պատերազմի ելնելով միշտ էլ պարտութիւն էր կրել, հեշտութեամբ նետուէր նաև այս պատերազմի մէջ՝ երազելով ձեռք բերել այն, ինչ որ կորցրել էր 19-րդ դարի ընթացքում:

Եւ երիտասարդ թուրքերի կառավարութիւնը միանգամայն զուրկ ինքնուրոյն քաղաքականութիւնից, դարձաւ գործիք Գերմանիայի ձեռքում, այն Գերմանիայի, որը սովոր էր ուրիշի ձեռքով շագանակներ հանել կրակից, կարճամտօրէն տարւեց այդ նոյն Գերմանիայի խոստումներին ու նետուեց պատերազմի մէջ, թէև ոչ միանգամից:

— Եւրոպայում պորթիկել է ահաւոր պատերազմ, սահմանակից պետութիւնները զէնքի տակ են առել պահեստի զօրքերը, մեր պետական շահը և մեր երկրի պաշտպանութեան խնդիրը մեզ նոյնպէս հարկադրում է պատրաստ լինել հնարաւոր անակրճակալների հանդէպ:

Ահա այս պատճառաբանութեամբ յուլիսի 21-ին, այն է Գերմանիայի կողմից Ռուսաստանին պատերազմ յայտարարելուց երկու օր անց Տաճկաստանը յայտարարեց սէֆէր-բէրլիկ:

Սէֆէր-բէրլիկը արարական բառ է և այժմեան իմաստով նշանակում է զօրածողով-մօրլիզացիա:

Սէֆէր-բէրլիկի հիման վրա յուլիսի 21-ին Տաճկաստանում զէնքի տակ կանչուեցին բոլոր տղամարդիկ անխտիր 20-ից սկսած մինչև 45 տարեկանը: Զէնքի տակ էլն կանչում ոչ միայն մահ-մեղականները, որոնք տասնեակ տարիներից ի վեր են թակա էին զինուորական ծառայութեան, այլ և քրիստոնեաները, ինչպէս և հայերը, որոնք զինուորական ծառայութեան օրէնքի տակ մտած լինելով 1910 թից ի վեր, պահեստի զօրք համարեա զեռ շունէին:

Տաճիկ կառավարութիւնը ամէն ինչ վերցնում էր Եւրոպայացից, բայց միևնոյն ժամանակ նրանց զործադրում էր իր հասկացողութեամբ, եթէ կարելի է ասել, զլիսիվայր: Նոյնը տեղի ունեցաւ և այս անգամ: Յայտարարում էր զօրածողով-բայց բռնի զէնքի տակ էր կանչում մարդկանց, որոնք հրեք զինուորական ծառայութեան մէջ չէին եղել և հրացան բռնելու վարժութիւններ չէին կատարել:

Եւ սկսեց շփոթը երկրի մէջ:

Հրամանը խիստ չէր ու սպառնալից. բոլոր տղամարդիկ ձգում էին բան ու զօրծ և կուտակում էին արձանագրելու շէնքերի շուրջը, իսկ շատին էլ քաշում էին հրապարակից ու թաղնում: Խոյս էին տալիս ոչ միայն քրիստոնեաները, որոնց համար միանգամայն անըմբռնելի էր այդ կարգադրութիւնը, այլ և մահմեդականները:

Սէֆէր-բէրլիկը, այդ անիմաստ ու անմիտ ակաբ եկաւ իբրև մի պատուհաս, եկաւ քայքայելու առանցի այն էլ քայքայւած տաճկահայաստակ ժողովուրդների տնտեսութիւնը: Ժողովրդի ամենածանր ժամանակն էր, նրա աշխատանքի, ապրուստ հայթայթելու թանկադրն ժամանակը: Մասնաւորապէս Տաճկա-Տայաստանի համար, որ գերազանցօրէն երկրագործական երկիր է, սկսեւ էր խտտուանք, սկսեւ իր շուտով նաև հացահատիկների հունձը: Խոտահարքերը հնձուոր էին ուղում, հասուն արտերը զուրգուրող ու խնամող ձեռք, այն ինչ հնձուորն ու գիւղացին զօրանոցներն էին քշում: Քշում էին անխտիր ամենքը, ով պատահում էր, չէին նայում բնտանեկան զրութեանը, չէին նայում նոյնիսկ ոչ տարիքին և ոչ էլ մարմնական ու ֆիզիքական պակասութիւններին:

— Այստեղ զէնքի տակ են կանչւած 20-ից մինչև 45 տարեկանները առանց բացառութեան: Ի նկատի չեն առնուած ոչ ընտանեկան զրութիւնը, ոչ էլ մարմնական արատներն ու թերութիւնները: Նոր կազմւած զնդերի մէջ զուք կը հանդիպէք կաղի, կոյրի, սապատաւորի, ցաւագարի: Զինուոր են տարւած և քաղաքից դուրս բլուրների լանջերին ամբողջ օրը խրամատներ են փորում մարդիկ, որոնք իրենց չարքաշ աշխատանքով հազիւ էին կարողանում ձեռք բերել օրական մի կտոր չոր հաց իրենց բազմանդամ ընտանիքի համար, — նկարագրում է այս կերպ զրութիւնը Էրզրումում ահանատեսը:

— Մինչդեռ Բուլանըրի հայ ժողովուրդը դարաւոր տառապանքներից հազիւ ազատւած կը համարէր զինքը և ուրախացած էր մօտալուտ բարեկարգութեան խարուսիկ յոյսերով, յանկարծ Վոսփորից լուեց հեռագրական սոսկալի գոյժը. — Օսմանեան կայսրութեան ամբողջ երկրի մէջ եղած պահեստի զինւորները 20-ից մինչև 45 տարեկանները անյապաղ զէնքի տակ առնել: Յաջորդ օր կառավարութիւնը ձեռնարկեց գործի և զօրքն ու ոստիկանական խմբերը զիւային հրահանգներով ցրեցան զիւրիւր. սրանք առանց կանոնաւոր ցուցակի, ոչխարի հոտի պէս հաւաքելով մեծ ու փոքր, ծեր ու պատանի, քօռ ու քաշալ, կաղ ու հաշմանդամ, մերկ ու թշւառ վիճակի մէջ բերին Կոփ և ուղարկեցին անձանօթ կողմեր: Միմիայն Կոփից հինգ աւուր մէջ մօտ 300 երիտասարդ հեռացուցին. այժմ էլ սկսել են հասակաւորներին արձանագրել:

Նկարագրում է այս կերպ էլ զրութիւնը Բուլանըրում մէկ ուրիշ ահանատես, նկարագրութիւն, որոնցով լի են այդ օրերի թերթերը:

Սակայն սէֆէր-բէրլիկը միակ շարեքը չէր, որ իջաւ թըշւառ տաճկահայաստակ ժողովրդի վրա համաերոպական պատերազմի հետ միաժամանակ: Սէֆէր-բէրլիկը իր հետ բերեց և մի այլ շարիք, որը իւրայատուկ էր Տաճկաստանին և արտասովոր այլ երկրներում: Դրան տաճիկները յատկացրին Թէքնալիֆի-հարպիէ աւուներ: Այս բառը նոյնպէս արաբական է և նշանակում է պատերազմական սուրքեր:

Տաճկահայկան զանձարանք դատարկ էր ինչպէս միշտ, այդ պայմաններում տաճիկ կառավարութիւնը ձեռնարկել էր զէնքի տակ կանչել միլիոնանոց բանակ: Ո՞րտեղից պիտի հողացուէր այդ ահադին բանակի հագուստն ու սնունդը, ի հարկէ նոյն կեղեքւած ժողովրդից: Եւ ահա հիմնուած է Թէքեալիֆի-հարպիէն իր բազմաթիւ պահեստներով ու «քօմիսիօն»-ներով:

Ի՞նչ է այդ հիմնարկութեան էութիւնը. վերցնել ժողովրդից ամեն ինչ, որոնք պէտք են զօրքի համար — հացահատիկներ, կենդանիներ, ուտեստի այլ մթերքներ, խոտ, յարդ կայլն: Դրանց արժէքը պիտի վճարել, բայց ինչպէս. զնահատուած են վերցրած իրերը քէֆը ուզածին պէս և ապրանքատիրոջը տալիս են արժէքի համապատասխան ստացական:

Թէքեալիֆի-հարպիէ, ինչպէս տեսանք, նշանակում է պատերազմական տուրքեր: Բայց վերցրած ապրանքի արժէքը վճարւելու էր: Միւս կողմից վերցրած ապրանքի արժէքը վճարւելու էր, բայց արժէքի փոխարէն տրւում էր մի թղթի կտոր, որը երբէք չէր վճարւելու:

Եթէ Թէքեալիֆի-հարպիէն տուրք է, ապա ի՞նչու է վերցւած իրի համար ստացական տրւում, իսկ եթէ դրամը պիտի վճարւի, ապա ի՞նչու է տուրք կոչւում: Ահա այն քասուր, որ ստեղծւեց այդ մարմնի շուրջը և որից առաջ եկաւ կազմակերպւած ալան-թալանը և կողոպուտը:

Թէքեալիֆի-հարպիէի քօմիսիօնը մտնում էր խանութներն ու տները, բացում էր պահեստները, քրքրում էր հորերը, կտրում էր ճանապարհները և բռնի գրաւում էր գործւածքներ, շաքար, նաւթ, հացահատիկներ, կենդանիներ և հազար ու մի իրեր և ապրանքներ՝ տալով տիրոջը թղթի մի կտոր:

Այս ալան-թալանի մեծ քեռը ծանրանում էր հայ ժողովրդի վրա:

— Ժողով կընեն ու կը որոշեն — այսինչը պիտի տայ սաշափ, այնինչը, սաշափ: Ու միշտ կորոշեն, որ հայ և յոյն վաճառականները պիտի տան: Ու հսկա օթօմօրիլ մը կուզայ հողէտո հրեշտակի պէս կը կենա մաղազայի առջև: Որ վաճառական զայն տեսաւ իր մաղազայի առջև կեցած, կը սարսափի, համոզւած, որ որոշած են զինքը սնանկացնել: Կը մտնեն խանութը,

նդած չեղածը կը լեցնեն հսկայ մոխրագոյն օթօմօրիւն ու կը տանեն, կտոր մը թուղթ տալով տիրոջը, թէ տարինք սաչափ լիրայի ապրանք: Գինն ալ կէսէն աւելի կը զեղծեն: Իսկ թուղթը որո՞ւ պիտի տալ և ի՞նչ կէսէն գանձել, առ ալ ալլահի գործն է: — Իպրանոսեաններ, Ասլանեաններ, Կարապետեաններ, Թոփալեաններ արժանացան հոգեւոր օթօմօրիւի կրկնակ այցեւորութիւններուն: Մանաւանդ խեղճ Թոփալեանը, երեք անգամ օթօմօրիւն կեցաւ անոր մաղազայի առջևը: Ու կրէկ անոնց մաղազան գոց էր, վասնզի մէջը այլևս ապրանք չկար, 250 ոսկիի կտաւ, քաթան և այլն տարին միանւագ...

Այսպէս էր Թէքեալիֆի-հարպիէի կողոպուտը ականատեսի վկայութեամբ սուլթանների մայրաքաղաքում—Պօլսի մէջ, ինչ կը լինէր գաւառական քաղաքներում, այդ պէտքեր չէ գուշակել:

Սակայն Թէքեալիֆի—հարպիէն աւելի մեծ չափով եկաւ կողոպտելու շարքաջ գիւղացուն: Բաւական չէր, որ զինուոր էին տարել ընտանիքը ապրեցնող աշխատաւոր ձեռքը, այժմ էլ գաւառի էին խլելու նրա կտոր հացը:

Թէքեալիֆի-հարպիէն գիւղական ժողովրդից գանձում էր մթերքով և, իբրև չափ, սահմանւած էր գիւղացու շարժական կարողութեան մի տասնորդականը, օրինակ, եթէ գիւղացին ունէր 10 ոչխար կամ 10 չափ ցորեն, մի ոչխարը կամ մի չափ ցորենը պիտի դնար գործի կարիքների համար: Այսպէս սահմանւած էր վերևից. իսկ գործադրութեան տեղում այդ չափը ենթարկւում էր փոփոխութեան քոմիսիօնի հայեցողութեամբ, Թէքե քոմիսիօնը կազմւած էր լինում գլխաւորապէս գայմագամից, մալը մուսիբից, կաղիբից և ժողովրդի մի երկու ներկայացուցիչներից, բայց ներկայացուցիչները յաճախ դեր չէին խաղում. չէ որ զինուորական դրութիւն էր և պատերազմական սուրբերի դէմ գնալ չէր կարելի:

Քոմիսիօնը, առանց մանրամասնութիւնների մէջ մտնելու, որոշում էր գիւղի կարողութիւնը ըստ իր հայեցողութեան և պահանջում էր մառ այն բոլոր բերքերից ու մթերքներից, ինչ որ ունէր գիւղացին: Այստեղ արդէն չափ գոյութիւն չունէր, չափը քոմիսիօնի, աւելի ճիշտը, գայմագամի տրամադրութիւնն:

էր, հայրենասիրութեան չափը. երբեմն չափը պակաս էր լինում որաշուած նորմայից, բայց յաճախ, այն էլ շատ յաճախ, աւելի էր լինում առանձնապէս հայերի նկատմամբ:

Գիւղերից պահանջուում էր ցորեն, գարի, ալիւր, իւղ, պանիր, ձաւար, խոտ, յարդ, գուլպա, տրեխ, վառելիք և հազար ու մի իր:

Որպէսզի գաղափար կարելի լինի կազմել, թէ որքան ծանօց էր այդ նոր պատերազմական տուրքը, բերե՞նք մի փոքրիկ հաշիւ:

Ալջաւազի գաւառի 23 հայաբնակ գիւղերում ապրում էին 823 տուն հայեր: Այդ 823 տուն հայ ժողովուրդը վճարեց թէք-հալիֆի-հարպիէ.

3800 քիլէ հացահատիկ,

2300 ոչխար,

800 լիրա դրամ,

և և մեծաքանակ իւղ, պանիր, գուլպա, խոտ, յարդ և այլ իրեր: Գիլէն հաւասար է 15 փթի:

Եթէ Ալջաւազի վճարածը վերածենք դրամի, հացահատիկի փութը հաշուելով մէկ բուբլի, ոչխարի մէկը 7 բուբլի և լիրան 10 բուբլի, կստանանք 80,000 բուբլու գումար, բացի միւս մթերքները: Ուրեմն միջին հաշուով իւրաքանչիւր տուն վճարեց էր 100 բուբլու միմիայն հացահատիկ, ոչխար և դրամ:

— Գրաւեցին խեղճ գիւղացիին իւզը, մի տարւան ամբարած ցորենի ու ալիւրի պաշարը, բոլոր ձիերը, էշերը, եզները, ոչխարները և վերջապէս գրաւեցին անոնց ոտքի կօշիկը, գուլպան և անոնց մերկութիւնը ծածկող հագուստներին անգամ աչք անկեցին:

Այսպէս էր պատկերը Շապին-կարահիսարում:

Սակայն ողբալի այս կացութեան մէջ տաճիկ կառավարութեան գործելակերպը ընդունում էր գաւեշտական բնոյթ:

Օրինակ, Վանի մէջ քաղաքամիջում գտնուող Ախթար-Բազըկ կոչուող թաղից, ուր ապրում էին 70 տուն հայեր, թէքհալիֆի-հարպիէն պահանջեց 50 հատ իշիկ (ֆուֆայկա), 50 զոյգ գուլպա, 50 զոյգ ձեռնոց, 50 զոյգ շապիկ-վարտիկ, 5 հատ մէշաբ (սփոռց) ձաւար-կորկոտ չորացնելու համար: Բացի այդ,

պահանջեց ձիու փալաններ, բայց որովհետև փալաններ գտնելը քաղաքում դժւար էր, ուստի թաղը փալանի փոխարէն տւեց 5 թաղիք և 5 կարպետ:

Ի հարկէ, պահանջը սրանով չը սահմանափակեց, այլ կըրկնւեց երեք անգամ և երեք անգամն էլ ստացւեց: Նոյն ձևի պահանջներ արւում էին բոլոր թաղերից:

Սակայն գաւազտականը դեռ մնում էր: Մի օր էլ կառավարութիւնը թաղերից պահանջեց մածուն, զօրքին ուտեստ չէք կարողանում հասցնել և սկսեց կերակրել մածնով: Մէկ մեծ կաթնա դրել էին թաղի կենդրոնում մի տան մէջ, իւրաքանչիւր տուն շարաթը մի անգամ բերում էր իր ունեցած մածունը և այդ կերպ հաւաքւած մածունը այդ տեղից էլ ուղարկւում էր զօրանոցները:

Դառնանք նորից ողբերգականին: Պետութիւնը միանգամայն զուրկ էր փոխադրական միջոցներից, մինչդեռ մէկէն ծագել էր պաշարի և պատերազմական պիտոյքների փոխադրութեան մեծ կարիք: Եւ ահա կառավարութիւնը սկսեց զբաւեմ փողովորդի ունեցած սայլերը և բեռնակիր կենդանիները:

— Արձանագրւեցին գաւառի հայ ժողովրդի սայլերը, եզնեքը, գոմեշները, ձիերը, ջորիները և էշերը. սրանք պատրաստ վիճակի մէջ սպասում են, որպէսզի հարկ եղածին պէս զօրաց իրեղէնները փոխադրեն: Դաշտային աշխատանքները կանգ են առել, — գրում են թերթերին Բուլանըխից:

— Գիւղերում չը մնաց մի եզ, մի սայլ, մի ձի, մի ջորի, մի էշ, որ չը գբաւէր կառավարութիւնը, կեանքը կանգ է առել, — զալիս է ահակնչը էրզրումի դաշտից:

Այսպէս էր գնում ահա Տաճկաստանում սէֆէր-բէրլիկը և Ընթանում նրա զուգակից Թէքեալիֆի - հարպիէն:

ՏԱՃԻԿ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՈՐՈՆՈՒՄՆԵՐԸ

Սկսւեց սէֆէր-բէրլիկը, ղէնքի տակ կանչւեցին 20-ից մինչև 45 տարեկան բոլոր տղամարդիկ անխտիր, համախմբւեցին արձանագրուելու տեղերում ինչպէս մահմեդականները, այնպէս էլ հայերը, բայց շատերն էլ խոյս տւին: Կարգադրութիւնը անողոք էր, շատ աներում աշխատող ձեռքեր բոլորովին չէին մնում; ուստի սկսւեց խուսափումը, խոյս էին տալիս թէ մահմեդականները և թէ հայերը: Կարգադրութիւնը հայերը գտնում էին միանգամայն անիրաւացի, և նրանք մի քանի տեղերում սկսեցին խուսափել մասսաներով, մի երևոյթ, որը հանդիսանում էր բնական հետեանք օրէնքը խախտող անարդար կարգադրութեան:

Մակայն այս նախամտածւած երևոյթ չէր, այլ պատահական ու անհատական, հայ ղեկավար շրջանները ոչ միայն չէին խրախուսում այս երևոյթը, այլև թիւադրում էին քաղաքացիական պարտքի անշեղ կատարումը, թէև քաղաքացիական պարտքի ըմբռնումը տաճիկ կառավարութեան մօտ այլասերման էր հասել: Մինք չենք վերցնի Պօլսի ու գաւառական ազգային երեսփոխանական մարմինները և ոչ էլ պատրիարքարանն ու առաջնորդարանները, որոնք ընդհանուր առմամբ լօծալ են մնում ղէպի կառավարութեան կարգադրութիւնները, այլ կը վերցնենք հայ իրականութեան մէջ գործող առաջնակարգ կուսակցութիւնը—Ն. Յ. Դաշնակցութիւնը:

Այդ կուսակցութեան ընդհանուր ժողովը երզրումի մէջ իր զբաղմունքներն էր շարունակում, երբ բռնկւեց համակրողական պատերազմը և Տաճկաստանը յայտարարեց սէֆէր-բէրլիկ-Դաշնակցութեան ընդհանուր ժողովը, քննութեան առարկա դարձնելով ստեղծւած զրութիւնը, որոշեց յայտարարել գաւառական

մարմիններին, որ հայ ժողովուրդը իբրև օսմանեան պետութեան քաղաքացի, պարտաւոր է կատարել իր քաղաքացիական պարտքը:

Այս բաւական չէ, մինք կարձանազրինք այստեղ մի այլ ղէպք, որը գալիս է լուսարանելու, թէ ինչպէս էին վերաբերուած այդ կուսակցութեան ներկայացուցիչները սէֆէր-բէրլիկին:

Վանի մէջ խոշոր թւով երիտասարդներ խոյս տւին սէֆէր-բէրլիկից և արձանազրուելու չը ներկայացան: Տեղական կառավարութիւնը այս երևոյթի վրա ուշադրութիւն դարձնելով, դիմեց բռնի միջոցի: սէֆէր-բէրլիկի յայտարարման երրորդ թէ չորրորդ օրը ժանդարմների մի խումբ յայտնեց Արարուց թաղի հրապարակը և այնտեղ դռնուող բոլոր հայերին քշեց կառավարութեան դուռը: Սա բնականաբար անախտօժ դրութիւն ըստեղծեց:

Այս միջոցին քաղաքից բացակայում էր Դաշնակցութեան ներկայացուցիչ Արամը, որը, իբրև թեմական տեսուչ, պտոյտի էր ելեր գաւառները: Նա քաղաք վերադարձաւ, երբ տեղի էր ունեցել արդէն Արարուց թաղի հրապարակի միջադէպը:

— Այդ լաւ նշան չէ, դրա առաջը պիտի առնել, — մտածեց Արամը և դիմեց հետեւեալ միջոցին:

Հրաւիրեց 300-ի չափ երիտասարդներ, նւազել տեց դափ ու զուռնան և ինքը առաջ ընկնելով, հանդիսաւոր շուքով Այգեստանից շարժեց ղէպի Բաղաք — կուսակալի տունը: Դուրս եկաւ ընդ առաջ կուսակալը և իր շնորհակալութիւնը յայտնեց Արամին՝ նրա ցոյց տւած օրինակի համար: Երիտասարդները բոլորը արձանազրուեցին, ճանապարհը հարթեց և միջադէպը մոռացեց:

Ժողովրդի մէջ դասալքութիւններ կատարուում էին, կատարուում էին տարերային և ոչ կանխամտածւած կերպով, իսկ հայ ժողովրդի ղեկավար շրջանները աւելի իրազեկ ընդհանուր դրութեանը՝ թելադրում էին քաղաքացիական պարտքի կատարումը:

Սակայն ի՞նչ էր անում տաճիկ կառավարութիւնը, ի՞նչ միջոցներ էր գործադրում հայ ժողովրդի սիրտը շահելու և նրան երկրի հետ կապելու համար:

— Սէֆէր-բէրլիկի յայտարարումից յետոյ երիտասարդ թուրքերի կառավարութիւնը նախ զրչի մի պտոյտով քնջեց հայկա-

կան ըէֆօրմները, ըէֆօրմներ, որոնք տասնեակ տարիների աշխատանքի արդիւնք էին:

Հայկական նահանգների վերատեսուչները — Հոֆֆը և Վեստենհնիլը Պօլսից ուղևորւելով, ինչպէս տեսանք, դեռ ճանապարհին էին գտնուում, երբ յայտարարւեց սէֆէր-բէրլիկը: Հոֆֆը Վան հասաւ օգոստոսի 4-ին: Կառավարութիւնը յանձին կուսակալ Թահսին բէյի, որը երիտասարդ թուրքերի ազգեցիկ անդամներից մէկն էր համարուում, Հոֆֆի գալուն առանձին կարևորութիւն չը աւելց, անշուք կերպով քաղաքից դուրս ընդ առաջ ուղարկեց վիլյայէթի թարգման Արմենակ էֆէնդիին: Հոֆֆը, որը սպասում էր իր կոչման համապատասխան ընդունելութեան, վերաւերած այսպիսի վերաբերմունքից, Վանի մէջ կանոց չառաւ, այլ կուսակալին տեսնելուց յետոյ, անմիջապէս կառքը քաղցեց ուղիղ Արտամետ: Այդ տեղից Հոֆֆը մի անպատշաճ երկտողով յայտնեց կուսակալին, որ օգոստոսի 9-ին պաշտօնապէս քաղաք պիտի իջնէ. այս մի ցուցմունք էր կարգը զանց առնող կուսակալին: Նամակը ունեցաւ իր ազդեցութիւնը. օգոստոսի 9-ին կուսակալը հանդիսաւոր ընդունելութիւն ցոյց տւեց Հոֆֆին և կառավարութեան շէնքի մօտ նրան դիմաւորեցին բարձրադիր պաշտօնեաներ ու զօրքեր: Կառավարութեան տնից Հոֆֆը այցելեց հիւպատոսարանները և ապա այցելեց հայոց առաջնորդարանը, ուր համախմբւել էր Վանի հայ ժողովուրդը և սգևորւած ցոյցերի ուղեկցութեամբ նա այդ նոյն օրը նորից վերադարձաւ Արտամետ:

Հայերի կողմից տեղի ունեցած ընդունելութեան ցոյցը Հոֆֆին բոլորովին դուր չեկաւ կուսակալին և նա իր դժգոհութիւնը արտայայտեց այդ առիթով:

Իրանից մի քանի օր անց, օգոստոսի 16-ին, ներքին գործերի նախարար Թալաթ բէյից Հոֆֆը ստացաւ հեռագիր, որով յայտնուում էր նրան:

V Ի նկատի ունենալով համակրողական պատերազմը և դորաժողովը մեր երկրում, առայժմ ըէֆօրմների գործադրութիւնը զաղարեցւումէ, ուստի քարհնաճէք վերադառնալ Պօլիս:

Օգոստոսի 18-ին Հոֆֆը թողեց Արտամետը և Կարճկանի

զծով վերադարձաւ Պօլիս առանց նոյնիսկ Վան մտնելու և Հայ-
կական բէֆօրմների հարցը թաղւեց:

Այսպէս վարւեց երիտասարդ թուրքերի կառավարութիւնը
հայերի հետ այն ժամանակ, երբ նա հայերի աջակցութիւնը
պիտի գտնէր, երբ Դաշնակցութեան ներկայացուցիչը երիտա-
սարգութեան գլուխ անցած զափ ու զուռնայով կառավարու-
թեան զուռն էր գնում և հայ ժողովրդի լօտալութեան օրինակն
էր ցոյց տալիս:

Թէ ինչ կը լինէր տաճկահայ ժողովրդի հոգեկան վիճակը
այդ օրերում, գժւար չէ պատկերացնել: Հոֆֆի մեկնելու առի-
թով Վանի մէջ տաճիկ ժողովուրդը հայերին հեզնում էր ու ծագ-
րում, այն տաճիկ ժողովուրդը, որը 7-8 օր առաջ Հոֆֆի գա-
նով թուռնով ու առելութեամբ էր լցւած դէպի հայերը:

Երիտասարդ թուրքերի կառավարութիւնը այդ օրերում
այլանդակ բարքեր էր տպրում, մինչդեռ նա մի կողմից ջնջում
էր հայկական բէֆօրմների հարցը, միւս կողմից հայերի աջակ-
ցութիւնն էր խնդրում, անմիտ իրաստումներ անելով նրան:

Ապիկար կառավարութիւնը գործիք դարձած Գերմանիայի
ձեռքում, երազում էր յարձակել Ռուսաստանի վրա և Կովկասը
գրաւել: Նա յոյսը դրել էր Կովկասի ազգաբնակչութեան աջակ-
ցութեան վրա. վստա՛ էր որ Կովկասի մահմեդականները կա-
ջակցեն իրեն. միամտութիւն ունէր հաւատալու նաև վրացիներին
աջակցութեանը. մտում էին հայերը:

Եւ անա սէֆէր-բէրլիկի օրերին, երբ էրզրումի մէջ Դաշ-
նակցութեան ընդհանուր ժողովը իր որոշումների ամփոփումն էր
կատարում, Պօլսից այդտեղ հասան երիտասարդ թուրքերի կու-
սակցութեան երեք ներկայացուցիչները Դաշնակցութեան ներ-
կայացուցիչների հետ բանակցելու համար:

Թուրք ներկայացուցիչներն էին Նաջի բէյը, Բուխար-էզ-
դինը և Հիլմի բէյը: Սրանք զիմեցին Դաշնակցութեան ներկա-
յացուցիչներ Վառամհանին, Ակնունուն և Ռոստոմին ու առաջար-
կեցին, որ նրանք պրօպագանդա մղեն Կովկասի և Պարսկաստա-
նի հայերի մէջ, կազմակերպեն կամաւորական խմբեր և պատե-
րազմի դէպքում մասնն տաճիկ զօրքերի շարքը ընդդէմ սուսների:

— Պատերազմը լինելու է, ապստամբութիւնը Կովկասում

անխուսափելի է, ոտքի են կանգնելու լեռնականոնները, թուրքերը, նոյնիսկ վրացիները, թող միանան նաև հայերը, իսկ զրա փոխարէն մենք խոստանում ենք տալ հայերին ինքնավարութիւն, — ասացին թուրք ներկայացուցիչները և, իբրև ապացոյց իրենց ասածների, ցոյց տւին մի քարտէզ նոր ընդգծումներով, որով թրիֆլիսի, Բուխարիի նահանգները, Բաթումի շրջանը և Տրապիզոնի վիլայէթի մի մասը արեւելու էր ինքնավար վրաստանին: Ամբողջ Դաղստանը, Բաղւի նահանգը և Գանձակի նահանգի մի մասը արեւելու էր Կովկասի թուրքերին, իսկ Կարսի շրջանը, Երևանի նահանգը, Գանձակի նահանգի մի մասը, ինչպէս և Վանի, Բիթլիսի վիլայէթները ու Էրզրումի վիլայէթի մի մասը արեւելու էր ինքնավար Հայաստանին:

Մաշնակցութեան ներկայացուցիչները լսեցին առաջարկութիւնը, լսեցին ու զարմացան թուրք ներկայացուցիչների միամիտ ձևանալու վրա, այն մարզիկ, որոնք չկարողացան հաշուել հայկական անդամահատւած բէֆօրմների հետ ու տապալեցին նրան, այսօր այդ նոյն մարդիկ եկել ու խոստանում էին երեք նահանգներ Կովկասից և երեք վիլայէթներ Տաճկաստանից տալ հայերին: Ու պատասխանեցին որ իրենք այդպիսի առաջարկութիւն ընդունել չեն կարող, որ հայերը երկու պետութիւններէ մէջ էլ սլիտի կտտարին իրենց քաղաքացիական պարտքը և որ խորհուրդ չեն տայ տաճիկ կառավարութեանը պատերազմի մէջ նետուել՝ համոզւած, որ պատերազմից միմիայն կը տուժի երկիրը:

Ի հարկէ թուրք ներկայացուցիչները բաւական չը մնացին այդպիսի պատասխանից, նրանք հեռացան դժգոհ սրտով, նրանք համարեցին այդ դաւաճանութիւն:

Նման զիմուսներ տեղի ունեցան նաև Մուշում, Վանում, պատասխանը, ի հարկէ, եղաւ նոյնը և զբանով էլ ինդիրը փակեց:

Էրզրումում տեղի ունեցած բանակցութիւնից յետոյ տաճիկ կառավարութեան վերաբերմունքը դէպի հայերը միանգամից փոխւեց: Էրզրում համախմբւած դաշնակցական գործիչները առնւեցին հակողութեան տակ ու հեռացեցին քաղաքից: Մի քանի կովկասցի հայ ուսանողներ, որոնք այդ միջոցին ուսումնասիրութիւններ կատարելու նպատակով գտնուում էին Մուշում և

Սասունում, ձերբակալւեցին և հսկողութեան տակ ուղարկւեցին Էրզրում և այնտեղից էլ Կովկաս:

Հալածանք սկսեց նաև տեղական ժողովրդի դէմ, ի հարկէ-
անկախ այն ճնշումներէ, որոնք տեղի ունէին զօրածողովի և
պատերազմական տուրքերի հետևանքով:

Նախ որոշեց հայերի ձեռքը գէնք չը տալ, իսկ այդ արևց
կողմնակի ճանապարհով, հրատարակեց մի հին օրէնք, որով
խրաքանչիւր գինւորացու կարող էր ազատել զինւորութիւնից,
եթէ վճարէր 43 լիբա փրկանք, թէև այս օրէնքը տարածուեմ էր
ամենքի վրա անխտիր, բայց շահագործման օրիկէտ հանդիսա-
ցան բացառապէս հայերը: Գեղեցիկ որոշում — մի կողմից հա-
յերը գէնքի տակ չէին մտնի, միւս կողմից պատութեան դա-
տարկ զանձարանը կը լցւէր:

Եւ իսկապէս, բազմաթիւ հայ երիտասարդներ վճարեցին
փայլուն լիբաները ու ազատւեցին զօրածողովից, բայց ոչ մշ-
տապէս: Նրանք ենթարկւեցին նոյն պահանջներին նորից ու նո-
րից և վերջն էլ ուղարկւեցին սոսկալի կառավարանները, ինչ-
պէս այդ կը տեսնենք յետոյ:

Սակայն զինւորացուների խոշորագոյն մասը անկարող լի-
նելով փրկանք վճարել, մտաւ գէնքի տակ, մինչև որ տեղի ու-
նեցաւ մատոյսական զինաթափումը և ապա ջարդը:

Քրիստոնեաների վերաբերեալ այս բացառիկ արարքը հայ
ժողովրդի կողմից ընդունւեց իբրև անվստահութեան մի ակտ, և
կասկածներ ծնեցին, սակայն անվստահութեան և կասկածի մի
նոր առիթ կտրաւարութիւնը աւելց հայ պաշտօնեաների դէմ
հանած իր հալածանքով: Հալածանք խօսքը քիչ է, հայ պաշ-
տօնեաները ոչ միտոյն հալածւեցին, այլ և արձակւեցին պաշ-
տօններէ: Հայարնակ շրջաններում հայ պաշտօնեաների թիւը
ժեծ չէր, հայ ժողովրդի թւի համեմատութեամբ նրանք կազմում
էին չնչին տոկոս, և այդ չնչին տոկոսը կազմւել էր սահմանա-
չրական վերջին տարիներում, երբ կտրաւարութիւնը հայերին
մի կերպ շահելու համար, պաշտօնի էր կանչում հայ մարդիկ
և ահա այսօր այս չնչին տոկոսն էլ քշուեմ էր ասպարէզից և
քշուեմ էր առանց պատճառաբանութիւնների:

Այսպէս, օրինակ, զիստ ուսու-տաճկական պատերազմը չըս-
կսած հեռացրին պաշտօնից էրզրումի վիլայէթի Կիրճանիս գա-

ւառի գայմագամին, որը յայտնի Գրիգոր Զոհրարի եղբայրն էր: Հեռացրին նաև Վանի վիլայէթի Ալջաւազ գաւառի գայմագամ Պետրոս բէկին և տեղը նշանակեցին ոմն Նաջի բէյ վանեցի:

Սրանք գայմագամներ էին, այսինքն պատասխանատու պաշտօնեաներ, որոնց ներկայութիւնը կարող էր այս կամ այն ազդեցութիւնը ունենալ ժողովրդի վրա. սակայն պաշտօնագուրկ էին անում նաև այնպիսիներին, որոնք համարեա ազդեցութիւն չունէին կառավարութեան ընթացքի վրա. այսպէս, օրինակ, Վանի մէջ երեք հայ ոստիկանների—Պօղոս Տէր Պօղոսեանին, Շահէն Փրթօեանին և Արմենակ Շատախցեանին՝ առաջարկեց կառավարութիւնը պաշտօնով տեղափոխել Մուսուլ և զբանցից երկուսը ստիպուած եղան թողնել պաշտօնները:

Միմիայն հայ պաշտօնեաներին պաշտօնանկ անելով չք բաւականացաւ տաճիկ կառավարութիւնը, այլև ցոյց տւեց իր վերաբերմունքը նոր պաշտօնեաներ նշանակելու գործում:

Կը բերենք մէկ օրինակ: Վանի կուսակալ Թահարին բէյը, որը համարոււմ էր կրթւած և շատ զէպքերում արդարամիտ մարդ, ուսուտաճկական պատերազմի նախօրեակին նշանակւեց Էրզրումի կուսակալ, իսկ նրա տեղ նշանակւեց Բաշկալէի մութէսէրիֆ Զէլզէտ բէյը, որը էնվէր բէյի փեսան էր: Զէլզէտը նոր զէմք չէր, նա Վանի երբեմնի կուսակալ Թահար փաշայի որդին էր, մի սրիկա զէմք:

1908 թւի սկզբում, սահմանադրութիւնից մի քանի ամիս առաջ, Իաշնակցութեան զինուորներից մէկը, անունը Դաւիթ, իր ընկերներից զժաւած, զիմեց մի ստոր միջոցի. կառավարութեանը մասնեց Իաշնակցութեան զէնքերի պահեստները: Այդ միջոցին, կուսակալ էր Վանում մի ստոր արարած—Ալի բէյը, որը սահմանադրութիւնից յետոյ պաշտօնանկ եղաւ և կովկասի վրայով Պօլիս գնալիս, Բաթումի մէջ ընկաւ վրիժառու մէկ հայի գնդակով:

Տեղի ունեցան խուզարկութիւններ, բոնեց Ս. Գրիգորի Վանքում եղած զէնքի պահեստը, սկսւեցին ձերբակալութիւններ ու տանջանքներ: Այդ ժամանակ առանձին անուն հանեց Սարայի գայմագամը: Սա Աբաղայի Սաշան զիւղում առևտուրով պաշարող վանեցի Պետրոս Փիրումեանին, իբրև յեղափոխականի, ամէն տեսակ տանջանքների ենթակելուց յետոյ, զիմեց հետեւալ

միջոցին. հրամայեց բերել երկու կատուններ, նրանց ձգեց Պետրոսի վարտիկի մէջ և ապա փայտով սկսեց ձեծել կատուններին. կատունները կատաղած ձւատեցին խեղճ մարդու մարմինը, որից յետոյ Պետրոսը ապրեց միմիայն մի օր:

Իրանով չը բաւականացած, գազան գայմագամը սոսկալի ձեծեց յետոյ Պետրոսի 12 տարեկան տղային—Սարգսին. ոտները նալել տւեց և ստիպեց նալած ոտներով առաջ ընկնել զէնքերի թաղստոցը ցոյց տալ. ի հարկէ փոքրիկ Սարգիսը մի քանի անգամ ուշից գնաց: Այս դէպքից յետոյ լիշեալ գայմագամը կոչւեց նալբանդ գայմագամ:

Ահա այդ գայմագամը Ջէւղէա բէյն էր, որը սահմանադրութիւնից յետոյ Սարայի գայմագամութիւնից նշանակւեց Բաշկալէի մութէսէրիֆ, իսկ մութէսէրիֆութիւնից նշանակւեց Վանի կուսակալ: Արդեօք կասկածի տեղ մնում է, որ տաճիկ կառավարութիւնը կուսակալ կարգելով նալբանդ Ջէւղէտին, սկիզբը չէր դնում հալածաքնների:

Սակայն զլխաւոր անվստահութիւնը, որ ծագեց հայերի մէջ դէպի տաճիկ կառավարութիւնը, այն խտրականութիւնից յետոյ էր, որ տեղի ունեցաւ հայ և տաճիկ զինւորների նկատմամբ: Տաճիկներին լաւ գնդերի մէջ էին ուղարկում, հայերին վատ. տաճիկներին մօտ տեղերում էին պահում, հայերին հեռու տեղեր էին քշում. տաճիկների ձեռքը զէնք էին տալիս, իսկ հայերին մեծ մասամբ ուղարկում էին խրամատներ փորելու և ճանապարհների վրա աշխատելու և այս խտրականութիւնը նրկատելի դարձաւ նոյնիսկ զօրաժողովի առաջին օրերից:

— Օսմանեան վերջին զօրահաւաքութիւնը զօրծաղրեցաւ ժանդարմների՝ ոստիկան-զինւորութեան ձեռով, որ կը բաղկանար երկու մասերէ՝ հաստատուն և շրջուն: Ակներև է երկուքի մէջ եղած տարբերութիւնը, մանաւանդ առաջինի առաւելութիւնները բնակարանի, հազուստի, սնունդի և այլն երկրորդական յարմարութեանց տեսակէտից:

— Խտրականութեան առաջին քայլը առնւեցաւ ճիշտ տեսակներու արձանագրութեանց ստեղծում: Մօտակայ դաւաճներու հաստատուն դուռներէ մէջ հայեր շատ աննշան թւով յաջողեցան արձանագրել, այն էլ բացարձակապէս անհատական միջ-

նորդութիւններու շնորհիւ: Մասնաւոր ջանք մը թափւեցաւ հայ զինւորները հետացնել իր բնագաւառէն. ընդհանրապէս զրկւեցան շրջուն գունդերուն մէջ, անձանօթ պայմաններուն: Եւ առաջին իսկ օրէն, առանց ամենատարբարական մարզանք մը կատարելու, իր կողքին ունենալով իսլամ զինւորը՝ մարզանք տեսած, զգեստաւորւած պետութեան աւելի հանգիստ օրերուն, օժտւած գիւղացիները շահագործելու ամեն ընդունակութիւններով:

— Յետոյ երևան եկաւ ամենաթիփիք երևոյթը և խորականութիւնը: Սովորական էր հաւատացնել որ կենտրոնի մէջ բաւականաչափ զէնք չը կայ և թէ բաւական էր իրենց գունտերու սահմանավայրը հասնել, երբ առատօրէն պիտի ստանային ռազմամթերք: Անշուշտ աւելորդ է ըսել, որ իսլամները մասամբ զէնք կստանային, որպէս կրթւած զինւորներ: Եւ որպէս մասնաւոր բարեացակամութիւն կը կրկնուէր յաճախ, թէ փոխանակ զէնք գործածելու դժւարութիւնը կրելու, լաւագոյն էր հայերը գործածել համաձայն իրենց ընդունակութիւններուն, որպէս արհեստաւոր և կամ որպէս ամալէա — աշխատաւոր: Ահա աշխատանքի բաժանումի այն նոր սիստեմը, որուն վրայ պետական գերագոյն իշխանութիւնը հաստատեց իր արտառոց թէզը:

Ահա այսպէս էր նկարագրում տաճիկ կառավարութեան խորական գործնէութիւնը հայերի նկատմամբ Վանի զօրածոդովի աշխատանքներին մասնակցած, զինւորակոչւած Հ. Գալիկեանը:

Կարիք չը կայ հոգեբան լինել՝ ըմբռնելու համար այն սըրտամաշ կացութիւնը, որ ստեղծուում էր հայ զինւորի համար: Եւ անհելով թէ ինչպէս այն ժամանակ, կար իրենը արհամարելով քրում էին ճանապարհների վրա, խրամատների մէջ կամ մթերքների կոյտերի մօտ ստորացուցիչ աշխատանքներ կատարելու: այդ նոյն ժամանակ տաճիկ, յաճախ ակամար քիւրդ զինւորը զէնքը ուսին խրոխտ ու հպարտ գալիս էր ու անցնում իբրև այդ երկրի տէրը:

Այժ, այդ անհաւատար պայմաններում, այդ խորական ստորացուցիչ վիճակում եղողը իբաւունք ունէր զասալքութեան զիմելու: Եւ զիմեց. դասալքութիւնը սկսեց զլիսաւորապէս ճանապարհների և խրամատների վրա աշխատողների շարքերում:

ուր Ֆիզիքական զրկանքների հետ հայ զինուորը կրում էր նաեւ քնակարանի, ուտեստի և հագուստի զրկանքներ: Զէնքի տակ եւ զող հայ զինուորները մինչև ուսուտանական պատերազմը շատ քիչ թւով դասալիքներ տւեցին:

Տաճիկ կառավարութիւնը հալածանք սկսելով հայերի դէմ, հայեր, որոնց համակրութիւնը ուսանների կողմն էր, գրանով ձեռնարկեց իր գլխաւոր մտադրութիւնը իրագործել, նա պատրաստուում էր յարձակել Ռուսաստանի վրայ: Տաճիկների այս մտադրութիւնը յայտնի դարձաւ դեռևս սէֆէր-րէրլիկի առաջին օրերից:

Անգլիան յուլիսի 24-ին պատերազմ յայտարարելով Գերմանիային, գրաւեց Տաճկաստանի պատէր տւած երկու զրահանաւերը, որոնք աւարտուելու վրա էին անգլիական Ամստրոնգ գործարանում: Այդ նաւերն էին «Սուլթան Օսմանը» և «Մահմէդ աշխարհակալը»: Անգլիան գրաւումը կատարեց, հիմնւելով պատերազմական օրէնքների վրա՝ վճարելով զրահաւորների արժէքը:

Այս դէպքի հետ միաժամանակ, Տաճկաստանը Գերմանիայից գնեց երկու զրահանաւ, որոնք անմիջապէս լողացին դէպի Բոսֆորի ջրերը, գրանք «Գեօրին» և «Բրէսլաւ» զրահանաւերն էին:

Այն ժամանակ, երբ Գերմանիան ձեռնոց էր նետել մի քանի պետութիւնների և ինքը նաւերի կարիք ունէր, ծիծաղելի է թւում, որ այդ նոյն Գերմանիան իր զրահանաւերից երկու շաւաղօյնները վաճառէր Տաճկաստանին: Իսկութիւնը այն է, որ Գերմանիան ոչ թէ այդ նաւերը վաճառեց Տաճկաստանին, այլ Տաճկաստանի գրոշակի տակ ուղարկեց Բոսֆորի ջրերը՝ Ռուսաստանի վրա երբ և իցէ յարձակուելու նպատակով: Այսպիսով Տաճկաստանը իրեն չէզօք յայտարարելով հանդերձ, ապագայ իր ծրագրերների իրագործման առաջին նշանը տւեց:

Բայց Ռուսաստանի գլուխը այդ միջոցին չափից դուրս խառն էր, որ կարողանար նախատեսել Տաճկաստանի մտադրութիւնը:

Երկրորդ լուրջ ձեռնարկութիւնը ուսանների դէմ, որին զի-

մեց Տաճկաստանը, այդ չէթայական խմբերի և միլիցիայի կազմակերպումն էր: Միլիցիան կամ միլլիանների գնդերը կազմեցին 17-ից մինչև 20 և 45 տարեկանից վեր, այսինքն այն տարիքի մարդկանցից, որոնք զօրաժողովից չուրս էին մնացել կազմեցին նաև դասալիք եղած քիւրդերից: Այդ գնդերը փոխաբերելու էին ժանդարմերիական կազմերին, որոնք պիտի ուզարկէին պատերազմի դաշտ:

Բայց առանձին հոգացողութեամբ կազմակերպեցին չէթայական խմբերը, որոնց վրա տաճիկ կառավարութիւնը մեծ յոյս ունէր դրած: Պահեստի զօրքի շարքերից ընտրում էին ամենավարժ և աչքի ընկնող զինուորներին և կազմում էին սրանցից առանձին խմբեր, որոնց կոչումը լինելու էր կատարել ամենայանդուզն ձեռնարկութիւններ:

Օրինակ. երիտասարդ թուրքերի ներկայացուցիչ Նաջիբէյը, որը Պօլսից էրզրում եկաւ Դաշնակցական ներկայացուցիչների հետ բանակցելու համար, էրզրումի և Վանի զօրքերի միջից ընտրեց 3000 լաւագոյն զինուորներ և դրանց զուխը անջնելով, ուղևորեց Պարսկաստան, ուսանորի դէմ խոռովութիւններ հանելու և կարևոր դէպքում գործողութիւններ սկսելու համար:

Չէթայական խմբերը կազմեցին չէքքէզներից ու լաղբերից, որոնք յայտնի են իրենց սխրագործութիւններով, նաև այնպիսի քիւրդական ցեղերից, որոնք աչքի են ընկել իրենց վայրագութիւններով: Այդ բաւական չէ, չէթայական խմբերը ուժեղացնելու նպատակով բանդերից արձակեցին շարագործներին ու մարդասպաններին և ներումն շնորհեցին փախստական դարձած քիւրդ ցեղապետներին: Շարժման մէջ գրին նաև համիդիական գնդերը:

Ահա այս բոլորը ուզղւած էին բացարձակապէս Ռուսաստանի դէմ:

Սակայն տաճիկ կառավարութիւնը այնքան յանդուզն էր դարձել, որ նա ոչ միայն Ռուսաստանի դէմ էր պատրաստուում, այլ և Անգլիայի և Ֆրանսիայի: Նա մինչև անգամ իրեն հաշիւ չէր տալիս, թէ ինչ ահաւոր գործի է ձեռնարկում:

Հոկտեմբերի 1-ին տաճիկ կառավարութիւնը յայտարարեց կապիտուլացիօններէ ջնջումը: Այն մի շարք արտօնութիւնները, որ դարեւրի ընթացքում երոպական պետութիւնները ձեռք

էին բերել զաշնագրերով իրենց հպատակների համար Տաճկաստանում, ինչպէս վերը տեսանք, երիտասարդ թուրքերի կոտորուածութիւնը մի գրչի պտոյտով յայտարարեց չեղած և գրանով ձեռնոց նետեց Եւրոպային, առանձնապէս Թրանսիային, Անգլիային և Ռուսաստանին:

Այս բոլորի հետ միասին Տաճկաստանում սկսել էր մի ետուն պրօպագանդա յօգուտ Գերմանիայի: Երկրի մէջ տարածուած էին գլխաւորապէս գերմանական ազբիւրներից ստացւող հեռագիրներ և լրագիրներ պատերազմի ընթացքի մասին՝ Ֆրանսիական, անգլիական ու ռուսական ազբիւրներից ստացւող հեռագիրները բռնուած էին Պօլսի գրաքննիչի կողմից և գաւառները չէին ուղարկուած: Թուրք թերթերը լեցնում էին իրենց էջերը գերմանական յաղթութիւններով՝ չափազանցած ու գունաւորաձօ՞ չակառակ տրամադրուած, մասնաւորապէս հայկական և յունական թերթերը ենթարկուած էին գրաքննական ներշնչումների և գրում էին հակառակ իրենց ներքին համոզմունքներին:

Եւ այս օրինակ պրօպագանդայի շնորհիւ Տաճկաստանում ահադին գործ կատարեց, տատանւողները ամբողջեցին, թերահաւատները հաւատի եկան, իսկ հաւաստացածները ոգևորութեան գագաթնակէտին հասան: Այս բանին նպաստեց մանաւանդ այն, որ ռուսական բանակը գերմանական սահմանի վրա մի շարք անյաջողութիւններ ունեցաւ:

Պրօպագանդայի կատարած դերը պէտք է շեշտել առանձնապէս նրա համար, որ սէֆէր-բէրլիկը շատ շրջաններում և մանաւանդ ժողովրդի մէջ առաջ բերեց զժկամութիւն: Օրինակ, ռուս-սահմանամերձ, այն է, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայէթներում մահմեդական ազգաբնակչութիւնը հակառակ էր ինչպէս պատերազմին, նոյնպէս և սէֆէր-բէրլիկին, հակառակ էր ոչ միայն գիւղացիութիւնը, այլ և քաղաքների ազգաբնակչութիւնը: Թուս կառավարութեան և ռուս բանակի մասին մահմեդական ժողովրդի մէջ մեծ հմայք կար. նա համոզւած էր, որ Տաճկաստանը չը պիտի կարողանայ մի օր անգամ գէտ զնել ռուսական արշաւանքին. և այս տեղից էլ ծագում էր նրա մէջ հակամիտ վերաբերմունք դէպի սպասուող պատերազմը:

Հայերի պատմելով, ոչ միայն գաւառներում, այլ և քաղաք-

ներում տաճիկներն ու քիւրդերը դիմում էին դրացի հայերին հետեալ առաջարկութեամբ.

— Մենք կը պաշտպանենք ձեզ, եթէ կառավարութեան կողմէց բռնութիւն չինի, դուք էլ պաշտպանէք մեզ, եթէ սուսները մեր երկիրը մանեն:

Նրանք ամէն կերպ աշխատում էին հայերի սիրտը շահած չինել, բարեկամ մնալ նրանց, այնքան հաւատացած էին սուսների յաղթութեանը պատերազմի դէպքում:

Ոչ միայն ժողովուրդը, այլ և պաշտօնէութիւնը հակառակ էր պատերազմին. կան բազմաթիւ դէպքեր, թէ ինչպէս տաճիկ պաշտօնեաները հայերի մօտ արտայայտել են բացասաբար ոչ միայն պատերազմի, այլ և երիտասարդ թուրքերի կուսակցութեան ամբողջ ընթացքի նկատմամբ: Բերենք այդպիսի դէպքերից մէկը:

— 1914 թւի յուլիսի 22-ին ևս և Սասունի առաջնորդական փոխանորդ ու Պետրոս-Առաքելի վանքի վանահայրը—Սանփան վարդապետ Բաղդասարեանը գտնուում էինք Սասունի դայմագամ Ասադ-բէյի մօտ, երբ ստացուեց սէֆէր-բէրլիկ յայտարարող հեռագիրը:— պատմում է Մուշի առաջնորդարանի նախկին քարտուղար և Պոլսի թերթերում աշխատակցող Նազարէթ Մարտիրոսեանը, — ևս այդ միջոցին Սասունի կեդրոնավայր Կարլովոյ աւանում գանձապահի (սանդղ-էմիրի) պաշտօն էի վարում, և իբրև պաշտօնեա, շատ մօտ էի գայմագամին. գայմագամը իթթիհատական էր՝ ծագումով ալ արբանացի:— Բու հիւքմաթ բաթաշաք (այս երկիրը կը կործանուի), բացահանչեց դայմագամը վրդովւած, երբ հեռագիրը առնելով աչքի սնցկացրեց, և ապա նետելով սեղանի վրայ աւելացրեց, — մեր կառավարութիւնը Յրանսիայից փոխառութիւն վերցրեց որ երկրի ներքին կարիքները հոգայ, իսկ այժմ նրա զբաժնով դէնք է դընում, որ նրա դէմ գործածին: Եւ միանգամայն բացասական կարծիք յայտնելով պատերազմի ու սէֆէր-բէրլիկի մասին, նորից կրկնեց:

— Բու հիւքմաթ բաթաշաք:

Անա այսպէս արտայայտուած էր սէֆէր-բէրլիկի օրին տաճիկ դայմագամը, այսպէս արտայայտուած էին նաև շատ շատերը

պաշտօնեաներից: Բացառութիւն կազմում էին մի քանի բարձր
պաշտօնեաներ և նրանց համակիր մի կարգի տաճիկներ, որոնք
անբա կապ ունէին Պօլսի Իթթիհատական կուսակցութեան հետ
ու ոգևորւած էին Գերմանիայով:

Բայց սկսեց պատերազմը Եւրոպայում, դրան հետ միաժամա-
նակ սկսեց գերմանասիրական պրօպագանդը Պօլսում: Երիտասարդ
թուրք պրօպագանդիստները ցրեցին զաւառները, գերմանական
պաշտօնական ու անպաշտօն գործակալները հեղեղեցին երկիրը,
հնաագիրներն ու լրագիրները՝ միակողմանի, գունաւորւած տեղե-
կութիւններով ի նպաստ Գերմանիայի, տարածեցին ու ծաւալ-
եցին երկրի բոլոր անկիւնները, աստիճանաբար բարձրացաւ
ժողովրդի տրամադրութիւնը և շուտով թերահաւատ ժողովուրդը
հաւատաց Գերմանիայի գերբնական ու անխորտակելի ուժին և
թեքեց դէպի պատերազմը:

Բայց նախ քան ուս-տաճկական պատերազմին անցնելը,
կարևոր է իմանալ, թէ ի՞նչ շարժում տեղի ունէր այդ միջոցին
Պօլկասում:

ԿԱՄԱԻՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Վերջին երկու դարերի, առանձնապէս 19-րդ դարի ընթացքում հայ ժողովրդի բախտը կապւած է եղել ռուսական զէնքի յաջողութեան հետ Կովկասի սահմաններում. որքան այդ զէնքը յաջողութիւն է ունեցել, այնքան հայ ժողովրդի գրութիւնը լաւ ընթացք է ստացել ու ապահովութիւն գտել:

✓ Պարսկական և տաճկական լծերի տակ հեծող հայ ժողովուրդը դեռ ևս 17-րդ դարի սկզբից իր հայեացքը դարձրեց զէնքի Ռուսաստանը, արագ առաջադիմող գրացի այդ քրիստոնեապետութիւնը, որը հետզհետէ ընդարձակելով, ընթանում էր զէնքի ասիական յետամաց այդ երկու պետութիւնների նւաճումը:

Ինչ ևս հին դարերից կուլտուրայի ձգտող հայ ժողովուրդը իր բնածին հակումները զարգացնելու ստպարէկ չէր գտնում այդ պետութիւնների մէջ. նա ձգտում էր մի նոր հովանաւորող ձեռքի, որի պաշտպանութեան տակ կարողանար առաջ դնալ ու զարգանալ. այդպիսի հովանաւորող ձեռք հանդիսանում էր Ռուսաստանը: Եւ որքան որ առաջխաղացումը զէնքի Առաջաւոր Ասիան պահանջում էր ռուս պետականութեան շահը, նոյնքան աւելի այդ առաջխաղացումը պահանջում էր հայ ժողովրդի դոյութեան խնդիրը: Սրանով էլ պիտի բացատրել այն երևոյթը, թէ քնչպէս հայ ժողովուրդը յանձին իր աշխարհական և հոգևոր ներկայացուցիչների դեռ ևս Պետրոս Մեծի օրերից սկսած անդադար դիմումներ էր անում Ռուսաստանին, խնդրելով շարժւել առաջ, քչիլ պարսիկներին ու տաճիկներին, ազատել հայութիւնը նրանց լծից, խոստանալով իր աջակցութիւնը բոլոր պարագաներում:

Սրան ապացոյց են Իսրայէլ Օրբի, Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանի, Ներսէս Աշտարակեցու և ուրիշների դիմումները

սուսական արքունիքին, նրանց ջանքերը՝ ազատել պարսիկներէ
տիրապետութիւնից Սիւնիքը, Արարատեան երկիրը և Ռուսաս-
տանի հովանու տակ հաստատել հայկական մի իշխանութիւն:

18-րդ դարի ընթացքում ռուսները առաջ խաղալով գրա-
ւում են Կասպից ծովի հիւսիսային և արևմտեան ափերը մինչև
Քազու՝ ոտք դնելով Անդրկովկասի սահմանները: 19-րդ դարի
սկզբում գրաւում են Սիւնիքը, Վրաստանը. իսկ յետագայ 1827,
56 և 77 թւերին գրաւում են Նրևանի, Նախիջևանի խանութիւն-
ները, Ալէքսանդրօպօլի ու Կարսի շրջանները և Սև ծովի հարաւ-
արեւելեան ափերը:

Ամէն անգամ, երբ ծագում էր ռուս-պարսկական և ռուս-
տաճկական պատերազմ, հայերը իրենց բոլոր աջակցութիւնն էին
տրամադրում ռուսներին, ոչ միայն երկրի ճանապարհները ցոյց
տալով, թշնամու դրութեան մասին տեղեկութիւններ հաղորդե-
լով, ռուսական բանակին խաչ ու խաչվառով դիմաւորելով և
յաճախ նրանց պաշար հայթհայթելով, այլ և կամաւորական խում-
բեր կազմելով ու ռուսական զօրքերի առաջապահ շարքերը զը-
րաւելով: Այսպէս վարւում էին հայերը, այս պահանջում էր նը-
բանց շահը:

Ռուս բանակին աջակից հայ կամաւորական խմբեր ան-
ցելալով կազմել էին մի քանի անգամ, բայց այդ առանձնապէս
աչքի՛ ընկաւ Սիւնիքը և Արարատեան երկիրը գրաւելու ժամանակ:

1827 թւի պատերազմի ժամանակ, երբ Ներսէս Աշտարա-
կեցին դեռ ևս Թիֆլիսի թեմի առաջնորդ էր, ձգեց ամէն մի
հսկողը գործ, նետուեց փոթորիտ ասպարէզ և հայ ժողովրդին
խրախոյս կարդալով, ինքը անցաւ կամաւորական շարժման զը-
լուխը: 1827 թւի կամաւորական շարժումը սկսեց Թիֆլիսում,
բազմաթիւ հայեր՝ թէ քաղաքից և թէ գաւառից եկան ցուցակա-
գրւեցին և մտան կամաւորական գնդի մէջ: Մարտի 30-ին Ղա-
բախ կոչւած հրապարակում, այժմեան Աղեքսանդրեան այգու
տեղում, կայացաւ կամաւորների զօրախաղ, որին ներկայ գըտ-
ուեց Ներսէս Աշտարակեցին ձիու վրայ բազմած և քաջալերական
խօսքը ուղղեց կամաւորներին: Իսկ մայիս 15-ին վանքի մայր
եկեղեցում մեծ հանգէսով տեղի ունեցաւ հայ կամաւորների եր-
գում և նրանց գնդի դրօշակի օձումը, որը, որքան գիտենք,
մինչև այժմ էլ պահւում է Էջմիածնի թանգարանում:

Հայ կամաւորների գունդը ունէր պետական զէնք, իր յատուկ համազգեստը, ստանում էր զանձարանից սնունդ, կամաւորի ընտանիքը ազատում էր բոլոր տուրքերից: Զինւորական կազմը նշանակւած էր հայերից, որոնք ստանում էին համապատասխան ոռճիկ զանձարանից:

Ներսէս Աշտարակեցին, անցնելով կամաւորական շարժման գլուխը և իր կողմից այդ առիթով կոչ ուղղելով հայ ժողովրդին, ունէր մեծ ակնկալութիւններ: Նա ոչ միայն սպասում էր հայ ժողովրդի ազատութիւնը պարսիկների լծից, այլև սպասում էր Արարատեան երկրի, կամ Հայկական նահանգի աւստնօսեայի իրականացմանը: Այս մտաւում էր Ներսէս Աշտարակեցին, այս խոստացել էին նրան, որը սակայն իրականութիւն չը գտաւ:

Այսպիսով ներկայ պատերազմի սկզբում ծագելով կամաւորական շարժում Կովկասի հայութեան մէջ՝ հրեոյթը նոր չէր: Նա ունէր իր օրինակը անցեալում: Երեոյթը նոյնն էր, սակայն նոյն չէին մնացել պայմանները հայութեան համար:

Նախկին պատերազմների ժամանակ, թէ Պարսկաստանը և թէ Տաճկաստանը հանդիսանում էին աւատական-բռնապետական երկիրներ և հայերը ենթակայ էին անօրինակ ճնշումների ու քմահաճոյքների: Ներկայ պատերազմի օրօք Տաճկաստանը սահմանադրական երկիր էր և հայ ժողովուրդը այդտեղ անհամեմատ աւելի լաւ վիճակ ունէր, քան առաջ:

Միւս կողմից, հայ ժողովուրդը անցեալում միշտ ոտու կառավարութեան փայտայանքն ու խրախուսանքն է գտել, մինչդեռ վերջին երկու երեք տասնամեակների ընթացքում նոյն կառավարութեան, աւելի ճիշդ Կովկասեան վարչութեան վերաբերմունքը դէպի հայ ժողովուրդը փոխւեց. և փոխւեց միանգամից. այդ շրջանում Կովկասի հայերը ապրեցին զօրիցիներեան բէժիմի խստութիւնները, որոնք չափ ու սահմանը անցան. ահա նատեսա եղան զպրօցների փակման և եկեղեցական կալւածների գրուաման ակտերին, կալւածներ, որոնց եկամուտներով պահւում էին ծխական դպրոցները. ճաշակեցին հայ-թուրքական ընդհարումների զառնութիւնները. և վերջապէս տեսան 1909 թ.ի հալածանքները, երբ Կովկասի բոլոր վայրերում անապին թւով ին՝ տեղիգենտ մարդիկ, մեղադրելով զաշնակցութեան կուսակցութեան պատկանելու մէջ, ձգեցին բանդերը, աքսորեցին, նոյնիսկ

տաժանակիր աշխատանքների դատապարտեցին, իսկ շատերն էլ խուսափելով դատից, անցան սահմանից այն կողմը և մի որոշ, թիւ նրանցից իրեն համար գործնէութեան ասպարէզ ընարեց Տաճկաստանը, ուր նրանք ոչ միայն չէին հալածուում տաճիկ կառավարութեան կողմից, այլ և սիրաշահուում էին:

Ահա այսպէս էր երկրի դրութիւնը Կովկասում մինչև 1912 թւի կէսերը, երբ մէկէն ուսական դեսպանատունը Տաճկաստանում սկսեց հետաքրքրել հայ ժողովրդի վիճակով: Իսկ 1913 թւի կէսերին ուս կառավարութիւնը և բողոքական պետութիւններին ներկայացրեց հայկական բեֆօրմների ծրագիրը. ու վերաբերմունքը գէպի հայ ժողովուրդը փոխւեց:

Ուս կառավարութիւնը հրապարակի վրա գրեց հայկական բեֆօրմների ծրագիրը այն միջոցին, երբ քայքայել էր բալկանեան պետութիւնների միութիւնը տաճիկների գէմ, և երեկւադաշնակիցներ — Բուլղարիան, Սերբիան, Չեխոսլովակիան և Յունաստանը տաճիկներին յաղթելուց յետոյ, իրենց գէնքը զարձրել էին միմիանց գէմ:

Այժմ տեսնենք, ինչպիսի կատարւեցին դրանից յետոյ:

Կովկասի հայ մտաւորականութիւնը և հայ մամուլը վերջին երկու տարիների ընթացքում ապրում էր մի ետուն կեանք. դրադեցնող ինդիքը հայկական հարցն էր: Մասնաւոր ժողովներում, մամուլի մէջ շարունակ քննուում էր այդ հարցը. նոյն հարցը ըզբողեցնում էր նաև պաշտօնական ու անպաշտօն մարմիններին, թւում էր, թէ ամեն ինչ կլանւած է այդ խնդրով:

Հայկական հարցը նորից գրւել էր պալլոմատիայի առաջ, մեծ պետութիւնների դեսպանատները Պոլսում այդ հարցով էին դրադեցնում: Պոլսի սուսական դեսպանը հայկական բեֆօրմների ծրագիրն էր պաշտպանում, իսկ արտաքին գործերի նախարարը առիթ չէր փախցնում նոյն ծրագրի մասին խօսել՝ արտասայտուելով նոյն իսկ Պետական Դումայի ամբիոնից: Մի խօսքով արբամադրութիւնը գէպի հայերը Պետրոգրադի բարձր շրջաններում միանգամայն փոխւել էր, այն շրջաններում, որտեղից երեք տարի առաջ թիւղդրանքներ եղան հոտապնդել դաշնակցական գործողներին:

Այս մէկ:

երկրորդ. այդ միջոցին Կովկասը կառավարում էր մի խելացի դիպլոմատ, ուսն բիւրօկրատիայի լաւագոյն ներկայացուցիչներէց մէկը, որը ճանաչած էր Ռուսաստանում ազատամիտ մարդ: Իսկ Վարանցով-Իաշկովը էր: Կովկասի նախկին փոխարքաներից և կառավարչապետներից ոչ մէկը այնպէս մօտիկից չէ կարողացել ճանաչել Կովկասը և ըմբռնել ռուսական շահը Կովկասում, ինչպէս Վարանցով-Իաշկովը:

Վարանցով-Իաշկովը չի դիմել մտրակի ուժին և ոչ էլ բռնի միջոցներէ, նա մեղմ, բարի կառավարիչ էր: Բացի այդ, նա չի եղել այլացեղ ժողովուրդներին ճնշող և ռուսականութիւնը կոպիտ ճանապարհով առաջ մղող, այլ նա եղել է խաղաղ կառավարիչ, խաղաղ նւաճող: Եւ այս ուղղութեամբ Վարանցով-Իաշկովը Կովկասում մեծ գործ է արել, մեծ գործ է արել յատկապէս Ռուսաստանի համար: Եթէ մի կողմ խոզնենք նրա բոլոր արածները և յիշենք միմիայն հայ ժողովրդի նկատմամբ նրա կատարած մի գործ, այն է՝ եկեղեցական կառուածների յետաւր և հայոց ծխական դպրոցների վերարացումը, և ապա դրա կողքին դնենք այն տրամագրութիւնը, որ այս օր տիրում է հայ ժողովրդի մէջ դէպի Ռուսաստանը, հասկանալի կը լինի թէ որպիսի նուրբ հեռատեսութեամբ օժտած էր այդ պետական մարդը: Վարանցով-Իաշկովի տաղանդը, իբրև ուսն պետական մարդ, գերազանցօրէն արտայայտուել է այն ընդարձակ գօլլագի մէջ, որ նա Կովկաս գալուց յետոյ ներկայացրեց կայսերը Կովկասի և մասնաւորապէս հայերի մասին:

Թէ Վարանցով-Իաշկովի գործունէութիւնը որքան անկեղծ է եղել դէպի հայ ժողովրդի խնկական շահերը, իբրև ուրոյն ցեղի, դժւար է այժմ այդ հարցը լուսաբանել ճշտօրէն, խնդիրը վիճելի է և ժամանակի կարօտ, սակայն անհերքելի է, որ Կոմսը անձնապէս դէպի հայ աչքի ընկնող մարդիկ, և մասնաւոր դէպի հայ բարձր հոգեւորականութիւնը ունէր վերին աստիճանի քարեացական վերաբերմունք:

Եւ ահա Պետրօզրապի բարձր շրջաններում առաջ եկած լաւ տրամագրութիւնը դէպի հայերը մէկ կողմից, Վարանցով-Իաշկովի պէս խելացի պետական մարդու ներկայութիւնը Կովկասում միւս կողմից, զարկ տւին հայ ժողովրդի ծանր օրերին ձեռնթափ եղած և մի կողմ քաշած հայ առաջաւոր զասին և

հայ հողերականութեանը, ու այդ օրից կովկասի մեր ազգային գործերի գլխին բաղձած ենք տեսնում հայ առաջաւոր հարուստ դասակարգը և հայ հողերականութիւնը:

Կազմւում է Թիֆլիսում ազգային մի մարմին, որը յետոյ կուշեց «Ազգային Բիւրօ»։ Նման մարմիններ կազմւում են նաև հայաշատ քաղաքներում՝ կապ հաստատելով Թիֆլիսի մարմնի հետ: Յաճախ Թիֆլիսում տեղի են ունենում ժողովներ, հրաւիրւում են գաւառներից ներկայացուցիչներ, ժողովներին զբաղեցնող գլխաւոր ու էական հարցը հայկական ընթացիկների հարցն է: Դննում են հարցը այլ և այլ տեսակէտներով, այլ և այլ պարագաներում: Թիֆլիսի մարմինը, հաղորդակցութիւն է պահում էջմիածնի հետ, հաղորդակցութիւն է պահում նաև Մոսկւայի Պետրօգրադի հայ գաղութների հետ, ինչպէս և Եւրոպայի մի քանի նշանաւոր հայերի ու հայասէրների հետ: Թիֆլիսի մարմինը, որը հանդիսանում է գլխաւոր ղեկավար մարմին, լեզու հիմնարկութիւն չէ, բայց նրա գոյութիւնը ոչ միայն յատնի է կառավարութեանը, այլ և վերջինը իրազեկ էլի է ինչ է անցնում այդ մարմնի մէջ:

Մարմինը գնալով քաղաքացիութիւն է ստանում շնորհիւ նրա, որ կառավարութիւնը նրա վրա արդէլք չի դնում, ուստի այդ մարմնի մէջ ինտելիգենտ մարդկանց հետ կողք կողքի տեղ են բռնում և հարուստ վաճառականներ, և հողերականներ: Պէտք է յիշել և այն, որ կառավարութեան կողմից զէպի հայերը այնքան նպաստաւոր տրամադրութիւն է ցուցնում, որ նոյնիսկ միջնորդութիւն է յարուցում բարձր կառավարութեան մօտ ներման արժանացնել գատազարուած ու արտուած, ինչպէս և գատարանից խուսափած արտասահմաններում գտնուող զաշնակցականներին:

Ահա այս պայմանների մէջ պայթում է համալրողական պատերազմը: Գերմանիան ձեռնոց է շարժում Ռուսաստանին, պատերազմի մէջ նետուելու ախորժակ է ցոյց տալիս նաև Տաճկաստանը:

Մի բոլոր հայ ժողովրդի կատարած դերը անցեալ պատերազմների ժամանակ ցցւում է մէջտեղ, նրան սիրաշահելու խրնդիլը զառնում է հերթական. Թիֆլիսի ազգային մարմինը փայտաբանութիւն է և կովկասից տարազբւած մի շարք գաշնակցական

գործիչներ հնարաւորութիւն են ստանում վերադառնալ Կովկաս:

Համահրոսպական պատերազմի հետ նոր պայմաններ են ըստեղծուած հայկական գառի շուրջը, նրա վերջնական լուծումը աւելի քան հաւանական է դառնում. հայ ժողովրդի երազանքներն իրականացումը պայմանաւորուած է Ռուսաստանի, Ֆրանսիայի, Անգլիայի յաղթանակի հետ. յաղթանակ, որը երկար սպասեցնել չը պիտի տար: Հայ ժողովրդի գառի լուծումը այնքան աւելի նպաստաւոր է լինելու, որքան նոյն հայ ժողովուրդը իր մասնակցութեամբ, իր զոհարելութիւններով ուժ աւած կը լինի մտաւուտ յաղթանակին:

Շահերի զուգորդութիւնը և մի շարք հաւաստիացումներ, ահա այն զրդիչները, որոնք եկան սկիզբն դնելու կամաւորական շարժման Կովկասում:

Աւելի մանրամասն քննել կամաւորական շարժման պարագաները և դնահատումներ տալ տալով մտաւորական է, մենք բաւականանում ենք փաստը արձանագրելով:

Եւ ահա Կովկասի հայ իրականութեան մէջ հրապարակ են գալիս կաւածական ցոյցերի, հայ-թուրքական ընդհարումների, Պարսկաստանի շարժումների հերոսները՝ յայտնի իրենց անցեալով, և նրանք հրապարակ են գալիս ուրս իշխանութիւններէ թոյլտուութեամբ իրրե կամաւորական վաշտերի զեկավարներ:

Դրանք են.

1. Անդրանիկը—Սառունի հերոսը—Անդրանիկ Օղանեանը՝ Շարին-Գարահիսարցի:

2. Դրօն—Դրաստամատ Կանանեանը՝ Իզդիրցի:

3. Քեոլին—հինաւուրց մարտիկը — Արշակ Կաֆաֆեանը՝ էրզրումցի:

4. Վարդանը—Սանասորի հերոսը — Արշակ Մեհրաբեանը՝ Շուշեցի:

5. Համադասուրը—Համադասուր Սուանձտեանն՝ բնիկ վանեցի:

6. Իաշնակցական Սէջօն—Սաշատուր Սմիթեան շին-Նախիջևանցի:

7. Իշխանը—Յովսէփ Արզութեանը Թիֆլիսեցի:

— Վճռական ժամը հասել է. հայ ժողովուրդը ցոյց պիտի տայ իր արիութիւնը. այդ արիութիւնից կախած է հայկական հարցի վերջնական լուծումը:

Ահա այն իմաստը, որ դրեց իր դիմումի մէջ ազգային մարմինը և ուղղեց հայ ժողովրդին:

Կարճ միջոցում հայ երիտասարդները, որոնց խոշորագոյնը շարքերը արդէն իբրև պահեստի զօրքեր գտնուում էին զէնքի տակ, տասնհազներով և հարիւրներով եկան խմբուցին յիշեալ հերոսների շուրջը: Ազգային Բիւրօյի գանձարանը տեղացին ամէն կողմերից, նոյնիսկ Եւրոպայից ու Ամերիկայից խոշոր գումարներ. պետութիւնից արեւց զէնք, համազգեստ, սնունդ, և շուտով ունեցանք մի քանի սաւար խմբեր իրենց խմբապետներով, հարիւրապետներով ու յիմնապետներով, որոնց ներկայութիւնը նորանոր սկսորութիւնների առիթ հանդիսացաւ: Կամաւորական խմբերի մէջ մտան հարուստն ու աղքատը, քաղաքացին ու գիւղացին, ինտելիգենտն ու զոհնիկը. մտան ամեն խաւերից ու շրջաններից և գնացին իրենց արիւնք խառնելու այն կարմիր հեղեղին, որ քսաներորդ դարը բերում էր այնպէս ուռնացած:

Այս բոլորը, ի հարկէ, կատարուում էր բացարձակ կերպով, տեսնում էին այս ամենքը, տեսնում էին նաև մեր երկրի մահմեդականները և լուրը հասնում էր թէ տաճկահայ ժողովրդին և թէ տաճիկ կառավարութեանը: Ահա այս էլ իր հերթին գալիս էր ուժ տալու երիտասարդ թուրքերի ցասումին տաճկահայ ժողովրդի նկատմամբ:

Այսպիսով մի կողմից տաճիկ կառավարութիւնն էր սահմանի վրա ուժեր հաւաքում. միւս կողմից Ռուսաստանը՝ հանդերձ հայ կամաւորական խմբերով. իսկ Տաճկաստանի մէջ հայ ժողովրդի դրութիւնը գնալով ծանրանում էր ու անսասնելի դառնում:

Տաճիկ կառավարութիւնը դասալիք եղած հայ զինուորներին հետապնդելու պատրուակի տակ, սկսել էր զիւզերի մէջ տներ հըրդեհել, գոյքերը գրաւել, և նոյնիսկ սպանութիւնների գործել: Միմիայն Վանի շրջանում կարճ ժամանակի մէջ նման զէպքեր տեղի ունեցան Շուշանց, Ալիւր և այլն զիւզերում: Սպանութիւններ ձեռնարկեցին նաև դաշնակցական գործողների դէմ. օրինակ Մարաշի բանդը նետուեց և այդտեղ էլ՝ խեղդամահ եղաւ:

Ձէյթունի անւանի նազարէթ չաւուշը: Հին-Բայազէղի մէջ Վա-
նից հետապնդելով սպանւեց զաշնակցական գործիչ երևանցի
Փալուստ Ալօեանը:

Սակայն սրանք անհատական ձեռնարկներ էին, հարկաւոր
էր մասնայական գործողութիւն. ահա Պօլսի մէջ թուրք մամու-
լը սկսում է գրգռիչ յօդւածներ տպել հայերի դէմ. առիթ ծա-
ւայում է ուսաց կայսրի կոչը հայերին: Ի՞նչ կոչ է այդ, կամ
Ի՞նչ է բովանդակում նա, այդ հետաքրքիր չէ, գլխաւորը կոչի
գոյութիւնն է, որը և առիթ է ծառայում գրգռիչ յօդւածներ տը-
պել հայերի դէմ:

Թէ այս բոլորը ինչ տպաւորութիւն է գործում տաճիկ
պաշտօնէութեան, զինւորական դասի և մանաւանդ մաճակաւի
խաւար ամբոխի վրա, և թէ հայ ժողովուրդը այդ օրերին որպի-
սի սարսափ է ապրում ոչ միայն դաւաճներում, այլ և Պօլսի մէջ,
այդ երևում է Պօլսից գրւած «Հորիզոն»-ի մի թղթակցութիւնից,
որից բերում ենք երկու փոքրիկ կտորներ:

— Բանի պատերազմի պատրաստութիւններ, առաջ կերթան,
այնքան աւելի կատարածի մղձաւանջը կսկսէ մեզի մօտենալ, մեր
կոկորդէն բռնել, մեզի հալ ու մաշ ընել: Պարզ կը տեսնենք
կուզայ հուռն: Աստիճանաբար իրական ձեւեր կը պնտու: Մարմին
կառնէ: Ահա երկնցուց իր ոսկրացած ձեռնին, պիտի բռնէ մեր
օձիքէն: Պիտի չոքի կոկորդներուս. Օգնութիւն, օգնութիւն...

— Խեղազար մը չեմ, ոչ ալ հալիւսիմաստիտի ենթակայ,
հրէջն է որ կը տեսնեմ զոյգ աչքերով, տնոր հոտը կառնեմ,
նեղիայութիւնը կը շօշափեմ: Ամեն ինչ կը յիշեցնէ 1895 թւի
կամ 1909 թւի Ազանայի ջարդերու նախօրեակը: Պատրաստու-
թիւններ կը տեսնւին, նշաններ կերեխն: Ով ահանջ ունի լսելու,
թող լսէ: Որո՞ւ որ անկէ զգուշական միջոցներու ձեռնարկել, թող
սկսէ:

Ահա այն անց ու զարձը, որ տեղի էին ունենում հոկտեմ-
բերի կէսերին — ուսուտանկական պատերազմի նախօրեակին
կովկասի մէջ՝ մի կողմից, Տաճկաստանի հայաբնակ վայրերում՝
միւս կողմից:

ՌՌԻՍ-ՏԱՃԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Ռուս-տաճկական պատերազմը անսպասելի չէր. մենք տեսանք այդ ուղղութեամբ պատրաստութիւններ Տաճկաստանի կողմից, բայց միանգամայն անսպասելի էր այդ պատերազմի նախերգանքը:

Դեռ ևս հոկտեմբերի 15-ին տաճիկ կառավարութիւնը բարեկամական հաւատարացումներ էր անում Ռուսաստանին: Նա—տաճիկ կառավարութիւնը Պօլսի ռուսական դեսպան Գիրսի միջոցով առանձին և Պետրոգրադի իր դեսպան Փաճրէտաին րէյի միջոցով առանձին՝ հաւատացնում էր Ռուսաստանին, որը ինքը պատերազմի մէջ չի նետուի և կը պահպանի խիստ չէզոքութիւն:

Արևելեան մի սիրուն մեղեդի էր դա, որ նւաշում էր տաճիկ կառավարութիւնը այն միջոցին, երբ նրա զրահանաւերը ձգելով Բօսֆօրը, դադտագողի, սուսիկ-փուսիկ լողում էին դէպի Սև ծովի ռուսական ափերը:

Այդ հոկտեմբերի 15-ին էր, իսկ հոկտեմբերի 16-ի առաւօտեան անսպասելի կերպով տաճկական նաւատորմիղի առաջնակարգ զրահանաւերը—Գեօրէնը, Բրէսլաուն և Համիրդիէն յայտնւեցին Օդեսայի, Թէոդոսիայի և Նօփօրօսիյակի դիմաց, ուղղեցին Թնդանօթի բերանները յիշեալ քաղաքներին և սկսեցին ամբակոծութիւնը: Ժողովուրդը սարսափի մատնւած զուրս փախաւ քաղաքներից, Թէոդոսիայում ու Օդեսայում վնասուեցին մի քանի շինութիւններ, իսկ Նօփօրօսիյակում հրդեհուեցին նաւթի ամբարները: Բացի այդ, Օդեսայի մօտ խորտակուեց «Դօնեց» պատերազմական նաւը, իսկ Կերչի մօտերում խորտակուեցին ռուսական ընկերութեան «Նալթա» և «Կադրէկ» մարդատար նաւերը:

Յանկարծակի եկած ռուսական Սև ծովեան նաւատորմիղը, մինչև որ զուրս կը դար թշնամու զէմ, նա իր գաղտագողի յար-

ձակումը վերջացրել էր ու վերադառնում էր թուրքական ջրերը։ Ահա այս ծրագիրը կազմւած էր դեռ ևս այն օրից, երբ Գերմանիան իր երկու զրահանաւերը ուղարկեց Բօսֆօր։

Զայրոյթի մի պոռթկումն էր, որ տեղի ունեցաւ ուսու երկրի մի ծայրից մինչև միւս ծայրը։

— Չը խնայել խարզախ թշնամուն, — աղաղակեց ուսու երկիրը։ Ռուս զիպլօմատեան լսել անդամ չուզեց Պօլսից եկող այն շուրհրը, որ իբր յարձակումը կատարւել է առանց կառավարութեան գիտութեան, որ այդ յարձակումը մի պրօվակացիա է Գերմանիայի նաւապետների կողմից, և պատերազմի փողը հնչեց։

Մեծ ցոյցերով ընդունւեց պատերազմ յայտարարող ուսուական բարձրագոյն մանիֆէստը, ուր սոււած էր.

— Ռուսաստանի դէմ ցարդ վարած անյաջող կուրի մէջ ձգտելով ամեն տեսակ միջոցներով բազմապատկել իրենց ուժը, Գերմանիան և Աւստրօ-Ունգարիան դիմեցին օսմանհաս կառավարութեանը և իրենց ձեռքով կուրացած թուրքիան մղեցին մեզ դէմ պատերազմի։ Թուրքիայի նաւատորմիցը գերմանացիների առաջնորդութեամբ համարձակեց դաւաճանօրէն յարձակւել մեր Սև ծովեան ափերի վրա։ Դրանից անմիջապէս յետոյ մենք Պօլսի ուսաց դեսպանին հրամայեցինք դեսպանատան և հիւպատոսական բոլոր պաշտօնեաների հետ հեռանալ թուրքիայի սահմաններից։ Կատարեալ հանդստութեամբ և Աստուծոյ օգնութեան ապաւինելով կընդունի Ռուսաստանը քրիստոնէական հաւատի և բոլոր սլաւօն ժողովուրդների հին հալածչի կողմից իր դէմ մղած այս նոր արշաւանքը։ Առաջին անգամը չէ, որ ուսական կտրուկ դէնքը յաղթում է թուրքական խուժանին, նա կը նւաճի այս անգամ ևս մեր հայրենիքի յանդուգն թշնամուն։

Մանիֆէստի հետ միաժամանակ տաճկական սահմանի մօտ գտնւող ուսական զօրքերը Կովկասի ամբողջ գծի ուղղութեամբ, Բաթումից սկսած մինչև Մակու ու Ռովիի լիճը, հրաման ստացան առաջ շարժւել և հոկտեմբերի 19 ին նրանք ոտք դրին տաճկական հողի վրա։

Ռուսական զօրքի առաջխաղացումը սրնթաց էր ու սը-

քարշաւ:

Հոկտեմբերի 20—22-ին սուսները գրաւեցին Օլթիի ուղղութեամբ՝ Իզը, Սարիկամիշի ուղղութեամբ՝ Զիւլիսի ամրութիւնները, Արզոս, Սորասան գիւղերը, Կաղզւանի ուղղութեամբ՝ Կարազէրբէնդի անցքը, իսկ Իզդիրի ուղղութեամբ՝ Բայազէն ու Դիադինը:

Հոկտեմբերի 22—27-ին սուսները գրաւեցին Քեօփրի-Քեօյը Բասնում, Թօփրադ-կալէն, Կարաքիլիսէն ու Թափարիզի բարձունքը Ալաշկերտի ու Բայազէզի հովիտներում և Սանասորի շենանցքը Դիլիմանի ուղղութեամբ:

Նոյեմբերի 2-ին գրաւեցին Դութաղը, որը հանդիսանում էր անցք դէպի Արճէշ ու Մանազկերտ:

Միաժամանակ սուսական նաւատորմիլը սմբակոծեց Տրապիզոնը, նաև Սանգուլզաքը, որը հանդիսանում էր Պօլսին քաթածուխ հայթայթող շրջան:

Նոյեմբերի 5—15-ին Քեօփրի-Քեօյի ուղղութեամբ, ուր երկու օր առաջ սուս զօրքերը մի փոքր անյաջողութիւն ունենալով յետ էին քաշուել, տեղի ունեցան մեծ ճակատամարտներ, տաճիկները մեծ պարտութիւն կրեցին, նրանց 28, 29, 33 և 34-րդ դիւիզիանները մեծ կորուստներ ունեցան:

Իսկ նոյեմբերի 19-ին Պարսկաստանի սուսական զօրքերը, ցրելով տաճկական զօրքն ու համիդէական զնդերը, առաջացան ու գրաւեցին Հէքարիի կենդրոնավայր Բաշկալէն և Սարայը:

Այսպիսով ընդամէնը մի ամսւա ընթացքում, տաճկական սանձանագծի ամբողջ երկարութեամբ սուսական զօրքերը առաջացան լայն շերտով սանձանից ներս և գրաւեցին Իզը, Քեօփրի-Քեօյը, Ալաշկերտը, Դութաղը, Թափարիզը, Սարայ և Բաշկալէն:

Սուս զօրքերի հետ շարժւեցին նաև հայ կամաւորական խմբերը կամ վաշտերը, որոնք ծանօթ լինելով երկրի տեղադրութեանը, յաճախ կաղմուս էին առաջապահ շարքը:

Սարիկամիշի ուղղութեամբ առաջ շարժւեցին Քեօու և Համազասպի վաշտերը, Իզդիրի ուղղութեամբ՝ Դրօն վաշտը, իսկ Դիլիմանի ուղղութեամբ՝ Անդրանիկի վաշտը։ Ուշագրաւն այն է, որ Թոփրադ-կալէն գրաւեցին Քեօու և Համազասպի վաշտերը, Դրօն իր վաշտով առաջացաւ մինչև Աբաղայի Կաւրէ-Շ ամէզ գիւղը և այդտեղ էլ նոյեմբերի սկզբին վերաւորեց, իսկ Անդրա-

նիկը Սարայ անցնելով, առաջացաւ մինչև Մօլլա-Հասան գիւղը, որտեղից մինչև Արճակ մնում էր ընդամէնը մի քանի ժամուս հանապարհ:

Այսպիսով ուսական բանակի առաջին շարքերում տաճիկներին դէմ առ դէմ դուրս եկան հայ կամաւորները իրենց խմբապետներով և այս տեսան տաճիկ զօրքերի գլուխ անցած իթթիհատական կուսակցութեան մարդիկ: Միւս կողմից ուս բանակում գտնուող հայ կամաւորներին դէմ առ դէմ դուրս եկան տաճիկ զօրքերի շարքերում գտնուող տաճիկահայ զինւորները, որոնք այնքան տառապել էին տաճիկ բռնակալ քէթիմի ձեռքից և որոնց առաջ այս օր բացել էր փրկութեան հեռանկարը:

Տաճիկները պարտութեան ամբողջ մեղքը սկսեցին բարդել հայերի վրա, իսկ տաճիկահայ զինւորը, տեսնելով իր առաջ կանգնած ուս զօրքը, նրա շարքերում նաև հայ կամաւորներին, ձեռքը սկսեց անդօրանալ, չը կրակել իր հարագատի վրա, ձգել զօրքի շարքերը, յաճախ անցնել նաև ուսական բանակը: Ահա այն երևոյթը, որ եկաւ վերջնականապէս քակելու հանդուցը, սկիզբը դնելու այն հալածանքներին, որոնք յանգելու էին հայ ժողովրդի տարեկրութեան մէջ նմանը չունեցող ջարդերին ու տեղահանութեանը:

Տաճիկներին, մասնաւորապէս երիտասարդ թուրքերին, ամենից շատ զրդուում էր հայ կամաւորների ներկայութիւնը. նրանք չափազանցնում էին հայ կամաւորների դերը, նրանց էին վերագրում ուս բանակի յաջողութիւնները և ամեն կերպ աշխատում էին յետ կանգնեցնել նրանց ուս զօրքերի շարքերից: Այս ուղղութեամբ ջանքեր եղան առանձնապէս Վանի շրջանում: Տեղական իշխանութիւնները, ինչպէս և բանակում եղած երիտասարդ թուրք գործողները մի քանի անգամ զիմեցին Վանի դաշնակցական գործողներին, առաջարկելով զրել յետ կանգնեցնել կամաւորական խմբերը Պարսկաստանից:

Այդ գիմուսներից առանձնապէս հետաքրքիր է մէկը, որը բերում ենք այս տեղ նոյնութեամբ:

Ռուս-տաճիկական պատերազմից անցել էր մէկ ու կէս ամիս. այս միջոցին Բաշկալէ էր գտնուում երիտասարդ թուրքերի

ներկայացուցիչ Նաջի բէյը, որը համաերուպական պատերազմի սկզբին, ինչպէս տեսանք, Բուխար-էղդինի և Հիլմի բէյի հետ էր-
զրոււմ եկաւ դաշնակցական ներկայացուցիչներին հետ բանակցե-
լու: Այժմ Բաջիրկանէում նա զեկավարոււմ էր չէթալական խմբ-
բերը և նրանց միջոցով Պարսկաստանում կազմակերպոււմ էր
Խոսովութիւններ ուսաների դէմ:

Ահա այս Նաջի բէյը գեկտեմբերի 4-ին Բաջիրկանէից Վը-
ռամեանին ուղղեց հետեւեալ հեռագիրը:

Դեկտ. 4—17 1914 թ. Բաջիրկանէ.

Վանի երեսփոխան Վռամեան էֆէնդին.

Մուսուլի բանակը և իմ տրամադրութեան տակ գտնւող
զինւորներն ու չէթաները մինչև Սէլհամ եղած գիւղերը և Ճըս-
տան զրաւեցին. Աստուծով աւելի առաջ պիտի երթանք: Ձեր և
ձեր ընկերներուն էրզրոււմ և Վան դռնւած ասանս աւած խոս-
տումներուն հաւատարիմ չըլլալը կը հասկցուի: Բաշկալէի կողմե-
րը եկող և 2 օր վերջ վաճառող թշնամին և այսօր Սալմաստ քաղ-
ւող Մմքատի և իր ընկերներուն նայելով, եթէ անոնց այս շքը-
ջաններուն մէջ կատարւածներուն նայելի, կը հասկցուի որ դաշ-
նակցականները զործով ուսաներու հետ ընկերակից են: Հայերը
ասիւծը չսպանած կաշին բամբուլու պէս սխալի կը մղէք. Յաս-
կիի (սուրհանդակ) Օսմանի վրա Իշխանին ուղղւած նամակը
ձեռքս է. ասիկա ամբողջ միւսլիմաններուն և օսմանեան մա-
մուլին ներկայացնելէ առաջ, վերջին անգամ ըլլալով ձեք ուշա-
դրութեանը յանձնել կուզեմ. Կարլ-Մարքսի, Քրապոթկինի տե-
սութիւններով պարծեցող ձեր կուսակցութեանը ուս ցարու-
թեան զործիք ըլլալը 20-րդ դարու ամենածիճաղելի արդիւնքնե-
րէն մէկն է: Ձեզմէ վերջին և կարուկ պատասխան մը չստանա-
լու պարագայիս, Պարսկաստանի մէջ եղող մէկ քանի հարիւրնոց
ձեր ընկերներուն հանդէպ իրր ուսաների պիտի վարւիմ:

Էօմէր Նաջի

Յասկիի Օսմանը ամեն բան ըսաւ Քեոթին (այսինքն ուս-
աներին). Իշխանին շատ բարե կը բերէ, նամակը շատ խառն գըր-
ւած է, իմաստը չհասկցայ, թարգմանելու համար ձեզի պիտի
դրկեմ. թուղթի վրա չեն գրած, լաթի կտորի վրա գրելով Օս-
մանի օձիքէն կարած են:

Նոյնը

Նաջի բէյի այս հեռագրին վրամեանը տւեց հետեեալ պատասխանը:

— Նամակ գրուելէն տեղեկութիւն չունինք, կրնա ըլլալ, որ Սմբատը ինքն իր գլխու բան մը գրած ըլլայ, և ամեն պարագայի մէջ Սմբատի իրաւասու ըլլալը ինձ անծանօթ է. թերևս գլխուն մէկ քանի մարդ ժողովելով, իր պատասխանատուութեան տակ գործ մը կը կատարէ: Անոնց ամենամեծ մտահոգութիւնը այս երկրի հայերուն վտանգի մը ենթարկելը կրնա ըլլալ:

Վերջին օրերուն Բաշկալէի ջարդերը, Մանդան, Հերեսան գիւղերուն չէթաներուն կողմէ ընաջնջելը, ժանդարմներու կողմէ հայերու հանդէպ ամեն տեսակ անպատշաճութիւններն ու սպանութիւնները և ոճրագործներու անպատիժ մնալը, համիդիէներու կողմէ անցած գիւղերու մէջ ըրած թալանը և կառավարութեան եղած բողոքներուն անլսելի մնալը, ասկէ դատ կամաւորներու կողմէ հայ գիւղերու մէջ և հայերու դէմ կարգ մը անպատշաճութիւնները, և վերջապէս բոլոր հայ ժանդարմներուն զինաթափելը և Պիթլիս զրկելը իմացանք: Բոլոր այս գործողութիւնները մեծ մտահոգութիւններ պատճառած են, և կրնա ըլլալ, որ ասոնք իմանալով, օգնութեան գալու մտադրութիւն ունեցած են:

Դուք գիտնալու էք, որ Դաշնակցութեան կոմիտէն ոչ մէկ պետութեան գործիք չի կրնար ըլլալ: Փասկիի նամակին՝ հակառակ անոր որ տեղեկութիւն չունիմ, կրնամ հաստատել, որ Իշխան էֆէնդին Քեոիի հետ ունէ թղթակցութիւն չէ ունեցած և չի կրնար ըլլալ. կամ թիւրիմացութիւն է և կամ հրապարակ նետած զրպարտութիւն մը:

Եթէ իմ ձեզ ըսած declaration-ը կառավարութեան կողմէ յայտարարուէր, ոչ մենք այս զժւարութիւններուն մէջ կիշնայինք, ոչ ալ դուք այս հարցումը ինձի կընէիք: Ամէն պարագայի մէջ մենք ձեզմէ յոյսերնիս չենք կտրեր:

Վրամեան

Նման առաջարկութիւն տեղի ունեցաւ Վանի կուսակալ Ալեգէտի կողմից: Ռուս-տաճկահան պատերազմը յայտարարուելուն պէս, Ալեգէտը իր պաշտօնը յանձնեց Բաշկալէի մութասա-

+

քիֆին և ինքը գնաց պատերազմի դաշտ. այդպէս վարւեցին նաև մի քանի գոյամագաններ, որոնց թուում և Շատախի գոյամագամը. այս պահանջում էր նրանցից հայրենասիրական պարտքը և ղեկավարների կէսին Ձէւղէտը դառնում էր Սարայում. ահա այստեղից նա իր փոխանորդի միջոցով առաջարկեց Վասմեանին ու Արամին, որ նրանք ձի նստեն, գնան Սալմաստ և կամաւորական խմբերը ցրեն: Այս առաջարկին Վասմեանը ու Արամը պատասխանեցին, որ իրենք պատրաստ են ճանապարհ ընկնելու միայն մի պայմանով. այն է, որ թոյլ տրւի տաճկահայտակաւորները իրենց զէնքերով գան հայրենիք: Այս առաջարկութիւնը Ձէւղէտի կողմից չընդունւեց և Վասմեանն ու Արամը իրենց տեղերից չը շարժւեցին:

Եւ մինչդեռ տաճիկ ղեկավար շրջանները ջանքեր էին թափում տեղական աղղեցիկ հայերի միջոցով կանգնեցնել Կովկասում կազմակերպւած կամաւորական խմբերի գործնէութիւնը, հերկրի մէջ արդէն սկսել էին խիստ հալածանքներ հայերի դէմ:

Նախ հայ ժողովրդին յայտարարեցին դաւաճան և հայ զինորդներին սկսեցին զինաթափ անել: Արանք մասնակի երևոյթներ չէին, այլ մասնայական:

Վանի շրջանի զօրքերից կազմւած աւելի քան քսան թաբուրներ (բատալիօններ) նոյեմբերի սկզբում գտնուում էին Բերկրիում, Աբաղայում, Արճակում, Խօշարում և Բաշկալէում: Այս միջոցին Բեօփրի-Բեօյում տեղի ունէին յամառ կռիւներ, իսկ Պարսկաստանի սոստական զօրքը շարժուում էր դէպի Սարայ և Բաշկալէ: Նոյեմբերի սկզբին երբ տաճիկները պատրաստեցին այս թաբուրները սուսների դէմ ուղարկել, նախ զատեցին հայ զինուորներէն և զինաթափ արին:

Օրինակ, Բերկրիում զինաթափ արին չորս թաբուրների հայ զինուորներին. այս թաբուրներից էր չորրորդ (չորգնջի) թաբուրը: Արճակի մէջ զինաթափ արին 15 և 16-րդ թաբուրների զինուորներին: Իսկ Խօշարի մէջ զինաթափ արին 17 և 18-րդ թաբուրների զինուորներին: Այս ձևի զինաթափ արին շատ զօրամասերում գտնուող հայ զինուորներին՝ ուղղելով նրանց վերաւորական խօսքեր ու հայհոյանքներ:

Յիշեալ թաբուրների մէջ հայ զինուորները կազմում էին բաւականին մեծ սողոս, յաճախ նրանք կազմում էին թաբուրների

ամբողջ կազմի մի երրորդական մասը. այսպիսով զինաթափ արւելցին հազարաւոր հայեր:

Զինաթափ անելուց յետոյ հայերից կազմեցին, այսպէս կոչւած, ամալիա թարուրներ կամ բննւորների բառալիօններ: Յրանց քշում էին ճանապարհների վրա, կարգի բերելու այլանդակ ուղիները, քշում էին դիրքերը, հարկադրելով խրամատներ փորել, ստիպում էին դրաստի զեր ստանձնել՝ մէջքի վրա կրելով զօրքի պաշարը. մի խօսքով կատարել էին տալիս այն բոլոր ստորին աշխատանքները, ինչ որ պահանջոււմ էր պատերազմի ու զօրքի համար: Այս ոչինչ, եթէ ծանր վերաւորանքից ազատ լինէին նրանք. զինաթափ անելուց յետոյ տաճիկ զինւորները, նայնիսկ իւրաքանչիւր մահմեդական, իլ ենը իլ աւունք էր համարում նախատել, հայհոյել, ծաղրի առարկա դարձնել հայ զինւորներին: Չէ որ նա կառավարութեան վստահութիւնն էր կորցրել, խոտելի էր դարձել:

Այս էլ ոչինչ, եթէ գէթ նրան ապրելու միջոցներ արւելին: Զինաթափ անելուց յետոյ հայ զինւորներին զրկեցին հազուստ տալուց, նրանք իրենց սեփական հազուստը պիտի մաշէին աշխատանքի մէջ: Միւս կողմից փոխւեց բնակարանի և ուսեստի ձևը. ամալիա թարուրների համար յատկացրին գոմերն ու յարդանոցները, առանց անկողինների ու վերմակների. տալիս էին միմիայն հաց, այն էլ ոչ կանոնաւոր կերպով. յաճախ հացի փոխարէն տալիս էին ալիւր. խեղճ հայ զինւորը այդ ալիւրից խմոր պիտի պատրաստէր, աման չկար, հաց պիտի թխէր, վառելիք ու թոնիր չկար: Կատարել ամբողջ օրը ծանր աշխատանք, չունենալ պահեցու տեղ, հագուստ, և օրը մաշել դատարկ ստամոքսով հեշտ չէր, և ահա այս սեղից սկսում է մասսայական դասալքութիւնը, որին սկզբում կառավարութիւնը մասերի արանքով էր նայում: Հայ զինւորներն սկսեցին փախչել նոյնիսկ այն օրին, երբ նրանց զինաթափ արին. և տարօրինակն այն է, որ կառավարութիւնը միջոցներ ձեռք չէր առնում փախուստը դատարեցնելու: Օրինակ, Արճակի մէջ երբ 15 և 16-րդ բանակները 6-օյ զինւորներին զինաթափ արին, դրանցից շատերը փախան տեղական կառավարութիւնը այս անունում էր ու լուում.

Միւս զօրքերի աանկական հող մտնելուց յետոյ հայ զինւորների վերաբերեալ կատարւած այս դէպքերը թեթև չարիք-

ներ էին, շուտով տեղի ունեցան մեծ շարիքներ, որոնք ներագործեցին Ղինաթի (սրբազան պատերազմի) յայտարարումով: Թէ զէնքի տակ և թէ աշխատանքները մէջ այս ու այն տեղ, այս ու այն պարագաներում հայ զինւորներին սկսեցին գնդակահար անել ու սպանել: Այս ոճերը, որը գնալով ծաւալեց ու ընդհանրացաւ, կատարուեւ էր երբեմն բացարձակ և երբեմն էլ խմբական ձևով:

Օրինակ, զեկտեմբերի սկիզբին Քեօփրի-Քեօյի մօտ տեղի ունեցած մէկ ճակատամարտից յետոյ, երբ տաճիկ զօրքերը, պարտութիւն կրելով, փախուստի էին գլխի, Եղան գիւղում փախել պատսպարել էին 50-ի շափ հայ զինւորներ: Հը նայած այն բանին, որ փախուստի էին գլխի նաև շատ տաճիկ զինւորներ, բայց կարգադրութիւն եղաւ և գնդակահարեցին մի միայն այդ 50 հայ զինւորները: Այս խմբական սպանութիւնը, որը կատարեց մէկ վիրաւոր հայ սպայի ներկայութեամբ, տեղի ունեցաւ առանց զատավարութեան, առանց մեղադրանքի:

Այսպիսի խմբական սպանութիւններ կատարեցին մի քանի տեղերում, իսկ հաւ-հատ սպանութիւններ կատարուեւ էին ամէն օր և ամէն տեղ առանց առիթի: Թէ այս երևոյթը որպիսի ծաւալ ստացաւ, այդ երևում է հետեւեալ փաստից:

Պարսկական սահմանի մօտ գտնուող Կօթուր աւանի տաճկական զինւորական հրանդանոցի հայ բժիշկ ^ԷՊօղոս Փալարեքեանը զեկտեմբերի վերջին շարժուն ժանդարմական գնդի կօմանդանգան Քնազիմ պէյից ստացաւ մի նամակ, ուր աւան իր:

— Ծամբաների վրա քիւրդերը յարձակուեւ են հայ զինւորների վրա և սպանուեւ են նրանց, ուստի հայ զինւորներին առանց տաճիկ զինւորի ընկերակցութեան ճամբա մի հանէք, եւ արտասուեւ եմ հայերին, նրանք հաւատարիմ, ընդունակ և օգտակար տարր են, թէև նրանց մէջ վատ մարդիկ էլ կան:

Խօսքը առն ուղարկուող վիրաւոր հայ զինւորների մասին էր: Ծաճիկ զինւորականը իր բարեկամ հայ բժշկին այս նամակը գրելով, անշուշտ արձագանք էր տւել ներքին ձայնին:

Նոյն հայ բժիշկը Կօթուրից Վան գալիս ճանապարհին տեսել էր, թէ ինչպէս զինաթափ արած զինւորներին տանջուեւ էին ուժերից վեր ծանրոցներ վերցնել տալով նրանց, ձեռում էին անդթօրէն փայտերով և թողնուեւ էին քաղցած օրերով: Նա տեսել էր ճանապարհին այնպիսի գէպքեր, որ պատմելիս, վկայուեւ

են ականատեսները, չէր կարողանում զսպել արցունքը:

Սակայն տաճիկ կառավարութեան գազանութիւնները միայն հայ զինւորների վրա չէին գործադրում, այլ և խաղաղ հայ ժողովրդի — զիւղացիութեան: Շատ դէպքերից մենք այս տեղ կարձանագրենք միայն մէկը, որը բաւական կը լինի համեմատելու հայ ժողովրդի ներկա օրերի զրութիւնը այն սոսկալի օրերի զրութեան հետ, երբ գործում էր Սուլթան Համիդի բէժիմը իր կլասիկ բարբարոսութիւններով:

Պատերազմի յայտարարումով տաճիկ կառավարութիւնը ներումն շնորհեց, ի միջի այլոց, այն բոլոր ոճրագործ աւազակներին, որոնցով լիքն էին տաճկական բանդերը և կամ որոնք խուսափելով պատասխանատուութիւնից, աւազակային խմբերի գլուխ անցած, ասպատակում էին շրջանները: Վերջինների կարգին պատկանում էր Բիթլիսի վիլայէթի Մօսկան գաւառի մէկ անւանի ցեղապետ — Բշարէ-Չաթօն:

Սա կապեր ունէր Բիթլիսում 1914 թւի մարտին քրդական ապստամբութեան հետեանքով կախաղան հանւած յայտնի Սէյիդ Ալիի և նրա մեղսակիցների հետ, որի պատճառով էլ, կառավարութիւնից հետապնդւելով, աւազակային կեանք էր վարում: Դեռ ևս 1913 թւին կառավարութիւնը զօրքով ու թնդանօթով գնաց Չաթօյի ապրած գիւղի վրա, ընտանիքը գերեց, գիւղը աւերեց, բայց Չաթօն ձեռք չընկաւ: Նման հետապնդում զօրքերի կողմից տեղի ունեցաւ Բիթլիսի կախաղաններից յետոյ, Չաթօն այս անգամ էլ ձեռք չընկաւ և բաւական չէ որ ձեռք չընկաւ, այլ և իրեն հետապնդող զօրքի հաղարապետին 10 զինւորներով գերեց, զինւորներին սպանեց, իսկ հաղարապետին կախաղան հանեց: սա պատասխան էր Բիթլիսում տեղի ունեցած կախաղանների Չը նայած այս բոլորին, Բշարէ Չաթօն ներումն ստացաւ և հրբաւիրուեց իր քիւրդերով պատերազմի դաշտ:

Եւ աւազակ Բշարէ Չաթօն աւելի քան 600 քիւրդերով — կէսը ձիաւոր, կէսը ոտաւոր — դեկտեմբերի սկզբին եկաւ Մանազկերտ ու ստանալով դէնք, Պաղնուսի, Արճէշի, Բերկըրի վերայով շարժեց դէպի Սարայ, Սա նման էր մի կատարեալ հրոսակախմբի, Շէյխ Չալալէղդինին յիշեցնող. դէնքը միայն կառա-

վարական էր. հագուստը նոյն էր, ինչ որ առաջ, իսկ ուտեստը հոգում էր ճանապարհի վրա ընկած գիւղերի ժողովուրդը: Դըժ-ւար չէ երևակայել այն գիւղերի դրութիւնը, ուր իջևանելու էր Բշարէ Չաթօյի հրոսակախումբը:

Մանագիւղերտի մէջ Բշարէ Չաթօյի ձեռքով կախւած հազարապետի մի ընկերը — հարիւրապետ Ըրզա բէյը, ականատես մէկ հայի պատմելով, տեսնելով Բշարէ Չաթօյին, գայրացած ազդակել էր.

— Այս երկիրը պիտի կործանւի, հազարապետի կախադան հանող աւագակը մեզի հետ մէկտեղ ոռւնների դէմ է ուղարկւում:

Եւ ահա այս աւագակը իր հրոսակախումբով գիւղից գիւղ իջնելով, ուտելով, լափելով գալիս համնում է Արճէշ և իջնում է հայաբնակ Հասպըսինակ ու Յարութիւն գիւղերը: Նա բոլորովին չի շտապում, այլ իջնում է իւրաքանչիւր պատահած գիւղ և օր միտացնում: Հասպըսինակ գիւղի ժողովուրդը տալիս է բնակարան, վառելիք, ուտեստ առատ-առատ, միայն թէ դժգոհութիւններ տեղի չունենան ու առանց միջադէպերի անցնին ու գնան. սակայն չի լինում. Բշարէ Չաթօն պահանջում է նաև կին: Տանտէրը — Սեղրակ աղան, մերժում է այդ լլտի պահանջը. և ահա սկսում է վաղուց անցած-գնացած օրերի տանջանքը այդ մարդու վերաբերմամբ. ծիծում են այնքան, որ խեղճ մարդը ուշադնաց է լինում: Սրանով չը բաւականացած, գազանը հրամայում է կրակի մէջ դնել շամփուրները և շիկացած շամփուրներով դադել է տալիս Սեղրակ աղայի ձեռներն ու երեսի մաշկը: Իշխանութիւնները չեն միջամտում, նրանց հանդիսատեսութեամբ կատարւում է ինկվիզիցեա և հրոսապետ Բշարէ Չաթօն անպատիժ անցնում գնում է, նոյն գործողութիւնները կատարելով Բերկրիի Գիւղակ և Գործութ գիւղերում, ինչպէս և Արճակի Տաղվէրան գիւղում: Նոր սանկցիա է ստանում հին բարբարոս բէժիմը, նւիրագործւում է անցած օրերի բարբարոս գործողութիւնը:

Հին օրերը վերականգնում են. բռնութեան հին ձևերը վիրակաւում, այս ուղղութեամբ դէպքերը գալիս են ծաւալւելու, դարգանալու ճակատամարտերի շրջանից հայ ժողովուրդը սարսափահար փախչում է դէպի Կովկաս, սկսւում է դաղթը, հայ ժո-

զովուրդի դարաւոր ճակատագիրը:

— Հայաբնակ այն շրջաններից (Բասեն), ուր տեղի ունէին կռիւները, հայ բնակիչները սարսափահար փախչում են ուսական հողը: Նրանց կարաւանները ծանր տպաւորութիւն են գործում, գալիս են հազարներով, գալիս են սայլերով, էշերով, եղներով անընդ-տեղից զրկւած, անօգնական: Տեղ չը կայ նրանց տեղաւորելու, և նրանք օրերով փնտւում են բաց երկնքի տակ այս ցրտերին, քաղցած ու մերկ:— Նկարագրում է ականատեսը:

— Քիւրդերը յարձակւել են Բասենի Սորաթան հայ գիւղի վրա, սպանել են 9 տղամարդ և սոսանդել են 30 կիներ:— Գլուխում է մէկ այլ իրադեպ մարդ:

Հայահալած զործնէութիւնը թափ է ստանում, այդ բանին գալիս է նպաստելու առանձնապէս պատերազմի ընթացքը, որը առժամանակ սկսում է ժպտալ տաճիկներին:

Նոյեմբերի կէտերին տաճիկները ձեռնարկեցին իրագործելու մի նախամտածւած, միևնոյն ժամանակ յանդուպն ծրագիր: Կովկասեան ճակատի ձախ թևում Արդւինում, Օլթիի և Սարիկամիշի ուղղութեամբ կենդրոնացրին ահագին ուժեր: Այդտեղ քաշեցին էրզրումի բերդապահ ամրոջը զօրքը, ինչպէս և Պօլսից ուղարկւած նոր զօրամասեր: Նրանց ծրագիրն էր ամրոջը ուժով առաջ շարժել, ուսական շղթան պատռել, և ներս խուժելով ուսական հողը, Արդահանի, Ախլցխայի վրայով, ինչպէս և Սարիկամիշի գծով շարժել դէպի Թիֆլիս և գրաւել Կովկասի մայրաքաղաքը: Թիֆլիսը գրաւելուց յետոյ, տաճիկների հաշուով, ոտքի էին կանգնելու ոչ միայն Կովկասի մահակալականներն ու Դաղստանի լեռնականները, այլ նոյնիսկ, իբր, վրացիները, որոնց օգնութեամբ և գրաւելու էին ամրոջը Կովկասը:

Ահա այս մեծ ծրագիրը նպատակ ընտրած, գեկտեմբերի 10-ին տաճիկական բանակը դիմեց յարձակման:

Բանակը բաղկացած էր 9, 10, 11, և 12-րդ կորպուսներից. արշաւանքը անձամբ ղեկավարելու համար Պօլսից թատերարեւմն էր եկել կնիւէր փաշան, չք նաչած որ էրզրումի շրջանի զօրքերի ընդհանուր հրամանատարի պաշածօնը վարում էր տաճիկ ակաւաւոր զօրապետներից մէկը—Շուքրի փաշան:

9 և 10-րդ կօրպուսները յարձակեցին Օլթիի վրա և պատահելով անհամեմատ թոյլ ուսական շղթան, ներս խուժեցին ուսական հողը: Օլթիից տաճկական բանակը երկու սլուներով մի կողմից շարժեց դէպի Սամիկամիշ՝ զբաւելու համար երկաթուղու գիծը, միւս կողմից շարժեց դէպի Արդահան: Միտփամանակ տաճկական մի այլ զօրասիւն ձորոխի հովտով Արդահանի և Արտանուշի վրայով դարձեալ շարժեց դէպի Արդահան: Ենտրհիւ այն բանի, որ նախ այս ճակատամարտներում եղած ուսական զօրքի թիւը փոքր էր, հրկրորդ՝ որ տեղական մանձեղական ազգաբնակութիւնը աջակցեց տաճկական բանակին, վերջինը առանց մեծ զբաւուրեթիւնների կարողացաւ յայտնել Արդահանի մէջ և Սարիկամիշի տակ, չը նայած սարսիկի ցրտերին և խորը ձիւնին, որը յատուկ է այդ շրջաններին:

Մի վայրկեան սարսափը կոխեց Կովկասին. Բազէի, Թիֆլիսի և միւս քաղաքների ազգաբնակութիւնը պատրաստեց փախչելու. պետական զպրօցները հրաման ստացան և մի քանիսը նոյնիսկ ճանապարհ ընկան դէպի հիւսիսային Կովկաս. քիչ մընաց որ շփոթն ու իրարանցումը ընդհանուր դառնար, երբ ուսական զօրքերը հաւաքելով իրենց ըզըր ուժերը դէմ գրին և միանգամից խորտակեցին այդ սպառնական ուժը:

Տաճիկ բանակը ղեկտեմբերի 17-ին ջարդեց Սարիկամիշի մօտ, 21-ին ջարդ կրեց Արդահանի տակ, ջարդ ու փշուր եղաւ նաև Արդանուշի և Արդալինի շրջանում, և ահագին կորուստներով յետ փախաւ դէպի իր սահմանը, ճանապարհները և նոյնիսկ ձիւնսպստ ձորերն ու լանջիւրը ծածկելով անհամար սպանած ու ստուած զիակներով:

9 և 10-րդ կօրպուսները համարեա ոչնչացան, զօրքի խոշոր մասը կոտորեց, մի խոշոր մասն էլ ընկաւ գերի, ուսների ձեւըն ընկան նաև 10-րդ կօրպուսի զինուորական կազմը և 9-րդ կօրպուսի զինուորական հրամանատարը—Բսխան փաշան: Ռուսների հետապնդումը տեղեց մի քանի օր. տաճիկ բանակի մնացորդները քայքայւած, կազմալուծւած, շաղ անցան այս ու այն կողմը. փախաւ նաև Էնվէր փաշան, այս յանդուգն ծրագիր յրապտողը և փախաւ պարտութեան յաջօրդ օրը, առանց մանրամասնութիւններն իմանալու, առանց նոյնիսկ Էրզրումի մէջ

կանգ առնելու, և Կովկասը խաղաղուեց:

Տաճիկները սրնթաց եկան հասան Արդահան ու Սարիկամիշ և ապա ջարդելով սրնթաց յետ փախան իրենց երկրի սահմանները. այս է փաստը ղեկտեմբերեան անցքերի, բայց այս անցքերի հետևանքով սահմանամերձ տաճկանայ ժողովուրդը ապրեց մի սոսկալի վիճակ, որ դալիս ենք համառօտ կերպով արձանագրելու այստեղ:

ԱՌԱՋԻՆ ԳԱՂԹԸ

Ոուս զօրքերը, ինչպէս ահսանք, ստաջանալով գրաւեցին Բասենի զաշտի մի մասը, Ալաշկերտը, Կարաքիլիսէ, Գութաղը, Թափարիզը, Սարայ, Բաշկալէն և Ուրմիի շրջանը: Ամին անդ հայ ժողովուրդը խանդավառութեամբ ղիմաւորեց ուս զօրքերին, Սակայն դեկտեմբերի 16-ին, երբ տաճիկները ստաջացան մինչև Սարիկամիշ ու Արդահան, ուս զօրքերը հրաման ստացան յետ նահանջել: Եւ ահա այստեղից սկսեց ուսնիւրի գրաւած շրջանների հայ ժողովրդի, ինչպէս և ասորիների տառապանքների նորագոյն, միևնոյն ժամանակ խստագոյն էջը:

Հայ ժողովուրդը ուս զօրքի նահանջից յետոյ այլևս իր տեղում մնալ չէր կարող. տաճիկ զօրքը, ինչպէս և համիդէական զունդերն ու քիւրդերը իրենց պարտութեան ամբողջ թոյնը նրա գլխին պիտի թափէին. այս անգամ ոչ ոքի չէին խնայելու. այսլաւ գիտէր հայ ժողովուրդը, ուստի երբ ուս զօրքերը պատրաստեցին հեռանալ, նրանց հետ միասին Կովկասի ճանապարհը բռնեց նաև հայ ժողովուրդը: Եւ զաղթը սկսեց:

Գաղթ. այլ բան է զաղթը խաղաղ պայմաններում, ամառ փամանակ, այլ բան է հապճեպ կատարած, թշնամու սարսափների ուժով մղւած գաղթը, այն էլ ձմրան սառնամանիքներին, ձիւնապատ դաշտերի ու լեռների միջով: Ներկա գաղթը անօրինակ գաղթերից էր:

Բասենի մի մասի հայ ժողովրդի գաղթը կատարեց նոյնմբերի մէջ, երբ այդ շրջանում տեղի ունեցան արիւնայեղ ճակատամարտեր: Բասենի գաղթականութիւնը զհտեղեց գլխաւորաբաղէս Սարիկամիշի ու Կարսի շրջաններում:

Այժմ գաղթում էր սահմանամերձ մի շարք գաւառների ժողովուրդը:

Իեկտեմբերի 16-ին ոռու զօրքերի հետ միասին շարժւեց Ազաշկերտի, Դուխաղի, Կարաքիլիսէի, Դիաղինի և Բայաղէտի դաւառների հայութիւնը: Դրա հետ միաժամանակ շարժւեցին Սարայի, Բաշկալէի շրջանների և ապա Ուրմիրի, Դիլիմանի, Սոյի ու Թաւրիզի հայ և ասորի ժողովուրդները: Տասնհակ հազարաւոր ժողովուրդներ՝ մեծ ու փոքր, մարդ ու կին ձգեցին տուն ու տեղ, կենդանիներ ու ամեն ինչ. նոյնիսկ ուտեստի ու հագուստի անհրաժեշտ պաշարը, և ձեռք ձեռքի բռնած, ձմբան սառնամանիքներին ձամբա ընկան դէպի Կովկաս: Ռուս զօրքը քաշուած էր, տաճիկներն ու քիւրդերը առաջանում էին, և գաղթականութիւնը շարժուած էր անաւոր սարսափների տակ:

Իեկտեմբերի 23-ից սկսած Կաղզւանի, Իզդիրի և Ջուլֆայի ուղղութեամբ Երևանի նահանգի սահմանները կռիւց ցրտից սասած, քաղցից նւազած տասնհակ հազարաւոր գաղթականութեան անձայր քարուանը: Ի՞նչպէս էր նա շարժուած, ի՞նչ պատկեր էր ներկայացնում և ուր էր գնում, դժւար էր նկարագրել՝ դժւար է պատկերացնել: Կա գնում էր հոծ զանգւածներով, զընում էր Կաղզւանը, Իզդիրը, Նախիջւանը և այդ տեղերից էլ էջմիածինը, Երևանը իրենց շրջականերով հեղեղելու. հեղեղելու իր բազմութեամբ, հեղեղելու իր թշուառութեամբ, իր քաղցածութեամբ, իր մերկութեամբ, իր սառած ու կապտած դէմքերով իր անհուն զուլումով:

Այն, ինչ որ տեսաւ մի քանի շաբաթների ընթացքում գաղթականութիւնը, նրա հետ միասին նաև Երևանի նահանգի հայութիւնն ու գիւղացիութիւնը, գաղափար կազմելու համար այստեղ կը բերենք մի քանի նկարագրերնէր այն բազմութիւ իր թշուառութիւններից, որոնցով հեղեղուած էր այդ օրերին Կովկասի հայ մամուլը:

— Թուրքական ետնադանից անաբեկ խուճապի է մատնւած Ալաշկերտն ու Բասենը: Սուճապ է, փախ ... փախստականի հնազարեան ծանր սոյլը լիցուն երեխաներով, ուղում է անցնել Եփրատը. սոյլը խրուած է, մնում է գետի մէջ, ջուրը նշում տանում է երեխաներից մէկին, երկրորդին, երրորդին ... մարդիկ բնազդաբար նկատում են ջուրը, բռնում են սրին հնաքարէ, սակայն ջուրը տանում է իր բաժինը... Ու սրդեկա-

բոյս մայրերի ցաւագին ողբերը քարերն են լացացնում:

— Արծառի գիւղում, սահմանից այն կողմը, մի պատի տակ կիսամերկ դողդողալով լալիս են չորս երեխաներ, մեծը 12 տարեկան աղջիկ է... Մտնում են առաքրքրում են: Պատասխանում են,— մեր մամ ճամբին մեռաւ, մենք մնացինք եթում, մէկ ճար արա, աղբէր, մեղի մի թորկ, մենք լէ քզի խեռ կիզանք:

Արհաջ գիւղի մօտ ենք, Իգդիրից ոչ հեռու. մէկ անտէր ու անթաղ դիակ է ընկած, ծերունի է, խեղճը երևի նոր է վախճանւել... ցեխոտած ձեռներով յեմել է մի ժայռի. դժբաղդը ըստ երևոյթին, գետինը ճանգախով մահան դէմ կոխ է մղել ոտքի կանգնելու՝ ապրելու համար... Մակայն դուր, նրա սուղալի դէմքի վրայ՝ իր ապրած թշուա կեանքի սարսափի դրոշմ է մնացել...

Տալիս է այս փոքրիկ պատկերները մի ականատես, անւանելով նրանց «կաթիլներ ցաւի ծովից»:

— Իգդիր հասնելով, ականատես եմ լինում մի աննկարագրելի, միևնոյն ժամանակ քստմեցուցիչ տեսարանի: Գաղթականների հոսանքն այս տեղ ստացել է մի տարերային հեղիղ բնաւորութիւն, և առաջ է շարժւում յոգնած, ուժաստատ—Իգդիրի առասույլեական ցեխը ոտնելով: Թրջած ցեխակոյտ են ամէնքը: Երեխաների ճիշն ու աղաղակը, կանանց լացն ու հոտաչանքը, աղամարդկանց գոտում դռչիւնը միախառնելով, կազմել են մի աղէկաուր հանդէս: Շատերը պատերի տակ թափած, լալիս են իրենց սև բազդն անիծելով: Պուճապի ժամանակ ամէն ոք, մոռնալով ամէն ինչ, աշխատել է միայն իր գլուխն ազատել: Ծնողները մոռացել են իրենց դաւակներին, երախաները՝ իրենց ծնողներին, քոյրը՝ եղբայր, եղբայրը՝ քրոջ: Շատ մայրեր կէս ճանապարհին ձգել են իրենց ծծկեր երեխաները, այլևս անկարող զբաւելով այդ ամենաթանկագին բնու տանելու: Հարիւրներով կարելի է հաշուել իրենց դաւակները կորցրած ծնողներին:

Նկարագրում է պատկերը մէկ այցելու:

— Ուշ երեկոյ է, երկու քայլի վրայ ոչինչ չի երևում: Յեխն էլ հօ անտանելի է: Տուն եմ գնում: Մէկ էլ առաջիցս, մութի միջից, ձայներ եմ լսում: «Աղա ջան, հոգուդ մատաղ»

✓ ախպէր ջան, էստեղ ցեխի մէջ մնացինք, տեղ չունինք, ճար չունինք, ընկերներս կորցրինք, յիս ընկանք: Լապտերիս լոյսը գէպի այն կողմն հմ ուղղում. պատի տակ, հէնց ցեխի մէջ, ինչ որ մուժ բաներ են շարժուում: Կամաց կամաց վեր են կինում մի կին, ապա մէկ ուրիշը, գրկած մի երեխա, մի մարդ ահագին բուր շալակին, և ապա մի երրորդ կին ու երեխաներ 5—6 տարեկան: նրանք բոլորն էլ սևացած, ցրտից այրուած են, հագուստները ցեխոտ ու պատառոտած: Տղամարդն ու երեխան գրկած կինը ամուսիններ են, նրանցն են նոյնպէս երկու երեխաները: Իսկ միւս երկու կանայք կորցրել են իրենց ամուսիններին և մնացել են անտէր: Փորձում հմ տեղաւորել նրանց, բայց բոլոր տները լիքն են գաղթականներով, տեղ ու ճար չը կայ, և աս մնում հմ շարած կանգնած:

Նկարագրում է նոյն Իգգիրի մասին մի ահանատես:

— Բացում է ծանր տղաւորութիւնների օրւա աւաւօւօր. բոլորս ստի վրա ենք: Կենդրոնատեղի ընտրել ենք դարբնը, նա ճանապարհի վրա է գտնուում, այնտեղից հարիւր քայլ է Արաքսի հսկայ կամուրջը, որտեղից եկել ու զեռ գալու են բոլոր գաղթականները: Տներից փողոց են թափուում երէկւա եկողները:

— Պարոն, երախաներս քաղցած են քիչ մը հաց տւէք:

— Ինձի հաց պէտք չի, աս քաղցած կը մնամ, միայն թէ իմ անասուններին մի խուրձ խոտ տւէք, քաղցից նրանք սատկում են:

— Էրիկս հիւանդ է, պարոն, քիչ մը շաքար տուէք շայտամ էնոր:

— Կինս ազատւեր է, պարոն, մի գլխալ տաք կերակուր կուզի:

Դիմում են անվերջ հազար ու մի պահանջներով թշւառութեան մատնւած այդ մարդիկ, ու յամառ կերպով կրկնում են, — հաց, խոտ, հաց, խոտ: Եւ դրանց մի կերպ, բաւարարում ենք:

Եւ մինչդեռ գիւղում գիշերողները խառն ու շիտթ, սայլերի ճոռոցով, երեխաների լացով ճանապարհուում են դէպի էջմիածին, կամրջի կողմից սկսում է նոր հոսանքը: Մի ժամից յետոյ հոսանքը վարարում է, նա նման է հեղեղի: Գալիս են սւ գալիս, գալիս

նն ճոնչան սայլերով, անասունների վրա նստած, ոտով՝ մի-
միանց յեանից շարւած, երբեմն էլ ձեռք-ձեռքի բռնած: Յեխը,
սոսկալի ցեխը, ամէն ինչ մոռացնել է տել: գալիս են մարդիք,
կանայք ու երեխաներ ցեխակոլով, սառած ու կապտած. Դա մի
քարաւան է յոգնած ու համրաքայլ, քարաւան անսկիզբ ու ան-
վախճան: Քարաւանը շարժում է միապաղաղ շարքերով: Այս
շարքերի հետ գալիս անցնում են յղի կանայք, կուացած պա-
ռաւներ, յաճախ երեխաները շալկած կանայք, Դանդաղ շարժող
քարաւանի միօրինակութիւնը խանդարում են երբեմն արագ ե-
կող ու անցող վարձովի ֆուրգոնները և ռազմամթերք փոխադ-
րող սայլակները՝ լեզի լեցուն գաղթականներով: Երբեմն այնպէս
միախառնում են գաղթականների սայլերն, անասուններն ու
ֆուրգոնները, որ ճանապարհը ներկայացնում է մի կատարեալ
քաօս, քաօս տխուր ու սրտածմլիկ տեսարանների:

Այդ քաօսի մէջ արագ մօտենում է մի ֆուրգոն լիքը երե-
խաներով. մատաղ գլուխները, որ երևում են ֆուրգոնի խորու-
թեան մէջ, կը լինեն ասուազն 30. զբանք ծնողները կորցրած
երեխաներն են: Մօտենում են քթոցներով հաց բաժանողները և
ֆուրգոնը կանգնեցնում: Ինչպէս ծիծեռնակի ձագեր միաժամա-
նակ մեկնում են բազմաթիւ սառած մատաղ ձեռքեր, նրանք
խլում են հացը և վայրկինապէս բերաններ տանում:

Օրը զլորում է, բայց գաղթականութեան հոսանքը ուժեղ
թափով դեռ շարունակում է, նրանց բաց թողնելը այլևս ուշ է:
Պարգաղբում է տեղաւորել գիւղում, և հոժ շղթան մտնում է
գիւղի ցեխոտ փողոցները. մի ժամ չանցած տները լցում են
այդ թշուառներով, իսկ հոսանքը առաջւա թափով դեռ շարու-
նակում է:

Ոտքի վրա աշխատող մարդիկ քաղցից ու յօգնածութիւնից
անհամբեր են դարձել, բայց լուռ կատարում են իրենց պարտքը
Պերջապէս օրը մթնում է, հոսանքը սկսում է նւազել, հասնում
են ուշացած սայլերն ու խմբերը և մի կերպ տեղաւորում են
դրանց էլ՝ համոզւած, որ այլևս գալու չեն. սակայն մէկէն լուում
է արագ մօտեցող ֆուրգոնների ձայնը, նրանք շատ են 5, 10,
15, 20, վերջապէս 24 բոլորն էլ լեցուն զլխաւորապէս կանան-
ցով ու երախաներով: Ֆուրգոնները առանց կանգ առնելու քշում
անցնում են: Նրանց կայանը բացօդեայ մի տափարակ է գիւղի

միւս ծայրում:—Տեղ ու սթար չը կայ, 24 ֆուրգոնը այդ անա-
գին բազմութիւնով բացօթեա է մնալու, —Թեւադրում է մեք
դաժան դրութիւնը այս դաժան որոշումը: Գեկահմբերի վերջն է
և այդքան կին ու երեխաների բացօթեա մնալը ծանրանում է
մեր խղճին՝ ինչպէս կապարը, բայց ելք չը կայ և սկսում է մի
այլ տեսակի գողթականութիւն: Մենք օտրի վրա եղող մար-
դիկս, աւելի քան 15 հոգի, վերցնում ենք 10 փթի չափ հաց և
10 հատ վերմակ և ցեխի ու գիւղական մթութեան մէջ շղթա
բռնած շարժում ենք դէպի դիւղի ծայրը: Հասնում ենք ֆուր-
գոններին, բաժանում ենք հացը ու վերմակները, բացել ենք
տալիս ֆուրգոնների ծածկոյթները ու վերադառնում յուզած:
Մնում ենք այն բոլորը, ինչ որ հնարաւոր է, բայց այն, ինչ որ
անում ենք, մի կաթիլ է այն հեղեղի մէջ, որը յորդացած հա-
սում է այդ ամբողջ օրը մեր աչքի առաջով:

Նկարագրում է Մարգարա գիւղի տեսարանը մի այլ ակա-
նատես:—տողերիս գրողը:

Այս էր պատկերը անսիրտ աշխարհի երեսը շարտած տաճ-
կահայ գողթականների այն բոլոր տեղերում, որ նա յայտն-
ւում էր ինչպէս մի արտասովոր հեղեղ:

Բայց կային դողթականներ, սրանից էլ վատթար գրու-
թեան մէջ, դրանք Սարայի, Բաշկալէի և Ատրպատականի գող-
թականներն էին, որոնք ստեղծի գրկանքներ կրեցին ճանա-
պարհին:

Դրանց գրութիւնը այս կերպ է նկարագրում մի ականատես:

— Ատրպատականը դատարկեց հայութիւնից: Մարաղան,
Ռերմին, Թաւրիզը և վերջապէս Մալմասան ու Սոյը շարժեցին դե-
պի Գովկաս: Քիւրդ, թուրք հարեանների սարսափը բոլոր վայ-
րերի հայերին տեղահան արաւ: Բոլորը փախչում են խուճապով
իրենց գլուխն ազատելու միակ մտահոգութեամբ:

Միանգամի կուրց յետոյ, մարաղացիք գիշերով փախան դե-
պի Թաւրիզ և այնտեղից էլ ով հնարաւորութիւն ունէր, արշա-
ւանքը շարունակեց դէպի Զուլֆա: Ռերմիան յանկարծ դատարկ-
եց: Օսմանցիների ու քիւրդերի մերձաւորութիւնը նրանց փա-
խուտըր դէպի Մալմաստ աւելի խուճապային և հզերական դար-
ձրեց: Թաւրիզը համեմատաբար պատրաստած դուրս եկաւ:

Սալմաստն էր, որ տեղափոխութեան ընդ որ յարմարութիւններէց
 դուրի, տիրալի ու երկարածիզ հետևոտն քարաւանը կազմեց
 զէպի Ջուլֆա։ Ահա այդ քարաւանն է, որ ուսճացած Ուրմիայի,
 Պոյի և Աղբակի հառաւաններով, ներկայացնում է ամենից սուար
 և տիրուր պատկերը գաղթականական հոսանքի։

Զիւնածածկ սարերի միջով, ցրտաշունչ քամուց խարազան-
 ւած, երկար ու համրաքայլ շարաններով ձգւում է հայութիւնը
 դորշ ու մոայլ երկնքի տակ. թշուառութեան դաժան ու անողոք
 ճանապարհների վրա։ Սալմաստեցու եղն ու գոմէշը տաք գոմե-
 րից դուրս բերւած գոռում են, բառաշում ազիողորմու վայրենի,
 և ցրտից ճանապարհներէք երկայնքին ընկնում սատկած։
 Անդճ կենդանիները չեն կարողանում տանել իրենց վրա բար-
 ձած երեխաներին, հիւանդները և ծանրոցները։ Օ՛հ, թշուառ-
 թիւնը այդ անբան էակներին... Դժբաղդարար միայն անասուն-
 ները չեն, որ ստոչում, ընկնում են. կան ծերեր, երեխաներ ևս,
 որոնք ցրտահար մեռնում են և իբրև գերեզման գտնում
 ձիւնի սպիտակ սուտնը։

Եթէ թալրիզ Ջուլֆա խճուղին միայն փոքրիկ արկածներ
 տեսաւ, ընդհակառակն՝ Ուրմիա-Սալմաստ-Պոյ-Ջուլֆա ձգւող
 ճանապարհը տասնեակ հազարների իսկական Գողգոթեան դարձաւ։
 Այդ ճանապարհի երկայնքին թափւած են դիակները մարդկային
 էակներին, որոնք մեռան տասնեակներով անթաղ ու անդադաղ։

Մի վիճակագրութեամբ, որը կազմւեց 1915 թիւ յունւարի
 30-ին(*) նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների ընթացքում Երևա-
 նի նահանգը և Կարսի շրջանը գաղթել եկել էին Տաճկաստանից
 և Պարսկաստանից հայեր հետևեալ չափով։

Տ Ա Ճ Կ Ա Ս Տ Ա Ն

	տուն	շունչ
Բասենի գաւառից	1551	12914
Նարմանի »	84	655
Բայազէտի »	224	1735
Դիաղիւնի »	130	1111

*) Տես. Եմիոբեայ վիճակագրութիւն Երևանի վիճակագրական յանձնու-
 ժողովի։

Կարաքիլիս. գաւառից	781	6034
Ալաշկերտի	»	956
Բաշկալէի	»	385
	4111	33,078

Պ Ա Ր Ս Կ Ա Ս Տ Ա Ն

Թաւրիզից և Խոյից	341	1809
Սալմաստի շրջանից	514	2816
Ուրմիի	»	426
	1281	7226
Ընդամէնը	5392	40,304

Հայերի հետ գաղթել էին նաև ասորիներ՝ 1325 տուն 8061 շնչով:

Այո, քանդուկ եկաւ մի քանի գաւառների հայութիւնը: Քանդուկ եկաւ աւելի քան 40,000 հայ ժողովուրդ Տաճկաստանից ու Պարսկաստանից, ամէն ինչ կորցրած, եկաւ անօրինակ պայմանների մէջ՝ կնիքակա սաւառամանիքին, ցեխին, քաղցին՝ բաց երկնքին. եկաւ ճանապարհին ձգելով երեխաներ, ծերեր ու հիւանդներ, թողնելով իր յետևից դիակներ:

Ճիշտ է, ճանապարհին նրան օգնում էին հայ կամաւորները, օգնում էին նաև սուս կողակները, բայց դրանք կաթիլներ էին այն ովկիանոսի համեմատութեամբ, որ ներկայացնում էր իրենից գաղթականութիւնը իր տառապանքներով:

Այժմ տեսնենք, ինչ վիճակ ունեցաւ տեղում մնացած համեմատաբար փոքրաթիւ հայ ժողովուրդը:

ԶԱՐԴԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՇԱՐՔԸ

Գաղթականութիւնը եկաւ ու տեղաւորեց մի կերպ, թէ-
պուզ աւերւած, ամէն բան կորցրած և բաւականաչափ զոհեր
տուած, տեղաւորեց երկար տանջանքներից ու թափառումներից
շեռոյ և մի սրահ հանգիստ առաւ: Նրան խնամելու համար եղած
կոչելին արձագանք տւեց հայ ժողովուրդը. տեղացին նւէրներ
տաանեակ, հարիւր հազարներով, ստացւեցին մեծաքանակ մթերք-
ներ ու հաղուստներ: Տեղերում կազմակերպւեցին հոգատար մար-
միներ, այսպէս կոչւած «Եղբայրական Օգնութեան» կոմիտէներ:
Հրապարակ եկաւ հայ մարդը, հայ կինը, հայ օրիորդը: Իր դու-
ռը բացեց հայ զինացին, ներս ընդունեց սառած ու կապտած
գաղթականին, սաքացից նրան իր թոնիրի վրա, մաքրեց նրա
կեղտը, տաք ապուր դրեց նրա առաջ, և հայրենագուրկ գաղթա-
կանը մի բոպէ մոռացաւ իր վիշտը:

Իսկ այն մասը, որ գաղթել չը կարողացաւ և մնաց իր
ջարկի տակ, ապա նրան զրութիւնը: Ահա նրա զրութիւնը կազ-
մում է մեր գծած պատկերների խտագոյն երանգը:

Տաճիկները խրախուսւած իրենց կարճատե յաջողութիւնից
և ուսն զօրքերի առժամանակեա նահանջից, անասելի բռնու-
թիւններ գործ դրին երկրում մնացած հայ ժողովրդի վրա:
Քանութիւնները չէր սահմանափակում կողոպուտներով ու թա-
լանով, այլ շատ տեղերում վերածւեցին մասսայական ջարդերի,
որոնց մէջ մասնակցութիւն ունեցան ոչ միայն քիւրդերը, այլ և
Պօլսերը:

Իր տեղում մնացած հայ ժողովրդի վերաբերմամբ կատար-
ւած բռնութիւնների, կողոպուտների և ջարդերի պատկերը տա-
լու համար կը բերենք մի քանի նկարագրեր:

1915 թւի յունւարի 25-ին տաճկական պարլամենտի ան-

դամ Վառմանը Վանից ներքին դործերի նախարարին ներկայա-
ցրեց մի ընդարձակ յիշատակագիր. այդ յիշատակագրի մէջ բեր-
ւած են ի միջի այլոց հետեւալները:

Ա. ԲԱՇԿԱՒԷԻ ԵՒ ԻՐ ՇՐՋԱՆԻ ՀԱՅԵՐՈՒ ԿՈՏՈՐԱԾԸ

Իէպքը տեղի ունեցած է անցեալ 1914 թւի դեկտեմբեր
ամսու առաջին շաբթուն: Թարուր աղասի Աճմէդ պէկ 160 ժան-
դարմներով և մազրիկցի աշիրէթի պետ Շարաֆ պէկի 150
համրտիկները խուժեցին Բաշկալէ ուսներու նահանջէն անմի-
ջապէս հարք. հայոց տունները թալանիկ և ապա կրակի տալէ
հար, 10 տարեկանէ վեր բոլոր այր մարդիկ կոսպաննեն ու ա-
նոնց գրակները փողոցներու պարտեզներու մէջ անթաղ կը ձգեն.
Գեղեցկազէ մ աղջիկները կտուանգեն, իսկ միացած հարիւրաւոր
կիներ ու երախաներ մերկ անօթի կը թողուն մինչև այսօր ալ
իրենց կեսաւեր շէնքերուն մէջ: Բաշկալէյի մերձակայ հայ գիւ-
ղերը նոյն վիճակին կենթարկին.— Բագ, Առակ, Փիտ, Ալալան,
Ալաս, Աօրան, Ռալիմ գիւղերու հայ բնակչութեան արունները հա-
ւաքելով Առակ գիւղ, ապա դաշտ հանելով կը կոտորեն:

Բաշկալէյի վերադրուման յաջորդ օրը, տեղական իշխանու-
թիւնները ձերբակալելով Վահան Անլանեան, Յակոբ Սաֆօեան,
Ճոչաղա Թօսունեան, Մինաս և Յարէթ Աէֆէրեաններ, Դաւիթ
Ալկաթեան և ուրիշներ թւով 11 անձ, յայտնած են անոնց՝ թէ
Վան պիտի ուղարկւին և բոլորին ալ կոտորել տւած են քաղա-
քէն գուրս, ճամբուն վրա:

Բ. ԲՕՂԱԶՔԵԱՍԱՆ (ԱՐՃԱԿ)

Իէպքը պատահած է նոյեմբերի 26-ին, չորեքշաբթի, ըս-
պանւած են Կարապետ Սարգիսեան և Աւագի կին Լուսիկ: Կո-
ղտպուած են եկեղեցին և գիւղացիներու ամբողջ գոյքը՝ մօտ
4,000 լիւրայի արժողութեամբ, որու մանրամասն ցուցակ յան-
ձնւած է կուսակալութեան:

**Գ. ԱՆՈՒԻԿԻ, ՀԱՍԱՆ-ԹԱՄՐԱՆԻ, ԽՍՐԱԲԱՍՈՐԻԿԻ,
ԹԱՇՕՂԱՌԻ ԿՈՏՈՐԱԾԸ (ՍԱՐԱՅԻ ԳԱՅՄԱԳԱՄ)**

Իէպքը պատահած է 1914 թի դեկտեմբերի 30-ի մօտ: Այդ օրը
Սարայի ժանդարմներ Ապտիլ-Գատիրի, Եաւէ Եօմերի, Ռասիմ էֆի-

առաջնորդութեամբ Ախոսիկ կերթան, ուր կը յայտնեն թէ գայ-
մազամ հրամայիր է բոլոր հայերը հաւաքել Սարայ տանել, վե-
րաշինել տալու համար տեղին քանդամ զօրանոցները: Օր մը
առաջ արդէն Հիւսէյին պէյին Սայա Թահար պէկ հայ գիւղացի-
ներ մէկտեղած իր երկու տան մէջ սպացուցած է դաւի մը նա-
խապատրաստութիւնը:

Ժանդարմներ այրերու խումբէն կը գտնեն երիտասարդնե-
րը և քիւրդերով շրջապատուած կը հանեն գիւղէն, երկրորդ խում-
բը, որ ծերունիներ էին, ժանդարմներու ընկերակցութեամբ ժամ
մը յետոյ ճամբայ կիլիէ: Հազիւ առաջին խումբը կը հասնի Աւ-
զարիկի տակ, քիւրդեր գնդակահար կընեն բոլորին ալ ժան-
դարմներու և Եաւերի ներկայութեամբ: Ականատես մը այդ օր
28 դիակ կը համրէ Աւզարիկի տակ: Այս ոճիրին կը մասնակցեն
յիշած պաշտօնականներէն զատ Հիւսէյին պէյի երկու աղաներ՝
Թահար և Մուստաֆա պէկեր, Մահմեդ Ալին և իր տղան: Հա-
ւաքական այս ոճիրէն ետք մինչ Եաւերը, ժանդարմները և յիշ-
ւած քիւրդ աղաները կը հիւրասիրելէին Աւզարիկի Մուլթան աղա-
յի տանը, մարդասպան քիւրդերը հազճեպով ետ կը դառնան ծե-
րունիներուն խմբին քով. անոնցմէ կը գտնեն համեմատաբար
աւելի չորս երիտասարդներ, դանոնք ալ կսպաննեն միւսներուն
աչքերու առջև: Խմբին մնացորդը 14 հոգի կը տանեն Սարայ,
ապա Սոշար և Վան, ուր կը հաննեն անոնք մէկ ամիս վերջ, ի-
րենց անաւոր դժբաղդութիւնը պատմելու մեզ:

Աւզարիկի տակ դիակներ կը մնան 7 օր, մինչև որ Ախո-
սիկէն հայ կիներ կուզան ու կը տանեն դանոնք իրենց գիւղի
գերեզմանատունը թաղելու:

Ախոսիկի գէպրին օրը տեղի կունենայ Հասան-Թամբանայ
10 տուն և Թաշօղլուի 2 տուն հայերուն կոտորածը: Սարայ
տանելու պատրաստով, 7 հոգի գիւղէն կը հանեն և ճամբուն գըն-
դակահար կընեն. 6 անձ կը փախչեն շրջակայքը, որոց երկուքը
ձեռք անցնելով կսպանին տեղն ու տեղը: Թաշօղլուէն կաղաւ-
տի միայն Սիմօն անուն անձ մը իր կնոջ հետ:

Հայ գիւղերու բախտին կարժանանան նաև Սարաբասորիկ
գիւղը բնակչոց տան տուն ստորինները: Անոնցմէ կաղաւտեֆն
միայն երկու տուն իրենց կիներով ու երեխաներով, միւսները
Քոլոր կսպանեն, իսկ կիներ ու աղջիկներ առեանգած ու տու-

րած են քիւրդերու մէջ:

Աւելորդ է ըսել, թէ բոլոր այդ գիւղերուն հարստութիւնը՝ ոչխար, ցորեն, տան իրեղէններ կը տանեն քիւրդերը: Միայն Ախտոիկի հարստութիւնը 10,000 ոսկիէն աւելի է. փոքր մաս մը միայն ոստիկաններ կը վերցնեն իբրև պատերազմական տուրք:

Դ. ՀԱԶԱՐԷՆԻ ԿՈՏՈՐԱՅ ՈՒ ԹԱԼԱՆԸ

Տեղի ունեցած է 1914 թւի դեկտեմբերի 16-ի հինգշաբթի օրը: Սպանւած են 7 այր մարդ, 1 կին, 2 աղջիկ, կին մ'ալ վիրաւոր: Թալանւած 5630 զլուխ ոչխար, եզ, կով, գոմէշ և ձի-5900 չտի այլ և այլ տեսակի հացահատիկ. 1600 լիտր իւղ, պանիր, ժածիկ. 1600 կտոր անկողին, 1000 կտոր պղնձեղէն, 200 լիտր բուրգ, 150 սնտուկ ապրանք և այլն և այլն:

Ե. ՍԱԹՄԱՆՅ (ՍԱՐԱՅ)

1914 դեկտեմբերի 20-ին սպայ մը և 3 ժանդարմ գիւղը դաշով կը յայտնեն կուսակալութեան հրամանը հայերուն՝ գիւղը պարպել անմիջապէս: Նոյն օրը 90 հոգի կը բռնադատուեն գիւղէն մեկնելու: Ասոնք 4 օրէն հաղիւ կը հասնեն Դոնէլ. ուր շքատահար կը մեռնեն 12 երեխայ: Գիւղը մնացած 120 հոգին մէկ տան մէջ կը փակեն և ամբողջ գիշերը երեք ժանդարմ և երեք ալ ուրիշ քիւրդիք կը լկին այդ անպաշտպան թշուառները: Քանի մը օր վերջ անոնք ալ կը հեռանան Սաթմանցէն դէպի Սալախանէ, Զարանց և Ֆառուղ գիւղերը: Անոնցմէ ցուրտէն և անօթութենէ կը մեռնին 8 հոգի: Սաթմանցը ամբողջապէս կը կողոպտուի:

Զ. ԱԻԶԱՐԻԿ (ՍԱՐԱՅ)

1915 յունւարի 14-ին Ախտոիկի Հիւսէին պէկ և ծանօթ Մօլլա-Սայիդը կայցելեն Աւզարիկ և կարգ մը սպանալիք կուտան հայ գիւղացոց: Անոնց մեկնելէն անմիջապէս ետք, ժանդարմներ կը կոխեն գիւղը, կը հաւաքեն բոլոր հայերը ոէսի տան մէջ, կը զատեն 9 հոգի, որոնց շալակը կուտան ամանով իւղիք Սարայ տանելու: Գիւղէն դուրս հանելու ատեն գիւղացիներուն աչքին առջև ժանդարմներ զնդակահար կընեն անոնցմէ երկուքը՝ Ասպատուր Խլօհան և Վարդան Մինասեան: Քանի մը գիւղացի-

ներ գիշերով կը փախչին և կը հասնեն Շամշազին. մնացեալ ժողովուրդը անհետ կորած է, ուր գտնուել չիմացալիր:

Այս բռնութիւններն ու ջարդերը տեղի ունեցան Բաշկալէի և Սարայի շրջաններում. այժմ տեսնենք ինչեր կատարուեցին միւս վայրերում:

Ալաշկերտի գաւառում հաշուում են 12 հայաբնակ գիւղեր, որոնցից մէկն է գայմազամանիստ Թոփրաղ-կալէն: Բազմամարդ հայ գիւղերից են Մուլա Սիւլէյմանը և Զէտկանը. առաջինի ժողովուրդը հայ կաթողիկէներ են 154 տնից բաղկացած, իսկ երկրորդ՝ հայ լուսաւորչականներ 87 տնից բաղկացած: Ռուս զօրքերի նահանջի ժամանակ, այս երկու գիւղերը հետու գտնուելով, գաղթել չկարողացան և մնացին իրենց տեղերում, ինչպէս և Թոփրաղ-կալէի ժողովրդի մի մասը: Դեկտեմբերի 17-ին Զէտկանի ժողովուրդը երկիւղ կրելով քիւրդերից, վերցրեց իր ունեցածը և տեղափոխուեց Մուլա Սիւլէյման: Դեկտեմբերի 18-ին շրջակա Սիպիլցի և Զիւանցի ցեղերին պատկանող քիւրդերը եկան պաշարեցին Մուլա-Սիւլէյմանը. հայերը մի փոքր զիմազրելուց յետոյ, թողեցին քիւրդերի ձեռքը երկու գիւղերի անագին հարստութիւնը, նոս 10 սպանուածներ ու փախան Թոփրաղ-կալէ: յոյս ունենալով այս տեղ պաշտպանութիւն գտնել, սակայն շուտով պաշարուեց նաև Թոփրաղ-կալէն և կողոպուտն ու աւերը սրա հետ միասին նաև սոսկալի ջարդը տեղի ունեցաւ և այս տեղ, որի մասին ականատես կանայք պատմում են հետեւալը:

— Սկզբում քիւրդերը զբաղւած էին միմիայն կողոպուտով, սակայն շուտով կողոպուտը վերջացաւ, ամէն ինչ տարան ու սկսեց ջարդը: Անագին թուով ժողովուրդը դուրս բերին տներից, ւցրին մզկիթը և այդ տեղից մի առ մի ջոկելով տղամարդկանց, դուրս էին տանում ու մի փոքր հեռացնելով սպանում էին մզկիթի շուրջ դարձնելով սպանգանոց: Սպանութիւնները կատարւում էին բարբարոսաբար, սարսափահար կոծող կանանց ու երեխաների ներկայութեամբ: Առաջին զոհերը եղան Մուլա-Սիւլէյմանի Հիւրիկան կաթողիկ վարդապետը և Զէտկանի լուսաւորչական Աբրահամ վարդապետը, որոնց սպանեցին մաս մաս կոտորելով: Նոյն ձևի տանջանքներով սպանեցին մի քանի աչքի ընկնող մարդկանց, երբ բոլոր տղամարդկանց սպանեցին, սկսուեց բռնաբարութիւնների, առեանդութիւնների գործողութիւնը: Զոհում

էին ջանիլ, գեղեցիկ կանանց ու աղջիկներին ու քարշ էին տալիս տանում, իսկ հակառակողին սպանում էին: Այս գործողութիւնը տեւեց երեք օր. մզկիթում և այլ տեղերում խոնւած կանայքն ու երեխաները սարսափի ու վախասունի տակ՝ երեք օր շարունակ չիմացան ինչ բան է քաղցն ու ծարաւը: Երբ ազամարդկանց, ջանիլ ու գեղեցիկ կանանց և երեխաների հետ սպանութիւններ և առևանգումների գործողութիւնները վերջացրին, նոր միայն արձակեցին կենդանի մնացած սարսափահար կին ու երեխաներին, սրտնք դարձան իրենց դիւղերը և մասամբ շաղ անցան այս ու այն կողմը: Գիւղերում հացի ու ալիւրի պաշար չէլ մնացել, ուստի սովի մատնւած թշուառները քացին հորերը, հանեցին պահած ցորենը և զրանցից ազանձ ու հատիկ պատրաստելով, սկսեցին կերակրել ինչպէս երկնքի թռչունը: Սարսափը մտացնել էր աւել ամէն ինչ, և մարդիկ անցկացրին խուրդային կեանք այնքան ժամանակ, մինչև որ սուս զօրքը նորից վերագարձաւ Ալաշկիրտ:

— Բերենք մի նկարագիր էլ Պարսկաստանում կատարւած ջարդերի մասին, որ տալիս է մէկ այցելու Պարսկաստանը վերադարձելուց յետոյ:

— Թուս զօրքերի նահանջից յետոյ, — գրում է այցելուն, — Իրլմանում պատսպարելի էին եօթ-ութ հարիւր հայ և տարի: Նրանք մնում էին թագնւած պարսիկների սներում, և ի պատիւ պարսիկ ժողովրդի, պէտք է ասեմ, նրանք անձնագահութեամբ կատարում էին իրենց զրացիական պարտականութիւնները:

Այսպէս ասում է մինչև փետրվարի 14-ը, երբ սկսւում է սուսաց զօրքի առաջխաղացումը: Զգալով, որ իրենք ստիպւած են լինելու տեղի տալ սուսաների առաջ, թուրքերը որոշում են բնաջինջ անել Իրլմանի քրիստոնեաներին, ինչպէս այդ արել են իրենց գրաւած բոլոր վայրերում: Վերոյիշեալ օրը Իրլմանում գոյնազամ նշանակւած Թուսզէմ բէյը մուսնախիկ է հանում փողոցները ու յայտարարում, որ եթէ որեւէ պարսիկ համարձակ է իր տանը գեւաւօր պահել՝ հրացանագորկ պէտք է լինի Պարսիկներից շատերը այս սպանալիքի առաջ էլ տեղի չեն տալիս և շարունակում են պահել հայերին: Այդ ժամանակ գայմա-

զամբ հրամայում է իր զինուորներին մանկ տները և դուրս քաշել քրիստոնեաներին: Առաջին նւագին դուրս են քշում 7 հայ և տեղն ու տեղը սպանում: Այնուհետև քաղաքի զանազան մասերից ժողովում են մօտ 700 հոգի: Մտածելով որ անյարմար է այդքան բազմութիւնը իրենց պատասպարողների աչքի առաջ կոտորել, տանում են նրանց մօտակա գիւղերը, գլխաւորապէս Հաֆիւան ու Մոսրովա և այնտեղ տաճկաց շտաբի անդամներին աչքի առաջ սպանում են տանջանքներով: Ես անձամբ տեսա, — գրում է իմ նամակագիրը — հորերի մէջ լցրած հարիւրաւոր զիակներ, որոնց գորշահոտութիւնը բռնել էր սմբողջ շրջակայքը. տեսա ցիխերի մէջ բնկած գլուխներ, որոնք կացիններիով կտրւած էին մարմնից. տեսա կտրւած ձեռներ, սրունքներ և այլն: Դիակներով լցւած են Հաֆիւանում Հախնազարեանի երկու, Սարգիս Մաշատրեանի և դազթական Նշանի երեք ջրհորները: Դիակները մեծ մասամբ մաս-մաս են արւած: Մոսրովայում միայն մի այգու մէջ կուտակւած են հարիւրից աւելի զիակներ: Մի տեղանատես պատմում է. թես տեսա մի պատի տակ հինգ գիակ. նրանց կապել էին միմիանց, խողխողել և պատր վիլցրել զիակների վրա: Մի ուրիշ տեղանատես սարսափով նկարագրում էր քերթւած երեսների, ջարդւած կառավների և նման հրէշային գործերի մասին:

Ահա այսպէս էր պատկերը այն վայրերում, որոնք ուսս զօրքերի նահանջից յետոյ նորից անցան տաճիկների ձեռքը և ուր մնացին բաւականաչափ հայեր:

Բայց արդեօք ամեն տեղ հայ ժողովուրդը լուս պարանոցը գէժ աւելց տաճկական եաթագանին և լուս մտքիւնց, թէ՛ նա որոշ տեղերում էլ գէժ գրեց այդ եաթտղանին, բմբոստացաւ իր դահիճի գէժ և ընկնելով հանդերձ, հրապարակ բերեց վրէժխնդրութեան ոգի:

Ահա այս հարցին է, որ նւիրում ենք մի փոքրիկ գլուխ:

ԴԻՄԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Ռուս-տաճկական պատերազմից յետոյ, հայաբնակ գաւառներում, մասնաւորապէս Վասպուրականում սկսեց մի շարժում, որը կարելի է անւանել ինքնապաշտպանութեան կազմակերպման շրջան, և այս հանդիսացաւ բնական հետեանք այն վերաբերմունքի, որ ցոյց տուց տաճիկ կառավարութիւնը դէպի հայ ժողովուրդը, առանձնապէս ուսանելի հետ ընդհարելուց յետոյ:

Հայ զինւորներին տաճիկ կառավարութիւնը զինաթափ արեց, նրանցից կազմեց ամալեա թարուրներ և նրանց սկսեց աշխատեցնել ինչպէս զբասաների: Բացի այս, նրանց ազրուստի և ուտեստի պայմանները դարձրեց անտանելի, և խմբական ու անհատական սպանութիւնները հայ զինւորների շարքերում դարձաւ սովորական երևոյթ: Այս բոլորը մինք տեսնք: Տեսնանք նաև, թէ ինչպէս շնորհիւ այս բոլորի, հայ զինւորները հատ-հատ ու խմբերով դասալիք եղան և շուտով հայ զիւղերը լեցեցին փախստական զինւորներով:

Փախստական զինւորներին հետապնդելու պատրուակի տակ, ժանդարմներն ու միլիտաները սկսեցին զիւղերը մանել, խուզարկութիւններ կատարել, բռնութիւններ գործել, յաճախ և կըրակ բանալ ժողովրդի վրա ու տներ հրդեհել:

Եւ փախստական զինւորներն ստիպւած եղան գէնք ձեռք բերել, ցերեկները քաշել լեռներն ու այրերը, իսկ գիշերները գիւղը իջնել: Կառավարութիւնն էլ իր հերթում կորդոններ (պահակներ) հաստատեց այս և այն տեղ, այս և այն զիւղում: Երկուստեք այս պատրաստութիւնները բնականաբար ընդհարման պիտի յանգէին: Սակայն ընդհարումները պիտի սահմանափակէին փախստական զինւորների ու կորդոնների մէջ պատահած դէպքերով, եթէ կառավարութիւնը հալածանք չսկսէր խաղաղ

ժողովրդի դէմ և նրանց հանգիստ թողնէր:

Տարաբաղդաբար այդպէս չեղաւ, հալածանքը սկսեց նաև ժողովրդի դէմ, այն էլ ոչ միայն ժանդարմների կողմից զինւորփնտոնելու պատրուակի տակ, այլև քիւրդերի ու հրոսական խումբերի կողմից: Մենք տեսանք Բշարէ Չաթօյի հրոսակախմբի սխրագործութիւնները Արճէշի, Բերկրիի և Արճակի հայ գիւղերում, մենք տեսանք ժանդարմների՝ նրանց հետ միասին նաև քիւրդ խմբերի կատարած բարբարոսութիւնները Բաշկալէի, Սարայի, Ալաշկերտի գաւառներում, ինչպէս և Դիլմանի շրջանում:

Այս տեսնում, լսում էր հայ ժողովուրդը միւս գաւառներում. տեսնում էր, թէ ինչպէս տաճիկ կառավարութիւնը հետըզհետէ պատրաստում է հին ջարդերի օրերը վերականգնել, և ահա ինքնապաշտպանութեան լուի բնագոյր նրան թելադրում է իր զլխի ճարը տեսնել:

Մահմանադրական վեց տարիների ընթացքում հայ ժողովուրդը տնտեսապէս բաւական բարեկարգեց, բարեկարգեց նաև նրա կուլտուրական կեանքը: Այդ շրջանում զարկ ստացաւ առանձնապէս կրթական գործը, իսկ կրթական գործի հետ զուգընթացաբար առաջ տարւեց ժողովրդի ինքնագիտակցութեան, ինչպէս և ինքնապաշտպանութեան գործը: Այս շարժման գլուխը կանգնած էր տաճիկահայ իրականութեան մէջ գործող կուսակցութիւնը - Դաշնակցութիւնը:

Ինքնապաշտպանութեան գործը սահմանադրական տարիներում ուղղւած էր յատկապէս քիւրդական վայրագութիւնների և քիւրդ աւազակների դէմ, որոնք յաճախ յարձակում էին հայ գիւղերի վրա, քշում էին նախիրներն ու հօտերը և կամ ուտեցնում էին հայերի արտերն ու արօտները: Տաճիկ կառավարութիւնը, ինչպէս միշտ, մատների արանքով էր նայում այս բոլորի վրա, չը նայած որ նա ամեն կերպ աշխատում էր բարեկամ երևալ Դաշնակցութեանը:

Եւ շնորհիւ այս հանգամանքի հայկական գաւառներում, մասնաւորապէս Վասպուրականում, Դաշնակցութիւնը անագին գործ տեսաւ. կազմեցին կոմիտէներ և ենթակոմիտէներ, այդ կազմերի շարքերը մտան գաւառական երիտասարդութեան լաւագոյն ուժերը. սկսեց մի ետուն աշխատանք—գլխոցն ու ընթերցարանը և ինքնապաշտպանութեան մարմինները զարձան

ամենօրեա զբաղմունքի առարկաները, գիրք ու զէնք, անա այն, ինչ որ թելադրում էր խաւար միջավայրը, թափառաշրջիկ ցեղերի գրացիութիւնը ապիկար կառավարութեան ձեռքի տակ:

Այս շրջանում հիմնուեց Վանի Աշխատանքի տունը, մի հոյակապ շէնք, ուր գտնուում էր մի գեղեցիկ ընդարձակ բնակարանի, «Աշխատանք» թերթի խմբագրութեան ու ապարանի և այլ պէտքերի համար:

Ճիշտ է, նման աշխատանքներ Բաշնակցութիւնը կատարում էր նաև սահմանադրութիւնից առաջ, հին բռնակալ բէժիմի օրօք, բայց նրանք թափ ստացան և բեզմաւորուեցին սահմանադրութեան օրերում, երբ քաղաքական պայմանները եկան նըստատաւորելու նման աշխատանքները: Թէ որքան այդ Աշխատանքը սահմանադրական տարիներում հոգ գտաւ հայ իրակաւնութեան մէջ, այդ երևում է այն հանգամանքից, որ դաշնակցական գործողների վրա երիտասարդ թուրքերի կառավարութիւնը նայում էր իբրև հայ ժողովրդի ներկայացուցիչների, նըրանց հետ պահում էր սերտ կապեր և իւրաքանչիւր հարցում պիմում էր նրանց խորհուրդներին ու աջակցութեանը: Այս հանգամանքը աւելի ևս բարձրացրեց այդ կուսակցութեան հեղինակութիւնը, ժողովուրդն էլ սկսեց նայել նրա վրա իբրև իր ներկայացուցչութեան, և կառավարութեան մէջ ստեղծուեց կառավարութիւն:

Ահա այս էր իրականութիւնը հայկական գաւառներում, մասնաւորապէս Վասպուրականում, երբ պայթեց համաերոպական պատերազմը. յայտարարեց սէֆէր-բէրիկը, տեղի ունեցաւ ուստանակական պատերազմը և երիտասարդ թուրքերի կառավարութիւնը վերջնականապէս անցաւ իր նախորդ սուլթան Համիդի հայաջինջ քաղաքականութեանը, ներկա բազէն գտնելով միանգամայն համագաղտասխան այդ ծրագիրը իրագործելու համար:

Վանի մէջ գործող Բաշնակցութեան ներկայացուցիչները այդ միջոցում համարւում էին Իշխանը—Նիկողայոս Փօղոսեանը, Շուշու գաւառի Բառասնէ գիւղից և Արամը—Արամ Մանուկեանը՝ շուշեցի Նրկուան էլ բռնակալ օրերի գործողներ: Առաջինը ճանաչւած էր իբրև զինուորական ուժ, որը վերջին ժամանակներ



Վ.ՌԱՄԵԱՆԸ
Օսնիկ Դերձակեան
Օսմանեան պարբերանոյ անդամ

քում մի փոքր քաշւած կեանք էր վարում, հրկրորդը սւեկի կազմակերպող ուժ էր ու կրթական գործիչ:

Ռուս-տաճկական պատերազմից առաջ, սեպտեմբերի սկզբներին, Վան եկաւ պարլամենտի անդամ Վոսմեանը—Օննիկ Գերձակեանը՝ պոլսեցի. սա կուսակցութեան առաջնակարգ գործիչներից էր և շնորհիւ իր եռանդի, ազդեցութիւն ունէր ոչ միայն կուսակցութեան գործնէութեան վրա, այլև կառավարութեան ներկայացուցիչների մօտ: Այնպէս որ Վոսմեանի Վան գալուց յետոյ կուսակցութեան գործնէութիւնը զիկավարում են Վոսմեանը և Արամը. առանձնապէս Վոսմեանը, որը իբրև պարլամենտի անդամ, ձեռք էր բերել յատուկ դիրք:

Այս նոյն միջոցին գործի մէջ եկաւ նաև Իշխանը՝ զիկավարելով գլխաւորապէս ինքնապաշտպանութեան գործը:

Գաւառներում սկսուում է մի երուն կեանք, ինքնապաշտպանութեան մարմինները ամեն կերպ աշխատում են ժողովուրդը զինել, կազմուում են ինքնապաշտպանութեան շրջիկ խմբեր՝ կարիք եղած տեղերին օգնութիւն հասցնելու նպատակով:— Դէպքեր ստեղծելու առիթներ չը տալ,—հրահանգուում է կենտրոնական մարմնի կողմից, ամենքը աշխատում են խուսափել միջնադէպերից: Բայց չի լինում. կառավարութեան կողմից ամեն օր ու ամեն տեղ առիթներ են ստեղծուում:

Կայ մի այլ հանգամանք:Ռուսները արագ կերպով առաջ են շարժուում, տաճիկ զօրքերը ջարդուում են ու յետ քաշուում. ուստի սական բանակը հասնում է Բաշկալէ ու Սարայ, վերջապէս ուստի սական թնդանօթները որոտում են Արճակի գաւառի սահմաններում, Մօլլա-Հասան գիւղի տակ, որոնց ձայնը գնում տարածուում է հեռուները:

✓ — Անդրանիկը հասել է Մօլլա-Հասան:

Ահա այս կայծակի արագութեամբ թռչում է գիւղից գիւղ, գաւառից գաւառ և բերանից բերան: Պէտք է ապրած լինել տաճկահայի դրութիւնը, պէտք է մարդ փորձած լինի իր կաշու վրա այն բոլոր զրկանքները, որի մէջ ապրել է տաճկահայը տարիներով, տասնեակ տարիներով, որ կարողանա գաղափար կազմել, թէ ինչպիսի ոգևորութիւն էր առաջ բերում այդ մի հատիկ նախադասութիւնը տառապող հայ ժողովրդի մէջ:

Միւս կողմից սարսափ է տարածուում մահմեդական ժողո-



ԱՐՄԷ
Արամ Բառնակիան
Ընդհի

վրդի վրա, շատերը նրանցից սկսում են փախչել, փախչել են սկսում նաև վանի տաճիկները: Պատրաստում է թողնելու վանը նոյնպէս կառավարութիւնը. պաշտօնէութիւնը գլուխն է կորցրել, որի մասին Այգեաստանի մի հայ ոստիկան—Արմենակ Շատարցեանը—պատմում է հետևեալ բնորոշ դէպքը:

— Նոյեմբերի 19-ի առաւօտեան, սովորականի պէս, ես քաղաք իջայ, — պատմում է Շատարցեանը, — և ուղիղ դիմեցի ոստիկանատուն: Երբ ես ներս մտայ ոստիկանատան ընդհանուր սենեակը, զարմացած նկատեց, իոր այդտեղ եղող ոստիկանական պաշտօնեաները դոյները նետած, ինչ որ անհանգիստ վիճակի մէջ են: — Քեզ ոստիկանապետը (փօլիս միւլդիրին) հարցնում է, — ասացին պաշտօնեաները, երբ ինձ տեսան. և ես անցայ միւս սենեակը, ուր ոստիկանապետն էր լինում: Այս տեղ երկու հոգի էին, մէկը ոստիկանապետն ինքն էր — վաֆիկ բէյը — Սալօնիկցի, իսկ միւսը ժանդարմիայի կօմանդար — Բուրհանէզզիւն բէյը, ինչ որ անհանգիստ խոսակցութեամբ բռնւած: Իրանք նոյնպէս գունատ էին, ու այնպէս սարսափած, որ խօսել չէին կարողանում: Երբ ես ներս մտայ, նրանք խօսակցութիւնը ընդհատեցին և ոստիկանապետը դառնալով ինձ, ասաց.

— Գիտես, զաւակս, պատերազմը որ կայ՝ թղաթխադի կը նմանի, երբեմն մէկին կը զարնէ, երբեմն միւսին: Այսօր թըշնամուն յաջողեւր է մեր սահմանը դա դնել, այդ պատճառով մենք պարտաւորւած քաղաքը պիտի թողնենք: Գիտենք, որ սուները ձեզի բարեկամ են և ձեզի ոչինչ չը պիտի անեն, ուստի պաշտօնատունս քեզի պիտի յանձնեմ, կը նայես որ ոստիկանատունը չը կսղոպուի:

Ասում էր այս խօսքերը ոստիկանապետը սարսափած, հազիւ շրթունքները շարժելով, — շարունակում է պատմել Շատարցեանը: Միևնոյն ժամանակ քաղաքի ունևոր տաճիկները շտապով հեռանում էին դէպի Աւանց՝ նաև նստելու համար: Թէև պաշտօնէութիւնը չը հեռացաւ և տաճիկների փախուստը կանգ առաւ, որովհետև յաջորդ օրը լուր հասաւ, որ սուները նահանջում են, բայց սարսափը տաճիկների վրայից երկար ժամանակ չէր անցնում:

Ահա այս դրութիւնը ստեղծեց նոյեմբերի կէսերին ուս-



ԻՇԽԱՆԸ
Նիկողայոս Պօղոսեան
Ընդ առ ցարապից

ների առաջխաղացումով, դրուժին, որը եկաւ հայ ժողովրդի տրամադրութիւնը բարձրացնելու, նրա մէջ մի աւելորդ անգամ հակակշիռ ստեղծելու այն բռնութիւնների դէմ, որ հրապարակ էր բերել տաճիկ կառավարութիւնը վերջին ամիսների ընթացքում:

Այս մի քանի հանգամանքները, որ մենք թւեցինք, եկան հանգոյցելու, և տեղի ունեցան մի շարք դէպքեր, որոնք ոչ միայն ծրագրւած չէին, այլ կատարուած էին տարերային կերպով, անբացատրելի պարպոտանքների մէջ, յաճախ նոյնիսկ անհատական դրդումներով. այդ դէպքերից է Բէլուի դէպքը:

Ա. Բէլուի Դէպքը

Գեաւաշ—Կարճկանի սահմանի վրա գտնուում է 77 տուն ժողովուրդ ունեցող հայաբնակ Բէլու գիւղը: Բէլուն վարչական բաժանմամբ պատկանում է Կարճկանի, ազգային հոգևոր ցուցակներում գրւում է Գեաւաշի վրա. այս գիւղում գտնուում էր 8 հոգուց բաղկացած մի կորդօն:

Նոյեմբերի 25-ի մօտերքին, երբ ուսուցիչի մինչև Մօլլա-Հասան առաջանալու և վանի ունեւոր տաճիկների փախչելու լուրերը դաւառները հասան, Բէլուի մօտ հեռագրաթիւրը կտրւեց Ռոտանի գայմազամբ—Շուքրի բէյ, գնաց Բէլու այդ գործը քննելու համար, և համոզւելով որ այդ հայերի գործն է, անցաւ դէպի Կարճկան: Այս միջոցին ռուս զօրքերը Մօլլա-Հասանից արդէն յետ էին քաշւել և տաճիկները հանգստացել էին:

Գայմազամի հեռանալուց յետոյ Բէլու են գալիս ինքնապաշտպանութեան խմբի մի քանի դիււած տղաներ՝ առաջնորդութեամբ Նոր դիւղացի Աբրահամի: Գիւղում եղող կորդօնի ժանդարմները, որոնք մինչև այդ շատ անգամ էին տեսել գիւղում գիււած տղաներ ու չէին խօսել, այս անգամ գալիս են տղաների իջևանած տունը պաշտպանուելու ու ուզում են ձերբակալել նրանց: Տղաները չեն ուզում լաւ ձուլի և սկսում է հրացանաձգութիւն, որի ժամանակ ժանդարմներից մէկը սպանում է:

Գայմազամը, որը գտնուում էր Կարճկանում, հաւաքում է բազմաթիւ միլիտներ ու քիւրդեր և գալիս է Բէլուի վրա: Տղաներին օգնութեան են հասնում Գեաւաշից ընծակցի Ասպօն և Միհրան Չաթօեանը երկու տասնեակներով: Բէլուն երկու օր ուժեղ դիմադրութիւն է ցոյց տալիս, սակայն երբորդ օրը, այն

Ք դեկտեմբերի 5-ին, սղաները այլևս չկարողանալով շարունակ
ածող խուժանին դիմադրել, առնում են ժողովուրդը ու քաշում:
Պուժանը լցոււմ է գիւղը, մի քանի մնացած հայերի սպանում
է, տները հիմնովին կողոպտում է և ապա գիւղը հրդեհում: Բէ-
լուի աւերման մէջ իր առանձին դերը ունեցաւ գախմանցի
Հիւսէին աղան:

Բ. ԱԹԱՆԱՆԻ ԴԵՊՔԸ

Բէլուի աւերումը ցնցող տպաւորութիւն գործեց շրջաննե-
քի, մասնաւորապէս Գեաւաշի, Հայոց-ձորի և Շատախի վրա,
որոնք հանդիսանում էին Բէլուի սահմանակից գաւառներ: Այս
ձերք գաւառներում Գաշնակցութիւնը մեծ աշխատանք էր գործ
գրել: Այս տեղ առաջ էին եկել աչքի ընկնող երիտասարդներ,
կազմել էին ինքնապաշտպանութեան թուղթիկ խմբեր. այս
շարժմանը նպաստել էր առանձնապէս Աղթամարը իր դպրոցով,
որը տարէց տարի տեւել էր մի շարք ընթացաւարտներ: Բնակա-
նաբար Բէլուի աւերումը իր հատուցումը պիտի գտնէր այս
շրջանում, ու այդպէս էլ եղաւ: Տեղի ունեցաւ Աթանանի դէպ-
քը և տեղի ունեցաւ հետեւի պարագաներում:

Մինչդեռ Բէլուն դեռ չէր աւերել և մի բունն զինւած տը-
ղաներ զիմադրում էին միլիոններին ու խուժանին և լուրը քա-
ղաք հասնելով կառավարութիւնը պատրաստում էր գորք ու-
ղարկել կարճկան, ճանապարհը փակելու նպատակով՝ հեռադրա-
թիւր Գեաւաշի ու Հայոց-ձորի մէջ կտրեցին, Անդղ գիւղի 7—8
գաւթիէները զինաթափ արին ու բանդարկեցին և Պօշար գետի
վրա գտնուող Անդղի կամուրջը քանդեցին:

Այս նոյն միջոցին պատերազմի դաշտից տուն էին վերա-
դառնում Ոստանի զաղին (դատարանի նախագահը) և մէկ այլ
պաշտօնեա: Մի շարք տաճիկ պաշտօնեաներ՝ արձագանք տա-
լով յայտարարւած ջիհաթին, պատերազմի դաշտ գնացին իբրև
կամաւորներ. զրանց թւին պատկանում էին Ոստանի զաղին և
Քր ընկերը, որոնք իրենց հայրենասիրական պարտքը վճարելով՝
հանգստի դարձն էին կատարում գէպի տուն: Ոստանի ճանա-
պարհը ձգոււմ էր Աթանան գիւղի միջով: Յիշեալ պաշտօնեանե-
քը մօտեցան Աթանանին ճիշտ այն միջոցին, երբ Բէլուն աւեր-
ուել էր և լուրը հասել էր Աթանան: Գիւղի մի քանի երիտա-

սարգէնէր տեսան մօտեցող պաշտօնեաներին, ճանաչեցին նրանց քմացան նրանց որտեղից գալը, մի բոլոր բարբառեց վրէժի կայծը և երբ երկու պաշտօնեաները գիւղի կենդրոնն էին հասել, դնդակահար եղան և զիակաները վերցնեցին: Սպանութիւնը մնաց ծածկւած:

Այս գէպքից մի օր անց, զեկտեմբերի 6-ին, Աթանանի մէջ նոյն կերպ սպանւեցին երկու ժանդարմներ, որոնք Ոստանից Վան էին տանում կառավարական փոստը: Այս սպանութեան ժամանակ տեղի ունեցած հրացանաձգութեան ձայները վրա Ոստանից հասնում են 150-ի շտի ժանդարմներ, միլիտներ և քիւրդեր, ու պաշարում են գիւղը: Աթանանում այդ ժամանակ գտնուում էր Դեաւաշի ինքնապաշտպանութեան ոգին — խարականցի Լեոնը իր խմբով: Աւելի քան 60 զինւած տղաներ գրաւում են գիւղի թիկունքը պահող բլուրը և մի փոքր հարաւ գտնուող Սպիտակ վանքը, որտեղից ժանդարմներն ու միլիտները փորձում էին անցնել գիւղի թիկունքը, ու սկսում է ուժեղ հրացանաձգութիւն: Կռիւր տեսնւմ է ամբողջ օրը, տաճիկները ոչ մի յաջողութիւն չեն գտնում և երբ միտում է, նրանք քաշում են Ոստան:

Յաջորդ օրը կռիւր վերսկսեց նոր թափով, եղած կառավարական ուժերին աւելացան նոր ուժեր, որոնք Բելուն աւերիւրաց յետոյ ազատ էին մնացել: Չը նայած թշնամու գերազանց ուժերին, այնուամենայնիւ նա գիւղին մօտենալ չը կարողացաւ գիրքերը ինչպէս և Սպիտակ վանքը մնացին տղաների ձեռքում: Լեոնը կազմում էր կռիւ ոգին:

Այդ օրը Ոստանի նոր-շէն թուրքական փոքրիկ թաղում, որը գտնուում է Աթանանին շատ մօտիկ, տղաների զնդակով զարկեց Ոստանի աղղեցիկ քիւրդերից մէկը — Սուրշուա տղան, այս սարսափ ազդեց ոչ միայն քիւրդերի, այլև տեղական կառավարութեան վրա, և նրանք Սպիտակ վանքի վանահօր միջոցով հաշտութիւն խնդրեցին տղաներից:

Եւ մինչդեռ Աթանանը քաջաբար կուում էր քաղմաթիւք քիւրդերի ու միլիտների դէմ, Շատախում տեղի ունեցաւ հետեւալ գէպքը: Այդ գաւառի Փենանդաշտ կոչւած տեղում նոյնպէս կարեցին հեռագրաթիւրը, իսկ Սիւսիկին գիւղի մօտ տղաները կարեցին ճանապարհը: Երկու օր շարունակ Վանից և Ոստանից

Շատախի կեզրոնավայրը — Թաղը գնացող ու այնտեղից հեռոյ
ժանդարմները թւով 8—10 հողի բանդարկւեցին, ինչպէս տաճ-
կահայերն են ասում, վար դրւեցին, և հաղորդակցութիւնը այս
դժի վրա էլ կարեց:

Ահա շրջանը այս գրութեան մէջ էր, երբ ցնցող լուրերը
Վան հասան. կառավարութիւնը մի կողմից, հայ ղեկավար շրջ-
անները միւս կողմից, կարևոր համարեցին խաղարար մի մար-
մին ուղարկել ղէպքերի վայրը: Եւ ղեկանմերի 7-ին Վանից ճա-
նապարհ ընկան ղէպի Պեաւաշ, հայերի կողմից Վառմանը՝ իբրև
պարլամենտի անգամ, իսկ տաճիկների կողմից՝ Միւնիր Էֆէն-
դին, դարձեալ իբրև պարլամենտի անգամ:

Սաղազարար մարմինը Անգղի կամուրջը գտաւ աւերած,
կամուրջը մի կերպ նորոգուեց և Վառմանն ու Միւնիր Էֆէնդին
հասան Ռատան այն ժամանակ. երբ Աթանանի կոխը դադարել
էր. չը նայած զրան գրութիւնը մնում էր լարւած, և Աթանանի
զիծը փակւած, այնպէս որ տաճիկները, նոյն իսկ կառավարա-
կան պաշտօնեաները չէին վստահում Աթանանի միջով անցնել:

Լարւած գրութեանը վերջ տալու նպատակով Վառմանը
գնաց Աթանան, սպանւած ժանդարմաների ղիակները իրենց
ղէնքերով ուղարկեց Ռատան, բայց զպէրի և նրան ուղեկցող
պաշտօնեայի ղիակները հրապարակ հանել չը կարողացաւ. աղա-
ները հրաժարուեցին խոտովանել պաշտօնեաների սպանութիւնը,
չը նայած որ գայմագամը պահանջում էր յիշեալ պաշտօնեաների
ղիակները. և Վառմանը գրութիւնը մի կերպ հարթելով, Միւ-
նիր Էֆէնդիի հետ անցաւ գնաց Բէլուի ղէպքը քննելու:

Սաղազարար մարմինը անցաւ գնաց, բայց Աթանանի գոր-
ծած սպաւորութիւնը չանցաւ, և այդ գիւղի միջով երթեկեկը
Քիւրդիի ու տաճիկների համար շարունակուեց մեալ վտանգաւոր:
Հայ սպաները չը վստահացան կառավարութեանը, և ղերքերը չը
բատարկեցին: Ուշադրաւ է այն ղէպքը, որ Բիթլիսից հեռոյ 200-ի
շափ զինւորներ կանգ առան Ռատանում, չը համարձակելով Ա-
թանանի սահմանը ոտք դնել, և նրանք Ռատանում մնացին այն-
քան, մինչև ու Վառմանը Բէլուից վերադարձաւ: Ապա Վառ-
մանը գայմագամի հետ հեղան նստեցին Աթանան, որ միայն
ձիւնւորները հեղան Աթանանի միջով անցան գնացին:

Այս չէ բոլորը. աւելի քան մի շաբաթ, ոչ միայն քիւրդերն

ու տաճիկները, այլ և պաշտօնեաները ազատ երթևեկել չէին վստահանում Աթանանի միջով: Եղան ղէպքեր. երբ Վանից Ռատան զնացող պաշտօնեաները նախ վերցնում էին Վոսմեանից յանձնարարական նամակ Աթանանի տղաների վրա և ապա ճանապարհ ընկնում: Այդ պաշտօնեաները զիւզին մօտենալով յանձնում էին տղաներին նամակը և ապա վստահացած անցնում էին գիւղի միջով:

Ահա այսպիսի տպաւորութիւն զործեց Աթանանի ղէպքը կառավարութեան, միևնոյն ժամանակ տաճիկների ու քիւրդերի վրա, որի շնորհիւ էլ այդ շրջանները մի առ ժամանակ բոլորովին խաղաղեցին, հեռագրաթիկերը կապեցին, Անգղի կամուրջը վերանորոգեց, Սիւսիկին գիւղի ժանգարմիւրը արձակեցին և Բէլուսն վերաշինեց:

Աթանանի ղէպքը սէֆէր-բէրլիկից ու ուստաճկական պատերազմից յետոյ առաջին անգամ տեղի ունեցած զիմաղրական ուժեղ ղէպքն էր ամբողջ շրջանում, եթէ չհաշուենք Բէլուսի զիմաղրութիւնը, որ վերջացաւ գիւղի աւերումով. և Բէլուսի ղէպքը եկաւ ապացուցելու, որ ինքնապաշտպանութիւնից դուրս քերկութիւն չը կայ հայ ժողովրդի համար, ինչպէս այդ կը տեսնենք յետոյ էլ:

Գ. ԴԷՊՅԵՐԸ ԿԱՐԿԱՌՈՒՄ

Բէլուսի և Աթանանի ղէպքերից մի առ ժամանակ անց տեղի ունեցան Կարկառի ղէպքերը, որոնք վերջացան այդ շրջանի գիւղերի աւերումով, և որոնք նոյնպէս զործեցին ծանր տպաւորութիւն:

Կարկառը լեռնային փեքրիկ գաւառակ է, 18 հայրենակ գիւղերով և ընդամէնը 3,000 բնակիչներով: Այդ գաւառակը գանձուում է Գեաւաշից ու Կարճկանից ղէպի հարաւ, իրզան—սուգետի արևելեան մէկ ճիւղի հովիտների վրա: Նա բաղկացած է երկու ձորերից կամ գետլիւներից, որոնք կոչւում են վերի գետլին: Վերի գետլին կազմում է Վանի վիլայէթի Գեաւաշի գաւառամասը, իսկ Վանի գետլին՝ Բիթլիսի Վիլայէթի—Պիզան գաւառամասը:

Կարկառի ղէպքերը տեղի ունեցան հետեւալ պարագաներում:

Յունւարի 30-ին Շէնիձորի (Յիզանի) միւղիբը 24 ժանդարմ-
ներով գալիս է վարի կարկառի Եղեգիս գիւղը, կանչում է այդ
տեղ շրջակա գիւղերի ունեւերին ու նրանցից պահանջում է
փախստական զինւորներին: Զինւորները չեն յանձնւում, ուստի
ունեւերը ենթարկում են սոսկալի ծեծի ու տանջանքներու Ռէս-
ներին այդ ձեով պատժելուց յետոյ, միւղիբը իր հետ ժանդարմ-
ներին ուղարկում է գիւղերը և պատելրում է խիստ կերպով
հետապնդել զինւորներին: Ժանդարմներից մի քանի հոգի գնում
են Հուկուրձու, իսկ մի քանիսը Չկոր գիւղը: Ժանդարմները այդ
գիւղերում գործում են մի շարք բռնութիւններ՝ ծեծում են տը-
ղամարդկանց, բռնաբարում են կանանց և այլն: Հայերը չեն կա-
րողանում տանել այս բանը և զէնքով դուրս են գալիս ժան-
դարմների դէմ, որի ժամանակ Հուկուրձուի մէջ սպանւում են
4 ժանդարմներ, իսկ Չկորի մէջ երկուսը:

Լուրը անմիջապէս հասնում է կարսու գայմազամին, սա
տար է հանում Սէյիտ Ալիի սղա Հաջի Գարեխչին բազմաթիւ
միլիաներով ու քիւրդերով և ուղարկում է կարկառի վրա:

Միւս կողմից համախմբւում են կարկառի տղաները, ու-
րոնց գլուխը անցնում է ձկորցի Գալուստ Պողոսեանը կամ Չու-
շիկ Գալոսն—կարկառի ինքնապաշտպանութեան ոգին՝ հերոս մի
մարդ:

Գալոսն, տեսնելով թշնամու ահագին ուժը, լուր է ուղար-
կում Գեաւաշ և օգնութիւն է ուղում այն տեղից, բայց օգնու-
թեան եկողները ուշանում են: Չը նայած զբան, նա իր փոքրա-
թիւ ուժերը վերցրած, դուրս է գալիս թշնամու դէմ, կայան
ընտրելով Սենէգրի բարձունքը: Սկսում է կատաղի կռիւ, որը
տևում է երեք օր. չորրորդ օրը թշնամուն յաջողւում է զբաւել
Սենէգրի բարձունքը. տղաները յիս են քաշւում և Յարկենց
գիւղը կողոպտւում է ու հրդեհւում: Թէև այս միջոցին Գեաւաշից
հասնում են Լաթոն և Միհրան Չաթօեանը իրենց տղաներով,
բայց նրանք հազիւ կարողանում են մի քանի գիւղերի տեղա-
հան եղած ժողովրդին աննել պաշտպանութեան տակ ու յիս
քաշել: Թշնամու դէմ մնում է զարձեալ Գալոսն իր տղաներով ու
շարունակում է կռիւը, որը այժմ փոխադրւած էր Որիդ գիւղի
շուրջը: Կռիւը նորից շարունակւում է երկու օր Որիդի տակ,
ժողովուրդը նեղն է ընկնում, տրտունջ է բարձրանում Գալոսի

դէմ: Այս տանել չի կարողանում ստիւծ մարդը, վրդովւած մէն-
մինակ վերցնում է իր հրացանը, իջնում է իր գիւղը— Չկոր, ու-
րը արդէն թշնամու ձեռքումն էր գտնուում, և որոշած լինելով
մեծնել իր տան մէջ, կուում է այդտեղ հերոսաբար մինչև վեր-
ջին փամփուշտը, վերջին շունչը, և հերոսաբար էլ ընկնում է
այդտեղ, յաւիտեան փակելով տեանջները անմիտ սրտունջներին:

Ընկնում է Կարկառի հերոսը— Վոշիկ Գալօն, յուսահատ-
ւում են սղանները, տեղի են տալիս բազմաթիւ թշնամուն, յետ
են քաշում՝ վերցնելով իրենց հետ ժողովուրդը, բայց յետ են
քաշում մեծ զոհերով: Հեռապնդող թշնամին սպանում է աւելի
քան 130 մարդ, կին և երեխայ, յարձակում է գիւղերի վրա,
սկսում է կողոպտել, աւերել ու հրդեհել անխնայ: Կառավարու-
թիւնը ոչ միայն չի կանգնեցնում աւերը, այլև խրախուսում է
և իր հերթին յարքունիս է գրուում քոյոր կենդանիները: Ըսկ
իրրև նշան յաղթութեան, կտրում է Գալօյի գլուխը և հրապա-
րակով ցլի վրա բարձրացնում:

Կարկառի ամբողջ ժողովուրդը քաշեց Մոկա ու Գեաւաշ ա-
ւերւած ու քանդւած, ծանր վիճակի մէջ, և իրեն հետ տարաւ
սպաւարութիւնների մի նոր շարք, որը գալիս էր մի աւելորդ
անգամ յուզելու մտքերն ու հոգիները:

Դ. ԳԵՊՔԵՐԸ ԱՆՁԱԻ ԱՂՈՒՄ

Կարկառում կատարւած անցքերը դեռ բոլորովին լծարմ
էին, երբ տեղի ունեցան Ալջաւազի գէպքերը՝ աւելի ուշագրաւ
և աւելի մխիթարիչ:

Ալջաւազը, ինչպէս իր տեղում տեսանք, Վանի հայաշատ
գաւառներից մէկն է և ընկած է լճի հիւսիս-արևմտեան ափի
վրա, ուր ցցւած է Սիփանի զեղեցիկ մասաւր: Գաւառի կենդ-
րանավայրն է հին բերդաքաղաք՝ Արձկէ աւանը, ուր սպրում են
ընդամէն 80 տուն հայեր: Այդտեղ նստում է գոյմազամը: Գա-
ւառում հաշոււմ են 21 հայաբնակ գիւղ՝ աւելի քան 6000 բնա-
կիչներով: Գիւղերից աչքի են ընկնում երկու Սիփանը, Առննը,
Կոճերը, Աբճրան ու Առնջկոյսը:

Մինչև սէֆէր բերլիկը այս շրջանում գոյմազամի պաշտօն
էր վարում մէկ հայ—Պետրոս Մօզեանը: Սէֆէր բերլիկից յետոյ
քաղաքականութիւնը փոխեց, հայ գոյմազամին տեղափոխեցին

Վան, իսկ նրա փոխարէն կարգեցին վանեցի մի սաճիկ — Նաջի բէյին:

Ալջաւազում գործում էր ինքնապաշտպանութեան շրջուն մի խումբ, որը կարէր հզամ ղէպում իր շուրջն էր խմբում աւելի քան 50 տղաներ: Այս խումբը գեկավարում էր Արճրա գիւղացի Օհան Դարբինեանը, հողագործ, բայց մի քաջ մարդ: Սրա ձեռքի տակ գործում էր և մի քաջ աղա, գա կարաքէշիշցի Մըհոն էր, որը յայտնի էր Ան Հայու տղա անունով և որը սահմանադրութեան օրերում Քի առանձին յանդգնութեամբ դատարանի միջոցով պահանջում էր Պագնուսի հաշակաւոր Քոն Հիւսէյին փաշայից իր հողերը:

Ինկտեմբերի սկիզբներում, ինչպէս տեսնուք, Բշարէ Չաթօն իր հրոսակախմբով Մանազկերտից սկսած մի շարք բռնութիւններ գործելով հայ գիւղերում, Արճէշի, Բերկրիի ու Ալճակի վրայով գնաց Սարայ: Սակայն նրա կեանքը կարճ եղաւ, պատերազմի մէջ, Կոթուրի մօտ Բշարէ Չաթօն սպանեց նրա հրոսակախումբը քայքայեց և անգլուխ մնացած քիւրդիքը փախան իրենց տները: Այսպէս լինում էր միշտ քիւրդ հրոսակախմբերի հետ:

Բշարէ Չաթօյի սպանելուց յետոյ, նոյն ձեռի հրոսակախումբ կազմեցին նրա տղան — 30 տարեկան պարթև ու թիկնեղ Ամարէ Չաթօն և նրա եղբայր Հիւսէյինը: Սրանք գնում էին գնաւուրներից Բշարի տրեան վրէժը լուծելու:

Բշարէ Չաթօն շարժեց Մանազկերտի ու Արճէշի վրայով: Ամարէ Չաթօն շարժեց Ալջավաղի ու Արճէշի վրայով:

Եւ անա երիտասարդ Չաթօն իր հրոսակախմբով փետրվարի 9-ին հասաւ Արճիկ: Այդ տեղ երեք օր հանդիստ առնելուց յետոյ, շարժեց աստջ, և փետրվարի 12-ին իջաւ Կոճեր հայ գիւղը:

Թէ ինչպիսի վայրագութիւններ հնարաւոր էին այդ հրոսակախմբի երեսից, դժւար չէ երեակայել: Երկու ամիս առաջ կեաւ հայրը, ազատ վրէժի նպատակեան թոյնից, չնայած դրան, նա անցաւ գնաց բռնութիւններ ու բարբարոսութիւններ կատարելով և մարդկանց շիկացրած շամփուրներով դաղելով:

Այժմ գալիս էր որդին, թիւազրեած կառավարութիւնից՝ ճշնել յատկապէս հայ գիւղերը, ծանրանալ հայ ժողովրդի վրա,

նեղիկ հայերին: Միւս կողմից Ամարէ Զաթօն գալիս էր լցած հօր արեան վրէժով: Գեաւուրները սպանել էին նրա հօրը, գեաւուրներն էլ պիտի քաւէին այդ վրէժը, իսկ գեաւուրներ ներկա գէպքում հանդիսանում էին հայերը: Եւ Ամարէ Զաթօյի գալու լուրը մի վարկեան տարածուում է ամբողջ շրջանը:

— Ես իմ խմբով գանուում էի մեր գիւղում—Արճրայում,— պատմում է ինքնապաշտպանութեան շարժուն խմբի ղեկավար խմբապետ Օհանը,— գիշերւա ժամի 10-ը անցիկ էր, երբ հե ի հե ներս ընկան երկու կոճերցի հայեր և օգնութիւն խնդրեցին:— Հասէք, ի սէր Աստուծոյ, էլ պատիւ նամուս չմեաց: Ամարէ Զաթօն իր քրդերով իջիկ է գիւղը, ձեծում են տղամարդկանց, բռնաբարում են կանանց ու աղջիկներին, բռնի դուրս են քաշում ոչխար, տաւար, մորթում են, եփում, թափում անխնայ, հասէք, գիւղը ձեռքից գնաց:

Այս խօսքերը, որ վրա-վրա թափում էին սարսափահար կոճերցիները, ծակեցին սիրտս ինչպէր նեա. ես ուրի կանգնեցի շանթահարի պէս. ոտի թուան նաև տղաները 25-ի շափ, որոնք բարկութիւնից չը գիտէին ինչ անեն: Իսկոյն լուր տւի շրջակա գիւղերը և շուտով հասան նորից 25-ի շափ տղաներ, ու 50 հոգով ճանապարհ ընկանք գէպի կոճեր: Լուսածագը սկսել էր, երբ մենք հասանք Ղուզէլ հայ գիւղը: Ղուզէլից մինչև կոճեր մնում էր կէս ժամուս ճանապարհ, և մենք նոր միայն մտի էինք Ղուզէլ, երբ կոճերից երկու նոր մարդիկ հասան և խնդրեցին այլևս չը գնալ՝ ասելով, որ ինչ լինելու էր եղել ու վերջացիկ է արդէն և քիւրդերը պատրաստուում են ճանապարհ ընկնելու: Ես կանգ առա Ղուզէլում, պատրաստելու համար պաշտպանել միւս գիւղերը, բայց չը գիտէինք թէ որ գիւղը նրանք կանգ պիտի առնեն: Նրանք իջնում էին համարեա բոլոր պատահած գիւղերը և մէկ օրուս ճօնապարհը անցնում էին երկու-երեք օրում: Նախատեսելով այդ, խումբը բաժնեցի երկու մասի. 15 հոգի յանձնեցի Սեհայու տղային և ուղարկեցի Առէնի շրջանի ամենամեծ գիւղը, որը ունէր 117 տուն ընկիւիչ, իսկ 35 հոգի՞ն վերցրի ես և գիմեցի գէպի Սոռանց գիւղը: Առէնն ու Սոռանցը գանուում են Սոռանց լճի հակառակ կողմերում՝ Սոռանցը ընկած է լճից արևմուտք, իսկ Առէնը՝ արևելք: Կոճերից Առէն կարելի էր գնալ լճի թէ հիւսիսային և թէ հարաւային ամբողջ, հարա-

այսին ամերով գնալու համար պէտք էր Ղուզէլով անցնել, իսկ հիւսիսային ամերով գնալու համար Ղուզէլ մտնելու կարիք չէր կար: Եւ 35 տղաներով հասայ Սոռանց, ընտրեցի մի լաւ գիրք, որտեղից երևում էր Առէնը, քաշեցինք այդ գիրքը ու սպասեցինք: Էոյսը բացեց. արևը ծագեց և ահա Ամարէ Զաթօյի հըրոսակախմբի ծայրը երևաց: Սոաջից պնոււմ էր ինքը—Ամարը իր հօրեղբոր և մի քանի թիկնապահների հետ միասին, յղփացած ու կշտացած, և ապա ցաք ու ցրիւ, բաժան-բաժան, 5-ով 10-ով հեռուում էին նրան ծիաւոր ու հեռահակ քիւրդները: Նըրանք առաջացան, բայց Սոռանց չը մտան, այլ թերեւով գէպի հիւսիս-արևելք, բոնեցին այն գիրծը, որը տանում էր գէպի Առէն: Մեր գուշակութիւնը միայլ չէր, նրանք բոնեցին լճի հիւսիսային ամը. մենք բոնեցինք հարաւային ամը և առաջացանք գէպի Առէն:

Այստեղ խմբապետ Օհանի պատմութիւնը մի փոքր ընդհանանք և անցնենք Առէն, տեսնելու, ինչ էր կատարուում այնտեղ: Առաւօտեան ժամի 10-ն էր, երբ Ամարէ Զաթօն իր հօրեղբոր հետ, մի խումբ թիկնապահներով հասաւ Առէն: Մինչև այդ առէնցիները գիւղի մի մասը դատարկել էին, բոլոր ընտանիքները տեղափոխել էին գիւղի միւս մասի տների մէջ, որպէսզի քիւրդները իջնէին դատարկւած մասը, կանանց ու աղջիկներին չը պատահէին և առանց անխորժութիւնների հիւրասիրութիւն ու անցնէին գնային: Երբ Ամարը իր շքախմբով հասաւ գիւղի ծայրը, ընդառաջ դուրս եկան զիւղի երկու հասակաւոր մարդիկ: Գրանք էին Մէլիք Աբրէն և ոէս Աբօն: Մէլիք Աբրէն դատարանի անգամ էր, լուրջ, միևնոյն ժամանակ սքտտա մի մարդ: Սա առաջ գնալով, ողջունեց Ամարին, ձեռքը նախ կրծքին և ապա ճակատին տարաւ ու յայանեց, որ գիւղի մի մասը բոլորովին դատարկել են ընտանիքներից, որպէսզի նրանց ազատ տեղ լինի, և հրաւիրեց ձիուց իջնել:

— Ի՞նչ, ուրեմն դուք այնպէս էք արել, որ մենք ձեր կանանց երեսը չը տեսնենք:—Այս խօսքերով դարձաւ Ամարը Մէլիք Աբրէնին: Ընդունելով վիրաւորւածին յատուկ գայրացած մի գէմք: Մէլիք Աբրէն, որ նման գէպքերում իր լրջութիւնը կորցնել չը գիտէր, դարձաւ քիւրդ բանաւորին և հանդարտ տօնով ասաց:

— Ձեզ համար, բէկ, մեզ մօտ պատրաստուած է և ընակա-

քան և հիւրասիրութիւն, մեր աչքի վրա էք եկել, իսկ եթէ դուք մտածում էք մեր կանանց պատւին էլ զիպչել, այդ մենք թոյլ չենք տայ:

Այս խօսքերը դուք չեկան Ամարէ Չաթօյին, նա խոտուակց, փրփրաց և ձեռքով նշան արեց, նրա մարդիկ մի քանի հրացան, կրակեցին օդի մէջ. այս արեցին սարսափ տարածելու համար: Բայց Մէլիք Արքէն իրեն չը կորցրեց և հասկանալով որ անկարգութիւններն ու բռնութիւնները անխուսափելի են, յետ դարձաւ օգնութեան կանչելու Սև հայու ազին, որը իր խմբով քաշուած Երիցու Դաւոյի տունը, սպասում էր հեռանալու: Մինչև որ Մէլիք Արքէն տղաներին կը հասնէր, նրանք արդէն քիւրդերի հրացանաձուլութեան վրա դուրս էին եկել ծածկուած տեղից, քաշել էին յարմար տեղեր և պատասխանում էին քիւրդերի կրակին: Քիւրդերը այս տեսնելով, աւելի կատաղեցին, ուստի կրակը ուղղեցին զիւզի մէջ երևացող մարդկանց վրա: Կոխը տարացաւ, յետեից եկող քիւրդերը տեղ հասան և հրացանաձուլութիւնը բորբոքեց: Ժողովուրդը փախաւ դէպի Բարկաթ և Առնջկոյս գիւղերը, իսկ 15 դինուած տղաները մնացին կանգնած 500-ի շափ մի մասը միայն գինուած քիւրդերի գէժ:

— Երբ հրացանների առաջին պայթոցը բարձրացաւ, — շատ անակում է իր պատմութիւնը խմբապետ Օհանը, — մենք արագացրինք մեր քայլերը և զիւզը հասանք այն ժամանակ, երբ տղաները բաւականի նեղն էին ընկել: Մինչև այդ զիւզում, ըստ արմուհի էին 5 հոգի, որոնցից էին Սիրունի Ռաշօն, Ալեյօյի Ասպատուրը և Փարւանի Միրզօն: Գիւղ հասանք թէ չէ, տղաները օգնորւեցին և կոխը նոր թափ ստացաւ:

— Կոխը* տեղի մինչև երեկոյեան ժամի 5-ը: Առաջինը գարկուկի Ամարէ Չաթօն, սպա մի փոքր անց գարկուկի նրա հորեղբայրը — Հիւսէիբը: Այդ երկուսը գարկուկից, որովհետև գտնուում էին առաջին դիրքերում, զիւզի հիւսիսային ծայրում գտնուող եկեղեցու և դպրոցի մօտ, տղաների կրակի տակ: Հրատակապետների սպանութիւնը շփոթ ձգեց քիւրդերի մէջ, նրանք սկսեցին փախչել, զիւզի մօտ թողնելով 8 զիակ. մենք հետապնդեցինք նրանց բաւականին տեղ և աւելի քան 10 հոգի էլ գարկուկիցին փախուտի ճանապարհին: Քիւրդերն այլևս կանգ չառան, նրանք մի գլուխ փախան մինչև Արծկէ: Դրութիւնը է

հարկէ լարւեց: Մենք դարձանք գիւղը, վերցրինք Առէնի, Առջկոյտի, Աճրայի ժողովուրդը, տեղափոխեցինք Կարաքէշիչ և Վիճկացուէ գիւղերը, որոնք պաշտպանւելու լաւ դիրքեր ունէին: Իսկ Բարկաթ, Սոսանց, Դուզէլ, Կոճեր գիւղերի ժողովուրդը քաշուեց նաւերի մէջ և դուրս եկաւ բաց ձովը: Այս տեղի ունեցաւ փետրուարի 13-ին, Տեառնդատաջի նախօրեակին:

Այս դէպքը մեծ սարսափ ձգեց ոչ միայն շրջակա քրդերի, այլև կառավարութեան վրա. այնպէս որ երբ յաջորդ օրը դէպքի տեղ կհան 25 ժանդարմներ, զեկավարութեամբ շառուշ Դաւրիշի, Առէնը դատարկ գտնելով այլևս չը համարձակեցին առաջ գալ: Այլ վերցնելով քիւրդերի դիակները վերադարձան Արձկէ:

Այնուհետև երեք օր շարունակ մեր շրջանը ոչ մի քիւրդ և ոչ մի պաշտօնեա այլևս ռաբ չը դրեց: Միայն փետրուարի 16-ին երևացին մարդիկ, այն էլ մեծ բաղմութեամբ: Եկան բաւականաչափ միլիաններ 3 թնդանօթով, ու ափ ելան Բարկաթ, Առնջկոյտ գիւղերի մօտ: Եւ մինչդեռ զօրքերը պատրաստուած էին մեզ վերա դալու, վաճն ուղարկւած մեր նաւը վերադարձաւ, կազմակերպութիւնը մեզ գրեց էր, — դուք գուրս եկէք շրջանից, իսկ ժողովուրդը թողէք իր տեղը, նրան կառավարութիւն ձևք չի տայ: Մենք այդպէս էլ վարւեցինք, վերցրինք զինուած տղաներին 60-ի չափ և նաև նստելով անցանք թիմար, իսկ ժողովուրդը դարձաւ իր տեղը:

Ան խմբապետ Օհանի պատմած այս դէպքերը մի կարծ միջոց լսեցին, որպէսզի նրանք արձագանք գտնէին թիմարում:

Ե. ԴԷՊԵՅԵՐԸ ԹԻՄԱՐՈՒՄ ✓

Ալջաւազի դէպքերից ընդամէնը երկու շաբաթ անց, տեղի ունեցան դէպքեր, թիմարում, որոնք կհան մտքերի նոր յուզումներ առաջ բերելու: Թիմարի դէպքերը իսկապէս շարունակութիւն կազմեցին Ալջաւազի դէպքերի. կառավարութիւնը Ալջաւազում չը կարողանալով ձևք ձգել Սմարէ Չաթօյին դիմադրութիւն ցոյց տուող զինուած ազաներին, նրանց սկսեց հետապնդել թիմարում, ուր ապաստանել էին տղաները և այստեղից էլ առաջ կհան թիմարի դէպքերը:

Ալջաւազի ինքնապաշտպանութեան խմբի խմբապետ Օհանը 60-ի չափ տղաներով փետրուարի 17-ի առաւօտեան նաւով դուրս

— Կէան Թիմարի Խժիշկ գիւղը: Այդ չափ մարդկանց Խժիշկում պահելը դժար էր, ուստի նա իր խումբը բաժանեց երեք մասի— տղաներից 25 հոգու ուղարկեց ծովափին գտնուող Էրէրին գիւղը, 15 հոգու ուղարկեց վերին Թիմարի գիւղերը, իսկ մնացեալ տղաներին իր հետ առած իջաւ քաղաք:

Աւելի քան 10 օր որևէ միջադէպ տեղի չունեցաւ, սակայն մարտի 2-ին ոչխարի տուրք հաւաքող մէկ պաշտօնեայ 25 ժանդարմներով եկաւ Էրէրին: Տեսնուած չէր որ հարկահաւաք պաշտօնեան այդքան ժանդարմներով գիւղ գայ, ուստի նրա այդ ձևի յայտնուիլը գիւղացիներին կասկածի առկ ձգեց, սրտնք կանխատեսելով ընդհարումներ՝ գիմեցին գիւղում եզոզ տղաներին ու խնդրեցին հեռանալ գիւղից. տղաները առանց դժկամակութեան դուրս եկան գիւղից, սակայն նրանցից մի քանիսը, առաջնորդութեամբ տեղացի մի երիտասարդի, երբ գիւղի ձայրին գտնուող ջրաղացի մօտով դէպի լեռն էին քաշուած, ջրաղացի մէջ պահուած երեք ժանդարմներ կրակ բացին տղաների վրա և նրանց առաջնորդող երիտասարդին ոտից վիրաւորեցին: Մի քանի կրակ էլ տղաները բացին ու քաշեցին սարը. սրանով էլ միջադէպը անցաւ:

Բայց երկու օր անց, մարտի 4-ին, քաղաքից Էրէրին եկաւ ժանդարմիայի կօմանդան Բուրճան-էդդինը բաղմաթիւ ժանդարմներով: Սա ուղարկուած էր իրրև պատժիչ արշաւախումբ, ուստի երբ ժանդարմները գիւղը մտան, սկսեցին սոսկալի բռնանութիւններ. գիւղը ենթարկեց կոտորուտի, շատ տներ հրդեհեցին և բազմաթիւ մարդկանց շղթայակապ քաղաք տարան: Էրէրինի մէջ կատարուած այս վայրագութիւնները սարսափ ազդեց ժողովրդի վրա:

Սակայն վայրագութիւնները սրանով չը սահմանափակեցին, Էրէրինից արշաւախումբը անցաւ շրջանի ամենամեծ գիւղը—Ալիւր և ապա Խուենց. միևնոյն վայրագութիւնները տեղի ունեցան նաև այս գիւղերում, երկու երեք օր շարունակ ձեռնուէին մարդկանց, կոտորուած էին տները, երբեմն և այրուած, իսկ աչքի ընկնող մարդկանց բռնուած էին և շղթայակապ քաղաք ուղարկուած:

Ներքին Թիմարի ինքնապաշտպանութեան խմբի գեկավար Վանեցի Բուրէն Իսրայէլեանը այս մասին լուր ուղարկեց քաղաք և հրահանգ ուղեց: Ի նկատի ունենալով Ալջաւազի և Աթա

նանի ղէպքերը, որոնց ժամանակ կառավարութիւնը տեղի տը-
ւեց մի միայն ուժի առաջ, կենդրոնական մարմինը Թիմարի
ինքնապաշտպանութեան խմբին հրահանգեց, որ եթէ զօրքը նո-
քից շարունակի իր վայրագութիւնները, ղիմադրութիւն ցոյց
տան:

Թէև Էրէրին, Ալիւր և Խաւենց գիւղերում տեղի ունեցած
վայրագութիւնները կանգ առան, և ըստ երևոյթին սպառելիք
բարդութիւններն անցան, բայց բարդութիւններ առաջացան այլ
տեղերից:

Մարտի 9-ին, 10 հոգուց բաղկացած ինքնապաշտպանու-
թեան շրջիկ մի փոքրիկ խումբ՝ ղեկավարութեամբ Ռուբէնի, զըտ-
նում էր Բայրակ փոքրիկ գիւղում: Բայրակից ղէպի հարաւ
կէս ժամ հեռաւորութեան վրա ընկած են Սղոցքար կոչւած
քայտերը: Բայրակին սահմանակից Ատնականց և Տրլաշէն գիւ-
ղերից 20-ի չափ փախստական զինւորներ, երկիւղ կրելով ժան-
դարմաների հետապնդումից, պահում էին Սղոցքարի ժայռերի
մէջ: Բայրակից ղէպի հիւսիս-արևելք միմիանց կողք կողքի զըտ-
նում են երկու տաճկարնակ գիւղեր, զրանցից մէկը կոչւում է
Շխէնի միւսը՝ Շիսկարա:

Նւ ահա մարտի 9-ին Շխէնի և Շիսկարա գիւղերում եղող
միլիսնները իմանալով որ Սղոցքարի ժայռերում պահւած զին-
ւորներ կան, յարձակում են նրանց վրա: Լուրը հասնում է
Բայրակ. այդ տեղ գտնւող տղաները օգնութեան են գնում, բայց
դեռ տեղ չը հասած և ճանապարհին մի քանի միլիսնների հետ
կրակի ըմբւած, լուր է հասնում, որ տաճիկները կոխեցին Բայ-
րակը: Տղաները դառնում են գիւղը այն ժամանակ, երբ տաճիկ-
ներն արդէն մօտեցած են լինում գիւղին: Տղաներին օգնութեան
է հասնում, խմբապետ Միսակը միայն մի քանի հոգով, սկսում է
տաք կոխ, որը տեսւմ է մինչև երեկոյ: Տղաները այդ օրը տա-
խ են մէկ զոհ, սպանւում է քաջ Մկօն, իսկ տաճիկները ունե-
նում են աւելի քան 10 սպանւած:

Մութը պատում է, տաճիկները քաշւում են իրենց տեղերը,
տղաները 20 հոգու չափ քաշւում են ժողովուրդը ղէպի Բոզանց
գիւղը, իսկ իրենք իջնում են Աւերակի, սպասելով ջաղաքից օգ-
նութեան: Մարտի 10-ի լուսածագին քաղաքից հասնում են 46
տղաներ, որոնց մէջ էին քաղաք իջած Ալջաւագի տղաները: Այս

46 տղաները անցնում են Բողանց, իսկ Ռուբէն 20 տղաներով
մնում է Աւերակի: Լոյսը բացւում է, քաղաքի կողմից երևում է
500-ի չափ զօրքի ծայրը երեք թնդանօթով: Սրանց զեկավա-
րում էր նոյն Բուրճան-էզզինը: Մինչև որ զօրքը կը հասնէր Ա-
ւերակի, Բողանցում սկսում է հրացանածգութիւն տղաների և
անցորդ միլիաների մէջ. ահա այս ձայների վրա զօրքը ուղիղ
շարժւում է գէպի Բողանց: Զօրքը առաջանում է, իսկ յետից
գնում են Աւերակիի տղաները: Երբ զօրքը հասնում է Բողանցի
տակ գտնուող Մալանուկի կոչուող հովտի մէջ, առաջից ու յետ-
ւից տղաները սկսում են կրակել զօրքի վրա. կռիւն թնդանօ-
թածգութեամբ հանգերձ տեսւմ է ամբողջ օրը. զօրքը գիւղին
մօտենալ չի կարողանում: Տղաները Բողանցում եղող ժողովուր-
դը զուրս են հանում գիւղից. այդ ժամանակ սպանւում են՝ մէկ
մարդ, 2 կին և մէկ երեխայ: Սպանւում են նաև զօրքերից 20-ի
չափ:

Մութը պատում է, զօրքը առաջանում է գէպի կիւսնեց
գիւղը, իսկ տղաները իջնում են Աւերակի, իրենց հետ բերելով
նաև ժողովուրդը:

Մարտի 11-ին քաղաքից Աւերակի եկան խաղաղարար
մարդիկ, այդ տեղի ունեցաւ կուսակալի փոխանօրդի առաջար-
կութեամբ. եկողներից մէկը հայ էր—նահանգական վարչութեան
անդամ Գեորգ Ճիտէչեանը, միւսը տաճիկ էր—աստիկանապետ
Վաֆիկ բէլը: Ճիտէչեանի խորհրդով տղաները քաշուցին Նա-
բաթ, Միսկներ և Կզլճա գիւղերը. իսկ խաղաղարարները վեր-
ցրին ժողովուրդն ու գնացին Բողանց, և այնտեղից գրեցին
Կիւսնեց գիւղը՝ Բուրճան-էզզինին, որ իր զօրքերը առնի վե-
րադառնա քաղաք: Եւ իրենք էլ իրենց գործը վերջացած հա-
մարելով վերադարձան տուն:

Բուրճան-էզզինը ստանալով խաղաղարարների նամակը,
զօրքից 50-ի չափ յանձնում է ժանդարմների հարիւրապետ Սի-
լէյման էֆէնդուն, կարգադրելով իջնել քաղաք Նարաթ գիւղի
դժով, իսկ մնացեալ զօրքը թնդանօթներով իր հետ առած, իջ-
նում է քաղաք Գեօլուի վրայով:

Եւ մինչդեռ խնդիրը փակեած էր համարւում, տեղի է ու-
նենում մի նոր ընդհարում: Յաջորդ առաւօտ տղաների մի մասը
Նարաթ գիւղում էր գտնւում, երբ Սիլէյման էֆէնդին 50

ժանդարմներով հեռուից երևաց: Կասկած ու շփոթ տիրեց տղաներին, — խաբեբայութեամբ ուզում են մեզ թակարդի մէջ ձգել, — մտածեցին տղաները և կրակ բացին ժանդարմներէ վրա, երբ նրանք բաւականին մօտեցան գիւղին: Կրակել սկսեցին նաև ժանդարմները և կռիւը տաքացաւ, որի ժամանակ սպանուեցին Սիւլէյման էֆէնդին և մի քանի ժանդարմներ, իսկ միւսները փախան քաղաք:

Այդպիսով նոր բարդութիւն առաջ եկաւ, միևնոյն ժամանակ սարսափ տիրեց տաճիկներին: Ուստի մտրտի 13-ին քաղաքից նոր խաղաղարար մարդիկ եկան Նաբաթ: այս անգամ հայերից եկաւ Արամը, իսկ տաճիկներից՝ նոյն Վաֆիկ ըէյը և նոր հաշտութիւն կայացաւ:

Նաբաթի դէպքը զուգորդեց ուսմների կողմից Պերեմիշլը գրաւելու հեռագրի հետ: Վանի մէջ ահազին սպեորութիւն առաջ բերին այդ երկու դէպքերը, իսկ տաճիկներէ վրա այնպիսի ճշմարտ տպաւորութիւն գործեցին, որ կուսակալի փոխանորդի կողմից Պերեմիշլի անկման մասին տպւած հեռագրաւորը արգելեց տարածել:

Նաբաթի հաշտութիւնից յետոյ տղաները իջան քաղաք. մէկ փոքր խաղաղութիւն տիրեց. բայց դա ծանր դէպքերին նախորդող խաղաղութիւն էր. դէպքեր, որոնք զալիս էին կազմելու Վասպուրականի հայութեան տառապանքներէ, միևնոյն ժամանակ քաջագործութիւնների ցիկլը:

ԱՀԱԻՈՐ ԴԵՊՔԵՐԻ ՆԱԽԸՆԹԱՅԸ

Թիմարի գէպքերից յետոյ մի ընդմիջում տեղի ունեցաւ, որը նման էր զինադադարի: Երկու կողմերն էլ հանգստացան, մի խորհրդաւոր լուսթիւն տիրեց ոչ միայն քաղաքի մէջ, այլ և դաւառններում: Ամենքը սպասում էին մի նոր անակընկալի, դերագոյն անակընկալներից, որ տեղի էր ունեցել մինչև այժմ. գալիք ծանր օրերի նախադգացումն էր, որ թևատարած թառեկ էր բոլորի գլխին. օրեր, որոնք յղի էին խոշոր անցքերով:

Ի՞նչ խորհրդաւորութիւն էր այդ:

Թիմարի գէպքերից անմիջապէս յետոյ, Վոսմեանի և Ջէւդէտի մէջ տեղի ունեցաւ մի հեռազրական փոխանակութիւն, որը անագին լոյս է տնտում գալիք գէպքերի վրա: Ջէւդէտը այդ միջոցին գտնուում էր Բաշկալէի կողմերում, իսկ նրա պաշտօնը ժամանակաւորապէս վարում էր Բաշկալէի մութասարիֆ Շէֆիկը:

Թիմարի գէպքերի թարմ տպաւորութեան տակ, մարտի 13-ին Վոսմեանը ուղղեց Ջէւդէտին հետեւալ ընդարձակ հեռագիրը:

— Նախ և առաջ յարգանքներս մատուցանելէ յետոյ, հետեւալ առաջարկներս ընդունելինդ կը խնդրեմ:

Թիմարի ցաւառիթ գէպքերու մասին Ձեզ հետ տեսնելի կողմէի: Ինչպէս գիտէք, թէ ես և թէ ընկերներս երկու ժողովուրդսուս մէջ տեղի ունեցած արիւնտ կսիւներուն առաջըլ առինք, կը յուսամ որ այս երեկոյ խնդրին վերջ մը կը տրուի: Զուտկցութեան արժանին այն է, որ Կարճեանի գէպքերէն ի վեր այսպիսի գէպքերու պատճառները մէջտեղէն վերցնելը չի մտածուիր:

— Ինկտեմբերի 27-ին ձեր բարձր կուսակալութեան մատու-

ցածս յիշատակագրիս մէջ պէտք եղած կարգադրութիւնները—
փախստականներու խնդիրը լուծելու, միլիիսներու յարձակում-
ները վերջացնելու և ժանդարմներու ապօրինի արարքներուն
սանձ մը դնելու, նաև հայ ազգի կեանքն ու ինչքը, պատիւն ու
իրաւունքը ապահովելու համար առաջարկած էի:

— Եթէ Ալջաւազի հայերը անձի ու պատւի համար ինք-
նապաշտպանութեան դիմելու պարագային չը հետապնդէին, է-
րէրին դիւրը չը պիտի ապաստանէին ու ոչխարի տուրք հաւա-
քող ժանդարմներուն ալ պատահելով իրենց վրա գնդակ չը սքե-
տի բացէր: Եթէ այս կէտը ուշադրութեան առարկա եղած ըլ-
լար, հայեր աւազակ պահպանողի ամբաստանութեամբ անիրա-
ւացի տեղ այդպիսի վայրի վերաբերմունքի չը պիտի արժանա-
նային, որու պատճառով դպրոցն ալ վառած և եկեղեցին ալ տ-
ւերած են: Ասիկա ես ազգին հանդէպ յափշտակութիւն կան-
ւանեմ:

— Այս իրողութիւնները Թիմարի մէջ ընդհանուր խռովու-
թիւն մը յառաջ պիտի բերէին արգէն, բայց այսքան բաւական
չը համարելով, էրզէմ բէյի և իր միլիիսներու Աղջավերան գիւղը
չը բրթալը և իր խօսքին հաւատալով տասն և հինգ հոգի իրեն քո-
վը եկած տտենը գնդակի բռնելը, հայերը սոսկալի գրդութեան
մը կը հասցնէին: Եթէ ուրախստիթ կէտ մը կայ, այն ալ կու-
տակալութեան փոխանորդ Շէֆիկ բէյի խոստովանութեան հա-
մաձայն, էրզէմ բէյի ինքնազուխ կատարելն է:

— Վտանգը այս անգամ ալ հեռացուցինք, և կը յուսամ որ
այս վերջին ամիսներու մէջ եղած զէպքերու համար փորձառա-
կան գաս մը եղած ըլլար: Միայն կը ցաւիմ, որ Շէֆիկ բէյի
հետ եզրակացութեան մը չը կրցանք գալ, միւս կողմէն ալ կու-
տակալութեան բազմազրադութիւնը տեսնելով, ձեզ և վսեմ. Թա-
լաթ բէյին դիմելու պարտաւորեցայ:

— Այս տեղ կատարութեան հանգէպ ոչ մի անգատահու-
թեան առաջ չը գալուն համար պատույս վրա կը վստահացնեմ,
ինչպէս որ ամիսներէ ի վեր մեր անհասական ջանքերով
ապացուցինք: Այս առթիւ կատարութիւնն ալ ներկա կացու-
թեան շրջանին, հայերը ապահովեցնելու համար պէտք եղած մի-
ջոցները ձեռք առնելու է:

— Ա. Ահեհն, առաջ վարկիւն մը շուտ փախստականներու.

խնդիրը լուծելու է, և ասոնք Վան վիլայէթին մէջ ճամբու շինութեան համար գործածելու է, այն պայմանով սակայն, որ զիրենք հետապնդելուն վերջ տալով, խեղոյն ասոնց արածունելու է, որ իրենց երկրագործական գործերով զբաղին:

— Միլիոններուն ժանդարմըրի պաշտօն տալու էր, և որոշեալ տեղերուն մէջ միայն իրենց զէնք տալու էր:

— Էզէէմ բէյը և իւր ընկերները Աղջավերան գիւղին մէջ գործած սպանութիւններուն համար պատերազմական ասեանին յանձնելու է:

— Թիմար գաւառակի մէջ այլեւձ էրէրին, Տրլաշէն, Ատնականց, Բայրակ գիւղերու նիւթական վնասը ընդամէն մօտ 10,000 սակի կառավարութեան կողմէն հատուցանելու է:

— Ժանդարմների ապօրինի արարքները սանձելու է. նաև Շատախ գաւառի Պուժար գիւղին մէջ կատարած բռնութիւնների և սպանւած Պետրոսի հեղինակները գտնելով պատժելու է:

— Չեր վսեմութեան և Նաջի բէյին իմ յարգանքները մատուցանելով, ձեր պատասխանին կսպասեմ:

Վոսմեան

Ձէւղէտը, որը անշուշտ Թիմարի ինչպէս և Ալջաւաղի զէտքերի մասին մանրամասն տեղեկութիւններ ստացած կը լինէր իր փոխանորդից և միանգամայն տեղեակ էր Վանի ու գաւառների կացութեան, միևնոյն օրը հետեւեալ պատասխանը հետագրեց:

13|26 մարտ Ա. Բարդուղիմէոս վանք.

Վոսմեան էֆէնդիին.

Աստուծով վաղը գինւորական կանոնաւոր և մեծ ուժով մը զէպի Վան կուղևորւիմ: Իէպքերուն չը ծաւալելուն համար ձեռմասնաւոր ձեռնարկութիւններէն գոհ մնացի: Կը յուսամ, որ զօրքի հասնելուն պէս, այս կասկածելի վիճակին վերջ մը պիտի արուի: Վան հասնելուն հանգամանօրէն կը տեսակցենք:

Չեր զեկուցումներու և առաջարկներու մասին ըսեմ, որ յանուն հայրենակցութեան, անիրականալի և անկարելի գործերու մասին կը պնդէք, առանց իրականութիւնը նկատի առնելու:

Նոյնիսկ ոչ միայն ձեր ու մեր հայրենակիցներու համար



Ջէ.Ի.ԴէՏԸ — վանի կոնսուլալ

այլ իմ կրկնակի աղքատութիւններուն հակառակ կասկածաւ
վերաբերելով, ձեր հազարաւոր ցեղակիցները ոռւսներու ծրա-
դրով գաղթեցնելով, թշուառութեան մասնեցիք. մինչդեռ Աւր-
պատականի հայերու ապահովութեան համար, այլ կերպ շարժ-
ելու էր: Ժողովրդի վրա ձեր ունեցած ազդեցութիւնը եթէ կա-
ռավարութեան տեսակէտով պորձադրէք, հայրենիքին և ազգին
ճառագոյթիւն մը մատուցած կըլլաք. ասիկա ձեզմէ կսպասեմ,
որ երկսփոխանի և հայրենակցի տիտղոսն ունիք:

Կառավարութեան բռնելիք արդար և ուզղամիտ դիրքին
բոլորովին ապահով եղէք, այսպէս ալ յայտնեցէք ժողովրդին
վերջին դէպքերու մասին բնականաբար մանրագնին քննութիւն
կը կատարենք:

Փոխադարձաբար սէրս կը յայտնեմ. հանդամանօրէն տե-
սակցել, ըսածիս պէս, Վան գալուս կը յետաձգեմ, որչ լերուք:
Վանի կուսակալ Ջէւղէա:

Ահա այս հեռագիրը՝ երկդիմի դարձածքներով ու սպառ-
նալիքներով կհաւ ստեղծելու այն խորհրդաւոր զբուժիւնը, որ
տեսանք:

— Աստուծով վաղը զինւորական կանոնաւոր և մեծ ուժով
մը դէպի Վան կուղևորիմ: Կը յուսամ որ զօրքի հասնելուն պէս,
այս կասկածելի վիճակին վերջ մը պիտի տրւի՝

Դրեց այս խօսքերը Ջէւղէաը իր պատասխան հեռագրի
ճակատին:

Ի՞նչ էր ուղում ասի Ջէւղէաը զրանով. եթէ գործնականի
յանգոյ սպառնալիք էր այդ, ապա ի՞նչ կարիք կար Վոսմեանի
հայրենասիրութիւնը ու ջանքը շեշտել, գնահատել: Եթէ Վոս-
մեանի հայրենասիրութեան ու ջանքերի անկեղծ խոստովանու-
թիւնն էր անուս, ապա ինչմը համար էին սպառնալիքները:
Արդե՞ծք լոկ սպառնալիք էր այդ, նպատակ ունենալով զսպաւ-
պահել հայերին, թէ՛ մի շար զիտաւորութիւն թագնւած էր այդ
խօսքերի տակ:

Այսպիսի են թագրութիւններով մթազնած էր կարճ օրերի
այն շարքը, որ ակեց մինչև Ջէւղէաի գալը:

Մարտի 17-ին՝ յայտնի կղաւ, որ Ջէւղէաը պատերազմի
դաշտից վերագտնուեմ է: Պաշտօնէութիւնը պատրաստեց ըն-
դառաջ ելնելու կուսակալին. զիմաւորելու գուրս կհան նաև հա-
յոց առաջնօրը և մի քանի հայ վաճառականներ: Այս բաւական
չէ, նպատակայարմար դատեցին զիմաւորելու ելնել նաև Վոս-
մեանը և Աբամը:

Այս երկու գործիչների զիմաւորութիւնը միանդամայն այլ
նպատակ ունէր: Ջէւղէաի հեռագիրը—երկդիմի ու սպառնա-
լից—ծանր տպաւորութիւն էր գործել. մի ամբողջ ժողովրդի
գոյութեան պատասխանատուութիւնը ծանրանում էր նրանց վրա:
Նրանք հանդիսանում էին ներկայացուցիչներ այն կուսակցու-
թեան, որը ընթացք էր տալիս ազգային խնդիրներին. և նրանք
բարւոք դատեցին ընդառաջ ելնել, շահիլ Ջէւղէաի սիրտը, մեղ-
մել նրա զայրոյթը և առաջն աննել այն գալիքներին, որոնք

կազմում էին Աէւդէտի սպառնական հեռագրի էութիւնը:

Եւ դիմաւորումը տեղի ունեցաւ. ընդառաջ գնացին մինչև Կուսուբաշ գիւղը, որը մի ժամի ճանապարհ էր Այդհաստանից: Աէւդէտը երևաց ձիու վրա, խաբի գոյնի չէթայական հազուստով, յետեց ունենալով 600-ի շափ ընտիր չէրֆէդներ և երեք թնդանօթ: Սա ինքնին մի սպառնական ուժ էր, սպառնական հեռագրի մի կէտը:

Աէւդէտը իջաւ կառքից, ողջունեց դիմաւորողներին, ինչպէս և Վաւանանին ու Արամին և կառքը նստելով շարժեց: Երան հետևեցին դիմաւորողները մինչև տուն: Այստեղ Վաւանանը տեսնեց առանձին Աէւդէտի հետ, խօսեց երկար և զուրս և կուսայն սպաւորութեան տակ, որ յաջողեց իրեն մեղմել Աէւդէտի վերաբերմունքը, վանել նրանից սպառնալիքը: Ու Վաւանանը հեռացաւ լաւատես:

Երկու օրից յետոյ սկսեցին զատկական տօները. կեանքը միանգամայն խաղաղ անցաւ: Տօների առիթով Աէւդէտը այցելութեան և կուս Վաւանանին և նրա մօտ անցկացրեց երկու ժամից աւելի: Եւ մինչդեռ Աէւդէտը իր բարեկամական երաշխիքներն էր տալիս հայ ժողովրդի ներկայացուցիչներին, քաղաքը մտաւ 800-ի շափ հետևակ զօրք: Այս զօրքը Աէւդէտը վերցրել էր իր հետ պատերազմի դաշտից, որը իբրև հետևակ, երեք օր աւելի էր կորցրել ճանապարհին: Չը նայած այս բոլորին, հայ զեկավար շրջանները չը կարողացան նախատեսել այն, ինչ վարպետորէն ծրագրում էր Աէւդէտը հայերի նկատմամբ:

Աէւդէտը վարպետ էր, վարպետ չարագործութիւնների, դաւադրական ծրագրիւնների և միևնոյն ժամանակ կեղծելու, խաբելու արհեստի մէջ. նա կատարեալ ասիացի էր իր բացասական յատկութիւններով: Այն միջոցին, երբ նա բարեկամական այցելութիւններ էր կատարում հայ զեկավար մարզկանց մօտ, այդ նոյն միջոցին քաղաք էր բերում զինւորական ուժը, դաւադրութիւն էր նիւթում այն մարզկանց դէմ, որոնց այցելութեան էր գնում և ծրագրում, կազմակերպում էր շարդեր, որոնք իրենց նման չէին ունենալու հայ ժողովրդի տարեգրութեան մէջ: Եւ այս ոչ ոք նախատեսել չէր կարողանում:

Թէ որպիսի վարպետութեամբ Աէւդէտը անցաւ իր ծրագրի իրագործման, թոյլ տանք փաստերը խօսեն:

Մարտի 29-ին, կրկնազատակի կիւրակի օրը, Շատախի կենդրոնավայր Թաղի մէջ բողոքովին անսպասելի կերպով ձերբակալւեցին ուսուցիչ, միենոյն ժամանակ զաշնակցական գործիչ Յովսէփ Զօյօեանը և հինգ այլ երիտասարդներ: Այս դէպքը, որ հանդիսացաւ Շատախի հերոսական կռիւների ազդակը, կռիւներ, որոնց մենք կը պատահենք մանրամասն յետոյ, իրարանցում առաջ բերեց ժողովրդի մէջ, երիտասարդները քաշւեցին հրապարակից, ժողովուրդը կասկածների տակ ընկաւ, Թաղածայրի ընտանիքները տեղափոխւեցին կենդրոնական Թաղը, իսկ յաջորդ օրը, որ գործի օր էր, շուկան չը բացւեց. այսպիսով ժողովրդի և կառավարութեան յարաբերութիւնները լարւեցին: Լուրը հասաւ քաղաք, կատարած դէպքի մանրամասնութիւնները հաղորդւեցին Վրամեանին ու Արամին ինքնապաշտպանութեան մարմնի կողմից, իսկ Ջէւղէտին՝ զայնագամի կողմից: Դաշնակցական Յովսէփի ձերբակալութիւնը անսպասելի էր ինչպէս Թաղի, այնպէս էլ Վանի հայերի համար: Մինչև այդ՝ զաշնակցական գործիչները ոչ միայն չէին հալածուում, այլ և կառավարութիւնը նրանց հետ պահում էր, թէկուզ առօրեա, բարեկամական կապ և նրանց միջոցով էր գործադրում իր որոշումները զինուորացուների և պատերազմական տուրքերի վերաբերմամբ: Եւ եթէ այս օր մի զաշնակցական գործող ձերբակալուում էր զաւանուում, անշուտ այդ առանց Ջէւղէտի զիտութեանը չէր, որ կատարուում էր:

Լուրը առնելով, ինչպէս միշտ, այս անգամ էլ Վրամեանը շտապւում է Ջէւղէտի մօտ: Նա զարմանք է յայտնում կատարւած դէպքի համար, զարմանք է յայտնում նաև Ջէւղէտը, այդ չքմեղ ասիացին: Պէտք է բարդութիւնների առաջն առնել, պէտք է մտքերը խաղաղցնել, պէտք է մարդ ուղարկել Շատախ, այս է խօսակցութեան նիւթը, այս է շեշտուում մանաւանդ Ջէւղէտը:

Վրամեանը վերադառնում է և սկսում են խորհրդակցութիւններ ազգային խառը ժողովում: Ռուս-տաճկական պատերազմից ի վեր խառ ժողովը այլ կազմակերպութիւն էր ստացիլ: Ղրաղեցնող խնդիրները քաղմաթիւ էին ու պատասխանատու, այդ պատճառով ժողովի նիստին բացի մշտական Իժ անդամներից հրաւիրուում էին Դաշնակցութեան կողմից՝ Վրամեանը, Իշխանը, Ռամկավարների կողմից Գույումջեանը, Ռուբէն Յովսէփեանը, Հնչակեանների կողմից Գալիկեանը, Թաշատուր Զրբաշ

մանը, վաճառականների կողմից թէրզիպաշեանը և մի քանի այլ մարդիկ: Հայ ժողովրդին վերաբերող բոլոր խնդիրները անա այս ժարմնի քննութեանն էին յանձնուում, մարմին, որը հանդիսանում էր վանի հայ ազգաբնակչութեան բոլոր խաւերի ու հասանքների արտայայտիչը:

Ազգային ժողովի նիստում շարունակ շեշտուում էր յարմարեւու, համակերպելու սկզբունքը:— Պէտք է բաւարարել կառավարութեան պահանջները, պէտք է խուսափել բարդութիւններից, պէտք է խոհականութիւն ունենալ, և վերջապէս պէտք է ժամանակ շահել:

— Պէտք է ժամանակ շահել, — այս շեշտուում է առանձնապէս Գաշնակցութեան ղեկավարների կողմից:

Կացութիւնը ծանր էր, մի ամբողջ ժողովրդի գոյութեան խընդիր էր հրապարակի վրա դրւած. իւրաքանչիւր առիթ կարող էր սոսկալի ջարդեր ստեղծել:

Մակայն այլ էր մտածում վանի երիտասարդութիւնը, այն երիտասարդութիւնը, որը իր խոշոր մեծամասնութեամբ կազմում էր Գաշնակցութեան ուժը:

— Կառավարութիւնը դաւեր է լարում, նա անվերջ դէպքեր է ստեղծում և ջարդերի պատրաստութիւններ է տեսնում, մենք չպիտի խաբւենք, կառավարութեանը վստահիլ այլևս յանցանք է, ինչ լինելու է, թող լինի:

Այսպէս դատում էր երիտասարդութիւնը՝ դժգոհ ղեկավարների լուստես գործնութիւնից:

Եւ մինչդեռ Շատախի խնդիրը յուզում էր մաքերը, թեր ու դէմ կարծիքները բախում էին իրար և երիտասարդական աւիւնը փոթորկւում էր, Ձէւդէտը իր ծրագիրն էր առաջ տանում: Ապրիլ 1-ին Համուզ աղայի գորանոցը տեղաւորւեցին 150-ի չափ չէրքէզներ՝ Ձէւդէտի հետ եկած: Համուզ աղայի գորանոցը, որ գտնւում էր հայկական թաղերի մէջ և որը մինչև այդ դատարկ էր, մէկէն սպառազինւեց: Այս բաւական չէ, Ձէւդէտը խիստ հրաման արձակեց բոլոր զինւորացու հայ մարդկանց ներկայանալ, տալով երեք օր ժամանակ: Ինն մէկ խընդիրը չը լուծւած, նոր խնդիրներ հրապարակ եկան:

— Ջղազրգիւ վիճակ մը ունինք: Երէկ Ձէւդէտը ոստիկա-

Դ նապետ Վաֆիկ բէյի միջոցով թաղերու թաղապետները կանչե-
 լով, խիստ կերպով հրամայեց՝ յանձնել 20—40 տարեկան զին-
 ւորացուները ու 18—20 տարեկան նորակոչները, ինչպէս նաև
 շատ մը յոխորտանքներ ու սպանալիքներ տեղալով Ֆրանսիա-
 ցիներու և ռուսներու հասցէին: Միաժամանակ առանձին ազգա-
 բարութիւնով ալ յայտնեց ժողովրդեան նոր տրւած հրեք օրւան
 ժամանակամիջոցը, յայտնելով, որ ժամանակը լրանալէն հաք
 անասատողները բռնելով, մահուան պատիժի կենթարկին, իսկ
 անոնց ընտանիքները ղէպի Պազասա և Միւրիա կաքսորւին...
 Յայտարարութենէն հաքը անմիջապէս գործի ձեռնարկեցաւ: Կը
 պատէյի գլխաւոր պոզոտայի երկայնքին, երբ տեսայ 120—150
 հոգիի չափ թուրք կանոնաւոր զինւորներ, Ձէղէտ բէյի ղէպի
 Ատրպատական կատարած արշաւանքի ատեն զինակիր չէթաներ
 Համուզ աղայի զօրանոցը լեցւան:

Դ — Ժողովուրդը չափէն աւելի լքւած է կատարւած իբրզու-
 թիւնները տեսնելով: Ախոռիկի, Աւզարիկի, Հասան-Քամբանի,
 Հաղարայի, ինչպէս և թուրք բանակին մէջ գտնուող հայ զին-
 ւորներու շարդէն հաք այլևս ամէն ինչ պարզ է, կուզի նոյն
 վիճակը ստեղծել նաև հայութեան կենդրոնի—Վանի մէջ և Վանի
 հայութեան երիտասարդ շրջաններու մէջ յուզումը և ջղա-
 գրգռութիւնը վերին աստիճանի է: Արդշած ենք ընդառաջ չեթ-
 թայ կառավարութեան և նոյնիսկ առաջնորդարանի կողմէ եղած
 յորդորներուն ու յայտարարութեանց, քանի որ պաշտօնապէս
 ստույգ մահուան զիբկն է, որ պիտի տանին մեզ:

Այս կերպ նկարագրում է զրութիւնը Վանի երիտասարդ-
 ներից մէկը—Պ. Բազրունին իր յուշատետրում:

Եւ զրութիւնը լուրջ է:

Բաղաքական ժողովի խորհրդակցութիւնները վերջ չունին
 նրանք շարունակուում են ժամերով, օրերով:

— Պէտք է Շատախը խաղաղեցնել, պէտք է 400 զինւորա-
 ցուներ տալ, թէկուզ նրանք դահճի ձեռքը մատնւին,—որոշում
 է ժողովը:

Տեսակցութիւնները Վասեանի ու Ձէղէտի մէջ շարունակ-
 ւում են, պահանջներ մէկ կողմից, խոստում՝ միւս:

— Շատախ պէտք է մարդ ուղարկել, պէտք է շտապել:

պնդում է Ջէզեօնը,—կարող են բարդութիւններ ծագել,—պատ-
ճառարանում է նա:

Մարդ ուղարկելու հարցով դրադում է նաև ղեկավար շըր-
ջանը, մանաւանդ որ Շատախից տեղեկութիւն են տւել, որ եթէ
Յովսէփը չարձակւի, քաղաք փոխադրելու միջոցին կը յարձակ-
ւեն պահակի վրա և կը խլեն Յովսէփին:

Յուզում դրութեան մէջ գլորւում է ապրիլի 1-ը, 2-ը և
զալիս է ապրիլի 3-ը. այդ օրը որոշում է մարդ ուղարկել Շա-
տախ. յարմար անձնաւորութիւն համարւում է Իշխանը, այդ է
ցանկացել նաև Ջէզեօնը, որի նպատակը ոչ ոքի յայտնի չէ:

Ապրիլ 3-ի երեկոյեան դէմ Իշխանը ճանապարհ է ընկնում
դէպի Շատախ. Իշխանը—շրջաններում անուն հանած զինւորա-
կան ուժ էւնա մինակ չէ, իր հետ վերցրել է Վանի երիտասար-
դութեան երեք ընտիր տղաներ, զրանք են՝ Պօղոս Թիւթիւնջիա-
նը—Գօթօթը, Վահան Խոանհանը—հին օրերի յեղափոխականը և
Միհրան Տէր Մարգարեանը—Թաղեցի:

Իշխանի հետ է նաև Վանի ոստիկանապետը—Վաֆիկ բէյը
իրև վստահելի տաճիկ և երեք ոստիկաններ: Ութ հոգի, չորս-
չորս երկու կողմերից—բոլորն էլ սպառազինւած:

Եւ շարժւում է խաղարար մարմինը մտախոհ: Ոչ ոք չի
հաւատում այդ առաքելութեանը. չեն հաւատում մանաւանդ Իշ-
խանին ուղեկցող երեք երիտասարդները — Գօթօթը, Վահանը,
Միհրանը. նրանք նոյնիսկ հակառակ են այդ առաքելութեանը,
բայց զնում են կատարելու պարտքը, որ զրել է նրանց վրա
կուսակցութիւնը:

— Մնաք բարեաւ, ընկերներ, այս անգամ էլ թաքեցին
մեզ,—այս խօսքերն են արտասանում նրանք մի ծանր նախա-
զգացում սրաներին, բաժանւելով իրենց ընկերներից:

Շատախը հեռու է, խաղաղարար առաքելութիւնը կանդ է
առնում Հայոց-ձորի Հիրճ գիւղում, ուր ապրում են 30 տուն
հայեր և 70 տուն քիւրդեր: Հայոց-ձորում գուտ հայաբնակ գիւ-
ղերն են Կեմը, Անզղը, Կզլտաշը և այլն: Բայց Իշխանը գերադա-
սում է իջնել Հիրճ. նախ՝ որ այդ գիւղի տասանորդի տուրքը
վերցրած ունի կապալով և յաճախ է այդ տեղը լինում, երկրորդ-
իբ բարեկամն է տեղացի հարուստ Բեաբիւօօղլի Ռաշիդը, որի
երկու յարկանի տանն էլ իջնում է Իշխանը իր ընկերներով:

ստիկանապետով ու ստիկաններով:

Եւ մինչդեռ Իշխանը իր ընկերներով զէնքերը վար զրած վայելում էին բարեկամ Ռաշիդ աղայի հիւրատիրութիւնը, զարկում է դաւադրութեան ժամը. ներս են ընկնում զեռ ևս Վանից նրանց հետևող չէրքէզները և գնդակահար ու սրախողխող ընկնում են Իշխանը իր ընկերներով ու խաղաղարար առաքելութիւնը կատարում է իր միտման, գոհ է գնում արևելեան մի ահօրինակ դաւադրութեան:

Ընկնում են չորս երիտասարդներ, հայ ժողովրդի դատին նւիրւած չորս կեանքեր. զրանով սկիզբն է դրւում Ձէւզէտի արիւնոտ ծրագրին, զրանով սկսւում է ահօրինակ ոճիրների շարքը, որոնք գալիս են կազմելու հայ ժողովրդի տարեգրութեան սոսկալի էջը:

Բացւում է սոսկալի գիշերին յաջորդող առաւօտը. գիշերի երբ կատարւեց նենգ դաւադրութիւնը: Վանը տեղեկութիւն չունի կատարւած ոճիրի մասին. նա անտեղեակ է. անտեղեակ են նաև Վոսմեանն ու Արամը: Բայց անտեղեակ չէ դաւադիր Ձէւզէտը, ոճրագործութեան լուրը ամենից առաջ հասել է նրբան: Ծրագրի մի մասը արդէն իրագործւած է և դաւադիր Ձէւզէտը անցնում է իր ծրագրի յաջորդ կէտերի գործադրութեանը: Ուստի դեռ լոյսը նոր բացւած, նա իր մօտ է կանչում Վոսմեանին ու Արամին: Եւ որպէսզի նրանք, ապրելով ջոկ թաղերում, միմիանցից անտեղեակ զան ու ընկնեն իր ծուղակը՝ միաժամանակ Վոսմեանին կանչում է Սաշ-փողոցի պօստատան հեռախօսի միջոցով, իսկ Արամին՝ Արարքի ստիկանատան հեռախօսի միջոցով:

Վոսմեանը ժամանակ չի կորցնում, հեռախօսի մօտից վերադառնալով տուն, հանում է ծոցի եղած բոլոր թղթերը, սեղանի վրա թողնում, գրում է հետեւեալ երկտողը:

Արամ, կուտակալը ինձ կանչեց, ևս գնում եմ, եթէ քեզ էլ կանչի մի գար:

Եւ կառք նստելով իջնում է քաղաք, ու այլևս չի վերադառնում:

Արամը ստանում է Վոսմեանի երկտողը այն միջոցին, երբ նորաչէնի ստիկանատան մի ստիկան նրան յայտնում էր Ձէ-

զէտի հրաւերը: Արամը չը գնաց, Վոսմեանի երկատոր փրկեց)
նրա կեանքը:

— Իշխանը իր երեք ընկերներով Հիրճի մէջ դաւադրութեամբ սպանւած է:

— Վոսմեանը խարերայութեամբ Ջէզդէտի կողմից կանչւած և վար է գրւած:

Ահա այս երկու սոսկալի լուրերը կայսածալի արագութեամբ միաժամանակ տարածեցին Վանի մի ծայրից միւսը: Առաջի վայրկեանը մի շանթ էր, որ հարւածեց ու անցաւ: Երկրորդ վայրկեանը մի ճիշ էր, որ արձակեց Վանի հայութիւնը, ճիշ շանթահարւած կրճճի:

— Գաւազրութիւն, — աղաղակեց վանեցին ու վաղ տեց փարելու գէնքին: Նա անսպասրաստ չէր, ամիսների աշխատանք էր գործ դրիլ գիմաւորելու անակընկալներին, և գիմաւորեց:

Երթեկեկութիւնը քաղաքի ու Այգեստանի մէջ ընդհատեց, շուկաները փակեցին, յարաբերութիւնը կառավարութեան ու ու հայերի մէջ խզեց. ծայրաթաղերի հայ ընտանիքները սկսեցին տեղափոխուիլ կենտրոնական մասերը, իսկ երիտասարդութիւնը անցաւ գիմազրութիւն ցոյց տարու աշխատանքներին:

— Շուտով եւ ու գեոն ընկաւ կուսակցութեան խումբերուն մէջ, ամեն անոնք, որք բաշխւած էին տասնեակներու վրա, շուտով զինւած իրենց զիրքերը գնացին: Իշխանի սպանութեամբ և Վոսմեանի ձերբակալութեամբ անազանքը տրեւեցաւ: Խմբապետ Միսակի խումբը, որ մեր ընկեր ողմեցի Շահէնինց տունը կը կենար Մեծ-Քէնտրչիի վրա, շուտով կաղմ ու պատրաստ անցաւ այգիներուն միջով, կարևոր գիրք մը բռնելու համար: Դաշնակցութիւնը շուտով լուր դրկեց միւս կուսակցութիւններուն, որպէսզի անոնք ալ պատրաստ ըլլան պատահականութիւններու համար. և մինչև իրիկնապահին արդէն բոլոր կարևոր գիրքերը գրաւեցան հայ խումբերուն կողմէն: Սղգայի մեծ պողոտային երկայնքին մենք ունեցանք 5—6 տասնեակներ, որք կարևոր գիրքերու մէջ կը կենան: Նոյնը նաև Արաբուց շրջաններու մէջ: Վերջին պահուն իմացանք, որ կուսակալութիւնը ցանկացած է Արամն ու պօլպարացի Գրիգորն ալ ձեռք ձգել սակայն անոնք մերժած են կառավարութեան նենդամիտ:

հրուէրը: Եղած կանխապատրաստութիւններէն և տեղի ունեցած
հրողութիւններէն սարսափած, ծայրաթաղերու հայ ընտանիքնե-
րը շուտով կենդրոնները կը փոխադրւին:

Նկարագրում է դրութիւնը նոյն Բազըրունին:

Եւ մինչդեռ Վանը այս ետուղիով մէջն էր, կային մարդիկ,
որոնք դեռ հաւատում էին բանակցութեան ելքին, Աէւդէտի մե-
ծահոգութեանը: Վասմեանի ձերբակալման լուրը առնելով, Աէւ-
դէտի մօտ գնացին առաջնորդ Եգնիկ վարդապետը, ինչպէս և
վաճառականներ Գէորգ Ծիտէշեանը և Աւետիք Թէրզիպաշեանը:
Քայց այս անգամ արդէն Աէւդէտը բոլորովին այլ լիզու բանե-
ցրից, նրա մէջ խօսում էր սպառնական տօնը, հայ երեկիները
յսցին այդ սպառնալիքը և վերադարձան ամէն բան վերջացած
համարելով:

Ապրիլ 5-ի առաւօտ Աւանց գիւղից—նաւահանգիստից—
լուր հասաւ, որ երէկ երեկոյան աւելի քան 50 ժանդարմներ
հսկողութեամբ Վասմեանին Աւանց բերելով նաև նստեցրին ու
տարան, ուր, յայտնի չէ:

Իշխանն ընկաւ, Վասմեանը քշւեց, Արամը մինակ մնաց:
Քայց նա մինակ չէ, նրա հետ է Վանի երիտասարդութիւնը,
Ռամկաւար և Հնչակեան կուսակցութիւնները, նրա հետ է Վանի
ամբողջ ժողովուրդը: Ժողովուրդ, որը որքան էլ կուսակցամոլ,
խաղաղ ժամանակ անհաշտ մասերի բաժանւած, Քայց նեղ բո-
ւլէին համախմբւող, մի կուռ դիմացկուն շղթա կազմող:

Հասաւ նեղ բուլէն և Վանի ժողովուրդը հրապարակ եկաւ
իրրև մի կուռ բանակ: Պատիւ նրան:

Անվերջ ժողովներից, որ տեղի են ունենում, ընտրում են
ինքնապաշտպանութեան, դինական, հայթայթիչ և այլ մարմին-
ներ, նշանակում են շրջանապետներ ու խմբապետներ, կարգի
են բերում դիրքերը, կեդրոնացնում են պաշար, օովորական
տեքը գաղարիչ է, ճակատամարտի է պատրաստում Վանը:

Բնած չէ նաև Աէւդէտը, այդ դաւաղիքը. նա փորձեր է ար-
նում հայկական կենդրոններում զինուորական ուժեր պահպան
յարձակման կէտեր ունենալ և ապա սկսել:

— Քիչ առաջ «Աշխատանք»ի խմբագրատանն էի, այն տեղ

եկառ ամերիկեան միսիօնար ասքարը Ըշըր, որ պ. Արամին կան-
չելով, յայտնեց Աէւդէտի կամքը, — վերջինս առաջարկ դրած է
50 թուրքական զինուորի պաշտպանութիւն միսիօնարական հաս-
տատութեանց: Խորհրդակցութեան ներկայ էին Վանի հարուստ-
ներէն յանգուզն Միմէօն ազա Թիւթիւնջեան, Երամեանի ուսու-
ցիչներէն Մամբրէ Մկրեան և դաշնակցական հին զինուոր Կայ-
ծակ Առաքել: Ասոնք բոլոր միահամուռ պնդեցին, որ ասքարը
Ըշըր երբեկեցէ չը համաձայնի զինուոր վերցնելու, որովհետև այդ
պարագային կարևոր և իշխող դերք մը կը գրաւի և ահագին կո-
րով պէտք կըլլայ վատնելու՝ զանոնք դուրս հանելու համար:
Մասնաւորապէս Մկրեան և Թիւթիւնջեան շատ ծանր խօսեցան,
ակնարկելով 1896-ի սև օրերը, երբ ամերիկեան հին և փորձա-
տու միսիօնար մը — ասքթօր Ռէյնօլդս իրեն ըով ապաստանող
հայերը կուսակալութեան ձեռքը կը յանձնէր: Ի վերջոյ Կայծակ
Առաքել և Արամ եզրափակելով յայտարարեցին, որ հայեր չեն
թոյլատրեր թուրք զինուորներու մուտքը հայկական շրջաններու
մէջ, մասնաւորապէս ամերիկեան և գերմանական շրջանակնե-
րուն, ուր մեծ քանակութեամբ մթերքներ ամբարեւեցան այս եր-
կու օրը: Տօքթօր Ըշըր մեկնեցաւ, նա կուսակալին երթալով
պիտի յայտնէ, որ հայեր թոյլ չպիտի տան իրենց հաստատու-
թեանց մէջ զինուոր լիցնեն:

Յիշատակագրում է նոյն Բագրուսին:

Եւ մինչդեռ այս բանակցութիւնները տեղի կուեննային,
Այգիստանից դէպի Վարազ բաց դաշտի մէջ տաճիկ զինուորներն
ու միլիսները խրամատներ էին պատրաստում: Այս տեսնում
էին դէպի դաշտն ընկած գիրքերի տղաները և նրանք էլ իրենց
կողմից պատրաստութիւններ էին տեսնում: Մի խօսքով
կողմէ կողմերն էլ պատրաստում էին մի ահաւոր կուռի, որք
սակայն ուշանում էր: Ի՞նչու, ոչ ոք չը գիտէր:

Բացեւեց ազրբիլի 6-ի առաւօտը, երկուշաբթի, նշանակալից
մի օր, գործի ու աշխատանքի օր է, բայց ոչ ոք գործի չը գնաց
և շուկա չիջաւ: սակայն անօրինակ շարժում կայ, շարժում, որը
այս կերպ է նկարագրում նոյն Բագրուսին:

— Առաւօտ է, փողոցներու մէջ եւ ու դեռ կը շարունակ-
աի, ճաշէն կտք մեր տան կարգ մը կարևոր իրեղէններ ու ան-

կողիներ մօր-եղբորանցս թագստոցը զհետեղիչ էտք՝ հանգիստ ը-
րի: Այս իսկ միջոցին դաշնակցական խումբերու հրամանատար
պուլղարացի Գրիգորէն հրաման ստացանք Մեծ-Քէնտրչիէն վեր:
Պէլէքեան Աւանէսինց տան դիրքը պահելու, Համուզ-աղայի եր-
կու տուներուն և զօրանոցին կողմէն ըլլալիք որեւէ յարձակում
արգիլելու նպատակով: Շուտով մեր դիրքը զրկւեցան իբրև օ-
ժանդակներ աւանցի Արէլը իր 5—6 ընկերներով, որք այս զի-
շեր Աւանցէն գալու միջոցին ընդհարում մը ունեցեր էին Գեաղ-
կէ փոսին քով թուրք պահակներու հետ, և փախցուցեր էին դա-
նոնք: Քիչ ետք խմբապետ Օհանէսն ալ եկաւ. անոր ցուցմուն-
քով Պէլէքեան գիրքի տանիքի և երկու սենեակներու հիւսիսա-
յին պատերուն մէջ, ճիշդ Համուզ-աղայի տուներուն և զօրանո-
ցին զէմ ու զէմ դիրքի ծակեր բացինք, ու միաժամանակ կարճ
մը մարդոց միջոցով թէլիւսներով լիցուն հողեր զհետեղեցիք
պատուհաններուն մէջ, դիրքերը ապահովելու համար:

— Քիչ ետք մեզի այցելութեան եկան նորակազմ «Կարմիր
Պաշի» ուսանող ընկերներ՝ Գրիգոր Շիրօսան, Արտաշէս Սաֆ-
րաստեան, Վահրամ Թէրզիպաշեան, Ասքանազ Արարբեցեան՝ բո-
լորն ալ զարոցական պատանիներ, որք ուսերին կախած էին մէկ
մէկ պայուսակ զեղորայքով լեցուն և նախապէս կարմիր խաչի
գասընթացքներուն հետեւած էին: Անոնց մեկնումէն ետքը եկաւ
վանցի հայգուկ Թէոսը իր թոռուցիկ խմբով՝ հետադատելու հա-
մար մեր դիրքերը, սա իրեն յատուկ անուշ լեղւով մեզ խրա-
խուսեղէ ետք մեկնեց: Այլևս փողոցներուն մէջ ողկորութիւնը
ընդհանուր է, մեր խումբեր և անհատ ընկերներ զինուած վիճա-
կի մէջ հոս ու հոն կը փոխադրւին: Վերջին երեք օրւայ ըն-
թացքին թուրքի երես տեսած չենք:

Ահա այսպիսի փոթորկոտ, միևնոյն ժամանակ հոգեպնդի-
աշխատանքների մէջ վանի հայ ժողովուրդը գլորում էր ապրի-
լի 6-ի օրը, նա գնում էր վերջին հանգիստն առնելու խորհրդա-
ւոր գիշերին, նա գնում էր դիմաւորելու ահաւոր առաւօտին:
Նաև փառաւոր առաւօտին, որը գալիս էր կազմելու հայ ժողո-
ւրդի տաքեզութեան հոյակապ էջերից մէկը:

Այստեղ մենք մի փոքր կ'ընդհատենք մեր պատմութիւնը
քաղաքում պայթած կռիւների նկատմամբ և կանցնենք գաւառ-
ները, տեսնելու թէ ինչեր տեղի ունեցան այն տեղերում:

ԱՀՄԻՈՐ ԶԱՐԴԵՐԸ

Ձէւզէալը պատերազմի գաշախց վերադառնալով, իր հետ բերեց մի ահաւոր ծրագիր, այդ ծրագիրը վասպուրականի հայութեան բնաջնջման ծրագիրն էր: Այժմի հայ մարդ 10 տարեկանից վեր կենդանի չը պիտի մնար, նա լինէր ազատ մարդ կամ զինուոր—ամալի, բոլորը պիտի ընկնէին գնդակահար ու սրախողխող, իսկ կանայք, օրիորդներ և փոքրիկ աղաներ ու աղջիկները պիտի բաժանուէին մահմեդականների վրա, իւրաքանչիւր հաւատացեալ կարող էր անարգել գերել, առեանգել իր ուղած հայ կիներ, օրիորդը և երեխան:

Հայերի բնաջնջման այս ահաւոր ծրագիրը թիւադրւած էր Պօլսից, բայց Պօլսին էլ թիւադրել էին Ձէւզէալը և վանում գործող իթթիհատական կուսակցութեան պատկանող անհատները:

Երիտասարդ թուրքերի կառավարութիւնը աւելի յարմար ըսպէ չէր կարող գտնել ոճրագործ սուլթան Համիդից աւանդ ստացած հայաջինջ քաղաքականութեան ծրագիրը իրագործելու: Նրա համար աւելի անպատասխանատու շրջան, քան այժմ լինել չէր կարող: Ամբողջ Եւրոպան զբաղւած էր պատերազմով, արեւմտեան պայքարը բոլորին էլ շքեցրել էր. ո՞վ ժամանակ ու հնարաւորութիւն ունէր հայերով զբաղւելու, քանի որ իրենք կրողական պետութիւնները հազիւ կարողանում էին իրենց զբաղւել պահել: Այս լաւ գիտէր տաճիկ կառավարութիւնը և նա իր ձեռքերը միանգամայն ազատ էր զգում:

— Եթէ թուրքերը ուզէին հայերը մէջտեղէն վերցունել, կրնային իրենց այս նպատակը իրագործել այնպիսի առեւտներ՝ երբ ոչ ոք կը համարձակէր անոնց գործին խառնուել:

Ահա այս ոճը գործածեց Պօլսի «Թուրան» թուրք թերթը գեո ևս դեկտեմբերի ամսին իր մի խմբագրական յօդուածում, որի վերնագիրն էր «Ռուսիա և հայեր»:

— Այո, եթէ թուրքերը ուզէին հայերը մէջտեղէն վերցունել, կրնային անարգել իրենց այս նպատակը իրագործել և ոչ ոք կը համարձակէր անոնց գործին խառնել: Այսպէս հաւատացած էր երիտասարդ թուրքերի կառավարութիւնը և գործի էլ անդաւ:

Հայերի բնաջնջման ահազանգը տրւած էր, բայց առայժմ միմիայն վասպուրականի վերաբերմամբ, ինչպէս կը տեսնենք յետոյ:

— Վանը իր շրջականերով ապստամբութեան դրօշակ պարզելու պատրաստութեան վրա է,— ասել էր Ջէզդէտը: Վրասամեանն ու Արամը գաղտնի բանակցութիւնների մէջ են Պարսկաստանի կամաւորների հետ, այդ հաստատող մի գրութիւն, որ բռնւած է սահմանի վրա մեր ձեռքին է,— կը կնիւ էր քանիցս Ջէզդէտը:

Այս բոլորը հաղորդել էին Պօլիս և ոճրագործ Պօլիսը արձակել էր հայերի բնաջնջման վճիռը: Թալաաթ-էնվէր-Սանդերս — Սանդերս-էնվէր-Թալաաթ, ահա ոճրագործ թուրք-գերմանական այն երրորդութիւնը, որ արձակել էր ոճրագործ վճիռը:

Այս վճռի իրագործման ծրագրով ահա վերադարձել եք Ջէզդէտը պատերազմից:

Սկզբում թուում էր թէ Ջէզդէտը ամբողջապէս զբաղւած է Վանով, գաւառները նրան չեն հետաքրքրում: Մինչդեռ այն միջոցին, երբ նա շարունակում էր իր յարաբերութիւնները հայ ղեկավար շրջանների հետ ու այցելութիւններ էր կատարում, այդ նոյն միջոցին, նա լուրջ կերպով զբաղւած էր գաւառներէ հայութեան բնաջնջման ծրագրով: Այսպէս, օրինակ, գաւառի կարեւոր տեղերում կօրտօմներ էին հաստատուում, քիւրդ ցեղապետներին հրահանգներ էին ուղարկուում պատրաստ լինել իրենց մարզկանցով, իսկ գալմաղամները ստանում էին գաղտնի գրութիւններ ջարդերի մանրամասն ծրագրով:

Թէև ահաւոր ջարդերի ծրագիրը ասած էր տարւում մեծ գաղտնապահութեամբ, այնուամենայնիւ մի քանի շրջաններում շնորհիւ բարեկամ քիւրդերի զգուշացումների, գաղտնիքը յայտնի

Ազգաւ, թէն այդպիսի ջարդ ոչ որ չէր երեակայում:

Այսպէս օրինակ:

Հայոց-ձորի վարի Պժնկերտ գիւղացի Աւզալ աղայի Համ-
զէն, որը Ջէւգէտի հետ եկած չէրքէզնիքի ու չեթանիքի մէջն էր
դռնուում, երկու օրով արձակուող ստացած և տուն դառնալիս
գիւղի գիւղի Չլան կոչւած ջրաղացներում պատահեց իր ծանօթ
Քրէմիքի գիւղացի Ահարոն Տ. Մարտիրոսեանին: Խօսակցութեան
ժամանակ նա զգուշացրեց իր ծանօթին հետեւեալ խօսքերով:

— Հայեր, ձեր գլխի ճարը տեսէք, Ջէւգէտ փաշան Պարս-
կաստանից եկել է ձեր բոլոր մեծամեծներին կոտորելու:

Երկրորդ օրինակ:

Շատախի Գոմեր գիւղացի մի քիւրդ ժանդարմ, անունը
Քէնօ, որը գեկտեմերին Սիւտկին գիւղում հայերի կողմից 10-ի
ջափ ժանդարմների հետ ձերբակալեց և ապա Շատախի գործիչ
Ազատի ձեռքով ազատուեց, Շատախի դէպքերի նախօրեակին հե-
տեւեալ նամակը գրեց Ազատին:

Սիրելի բարեկամ Ազատ,

Գուք ինձ մէկ անգամ լաւութիւն էք արած, ես չեմ մոռա-
նայ այդ և այս երկու տողով կուզեմ ձեզ իմացնել: Այս օրեր
ձեզի աւելի լաւ պահէք: Գայմազամը վաղը պիտի սկսի հայե-
քից զինուոր հաւաքել, և իմանալով որ հայերը դօրք չը պիտի
ստան, կառավարութիւնը պառճատ պիտի համարէ այդ և սկսի
հայերին կոտորել:

Լազգին^(*) այժմ 30 հոգով Հայոց-ձոր կսպասէ: Վալի բէյ^(**)
հրահանգած է մնալ այնտեղ, մինչև որ Շատախի խռովութիւն-
ները սկսին և ապա դայ իր հօր վրէժը լուծելու: Կուր համար
զանչւած և այստեղ հասած են արգէն եզգինանցի և ալանցի ա-
շիբէթները, Խուճարի պահակախումբն ալ նոյն նպատակով չետ
կանչւած է: Լուր աւած են նաև խալիլանցիներուն, խաշտանցի-
ներուն, Բէրվարի և Նորտուղ, որ այնտեղի հրացանաւորներ ալ
զանա երբ բոլորը հաւաքեն, այն ժամանակ կուրը կսկսի: Այս-
տեղի միլիաններից զատ մօտակայ քիւրդ գիւղացիներուն ալ զէն-

^(*) Նորտուղի շքանի գրուցիների ցեղապետ պանւած աւտղակ Շաքրէ-
ազգան:

^(**) Կուտակալ Ջէւգէտի մասին է:

քեր բաշխեցին: Չիր հանդէպ իմ կրթատաղիսութիւնը կատարելով կը խնդրեմ, որ մեզանից ու Աստուծուց զատ ոչ որ չիմանայ իմ նամակ գրելը:

Գոմերցի Բէնօ

Երբորդ օրինակ:

Բերկրի գաւառի Փիսօղլան գիւղացի քիւրդ նուրօն, որը միժամանակ Դաշնակցութեան հաւատարիմ սուրհանդակներինց մէկն էր և մօտիկ բարեկամ էր Արճակի գաշնակցական զործիչ Շիրին Գալոբեանին, ապրիլ 3-ին Սառակոնիս զալով հետեւալը հազորդեց Շիրինին:

— Երէկ Բերկրիի գայմագամ Ջիւս բէյը իր մօտ կանչելով գիւղերի մութխարններին (տանուտէրներին) և սպիներին իրար առ հրամայեց, որ եթէ հայերին սկսեն կոտորել, ոչ մի մօհմեդական չը համարձակի իր մօտ հայ պահել կամ պաշտպանելը նոյնիսկ եթէ հայերը ուզեն հաւատափօխ լինել: Ով այս կարգադրութեանը հակառակ գնայ, հայերի վիճակին կենթարկելու:

Ահա մտերմական այս զգուշացումները գալիս էին ապացուցելու, թէ ինչ անաւոր մի ջարդ ծրագրուում էր գաւառներում: Գաւառներից այս տեղեկութիւնները հազորդուում էին քաղաք, զեկավար շրջաններին, բայց նրանք այնքան էլ կարևորութիւն չէին տալիս այս տեղեկութիւններին: Նրանք դրադուում էին քաղաքում կատարւած դէպքերով, իսկ այդ դէպքերը այնքան շատ էին և արագօրէն միմիանց յաջորդող, որ նրանք մամանակ ու հնարաւորութիւն էլ չունէին գաւառներով դրադելու և կարելի է ասել, գաւառները մոռացւեցին, նրանք թողնուեցին բողոքի կամքին, մանաւանդ երբ տեղի ունեցաւ Եշխանի գաւառ գրական սպանութիւնը իր երեք ընկերներով և Վառսեանի ձերբակալումն ու արքորը:

Գաւառներն ու շրջանները մնացին առանց զեկավար ձեռքի, առանց հրահանգների և նրանք դարձան սրտմութեան ու անհաւոր ջարդերի վայր. ջարդ, որպիսին չէր տեսիլ իր գոյութեան ընթացքում հայ ժողովուրդը: Ընդհանրապէս է, որոչ տեղերում դիմադրութիւններ կզան, որոչ անհատներ, խմբակներ ու խմբեր կուրցին:

զարկեցին ու քաջարար ընկան, ինչպէս մենք այդ կը տեսնենք յետոյ, քայց շրջանների մեծագոյն մասը սրի քաշուց, դնդակահար եղաւ՝ անակընկալի դալով, առանց զիմադրութեան:

Մարդկանց տանեակներով, հարիւրներով ու հազարներով դաւադրութեամբ հաւարում էին դատարաններում ու բանդերում, եկեղեցիների, դպրոցների ու տների մէջ, ապա թևերը կապկալելով շղթա-շղթա, շարան-շարան քշում էին հեղեղատանների մէջ, գետաբերաններում, ծովափերը և մէկէն համազարկերի կապում, սրախողխող անում. և ապա հողածածկ անում, զեափ հոսանքին տալիս, ծովը նետում, հորերը լցնում, յաճախ և խաբոյկներ կազմում գիակները այրում:

5-67

Այս ահաւոր ոճիրի օրը որոշւած էր ապրիլ 6-ը, Աւետման տօնի նախընթաց օրը: Ծիշտ է, մի քանի տեղերում մէկ օր առաջ սկսեց և մի քանի տեղերում էլ մէկ երկու օր յետոյ սկսեց, անհնարին լինելով բոլոր տեղերում միաժամանակ սկսել, սակայն այս գծովային ոճիրը գաւառական գլխաւոր կեդրոններում, քաղմամարդ գիւղերում և հայաշատ շրջաններում տեղի ունեցաւ ապրիլի 6-ին:

Թէ ինչեր կատարեցին Վասպուրականի մէջ ապրիլ 4-ից սկսած աւելի քան մէկ ամսուայ ընթացքում, որքան մարդկային հարիւրաւորներ ու շարքեր ընկան, կիներ ու օրիորդներ առեանդեցին, հրեխաներ գերեւցին, կենդանիներ ու կայքեր կողոպտեցին և տներ ու գիւղեր հրդեհեցին ու աւերեցին, անկարելի, անհնարին է մի առ մի նկարագրել: Հարկաւոր են հարիւրաւոր դրիչներ, հազարաւոր պատմողներ, քաղմահատոր էջեր այդ բոլորը գրի առնելու, արձանագրելու և աշխարհի առաջ դնելու, որ աշխարհը սոսկար, որ մարդկային երևակայութիւնը մթագնէր, որ աիեզերքի խիղճը ցնցւէր:

Տեղք.

Մեր գրիչը թոյլ է, անզօր, անկարող այդ ահաւոր սոսկումներիը նկարագրելու, ահաւոր սարսափները բաւարար չափով մարդկանց առաջ պատկերացնելու:

Ուստի մենք կը բաւակոնանանք մի քանի տեսարանների նկարագրութեամբ, մի քանի պատկերների գծագրութեամբ և մի քանի սկանառեսների գրուցագրութեամբ, փորձելով գէթ աղօտ կերպով պատկերացնել այն անցքերը, որ տեղի ունեցան հայաբնակ շրջաններում այդ դաժան օրերին:

Ահա մի քանիսը այդ պատկերներէց:

1

Դէպքը տեղի է ունեցել Հայոց-Ձորի Հիւրճ գիւղում ապրիլի 5-ին, կիւրակէ երեկոյեան:

Հիւրճում ապրում են 70 տուն քիւրճեր և ընդամենը 30 տուն հայեր: Այստեղ վերջին ամիսներում գրեած էր 8 ժանդարմներէց բաղկացած կորդօն:

Դիւզի արևմտեան ծայրում, թաղից դասած, իրար դէմ ու դէմ գտնուում են երկու շէնքեր, զբանցից մէկը հայոց կէտեղեցին է՝ դէպի հիւսիս ընկած, միւսը՝ Քեպրիմ օղլի Մաշիգ աղայի տունն է՝ դիւզի միակ երկու յարկանի և ընդարձակ շէնքը: Վերին յարկում գտնուում է ընդունարանը, տակի յարկում՝ բշտեմարանն ու երկարուկ ակոռատունը: Մաշիգ աղայի տունը հանդիսանում է Հիւրճի գղեակը: Եկեղեցու և գղեակի մէջտեղ ընկած է մի հրապարակ, որի կենդրոնում գտնուում է մի ընդարձակ հոր:

Դիւզի մէջ մի տան առաջ շրջապատել են մի խումբ կանայք՝ բոլորը գունատ, վշտոտ, աչքերի փայլը կորցրած: Իրանց մէջ են այդ տան երեք այրիացած կանայք՝ 50 տարեկան Եագուժը և նրա եղբու հարսները—Գոհարն ու Գուլօն: Դա Մելիքոյի տունն է, այդ անից սպանւել են երեք աղամարդ՝ ինքը Մելքոն-Եագուժի ամուսինը և երկու ամուսնացած աղաները—Աւետիան ու Դասպարը: Մելքոնի երրորդ աղան 25 տարեկան Սեդրակը կամաւոր է Անգրանիկի խմբում և սիլ գիտէ կենդանի վերադառնայ թէ ոչ: Տանը մնացել են երեք այրի կանայք, 6 փոքրիկ սրբեր և իբրև տանու աղամարդ մի հրաշքով ազատւել է Մելքոնի չորրորդ աղան, 15 տարեկան Դաւօն: Այս պատկերն է ներկայացնում Հիւրճի խրաքանչիւր հայ ընտանիք—բոլոր աղամարդիկ սպանւած են և մնում են կանայք ու երեխաներ:

Արցունքն աչքերին, վշտոտ տունով և յաճախ ձեռքերը դէպի Մաշիգ աղայի տան կողմը դարձրելով շրջապատող կանայք անպաճոյճ խօսքերով իրենց յատուկ բարբառով վաշ ու վուշով պատում են երեք ամիս առաջ կատարւած եղևնի ժասին հետևեալը:

V — Շարաթ առաւօտ ապրիլի 4-ին սև օր ծագեց մեր վրա

Մեր դրացի քերպերը դեռ լոյսը չը բացւած փսփսուելով սկսեցին պատմել, որ Ռաշիդ աղայի տան մէջ քաղաքից եկած չէրքէզներէ ձեռքով Իշխանը, իր երեք ընկերներով սպանուել է: Դրա հետ միաժամանակ կօրդօնի ժանդարմները և քաղաքից եկած չէրքէզները փողոցները դուրս գալով հրամայեցին, որ ոչ ոք զիւղից դուրս չերթայ: Սարսափը բոլորիս կտխեց, երկխղից զլուխ չէինք կարողանում դուրս հանել և միմիանց հետ լուսում էինք փսփսուքով: Մեր տղամարդիկ նոյնպէս անխղից դուրս չհեկան և զիւղից սօք դուրս չը դրին: Ամբողջ օրը անցեացելով ինչպէս բանդի մէջ, շարունակ ժանդարմները չբջում էին վողոցներում և հսկում էին տներէ վրա, այդ օրը նրանք նման էին կատաղած զազաններէ: Գիշերը վրա հասաւ— ծանր, հոգեմաշ սարսափոտ գիշերը: Մենք այդ գիշերը լուսացրինք բաց աչքերով, ախ ու վախով, Իշխանի ու նրա ընկերների սպանութիւնը համակել էր բոլորիս:

— Բացուեց կիրակէ օրւայ առաւօտը, սե լինէր այդ կիրակէն, ժանդարմներն ու չէրքէզները դուրս եկան զիւղի մէջ և սկսեցին մեր տղամարդկանց հուաքել տանել Ռաշիդ աղայի տունը: Բոլոր տղամարդկանց հուաքեցին, ոչ ոք չը պրծաւ ժանդարմների ձեռքից, աղաւուսեցին մի քանի մարդիկ, որոնք այդ օր պատահարաբ բացակայում էին զիւղից: 46 տղամարդ ու երեսուսարդ մեր 30 տանից հուաքեցին ու տարան լեցրին Ռաշիդ աղայի տան տակի ախոռատունը: Մեր տղամարդիկ գնում էին տոանց դիմադրութեան, նոյնիսկ լուս. Իշխանի ու իր ընկերների սպանութիւնը և ժանդարմների դազան կտրած գէմքերը այնպիսի սարսափ էին ձգել մեր բոլորիս վրա, որ նոյնխնջ վախենում էինք բերան բացել, հարց տալ ժանդարմներին:

Նախորդ օրւա սարսափը կրկնապատկեց ու եռապատկեց, սուգ իջաւ բոլորիս վրա, մտացանք տուն ու տեղ, թոնիր ու կերակուր: Զիմացանք ինչպէս եկաւ, ինչպէս գնաց այդ սգիւ օրը: Թոնիր չը վառեցինք, կերակուր չեփեցինք ու հաց չը դնաց մեր բերանը: Տներէ մէջ խումբ խումբ ելած, հարց կատմինք, հարց կատնէինք, բայց որևէ քան հասկնալ չէինք կարողանում, մտածում էինք ու մտածում և ոչ մի լուս բան մեր մտքով չէր անցնում: Անցաւ ամբողջ օրը, օր—ծանր, հոգեմաշ ու սպառազական: փորձում էինք մօտենալ Ռաշիդ աղայի տանը,

տեսնել մեր աղամարդկանց, մի բան հարցնել, մի բան հասկընալ, մեզ մօտ չէին թողնում, հայհոյում էին, սպառնում ու քշում, նոյնիսկ ուտելու հացը դժարութեամբ էին ընդունում:

— Վերջապէս երեկոյ կգաւ, բայց դա սովորական երեկոներէի չէր, այլ արտասովոր, թանձր, ճնշող ու խեղդող: Եւ երբ մենք մտախոհ ու ախուր այս ու այն դռան առաջ մեր զլխի գալիքներէ մասին էինք խորհում, մէկ էլ Ռաշիդ աղայի տան կողմից խուլ պայթոցներ լսեցինք. մենք շանթահար եղանք, վաշ ու վաշ բարձրացաւ, կանայք դուրս թափեցին տներից, մենք վայ տալով վազեցինք գէպի Ռաշիդ աղայի տունը, մեր առաջ դուրս եկան ժանգարմները հրացաններով ու յետ քշեցին: խուլ պայթոցները նորից լսեցինք, դրա հետ միասին մեր ազանջին հասան աղեկաւոր ունեցներ:

— Մեր աղամարդկանց կը կոտորեն, — լսեց մի ճիշ և վայնասունն ու շիւանը բռնեց գիւղը: Մեր աղամարդկանց գնդակահարում, կոտորում էին մեր աչքի առաջ, ողբն աշխարհն էր բռնել, իսկ ժանգարմները հրացանները մեր գէմ գարձրած մեզ քշում էին ու հալածում:

Սկսեց սուգի գիշերը, գիշեր, գնաս այլևս չը դառնաս, այնինչ գիշեր էր, Աստուած, որ մենք ապրեցինք: Հարիւր անգամ մահ տեսնելը լաւ էր, քան այդ գիշերու ապրիլէինչ կատարեց այլևս իմանալ չը կարողացանք: Սև գիշերն անցաւ, բացեց յաջորդ երկուշաբթի օրու սպի առաւօտը. նոյն սուգ ու շիւանը, նոյն վայնասունը գիւղի փողոցներում, ժանգարմները հրացաններով կտրել էին ճանապարհը գէպի Ռաշիդ աղայի տունը. այդ սպանդանոցը դարձել էր պաշարուած. մի բերդ:

— Իշխանին իր երեք ընկերներով և մեր 46 աղամարդկանց՝ գնդակահար ու սրախողխող, գիշերով լցրին եկեղեցու մօտի ցորենի հորը, որը այդ միջոցին դատարկ էր և հողով ծածկեցին. մի ամբողջ գիւղի յոյսը—երեսուն տան հաստատուն սիւնները լափեց այդ հորը, նա դարձաւ մեր նւիրական փոսը: Ողբը չէր սղբերի նման և ոչ էլ սուգ սուգերի նման, որ մենք ողբում էինք ու սղում, այլ դա մի անհելի կոծ էր, որ բռնել էր սար ու ձորը: Երկու օր երկու գիշեր մենք կոծում էինք շարունակ, մինչև որ բացեց երեքշաբթի օրու—աւետման առա-

✓

աօաբ. սկսեց Շաշոց-ձորի ընդհանուր ջարդը, աւերը, կողո-
 պուտն ու հրդեհումը: Տեսանք մեր աչքով հորդանների արշաւան-
 քը, հայ գիւղերից բարձրացող ծուխը, չօլերը. շաղ անցած հայ
 կանանց ու երեխաներին, քիւրդերի ձեռքով առեւանդուող հայ
 աղջիկներին, և մենք մոտացանք մեր վիշաբ: Վիշաբ այնուհետե
 դարձաւ ընդհանուր, վիշաբ խորացաւ ու թանձրացաւ և այն օ-
 քից, պարոն, այդ խորացած ու թանձրացած ընդհանուր վշախ
 մէջ մենք բոլորս ապակուում ենք ու սպառակուում:

Վշտոտ կանանց այս սրտաճմլիկ պատմութիւնը ընդհատեց
 և նրանց առօջնորդութեամբ սպակերացաւ այժմ էլ ստեղծմի
 ղալբը:

Մաշիդ աղայի երկու յարկանի առնը հրդեհւած է, կանգ-
 նած են մնացել ցից ցից պատերը: Երկարուկ ախտաւատան սեւ-
 ցած պատերի վրա մնում են անթիւ գնդակների քանդուած ան-
 դէրը. այդ պատերի մէջ բացւել են հարիւրաւոր գնդակներ և
 ընկել են Հիրճի աղածարգիկ:

Այդ տանից դէպի հիւսիս եկեղեցու կողմը, ինչպէս գայլի
 երախ, նայում է լոյնաբերան գատարկ մի հոր, այդտեղ հան-
 դիսա են գտել մի ամսի չափ 50 դիակներ, մինչև որ հասել է
 սուրական բանակը և մեռելների տէրնքը եկել ու հանել են այդ
 տեղից դիակները:

Այդ հորից մի փոքր հեռու, գրեզական եկեղեցու հարաւային
 պատի երկարութեամբ, բարձրանում է բարաշար մի թումբ. դրա
 տակ թաղւած են հորից հանւած 40 դիակները. նա Հիրճի կղ-
 քայրական գերեզմանն է. այդ տեղին ամեն երեկոյ մօտենում
 են Հիրճի սպաւոր կանայք ու խունկ ծխում, այդ խունկը սովո-
 բական խունկ չէ, նա հեղուկ շիթերից է բաղկացած, նա ծորում
 կաթկաթում է վշտոտ կանանց ազբիւրակներից, ծորում է ու
 ստոգում երկար դամբարանը:

II

Իէպքը տեղի է ունեցել ապրիլ 6-ին Արճէշ գաւառի կենդ-
 քանավայրը՝ Ականց քաղաքում, ուր նստում է գայմազաւմը: Այդ

Տօրերի զայմագամն էր Ալի-Իրզա բէյը, պօլսեցի տաճիկ: Ականցը գտնուում է Վանի լճի հիւսիս-արեւելեան ափից մէկ ժամ հեռու զա խաղողի այգիներով և պտղատու պարտէզներով օժտուած մի գիւղաքաղաք է, ուր ապրում էին 300 տուն հայեր և 700 տուն տաճիկներ:

Պատմողը 6 երեխաների հայր է: յիսուն տարեկան, տանջուած դէմքով ու ցաւոտ աչքերով մի մարդ. տաճկական սպանդանոցից ազատուած մի հրաշքով, զա զբաղմունքով որմնադիր է ուստի կոչուում է բնաջի Սիմօն:

Եւ զառը շեշտով բնաջի Սիմօնը պատմում է հետեւեալը:

— Աւետումի նախընթաց օրն էր— երկուշաբթի. յանկարծ կառավարութեան մունետիկը շուկա էլնելով սկսեց յայտարարել որ 15 տարեկանից վեր բոլոր հայ տղամարդիկ հաւաքին հիւքմաթ(*): Այս յայտարարութեան հետ միաժամանակ դուրս եկան ժանդարմներ և շրջելով փողոցները, մինչև անգամ մանկով աըները սկսեցին պատահած հայերին քշել գէտի հիւքմաթ: Դրանց մէջ ընկալ նաև ես: Ասելի քան 400 հասակաւոր մարդիկ և երկտասարդներ բերին լցրին հիւքմաթի սենեակներն ու բանդը, և զոները կողպեցին մեզ վրա: Մի քանի ժամ շարունակ բերում էին ու բերում հասակաւոր ու ջանիլ, հարուստ ու աղքատ, քաղաքացի ու գիւղացի, և որովհետև այլևս տեղ չկար, ուստի այժմ էլ սկսեցին քշել կշան (գորանոց), որը գտնուում էր քաղաքի հարաւ-արեւմտեան ծայրում: Այնտեղ ասելի տարտն, քան մեզ մօտ:

Վարանման ու մտատանջութեան մէջ մնացինք ամբողջ օրը. չգիտէինք ինչ է կատարում դուրսը: Անհամբեր եղած, շարունակ մտածում էինք թէ ինչով կը վերջանայ այս բոլորը, ու մեն տեսակ վատ գուշակութիւններ անում էինք, սակայն չէինք գուշակում այն, ինչ որ տեղի ունեցաւ:

Այդպէս հազար ու մի մտահոգութիւնների մէջ իբար վրա թափուած, ծարաւ ու քաղցած մաշեցինք ամբողջ օրը: Եղաւ երեկոյ, քաղաք լսեց և լսեց սովորականից շուտ. որովհետև կարգադրւած էր մութը պատելուն պէս բոլորը տուն քաշին:

*) Կառավարութեան տունը, ուր գտնուում են կառավարական հիմնարկութիւնները, ինչպէս և բանդը:

Եւ մինչդեռ որը զրոյցով ու տխուր դուշակութիւններով զբաղեալ, և որն էլ մերկ յատակին նստած ննջում էր, յանկարծ դուռը բացւեց և շեմքի վրայ երեաց բանդապետ Ալի էֆէնդիննա դուրս բերեց մեղանից 11 հոգու, կողք կողքի շարքով կանդնեցրեց միջանցքում և բոլորի թևերը թռկով կապեց միմիանց: այս շարքի մէջ ընկայ և եւ: Ապա դուրս բերեց նորից 8 հոգի և նրանց թևերը նոյն ձևի կապեց միմիանց: Այսպէս վարեց երրորդ խմբի հետ, որ բաղկացած էր 9 հոգուց: Շարքով կապկապում էին այնքան մարդ, որքան թողք բաւականացնում էր:

Երբ այս գործադրութիւնը վերջացաւ, բանդապետը դարձաւ այգաեղ գանուղ ժանդարմներին՝ թւով 8—10 հոգի և ասաց. «բունչարի սիզա թէսլիմ էզդիկ, զեօթիւրիւնն կշլայ (սրանց ձեզ եմ յանձնում, տարէք զօրանայր)»: ժանդարմները — երեք շարք հասկերիս՝ թւով 28 հոգի ձգեցին տաշնեքը ու քշեցին:

Կապկոյած մարդկանց համարեալ բոլորին ճանաչում էի, օրինակ. իմ շարքի մէջ էին Պարզան աղան և երկու աղաները — Գարրիէլն ու Ազոսանը, Պօռաջեան Պօղոս աղան և երկու աղաները — Ռուբէնն ու Արմէնը: Հանաչում էի նաև մեզ ուղիկցոյ ժանդարմներին, օրինակ. նրանց մէջ էին Բայրազ Իսոս, Շուքրի օղլի Նեքոմթը և Կուլի օղլի Սուրէյմանը:

Ու այսպէս երեք շարք կապկոյածներիս ժանդարմները տառաջ ձգած քշեցին. սոկոսի մեզ գիտանակ կշլան տանկու, ճանապարհը ձակցին և դուրս բերին նաւահանգիստ տանող զմե վրա: Մթութեան մէջ ժենք դնում էինք ասանց ձուլուն հանելու, երկուսը այնպէս մեզ կօխել էր, որ ոչ ոք չէր վտանանում ձայն հանել. ճանապարհին մեղանից մէկ ապա խնդրեց թևի կապը մի փոքր թալաքնել, որ ստատիկ ցաւեցնում էր, բայց ժանդարմներից մէկը հրացանի կոթով այնպիսի մի հարում իջեցրեց աղայի թևին, որ նա ցաւից ձուլայ և կախ ընկաւ շղթայից:

Քաղաքից դուրս բերելով, քշեցին դէպի Սարկին գիւղը: սրը կէս ժամի շափ հեռու էր քաղաքից: Սարկէնի տակ մէկ հեղեղաւ կայ, նրա միջից հոսում է մէկ փոքրիկ առու, հեղեղաւը կոչում է Դարա-Ջամին: Անա այդտեղ էլ բերին մեզ ժանդարմները: Եւ երբ դեռ նոր տեղ հասած չը գիտէինք թէ ինչ պիտի անեն մեզ հետ, յանկարծ ժանդարմները մի կողմ քաշեցին, մէկն հրացանների բերանը ուղղեցին մեզի և տրբ, տրբ, տրբ

V Կրակեցին:

— Վայ, զարկեցի. — քարձրացաւ աղէկատու ճիչերի մի ժխոր, միմիանց փախաթաւած, զնդակահար գետին թափեցինք՝ զիակների կոյտեր կազմելով: Սրամամաչ հառաչանքները և զայարուն ոտնոցները էրար խառնեցին: Հրացանները բացեցին երրորդ, չորրորդ, հինգերորդ անգամ և զնդակները անհաշիւ թաղում էին ընկած զիակների մէջ:

V Մի քանի բողէ անցաւ. հառաչանքներն ու ոտնոցները մեղմեցին. մօտ եկան ժանդարմները և սկսեցին մէկիկ մէկիկ զիակները շօշափել, ստուգելու. համար արեօք կենդանի մնացածներ չը կան: Ես կորցրել էի ինձ, չը դիտէի զարկւած եմ, թէ ոչ. մէկ կորցնում էի գիտակցութիւնս, և մէկ էլ ուշքի գալիս: Յանկարծ զգացի, որ թողը արձակեցին ու թեւ ազատեցի: Ծրագի լոյս տեսայ, ժանդարմներից մէկը լուցկին վառում էր և մօտեցնում ընկածների գլմքերին, ով կենդանութեան նշան էր ցոյց տալիս, ուղղում էին ճակատին հրացանի բերանը ու կրակում: Այդպէս մօտենում էին ինձ... Օ, ինչ վայրկեան էր այդ որ ես ապրեցի, տասն անգամ մահանալը աւելի դուրին էր, քան այդ բողէի ապրումը: Եւ մինչդեռ բողէ առ բողէ սպասում էի այդ օրհասական ժամին, յանկարծ մի փոքր հեռու, ճիշտ մեզ վրա կրակելու ձևով արը, արը, արը բացեցին հրացանները, քարձրացաւ ազդողորմ ճիչերի մի ժխոր և մեզնով զրազւած ժանդարմները զնդակահարելուց վախեցած՝ թողեցին մեզ ու փախան: Տրը, տրը, արը, նորից լուեց հրացանների օրոտը, կրկնեց մի քանի անգամ ես. այնտեղ—մեզնից մի փոքր հեռու նոր շարքեր էին գլորւում, նոր կեանքեր էին հնձում, ու մենք մոռացեցինք:

Ես գեւ չը դիտէի զարկւած եմ թէ ոչ. մի փոքր շարժեցի: շօշափեցի կողերս, ցաւ չէի գգում, նորից շօշափեցի մարմինս, ոչինչ չը կար. ինձ վրա թափւած զիակները պաշտպանել էին իմ կեանքը և իրենց արիւննով թրջել իմ հազուտը, որի հետքերը այժմ էլ կան վրաս:

Առաջին միտքը, որ ծագեց իմ մէջ, փախչելու բնազդն էր: Բայց ունեցածս ոտնամաններով փախչել չէի կարող, ուստի բողէապէս արձակեցի սպանւածներից մէկի տրեխները, հագայ ու շարժեցի տեղիցս: Օ, որքան մարդ հնարագէտ է մահւան վը

տանգի ժամին: Գնում էի գնդակի արագութեամբ, առանց յետ
նայելու. խփում ու անցնում էի առուներ, դաշտ, բլուրներ.
Թողնում էի յետև ամեն ինչ և վազում էի ես էլ չիմանալով
ուր. ոչինչ չէի զգում, ոչ քաղց, ոչ ծարաւ, ոչ յոգնածութիւն,
թէև ամբողջ օրը ոչինչ չէի կերել. միայն ականջիս հասնում
էին հրացանների կրկնող խուլ սրտաները և քայլերս աւելի էլ
արագացնում էի:

Աս բալեցի ամբողջ գիշերը և երբ լոյսը բացւեց, ինձ դուայ
Ալադաղի ձիւնոտ լանջերի վրա: Ահա այստեղ միայն զգացի
յոգնածութիւն, որի նմանը երբէք չէի տեսել: Շրջապատը ձիւ-
նով էր ծածկւած, մի մեծ քարի տակ միայն սև անդ դուայ և
նստեցի հանգստանալու, բայց երկիւղը նորից պատեց ինձ,
կանգնեցի, չորս կողմս նայեցի և յանկարծ մի փոքր հետու քա-
րերի տակ մարդիկ նկատեցի. սարսափը մի բողբ կոխեց ինձ,
սակայն շուտով սնցաւ, նրանք էլ շարժւեցին և ես նրանց ճա-
նաչեցի, նրանք Սոսկուն գիւղից էին՝ թուով 23 հոգի գիւղի քա-
հանայի հետ միասին, նրանք Ականցի կոտորածի լուրը առնելով
ձգել էին գիւղը ու փախել:

Ահա այդ 23 հոգու հետ քաղցած և ուժասպառ, չափնչփե-
ցինք Ալադաղի ձիւնապատ խորխորածները նորից մէկ օր և
մէկ գիշեր և ապրիլի 8-ին իջանք Դիաղին, որ գտնուում էր
առևտական բանակը:

Մենք մի քանիսս մի հրաշքով փախանք ու ազատւեցինք,
բայց Արճէշի մէջ անունը տղամարդ չը մնաց, բոլորը բոլորը
ընկան, ընկան գնդակահար ու սրախողխող:

III

Պատմութիւնը վերաբերում է նոյն Ականցում տեղի ունե-
ցած Չարդերին:

Պատմողը Արճէշի գաւառի Բանոն գիւղացի է, անունը
Քկրտիչ, ազգանունը Յովհաննէսեան, գիւղում նրան կոչում էին
Աւելի Մկո:

Մկրտիչը կարճահասակ, տարիքաւոր մի մարդ է՝ տաճկա-
կան սարսափները մի քանի անգամ տեսած ու ճաշակած: Քսան
տարի առջ Մկրտիչը երեք տարւա ամուսնացած էր, ունէր ջա-

Տիւ կին և մի տարեկան աղջիկ, նա Բանոնի մեծ ընտանիքնե-
րից մէկի զաւակն էր, իսկ Բանոնը 40 տուն ժողովուրդ ունե-
ցող մի շէն գիւղ էր:

1896 թւի Զարդերին Բանոնը բոլորովին աւերւեց ու ամա-
յացաւ. Մկրտչի ընտանիքը ունեցաւ մեծ կորուստներ, սպանե-
ցին Մկրտչի կինը, աղջիկը, մեծ եղբոր—Ասլանի կինն ու զո-
կու աղջիկները, միւս եղբոր—Յարութիւնի մի տղան և մի աղ-
ջիկը: Եւ Մկրտչը իր գիւղի, իր օջախի աւերման ու հարա-
զաւանդի խողտոզման վիշաբ կրճճին փախաւ դուրսէն աշխար-
հից և եկաւ ազատան գտաւ Արարատեան դաշտում:

Անցան երկար ու ձիւ 14 տարիներ, Մկրտչը ամուսնա-
ցաւ, ունեցաւ երեխաներ ու ապրուստ, կամաց-կամաց մոռաց-
ւեց ին վիշաբ, տեղի ունեցաւ տաճկական սահմանադրութիւ-
նը, հասան միլիթարիչ լուրեր երկրի մասին Մի բողէ Մկրտչի
որտում զարթնեց հայրենի գիւղի, վաթանի կարօտի զգացմուն-
քը և նա առաւ ընտանիքը ու վերադարձաւ հայրենիք—Բանոն,
ուր նախկին 40 շէն ընտանիքների փոխարէն գտաւ 5 խղճուկ
տուն: Բանոնը նորից սկսեց մեծանալ ու շէնանալ: Եւ մինչ-
զիտ նա շուտով պիտի իր նախկին դրութեանը հասնէր, ծագեց
ներկայ պատերազմը և տեղի ունեցաւ նոր Զարդը:

Ահա այդ Զարդից մի հրաշքով ազատւած Մկրտչը յուզ-
մունքից խեղդւելով պատմում է հետեւալը:

— Ապրիլի 2-ին մեր գիւղում լուր տարածւեց, որ օնրաշի
Ալին 7—8 ժանգարմաներով գիւղերն է եկել և փախած զինուոր-
ներ է փնտրում: Մէկ էլ լսեցինք, որ ժանգարմաները հասել են
Պանձակ գիւղը. մասամբ զործով, մասամբ էլ հետաքրքրութիւ-
նից դրդւած եւ զնացի Պանձակ. զնացի միամիտ ու ազահով,
որ ինձ չեն զիպչի, բայց գիւղ հասայ թէ չէ՝ օնրաշի Ալին ինձ
ձերբակալեց: Եւ 48 տարեկան էի և տարիքիս պատճառով զին-
ուորութիւնից ազատւած: Բողոքեցի, որ եւ զինուորացու չեմ.
ցոյց տւի համիդիէս (ճննդական վկայականս), բայց օնրաշին
ուշադրութիւն չը դարձրեց ոչ բողոքիս և ոչ էլ համիդիէիս վը-
րա, թուղթը գրեց զբաւանը և ինձ խառնեց ձերբակալւած մի
շարք մարդկանց հետ, առիւով՝ որ հրամայւած է 18 տարեկանից
վեր բոլոր ազամարդկանց քաղաք տանել: Աւելի քան 30 հոգու-
ամէն հասակի մեզ այդ օր բերին Բերդաղ գիւղը: Գիշերը երկու-

հոգի մեղանից փախան, դրա համար գիւղի տանուտէրին սոսկապի ձեծի ենթարկեցին: Երկրորդ օրը մեզ բերին Օրօրան գիւղը, ճանապարհին դաշտերում աշխատող մարդկանց խառնում էին մեզ ու առաջ քշում:

Ապրիլ 4-ի առաւօտ մեզ բերին քաղաք—Ականց և ուզիդ տարան կշւան: Այդ տեղ կային բաւականաչափ ամեն հասակի հայեր և մի կողմից էլ խումբ-խումբ բերում էին: Վերջին օրը դրանց թիւը հասաւ 7—800-ի, որոնցից իբր պիտի կազմէին «ամալիա թարուբներ»:

Ապրիլ 5-ին մեզ մի խումբ մարդկանց տարան հիւքմաթ, այդտեղ փոխա Ապտուլան էֆէնդին մեզ ցուցակագրեց, առանց ուշ դարձնելու իմ բողոքի վրա: Հիւքմաթից մեզ նորից դարձրին կշւան, ուր ահագին թւով հայեր ոչխարի պէս իրար վրա թափւած՝ մնում էինք գիշեր ցերեկ: Մեզ հաց չէին տալիս, կեքակրւում էինք տանից բերած սրա նրա հացի փշրանքներով:

Եկաւ վերջապէս ապրիլի 6-ը, ճակատագրական սոսկալի օրը: Արեւ նոր էր բարձրացել, երբ ինձ եօթը այլ հայերի հետ կրկու ժանդարմ քաղաք տարան աշխատեցնելու: Մենք աշխատեցինք շուկայի մօտ դանւող մէկ ազգութի վրա, բայց երկար չը տևեց այդ աշխատանքը, ընդամենը երկու ժամ չանցած՝ կարգադրեց մեզ յետ տանել կշւան: Տարօրինակ թւաց այս,— բերին ինչ էր, յետ տանելն ինչ,—մտածեցինք մենք, և երբ հարց տւինք մեզ ուղեկցող ժանդարմներին, նրանք պատասխանեցին, որ մեզ ուղարկելու են Իխարէքեր:

Այդ կշւան բերին Արաղայից 70 հայեր, իսկ կէս օրից սկսած բերին քաղաքացի հայեր. դրանց մէջ էին տաջնորդական փոխանորդ Տէր Նդիշէն, Շալջեան Նիկոզոս էֆէնդին և իբր ազա Մարգիսը, փրօղ Յարութիւնը և Նշան, Սոսրով ու Սերոբ էֆէնդիններ—բոլորը վաճառականներ: Դրանց տեղաւորեցին շուկ սենեակում:

Իրիկնապահին կշւայի հրատարակը հաւաքեցին բաւականաչափ միլիտներ, որը ջահիլ և որն էլ տարիքաւոր: Այդտեղ եկաւ գայմագամբ—Ալի Բիդաբէյը, որը մօտենալով այդտեղ հաւաքւած միլիտներին, ինչ որ բան խօսեց և ապա ինչ որ հրամաններ տալով, այս ու այն կողմ ուղարկեց, ու ինքն էլ հետ-

ցաւ: Այս բոլորը կատարուած էր մեր աչքի առաջ, մենք տեսնում էինք լուսամուտներից, բայց խօսակցութիւնը չէինք լսում: Ի՞նչեր էին ծրագրուած, և ինչ էր կատարուած դուրսը, մենք չը գիտէինք, մի ծանր անբացատրելի նախադգացում ճնշում էր մեզ բոլորիս:

Շուտով իմացանք, որ կարգադրուած է ժամի 8-ից (ըստ տաճկահանի 1-ից), յետոյ ոչ ոք տանից դուրս չը գայ, այս աւելի ևս կասկած ծնեցրեց մեր մէջ. ահային ժողովուրդը կըլայի ընդարձակ սենեակներում իրար վրա թափուած՝ տարակուսանքի ժամեր էինք ապրում: Ժամի 8-ը անցիկ էր, երբ մէկէն շուտ տարածեց, որ փոխանորդ քահանային, մի քանի անւանի հայերի հետ տարան քաղաքից դուրս և սպանեցին. այդ լուրը իր մէկ ծանօթ հային յայտնեց միլիտաներից մէկը— Գէօրգի-Զահարը: Սարսափը բոլորիս կոխեց, բայց այն, ինչ որ ծրագրուած էր մեզ բոլորիս համար, ոչ օքի մտքով չանցաւ:

Շուտով մեր սենեակի դուռը բացեց և մարդկանց դուրս թողին, բայց յետունի չափ դուրս թողնելուց յետոյ, հոսանքը կանգնացրին ու դուռը կողպեցին: Անցաւ բաւոր ժամաչափ: դուռը նորից բացեց և նոյնքան մարդ նորից բաց թողին ու դուռը կողպեցին: Դրանց ուր են տանում, դուրս ի՞նչ էր կատարուած— մենք ներսում կողպեցրաւ ոչինչ չգիտէինք: Գիտում էինք լուսամուտների մօտ կանգնած ժանգարմաներին, հարց ու փորձ էինք անում այդ մասին, նրանք միաբերան հաւատացնում էին, որ ոչինչ չկայ և որ մեզ տանում են նաւահանգիստ, նաւերով Դիարբէքիւ ուղարկելու համար:

Վերջապէս հերթը հասաւ ինձ, դուռը բացեց չորրորդ անգամ և նորից դուրս հանեցին 50-ի չափ մարդ: Մեզ հետ էին Գանձակ գիւղի Գորանի Պօղոսն, ու Աստուրը, Պետրոսի Գէորգը, Նահապետի Յակոբն ու Սահակը, Դազարի Յակոբը, Վարդանը Մուքայէլն ու Սաֆարը. մեր Բանոն գիւղից՝ Մանուկի՞ն Գէորգը, Սարգիսի Մելքոնը, Աւետիսի Սաչատուրը: Մեր շարքումն էին նաև Աղսրաֆ, Բերդաշ և այլ գիւղերից մարդիկ, ո՞նց շատերին նոյնպէս ճանաչում էի:

Այսպէս, յետունի չափ երբ դուրս եկանք կըլայի միջանցքը, գիշատողների պէս չորս կողմից վրա թափեցին ժանգարմաներ ու միլիտաներ և թակերով մեր թևերը կապեցին իրար: Այս գո՞ր

ծողութիւնը երկար չտեսց, շուտով աւարտեցին կապկպելը և մի
խումբ ժանդարմներ ու միլիտաներ մ'ը մէջտեղ աւած, դուրս
եկան կշւայից:

Մեզ քշեցին դէպի Օրօրան գիւղը. քշում էին արագ և
անհամբեր կերպով. մի փոքր զանգաղութիւնը առաջ էր բերում
հայհոյանք ու հարւած: Մեզ քշում էին դէպի սզանգանոց, մենք
այդ պատկերացնել չէինք կարողանում, բայց մի նախազգացում
ձնշում է մեզ: Դէպի Օրօրան, դաշտի մէջ կան անուններ, փոսեր
և երկու ջրաղաց, այդ ուղղութեամբ էլ տարան մեզ, մենք եր-
կար գնացինք, եթէ անցած աստածութիւնը մե՞ծ էլ չէր, բայց
նա երկար տեսց, շատ երկար. երկիւղը մեզ դարձրել էր անհամ-
բեր: Վերջապէս մեզ բերին մի գետափ, որին կարաչի-իւրդ են
ասում, կանգնեցրին. բաւականին մութ էր, մի փոքր հեռու մը-
թութեան մէջ եւ նկատեցի մի քանի գիւակներ, սարսափեցի, աչ-
քերս մթնեցին, միտքս շփոխեց. բնագոյրին հրեցի կողքիս ե-
զոյն երին, ցոյց տւի դիակները, սարսփը նրանց էլ կոխեց,
շուկ ու իրանցում բնկաւ սեր մէջ. ժանդարմներն ու միլիտանե-
րը նկատեցին այդ և մի վայրկեանում վայնասունների հետ ու-
րտացին համազարկերը. շատերը ընկան գնդակահար, իրենց հետ
քայշ տալով նաև միւսներին. կողմեց դիակների մի կոյտ, եւ
մնացի այդ կոյտի տակ թէ այնուհետև ի՞նչ էր կատարեցին և
եւ ինչպէս կարողացայ այդ ժխտից ազատել, այժմ էլ մտա-
բերել չեմ կարողանում, միայն այսքան եմ յիշում. որ շունչս
կարւած վազում էի ասանց յետ նայելու. կոխեցի մի ատու ու
անցայ, ապա կոխացի թումբեր ու փոսեր, յիշում եմ նաև
այն, թէ ինչպէս ինձ հետ փոխուում էր նաև մէկը, որին չէի ճա-
նաչում, և թէ ինչպէս հրացանի համազարկերը երկար ու երկար
կրկնում էին ու կրկնում:

Ստանց մի վայրկեան կանգ առնելու կտրել էի անագին
ճանապարհ և միտ անաւատ տուն նստայ. բայց այդտեղ մնալ
անհնարին դարձաւ: Բազարից գալիս էին ջարդերի սարսափելի
լուրեր, այնտեղ հայ մարդ չէր մնացել, շրջակայ քիւրդերի մէջ
սկսւել էր շարժում, մի քանի դիւզեր արդէն ենթադրուել էին
յարձակման ու կատարածի: Մպտեցի մինչև երեկոյ, գիշեր ե-
ղաւ, մութը սրտեց և եւ թողնելով կինս ու երեխաներս բազդի
կամքին, բռնեցի Ալադաղի ճանապարհը:

IV

Ձարգիրը տեղի են ունեցել Բերկրիի գաւառում— Բանդէ-Մահու գետի ձորի մէջ:

Բերկրին պարփակոււմ է իր մէջ երկու դաշտեր, որոնք բաժանւած են միմիանցից լեռնային մի գանգաւածով: Դաշտերից մէկը սիրուն Արագան է, որ բռնում է դաւառի հիւսիս-արեւելեան ճակատը. միւսը՝ Բերկրիի— օվան է, որ բռնում է գաւառի հարաւ-արեւմտեան մասը, տարածւելով մինչև Վանի լիճը:

Արագայի դաշտը հարուստ է գետերով ու գետակներով, գետերից նշանաւոր են Սօւլս-Սուն, Կանլի-Չայը և Դըրշիկ-Չայը: Կան նաև գետակներ, օրինակ, Սընդ-Չայը, Չիրուխի-Չայը, որոնք դալիս թափում են Սօւլս-Սուի՝ մէջ:

Արագայի բոլոր գետերը պտոյտներ գործելով, գալիս դաշտի արեւմտեան միջին հովտում միանում են, հսկում հոսանքով պատում են երկու դաշտերը բաժանող լեռնային գանգաւածը և կերտելով ոլորապտոյտ երկարուկ մի ձոր, դուրս են գալիս Բերկրիի-օվան ու ապա թափում լիճը:

Հաւաքական գետը կոչւում է Բանդէ-Մահու, իսկ ձորը, որ ունի մօտ 15 վերստ հեռաւորութիւն և որի միջով հոսում է գետը, կոչւում է Բանդէ-Մահուի ձոր: Տեղ-տեղ լայնացող, տեղ-տեղ սխմող այդ ձորի միջով, գետի աջ ափերը գծելով, ձգւում է Կովկասից Վան տանող ճանապարհը:

Այս ձորի մէջ Բանդէ-Մահուն անաւոր տեսք ունի. տեղ-տեղ միայն նա հանգարդ է ու խորհրդաւոր, անցեալ տեղերում աղմկող է, շտաշող. իսկ ձորի կէսում հասնելով գահավիժող ժայռերի մի երկար շարքի, բաժանւում է մի քանի ճիւղերի և լայն շեղվով գահավիժում, թափում է խորխորատը, բարձրացնելով անաւոր մի աղճուկ: Այստեղ գետը իր փրփուրներով, իր փոշիով և իր գալաղաւթներով պատճառում է և հիացմունք և սոսկում:

Բայց Բանդէ-Մահուն աւելի անաւոր տեսք ունի ձորի ելքի շրջանում: Այստեղ գետը իջել է խորունկ ժայռերի մէջ. դարերի բախումով բացել է մի հուն ապառաժատ կողերով, ապա դէժանելով մի ժայռի, դրա վրա թափել է դարերի ու տարիքի եռանդ, մինչև որ մաշելով ամբարուռ ժայռը, բացել է մի նեղ

ու խորունկ անցք։ Այստեղ Բանդէ-Մահուն կատարի է. կոհակ-կոհակի և ալիք-ալիքի հրելով, մանուս է նեղ անցքը և դուրս պորթկում ինչպէս գալարուն վիշապ։

Այս Բանդէ-Մահուն ամենանեղ տեղն է, այստեղ ձգւած է քարաշէն մի փոքրիկ կամուրջ, որը հայերէն կոչուած է Կօլօտ-կամուրջ, իսկ քիւրդերէն՝ Փրա-Կօրակ։

Կօլօտ-կամրջից դէպի հարաւ արեւելք, մի երկու վերստի վրա գտնուած է դաւառի կենդրոնավայրը— Բերկրին կամ Բերկրի-Կալան, մի խղճուկ աւան իր փոքրիկ շուկայով. աւանի արեւմտեան կողմուս մի երկարուկ բլուրի վրա մնում են հինաւուրց բերդի մնացորդները։

Բերկրին քունի 110 տուն քիւրդ և ընդամեն 25 տուն հայ քնակիչ։ Այստեղ նստում է գայմազամ. Չարդերի օրերին գայմազամը վանեցի մի տաճիկ էր՝ անունը Զիա բէյ։

Պատմողը Աբաղայի Եկմալ գիւղացի Մուշեղ Մկրտչեանն է. սա նւաղ կազմուանքով, 25 տարեկանի մօտ, տաճիկահան ետեւադանից հրաշքով ազատւած մի երիտասարդ է, Կակիժը սըրտում. գայրոյթի զառը շեշարը շրթունքին, Մուշեղը պատմում է հետեւեալը։

— Փարսնան սկզբում շատ քիչ տղամարդ էր մնացել Աբաղայի հայ գիւղերում, զօրածողովը տղամարդ չէր թողել աներում, մեծ մասը զէնքի տակ էր կանչել և ապա գինաթափ արելով ամալիա թարուրների մէջ ուղարկել, մի մասն էլ փախտական կիանք էր վարում։ Չնայած դրան, ապրիլի սկզբում Բրկրի-Ղալայից ժանդարմներ հկան և գիւղերում պատահած հայ տղամարդկանց հաւաքեցին տարմն։ Իրանց թւում ընկայ նաև ևս Մեզ տանում էին ամալիա թարուրները ուժեղացնելու համար։ Այդպէս էր ժանդարմների յայտարարումը. ի՞նչ էր իսկական նպատակը, մենք զուշակիլ չէինք կարողանում։ Ինձ հետ մի քանի տասնեակ հայեր մեր գիւղից, Քաշանից և այլ գիւղերից քշեցին դէպի Բերկրի-Ղալա։ Այդ ժամանակ Աբաղայի դաշտը և Բերկրի ձորի մի մասը դեռ ծածկւած էր ձիւնով. ահագին լուսով հայեր թէ զինաթափ արւած զինուորներից և թէ գիւղերից նոր բերւած, զբաղւած էին ձորի միջի ճանապարհը կարգի բերելով. դրանց թիւը աննւաղն 1000-ի կը հասնէր։ Մեզ խառնեցին զրոհ, Մեր վրա հսկող ժանդարմների ասելով շուտով մեծ քա-

նախութեամբ զօրքեր պիտի գային և այդ պատճառով ճանապարհները կանոնաւորում էին. մինչդեռ այդ մի պատրուակ էր անունը հայ տղամարդ, 15 տարեկանից ի վեր, հաւաքել որոշ տեղեր՝ իրենց դաւազիր ծրագիրը իրագործելու:

Մենք աշխատում էինք խումբ-խումբ, յիսուն, վաթսուն նոյնիսկ հարիւր հոգոց բազկացած: Թէև ճանապարհը տարածւում էր շատ հեռու, բայց մեզ աշխատեցնում էին գլխաւորապէս ձորի մէջ: Մեր խումբը աշխատում էր Բերկրի-Կալալի կողմը, ուստի գիշերները մեզ տանում էին քաղաք և առաւօտները քշում էին ճանապարհի վրա:

Իմ աշխատած ժամանակամիջոցը տեկոց ընդամէնը երեք օր անուան էր աշխատանք. մենք ժամանակ էինք սպանում. չնայած զբան ըոյրորովին միամիտ շարունակում էինք մեր գործը:

Ազգրիի 6-ն էր, օրը երկուշաբթի. մենք վաղուց աշխատանքի տեղումն էինք և մուլ տալով շարժում էինք մեր ձեռքի գործիքները. այդ միջոցին մեզնից բաւականին վեր աշխատող խմբից մէկը հասաւ մեզ և կասկածի ու սարսափի խորհրդաւորութեամբ յայտնեց, որ իրենց խմբից 25 հոգու շափ առանձնացրին ու քշեցին անյայտ ուղղութեամբ. այդ բանի մէջ նա նկատել էր դաւադրութիւն. եկողը Զիրուխի գիւղի Իսրայէլի Յօփօն էր:

Զանցաւ կէս ժամ, մեզ մօտեցաւ մէկ հոգի էլ ցածի կողմ աշխատող խմբից և նոյն ձեռն սարսափով ու խորհրդաւորութեամբ պատմեց, որ իրենց խմբից էլ 25 հոգու շափ գատեցին ու քշեցին դէպի ցած: Զանցած կէս ժամ էլ մօտեցան մի երկու հոգի ևս և գունամտ ու սարսափահար փոխուցրին:

— Գլխներիդ ճարը տեսէք, մեզ խումբ-խումբ տանում են գետի պատյանները և կատորում են ու գետը թափում:

Մեր խումբը մէջտեղ էր ընկած, շարդի հերթը դեռ ևս մեզ չէր հասել, ուստի մեզ վրա հսկող ժանդարմներից մի քանի հոգի եթէ նկատեցին էլ մեր անձանգիստ շարժումներն ու փոփոխուկները, բայց և այնպէս ձեռքան բանից անտեղեակ: Սակայն այդ երկար չք տեկոց, հեռուից նկատեցինք մեր կողմը և կողմադարձների ու միլիտանների մի խումբ. նրանք գալիս էին հագնուպով, հեռուից, կարծէք, լսում էինք պայթուցներ ու խնչ ու աղլիսուս ձայներ: Մեզ համար ամեն ինչ պարզեց. դիւայի

օրոգայթը հարձէք օղակի պէս սեղմում էր մեզ: Աշխատող հայերը, ինչպէս և մեզ վրա հսկող ժանդարմները իրենց ուշադրութիւնը դարձրին այն կողմը, որտեղից երևաց մօտեցող ժանդարմների ու միլիտանների խումբը. ես, ինձ հետ հասե մի երկուսը, ջողկական յարմար առիթ գտանք ու ձողուպրեցինք: Այնուհետև ինչ կատարուեց, ոչինչ չեմ յիշում. միայն այն եմ յիշում, որ ես բարձրացել էի ահագին մի սար, ինձ հետ ոչ ոք չկար և ես ճեղքից լսում էի հրացանի խուլ պայթոցներ:

Ես չափ ընկալ, սարսափը հետևում էր ինձ. կէս գիշերին պիւղ հասայ՝ կարելով ահագին լեռներ ու ձորեր, որը չէր կարեզի երկու օրում անցնել: Յաջորդ օրը յայտնուեցին մէկ-մէկ 15-ի չափ փախստականներ, որոնք պատմեցին սոսկալի բաներ: Այդ ազատւածներից էին խաչանցի Խլօի Յովհաննէսը և Մանուկի Կարապետը, որոնք փախչելով Արձէշի Զարգերից, ճանապարհին պատահել էին բաղձաթիւ դիակների. Բանդէ-Մահուն դեռ չէր վլանել բողբոխն, բարբարոս ժանդարմները ժամանակ չէին ունեցել բաղցած գազանի երախը նետելու ամենքին, շատ գիակներ հերթի էին սպասում:

Երեք օր անց, Բերկրի-կալայից Պաշան եկաւ ժանդարմալի կօմանդանը—Ամար բէյը, կենդանի մնացած հայերին որսալու համար. մենք 30-ի չափ ազատւածներս սարերն էինք քաշել և գիւղերը չէինք իջնում. մեր աղան—Կօպ-Մահմադ բէկի աղան, համիրիական ալայի գլխաւոր Թահար բէկը—մեզ պաշտպանեց և կօմանդանին յայտնեց, որ իր գիւղերում հայ տղամարդ չի մընացել. այդ աժան չը նստեց Թահար բէկին. գայմազամին լուր էր հասել, որ նա հայերին պահում է. ուստի կօմանդանը գայմազամից հրահանգւած, Նագարաւա գիւղում ճաշի հրաւիրեց Թահար բէկին և Թունաւորեց: Թահար բէկը դարձաւ մեր զօհը, երկու օր տանջելուց յետոյ մեռաւ և մենք անցանք Մակու, մինչև որ ռուսական բանակը իջաւ Արազա:

Բանդէ-Մահուն այդ օրը լափեց 1000-է աւելի հայ կիսանքեր. միմիայն Պաշան գիւղը, որ ընդամենը 60 տուն բնակիչ ունէր, 30 զոհ տուց—մէկ տուն միայն տւել էր 12 տղամարդ զոհ—այդ տունը Ռւսդա-Մկօի տունն էր:

Ռւսդա-Մկօի տանից սպանւել էին՝ ինքը Մկօն, նրա հինգ ազգայրները—Աւագ, Իսրօն, Մաթոս, տիրացու Յարթին և Բա-

լօն. Մկօրի երկու տղաները—Արշակը և Յարեթը. Աւագի երկու տղաները—Միսակը և Ռուբէնը, ու Բալօի երկու տղաները—Յակոբը և Կարապետը: Մէկ տուն 12 տղամարդ, 12-ն էլ սպանեցին, 12 տղամարդ մէկ տանից ընկան:

Վ

Պատմութիւնը վերաբերում է նոյն Բանդէ-Մահու գետի Կօլօտ-կամրջի վրա կառարած ջարդին:

Բերկէրի-Կալա աւանի հիւսիսային մասում գտնուում է փոքրիկ հայկական թաղանոցաբար ու անշուք Այգ թաղում գտնուում է Շաթրի Յակօի տունը, կատարեալ զիւղական տուն մի խղճուկ սենեկով, նեղլիկ ու խոնար սենեակի ամբողջ կահաւորութիւնն է մի մերկ թախտ, տունը կողոպտուել է և ամեն ինչից զրկուել: Սենեակը լուսաւորում է ճակատի պատի մէջ բացած հեղանցքով: Խմբուել են մի քանի կանայք, տղամարդ չի: Յետցիւ պատկերը նոյնն է, դէմքերը գունատ, հայիացքները վշտաւ Կրանց միջին Շաթրի Յակօի կիներ—տանջւած դէմքով, կարճահասակ Չմօն և Շաթրի Սեդրակի կիներ—սպիտակ կիրթ դէմքով: Քայց ցաւոտ աչքերով Հեթօն, սրանք Շաթրի երկու բաման տրաների ներկայացուցիչներն են: Երկուսի ամուսիններն էլ սպանուել են, երկուսի տաղրները նոյնպէս սպանուել են:

Նւ այրիացած ու որդեկորոյս կանանց ու մայրերի ներկայութեամբ, Չմօն ու Հեթօն վշտոտ տօնով պատմում են հետեւեալը:

— Աւետման օրն էր, աշխարհի համար ուրախութիւն, շիտակ մեղ համար սև օր: Միամիտ մեր հոգսին էինք, երբ յանկարծ լուր բերին, որ շուկայում ժանդարմները հայերին բռնում են ու բանդ տանում մի փոքր անց, ժանդարմները երևացին թաղի մէջ մտնում էին տները, գուրս քաշում տղամարդկանց, ու տանում զէպի բանդը. շուտով այլևս թաղի մէջ տղամարդ չը մնաց: Մինչև այդ մենք չը գիտէինք ինչ է կատարւում դաւառում, ու մէկէն լուր առինք, որ գայմագամը և ժանդարմայի կօմանդանթ զօրքով մտել են Պատիկ-դիւզ ու Կորմսթ և բոլոր տղամարդկանց կոտորել են: Անցաւ մի փոքր միջոց էլ, այժմ էլ վատ լուրեր եկան Բերկերիի ձորից, — այնտեղ աշխատող հայ ամալիաներին կոտորում են և դիակները գետը նետում: Այս լուրերը մեկ բն

բում էին ծանօթ ու հարեան քիւրդերը, և պատմում էին, որ բալոր հայերին պիտի կոտորեն: Սարսափը մեզ կոխեց, սուգն ու շիւանք երկինք բարձրացաւ, վազ տւինք դէպի բանդ, ուզեցինք մեր տղամարդկանց տեսնել, բայց ժանդարմները մօտ չը թողին, բանդի շուրջը պահապաններ էին զրել և բոլորիս հայհոյելով քշում էին. այսպիսի խստութիւն մենք չէինք տեսել: Արեւ թեքեց, մեր տղամարդկանց բաց չը թողին, հաց տարանք նրանց, լուսամուտներից ժանդարմները հացերը ասան ու մեզ քշեցին: Մենք շիւանով տուն դարձանք, և բոսյէ աւ բոսյէ ըսպասում էինք վատ լուրերի: Գիւղերից շարունակ սպանութեան ու ջարդերի լուրեր էին գալիս. գիշեր եղաւ, ոչ ոք մեզանից չը քնեց, ամբողջ գիշերը դուրս ու ներս անելով անցկացրինք:

Առաւօտ մի փոքր հանգստացանք, մեր տղամարդիկ բանդումն էին. ծանօթ քիւրդերը ասացին, որ նրանք կրօնափոխ են եղել, այդ պատճառով էլ նրանց կեանքը պիտի խնայւի: Բայց ինչու չէին արձակում, եթէ նրանց կեանքը պիտի խնայւէր, այժմ էլ այս միտքը սկսեց մեզ տանջել:

— Կրօնափոխութեան համար գայմազամը գրել է վալիին ու սպասում է արձակման թղթին, — այս խօսքերով մխիթարում էին մեզ ծանօթ ժանդարմներն ու քիւրդերը:

Բայց անցաւ մէկ օր, երկու օր, վերջապէս ամբողջ ութ օր, մեր մարդկանց չարձակեցին: Այդ ութ օր չէր, այլ ութ շաբաթ ութ ամիս, ութ տարի: Ութ դառը օրեր անցկացրինք, ութ հոգեմաշ գիշերներ լուսացրինք, ինչպէս ութ տարիներ, նոյն գառը օրերը, նոյն հոգեմաշ գիշերներ էին անցկացնում նաև մեր տղամարդիկ. ոչ տեսակցութիւն, ոչ խօսակցութիւն և ոչ էլ մլխիթարութիւն: Լուսամուտներից առնում էին ժանդարմները հացը. — դէ՛հ հայդէ, — ըզաւում էին ու մեզ քշում:

Ի՞նչեր էին անցնում դռնում, չը գիտէինք. այսպիսի խըստութիւններ երբէք չէինք տեսել. ամեն օր, ամէն կողմից սպանութիւնների ու ջարդերի լուրեր էին հասնում, վայրագութիւններ ի նիթարկած կիներն ու երեխաները կառավարութեան գունդ էին գալիս, ու այն տեղից էլ հալածոււմ. և օր օրի կասկածն ու վախը մեր մէջ սկսեց սճել, մեր տղամարդկանց փրկութեան յոյսը կորցրինք:

Մէկ օր Տէր-Յուսկան որդու սարից բռնեցին ու բանդ բե-

րին 20—25-ի չափ հայեր. զրանք Պատիկ-գիւղից ու Գործութից էին, որոնք կուսարածից սարերն էին փախել: Բանդում եղան 70-ի չափ հայեր, միայն մեր Բերկրիի 25 անից բանդում զրանում էին 32 տղամարդ:

Այս՝ մեր տղամարդկանց բանդարկութեան ութերորդ օրն էր (ապրիլի 15-ը), օրը չորեքշաբթի: Այդ օր գիւղերից վերադարձաւ ժանդարմների կօմանդանը, բայց մեր տղամարդկանց նորից չարձակեցին: Չար գիտաւորութիւնների, ան դաւադրութեան օրն էր այդ. մենք զգացինք ու ամբողջ գիշերը—25 ամն քիւլֆաթ աչք չը կայցրինք: Ականջներս սրած դրսի շուկներին էինք նետուում, բաւական էր մի ձայն, մի հաշոց, որ սարսափահար գլուխներս դանից զուրս հանէինք ու նորից յետ գայինք: Կէս գիշերից բաւական անց, գէպի լուսագէտ, շները մի ոսնոց բարձրացրին. սարսափը պատեց մեզ. «Սաւաւաւ էմ, այդ ինչ գիշեր էր, որ լուսացրինք մենք: Երբ այդ ծանր գիշերը անցաւ ու լոյսը բացւեց, մի անօրինակ սուզ իջաւ մեր բարձրիս վրայ, բանդը դատարկւեց էր, միջի տղամարդիկ չկային:

Մի շիւան բարձրացաւ. լաց ու կոծով այս ու այն կողմն էինք վազում, այս ու այն ծանօթ քիւրդին էինք գիմում, աղաչում, պաղատում էինք մի լուր մեր մարդկանցից, նրանք քարացել էին. պատասխան չէին տալիս:

Կօլօտ-կամուրջը.— փափսացին վերջապէս ծանօթ քիւրդերը և մի քանիսը մեզանից վաղ տիրն այնտեղ, բայց շուտով նրանք յետ եկան Կօլօտ-կամուրջի քարերը թարմ արիւնով ներկւած տեսնելուց յետոյ: Ամէն բան վերջացել էր և յուսահատ կոծը նոր շրջան սկսեց:

Անցաւ մէկ օր, երկու օր: Սկզբեցին կողոպուտներն ու առեհանգումները. մանողը մանում էր, տանողը տանում, արգելող չը կար, գիմադրութիւն ցոյց տւող նոյնպէս. վայրագութիւնները սովորական դարձան, ոճրագործութիւնները զրոյցի նիւթ: Պատմել սկսեցին ոճրագործութիւններին մասնակցած ժանդարմները. պատմեց նաև միլիտս Իսօի Թէլուէն, թէ ինչպէս իրար կապկպած բանդում եղած հայերին տարան Կօլօտ-կամուրջի վրա և սկսեցին գնդակահարել սրախողխող անել ու կամրջից ցած նետել թէ ինչպէս Գափօյի Փանոսին ու Յովսէփին կենդանի գետը նետ տելիս, նրանք բռնեցին կամուրջի քարերից ու կախ ընկան, և

ինչպէս այդ ժամանակ մի քանի գնդակներ բացւեցին ու երկու հզարայրներն էլ պոկւեցին դէպի խորխորաւը: Պատմեցին թէ ինչպէս 70 մարդուց մէկ հոգի անգամ չազատուեց, մէկը, որ իբր վիայ այդ անօրինակ բարբարոսութեան գնար պատմելու աշխարհին Կօլօտ-Կամբըջի եղևներ:

Եւ այնուհետե օրեր շարունակ քիւրդերը լուր էին բերում, որ Տէր-Յուսէան որդու վանքի տօկ և Փշի-Քուժըթ գիւղի մօտ Քանդէ-Մահուն փն էր նետել այս ինչի ու այնինչի դիակները: Լուրերը կրկնուում էին, դիակները ճանաչուում, իսկ մենք, այդ անթաղ գիակների տէրերը անզգայացել էինք, քարացել, արցունք չէր մնացել մեր աղբիւրակներու մէջ նրանց ողբալու, ողբը դարձել էր ընդհանուր, վիշաք համակել էր բոլորիս:

Առաջ բերելով կոտորածների այս մի քանի տեսարանները, բուսական ենք համարում զազափար կազմել տալու, թէ ինչ կանխամտածւած ձևով ծրագրւած էին հայկական ջարդերը Վանի վիլայէթում: Չարդեր, որոնք միանգամայն տարբերուում էին նախկին ջարդերից իրենց բնոյթով, որոնք զործադրուում էին զայժառկաների, ոստիկանութեան, ժանդարմիայի և միլիտների կողմից: Գործերի անմիջական մասնակցութեամբ:

Չարդերը այս ձևով տեղի ունեցան Վանի բոլոր գաւառներում անխորտակ: տեղ-տեղ նրանք կատարուեցին այնպէս վարպետորէն ու գաւազիք եղանակով, որ համարեա մարդ չազատուեց, եղան գիւղեր, այն էլ շատ գիւղեր, որոնք կորցրին վերջին ազամարդը ու երիտասարդը: Իսկ տեղ-տեղ Չարդերը կրեցին խուժանային բնոյթ, կառավարութեանը օգնութեան էր հասնում մահմեդական խուժանը, սկսուում էին կողոպուտներ, տուհանգուտներ ու հրդեհումներ, որ այդ վայրագութիւնների և սպանութիւնների միջոցին եղան նաև ճողոպտողներ: Ընդհանուր առմամբ ոչ մի գաւառ ազատ չը մնաց վայրագութիւններից ու Չարդերից, աւելի կամ պակաս նրանք ընկան, նրանք աւրւեցին, նրանք անայացան:

Մարդկային կեանքի հնձումը միակ աղէտը չէր, որ հասու Վասպուրականին. թալանը—գոյքերի, մթերքների և ապրուստի միջոցների կողոպուտն ու ոչնչացումը եղաւ երկրորդ աղէտը. առ նոյնպէս եկաւ կեանքեր հնձելու, մարդկային գոհերի շարք-

բը խտացնելու: Եւ շարքերը խտացան ու խտացան, այն սատի-
ճան, որ մոռացնել տալին ամեն մի գոյքային կորուստ:

Մարդկային կեանքի հնձումը կատարեց երեք ձևերով. ա-
ռաջին ու անաւոր ձևը եաթաղանն էր. շարքերը խլող, երկլի-
արական սեռը լախող, տաճկական եաթաղանը. մեծագոյն զոհը
սա տարաւ: Երկրորդ ձևը առեանդուսն էր՝ արեւելքի յաւիտենա-
կան այդ նախատինքը, գերեցին ու տարան Չանկ կիւներ, գեղե-
ցիկ օրիորդներ, նոյնիսկ բազմաթիւ փոքրիկ տղաներ ու աղջիկ-
ներ՝ մահմեդական աշխարհը բազմացնելու համար: Երրորդ ձևը
մահացութիւնն էր. Չարդերից յետոյ սարսափների հետեանքով,
ուտեստից ու ապրուստից զրկելու, ինչպէս և շատերի տարա-
գիր լինելու պատճառով, սկուեցին տարափոխիկ հիւանդութիւն-
ները, որոնց զոհ գնացին բազմաթիւ հասակաւորներ և առանձնա-
պէս փոքրիկ երեխաներ: Այն, ինչ որ պակաս էր թողի եաթա-
ղանը, եկաւ լրացնելու մահացութիւնը: Եւ զոհերը կրկնապատ-
կեցին ու բազմապատկեցին:

Կազմել ընդհանուր ցուցակ այս բոլոր զոհերի ու գոյքային
կորուստների, որ տեղի ունեցան մի քանի շաբաթների ընթաց-
քում Վանի վիլայէթի մէջ, առայժմ անհնարին է, դա խաղաղ
օրերի ու տեական աշխատանքի գործն է. սակայն մարդկային
կորուստների մասին մի պազաֆար կազմելու համար մենք ա-
ռաջ կը բերենք մէկ վիճակագիր Արճէշի գաւառի վերաբերմամբ:
Կազմւած Չարդերից երեք ամիս յետոյ, ժամանակաւոր հայկա-
կան կառավարութեան օրով, ուր բերւած են միաժամանակ գրելի
անունը, տների ու շնչերի թիւը, ինչպէս և սպանւածների, ա-
ռեանդւածների ու մեռածների քանակը: *

Ահա այդ վիճակագիրը:

№	Գիւղէ անուն	Չարդերից տոաջ		Սպան- ւեցին	Առեանդ- ւեցին	Մեռան
		Տուն	Շունչ			
1	Ականց	304	2078	413	5	467
2	Բլուբմակ	96	645	187	22	40
3	Քարկէն	39	285	85	10	24
4	Իրիշատ	29	304	98	3	57

5	Օրօրան	36	410	92	30	14
6	Փափշկէն	8	85	27	12	6
7	Մաճառս	24	160	45	28	4
8	Ջրկրաշէն	5	61	28	5	5
9	Հասարկութեան	31	254	76	18	12
10	Զարուիթիւն	22	180	63	14	16
11	Սօսկուն	84	615	145	8	30
12	Խօջալու	12	84	8	—	1
13	Ազո	3	31	3	1	1
14	Արձաւարի վանք	20	120	26	2	20
15	Փայ	5	46	22	9	1
16	Գօղ ներքին	15	145	28	18	20
17	Գօղ վերին	11	105	34	35	7
18	Քալաքիւ	2	18	7	1	2
19	Կարած քար	32	250	44	2	12
20	Ազարաֆ	56	491	133	36	38
21	Գանձակ	26	206	42	13	6
22	Ջուղղեհա՛	38	390	129	39	36
23	Ծայծակ	28	211	36	6	24
24	Բանոն	29	180	25	2	2
25	Փայխներ	34	273	63	25	14
26	Մոյ	7	78	21	12	4
27	Բերդաշ	44	318	55	9	8
28	Չախրքէկ	5	49	31	11	1
29	Անձաւ	*	5	37		
30	Փիրոմար	*	5	46		
31	Հազրակ	7	85	16	3	6
32	Հաղի	4	31	8	7	1
33	Քօքն	3	16			
34	Քեարդիս	7	110	29	7	6
35	Սինամկշ	3	19	10	4	1
36	Ինջասու	4	55	31	7	4
37	Խաշերով	12	110	21	16	8
38	Մեծովայ վանք	34	305	101	54	18
39	Դատալու	*	4	23		
40	Ջէւէ	*	3	25		

41	Կարաջալու *	5	29			
42	Քօզեր	60	360	116	26	35
43	Շկաւտեան *	3	25			
44	Գէլկան *	2	14			
45	Գօմէշւան *	10	67			
46	Կրագոմ *	50	411			
47	Մաաղալանք	9	68	14	1	10
48	Դիլան	9	67	13	6	7
49	Արմիդոնք	26	240	30	8	4
50	Արձոնից վանք	5	61	19	3	7
51	Գենարորի վանք	5	37	4	—	4
51		1303	10313	2378	518	953

*) Աստղանիշ այս տասն գիւղերի ազգաբնակութիւնը միանդամայն անհետացել է. սրբան է սպանւած և որքանը գերւած, յայտնի չէ:

Համաձայն այս վիճակագրութեան Արձէշի գաւառի 51 գիւղերում նախ քան ջարդերը ապրում էին 1303 տուն հայեր 10313 շնչով: Ջարդերի ժամանակ զնդակահար ու սրախողխող ընկան 2378 հոգի փոքր բացառութիւններով տղամարդիկ ու երիտասարդներ: Առեանդուեցին ու գերւեցին 518 հորի գլխաւորապէս ջահիլ կանայք և պեղեցիկ օրիորդներ: Երեք ամուսն ընթացքում կենդանի մնացածներից տարափոխիկ հիւանդութիւնների զոհ գնացին 953 հոգի: Բացի այս, 10 գիւղերում ապրող 90 տուն հայեր 693 շնչով միանգամայն անհետացել էին: Այսպիսով Արձէշի գաւառը ջարդերի, առեանդութիւնների, մահացութիւնների և անհետացութիւնների հետեանքով կորցրել էր 4542 մարդ:

Այսքան էր մարդկային կորուստը մի շրջանում — Արձէշի գաւառում. որքան կը լինէր Վանի վիլայէթի 17 գաւառներէ բնդհանուր կորուստը, դժւար չէ պատկերացնել:

Սակայն ջարդերը առայժմ տեղի ունեցան միմիայն Վանի վիլայէթում: Միւս վիլայէթների ջարդերը, ինչպէս և հայ ժողովրդի տեղահանութիւնը բոլոր վայրերում, տեղահանութիւնն ի՞ր

Չարդերով ու սոսկումներով, որ անշուշտ մեր օրերի պատմութեան գերագոյն հատորները պիտի կազմեն, տեղի ունեցան յիտոյ—յաւնիս և յուլիս ամիսներէ ընթացքում, ինչ զրգումներով, յայտնի չէ: Իրողութիւնը այն է, որ Չարդերը առաջին անգամ գործադրեցին Վանի վիլայէթում ապրիլ ամսին, երբ միւս վիլայէթներում զեռ ամէն ինչ, ըստ երևոյթին, խաղաղ էր, եթէ կարելի է այդ օրերի նկատմամբ խաղաղ բառը գործածել:

Այս առիթով այստեղ կարևոր ենք համարում արձանագրել հետևեալ ուշադրաւ փաստը:

Ապրիլ 6-ին ինչպէս ամէն տեղ, այնպէս էլ Ալջաւաղ գաւառում սկսեց ընդհանուր Չարդ: Ժանդարմներ ու միլիտները, նրանց միացած նաև տեղական քիւրդ խուժանը յարձակեց ըտր զիւզերի վրա միաժամանակ: Այդ զիւզերից մէկն էր 48 տուն հայ ժողովուրդ ունեցող Նորջնջուղ գիւղը: Այս զիւզից Չարդը սկսելուն պէս 40 տղամարդ կարողացան փախչել և ապաստան գտնել սահմանակից Մանազկերտ գաւառի Կզըլ-Իւսուֆ գիւղում, ուր ապրում էին հայ ու քիւրդ խառը: Մանազկերտը պատկանում էր Բիթլիսի վիլայէթին:

Ապրիլի 13 թէ 14-ին, երբ Ալջաւաղում ծրագրած Չարդերը կատարել զիւջացել էին և ոճրագործ ժանդարմներ ու միլիտներ յիդիացած հանդիստ էին աւելում, Ալջաւաղի գայմաղամը լուր առաւ, որ իր գաւառից բաւականաչափ հայեր կատորածից փախչելով, գտնուում են Մանազկերտի Կզըլ-Իւսուֆ գիւղում, ուստի Ալջաւաղից մի երկու տասնեակ ժանդարմներ անցան Մանազկերտի սահմանը, յայտնեցին յիշեալ Կզըլ-Իւսուֆ գիւղը և այնտեղ ապաստանած 40-ի չափ Նորջնջուղի հայերին կապկպելով ասբան զիւզից դուրս և արդէն յայտնի ձեւերով բոլորին սպանեցին:

Կզըլ-Իւսուֆի հայերը սարսափահար եղած անմիջապէս լուր տարան Մանազկերտ, առաջնորդական փոխանորդ Յովհաննէս քան. Տէր-Աւետիսեանին:

Մանազկերտում գայմաղամի պաշտօն էր վարում Գաւառնի նախկին միւղէր Իբրահիմ Խալիլը—Բաշբուրդցի մի խաղաղասէր տաճիկ:

Մանազկերտում միաժամանակ կառավարական գանձապահ (սանդղ էմինի) պաշտօն էր վարում մէկ հայ—Մուշի ա-

Վաշնորդարանի նախկին քարտուղար Նազարէթ Մարտիրոսեանը: Կըզլ-Իւսուֆուս տեղի ունեցած խմբական սպանութեան լուրը առնելով, փոխանորդ Տէր Յովհաննէսը, վերցրեց Նազարէթ Մարտիրոսեանին, գնաց զայմազամի մօտ, բողոքեց կատարած սպանութիւնների առիթով, բողոքեց հարեան վիլայէթի ժանգարմանի ներս խուժումը հանդերձ վայրագութիւններով, և պահանջեց միջոցներ տեղական հայ ժողովրդի պաշտպանութեան համար:

Գայմազամը լսելով փոխանորդի բողոքը, յայտնեց, որ ինքը արդէն այդ մասին հեռագրով դիմել է կուսակալին և ստացել է պատասխան, ու հանելով ծոցից կուսակալի հեռագիրը, կարդաց հետեւեալը:

«Կայսերական իրադէտով (պա իրադէի սէնիէ) առայժմ վանի վիլայէթին կը վերաբերի այդ կարգադրութիւնը և վանի շրջանի ժանգարմանը իրաւունք ունին հետապնդել և ուր զըտնեն իրենց գաւառի հայերը իբրև յանցաւորի պատժել, ինչ կը վերաբերի մեր վիլայէթին, քանի որ հայերի կողմից որևէ խլըրտում նկատելի չէ, այդպիսի դէպքեր տեղի ունենալ չեն կարող:

Ի հարկէ հարցը վերաբերում էր սկսած ջարդերին և Բիթլիսի կուսակալը իր պաշտօնական հեռագրով գալիս էր հաստատելու, որ ջարդերը թոյլատրւած են սուլթանի իրադէտով և որ առայժմ ջարդերի կարգադրութիւնը արւած էր միմիայն վանի վիլայէթի նկատմամբ:

Եւ այսպէս իրենց պաշտօնական վաւերացումն էին գտնում այն սոսիսլի ջարդերը, որոնց մենք տեսանք մի փոքր առաջ և որոնք գալիս էին հրիտասարդ թուրքերի կառավարութեան աւսօրինակ ոճիրնների էութիւնը կազմելու:

ԴԻՄԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՀԱՒՈՐ ԶԱՐԴԵՐԻ

ՃԱՄԱՆԱԿ

Նախորդ գլխում մենք տեսանք ահաւոր ջարդերը, ջարդեր, որոնք ընթանում էին մի անօրինակ, անդիմադրելի թափով. և որոնց դէմ բազմի հուժկու ձայն չէր լուում, ըմբոստացած ոգու մարանչումը չէր երևում: Մարդիկ տասնեակներով, հարիւրներով ու հազարներով գոհ էին գնում նենդամիրտ խարերայութիւնների. մէկէն իրենց զգում էին շղթայի դարկւած, կապանքների տակ և լուռ ու անխօս առաջնորդում էին սպանդանոցները ու այնտեղ մորթուում, ինչպէս մտացու կենդանիներ՝ մտազործի դանակի տակ: Մարդկանց այսօրինակ մորթուելը զարհուրելի էր լինէր, եթէ ամեն տեղ պատկերը նոյնը լինէր, եթէ ամենքը ընկնէին նոյն լուռ հնազանդութեամբ:

Սակայն եղան գիւղեր, գանւեցին շրջաններ, որոնք լուռ գլուխ չը ծոցին դահճի առաջ, որոնք բողբոցին, ըմբոստացան և փարելով գէնքին, դիմադրեցին տաճկական հաթազանին: Ծիշա է, կուրը անհաւասար էր, ուժերը անհամադաստասխան և շատերը գէնք վերցնողներից նոյնպէս ընկան, բայց ընկան քաջաբար, ընկան հարւածելով թշնամուն, ընկան փրկելով ցեղի ահունը, դրա հետ նաև նրա գոյութիւնը:

Սակայն ամենքը չընկան, ամենքը չը պարտւեցին, եղան դիւղեր, եղան շրջաններ, որոնք մինչև վերջն էլ մնացին անընկճելի, հպարտ և որոնք նոյնիսկ յաղթեցին ու յաղթանակեցին, հանդիսանալով միթիթարիչ ու հոգեպնդիչ շեշտը այն ահաւոր առնկուկների մէջ, որ մենք տեսանք:

Ահա այդ հոգեպնդիչ անցքերի պատմութեանը անցնում ենք սրանով:

✓
✓
✓
✓
✓
✓

Ա. ԴԻՄԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՐՃԱԿՈՒՄ

Արճակը փոքրիկ գաւառակ է և գտնւում է վանից դէպք հիւսիս-արեւելք. նա յայտնի է համանուն լճով, որի արեւելեան և հիւսիս-արեւելեան մասը դաշտային է, իսկ ֆնացեալ մասերը լեռնոտ. առանձնապէս լեռնոտ է արեւմտեան մասը, ուր աչքի է ընկնում կղզիա լեռը:

Դիւզդերից նշանաւոր են Արճակը և Սառակոնիսը՝ երկուսն էլ զուտ հայաբնակ գիւղեր, որոնցից առաջինը ունի 180 տուն, իսկ երկրորդը 230 տուն հայ բնակիչ: Նրանք գտնւում են լճի արեւելեան ափին միմեանցից կէս ժամ հեռաւորութեան վրա:

Արճակը գաւառի կենդրոնավայրն է. այստեղ նստում էր միւղիբ, որը ենթակա էր քաղաքին:

Ջարդերի օրերի միւղիբը կրգրուցի մի տաճիկ էր՝ անու- նը Շաֆքի րէչ. նա ճանաչւած էր խաղաղութէր մարդ:

Արճակի ինքնապաշտպանութեան գործը ղեկավարում էր այդ շրջանում յայտնի խառակոնխցի Շիրին Յաւորեանը, գա միւնոյն ժամանակ միւղիբի հետ հաւաքում էր պատերազմական տուրքը և հոգում էր շրջանում գետեղւած, ինչպէս և եկող գնա- ցող պահեստի թաքուրներէ ուտեալը, ապրելով միւղիբի հետ մէկտեղ, Արճակ գիւղում:

Ապրիլի 5-ին Շիրինի մօտ եկաւ Բերկիբի գաւառի Փիսօզ- լան գիւղացի Նուրօն, որը Գաշնակցութեան նախկին օրերի սուրճանդակն էր, հաւատարիմ ու բարեկամ մի քիւրդ, և պատ- մեց, որ Բերկիբի գայմազամ Ջիա րէչը իր մօտ կանչեց գաւա- ռի մախթարներին ու սպիներին և խտախ պատերեց, որ կր- տորածի դէպքում ոչ մի քիւրդ չը համարձակէր հայերին իր մօտ ընդունելու և պաշտպանութիւն ցոյց տալու, հակառակ դէպքում այդպիսիները դնդակաձար կարեհն:

Այս զգուշացումից երկու օր անց, ապրիլի 5-ին, Սարայից Արճակ եկաւ 150-ի չափ հեծեալ և հետեակ զօրք մէկ թնդանօ- թով, գիւղ մտնելով նրանք պահանջեցին Շիրինին, բայց Շիրին նը այդ միջոցին գտնւում էր Սառակոնիսում, ուստի երկու ժանդարմներ ուղարկեցին կանչելու. Շիրինը կասկածի մէջ ըն- կաւ, ժանդարմները շտապեցնում էին ու պահանջում. Շիրինը

հրաժարուց գնալ և ժանդարմները հեռացան Շիրիկի սպանա-
ւիքից յետոյ:

Արճակի շրջանի կոտորածը, ինչպէս յետոյ սրբուհեց, յան-
ձնւած էր Սարայի գայմազամ Քեռածիլ բէյին, որը չէր վստահա-
ցել Արճակի միւղիբին յայտնելու ջարդերի ծրագիրը: Այն ժա-
մանակ, երբ յիշեալի 150 հոգի զօրքը Արճակ ուղարկուց Շիրիկին
ձերբակալելու, այդ նոյն օրը գայմազամը վերցրեց Խանասօրի
Շարաֆ բէյին, մուկուտցի նաջիր աղային և շաւէյի Արիֆ բէ-
յին բազմաթիւ քիւրդերով և եկաւ Մանդան գիւղի վրա: Մանդա-
նը, որը անցեալում անուն էր հանել աւագու Սայիդ բէյին դի-
մազարութիւն ցոյց տալու մէջ, այդ պիւղին էլ ուղղեց գայմազամը
իր առաջին հարւածը: Գիւղի երկու տասնեակ զինուած տղաները,
չօղինալով դիւղի աւերման պատճառը դառն լնախօրօք քաշու-
ցին Խառակոնիս, համոզուած, որ իրէ իրենք զիւղում չը լինեն
ժողովրդին չին զիւղել, սակայն տղաների հետանալով գիւղը չը
Քրիւհեց, քիւրդերը գիւղ մտան թէ չէ, սկսեցին վայրագութիւն-
ները, ժողովուրդը սխալաւ, 15-ի շափ մարդ սպանեց փողօցնե-
րի մէջ և տները նսխարկեցին կոզողուախ:

Մանդանը աւերելուց յետոյ, ապրիլի 6-ին գայմազամը խու-
ժանի գլուխն անցած եկաւ Արճակի վրա: Արճակի տղամարդ-
կանց մի մասը արդէն քաշուլ էր գիւղից, իսկ միւս մասը մնա-
ցել էր, վստահացած միւղիբի պաշտպանութեան վրա: Յերեկեա
ժամի 1-ն էր, խուժանը Արճակ մտաւ զազանացած և սկսեց
կոզողուան ու կոտորածը միաժամանակ: Այստեղ կոտորածը այլ
բնոյթ ստացաւ, նա նման չէր Արճէշի դաւաղիլը ջարդին, քիւր-
դերն ու զօրքը մանում են աները, դուրս էին քաշում պահած
տղամարդկանց և տեղն ու տեղ կին ու երեխաների ներկայու-
թեամբ սպանում էին: Կոզողուում էին աները, բռնաբարում էին
կանանց և օրիորդներին, իսկ ով զիմազարութիւն էր ցոյց տալիս,
նա էլ սպանում էր: Վայրագութիւնները շարունակեցին մինչև
երեկոյ, սպանուելով զիւղում մնացած բոլոր տղամարդիկ— աւելի
քան 100 հոգի և բռնաբարեցին բազմաթիւ կին ու օրիորդներ:
Այս բոլորը կատարեցին գայմազամի ներկայութեամբ:

Այն ժամանակ, երբ Արճակի մէջ կատարում էին խժոժու-
թիւններ, քիւրդերի մի բազմութիւն ժանդարմների առաջնոր-
դութեամբ եկաւ Խառակոնիսի վրա: Խառակոնիսում այս միջո-

Դ ցին գանուում էր աւելի քան 2000 ժողովուրդ. տեղականից բացի այստեղ ազատ սննդ էին ժողովուրդներ՝ Հաղարէ, Բողազքեա սան և Մանդան: գիւղերից: Հաղարէն և Բողազքասանը դատարկեցին զես ևս դեկտեմբեր-յունուար ամիսներին, երբ Բաշկալէի կողմերում տեղի ունեցան կտորածներ: Բացի ժողովուրդից, Սառակոնիսում խմբել էին 100-ի չափ կուռղ տղաներ՝ Մանդանից, Արճակից և այլ գիւղերից: Սուսի երբ քիւրդերը մօտեցան Սառակոնիսին, գիւղի շրջակա գիւղերից մէկէն կրակ բացւեց և քիւրդերը մի քանի ժամ աննպատակ զնդակներ տեղալուց յետոյ, ձեռնուսայն վերադարձան Արճակ, ուր վայրագութիւնները գետ ևս շարունակուում էին:

Ապրիլի 7-ին Արճակի ամբողջ ուժը—զօրքը մէկ թնդանութով և անազին թւով քիւրդեր եկան, պաշարեցին Սառակոնիսը: Գիւղի մօտակա գիւղերից ու պարտէզներից սրտասցին ինքնապաշտպան տղաների կրակները. զօրքն ու խուժանը բոբբոբւեց, ամէն կողմից սկսեցին զնդակներ տեղալ գիւղի վրա. գործել սկսեց նաև թնդանութը, բայց գիւղը տեղի չը տւեց և ինքնապաշտպան տղաները գիւղերը պահեցին: Կոնիւր տեղից մինչև երեկօ. տղաները չընկճեցին. և երբ մութը կոխեց, թշնամին քաշւեց Արճակ: Այդ օր հայերը ունեցան երկու սպանւած, որոնցից մէկը մի կարիճ աղա էր, Մանդան գիւղից, անունը Մանակ, իսկ թշնամին ունեցաւ մի քանի սպանւածներ: Չը նայած այն հանգամանքին, որ թշնամին երկու անգամ պաշարելով գիւղը նրան ընկճել չը կարողացաւ և մի քանի տասնեակ տղաներ գէմ գրին թշնամուն, բայց և այնպէս Սառակոնիսը համարւեց վտանգաւոր, ուստի երբ մութը կոխեց և զօրքն ու քիւրդերը քաշւեցին, տղաների պաշտպանութեան տակ ժողովուրդը լճի հրախոսային փոքրով տեղախոխեց Կզլճա լիւրը: Այս նոյն միջոցին մի քանի տղաներ էլ ուղարկեցին Պարսկաստան կտորածների լուրը տանելու:

Ապրիլ 8-ին քիւրդերն ու զօրքը նորից եկան Սառակոնիսի վրա, գիւղում շատ քչերն էին մնացել. այն էլ ձերուներն, կանայք ու երախաներ. անարգել թշնամին ներս խուժեց գիւղը և սկսեցին վայրագութիւնները. կողոպտեց մնացած գոյքերը, մի քանի աներ հրդեհեցին և 50-ի չափ կին ու երախաներ, ինչպէս և ձերուներն սպանւեցին:

Այս միջոցին սկսել էր նաև Թիմարի կոտորածը, ուստի քրքրև պաշտպանութեան վայր, Կզլջաի լեռը թափուեցին եկան ահապին թւով ժողովուրդ Արտաւէզ, Կոճ, Աղիգեօզալ, Կիւսննց, Սէթի-բէկ, Սառաշիկ, ինչպէս և Բերկըրի Բեարաբիկ գիւղից: Քուտի դայժագամը և քիւրդերը իրենց ուշադրութիւնը դարձրին այս կէտն վրայ:

Ապրիլի 9-ին 300-ի չափ քիւրդեր փութեցին Կզլջաի լեռը քարցրանալ հիւսիսային կողմից, ուր գտնուում էր Եալիուզագաջ գիւղի ձորը, բայց զիրքեր պաշտպանող տղաների կրակի տակ զնկնելով յետ դարձան մի քանի զոհեր տալով:

Ապրիլ 10-ին Արճակն ու Սառահոնիսը աւերակ դորքն ու քիւրդերը լճի հարաւային ափերով եկան Նարաթ գիւղի վրա. այստեղ խմբուել էին արգէն Միկնիւր և Զօրան-օղլի գիւղերի ժողովուրդը: Մինչև որ քիւրդերն ու դօրքը գիւղը կը կոխէին, մի քանի զինուած տղաներ դբաղեցրին նրանց և ժողովուրդը ժամանակ դտաւ քաշուել Կզլջա լեռան Զօմախլու կոչուող կատարը: Այս նոյն կատարի վրա քաշուեց նաև Կզլջա և Եալիուզագաջ գիւղերի ժողովուրդը:

Թշնամու ուժը զնայով աւելանում էր, կողոպուտի տենչով քոնուած խուժանը անում էր, հազարաւոր ժողովուրդ լեռների վրա պահել դժւար էր իսկ գիւղերը դարձել էին անմատչելի, ուստի մինչև երեկս թշնամու յարձակումները մի կերպ կանգնեցնելով ձրբ մութը կոխեց և թշնամին հեռացաւ, ժողովուրդը քաշեցին Աւերակի գիւղ, որը գտնուում էր Վանի ճանապարհի վրա: Գիւղը բոլորովին դատարկ գտան, երեք օր էր ինչ Վանը կուի դրօշակն էր պարզել, որը մենք կը տեսնենք յետոյ. շրջակա մի քանի գիւղերի ժողովուրդը փախել էր Քաղաք, փախել էին նաև Աւերակի և Շահբաղի գիւղերի ժողովուրդները: Աւերակի եկաւ խմբուեց Կզլջա լեռան ահապին ժողովուրդը, ինչպէս և Քողանց ու Բայրակ գիւղերի ժողովուրդները՝ աւելի քան 8000 հոգի:

Ապրիլ 11-ը ծանր օր հանդիսացաւ. առաւօտը լոյս բացելուէն պէս նոյն դօրքը բազմաթիւ քիւրդերով եկաւ պաշարեց Աւերակին. սկսեց մի յամառ ու տեսկան կռիւ, ինքնապաշտպան տղաներ մի կողմից, ահապին թշնամին մի թնդանօթով միւս, օրը համազարկերի սրտաներով էին աղմկում: Մի քանի

դիրքերի շուրջը կուրը խիստ յամառ բնոյթ ստացաւ, դրանցից մէկն էր գիւղից դէպի հարաւ ընկած Դղմաքար կոչուող դիրքը: Այս դիրքը պաշտպանում էին Բեաբարիկ քիւզի 12 քաջ աղաներ՝ քիւրդ Ղազարի և իր ազա Ալոյի ղեկավարութեամբ: Յամառ գիմադրութիւնը վերջացաւ հերոսական մահով. այդտեղ 12-ն է ընկան, ընկան քաջարար, ընկան թշնամուց գոհեր խելլով: Այս դէպքը յուսահատութիւն առաջ բերեց և դիւղի շրջակա դիրքերը քրէեցին: Թշնամին աւելի ևս մտոհցաւ. պաշարման օդակց նեղացաւ և գնդակները սկսեցին տեղաւ շեշտակի գիւղի մէջ:

Շիտթ բարձրացաւ. ժողովրդից մի մաս սարսափահար գիւղից դուրս եկաւ և դիմեց դէպի Պողոսնց գիւղը, բայց ճանապարհին քիւրդերը յարձակեցին նրանց վրա և սկսեց կոտորած ու կոտորուա, որի ժամանակ սպանւեցին 150-ի չափ աղամարդիկ:

Այս միջոցին յամառ կուր տեղի ունէր նաև Զօրան-օղլու լեռան շուրջը. քիւրդերի մի մեծ բազմութիւն փորձում էր գրաւել լեռը, իսկ 40-ի չափ զինւած տղաներ զինազրում էին. ուժերը խիստ անհաւասար էին, ուստի սղանները սախալած եղան թողնել դիրքը և քաշուել Կզլջա լեռը, ապառ 5 զու, ընկածներից էին Արամ եգիպտաբեանը և Մանասէր Ասպատուբեանը:

Այս նոյն միջոցին Սառաշիկ գիւղի 40-ի չափ սարքի աղամարդիկ, որոնք Սօշ-գեաթաւի դժով շտապում էին Վան, հանդիպեցին զօրքերին և ըտլորն էլ սպանւեցին:

Կուր Աւերակի գիւղի շուրջը շարունակեց. թէև թշնամին գիւղի մէջ խուժել չը կարողացաւ, բայց զլուրածայրերում գրանուղ տները սկսեց աւերել և ձեռք ընկած մարդկանց սպանել: Գործում էր նաև թնդանօթը, նրա սումբերը ընկնում էին գիւղի մէջ ու պայթում, որից վիրաւորում ու սպանում էին մարդիկ. մի սումբ ընկաւ գալրոցի մէջ, որից սպանւեցին 5 հոգի: Կուրը շարունակեց մինչև երեկո, վրա հասնող գիւղերը վերջ տւեց կրակին, քիւրդերն ու զօրքերը սովորականի պէս քաշեցին, և զինւած տղաները առնելով 7000-ի չափ ժողովուրդ գիմեցին Վան՝ թողնելով 100-ի չափ սպանւածներ գիւղի մէջ: Այս միջոցին Վանը ապրում էր կուրի կրկրորդ շրջանը, թշնամին գիմադրութեան ուժեղ թափը ճաշակել էր, գիւղերները մոտաքէ դէպի Այգեատան ազատ էր:

Ապրիլի 12—13-ին Աւերակին պաշարող ուժը յարձակեց Գարման և Կողպանց գիւղերի վրա, ուր խմբել էին Լիմ, Զարանց, Սևան, Էրմանց (ասորիներ), Պախէզիկ, Ծառուղ և Ոսկիքակ գիւղերի ժողովուրդը՝ 3000 հոգու չափ. սակայն 70 զինւած տղաներ գիմաղբեցին և ժողովուրդը անվտանգ քաշեցին Վարազի լեռը, որին կը պատահենք մի այլ տեղ:

Բ. ԳԻՄԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԱՅՈՅ-ԶՈՐՈՒՄ

Այն ժամանակ, երբ Սարայի գայմաղամը թնդանօթով, զօրքով և բազմաթիւ քիւրդերով Մանդան գիւղից սկսած աւերելով Արձակը, Սառակոնիսը, առաջնում էլ զէպի միւս գիւղերը և Արձակի ինքնապաշտպանութեան խումբը գիմաղբելով խուժանին, ժողովուրդը քաշում էր զէպի քաղաք, նման աւերումներ սկսել էին նաև Հայոց-Զորի երկու ծայրերում:

Հայոց-Զորը ընկած է Վանից զէպի հարաւ մի երկարուկ ձորանովիտի մէջ, որը արևմտեան ուղղութեամբ ձգւում է մինչև Վանի լիճը: Զորանովտի միջով հոսում է Սոշար գետը, որի երկու ափերի ուղղութեամբ, ձորանովտի մէջ ընկած են աւելի քան 35 գիւղեր: Գաւառը բաղկացած է երկու մասերից, մէկը ձուլւում է Վերի, իսկ միւսը Վարի Հայոց-Զոր:

Վերի Հայոց-Զորում յայտնի են Էրէմէբու, Անկշտանց, Ասաւածաշէն գիւղերը. Վարի Հայոց-Զորում՝ Կեմ, Իշխանի-դոմ, Բերձ, Պլթենց գիւղերը, յայտնի է նաև Նոր-գիւղը:

Ապրիլ 3-ի գիշերը, ինչպէս տեսանք, Հիրճ գիւղում Բաշիգ աղայի տան մէջ դաւադրաբար սպանւեց Իշխանը իր երեք ընկերներով, իսկ ապրիլի 5-ին ժողովեցին նախ տան մէջ Հիրճի քոլոր տղամարդկանց—Թւով 46 հոգի և բոլորին էլ սպանեցին:

Անա այս զէպրերի հետ միաժամանակ կառավարութիւնը ձեռնարկեց Աթանան գիւղը աւերելու Գեկտեմըր ամսում, ինչպէս իր տեղում տեսանք, Աթանանը մեծ սարսափ տարածեց կառավարութեան վրա, դա այն զէպըն էր, ելը Ոստանում զբռնող զօրքի առաջ ճանապարհը փակեց և զօրքը համաձայն էջ գիւղի միջով անցնել այն ժամանակ, երբ Վաւմեանը գայմաղամի հետ եկաւ իջաւ Աթանան: Այժմ Զէդէտը ձեռնարկելով հայփական ջարդերին, նախ ուղեց մէջտեղից վերացնել յիշեալ անանգիստ գիւղը: Սուտի դեռ ևս ապրիլի 3-ին Ոստանի ժառանգիստ գիւղը:

դարմանքն ու քիւրդները շարժւեցին դէպի Սպիտակ վանքը, որք հանդիսանում էր Աթանանի կոնակը պաշտպանող կէտ, և գաղտազողի ուղեցին վանքն ու գիւղը գրաւել և ապա առաջանալով դէպի Աթանան, Սահայն այդ շրջանի 8 զինւած տղաները իմանալով ժանդարմների ու քիւրդների այդ դիտաւորութիւնը, նախօրօք գրաւեցին գիւղի գերբերն ու վանքը և թոյլ չը տւին թըշնամուն վանքին մօտենալ: Երեք օր շարունակ տղաները վանքը պահեցին և քիւրդների կողմից եղած յարձակումները յետ մղեցին: Սահայն ապրիլի 6-ին քաղաքից գէպի Հայոց-ձոր շարժւեց ժանդարմայի հարիւրապետ Էդհէմ բէյը 300 միլլիսներով և երկու թնդանօթներով, և անցնելով Սոչաբ գետը, կանգ առաւ Պըլթենց գիւղի առաջ, Այստեղից թնդանօթների բերանը գարձրեց գիւղին և մի քանի ռումբեր արձակեց գիւղի վրա: Սահայն ռմբակոծութիւնը անպատասխան չը մնաց. Հէրի-Քամակ կոչւող տեղից զինւած տղաների մի խումբ կրակ բացեց թշնամու վրա, երեք հոգի սպանւեցին և զօրքը յետ քաշւեց: Բայց շուտով նոր ուժեր հասան և Էդհէմ բէյը յարձակեց գիւղի վրա նոր թափով: Տղաները նկատելով որ այս անգամ այդքան ուժին չիմադրել չը պիտի կարողանան, առան գիւղի ժողովուրդը և քաշւեցին Գէլիէսա կոչւող լեւը, որից յետոյ զօրքը մտաւ գիւղը և աներն սկսեցին կողոպտել ու հրգեհել:

Պլթենց աւերելուց յետոյ զօրքը շարժւեց Սպիտակ վանքի վրա, բայց մինչև այդ քաշւել էր արդէն ժողովուրդը թէ Սպիտակ վանքի գիւղից և թէ Աթանանից: Վանքը մնաց երկու կողմերից տեղացող կրակի տակ. տղաները մի քանի ժամ ետ գիմադրեցին և վերջը քաշւեցին, մի սպանւած տալով: Այստեղ աչքի բնկաւ Գարբէլ անունով մէկ տղա, Պլթենց գիւղացի: Սպիտակ վանքի տղաները քաշւելուց յետոյ, քաշւեցին նաև Աթանանի տղաները և երկու գիւղերն էլ բնկաւ զօրքի ձեռքը: Աթանանի ղեկտեմբերեան ղէպքերի հերոսը՝ խարականցի Լեոնք բացակա էր և այդ պատճառով լքումը շուտ էր վրա հասնում:

Վարի Հայոց-Ձորի այս մի շաբա ղէպքերից յետոյ Քերձ գիւղի լեւը քաշւեցին Քերձի, կղզաշի ժողովուրդը, Աթանանի ժողովրդի մի մասը, նաև Գէլիէսա քաշւած պլթենցի ժողովուրդը: Քերձի լեւը ունէր պաշտպանութեան մեծ յարմարութիւններ:

Մինչդեռ Վարի Հայոց-Չորում տեղի է ունենում այս դէպքերը, նման դէպքեր դառնում էին նաև վերի Հայոց-Չորում:

Յարաբերութիւնները մի քանի օրից ի վեր վերի ու վարի Հայոց-Չորերի մէջ խզել էր և այդ շնորհիւ նրա, որ փախստական հայ զինուորներին որսալու պատրաստի տակ ժանդարմների ու միլիտանների թարուր կօմանդան Անձող բէյը 200-ի չափ ժանդարմների ու միլիտանների գլուխ անցած, շրջում էր վերի Հայոց-Չորում և բանութիւններ էր գործում: Փախստական զինուորներ շատ կային, քայց նրանց մեծ մասը ցերեկները քաշում էր լեռների ու այրերի մէջ, իսկ զիշերները իջնում էր գիւղը: Այսպէս վնում էր շնորհիւ նրա, որ ոչ մի տաճիկ պաշտօնեա չէր համարձակում գիշերները հայ գիւղերը մանել:

Եւ վերի Հայոց-Չորը չը գիտէր ինչ է կատարւում վարի Հայոց-Չորում, նոյնիսկ Հիրճ գիւղում, երբ մէկէն ապրիլի 5-ին այդ շրջանը յայտնեց Նօրդուզից պրաւցինների զեդադիա Շաքիր աղի ազա կազգին: Նա եկել էր Շատախի արևելեան մասի հայ գիւղախումբը կողոպտելուց յետոյ:

Պօշար գետից դէպի ձախ, կէս ժամ մի ժամ հետադուրսեան վրա ընկած են Անկշտանց, էրէմէրի և Կզզի գիւղերը: Ասաջին երկու գիւղերը զուտ հայաբնակ են՝ մէկը 67, միւսը 82 տուն բնակիչներով, իսկ երրորդում ապրում են 44 տուն հայեր, 12 տուն քիւրդեր: Անկշտանց ու Կզզին ծառայարդ գիւղեր են:

Նօրդուզից եկող ճանապարհը նախ իջնում է Անկշտանց, ապա երկու թևով առաջանում է դէպի աջ՝ էրէմէրի, իսկ դէպի ձախ՝ Կզզի:

Եւ ահա ապրիլի 5-ի առաւօտեան Անկշտանցի վրա եկաւ Լազգին իր բազմաթիւ ձիաւորներով: Գա կրում էր արևելեան բարձրերին յոտուկ արշաւախմբի բնոյթի, նախ առաջ-առաջ պալիս էին 8—10 ձիաւորներ, իբրև առաջապաներ, ապա զալիս էր Լազգին իր թիկնապաճներով, իսկ Լազգուն հետևում էին նրա ձիաւորները, ինչպէս հրոսակախումբ:

Գիւղում կային 20 զինւած տղաներ, որոնք նկատելով ձօնեցող քիւրդերին՝ բաժանեցին երկու մասի, մի մասը՝ 12 հոգուց բաղկացած, քաշեց գիւղի միակ երկյարկանի Սահարի տունը, իսկ միւս մասը՝ 8 հոգուց բաղկացած, անցաւ վարի թաղը և ամբացաւ Փօլաղի Յարութիւնի տան մէջ: Մինչդեռ զին-

և ամ տղաները այս պատրաստութեան մէջ էին, զիւզի հասակաւոր մարդկանցից 8—10 հոգի առաջնորդութեամբ սէս Մուրազի դուրս եկան զիւզի ծայրը դիմաւորելու Լազդիին: Մօտեցան նախ առաջապահները և ապա Լազդին իր թիկնապահներով: զիւզի հասակաւորները ողջունեցին նրա գալուստը «սար-սարան սար-ճաւան» (զլիխա, աչքիս վրա) բացականչութիւններով և ձիերի սանձերից բռնած առաջացան զէպի զիւզը. և երբ նրանք հասան նախրատեղ կոչւած հրապարակը, այստեղ Լազդին նշան տւեց, մի քանի հրացաններ միանգամից սրտոացին և առաջին զոհերը եզան պիւզի հնազանդութիւն ցոյց տւող հասակաւորները: Այստեղ ընկաւ ի միջի այլոց սէս Մուրազը, Սախօի Աւետը, Հօխանի Աւանդը և մի քանի ուրիշները: Գիւրգիւրի բացած հրացանների ձայնի վրա, սրտոացին հրացաններ նաև Ասփարի տան եշկրորդ յարկից և ընկած հայերի կողքին փախցին նաև մի քանի քիւրդերի զիակներ: Գիւրգիւրը յանկարծակիի եկած, ամբողջօպէս քաշւեցին պատերի տակ ու պարտեզների մէջ և երկու կողմից սկսեց ուժեղ հրացանածգութիւն:

Կռիւը տևեց մինչև կէս օր. քիւրդերը չը կարողացան զիւզը խուժել և առժամանակ յետ քաշւեցին: Գրանց մի մասը գատուեց և զիմեց զէպի էրէմէրի զիւզը, էրէմէրին նոյնպէս ունէր 20-ի չափ զինւած տղաներ. տաքաբախդարար նրանք զիւզում չէին. հետապնդող ժանդարմներից խոյս տալու համար իջել էին քաղաք և դեռ չէին վերադարձել. այս պատճառով էլ քիւրդերը անարգել խուժեցին զիւզը, մտան տները և սկսեցին կողոպտել, սպանել ու առևանգել: Ամբողջ զիւզի մէջ մէկ հաս զինւած աղա էր մնացել, այն էլ մաուզէր տարճանախով զինւած սա 25 տարեկան մի երիտասարդ էր, անունը Մահակ Գարբիէլիան: Հերոս աղան չընկճեց, տեղի չը տւեց. վերցրեց ատրճանակը, բարձրացաւ զիւզի ամենալաւ դիրք ունեցող—Պանիրեանի տունը ու սկսեց կրտսիլ. քիւրդերը եկան պաշարեցին նրան, բայց նա անձնատուր չկաւ, իր ամբացած տեղից շարունակ կրակում էր ու զիակներ փռում: Ծառերի վկայութեամբ հերոս աղայի զնգակներէից 7 քիւրդեր ընկան, 7 զիակներ փախցին նրա զիւզի շուրջը, և նա ոչնչախի ստրտափ տարածեց իր շրջապատում, որ զիւզի մի մասը կողոպտելուց և պատահած մարդկանց սպանելուց յետոյ, այդ տանը այլևս չը մօտեցան:

շուտով մուժը վրա տեղս և քերդերը քաշեցին նորից Անկշ-տանց: Երբ քերդերը քաշեցին և մուժը բոլորովին կոխեց, հե-րոս սղան ցած իջաւ իր գիրքից, առաւ ժողովուրդը և բանեց Կուռուբաշի ճանապարհը, թողնելով գիւղի փողոցներում 80-ի շափ գիւղներ, որոնց թւում նաև մի քանի կանանց ու երեխա-ների գիւղներ:

Յարձակումը Անկշտանցի վրա վերսկսեց նոր թափով կէսօ-րից յետոյ. տաք կուրը շարունակեց մինչև երեկոյ. քերդերը մի կողմից վերցնում էին իրենց գիւղները, որոնց թիւը հաս-նում էր 20—25-ի, միւս կողմից գիւղի շուրջը կազմում էին սղաշարման գիծ, որպէսզի մթութիւնից օգտուելով սղաները չը կարողանային փախչել: Սակայն այդ շաջողեց նրանց. մուժը պատեց թէ չէ, սղաները գուրս եկան իրենց գիրքերից, կազմե-ցին մի կուռ շղթա և գիծը պատելով, անհետացան: Բացեց սարսափելի առաւօտ. գիւղը պաշտպանող սղաներ չկային, ուս-տի քերդերը ներս խուժեցին անարգել և ներս խուժեցին դա-դան կտրած: Մրազբւած շարդին աւելացաւ անձնական վրէժ-իններութիւնը և Անկշտանցի փողոցներում ու տները մէջ ըս-կուեց մի շահնուած կողովուտ, սպանութիւններ ու առեան-գումներ: Այդտեղ սղանեցին տելի քան 70 մարդ, նաև կանայք ու երեխաներ: Ժողովուրդը վայնասուճով ձգեց դիւղն ու փա-խաւ, որը նրանցից բունց Ասաւածաշէնի ու այն տեղից էլ Վա-րպի ճանապարհը, և սրն էլ գիւղեց Իէմզօսնի գիւղ՝ ծանօթ քերդերի մօտ պատասպարելու համար: Այսպիսով Անկշտանցը աւերեց, նա դարձաւ Լազգիի վայրադուրթեան վայրը:

Անկշտանցն աւերեց, աւերեց նաև երէմէրին և Լազգին իր հրոսակոտիւմով անցաւ Կղզի: Այս գիւղում ապրում էր մի վատ անցեալ ունեցող քերդ—Մահմադ Շարիֆ, որը այժմ հա-մարում էր հայերին բարեկամ: Լազգին իր շքախմբով իջաւ Մահմադ Շարիֆի տունը: Սա հայերին վատահացրեց, որ չի թող-աւ իր գիւղում վայրադուրթիւններ և հայերը հաւատացին: Վկայում են, որ ճաշի ժամանակ Մահմադ Շարիֆը շատ խնդ-րեց Լազգիին իր գիւղը խնայի, բայց չեղաւ. Լազգին պատաս-խանեց, որ հրամանը վերից է, և որ հրամանը վերաբերում է բոլոր գիւղերին անխտիր: Ըստը վերջացաւ. հերոսակապիտի ստամբքը յաղեցաւ և հրամանը տրեց: Նախ սղանեցին գիւ-

դի առաջաւորները և ապա ջահիրները՝ թւով 60 հոգի Իրանց մէջ էին Ալոսեան Յովսէփը, Կարապետեան Յարութիւնը, Մանուկեան Վարդանը և զիւրի քահանան—Տէր Մկրտիչը՝ բոլորն էլ խաղաղ ու հանգիստ մարդիկ:

Այդ զիւղում ազատեցին 8 երիտասարդներ, և այն էլ շընորհիւ նրան, որ զէնք ունէին և քաշեցի Սեօյի Յովհաննէսի տունը և զիմադրեցին: Քիւրդերը կհան պաշարեցին այդ տունը. մէկ տեղացի քիւրդ բարձրացաւ տանիքը և երդիկից ուզեց ցոյց տալ տղաների տեղը, բայց ներսից բացեց զնոսիւր. անցաւ քիւրդի ծնօտով և գետին տապալեց: Քիւրդերը կատաղեցին և ուզեցին դուռը խորտակել, սակայն երկու հոգի էլ այդտեղ զարկեցին: Նկատելով որ հեշտութեամբ տղաները անձնատուր չեն լինելու, տունը հրդեհեցին, թանձր ծուխը սկսեց նեղիլ տղաներին, նոյնիսկ մէկը նրանցից խեղդեց, բայց շուտով ծակեցին պատը և անցան հարեան Զօղանի Մուսէի տունը, ուր զիմադրութիւնը շարունակեց մինչև կրկու:

Մուսը պատեց, տղաները դուրս եկան զիւղից և հանգիւպեցին զիւրի ճանապարհները հսկող քիւրդերին. խաւարի մէջ սկսեց ուժեղ հրացանածղութիւն, քիւրդերից երկուսն էլ այստեղ զարկեցին և միւսները փախան. տղաները այս տեղից նախ անցան Բերդակ զիւղը և ապա քաշեցին Վարագ, ապատելով թէ իրենց կեանքը և թէ իրենց զէնքերը, որոնք այդ օրերին այնքան կարևոր էին:

Խօշար գետից զէպի հիւսիս, վարի Հայոց - Զօրում, իրենց մեծութեամբ նշանաւոր են Կեմը և Անդղը, իւրաքանչիւր 108—110 տնից բաղկացած, ահա այս երկու զիւղերը ապրիլ 7-ին դարձան խժոժութիւնների վայր:

Արեւ նոր միայն ծագել էր, երբ Կեմի վրա եկան Հաղպէն իր հրոսակախմբով, պժնկիրացի Ջհանգիրը իր մարդկանցով և խառնուրդի Սազուլը իր միլիաներով ու երկու թնդանօթներով:

Կեմում եկել համախմբուել էր բաւականաշափ ժողովուրդ Մուսկաւէնից, Կլլղաշից և մի երկու այլ զիւղերից. այստեղ խմբուել էին նաև 60-ի չափ զինուած տղաներ:

Չինուած ուժը գասաւորեցին այս կերպ:

Եղիշէ Քատօսեանը 15 հոգով բռնեց գիւղի արեւելեան կողմը
զանուոց Շալակոս կոչուած տեղը:

Արշակ Կակոսեանը, Թաշիկ Մալիկեանը և Մխակ Գա-
պարեանը երեք տասնհազներով բռնեցին գիւղից վեր լեռան
լանջերը:

Իսկ Գեորգ Սօնէեանը Յնացեալ տղաներով բռնեց եկեղե-
ցուն մօտիկ գտնուող մի գիւղք:

Սրանց վրա հսկում էին Յովսէփ Խլղաթեանը, կազմակեր-
պող մի ուժ և Մկրտիչ Աստմեանը:

Թշնամին մօտեցաւ գիւղին արեւելեան կողմից, ուր գտն-
ուում էր Եղիշէ Քատօսեանը իր խմբով: Գրոհը մեծ էր, դիմադրու-
թիւնը թույլ և տղաները թողնելով գիւղքը, քաշուցին գիւղի ծայ-
րում գտնուող մարտահերքը: Թշնամին գրաւելով թողած գիւղքը,
դրեց այդտեղ թնդանօթիները և սկսեց հարւածել գիւղը: Առաջիկ
խկ ոճբակոծութիւնից լքուին առաջացաւ տղաների մէջ և այդ
բանին նպաստեց զլիսաւորացեալ օյն, ուր Հայոց-ձորի ինքնա-
պաշտպանութեան շրջիկ խումբը՝ ղեկավարութեամբ մաշտակցի
Քասպար Մապօսեանի, ուր պիտի օգնութեան հասնէր՝ չը յայտ-
նուեց: Առտի կախը տեսց շատ կարճ — ընդամէնը մէկ ժամ, շու-
տով տղաները մէկիկ-մէկիկ իրենց գիրքերը թողցին: Իր գիրքը
թողեց նաև Արշակ Կակոսեանը, սակայն որը գիմադրելով մի
ուժեղ յարձակման, թշնամուց իւրեց 10-ի շատ գոհեր: Թշնամին
քայլ առ քայլ առաջացաւ գեպի գիւղը, թնդանօթի սուժրերը
շեշտակի ընկնում էին գիւղի մէջ և աջ ու ձախ վիրտուրում ու-
սպանում էին մարդիկ: Կուտղ տղաները յուսահատուեցին, ղեկա-
վարները իրենց դէրը չը կարողացան կատարել, ժողովուրդը
սկսեց փախչել գետի Անգղը, գիւղը ձգեցին նաև տղաները:

Այստեղ սկսեց մի ծանր կացութիւն, անգէն ժողովուրդը
մի աղէկատւր վայնասունով իջաւ հովիտի մէջ և բռնեց գեպի
Անգղ ձգուող տափարակը, խկ գինւած տղաները գատուցին, ի-
րենց աւին լեռան լանջերը և սկսեցին այդպէս առաջանալ, թըշ-
նամին հետապնդել թէ մէկ և թէ միւս ուղղութեամբ, խումբանը
յարձակեց անգէն ժողովուրդի վրա և սկսեցին անխնայ կատարել
ու կողոպտել, աւելի քան 250 գիւղիներ փռուեցին հովիտի մէջ
մինչև Անգղի տակ ընկան անխտիր տղամարդիկ, կանայք ու
նոյնիսկ երեխաներ: Մինչդեռ անգէն ժողովուրդը անխնայ կո-

տորւում էր, ձիաւորների մի ուժեղ խումբ շրջան արեց և կրտսից լեւան լանջով առաջացող զինւած տղաների ճանապարհը. զեկավարող ձեռք չը կար և տղաները բաժան-բաժան եղան և գնացին զանազան ուղղութեամբ:

Արշակ Կակոսեանը և Մկրտիչ Ստոմեանը 12 տղաներով կոխեցին Շամիրամի առուն և իրենց ձեռքին Անդրի Ստուածածին վանքը. հետապնդող քիւրդերը եկան պաշարեցին վանքը և սկսեց մի յամառ կռիւ. տղաները կռեցին մինչև յետին փամփուշար և ընկան բոլորն էլ. տղաների գնդակներից ընկան նաև մի քանի քիւրդեր. այդ ընկածներից մէկն էր մի յայանի կրօնաւոր—Պառնուրդ գիւղի մօլլա Ֆայիմը: Այս կռիւ մէջ, ինչպէս և Կեմուժ աչքի ընկաւ Արշակ Կակոսեանը:

Եղիշ Մկրտչեանը 15 տղաներով կոխեց Շամիրամի առուն, առաջացաւ դէպի Անդրը և ապա Պոշարի գետն անցնելով՝ զիմեց Սուրբ Միրանաւորի տար կոչուող բլուրը. հետապնդող քիւրդերը եկան պաշարեցին բլուրը և այստեղ էլ սկսեց մի յամառ կռիւ. տղաներից 3-ը սպանեցին, սպանեցին նաև երկու քիւրդ և 3 ձի. երկար զիմադրելուց յետոյ Եղիշը 12 տղաներով ճանապարհ բացեց ու քաշեց Գերծի լեռը:

Յովսէփ Մլղաթեանը 30-ի չափ տղաներով քիւրդերից հետապնդւած՝ լեռան լանջերով առաջացաւ դէպի Անդրից վեր Շամիրամի տաւի կամուրջը, այստեղ նա ծանր վիրաւորեց. գնդակը ջարդից երկու ծունկերը, տղաները ցրլու և կան. Յովսէփը կարողացաւ իր հրացանը փրկել՝ յանձնելով այն տղաներից մէկին, իսկ ինքը անկարող լինելով շարժել, հանեց մառուղէր տարձանակը և սկսեց ընկած տեղից կրակել թշնամու վրա, մինչև որ նոր հարւած ստացաւ ու սպանեց՝ քաւելով Կեմուժ իր ցոյթ տւած թուրութեան մեկըրը: Յովսէփի հետև տղաներից 8 հոգի էլ սպանեցին Անդրի ու Մաշտակի մէջտեղ, Պոշար գետի ափին: իսկ մնացեալը դուրս եկան Իշխանի-գոմ:

Սակայն մեծ կոտորածը տեղի ունեցաւ Անդր գիւղի մէջ՝ Այստեղ կառավարութիւնը զրամ ունէր 8 հոգուց բաղկացած մի կօրտօն. այդ կօրտօնին վստահացան գիւղի մի քանի առաջաւոր մարդիկ—Ռէս Իրիկօրը, Յարութիւնեան Յովհաննէսը, ուստա Մարտիրոսը, գիւղի ուսուցիչ Արշակ Ղազարեանը: Սրանք առաջարկեցին գիւղում գտնուող 20-ի չափ զինւած տղաներին դուրս

դալ գիւղից. աղաները քաշեցին, միւս կողմից կեմի ժողովուրդը լցեց Անդղ. հասաւ քամակից խուժանը—գորքերն ու քիւրգերը, սրանց միացան կորստնի ժանդարմները և սկսեց մի սուկալի տեսարան ջարդերի, կողոպուտների, բռնաբարութիւնների ու հրդեհումների: Այստեղ ընկան առաջաւորները, հասարակ գիւղացին և ապա կին ու երեխաներ՝ թւով աւելի քան 270 հոգի: Բացի այս, 300-ի չափ ժողովուրդ ղիմեց զէպի Սոշար գետը, միւս ամիս անցնելու համար, այստեղ էլ վրա հասան քիւրդերը և սկսեցին կոտորել, հարիւրի չափ էլ այստեղ ընկան՝ մեծ մասը գետի ալիքների մէջ մնալով:

Այսպիսով կատարւեց ջարդերից սոսկալին—կեմ, կեմից մինչև Անդղ. Անդղ, Սոշար գետի ափեր—անա այն տեղերը, ուր այդ օրը ընկան խողխողած 700-ի չափ աղամարդ, կին, նոյնիսկ երեխաներ:

Այս անօրինակ խժոժութիւնը վերջացաւ Իշխանի-գումի կռուով:

Այս գիւղը եկան խմբուցին Անդղի ջարդից յետոյ անազին ժողովուրդ՝ կեմից, Անդղից, Մաշտակից, Աթանանից, Պլթենից, Մարկիսից, Խորգումից, Մարահանից, Կլլտաշից և Քէօշից: Այստեղ եկան խմբուցին նաև 80-ի չափ զինուած աղաներ: Գասպար Սապօեանք իր աղաներով այստեղ էլ շերտաց:

Թշնամու անազին ուժը նայն օրը—ապրիլի 7-ի կէսօրին, Անդղի կոտորածից յետոյ շարժւեց զէպի Իշխանի-գում. զէպի Իշխանի-գում շարժւեց նաև Պլթենից ու Աթանանի վրա գնացած էղճէմ բէյը երկու թնդանօթնիկով ու միլիաներով, այնպէս որ այս գիւղի վրա եկան աւելի քան 1000 քիւրդեր ու միլիաներ 4 թնդանօթնով:

Իշխանի-գումը ունի այսպիսի դիրք. մէկ երկու վերստ հեռաւորութեամբ հարաւային կողմից հոսում է Սոշար գետը, իսկ արեւմտեան ու հիւսիսային կողմից Շամիրամի առուն: Շամիրամից տարւած է մի առու, որը պտոյտ գործելով ոտոցում է գիւղի արեւելեան և հարաւային կողմում ընկած հողերը. գիւղի այս սահմաններում գտնուում են սլարակներ: Էղճէմ բէյը իր թնդանօթնիկով կանգ առաւ Սոշար գետի միւս ափում և այդ տեղից սկսեց ուժրակոծել, իսկ կեմի ու Անդղի խուժանը երկու թնդանօթնով ձօտեցաւ գիւղին արեւելեան կողմից. ուստի և այս կող-

մի վրա էլ կեզրոնացրին տղաները իրենց ուժերը:

80-ի չափ զինւած տղաները գիրքեր գրաւեցին գիւղի արեւելեան ծայրի պարտէզներում և արտերի մէջ փորած փոսերում: Խմբերի վրա հսկելու պարտականութիւնը իրենց վրա վերցրին՝ Խորգոմից Յովհաննէս Պարօեանը, Խարականից Սեդրակ Շաղօեանը, Կլլտաշից Արմենակ Մուխտի-Փոխանեանը և Բշխանի-գոմից Յակոբ քահանան ու Յակոբ Մուտօեանը: Ծնորհիւ այս հինգ անձնաւորութիւններին, տղաները օրինակելի կերպով կատարեցին իրենց պարտքը: Հոււից երեսաց Լազգին իր հրոսակախմբով և Սողոյ տղան միլիտներով ու երկու թնդանօթներով: Կեմի ու Անզղի գէպքերից յետոյ վստահ առաջանում էին գէպի գիւղը, նրանք առաջացան ու առաջացան և երբ մընում էր մի քանի հարիւր քայլ տարածութիւն, մէկէն գիւղի պարտէզներից և արտերի միջից կրակներ բացւեցին և բիւրդերն ու միլիտները յետ քաշւեցին, թողնելով մի քանի մարդկանց ու ձիաների գիակներ: Թշնամին զուշացաւ, թնդանօթները գետկղեց Մաշտակի ջրաղացների մօտ և սկսեց ուժակոծել գիւղը. այդ ժամանակ հարաւային կողմից սկսեց ուժակոծել նաև Էգեճէմ բէյի երկու թնդանօթը. թշնամին սիրտ առաւ ու սկսեց առաջանալ, բայց տղաները շուտով ընտելացան թնդանօթների ուժակոծութեանը և նրանց շարժումը նորից կանգնեցրին: Ժողովուրդը զուրս եկաւ գիւղից և քաշւեց կրակից ազատ գիւղի արևմտեան սահմանները:

4 թնդանօթներ, հազարի չափ հրացաններ սկսեցին կրակ տեղալ գիւղի վրա, կռիւը շարունակեց ամբողջ օրը, աւելի քան 150 ուժերը ընկան գիւղի մէջ, բայց նրանք վնասներ չը պատահեցին և թշնամին գիւղ մտնել չը կարողացաւ: Դեկալար մարդիկ իրենց գերը կատարեցին, կուռղ տղաները սասնասրտութիւն ցոյց տւին և ոչ մի գիրք չը լքեց ու թշնամու ձեռք չանցաւ: Յամառ կռիւը տեւեց մինչև գիշերուա ժամի 10-ը, մութը կոխեց, թշնամին քաշւեց մի քանի սպանածներ տալով և ժողովուրդը փրկեց: Այդ օրը տղաները ունեցան մէկ զոհ. իր յանդը նութեանը զոհ գնաց Դախմանց գիւղացի Սարգիսը, որը 1896 թւի կոտորածին մահմեդականութիւն էր ընդունել, իսկ սահմանադրութեան օրով նորից ընդունել լուսաւորչականութիւն:

Թշնամին քաշւեց, կռիւը կանդ առաւ և տղաները ժողովե-

ցին խորհրդի Արդեօք կանոդ էր Իշխանի-դամը նոյն ձևով շա-
 րաւնակել ղիմադրութիւնը, թերևս, եթէ միայն փամփուշտի պա-
 շար լինէր. սակայն փամփուշտ քիչ էր, ուստի որոշւեց թողնել
 Իշխանի-դամը: Սակայն փառաւոր ղիմադրութիւնը վերջացաւ մի
 սխալ ու ցաւալի որոշումով:

Զինւած տղաները վերցնելով իրենց հետ 800-ի չափ տղա-
 ներ ու տղամարդիկ բռնեցին Վարազի ճանապարհը, ուր և հա-
 սան անվտանգ, իսկ մնացեալ ժողովուրդը քաշւեց դէպի Արտա-
 մետ, ուր նստում էր միւղիբ, կարծելով, որ զինւած տղաների
 հեռանալով ինքը ազատ կը մնայ ջարդերից, սակայն այս անգամ
 էլ սխալւեց. Արտամետի մէջ նոր ջարդեր սկսւեցին, 300-ի չափ էլ
 այստեղ սպանւեցին, այստեղ ընկան: Ահա այս երբորդ խոշոր
 ջարդից յետոյ միայն աւելի քան 3000 ժողովուրդ ցրւեց այս ու
 այն կողմը, մեծ մասը ղիմեց քաղաք ու Վարազ:

Այսպիսով Հայոց-Չորի շրջանը մաքրւեց թէ զինւած տղա-
 ներից և թէ ժողովրդից, գիւղերը արիւնեցին, կենդանի մնացած
 ժողովուրդը քաշւեց քաղաք, Վարազ և այլ տեղեր. մի փոքր
 մաս էլ ղիմեց դէպի Բերձի սարը, ուր ինչպէս տեսանք, քաշւե-
 ցին Պլթենցի, Բերձի, Սպիտակ-վանքի, մասամբ և Կղզաշի ու
 Աթանանի փոխածները:

Երեք շաբաթի չափ, մօտ 2000 ժողովուրդ մնաց Բերձի լե-
 ուր, զիշերը ժողովուրդը իջնում էր գիւղը, իսկ առաւօտները
 նորից քաշւում էր լեռը: Զինւած տղաները պաշտպանում էին
 ղեռան դիրքերը և քիւրդեր չէին երևում. պաշարը վերցնում էին
 ղիւղից, մի երկու անգամ էլ յարձակւեցին բռններով ցորեն
 տանող քիւրդերի վրա և խլեցին բռնները. այդ յարձակումներից
 մէկի ժամանակ վեց քիւրդեր սպանւեցին,

Այս դրութիւնը շարունակւում էր, երբ ապրիլի 28-ի առա-
 շտեան մէկէն երևաց Ոստանի գայմազամը 200-ի չափ միլիտ-
 ներով. նա գալիս էր դէպի Բերձ: Ժողովուրդը որ դեռ ևս գիւ-
 ղումն էր, քաշւեց լեռը, 50-ի չափ միլիտներ հետապնդեցին
 նրան, բայց հանդիպելով դիրքերը պահող զինւած տղաներին,
 յետ դարձան:

Այդ նոյն օրը Կղզաշի չորս հայեր, որոնք իրենց գիւղն
 էին գնում, ճանապարհին կուր բռնւեցին մի խումբ քիւրդերի

հետ և սպանւեցին. զբանք չորսն էլ Մուխաբ-Փոխանհանի տանից էին, մէկը Իշխանի-գոմի կուռում դեր խաղացած Արմենակն էր: Այստեղ սպանւեցին նաև Արմենակի 15 տարեկան տղան, կտրիճ Յարեթը, որը իր ձեռքի մառուղէր ատրճանակով կռից մինչև վերջին փամփուշտը և ապա ընկաւ:

Ոստանի գայմազամը մտաւ Քերձ և սկսեց գիւղում եղած հացի պաշարը ամբողջովին դուրս տանել. ժողովուրդը զրկւեց պաշարից, ուստի նոյն այդ օրւա գիշերը բաժանւելով երկու մասի, մի փոքր մասը դիմեց դէպի քաղաք ու Վարագ, իսկ մեծ մասը անցաւ Փետանդաշու, ուր զինւած տղաների ուժեղ պաշտպանութեան տակ ապաստանել էր անապին ժողովուրդ կարճկանից, ու Գեաւաշից, ինչպէս այդ կը տեսնենք իր տեղում:

Գ. ԴԻՄԱԴՐՈՒԹԻՆՆԵՆՏԸ ԹԻՄԱՐՈՒՄ

Թիմարի գաւառը գտնուում է Վանից դէպի հիւսիս-արիմուտք, որը լիւնային իր կազմւածքով արեւելեան կողմից առաջացել է Վանի լճի մէջ, կազմելով մի խոշոր թերակղզիւ Այս թերակղզու ամերի մաս գտնուում են կլիմ և հասուց անապատները:

Թիմարը բազմաձայ շրջան է, ունի 30-ից ասելի հայ և 20-ի չափ տանիկ և քիւրդ գիւղեր: Հայ գիւղերից աչքի են ընկնում Ալիւրը, Մարմեաը, Էրէրինը, Խժիշկը, Կիւսննցը, Բոժ գանցը, Խաւնցը, Ջանիկը: Գաւառը բաղկացած է երկու մասից զբանք կոչուում են վերի և վարի Թիմարներ:

Կոտորածի օրերին այս շրջանում շատ ու քրշ գիմարութիւն ցոյց տւին չորս գիւղեր, որոնց վրա և կանգ կառնենք մի փոքր: Այդ գիւղերն էին, վերին-Թիմարում՝ Ասաւաձածին կամ Տիրամէրը ու Խժիշկը, իսկ վարին-Թիմարում՝ Ալիւր ու Մարմեաք: Դիմարութիւնը թողւ հզաւ, մարտի մէջ իր գիմարութիւնով ուշադրութիւն զբաւող Թիմարը այս անգամ անգործ մնաց:

Դէպքերը սկսւեցին Բերկրիից. կազմակերպւած ջարդը նախ տեղի ունեցաւ Գոտիկ-գիւղում ու Գարծոթում, և այդ տեղից ջարդարար խուժանը շարժեց Տիրամէրի ու Ջանիկի և ապա Ալիւրի ու Մարմեգի վրա: Այդ պատճառով մենք կսկսենք Գոտիկ գիւղից և Գործոթից:

Բերկրին սակաւանայ գաւառներէց մէկն է, մի ժամանակ-
 ա ըստմանայ այդ գաւառում այժմ հազիւ 700 տուն հայ ժողո-
 վուրդ կայ և այն էլ ցրեած Արագայի ու Բերկրի-օվայի տափա-
 բակներում: Բերկրի աւանից գէպի հարաւ-արևելք մէկ-երկու
 վերտաի վրա գտնուում է Պոտիկ-գիւղը, իսկ գէպի հարաւ 10
 վերտա հեռաւորութեան վրա՝ Թիմարի սանձաններին մօտիկ
 գտնուում է Գործոթը, երկուսն էլ ըստմանայ գիւղեր— մէկը 74
 միւր 128 տան բնակիչներով: Ահա այս երկու գիւղերը հանդի-
 սացան Բերկրիի կազմակերպւած ջարդերի բնակը, դուզադիպե-
 լով Բանդէ-Մանուի ձորում տեղի ունեցած ջարդերին:

Այդիլ Ե-ին, կէսօրից յետոյ, Բերկրիի գայմազամ Զիւս
 բէլը և ժանդարմայի կամանդան Ամար բէլը 200-ի չափ ժան-
 դարմներով ու համրիկներով Գործոթ մտան ջարդերի գաւաղիը
 ծրագրերը ձեռքերնին, և որպէսզի կատկածներէի տեղիք տւած չը
 լիսեն, իրենց հետ վերցրին Տէր-Յուսկան որդու վանքի՝ վանա-
 հայր և աւաջնորդական փոխանորդ Տէր-Մանուէլին:

Տէր-Մանուէլի յորհորներով գիւղացիները հաւաքեցին 10
 հստ հրացան և 50 սակի դրամ ու ներկայացրին գայմազամին-
 50 սակին միամիտ հայերը տեղին իրեն փրկանք: Բայց հրա-
 ցանն ին ու սակիններն ընդունելուց յետոյ, գայմազամը հրամա-
 յեց տղամարդկանց հաւաքել, Գիւղում եղող տղամարդկանց, թւով
 86 հոգի, ժանդարմները հաւաքեցին և լցրին առևտուրով պարա-
 ղող վանեցի Մանուէլ Մելիօսանի տան մէջ ու զոները կողպեցին:
 Այս գործողութիւնը կատարելուց յետոյ, գայմազամը հեռացաւ
 գիւղից, հեռացաւ նոյնպէս Տէր-Մանուէլը և եկաւ Բերկրի, ուր
 մի գիշեր մնալուց յետոյ տեսաւ խժոզութիւնները, զնաց Մա-
 լաբաթ գիւղի Սուրշուտի մօտ պաշտպանութիւն գտնելու յոյսով,
 և հրա ձեռքով էլ սպանեց:

Գործոթի հայերը գիշերը փակւած մնացին Մելիօսանի տան
 մէջ բոլորովին միամիտ: Բացեց ապրիլ 7-ի առաւօտը. ժան-
 դարմներն ու միւլիաները դուրս բերին հայերին Մելիօսանի անից
 կապիկաւ ու շղթայած և ուղիղ քշեցին գիւղից գէպի հարաւ Ե-
 դանաձոր կոչող տեղը, ու սկսեցին մեզ ծանօթ ձևերով բոլորին
 կատրել: Տղամարդկանց կատրելուց յետոյ զարձան անպաշտպան
 ճողովրդի վրա և սկսեցին սովորական վայրագութիւնները:

Նոյն ապրիլ 7-ի առաւօտեան Արճէշի Իրիշատ գիւղի հա-

շաջի Սիւլէյման աղէն 300-ի չափ միլլիոններով ու համի-
 դիէններով մտաւ Պատիկ-գիւղը, հաւաքեց գիւղի տղամարդկանց,
 թւով 120 հոգի ու գիւղի կալերը տանելով, սկսեց գնդակահարել
 ու սպանել նրանց. այս ջարդը միւսներին պէս նսխապատարտա-
 ւած չէր. այլ կատարեց խուժանային ձևով, այդ պատճառով
 60 հոգու չափ, շատերը վիրաւոր, կարողացան փախչել Գրանց
 մի մասը փախաւ Բերկրի, դիմեց յայտնի ցեղապետ Կոպ Մահ-
 մադ բէկի պաշտպանութեանը, բայց նա պաշտպանել չը կարո-
 ղացաւ. ժանդարմները դուրս քերին բէկի տանից նրա պաշտ-
 պանութեան դիմած հայերին ու Աւանից դուրս տանելով կոտո-
 րեցին: Մէկ մասը փախաւ սարերը, բայց մի քանի օրից յետոյ
 ձերբակալեց, բերեց Բերկրի և այդ տեղի հայերի հետ, ինչպէս
 տեսանք, Բանդի-Մահուի Կոլոտ-կամուրջի վրա ու գնդակահար
 թաղեց գետի ալիքների մէջ: Պատիկ-գիւղում ընկած գիւղիները
 բոլորովին կողոպտուեցին. մերկ ընկած ֆեսցին 6 օր շարունակ
 արի տակ, մինչև որ վշտահար այրիացած կանայք եկան փո-
 սեր փորեցին և տեղն ու տեղը թաղեցին իրենց հարազատներին:

Գործոթն ու Պատիկ-գիւղը կոտորելուց յետոյ, ջարդարաբ
 խուժանը յարձակուեց Գիւղակ, Ս. Թաթոս, Անձաւ և Փանդ գիւ-
 ղերի վրա, այդ գիւղերումն էլ սկսեց կոտորածն ու կողոպու-
 տը: Նրջանը դարձաւ ասպատակութիւնների վայր: 60-ի չափ
 տղամարդիկ, որոնք փախել էին յիշեալ գիւղերից, դիմեցին Թըր-
 քաշէն գիւղը շաւեցիների ցեղապետ Արիֆ բէկի պաշտպանու-
 թիւնը խնդրելով, սակայն Արիֆի եղբայր Ալի բէկը նրանց
 յանձնեց ճեռապնդող քիւրդերին, խսկ վերջինները անդէն մարդ-
 կանց քարշ տւին ջրաղացների մօտ և սրախողխող արլն
 բոլորին:

Ահա այս գէպերից յետոյ, ապրիլի 8-ի լուսաբացին, կո-
 մանդան Ամար բէկը շաւեցիներին ցեղապետ Արիֆ բէկի հետ
 բազմաթիւ միլլիոններով ու համիդիէններով եկաւ պաշարեց Թի-
 մարի Տիբամեր գիւղը:

Տիրամէրը ձանաչուած էր ուժեղ գիւղ. նա ունէր 35 գինւած
 տղաներ, որոնք եթէ առաջօրէն գիւղի գիրքերը գրաւէին, կարող
 էին մեծ դիմադրութիւն ցոյց տալ: Ասկայն գեկալար չորս տղա-
 ները մէկ օր առաջ գնացել էին Փիրկաւրի գիւղը խորհրդակցե-
 լու համար շրջանի միւս տղաների հետ. 10 հոգի էլ նկատուով

գիկավարներին բացակայութիւնը, քաշւեցին Լիմ անապատ: Մնացին գիւղում 20—21 հոգի առանց ղեկավարների:

Երբ խուժանը երևաց, գիւղում մնացած տղաներէց 7 հոգին ձնոք Խաչատրեանի ղեկավարութեամբ վազեցին գիւղի արևմտեան կողմը, Խաչ-ազրիւր կոչւող ժայռերը դրաւելու նպատակով, բայց մինչև որ նրանք տեղ կը հասնէին, քիւրդերը արդէն ժայռերը դրաւել էին: Տղաները ընկան կրակի տակ և նրանցից երկուսը—Աւետիս Մկրտչեանը և իր տղա Արշակը սպանւեցին: Մնացեալ հինգը դարձան գիւղը և այժմ էլ զիմեցին գիւղի հակառակ կողմը՝ Բուղում կոչւող ժայռերը բռնելու, բայց այդ ժայռերը նոյնպէս բռնւած էին արդէն քիւրդերով: Տղաները նորից ընկան կրակի տակ, կորցրին նորից երեք հոգի, որոնց թուում գնկաւ նաև նրանց ղեկավար Ենոք Խաչատրեանը և մնացեալ երկու հոգուն միայն յաջողեց ազատուել ու փախչել դէպի Լիմ: Չինւած տղաներից 5 հոգի էլ կարողացան գիւղի հարաւային կողմեց փախչել ու ազատուել: Ղեկավարող ձնոք չը կար և տղաները շաղ էին անցնում: Ժողովուրդը եկա խմբեց գիւղի կենդրոնում դռնուող Տէր Գէորգի և նրան պատակից տներէ մէջ: Թշնամին ոգևորեց և կրակ տեղալով առաջացաւ դէպի գիւղը: Գիւղի հիւսիս-արևելեան ծայրում գտնուող Բաշոյի տան մէջ եղող հասարակ տարճանակներով գինւած 13 ջահիլ տղաներ դուրս թռան, անտեղեակ, որ թշնամին իրենց կռնակումն է գըտնում և բոլորն էլ սպանւեցին այդտեղ: Իրանից յետոյ արդէն թշնամին լցեց գիւղը և տները կողոպտելով սկսեց առաջանալ դէպի ժողովրդի համախմբւած տեղը:

Ահա յուսահատական այս վայրկեանում գիւղում մնացած չորս զինւած աղաներ—չորս քաջեր՝ գիւղի ուսուցիչ Սմբատ Ալտեանը, մարութիւն Ամիրեանը, Գուրիթ Գանէլեանը և Մարտիրոս Մանասեանը բարձրացան Տէր Գէորգի տան երկրորդ յարկի միակ սենեակը և սկսեցին կրակել մօտեցող խուժանի վրա: Առաջին քսակ անգամ քիւրդերից մի քանի հոգի սպանւեցին, բայց նրանք շատ-շատ էին, որ յուսահատէին, ուստի ամեն կողմերից առաջանալով եկան և օգի մէջ ցցւած սենեակը առան կրակի տակ: Չորս կարիճները շարունակեցին կրակել և մի քանի քիւրդեց նորից զարկեցին, զրանց մէջ էր Բերկերի Առէն գիւղի աղան: Չէնալ բեկը՝ զարկւած Սմբատի գնդակով:

Կատարի կոխը տեկց ամբողջ օրը, զնդակների տարափի տակ քանդեց սենեակի մի պատը, տղաները հնարաւորութիւն չունենալով պատերի յետեկց գուրս գալ, ծակեցին սենեակի յատակը և իջան տակի յարկը: Ժողովուրդը սկսեց զախշել այս ուսոյն կողմը. թշնամին մօտեցաւ և հրդեհեց տղաների ապաստանած տունը, միւս կողմից սկսեց սպանել ձեռք բնկած տղամարդկանց: Տղաները անգօր լինելով կուէլ խեղդող ծխի գէմ, ծակեցին տան պատը և դուրս եկան հարսան Տէր-Արքայաճամեան Սարգսի տան մէջ ու նորից շարունակեցին կռել: Եւ երբ ներանք սպառեցին բոլորովին փամփուշաւ, նորից մի երկու գոնե խելով թշնամուց, նոր միայն տեղի տին և բնկան քաջարար:

Տիրամէքում սպանուեցին աւելի քան 70 հոգի, որոնցից 10-ի չափ կանայք ու երեխաներ: Սպանուէց նաև Տէր-Գեորգի բր հեա տանելով 10 գոհեր միմիայն իր գերդաստանից:

Այն ժամանակ, երբ Տիրամէքը դիւղում դեռ շարունակում էր դիմադրութիւնն ու կտորածը, միլիաների ու քիւրդերի մի մեծ բազմութիւն եկաւ Ջանիկի վրա: Շրջանի միւղիւրը Մամմաղէֆէնդին, որը նստում էր Ջանիկի գիւղում, խորհուրդ աւելց տղամարդկանց քաշել գիւղին մօտիկ դռնուող քոաները, մինչև որ միլիաներն ու քիւրդերը կը դային կանցնէին, սակայն այդ ներանց չը փրկեց. յարձակումն ու կտորածը տեղի ունեցաւ թէ քոաներում և թէ գիւղի մէջ: Առանց դիմադրութեան ճայգ երկու տեղերում սպանուեցին 73 մարդ, և ապա սկսեց կողոպուտ ու վայրագութիւններ:

Սարսափը տարածեց ամբողջ շրջանի վրա, ժողովուրդը փախաւ գէպի Լիմ անապատ, ուր նա ամեն անգամ փրկութիւն էր որոնում իր նեղ օրերին: Ապրիլի 8-ից սկսած ամբողջ մէկ օր ու գիշեր եկաւ ու խոնկեց ծովի ափը մի քանի հազար հոգուց բաղկացած բազմութիւն՝ Փերկարի, Սօսրաթ, Շահգեալդի, Ջանիկ, Տիրամէք, Նորշէն, Բօշանի, Նորովանց, Գոմս գիւղերից և ծովափը հանդիպացաւ արատավոր կակիծի մի վայր:

Սակայն այդտեղ էլ նրան հանգիստ չը թողին. ապրիլի 20-ին Տիրամէք և Ջանիկ գիւղերի վրա եկած ջարդարար բազմութիւնը շարժեց գէպի ծովափ: Ծովափին գտնւում է Լիմ անապատի գրսի տունը և նրանցից բուսականին հեռու խժիշկ

գիւղը. այս երկու կէտերի մէջ տարածուած են մի շարք բուր-
նիք, հանդիսանալով լճափի պատուարը. ժողովուրդը խոնկեց լճի
անմիջական ափին, սպասելով նաւերի, իսկ զինուած աղաները
քունկոցին բուրնիքի գիրքերը: Ջինուած աղաների թիւը հասնում
էր մի քանի տասնհազաների, նրանց օգնութեան հասաւ Ալջաւա-
զի ինքնապաշտպանութեան խմբի խմբապետ մեկ ծանօթ Օհանը
իր խմբով, որ զիջելով Ալջաւազի ժողովրդի թախանձանքին, եր-
կու օր առաջ նաւով Լիմ էր եկել, կարծելով թէ իր հետանալով
ըջանը կազատի կոտորածից: Թշնամու ահագին բազմութիւնը
հետզհետէ եկաւ գլխաւորապէս Իբսի տան և Յծիշի գիւղերի
գիրքերի վրա. աղաները բաժանեցին իրենց ուժերը և դէմ գրին:
Սիւեց մի յամտա կռիւ, որը տևեց ամբողջ օրը: Կռիւը կատաղի
էր ու արիւնոտ. երկու կողմերն էլ ունեցան զոհեր, թշնամին
տեղ տեղի քան 40 սպանուած, այդտեղ սպանուեց նաև Արաղա-
յում անուն հանած աւաղակ Ալթանէն, որը պատերազմից ի վեր
նիւումն էր ստացել և մտել էր կոտորակաւ ջարդարար զօր-
քի շարքը: Տղաները այդ օրու կուում տեղեցին 8 զոհ:

Օրը միանկուց յետոյ թշնամին քաշուեց և այլևս չը վերա-
դարձաւ, նրա տուած զոհը մեծ էր, նա անցաւ ուրիշ կողմ: Ժո-
ղովուրդը նաւերով տեղափոխուեց անապատ, դա տևեց երկու ե-
րեք օր. սարսափն ու նեղութիւնը սոսկալի էր. Լիմում հաւաք-
ուեց աւելի քան 12,000 ժողովուրդ. ուտեստի պակասութիւն ըզ-
րացեց. շուտով հացը սպառուեց. վերջին շըջանում այնպէս ե-
ղաւ, որ իւրաքանչիւրին տալիս էին երկու բուռը ցորեն, որը
կրակի վրա բովելով ուտում էին իբրև վերջին օրսպանիկ: Այս
ըրութիւնը շարունակուեց մի քանի օր ևս և ոուս բանակը յայտ-
նուեց:

Սկսած դէպքերը թիմարում սրանով չը վերջացան: Բեր-
կրիի գայմազամ Զիս բէյի կազմած ջարդարար այս խուժանը,
կատորելով մարդկանց և աւերելով վերի թիմարի գիւղերը, աղ-
բիի 12-ին եկաւ պաշարեց Ալիւրը, թիմարի ծառազարդ՝ ամե-
նամեծ գիւղը, որը ունէր 343 տուն բնակիչ: Բացի տեղական ժո-
ղովրդից, մարտի դէպքերից ի վեր քաշուել-եկել էին այստեղ
Քայրակ, Ատնականց, Տրլաշէն գիւղերի ժողովուրդը աւելի քան
350 անից բողկացած: Ալիւրում այդ միջոցին կային 160-ի չափ

կուսող տղաներ, որոնց զեկավարում էին ալիւբըցի Աբիսողոմը օ
Մարգիս Մարտոսեանը խաւենցի Միհրանը:

Տղաները բաժանւեցին մի քանի խմբերի, զբաւեցին զիւզի
նշանաւոր գիրքերը և սպասեցին թշնամու գալուն: Թշնամին
պաշարեց զիւզը արեւածագից քիչ յետոյ և հանդիպելով կրակի,
սկսեց տաք կախ, որը տեւց մինչև երեկոյ: Թշնամու ուժը մեծ
էր, բայց տղաները կարողացան քաջարար դիմադրել, թոյլ չԵ
տալով նրան զիւզին մօտենալ: Այդ օրը թշնամին ունեցաւ 17
սղանւած, որոնցից մէկը շաւէցիներէ Տամբաթ զիւզի Հսէի
Կորճօն էր: Հայերը ունեցան մէկ զոհ, դա խաւենցի Տէր-Կարա-
պետն էր: ●

Գիւղը պաշարողները զիշերը քաշեցին տաճիկ Մօլլա-Կա-
տում զիւզը և յոյս չունենալով կուսով Ալիւբը գրաւել, զիմեցին
հետեւալ խարդախ միջոցին: Պատրաստեցին մի նամակ և յանձ-
նեցին միլիտաների հարիւրապետ Իսմայիլ աղային. սա յաջորդ
տատուտ նամակը բարձր բռնած եկաւ Ալիւբ և նամակը յանձ-
նեց զիւզի առաջաւորներին-ուէս Գիւլամիրին և Արմենակ Չա-
մանիկեանին, յայտարարելով, որ եթէ տղաները զէնքերը վաթ
զնեն, Ալիւբին ոչ մի վնաս չի հասնի:

Այս, ժողովրդի մէջ առաջ բերեց մտքերի շփոթութիւն. մի
մասը առաջարկում էր զէնքերը յանձնել, միւս մասը հակառա-
կում էր: Տարածայնութիւնը ծայր տեւց և կուսող տղաների մեծ
մասը զէնքը վերցուց ու զիւղից դուրս եկաւ: Ահա այս միջոցին
տաճիկները անարգել լցեցին զիւզը: Հայերը խաբւեցին. մի-
լիտաներն ու քիւրդերը զիւզ մասն թէչէ, սկսեցին տղամարդկանց
հաւաքել եկեղեցու մէջ: Այս տեսնելով ժողովուրդը փախաւ և
տաճիկներէ ձեռք ընկան 160 մարդ: Գիւղը հնթարկեաց կողո-
պուտի ու աւերման: Ձերբակալւած մարդիկ երկու օր մնացին
եկեղեցու մէջ փակւած, երրորդ օրը, ապրիլ 15-ին, վաղ առա-
ւտեան դուրս բերին նրանց եկեղեցուց կապիպած թևերով, քշե-
ցին զիւղից հեռու տառանձին ընկած Աքեա-բաղ կոչւած այգին ու
յայտնի ձևով բոլորին կոտորեցին:

Ալիւբի աւերման յաջորդ օրը, ապրիլ 14-ին, ջարդարաթ
մի խուժան շաւէցիների ցեղապետ Ալի բէկի առաջնորդութեամբ
եկաւ Մարմատի վրա-մուղորութիւնը այստեղ աւելի կատարեալ և

զաւ: Ռէս Յովհաննէսը հաւատացած իր ծանօթ աւանցի Մա-
նուկին, գնաց Աւանց, ներկայացաւ կօմսէր Շիւքրիին, ստացաւ
նրանից մի գրօշակ, բիրեց կանգնեցրեց գիւղի մէջտեղ, և վրս-
տահացած այդ գրօշակին, առաջարկեց գիւղի մէջ եղող 60-ի
չափ զինուած տղաներին հետանալ գիւղից. և տղաները հեռացան:

Սակայն հէնց որ Ալի բէկը իր մարդկանցով գիւղը մտաւ,
սկսեց պատահած տղամարդկանց բռնել ու լցնել եկեղեցին,
ինչպէս որ եղաւ Ալիբուում: Ժողովուրդը փախաւ. փախան և
մարդկանցից շատերը, ու այդպիսով քիւրդերի ձեռքն ընկան
100-ի չափ տղամարդ, որոնց թուում նաև հաւատացեալ ուսուցիչ
Սրանց միեւնոյն օրը կապկպեցին, տարան գիւղից կէս ժամ հե-
ռու, դէպի արևմուտք ընկած Զաղացի ձոր կոչուած տեղը և բո-
լորին սպանեցին: Այդ նոյն տեղը բերին ու կոտորեցին նաև
25-ի չափ տղամարդ Զիրաշէն գիւղից:

Ալիբուն ու Մարմետը աւերելուց յետոյ, աւերեցին նաև
շատ գիւղեր. վարի թիմարի ահագին ժողովուրդը շաղ անցան
այս ու այն կողմ, մի մասը գնաց դէպի Աւանց ու Քաղաք, շատ
աղջիկներ ու կանայք առևանգեցին ու դերեցին. այդ բազմու-
թեան մի մասն էլ գնաց զուրա եկաւ մինչև Փիսանդաշտ:

Կտուց անապատը, որը նախկին կոտորածներէ ժամանակ
հազարաւոր ժողովրդի ապաստան էր աւել, այս անգամ մէկ հո-
գի էլ պատասպարել չկարողացաւ. կառավարութիւնը օր առաջ
այստեղ 15 հոգուց բազկացած կօրդօն զրեց. վարի թիմարի
զինւորական ուժը, որ հեշտութեամբ կարող էր այդ կօրդօնը
մէջտեղից վերացնել և կողին բազմաթիւ ժողովրդի ապաստան
դարձնել, այդ չարեց, նրան զիկավար ուժ հանդէս չեկաւ և
այսպիսով հայաշատ վարի թիմարի ահագին ժողովուրդը օտակալի
տառապանքներ կրեց ու մեծ կորուստներ աւելց' տարագրել լի-
նելով այս ու այն կողմ: Իսկ զինուած ուժերից աւելի քան 100 հո-
գի թախառական դարձան թիմարի լիւններում, մինչև որ ոտսա-
կան բանակը յայտնուեց:

Այն միջոցին, երբ Ալիբուում ու Մարմետում շարունակում
էին ջարդերն ու վայրագութիւնները, Բերկրի պաւսափ Գործոթ
գիւղում, ուր մի անգամ արգէն, ինչպէս տեսանք, կոտորած ե-
ղաւ, անդի ունեցան նոր դէպքեր, որոնց մասին այստեղ արժէ երկու

խօսք արձանագրել:

Առաջին կատարածից յետոյ Գիւղտի, Ս. Թաթևոս, Բեաբաբիկ, և Չախմախ գիւղերից բուսականաչափ ժողովուրդ եկաւ խմբից Գործոթի, տեղական ժողովրդի հետ կազմելով մի մեծ բաղձութիւնս Այստեղ եկան խմբւելցիին նաև աւելի քան 300 ազամարդ, որոնցից 50-ը գինւած էին: Ապրիլի 12-ին շրջակա գիւղերից բուսականաչափ քիւրդեր եկան Գործոթի և սկսեցին հորերում եղած ցարենը հանել, ազաները կրակ բացին նըբանց վրա և 10-ի շափ քիւրդեր սարսնցիկն Այս տեսնելով, քիւրդերը փախան և 10—12 օր Գործոթը միանգամայն հանգիստ մնաց:

Սակայն ապրիլ 24-ին Բերկերի մանուշարմոյի կօմանդան Ամար բէկը յանկարծ մի քանի հարիւր միլիմետրով յայտնուեց և սկսեց մի յամտու տեսական կոխու Գիւղի կենդանուած զբանուած էր եկեղեցիին, ժողովրդին վայրագութիւններից ազատելու նպատակով եկեղեցու շուրջը դանուղ 8—10 տների մէջ բացեցին անցքեր, ժողովուրդը գետնիցին այդ տներէ մէջ, խի ազաները բարձրացան եկեղեցու աստիճան և սկսեցին այդ տեղից կուել Թշնամին գրաւելով գիւղի ծայրում գանուղ տները, երեք օր անընդհատ փամփուշտ փշացրեց, բայց բնրստ ազաներին ընկճել չկարողացաւ, ուստի գիմեց հետեւալ խարբրայական միջոցին կօմանդանը կազմեց մերումն շտրոնող մի կեղծ հեռագիր և ուղարկեց ազաներին: Աճիշտ է, ազաները հեռագրին հաւատ չնմայեցին, բայց ժողովրդի մէջ թուլութիւն տալով եկաւ, եղան նաև հաւատացողներ. ծայր տեղ տարածայնութիւնը և գինւած ազաները մի հարիւր հոգի ազամարդ վերցնելով հեռացան գիւղից: Ամար բէկը իր նպատակին հասաւ, ասանց գիմադրութեան ասջացաւ գեղի եկեղեցիին, ժողովուրդը զաները բացեց և այդտեղ եղող ազամարդիկ, աւելի քան 100 հոգի, նոյն Մելոսանի ասն տալով մէկիկ մէկիկ ընկան: Այս տեղի ունեցաւ ապրիլի 27-ին 5 օր անց—մայիս 2-ին հայ կոմաւարները մտան Գործոթ. նըբանը տկանատես եղան դիակներով շող անցած հրապարակին:

Գ. ԴԻՄԱԴԻՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՎԱՐԱԳԻ ՇՈՒՐՁԸ

Վանից դեպի արեւելք, մէկ ժամ հետու, ցցւած է երկրագաթ վարագը: Գաղթիներից մէկը մեծ է, միւսը՝ փոքր և նրանք

ընկած են այնպէս, որ փոքր գաղաթը, Վանից հայելիս, երևում է դժւած մեծի ֆօնի վրա: Արևելեան բարձր գաղաթը կոչւում է Գալիլէա, իսկ արևմտեան փոքր գաղաթը՝ նաև Շուշանից սար: Երկու գաղաթները մէջ, մեծի կրծքին, գտնւում է վերին Վարազի բարձունքը, սրտիկից հիւսիսային և հարաւային ուղղութեամբ բացւում են խորունկ ձորեր: Հիւսիսային ձորի մէջ զբառնւում է Ս. Գրիգորի վանքը, իսկ արևմտեան գաղաթի հարաւային լանջի վրա հպարտ բազմած է Վարագի վանքը—Վասպուրականի Արձւի բոյնը: Վարագի հիւսիսային փէշերի վրա, մօտիկ Ս. Գրիգորի վանքին, գտնւում են չորս գիւղեր. դրանք են՝ հայաբնակ Կողպանցը ու Գարման-գիւղը, խաղըբնակ Զորովանցը և տաճկարնակ Զրւանդանցը: Բացի այդ, փոքր գաղաթի արևմտեան փէշերին գտնւում է Շուշանց գիւղը:

Վարագը իր ձորերով, գիւղերով ու վանքերով ներկա ջարդերի միջոցին երկու կարևոր նշանակութիւն ունեցաւ: Նախ՝ այստեղ եկան սպաստանեցին մի քանի հազար ժողովուրդ շրջակա գիւղերից և Հայոց-ձորից, երբ սկսեցին կատարածները, երկրորդն ու գլխաւորը՝ Վարագը հանդիսանալու էր փրկութեան ճանապարհ ու կայան, եթէ Վանը պարտէր և ժողովուրդը ստիպւած լինէր թողնել քաղաքը, այդ էր ճանապարհը, որովհետև Վարագի հիւսիսային և հարաւային լանջերով ձգւում էին Արձակ-Պարսկաստանի և Խօշոր-Բաշկալէի գծերը: Օրինակ, 1896 թւի դէպքերին Վանի կառողները աստիճանաբար Վանից Պետոյի, Աւետիսեանի և Մարտիկի, քաղաքը թողնելուց յետոյ նախ քաշեցին Վարագ և ապա անցան Պարսկաստան ու ճանապարհին ընկան բոլորը:

Վարագի այս կրկնակի կարևորութիւնը ի նկատի ունենալով, զեւ ջարդերից առաջ կատարութիւնը մի երեք տասնեակ ժանդարմներ զրկեց վանքի մէջ, այս ուղղութեամբ միջոցներ ձեռք առան նաև հայերը, ուստի երբ խռովութիւնները սկսեցին, ժանդարմներին մէջտեղից վերացնելու և վանքը ազատելու նպատակով շարժեցին երկու խումբ ազաներ Շուշանց և Կուսուրաշ գիւղից, շարժեցին ազաներ նաև Նոր-գիւղից և ժանդարմները զգալով իրենց նեղ գրութիւնը ապրիլի 7-ի գիշերը, երբ Վանում կտրւն արդէն սկսեւ էր, սպանեցին վանքի միաբաններ Արիստակէս ու Վրթանէս վարդապետներին, ինչպէս և

չորս ծառաներին ու փախան: Այս միջոցին արդէն սկսել էր նաև Հայոց-ձորի կոտորածը և բազմաթիւ ժողովուրդ, հետապնդւած քիւրդերից, դիմում էր դէպի Վարազ: Վարազը արդէն տրդաների ձեռքին էր և նրանց զեկավարում էր խմբապետ Թորոսը, երբ լուր հասաւ, որ Նոր-գիւղի սահմաններում քիւրդերը կտրել են ժողովրդի ասօջաւուրը աննկուն պէս խմբապետ Թորոսը վերջրեց տղաներն ու հասաւ Նոր-գիւղ. սկսեց կռիւ տրդաների և քիւրդերի մէջ, սպանեցին քիւրդերից մի երկուսը՝ միւսները յետ փախան և ժողովուրդը քաշեց լեռը:

Քաղաքում արդէն կռիւն սկսել էր, Վարազը գտնուում էր տղաների ձեռքում, հարկուար էր մաքրել ճանապարհները քաղաքի և Վարազի մէջ, որոնցով կատարուում էին զիշերային երթիւկութիւնները. այդ ճանապարհներից մէկը իրենց ներկայութեամբ խանգարում էին Չորովանց և Զրանդանց գիւղերը. և անա ապրիլի 12-ին քաղաքից ուղարկեցին այդ գիծը մաքրելու համար Արմենակ Եկարեանը, Յովսէփ Գույումշեանը և Զաւէն Կորկոտեանը: Աջակցութեամբ Գարման-գիւղի և Կողպանցի զինւած տղաների, յարձակում գործեց Չորովանց գիւղի վրա. տաճիկները այդտեղ մեծ ուժ էին հաւաքել, այդ պատճառով երկուօր շարունակեալ յարձակումները յաջողութիւն չունեցան, բայց երրորդ օրը զիւզը դրաւեց: Ստեփան այդ միջոցին Արճախի գիւղերը աւերելով օգնութեան հասաւ Սարայի գայմագումը զօրքով ու թնդանօթով. Գարման-գիւղ, Լիմ, Զարանց, Սեան գիւղերի ժողովուրդը քաշեց Վարազ. անհաւասար ուժին տեղի տալով քաշեցին նաև տղաները և Չորովանցը, ինչպէս և Գարման-գիւղը նորից անցան տաճիկների ձեռքը:

Բայց Կողբանցը, Շուշանցը, Ս. Իրիգորի և Վարազի վանքերը մնացին տղաների ձեռքում իրենց պաշարներով, շրջակա գիւղերից ու գաւառներից եկան խմբուցին այս տեղերը աւելի քան 6000 ժողովուրդ. զիշերային երթիւկութիւնը շարունակեց քաղաքի հետ և Վարազը իբրև վանեցու վերջին կայան՝ պահպանեց իր գոյութիւնը:

Այս, ի հարկէ, հանդիստ չէր տալիս Զէւդէտին, այն Զէւդէտին, որը անա քանի օր հրապարակ էր բերել իր ամբողջ ռազմական կարողութիւնը թնդանօթներով հանդերձ, բայց Վանը ընկճել չէր կարողանում. ուստի որոշեց ինչ գնով էլ լինի՝

ուսպ.
12-13

դոնէ վարագըր, այդ կայանը խորտակել: Մի քանի անյաջող փորձերից յետոյ, ապրիլի 25-ին, շարաթ օր, Հաջի-բէքերի զօրանոցից և այլ տեղերից անազին զօրք շարժւեց դէպի Շուշանց գիւղը: Զօրքը բաղկացած էր 300-ի չափ հեծեալ և 1000-ից աւելի հետակա չիթաներից ու միլիաններից, ունենալով իրենց հետ երեք թնդանօթ:

Հայերը նոյնպէս ունէին բաւականաչափ ուժ, բայց նրանք բաժանուած էին երեք տեղ. կողպանց գիւղի և Ս. Գրիգորի վանքի դիրքերը պաշտպանուած էր խմբապետ Յակոբ Պլնկօեանը 50 տղաներով, վարագի վանքի դիրքերը պաշտպանուած էր խմբապետ Թորոսը 250 տղաներով, իսկ Շուշանցը պաշտպանուած էր Արճակի ղեկավար Շիրին Յակոբեանը 250 տղաներով: Թշնամու հարւածը ամբողջապէս ուղղուած էր Շուշանցի դէմ:

Դեռ լոյսը չէր բացուել, երբ Շուշանցը պաշտպանող տղաները, նկատելով թշնամու շարժումը շտապեցին Տրովգեօլ կոչող դիրքը գրաւելու, թշնամին հէնց այդ դիրքի վրա էլ ուղղեց կըրակը, գիմադրութիւնը եղաւ շատ կարճատեւ, տղաները մի փոքր կուռելով տեղի տւին և թշնամին գրաւեց դիրքը: Տրովգեօլի անկումը ճակատագրական եղաւ Շուշանցի համար. թշնամին սըրտապնդուած առաջացաւ դէպի գիւղը, երեք թնդանօթները և քաղմաթիւ համազարկերը, սուժեր ու գնդակներ էր որ տեղում էին գիւղի վրա. միւս կողմից այստեղ կուռողները չը յայտնաբերեցին այն կարող գիմադրութիւնը, ինչ որ հնարաւոր էր Ղեկավարող ձեռքը թոյլ գտնւեց և շուտով Շուշանցն ընկաւ. տղաները հետգհտէ քաշւեցին դէպի վարագ, թշնամին գրաւեց գիւղը և սկսեց տները հրդեհել:

Այս յաջողութիւնից յետոյ թշնամին փորձեց բարձրանալ դէպի վանքը պաշտպանող դիրքերը, բայց առաջացան տղաները և թշնամուն յետ քշեցին նորից Շուշանց:

Սակայն պարտութիւնը արդէն կիսով չափ կատարուել էր. Շուշանցի անկումը իր հերթին ճակատագրական եղաւ կողպանցի և Ս. Գրիգորի համար: Թշնամու մի մասը Շուշանցը գրաւելուց յետոյ շարժւեց դէպի այդ կողմը. Շուշանցի պէս այստեղ էլ գիմադրութիւնը երկար չը տևեց, մի երկու ժամ կուռուց յետոյ տղաները քաշւեցին դէպի լեռան բարձունքները և գիւղն ու վանքը ընկան թշնամու ձեռքը ու հրդեհւեցին:

Մութը պատեց. ժողովուրդը քաշւեց լեռան վերին մասերը. աղաները խմբւեցին վանքի մէջ խորհրդակցելու. այս միջոցին Վարագի լանջերը դեռ աղմկում էին թշնամու համազարկերից. չքուն էր սկսել աղաների մէջ. Ահա այս տպաւորութեան տակ խորհրդակցութեան նստեցին Փոխանակ ուժերը կենդանացնելու և բոլոր թափով կորցրած կարևոր դիրքերը նորից վերագրուելու, այլևայլ առաջարկութիւններ արեցին, համաձայնութիւն չը կայացաւ նրանց մէջ. այդ օրու անյաջողութիւնը և Շուշանցից անկումը իր նւաճումներն էր գործել, և խորհրդակցութիւնը հետեանքի չը հասցրեց: Շուտով կէս դիշեր եղաւ, թշնամին քաշւեց, ճանապարհը դէպի քաղաք աղաւտեց, և ահա աղաների մի մասը բռնեց քաղաքի ճանապարհը, նրան հետևեց ժողովրդի մի մասը: Այս արդէն Վարագը թողնելու և նրա անառիկ դիրքերը պարսկելու սկիզբն էր. ժողովրդի մի մասն էլ մնացեալ աղաների հետ քաղաք իջաւ յաջորդ գիշերը. և թշնամին եկաւ վանքը գրւեաց ու ապա հրդեհեց, օրից յետոյ Վարագի վերին բարձունքներում ինչպէս և Աստղիան-բերդ կոչւած տեղում դեռ աղաներ ու ժողովուրդ կային, որոնք մի երկու օր անց նոյնպէս իջան քաղաք:

Այսպիսով ընկան շրջանները, ընկճւեցին այս ու այն գաւառում, այս ու այն գիւղում բռնկւած զիմազրութիւնները, ընկաւ նաև Վարագը—Վանի այդ ամբուսութիւնը և վերջին կայանը իր անառիկ դիրքերով, և բոլորը համախմբեցին Վան, որը յամառ կերպով դեռ շարունակում էր իր մարտը. համախմբեցին ընդհանուր ու միացած ուժերով յայտնադործելու այն կորովը այն հերոսական պայքարն ընդդէմ տաճիկ կռուավարութեան և այն յողթմանակը, որ տարաւ Վանի հայութիւնը այնպէս պատասփ, այնպէս վեհօրէն:

ՎԱՆԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ

Նախքան Վանի հերոսամարտին անցնելը կարևոր է ծանոթանալ քաղաքի դիրքի, կազմութեան, ազդարնակութեան յարաբերական թւի և բաղմական կողմերի հետ, որով միայն կարելի է զաղափար կազմել այն կարող դիմադրական ուժի մասին որ յայտնադործեց Վանի հայութիւնը ապրիլեան կռիւների ժամանակ:

Վանը բաղկացած է երկու մասից, մէկը նրանցից կոչուում է Քաղաք, միւսը Այգեստան: Քաղաքը ընկած է գէպի արևմուտք—լճի կողմը, իսկ Այգեստանը գէպի արևելքը: Քաղաքը իր դիրքով փոքր է, յրուսականութիւնից զուրկ, տները կայած են միմիանց, փողոցները նեղ են ու անկանոն, բայց լայտեղ են զանաւում շուկան, պետական հիմնարկութիւնները և զինուորական մթերանոցը:]

Այգեստանը ընդհակառակն ազատ է ու փուլած, տները օժուլած են պարտէզներով ու այգիներով, փողոցները անհամեմատ կանոնաւոր են ու ընդարձակ: Այստեղ առանձնապէս աչքի է ընկնում մի լայն ու երկար փողոց, որը Քաղաքից սկսած կը տրոււմ անցնում է Այգեստանը իր ամբողջ երկարութեամբ, և որի երկու կողմերում բուսած պարթև բարդիներն ու ուռիները հաճոյք են պատճառում անցորդին: Այս փողոցը ընդհանուր անունով կոչուում է Սղգայի ջաղղա, բայց տարբեր մասերը տարբեր անուններ ունին: Փողոցի մէջտեղ ընկած է մի փոքրիկ իռաշաձև հրապարակ, այդ մասը կոչուում է Սաշ-փողան կամ Սաշ-փողանի հրապարակ: Այգեստանը իր բուսականութեամբ, օդով ու ջրով գէպի իրենն է քաշել ժողովրդի մեծ մասը, մանաւանդ ունևոր մասը, որը ընտրել է այդտեղը իր բնակութեան վայր:

Բաղաքը հիւսիսային իր ամբողջ երկարութեամբ պատնէշ-
 ւած է պատմական Շամիրամի սեպածև ժայռերով կամ բերդով,
 իսկ մնացեալ կողմերից պաշտպանւած էր հինաւուրց պարիսպ-
 ներով, որոնց հետքերը մնում են այժմ. Թաւրիզի դռան կամ ա-
 րևելեան ճակատի վրա միայն պարիսպը դեռ կանգուն է:)

Այգիստանը նոր է, նա պարիսպներ չունի, ունենալու
 կարիք էլ չի զգացել, նրա շրջապատը կազմում են այգիներ,
 պարտէզներ ու ծառաստաններ: Զիւսիսային կողմից միայն նա
 ունի մի բնական պատուար, մի փոքրիկ լինանշղթայ, ուր զբա-
 րանում են նշանաւոր Զմդմ-մաղարան և Մըհէրի-դուուր: Այստեղ
 գտնւում են նոյնպէս Ակոբի տաճիկ զիւղը և Ակոբիի մատուոը:
 Երկու քաղաքամասերը միմիանցից բաժնւած են մի ամա-
 յի տարածութեամբ, ուր գտնւում է Հայկալմանք թաղը՝ առաջ
 քաղմահայ, այժմ կիսաւեր վիճակում:

Վանը ունի 41,000 բնակիչ, որից 23,000-ը հայեր են իսկ
 18,000-ը մահմեդականներ:

Քաղաքում ապրում են 3000ի չափ հայեր և 1000ի չափ մահ-
 մեդականներ, ընդամէնը 4000: Մնացեալ ազգաբնակչութիւնը ապ-
 րում է Այգիստանում, Հայկալմանքում, Կլոր-տարում, և առանձ-
 նացած Շամիրամի թաղում:)

Պէտք է յիշել, որ Քաղաքից տեղի ունի շարունակ ար-
 տագաղթ, գաղթում են թէ հայերը և թէ մահմեդականները:
 հայերը գաղթում են Այգիստան, իսկ մահմեդականները գլխա-
 ւորապէս Շամիրամի թաղը:

Այգիստանում հայերը բնած ունին արևելեան մասը, որ-
 տեղից դէպի Վարազը բացւում է մի ընդարձակ տափարակ, իսկ
 մահմեդականները արևմտեան մասը, օրինակ, Հնչին բացառու-
 թեամբ զուտ հայարնակ թաղեր են Արաբք, Նորաշէն և Յանկոյս-
 ներ կոչուող թաղերը՝ իրենց մի շարք թաղամասերով: Արաբք
 ունի մի ընդարձակ հրապարակ շրջապատւած խանութներով,
 որը կոչւում է Աբարուց հրապարակ. սա Քաղաքի շուկայից յե-
 տոյ Վանի կրկնորդ բանուկ շուկան է: Աբարուց հրապարակից
 հիւսիսային ուղղութեամբ մինչև Սաչ-փողանի հրապարակը ձգ-
 ւում է մի ընդարձակ փողոց, որը կոչւում է Նալբանդ օղլու
 փողոց կամ փողան: Այս փողոցից դէպի արևմուտք գտնւում են
 մահմեդական կենդրոնական թաղերը, բայց փողոցի վրա գրան-

վան

ևող շարքում մեծ մասամբ ապրում են հայեր, այնպէս որ այս փողոցում սկսւում է երկու ժողովրդի զբաղիութիւնը կամ խառը բնակութիւնը: Պառքբնակ են նաև ղէպի հիւսիս գտնւող Նորշէն և ղէպի հարաւ գտնւող Կլոր-գար թաղերը: Այս թաղերում ընդհարումներ ժամանակ տեղի են ունենում համախմբումներ, հայերը քաշւում են հայկական թաղերը իսկ մահմեդականները՝ մահմեդական թաղերը, և ընդհարումների զիծը կաղմում են այդ մաքրւած շրջանները: Մասնաւորապէս Կլոր-գարում, ուր ապրում են մեծ մասամբ մահմեդականներ, ընդհարումների ժամանակ հայեր բոլորովին չեն մնում: Նոյնը տեղի է ունենում նաև Նորշէնի, Ս. Յակոբի թաղամասում:

Այգեստանի պլխաւոր փողոցը, որ ձգւում է մինչև Քաղաք, ընդհարումների ժամանակ իր արեւելեան կէս երկարութիւնը գտնւում է հայերի ձեռքում, իսկ արեւմտեան կէս երկարութիւնը, ձգւելով տաճկական թաղերի միջով, մնում է տաճիկների կամ կառավարութեան ձեռքում, և շնորհիւ այս հանգամանքի, յարարութիւնը Քաղաքի և Այգեստանի մէջ խռովութիւնների ղէպքում հայերի նկատմամբ միանգամայն ընդհատւում է:

Հայաբնակ մի թաղը Հայկավանք անունով, որը ինչպէս տեսանք, գտնւում է Քաղաքը և Այգեստանը բաժանող ամայի տարածութեան վրա, տաճկական թաղերի արեւմտեան ծայրում, խռովութիւնների ժամանակ մօտ գտնւելով Քաղաքին, քաշւում է այդտեղ, և պէտք է ասած, այս թաղը դուրի պաշտպան լելու միջոցներէց, իւրաքանչիւր ջարդի ժամանակ եղել է ատաջին տուժողը և աստիճանաբար դատարկւել ու ամայացել է:

Կայ մի թաղ ևս բոլորովին մեկուսացած, զա Քաղաքից ղէպի հարաւ-արեւելք ընկած Շամիրամ կոչւող թաղն է, որը դուրս տաճկաբնակ լինելով, ջարդերի կամ կոռիւնների ասպարէզ չի դառնում:

Ինչպէս տեսնում ենք, Այգեստանի հայկական թաղերը արեւմտեան և հիւսիս-արեւմտեան կողմերից շրջապատւած են տաճկական թաղերով, իսկ հարաւային, արեւելեան, հիւսիս-արեւելեան կողմից ազտա են տաճիկ ապգարնակութիւնից: Անշուշտ այս հանգամանքը զրդել է տաճիկ կառավարութեանը հայկական թաղերի այս բաց թիկունքում ունենալ զօրանոցներ: Այսպէս,

№ 3.

Թուրք ժողովուրդը չի ծանակցեք կոխներուն:

1. Սահակ պէյի դիրքին վրա պայթուցիկ թնդանօթի գնդակներէն մէկը միայն յաջողած է ձեռքով շինւած պատնէշը փլցնեք և փոշի առաջացնել: Մեր նոր ուժերու հասնելով, թշնամին հոն սկսաւ դադրեցնել կրակը իրմէ 4 կորուստներ տալով:

2. Խաչ-փողոցի կուռղ թուրքերը իրենց դիրքերը վառելով հեռացան:

3. Ապօյի դիրքին մէջ սպանեցինք 1 թուրք:

4. Սէօներու գալոցի թրքական զրօշը վար տօինք:

5. Այրճ-օղլու դիրքին վրա յառաջացող միլլիները շատ կորուստներ տւած են Հաջի-բէքրի ղշլայէն արձակուող թնդանօթի գնդակներէն:

6. Համուզ աղայի դրան առջև թուրք մը սպանեցինք:

7. Փոս թաղի մէջ սպանեցինք 3 միլլի:

8. Մեր ընկերները հազարաւոր գնդակներուն կը պատասխանեն միայն մէկ գնդակով:

Այս ազդն էլ միւսների պէս կայծակի արագութեամբ ձեռքէ ձեռք անցաւ և նոր խանդավառութիւններ տառաջ բերեց:

Եւ այսպէս, մի շարք յաջողութիւնների ծանուցումներով, գիրքապահ տղաների արամադրութեան բարձրացումով և ժողովրդի խանդավառութիւններով, հանգերձ ֆանֆարի ողևորիչ նւագներով կուռի առաջին օրը, ապրիլի 7-ը, բոլորեց իր շրջանը և մութը արդէն պատել էր, երբ բոլոր դիրքերն ուղարկեցին գրնւորական մարմնի հետեւալ ազդը:

Ընկերներ!


Թնդանօթի ուժերէն ցարդ վնասուած են միայն անդէնները: Անդէնները ապահով տեղեր դրէք:

Արի եղէք, արդէն ամէն տեղ յաղթութիւնը մերն է:

Գիշերւան անունն է «ցորեն»:

Բարևներով Զին. Մարմին

Այսպիսով կուռի առաջին իսկ օրը վերջացաւ մի շարք յաղթութիւններով, զէնքին փարող ժողովրդի հաւատը զէպի իր ուժերը ամրապնդեց:



Հիսիս

Արար սար

Ծառայի շրջան

Ս. Բեկ-բուն

Մարտիրոսի շրջան

Ս. Երանյանի շրջան

Ս. Գևորգի շրջան

Ս. Գրիգորի շրջան

Ս. Կարապետի շրջան

Ս. Լևոնի շրջան

Ս. Մկրտիչի շրջան

Ս. Ստեփանի շրջան


Ս. Վահագնի շրջան

Ս. Բարսեղի շրջան

Հ Ե Ր Ա Ն Գ Բ

1915 թ. ԱՊՐԻ 7

ՄԱՍՏՏԱՐ



ԱՅԳԵՍՏԱՐԻ ՀԱՅ ԻՐԱՆԱԳՐԱՑՊԵՆՈՒԹՅԱՆ ՅՈՒՏԱԿԱՐԳՈՒՄ

- | | |
|--------------------|------------------------------------|
| Հայեր | Հայ իրաւագրութեան շրջաններ |
| Բացարարական գոյներ | Հայ գիւղեր |
| և | Օտար Հաստատութիւններ և նիւթեղեններ |
| Նշաններ | Պատկերներ |
| | Պատկերներ |

Յիշել, Ա. Արար. Ե. Ա. Սիւր. Ն. Թիֆլիս.



նաստանից, որ գտնուում էր շրջագծի հարււային կողմում, Նախրի փողոցի վրա և վերջանում էր Չարչի Բաղդոյի զիրքով(*), կենդրոն ունենալով Արարուց հրապարակը, որի սլառճառով էլ շրջանը կոչւում էր Առաջին կամ Արարուց շրջանը: Այստեղ հաստատուեցին հետևեալ 16 զիրքերը իրենց խմբերով, խմբապետներով ու շրջանապետներով:

Շ Ր Չ ա ն ա պ ե տ ն ե ր

Նշան նախանդեան
Կարապետ Սարուխանեան

N	Դիրք	Քմբապետ
1.	Մանդարուռի մէջա	Մինաս Պալօեան
2.	Ապիկեանի տուն	Չոչաղա Սալախեան
3.	Պօլէեանի »	Տիգրան Պնէեան
4.	Դհէրցի Սարգսի »	Նշան Ռէս-Մէլիքեան
5.	Եաղկուրեանի »	Տիգրան Նօրտուզցեան
6.	Դհէրցի Ներսոյի »	Տիգրան Դհէրցեան
7.	Սալօյի սրճարան	Ղևոնդ Ժամկոչեան
8.	Պատուրի փուռը	Դաւիթ Զրաղացպանեան
9.	Տէր Մկրտչեանի տուն	Արտաշէս Հիւսեան
10.	Աշօյի Սրճարան	Տիգրան Չթչեան
11.	Փօթիկեանի տուն	Նազարէթ Սապունջեան
12.	Կօլօտ Դաւթի »	Եղիա Բօյաջեան
13.	Կարթալեանի »	Գալուստ Միրիջանեան
14.	Ֆարկուզաղեանի »	Արմենակ Առեղցեան
15.	Միսակեանի »	Ատոմ Սապունջեան
16.	Չարչի Բաղդոյի »	Թադէոս Պճիկեան

Արարուց հրապարակի վրա նշանաւոր դեր խաղում էին Դհէրցի Սարգսի, Դհէրցի Ներսոյի և Եաղկուրեանի զիրքերը, որոնք մեծապէս ֆլաւել էին ուսմանը: Այստեղ գործում էին թշնամու չորս գլխաւոր զիրքերը՝

Դրանք էին.

1. Արարուց հրապարակի ուսիկանատունը կամ մարքեաղը:

*) Դիրքերը կոչւում էին այն մարզկանց անուններով, որոնց անբում հաստատուած էին:

որը շատ ուժեղացւած էր:

2. Արարուց գործը, ուր կուի նախընթաց օր կառավարութիւնը զօրք դրեց:

3. Արարուց եկեղեցին, որը անցաւ թշնամու ձեռք գործքի հետ միասին:

4. Կլոր-դարի թաղը, որտեղից շարունակ հարւածում էին երկու թնդանօթներ: Այդ թնդանօթներից մէկը յետոյ փոխադրւեց եկեղեցու բակը:

ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ

Այս շրջանը կազմելով առաջին շրջանի շարունակութիւնը՝ սկսում էր Փիրուսեանի տանից և վերջանում էր Սիմօն Թէրլէ՛ մէկեանի դիրքով. ընդգրկելով իր մէջ Արարուց հրապարակից եկող Նալբանդ-օղու փողոցը իր երկարութեամբ և Սաչ-փողանի հրապարակը իր շրջապատով: Այստեղ հաստատուեցին հետեւեալ 18 դիրքերը իրենց խմբերով, խմբապետներով ու շրջանապետներով:

Շրջանապետներ և օգնականներ

Փանոս Ժամկոչեան
Ռուբէն Իսրայէլեան
Գարեգին Ոսկերիչեան
Նշան Ժամազործեան

№	Դիրք	Խմբապետ
1.	Փիրուսեանի տուն	Ղաւար Արշակ
2.	Փօլիս Աբօյի >	Մանուկ Պարսամեան
3.	Չաչալ Միրզի >	Ղահան Հացազործեան
4.	Սուսաթիւնի >	Չոչաղա Ալամկալամեան
5.	Նաթանեանի թութլուղ	Եփրեմ Զրբաշխեան
6.	Սահակ բէյի տուն	Արամ Բուսնազեան
7.	Թովմազեանի >	Արամ Շալջեան
8.	Փալէի սրճարան	Արճէշցի Գնէլ
9.	Մաքսապիսեանի >	Նշան Աղանիկեան
10.	Գալիկեանի >	Արմենակ Ժամազործեան
11.	Եւաւրուեանի >	Յովհաննէս Ղաղարեան

12. Նորամիրեանի	»	Սօլկար Տիգրան
13. Սմաարեանի	»	Արմենակ Սարգիսեան
14. Օթէլ (հիւրանոց)		Յովհաննէս Աշէնան
15. Նալբանդեանի	»	Մարտիրոս Կօթօեան
16. Սառաջեանի	»	Կամսար Բայլեան
17. Սիմօն Թէրլէմէզեանի տուն		Իսախթ Զաւուշ
18. Մուհասարաջեանի	»	Վարդան Պանտիկեան

Այս շրջանում առաջնակարգ դեր խաղում էին Փօլիս Աբօ-յի, Սահակ-բէյի, Թովմաղեանի և Մաքռապետեանի ղիրքե-քը: Սրանց և սրանց շարքի ղիրքերի դէմ գործում էին.

1. Տաճկական կենդրոնական մեծ թաղը մի շարք ղիրքե-քով ու մէկ թնդանօթով, այստեղ աչքի էին ընկնում Թօփաչ Թօջայի և Համդէյի ղիրքերը:

2. Անգլիական հիւպատոսարանը, որը գտնուում էր փողոցի արևելեան շարքի վրա, Ճիտէչեանի երեք յարկանի տան մէջ, հայերի շրջանում, ուր ամրացել էին 30-ի չափ ժանդարմներ:

Թաշ-փողանի հրապարակի վրա, որը հանդիսանում էր զբլ-փաւոր թաղերի հանգոյցը և միևնոյն ժամանակ երթևեկութեան գլխաւոր վայրը, դեր խաղացին Նալբանդեանի երկու յարկանի մեծ տունը՝ Օթէլը:

Սրանց դէմ գործում էր նախ հեռագրատունը. հեռագրատունը հրդեհելուց յետոյ սկսեց գործել նրան կից փլատակներէ և Շահրաղլեանի տան մէջ դրւած մէկ թնդանօթ:

Առաջ բերած այս երկու շրջանները հանդիսացան խոշոր փոխների վայր, որովհետև նրանք կազմում էին հայ և տաճիկ գլխաւոր թաղերի շփման դիժը:

ԵՐՐՈՐԻ ՇՐՋԱՆ

Այս շրջանը սկսում էր Ջրւանդանի տանից և վերջանում էր Շաղոհանի ղիրքով, ընդգրկելով իր մէջ Շանօյի-դարը, Փոսթաղը, Շան-թաղը և Թէրանի թաղը. սրանք կազմում էին Նօրչէնի այն թաղամասերը, որոնք ղիմադրում էին Նօրչէնի տաճկական թաղամասերին և Յանկոյաների գետի միւս կողմում ընկած Սև-քոայի և Ակոբի տաճիկ դիւղին:

Այստեղ հաստատուեցին հետևեալ 20 ղիրքերը իրենց խմբե-)
 ղիմադրողներով և շրջանապետներով:

Նըջանապետներ և օգնականներ

Մելքիսէթ Էյնաթեան

Մխաղ Սիմոնեան

Յովհաննէս Մանուկեան

Վարդան Գասպարեան

№	Գիրք	Խմբապետ
1.	Զրուանդեանի տուն	Քէրիմ Չաուշ
2.	Քէրլէմէղեանի	Վահան Գալլեան
3.	Քորգումեանի	Մկրտիչ Փէհրիզեան
4.	Վզլզեանի	Ողմեցի Համբարձում
5.	Բէրբէրեանի	Ղևոնդ Արուբալաքեան
6.	Գույումըրաշեանի	Յովհաննէս Սարգսեան
7.	Եղիկեանի	Ներսէս Մարտիրոսեան
8.	Մալաղեանի	Սահակ Փոխսրարեան
9.	Քօփալ Օհանէսի	Աւետիս Մարկոսեան
10.	Շմաւոնեանի	Ղևոնդ Ղաղարեան
11.	Բուռնութեանի	Արամ Շալջեան (ուսուցիչ)
12.	Քուրօեանի	Վահան Սօսօեան
13.	Կատաքչեանի	Պետրոս Ռուբէնեան
14.	Մրտեանի	Մկրտիչ Մանուկեան
15.	Տնգլշօեանի	Եղիշէ Վարդանեան
16.	Սանօեանի	Սենեքեբիմ Սանօեան
17.	Իսոյի	Գասպար Մկրտչեան
18.	Մրտեանի	Միհրան Մուսօեան
19.	Խրիմեանի	Յովհաննէս Չասպարեան
20.	Շաղօեանի	Կարապետ Պարիկեան

Այս շըջանում կարեւոր հանդիսացան.

1. Զրուանդեանի և Վզլզեանի գիրքերը, որոնց դէմ գործում էր կառավարութեան ձեռքն անցած Փէռերի դպրոցը մէկ թնդանօթով:

2. Շմաւոնեանի գիրքը, որի դէմ գործում էր տաճիկներէ կաւանդ-օղու գիրքը:

3. Շաղօեանի գիրքը, որի դէմ երբեմն գործում էր Սեբոսյում դրւած մէկ թնդանօթ:

ՉՈՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ

Այս շրջանը սկսում էր Չանօհանի տանից և վերջանում էր Չանթիկեանի դիրքով, ընդգրկելով Յանկոյսների հիւսիս-արևելեան թաղամասը, որը կոչւում է Դարի-գլուխ, և Չավուշբաշի թաղը: Այստեղ հաստատուեցին հետևեալ 9 դիրքերը իրենց խումբերով, խմբապետներով և շրջանապետներով:

Շրջանապետներ և օգնականներ

Գալուստ Տանձօհան

Կարապետ Տէր Յարութիւնեան

№	Դիրք	Խմբապետ
1.	Չանօհանի տուն	Եղիշէ Նալբանդեան
2.	Ամիրխանեանի »	Ոգմեցի Յովսէփ
3.	Մանասէրեանի »	Աբէլ Յարութիւնեան
4.	Շահրէնդէրեանի »	Մկրտիչ Մկրտչեան
5.	Շէկօհանի »	Մարգար Հիւսեան
6.	Աղանիկեանի »	Ռուբէն Հիւսեան
7.	Շիրօհանի »	Պօղոս Կօթօհան
8.	Տէր Սաչաարեանի »	Էրզրումցի Սարգիսեան
9.	Չանթիկեանի »	Ոգմեցի Վարդան

Այս շրջանում կարևոր դեր ունեցան գլխաւորապէս երկու զոյգ դիրքեր, զրանք էին Շահրէնդէրեանի, Ամիրխանեանի, Տէր-Սաչաարեանի և Շիրօհանի դիրքերը: Սրանց դէմ գործում էր Թօփրաղ-կալէի զօրանոցը բազմաթիւ քիւրդերով, ղինւորներով և երկու թնգանօթով: Երբեմն յարձակումները կատարւում էին բուն թաղով ու յետ մղում, մասնաւորապէս Շահրէնդէրեանի դիրքը, որը հսկում էր Յանկոյսների գետի կամրջի ու Թօփրաղ-կալէի զօրանոցը ամուղ ճանապարհի վրա, մեծ ուժակոծութեան երթարկեց և մէկ անգամ էլ թշնամու ձեռքն անցաւ: Այս դիրքի զիմաց, գետի միւս ափին գտնւում էր Յանկոյսների հիւսիսեային, զոյրոց և գերեզմանատունը, որոնք գտնւում էին թշնամու ձեռքին:

ՀԻՆԿԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ

Այս շրջանը սկսւում էր Քրէշցեանի տանից և վերջանում

էր Տրճօեանի դիրքով, ընդգրկելով իր մէջ Թաղա-քեահրէզ կոչ-
ւող թաղը մի շարք այգիներով: Այստեղ հաստատուեցին հետեւեալ
9 դիրքերը իրենց խմբով, խմբապետներով ու շրջանապետներով:

Շ Ր Ջ ա ն ա պ ե տ ն ե ր

Նաղարէթ Բուռնութեան
Յակոբ Բագիկեան

№	Դիրք	Խումբ	Խմբապետ
1.	Քրէշցեանի	տուն	Արճէշցի Կարապետ(քաւոր)
2.	Դալի-Բաթմանի	»	Մանգանցի Զաքօ
3.	»	»	Յովհաննէս Արտամեացեան
4.	Հացհամրողեանի	»	Ողմեցի Մանուկ
5.	Դըբաղ-Պէրօյի	»	Գեաւարցի Բաղդասար
6.	Աղւանեանի	»	Կանգնարցի Գարբէլ
7.	Հիւսեանի այգին		Յ. Բագիկեան
8.	»	»	Արմենակ Կազազեան
9.	Տրճօեանի	»	Աւետիս Թոշուեան

Այս շրջանում կարևոր դիրքեր հանդիսացան Հացհամրող-
եանի, Դալի-Բաթմանի, Դըբաղ-Պէրօյի և Հիւսեանի դիրքերը,
որոնք զիմադրում էին նոյնպէս Թօփրաղ-կալի դօրանոցին, շա-
րունակ կրելով թնդանօթի հարւածներ և զիմադրելու էին դաշ-
տի կողմից սպասւող խուժանին:

ՎԵՑԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ

Այս շրջանը սկսւում էր խիաք Բարսեղի տանից և վերջա-
նում էր Հաջի Մալխասի դիրքով, ընդգրկելով իր մէջ Աւօյի-
դաբը, ուր գտնւում էին գերմանական և ամերիկեան շրջանակ-
ները, և Միրաւի-չաղը կոչւող թաղը: Այստեղ հաստատուեցին
հետեւեալ 4 դիրքերը իրենց խմբերով, խմբապետներով ու շրջա-
նապետներով:

Շ Ր Ջ ա ն ա պ ե տ

Ռափայէլ Տէր Խաչատրեան

№	Դիրք	Խումբ	Խմբապետ
1.	Խիաք Բարսեղի	տուն	Տիգրան Պլթինցի

- 2. Մօլախեանի » Յակոբ Կանտարեան
- 3. Տէր Խաչատրեանի » Աւետիս Կանտարեան
- 4. Հաջի Մալխասի » Մատթէոս Տ.Յովհաննէսեան

Այս շրջանը հսկում էր դէպի վարագ ձգւող տափարակի վրա, ուր սակայն խոշոր դէպքեր տեղի չունեցան:

ԵՕԹԵՐԲՈՐԴ ՇՐՋԱՆ

Այս շրջանը սկսում էր Միբաւի-չազրից և վերջանում էր Մանդարուռի մէջաջով. այստեղ հաստատուեցին գլխաւորապէս հետեւեալ 3 ուժեղ զիւրքերը իրենց խմբերով, խմբապետներով ու ղեկավարներով:

Շրջանապետներ և օգնականներ

- Ալէս Պարսամեան
- Գրիգոր Բազիկեան
- Միհրան Սոսանեան

№	Դիրք	Խմբապետ
1.	Բաշօյի տուն	Մեղքոն Գասպարեան
2.	Ապէյի »	Միհրան Ջինօեան
3.	Այիճ օղլու »	Լօրթօյի Յարութիւն

Այս երեք զիւրքերը ունեցան մեծ դեր. նախ դաշտի կողմից կային ազատ մուտքեր, որտեղից կարող էին տեղի ունենալ խուժումներ. այդ խուժումների դէմ գործելու էին նրանք. սակայն նրանք գլխաւորապէս գործելու էին Հաջի-բէքրի զօրանոցի դէմ, ինչպէս և գործեցին: Հաջի-բէքրի զօրանոցը համարւում էր վանի զօրանոցներից ամենամեծը: Այդ տեղից գործում էին շարունակ երկու թնդանօթներ, այդտեղ ամրացած էին 600-ի շափ զօրքեր ու միլիսաներ: Մկրի օրերում թշնամին իր գլխաւոր ուժերը կենդրոնացրեց այս երեք զիւրքերի դէմ, աշխատելով ներս խուժել հայկական թագերը, այս հանգիւլեց ուժեղ զիւրքութեան, որի պատճառով էլ յիշեալ զիւրքերը ստացան Գարդանէլ և Փում-կալէ անունները:

Այսպիսով 79 զիւրքեր Մանդարուռի մէջաջից սկսած տա-

բաժնեկրով գէպի Արարուց հրապարակը, Նալբանդ օգլու փողոցով մինչև Սաշ-փողանի հրապարակը, այդանգից Փոքր-քեանգըչիով ու Նորէն թաղի միջով դէպի Յանկոյաների գետը, ապա Չաւուշ-բաշիով ու Թաղա-քեանցիդով մինչև Աւօյի-գաբը և Միրաւի-չաղրով, Ենի-մահլաով մինչև Մանգարուտի մէջան կազմեցին մի ամուր պատնէշ, մի կողմ շղթայ, որը դիմադրելու էր անաւոր գրոհին, որը գնում էր նախագործելու ինքնապաշտպանութեան նախրական գաղափարը:

Կռիւների այդ եօթ շրջաններից պատ կաբ և մէկը, որը ամենից շատ հողս էր պատճառում հայերին, դա Համուգ-աղաջի գորանոցն էր, որը գտնւելով Յանկոյանների թաղի կեդրոնում, պաշտպանողական օղակի մէջ, համահասարակ գրադեցնում էր ամենքին:

Համուգ-աղաջի գորանոցին մօտիկ գտնուում էին երեք տաճկական մեծ տներ, որոնք հանգիստանում էին գորանոցին աջակից գիրքեր:

Ահա այս գորանոցի և նրան աջակից երեք տների գէժ գործելու համար սրշւեցին հետևեալ գիրքերը:

1. Մաղօեանի, Տիկեանի և Բալաքեանի գիրքերը՝ հարաւից:
2. Չիչօեանի գիրքը՝ հարաւ-արեմուտքից:
3. Փիլաւեանի և Սորէնեանի գիրքերը արեմուտքից:
4. Շաղօեանի և Սրիմեանի գիրքերը՝ հիւսիսից:
5. Դօղօեանի գիրքը՝ հարաւ-արեւելքից:

Այս 9 գիրքերը գորանոցը հրդեհելուց յետոյ դադարեցին

L գործելուց:

Ինչ էր ներկայացնում Այգեստանի հայ ժողովրդի մարտական ուժը այդ անհասարակ կուռւմ. ահա այն հարցը, որ անշուշտ կը սայ հետաքրքիր ընթերցողը:

Այդ ուժը, պիտի տեսնք, ընդհանուր առմամբ մեծ չէր և միանգամայն անբաւարար էր մի այդպիսի կռիւ մղելու համար: Սակայն չը պիտի մոռանալ այն հանգամանքը, որ յաճախ խնդիրները վճռուում են ոչ թէ ուժերի քանակով, այլ որակով: Այդեստանի հայ ժողովուրդը վարում էր գոյութեան կռիւ, Դամոկլեան սրի պէս կախում էր նրա գլխին ջարդի ուրականք: մահը անխուսափելի էր, ուրեմն ինչու չընտրել պատուաւոր մար-

Տեղի

հը: Կար մի այլ հանգամանք. զարաւոր ստրուկ ոտի էր, կանգ-
նել, նա անօրինակ լուսթեամբ քամիկ էր համբերութեան բա-
ժակը, քամիկ էր մինչև յետին կաթիլը, ու մէկէն բմբոստացել
էր ու զէնքի դիմել, արդեօք նա հեշտութեամբ ցած զնկոն էր
այդ զէնքը. ի հարկէ ոչ, և ահա հերոսութեան մղող այդ հան-
գամանքը հրաշքներ գործեց:

Տեղք

Ապրիլի սկզբում, երբ կախը պայթեց, Այդեսասնում հաշ-
ուում էին կազմակերպական ու մասնաւոր զէնքերի

1. Հրացաններ՝ մօսինի, մաուզէր, մօղել, այնպի ու բեր-
քան 200 հատ 70,000 փամփուշաներով:

2. Ատրճանակներ՝ տասն հարւածեան մաուզէր 300 հատ,
40,000 փամփուշաներով:

Ատրճանակներ՝ այլևայլ տեսակի 200 հատ, 20,000 փամ-
փուշաներով

Ընդամենը 700 զէնք 130,000 փամփուշտով:

Կուի ընթացքում գնալով այդ թիւը մեծացաւ, նոյնիսկ
Յրկնապատկեաց, ինչպէս այդ կը տեսնենք յետոյ, և այդ շնոր-
հի նրա, որ գուառները ընկճելով զինւած խմբերը ժողովրդի
հետ միասին թախեցին քաղաք. բայց կուի սկզբում այդ էր
քմբոստացած հայ ժողովրդի սպիտակեան ուժը, և այդ ուժով էր
որ նա նետեց կուի մէջ:

Սակայն մասսայական կոիւ մղելու և յողթանակ տանելու
համար բաւական չէր միայն զէնք, սպիտակութիւնը և կուռոյ ու-
ժեր ունենալ, այլ ամենագլխաւորը հարկաւոր էին գործը ղեկա-
վարող մարմիններ, զրա հետ միասին գիտակցութիւն ու կար-
գապահութիւն. իսկ այդ փոտաւոր կերպով հրապարակ բերեց
զէնքին գիմոզ վանի հայութիւնը:

Իր քայլէ մոռացեցին մանր խնդիրները, լոցին կուսակ-
ցական ու նման հարցերը և բոլորը-բոլորը եկան խմբեցին
ինքնապաշտպանութեան զործի շուրջը և ընտրեցին պատասխա-
նատու մարմիններ:

Նախ կոչմեց մի պատասխանատու զինւորական մարմին,
որը յետոյ կոչուում էր նաև «Ազգային ինքնապաշտպան մար-
մին», ինչպէս և շտաբ:

Զինւորական մարմնի սկզբնական անդամները ընտրեցին
երկք հոգի:

Դրանք էին՝

1. Բօլզարացի Գրիգորը,
2. Կայծակ Առաքելը,
3. Արմենակ Եզարեանը,

Երեքն էլ փոճառու մարտական ուժեր՝ առաջին երկուսը Դաշնակցականներ, երրորդը ռամկավար:

Զինուորական մարմնի մէջ հրաւիրւեցին գործելու նկարիչ Փանոս Թէրլէմէզեանը, որը եռանդուն գործողներից մէկը եղաւ: նաև գանազան աշխատանքներ կատարելու համար հետևեալ երիտասարդները:

- | | |
|------------------------|-------------------------|
| 1. Հմայիակ Մանուկեան | 4. Հրանդ Գալիկեան |
| 2. Յովհաննէս Մխիթարեան | 5. Կարապետ Աճէմ-Սաչօեան |
| 3. Արմենակ Փոխանեան | 5. Գարրիիլ Սէմէրճեան |

Զինուորական մարմնի անբաժան ու հեղինակաւոր խորհրդակիցն էր Արամը, Վանի տպագայ կառավարիչը:

Զինուորական մարմնից բայ ընտրւեցին երեք այլ մարմիններ, որոնք խոշոր դեր ունեցան կուի ընթացքում:

Դրանք էին՝

1. Կարմիր խաչի յանձնաժողովը,
2. Հայթայթիչ մարմինը,
3. Նպաստից յանձնաժողովը:

Մի ահագին ժողովուրդ գէնքի էր գիտում, սկսւում էր սպանութիւնների ու վիրաւորումների շրջանը, մարդիկ էին հարկաւոր բժշկելու նրանց:

Հարիւրաւոր կուռղներ աուն ու տեղ ձգած, գիշեր ու ցերեկ գնդակների տակ դիրքերում պիտի նստէին, հարկաւոր էր նըրանց ուտեստ հայթայթել:

Դաւառներից թափւում ու գալիս էին կողոպտւած և ագրուտտի միջոցներից զրկւած ահագին բազմութիւն, հարկաւոր էր նպաստի գործ կազմակերպել:

Եւ ահա այս անհրաժեշտ կարիքները հողալու համար ընարւեցին յիշեալ երեք մարմինները:

Կարմիր խաչի յանձնաժողովի անդամներ ընտրւեցին.

- | | |
|-------------------------------|-------------------------|
| 1. Տօբատր Սանֆանի (Պ.Զիթունի) | 4. Վարդան Կզարթմեան |
| 2. Տօբատր Քաչիկ | 5. Արշաիր Աւետադեան |
| 3. Վարազդատ Դէրօեան | 6. Արմենակ Վուլունիկեան |

ԱՅԳԵՍՏԱՆԻ ԶԻՆՆՈՐԱԿԱՆ ՄԱՐԿԵԻՆԸ



ԲՈՂՈՒՐԱՅԻ ԳՈՒԳՈՐ



ԿԱՐՃԱԿ ԱՄՈՒԵՐ



ԱՐԲԵՆԱԿ ԵՂՈՒԵՆՆԵՐ

Յանձնաժողովին աջակից ուժեր հրախրուեցին 30-ի չափ
չպարոցական կրիտասարգներ:

Իբրև հիւանդանոցներ ծանայեցին.

- | | | |
|-------------------------|-----------------|-------|
| 1. Նորաշէնի պարոցը | 3. Սօսօեանի | առւեր |
| 2. Տէր Բարսեղեանի առւեր | 4. Վարդապետեանի | » |

Հայթայթիչ մարմնի անդամներ ընտրուեցին

- | | |
|----------------------|-----------------------|
| 1. Գէորգ Սուճեան | 4. Սիմէոն Շիրօեան |
| 2. Մկրտիչ Աճեմեան | 5. Հմայեակ Կարբրինեան |
| 3. Յակոբ Ժամապարծեան | 6. Դաւիթ Պանտիկեան |

Աջակից անդամներ

- | | |
|----------------------|----------------------------|
| 7. Սահակ Շէկեան | 10. Կարապետ Մէլիանաջեան |
| 8. Կարապետ Բարսեղեան | 11. Գէորգ Յովնանեան |
| 9. Ղևոնդ Ոսկերիչեան | 13. Տիգրան Բէլրէլ-Սէֆէրեան |

Նպաստից յանձնաժողովի անդամներ ընտրուեցին

- | | |
|---------------------|-------------------------|
| 1. Սեպուհ Սանջեան | 8. Ռուբէն Շաուրեան |
| 2. Սէթ Գափամաջեան | 9. Արշախի քահանայ |
| 3. Ղևոնդ Զանիկեան | 10. Կարապետ Կարախանկեան |
| 4. Միքայէլ Միմասեան | 11. Յովսէփ Պաշովեան |
| 5. Մկրտիչ Զրբաշեան | 12. Յակոբ Փափազեան |
| 6. Պիարոս Սօզեան | 13. Մարտիրոս Սանօեան |
| 7. Աղաբէկ Համբարեան | |

Բացի սրանք, զինւորական մարմինն իբրև օժանդակ մար
մին ընտրուեց նաև ռազմամիութի յանձնաժողով, որի կազմի մէ
կաւան.

- | | |
|----------------------|-----------------------|
| 1. Կարապետ Պէլլարեան | 3. Վահրամ Տ. Պօղոսեան |
| 2. Դաւիթ Փափազեան | 4. Տիգրան Բէլրէլեան |

Ի Անա ընդհանուր առմամբ այն զինական ու ռազմական
ուժը և նրան զեկալարող մարմինների կազմը, որով Այգեասա
նի հայ ժողովուրդը դնում էր զիմաւորելու ահաւոր, միևնոյն
ժամանակ փառաւոր կոչին — ապրիլի 7-ին

ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ ԱՅԳԵՍՏԱՆՈՒՄ

10-րդ գլխում մենք տեսանք.

Ապրիլ 1-ից Ջէյդէտը անցաւ իր զաւազիր գործողութիւններին. նա խտիւ պահանջից հայ զինուորացուների յանձնումը. հայերի թաղում գանուղ Համուղ աղայի գորանացը, որ մինչև այդ գատարի էր, գորքեր դրեց. ապրիլ 3-ի գիշերը Հիրճում գտաողութեամբ սպանել տեց Իշխանին իր կրեք ընկերներով, իսկ յաջորդ առաւօտ խաբերայութեամբ իր մօտ կանչելով Վասմեանին արտօրեց անյայտ կողմ:

Այս համարելով ջարգների աղղանշան, հայերը անցան ինքնապաշտպանութեան աշխատանքներին. երթեկութիւնը Այգեստանի ու Քաղաքի մէջ գաղաթեց, շուկաները փակեցին, յարաբերութիւնը կառավարութեան ու հայերի մէջ խզեց, ծայրաթաղերի հայ ընտանիքները սկսեցին տեղափոխել կենդրոնական մասերը, ինքնապաշտպան խմբերը քաշեցին նախօրօք որդուած գիրքերը, լուսամուտները սկսեցին ամրացնել, տեղ-տեղ փորեցին խրամատներ, և ըզըր թափով պատրաստեցին զիմարելու սպանացող վտանգին:

Պատրաստուում էր նաև Ջէյդէտը. գորքերը շարժման մէջ էին, Այգեստանի սահմանի վրա գանուղ Հաջի-Բէքրի և Թոփրաղ-կալէի գորանացները ամրացուում էին, այդ տեղերում գրքուում էին թնդանօթներ, գէպի Վարագ տարածուող գաշտի մէջ շրջում էին պահակ զինուորներ և փորում էին խրամատներ, սահմանակից մահմեդական թաղերում զետեղում էին զինուորական խմբեր:

Ու այդ գլուխը մենք վերջացնենք հետևեալ խօսքերով.

Փոթորկոտ միևնոյն ժամանակ հոգեպնդիչ աշխատանքների մէջ Վանի հայ ժողովուրդը գլորում էր ապրիլ 6-ը, նա գնում էր վերջին հանգիստն առնելու խորհրդաւոր գիշերին, նա գնում

Այս դիմաւորելու ահաւոր առաւօտին. որը գալիս էր կազմելու հայ ժողովրդի տարեգրութեան հոյակապ էջերէց մէկը:

Ահա յղացումներով լի այդ գիրքը սահեց ու անցաւ, Լծա գեց ապրիլ 7-ը:

Առաւօտ էր. մի քանի հայ կանայք Շուշանց գիւղէց Այգեստան էին իջնում. երբ նրանք հասան Ուրբաթ-առու կոչւած տեղին, զինւորական այն պահակներից մէկը, որոնք կրեք օրից ի վեր շրջում էին դէպի Վարազ ձգւող դաշտում, յարձակում գործեցին կանանց վրա: Աւօյի-գարի երկու դիրքապահ տղաներ՝ Քղիս Նախշունեանը և Յակոբ Դուրգեանը նկատելով այդ, շտապեցին դէպքի տեղը. բայց դեռ տեղ չը հասած երկուսն էլ զինուորական եղան:

Այս դէպքի առիթով գերմանական որբանոցի տնօրէն Հէրբֆէրին իտալական հիւպատոս Սպորթօնի միջոցով մի օր յետն հետեկաւ նամակն ուղղեց Ձէւզէթին:

Նորին վսեմութիւն Ձէւզէթ պէյ

Կուսակալ Վանայ վիլայէթին(*)

Շատ սիրելի բարեկամ.

Երբ անցեալ կիրակի ձեզի հետ խօսեցինք, յոյս ունէինք որ հայերու և կառավարութեան միջև զոյուծիւն ունեցող հրատարականքները պիտի կրնային կարգադրուել երկու կողմերուն համարն ալ ընդունելի եղանակով մը: Դժբաղդաբար մեր յոյսը չէր քականացաւ: Ընդհակառակը սկսան խնդիրները լուծուել ահաւոր եղանակով մը: Եւ զօրքերն եղան, որ սկսան զիմել այդ բանին: Երէկ առտւան կողմը ժամը 6-էն քիչ մը ետք, քանի մը կիներ, որոնք հետապնդւած էին Կուսուքաշի մէջ, Շուշանց գիւղէն վաղ իջան քաղաք ապաստան մը փնտռելու համար: Անոնք ստիպուեցան անցնիլ զինւորների դիմ մը, որ պահպանութիւն կընէր. երիտասարդ կին մը, խնկազարի նման, որ մեր որբերէն եղած էր, յարձակում կրեց զինւորներու կողմէ: Այդ կիներ, որու էրիկը պատերազմի սկզբէն ի վեր իբրև զինւոր կանչւած էր, կազատեցինք զինքը՝ թողով իր կապոցը և էշը: Զինւորներ կսկսին հրատարականքները:

*) Ինչպէս այս, այնպէս էլ մի շարք գրութիւններ, որ տեղի ունեցած Ձէւզէթի և մի քանի մարդկանց մէջ, բերում ենք այստեղ վերցնելով վանք Արտաստանք թերթից:

պան կրակելի և յետոյ ուրիշներ կը շարունակեն:

Ասոնք բոլոր տեղի կուսնենային մեր շրջանակին գիտաց և մեր աչքերուն առջև: Ասոր վրա շատ կը ցաւինք: Անցեալ դէշեր վերէն սոսկալի կերպով կրակ բացին մեր շրջանակին դէմ: Մենք ենթարկուցինք մեծ վտանգի մը: Բարերազդեալքսր ոչինչ պատահեցաւ: Երէկ գնդակներ մտան մեր շրջանակը: Մեր ուսուցիչներէն մէկը գրեթէ սպանուելէ աղաւաւեց: Չեմ կրնար հաւատալ, որ ասիկա վճռական եղաւ:

Հէրս-Փէրի

Ահա Ուրբաթ-առւի մօտ կատարուած այս գէպքը կայծակի արագութեամբ տարածուեց Այդեստանի մի ծայրից միւսը և կըտին սկսեց:

[Սկսեց կռիւը, պայթեց վերջապէս շարաթիւների, ամլանեցին ան դարերի ընթացքում կուտակուած ցասումը) ահապէս ճնշեց, քաղաքը բաժանեց երկու թշնամի բանակների, մի կողմը կանգնեց տիրող կառավարութիւնը իր զինական կազմով ու մտականդ մահմեդական տարրերով, միւս կողմը կանգնեց դարեբով ճրշուած բայան—Հայ ժողովուրդը, և վառօդի հոտը բարձրացաւ:

Ուրբաթ-առւի մօտ կատարուած յարձակմանը և երկու արդաների սպանմանը պատասխանեց Աւօյի-դարը մի քանի կրակներով: Այս կրակներին առաջին արձագանքը տուեց Հալի-Բէքրէ զօրանոցը. դուրս թռան այդտեղից կազմ պատրաստ աւելի քան 300 զինւորներ ու միլիտաներ, բաժանուցին նրանք երկու մասի մի մասը շտապ առաջացաւ դէպի Կլոր-դարը՝ Արարուց թաղէ դէմ գործելու համար, միւս մասը առաջացաւ դէպի դաշտը հիւսիսային ուղղութեամբ գրաւելով այդտեղ գտնուող ջրաղացի տուն և առաջօրէն պատրաստուած փոսերը. այս տեսան կօթերգորդ շրջանի—Բաշօյի, Ատլէյի և Այիճ օղլու դիրքերի տղաները ու կրակ բացին, սրան հետեւեցին համազարկերը զօրանոցից ու դաշտի միջի փոսերից:

Նոյն ձևի շարժում բռնկեալէն տեղի ունեցաւ նաև Թոփ-բաղ-կալէի զօրանոցում. զօրքերը դուրս թափուելով առաջացան դէպի Յանկոյաների եկեղեցին և գերեզմանաքարերի մէջ դիրքեր

դրակցին. Շահբէնդէրեանի զիրքից կրակ բացւեց, նրան արձա-
զանք տւին համազարկերը զօրանոցից ու եկեղեցու շրջապատ-
ներէց:

Ուրբաթ առի առաջին պայթոցներէ հետ իրարանցում
տիրեց նաև հայ թաղերի մէջ գանուղ Համուղ աղայի զօրանո-
ցում. մի քանի զինուորներ զօրանոցի կտուրը բարձրացան և
քանիսն էլ դուրս թռան փողոց. ահա այս միջոցին մօտակայ
Չիչօեան, Շաղօեան ու Դօղօեան զիրքերէց հրացաններն ուղղ-
ւեցին զօրանոցի մօտքին, որտաը բարձրացաւ, զինուորները ներս
փախան քարը տալով մի քանի վիրաւորներ, և զօրանոցի չորս
կողմի լուսամուտներէց համազարկերը սկսեցին:

Որտաը լսեց նաև Սաչ-փողանի հրապարակում, հրացաննե-
րի ձայնի վրա այդտեղի հետադրատան լուսամուտից գլուխը
դուրս հանած պահապան օտտիկանը գնդապահար եղաւ:

Շուտով համազարկերը արձագանք գտան Կլոր-դարի շուր-
ջը, Արարուց թաղի երկալու թեամբ, Նօրշէն թաղի երկուստեք
զիրքերում և վերջապէս Սաչ փողանի հրապարակից Արարք
ձգւող Նալբանդ օղլու փողոցի ամբողջ ուղղութեամբ.

Այսպիսով կուի շրջապիծը իր ամբողջութեամբ սկսեց որո-
տալ. 79 զիրքեր մի քանի հարիւր կուռղներով մի կողմից, երեք
զօրանոցներ բազմաթիւ զինուորներով ու միլիտներով և մի քա-
նի տասնեակ զիրքեր հարիւրաւոր զինակիրներով միւս կողմից,
սկսեցին կրակ տեղալ աջ ու ձախ:

Սակայն այդ դեռ բոլորը չէր. շուտով սկսեց գործել նաև
թնդանօթը: Առաջին նշանը տւեց Հաջի-Բէքրի զօրանոցը, նրան
հետեց Թոփբաղ-կալէի զօրանոցը, ապա ձայնակցեց նրան Սա-
հակ բէշի փոսը, ուր գտնուում էր Համդէի ջրաղացը: Չորս թնդա-
նօթներ այդ երեք կէտերից սկսեցին որոտալ ու ռուժրեր տեղալ:

Ուրբաթ-առի դէպքից անցել էր ընդամենը երեք մամ.
չորս կողմից բացուում էին համազարկերը, զոտում որոտում էին
թնդանօթները: Այգեստանը ներկայացնում էր մի հրաշէկ օղակ
և այդ օղակի մէջ պայքարում էր զարաւոր ստրուկը,

Գատիւ այդ արթնցած ստրուկին՝

Կռին սկսեց, բոլոր շրջաններից ու բոլոր զիրքերից կը-
բակներ բացւեցին, անյայտ ելքի ու անորոշ վախճանի կռիւն:



Ռիբուպուրի խաչիկապուստանի թեմի գրեհաձի խոռոչը

էր այդ, որի ուրախանք կապարի պէս ծանրացել էր հայ ժողովրդի մտքը վրա մինչև նրա սկսուելը: Առաջին օրը փորձաքաղ պիտի հանդիսանար կուռղ կողմերի համար: Երկու երեք օր պիտի տևէր կռիւը, թերևս այնքան էլ չը տևէր, այսպէս մտածում էին հայերը, երկու երեք օր բաւական էր ըմբոստութիւնը պատժելու համար, այսպէս մտածում էր մանաւանդ Զէւդէտը, որը սահմանազլխից երեք շաբաթ առաջ Վրաստանին ուղղած հեռագրի մէջ սպառնական տօնով յայտնել էր:

— Եւտով կանոնաւոր ուժով այդ տեղ կը գամ և յոյս ունիմ, որ ամէն խնդրի վերջ պիտի տամ:

Մակայն առաջին իսկ օրա կռիւը եկաւ ապացուցելու, որ համբերութեան բաժակը պարպած և զէնքին փարած ժողովրդին ընկճելը այնքան էլ դիւրին գործ չէ. մէկ, երկու, և ահա հոգեպնդեց տառանուող սիրտը, վարժեց անփորձ ձեռքը և խանդավառ ոգևորութեամբ յայտարարեց առաջին յաջող տկաւերը, որոնք եկան աննկուն դարձնելու զոյսութեան կուր մէջ նետւած ժողովրդի հաւատը:

Եւ մինչդեռ կուռղը մի հրացան կամ ատրճանակ ձեռքին մի փոքրիկ ծակի առաջ մեխւած՝ թշնամու շարժումներն էր դիտում «Աշխատանք» թերթի փոքրիկ մամուլը արագ կերպով ապագորում և դուրս էր տալիս հետեւեալ ազգը:

Ա. ՅԱՂԹՈՒԹԻՒՆ(*)

7 ապրիլի 1915 թ. առաւօտ.

Միզայէն քաղաք եկող կիներու վրա թուրք զինուորներու կողմէ կրակ բացւած է: Մերոնք պատասխանած են: 3 զօրք ըսպանւած և 2 ջորի գրաււած են: Մէկ թուրք Յաշ-փողոց և 1 թուրք Ուրբաթ-առուն սպանւած են: Մեզմէ կորուստ չը կայ:

Այս ազգը, ուր զիտաւորեալ կերպով չէր յիշուած Ուրբաթառուի մօտ կատարւած երկու տղաների սպանութեան դէպքը՝ վայրկեանապէս ուղարկեցին բոլոր զիրքերը, տարածեցին ժողովրդի մէջ և առաջ բերին մեծ ոգևորութիւն: Հոգ չէր, որ այդ դի մէջ յիշուած դէպքերը փոքր էին, անհատական, նրանք խանդավառութիւն առաջ բերին, որովհետև յաջողութեան առաջին զէպքերն էին, որոնցով սկսուում էր մեծ կռիւը:

*) Այս ազգերը նոյնպէս բերում են «Աշխատանք» թերթից:

Սակայն դէպքերը գնալով ծաւալեցին, յարձակումներն ու
քիմադրութիւնները լայն չափեր ստացան, տեղեկատու բիւ-
րօին հասան յաղթութեան նորանոր փաստերի լուրերը, և կէս
օրին լոյս տեսաւ երկրորդ ազդը:

№ 2.

1. Այիծ-օղլու փողոցին մէջ երեք թուրք սպանեցինք:
 2. Թովմասեան դիրքէն զարկինք երկու թուրք:
 3. Արարք, Տէր-Ներսէսեանի տան առջև զինւած մը ըս-
պանւած է:
 4. Արարքի մէրքէզի առջև միլլի մը սպանեցինք:
 5. Համուդ աղայի զշլան պաշարւած է մեր կողմէ, զշայի
զօրքերը ոչ հաց ունին, ոչ ջուր: Այդ շրջանի մէջ չէրքէզ մը
սպանւած է: Հրացան մը և ձի մը դրաււած են:
 6. Սաչ-փողոցի հեռագրատունը իր ամբողջ գոյքով և մէկ
հրացանով գրաււած է: Հեռագրաթելեր և թելեֆօնի թելերը
կտրւած են:
 7. Գիրմանական շէնքի կուլին մէջ մեզմէ մէկը սպանւած
է: մէկը վիրաւոր:
- Սնայեցէք ձեր փամփուշտները:

(Այս ազդը աւելի ևս ոգևորութիւն ու խանդավառութիւն
առաջ բերեց. Սաչ-փողանի տաճիկների դիրքը—հեռագրատունը
գրաււած էր տղաների կողմից. բացի այդ, տղաները պաշարե-
լին Համուդ աղայի զօրանոցը, այն զօրանոցը, որը, թառած
Այդեհաստանի սրտի մէջ, ամենից շատ հոգս էր պատճառում հա-
յերին:)

Այս խանդավառ ուրախութիւնների հետ երիտասարդների
ուղեկցութեամբ փողոցները դուրս եկաւ Վարժապետանոցի երա-
ժշտական խումբը—Փանֆարը, զբօշակներով ու երգերով և ոգև-
որութիւնը կատարչալ եղաւ:

Ուշազբաւն այն է, որ որքան որգևորութիւնը հայերի մէջ
բնօրէն էր ստանում, այնքան լքումը տաճիկ զիրքերում կատա-
րեալ էր դառնում: Առանձնապէս տաճիկների ու զօրքերի վրա
ազդում էր Փանֆարի նւագն ու ներկայութիւնը:

Այսօրինակ խանդավառ ոգևորութեան մէջ երեկոյեան դէմ
տես տեսաւ հեռակալ նոր ազդը:

№ 3.

Թուրք ժողովուրդը չի մասնակցիր կոիւնիստներու:

1. Մահակ պէյի զիրքին վրա պայթուցիկ թնդանօթի գնդակներէն մէկը միայն յաջողած է ձեռքով շինուած պատանէշը փլցնելը եփողի առաջացնել: Մեր նոր ուժերու հասնելով, թշնամին հոն սկսաւ դադրեցնել կրակը իրմէ 4 կորուստներ տալով:

2. Սաչ-փողոցի կուռ թուրքերը իրենց դիրքերը վառելով հեռացան:

3. Ալօջի դիրքին մէջ սպանեցինք 1 թուրք:

4. Սէօսերու գարոցի թրքական դրօշը վար առինք:

5. Այիճ-օղու դիրքին վրա յառաջացող միլիաները շատ կորուստներ տուած են Հաջի-բէքրի ղըլայէն արձակուող թնդանօթի գնդակներէն:

6. Համուդ աղայի զրան առջև թուրք մը սպանեցինք:

7. Փոս թաղի մէջ սպանեցինք 3 միլի:

8. Մեր ընկերները հաղարաւոր գնդակներուն կը պատասխանեն միայն մէկ գնդակով:

Այս ազդն էլ միւսների պէս կայծակի արագութեամբ ձեռքէ ձեռք անցաւ և նոր խանդավառութիւններ առաջ բերեց:

Եւ այսպէս, մի շարք յաջողութիւնների ծանուցումներով, զիրքապահ տղաների արամադրութեան բարձրագուծով և ժողովրդի խանդավառութիւններով, հանդերձ ֆանֆարի ողորդիչ նւագներով կուռի առաջին օրը, ապրիլի 7-ը, բոլորեց իր շրջանը և մութը արդէն պատել էր, երբ բոլոր զիրքերն ուղարկեցին զինուորական մարմնի հետեւալ ազդը:

Ընկերներ!


Թնդանօթի սուսերէն ցարդ վնասուած են միայն սնդէնները: Անդէնները ազահով տեղեր դրէք:

Արի եղէք, արդէն ամէն տեղ յաղթութիւնը մերն է:

Գիշերուան անունն է «ցորեն»:

Բարևներով Ձին. Մարմին

Այսպիսով կուռի առաջին իսկ օրը վերջացաւ մի շարք յաղթութիւններով, զէնքին փարոզ ժողովրդի հաւատք զէպի իր ուժերը ամրագնդեցը



Պիպուսի Ընդ Գրքանոց Գրքանոց Գրքանոց Գրքանոց

Գիշերւա անունը «ցորեն» է, ազգաբարեց զին. մարմինը և
գիշերն սկուեց:

Սակայն դա մի գիշեր էր, որի նմանը քիչ է լինում: Պայ-
թում էին հրացանները, որոտում էին համազարկերը, գոռում
էին թնդանօթները. կրակներ ու կրակներ, անհատնում կրակ-
ները տեղում էին թշնամու բուրբ գիրքերից, ամբողջ գիշերը
բայց նրանք այլևս այն աստիճան սարսափեցնող չէին:

Սահեց կուի առաջին գիշերը և բացեց կուի երկրորդ ա-
ռաւօտը:

Առաջին համբաւաբերը, որ լոյս տեսաւ այդ առաւօտի հեռ
միաժամանակ, տեղեկատու բիւրօյի հեակեալ ազդն էր:

T

Հայրենակիցներ,

Երեկ գիշերւան ամբողջ թնդանօթաձութիւնը և թշնամիի
կողմէ վատնւած հարիւր հազարաւոր գնդակները նպատակ ու-
նեցած են միմիայն վախցնել ժողովուրդը, մեր կողմէ ոչ մի կո-
րուստ կամ դիրքի լքում չկայ: Մերոնք չեն ուզեցած նոյնիսկ
պատասխանել: Ոչ մի խուճապի պէտք չը կայ:

L

Այս համբաւաբերը, որ հետաքրքրող ժողովրդին գիշերային
անցքերի վերաբերեալ հանգստացնող լուրն էր աւետում, երկ-
րորդ օրւա կախիւնների նշանաբանը հանդիսացաւ կուռղ տղաների
համար և սկսեց երկրորդ օրւա կրակը աւելի յամառ, աւելի
տեւական, քան առաջին օրն էր:

Այդ օրը թշնամին թնդանօթային կրակ տեղաց առանձնա-
պէս Արարքի դիրքերի վրա՝ կուր-դարից և Վզվզի դիրքի վրա
Փէռերի դպրոցի մէջ զետեղած թնդանօթից: Թնդանօթային կը-
բակը շարունակեց նաև Հաջի-բէքերի զօրանոցից եօթերորդ
շրջանի դիրքերի վրա:

T

Թնդանօթները որոտում էին մէկ այս և մէկ այն տեղից,
նրանք շարունակ շարժման մէջ էին դիրքից դիրք և շրջանից
շրջան: Տեղում էին անընդհատ սոււմբեր, քանդում էին յաճախ
պատերն ու պատնէշները, բայց դիրքեր զբաւել և ներս խուճել
որնէ տեղից անկարող եղան: Միակ դիրքը, որ այդ օրը անցաւ
թշնամու ձեռքը, Շահրէնդէրեանի դիրքն էր Յանկոյանների եկե-
ղեցուն նայող, որտեղից շարունակ հարւածում էին թովրադ

L

կալէի զօրանոցի զօրքերը և այդ զօրանոցի թնդանօթը: Բացի այս, նրա գրութիւնը ծանր էր նաև յետևի կողմից: Համուգ ազայի զօրանոցի վինւորները թոփրադ-կալէի զօրանոցի հետ կապ հաստատելու նպատակով, ծակեցին զօրանոցի յետի պատը, մտան զօրանոցին մօտիկ թանգօտանի տունը և ապա հարուստին տների և պարտէզների միջով առաջացան դէպի Շահրէնդէրեանի դիրքը. դիրքապահ տղաները նեղն ընկան և որպէսզի չը մնային թշնամու օղակի մէջ, ձգեցին դիրքը և կատաղի կրուով քաշեցին նախ Շէկօտանի և ապա Դօղօտանի տունը և տաճիկ վինւորները գրաւեցին Շահրէնդէրեանի դիրքը: Այս շրջանում գրութիւնը լուրջ կերպարանք ստացաւ: Եւ մինչդեռ Շահրէնդէրեանի դիրքի շուրջը այս գործողութիւններն էին տեղի ունենում, աջ ու ձախ սուլող դնդակները տակ փոքրիկ տղաները ցրել սկսեցին տեղեկատու բերօյի հետնեալ ազգերը, որոնք յաջորդաբար լոյս տեսան մինչև երեկոյ:

№ 4

8 ապրիլ

1. Շիրօտնց դիրքէն սպանեցինք 2 թուրք թնդանօթաձիգներ:

2. Համուգ ազայի զօրանոցի տանիքը սպանեցինք 1 միւլի:

3. Լօլօտնց թուրք դիրքը այրեցինք:

4. Շահրէնդէրեանի ու Դօղօտնց միացեալ դիրքի կուռնբուն մէջ սպանեցինք 8 թուրք զօրք և երկու թնդանօթաձիգ:

5. Նալբանդեան դիրքին առջև սպանեցինք միւլի մը:

6. Համուգ ազայի զաւայի դիրքերէն թնդանօթաձիգ մը սպանեցինք:

7. Արարուց դիրքերէն սպանեցինք 2 զօրք:

8. Կուրի ամենատաք միջոցին մի քանի ընկերներու կողմէ ցոյց տաժ քաջարի ընթացքին համար զին. մարմինը «պատուոյ խաչ» նւիրեց անոնց:

Արիացէք, յաղթանակը մերը պիտի ըլլաւ:

Խնայեցէք ձեր փամփուշտները:

№ 5.

8 ապրիլ

1. Տէր-Յակոբեանի դիրքէն երկու թուրք սպանեցինք, մէկը մուս, միւսը միւլի:

2. Հաջի Բէքրի զաւայի մօտիկ Սօլախեան դիրքէն սպանեցինք մէկ քիւրդ և ռազմամթերք բեռնաժ Երկու եզներ, ու վի-

շատրեցինք քիւրզ մը:

3. Քաղաքեան հրէքէն սպանեցինք թնդանօթածիզ մը:

4. Փեռերու դպրոցի դիրքերու առջեւէն ջորիով փախչող թուրք մը սպանեցինք:

5. Սաշփողոցի դիրքերու առջեւէն ջորիով փախչող թուրք մը սպանեցինք:

6. Վզվզի դիրքէն՝ փեռերու շրջանակին մէջ հաստատուած թնդանօթի թնգանօթածիզներէն 2-ը սպանեցինք:

7. Թուրքերու կողմէն արձակուած զնդակներէն անգուշուած թեան հեռահանքով ազայ մը, կին մը և մէկ քանի անձեր վիրաւորուած են:

Միշտ արթուն և միշտ պատրաստ:

№ 6.

8 ապրիլ, գիշեր

Սնայեցէք ձեր փամփուշտները:

1. Շիրոսեան դիրքէն սպանեցինք 6 միլլի:

2. Քաղաքէ հրէքի դիրքերէն սպանեցինք 8 զօրք:

3. Արարուց մէկ դիրքին վրայ նետուած 10—15 սումրներէ վրիպած են: Հոն սպանեցինք 1 միլլի:

4. Նալբանդեան դիրքէն սպանեցինք 3 թուրք զինուորներ:

5. Իրիկեան ժամը ձիշա 7 կէսին (Լ. թ. կէսին) *) թուրքերը յուսահատ յարձակողականի ձեռնարկեցին Սահակ բէյի դիրքերէն մինչև Սաշ փողոցի դիրքերուն վրա, կամենալով հսկուածեր տեղաւորել անդլիսական հիւպատոսարանը: Մեր զնդակներէն սպանեցինք 6 զինուոր. իրիկեան ժամը 9-ին (2-ին) նոյն շէնքը այրւեցաւ: Շէնքին մէջ սպանուած կամ այրուածներուն թիւը տակաւին ճշուած չէ:

†

Եւսպիսով երկրորդ օրու կտիւր վերջացաւ Սահակ բէյի և նրա շարունակութեան վրա գտնւող դիրքերի դէմ կատարուած տաճիկների անյաջող յուսահատական յարձակումներով և անդլիսական հիւպատոսարանի հրդեհումով:

Անգլիսական հիւպատոսարանը, որը, ինչպէս տեսնուեց, զբաղնուում էր հոյերի պաշտպանողական գծից ներս, իր մէջ կղած

*) Ժամերը բերած են ըստ թուրքականի, մեր վեր կեր ամուս ըստ կրտսականի և թուրքականը դուստ ենք փակագծի մէջ:

30-ի չափ ժանդարմներով մի սպասանալիք էր երկրորդ շրջանի համար: Ուստի առաջին իսկ օրից փորձեցին հրգեհնել այդ շէնքը, փորձը յաջողեց երկրորդ օրւա երեկոյցնանչ մութը պատել էր, երբ հրգեհնածիղջները մօտեցան ասն մութքին և դուռը հրգեհնեցին, շուտով շէնքը բոցավառեց և զինւորները մի քանի դիակներ թողնելով հրգեհնի մէջ կարողացան փախչել: Անգլիական հիւպատոսարանը ընկաւ, նրա անկումը եկաւ հաւասարակշռելու սրամագրութիւնը, որ ստեղծել էր Շահբէնդէբեանի դիրքի անկումով:

Անգլիական հիւպատոսարանի անկումից դատայդ օրը տեղի էին ունեցել մի շարք հերոսական գործողութիւններ, որոնք հետևանք էին կաւի առաջին օրւա յաջողութիւնների ու բուռն սղակորութիւնների: Ահա այդ հերոսական գործողութիւնները Զին. մարմինը որոշեց խրատուել և սահմանեց առաջին քաջութեան շքանշանը: Դա արծաթեա փոքրիկ խաչ էր «Հայ Յեղ.» մականորութեամբ: Այս խաչը կոչեց «պատուոյ խաչ», նա յանդիսացաւ կաւի փառաւոր ելքի սիմբոլը և շուտով Այդեասանի քաջերի կարծրերը զարդարեցին այդ խաչերով:)

Մահայն երկրորդ օրւա կախը Զին. մարմնի առաջ գրեց շուրջ խնդիրներ, որոնք պիտի լուծուին ստանային:

Կախը շուտ չէր վերջանալու, նա տեսելու էր շարաթներ. այդ ցոյց աւին երկու օրուա դէպքերը և մի վայրկեան Զին. մարմնի առաջ ցցեց ապգամթերք Հայթայթիլու հոգսը: Ահա այս հոգսն է, որը 4 և 6-րդ ազդերի մէջ Զին. մարմնին հարկադրուեմ էր զիմել կուռղ խմբերին հետևեալ կոչով.

« — Խնայեցէք ձեր փամփուշաները: »

Ոչ պակաս կարևորութիւն ներկայացնում էր նաև երկրորդ խնդիրը:

Թշնամին գործում էր թնդանօթներով, անհաշիւ ոււմբեր պայթում էին այս ու այն դիրքերի վրա և աւերումներ գործում, ուստի անհրաժեշտ էր նախ նորոգել աւերւածները ու նոր պատնէշներ կառուցել և երկրորդ փոքիլ խրամատներ այն դիրքերի մէջ, որոնք ենթակա էին թշնամու ուժեղ կրակին) և ահա կազմեցին որմնադիրներին, հիւսնների և բանւորներին. այսպէս կոչուեմ ժամրաշէն — ամալիսաների» խմբերը, որոնք ահագին դերուանցան Այգստանի կոխներին մէջ:

Ընտրուեց մի յանձնախումբ, որի անդամներն էին.

1. Շաւարշ Հովիւեան
2. Ազատ Խորէնեան
3. Յարութիւն Կաքաւեան

Ինքնաբերաբար մէջ եկան հիւան Գրիգոր Պանիրեանը իբր մի ընկերով, ու աշխատանքն սկսեցցո՞ւտ տոկուն, յարատե ու վտանգաւոր մի աշխատանք էր, որը հնարաւոր էր միմիայն. բայց առիկ վայրկեաններին՝ Իիւրքից դիրք և անից տուն, յաճախ բաց փողոցները կտրող ու անցնող մարդկանց կողմից, կառուցեցին խրամատներ, որոնք մինչև այսօր էլ զարմանք են պատճառում այցելուին: Այդ խրամատների միջով ազատ սկսեցին երթևեկել կուռղիները, առգմամթերք ու պաշար հայթայթողները ու փոքրիկ սուրհանգակները: Գիշերները ճրագի ազօտ լոյսի տակ վերաշինում էին Քաւաճ գիւղքերը, յետի կողմից կառուցում էին կրկնապարիսպներ, յաճախ ծածկում էին երկու շտաբ պատնէշները ամուր փայտերով, կուռղ տղաներին ընկնող սոււրբերից ազատ պահելու համար. և այս բոլորը կատարւում էին այնպիսի արագութեամբ ու ճշտապահութեամբ, որ նախորդ օրւա աւերածները յաջորդ առաւօտ ներկայանում էին նախկին դրութեան մէջ:

Թէ ինչպէս էին այդ բոլորը նորոգում ու շինում, այդ տրդէն փրկութեան միջոցներ ստեղծագործող մարդու գործն է, որը թշնամուն պատճառում էր և զարմանք և յուսահատութիւն:

Ամրաշէն ամալիաների գործնէութեանը պիտի վերագրեն Համուդ աղայի զօրանոցի հրդեհումը, որի վրա արժէ մի փոքր երկար կանգ առնել:

Համուդ աղայի զօրանոցը, ինչպէս տեսանք, խիստ անհաստութիւն էր պատճառում հայերին: Հայկական թաղերի կենդրոնում բազմած, սուլթան Համիդի, ապա նրա յաջորդող երիտասարդ թուրքերի այդ գոռող դղեակը իր աւելի քան 120 զինւորներով սարսափի տակ էր պահում Միթագա-քեահրէդ, Չաուուշ-բաշին, Աղւանեան թաղամասերը, ինչպէս և Շան-թաղն ու Խէրանի-թաղը: Սարսափն աւելի ուժեղացաւ Շահրէնդէրեանի դիրքն ընկնելուց և Համուդ աղայի ու թոփրադ-կալէյի զօրանոցների մէջ կապ հաստատելուց յետոյ, մանաւանդ, երբ զօրքերը զօրանոցի յետի անցքը բացելուց յետոյ, ձեռնարկեցին զօրանոցին:

մօտիկ գտնւող հայերի տները հրդեհել: Այսպէս, օրինակ, զինւորները մտան Շաղօեանի տունը և հրդեհեցին շէնքը, ապա ուղեցին այդտեղից անցնել պատըկից Գործունեանի տունը, բայց այդտեղ եղող տղաները իմացան և մի բուժքննակն Շաղօեանի այրւած տան մէջ, ուր այդ միջոցին զինւորները գրաւած էին կից պատը ծակելով. բուժքը պայթեց մի սոսկալի որոտով և զինւորները փախան:

Սակայն զօրանոցը իրեն մի սպառնացող ուրւական դեպքով զուգուէն էր, որը պիտի մէջտեղից վերանար, մի հարց, որով ամենից շատ գրաւած էր Ձին. մարմինը:

Ահա այդ խնդիրը լուծելու յանձն առաւ Ձին. մարմնի մէկ անդամը— Բօլզարացի Գրիգորը:

Պատմում են, որ նա երեք օր շարունակ հանգիստ չունէր, դիմում էր սրան նրան, վազ էր տալիս այս ու այն կողմը, կազմում էր ծրագրեր, դժուար էր մակարդակներ՝ զօրանոց պայթեցնելու համար և նա գլուխ բերեց իր յղացած միտքը:

Պէտք էր բաց անել գետնափոր մի անցք, հասնել զօրանոցի հիմքին, դնել նրա տակ դինամիտ և պայթեցնել շէնքը. բայց ձր տեղից, ձր կողմից, որ կարելի լինէր հեշտութեամբ ու կարճ ժամանակում իրագործել այդ: Եւ ահա միտքը յղացող ու յամառ ձեռնարկող Բօլզարացի Գրիգորին օգնութեան են հասնում ամբաշէն—ամալեանների մի խմբակ—քանքան կոչւած արհեստաւորները:

Վանք, մասնաւորապէս Այգեստանը յայտնի է իր ջրերի առատութեամբ. իւրաքանչիւր թաղ, նոյնիսկ թաղամաս ունի իր ջրանցքը կամ բեհերէկները: Ջրանցքները տարւած են փողոցների տակով: Այդ ջրանցքները շինուած են արհեստաւորների մի դաս, որոնք կոչուում են քանքաններ, այդ պատճառով էլ Այգեստանի ջրանցքներին, աւելի ճիշտ ստորերկրեա անցքերին ոչ ոք այնպէս ծանօթ չէ, ինչպէս յիշեալ քանքանները:

Ահա այդ քանքանները Բօլզարացի Գրիգորին յայտնեցին, որ նախքան զօրանոցի կառուցումը, այդ տեղով անցնում էր Այգեստանի ջրանցքներից մէկը. երբ ձեռնարկեցին զօրանոցի կառուցումը, հիմքերը փորելիս ջրանցքի ճանապարհը փոխեցին և զօրանոցի տակի փոսերը լցրին: Այնպէս որ, նախկին ջրանցքի ճանապարհով հեշտութեամբ կարելի էր մօտենալ

գորանոցի հիմքին:

Եւ փորձառու մի քանի քանքաններ զգորանոցի հրապարակի վրա գտնուող ձորէնեանի տան պարտէլից գետանցք բացելով դէպի հրապարակը, միացրին նախկին ջրանցքին և այդ անցքի միջով Բօլզարացի Գրիգորին առաջնորդեցին դէպի գորանոցի հիւսիս-արեւմտեան հիմքը:

Ահա այս աշխատանքը բոլորովին աննկատելի և հոանդուն կերպով առաջ էր սարւում, երբ բացւեց կուէի երրորդ, այսինքն ապրիլ 9-ի առաւօտը և նախկին երկու օրերի թափով ըսկսեցին պայթոցներն ու սրտոնները երկու կողմից էլ:

Սովորական կարգով այդ օրն էլ մէկը միւսի յետևից լոյս ահսան հետևեալ երկու ազդերը:

№ 6.

Ապրիլ 9 եջ.

Ընկերներ,

Գործերու աւելի արագ և ճշգրիտ կատարման համար մեզ ուղարկած նամակներուց մէջ նկատի առէք հետևեալ կէտերը.—

1. Պահանջները գրեցէք կարճ, օրոշ և մաքուր գրով:

2. Աշխատեցէք բոլոր դէպքերը ստուգել և կարելի եղածին չափ շուտ մեզ տեղեկացնել, խմբապետի ստորագրութեամբ. նըշանակեցէք տեղը և ժամը. բերանացի լուրերուն կարևորութիւն չի տրւիր: Սխալ լուրերուն համար խմբապետները պատասխանատու կը մնան:

Ղրկեցէք ձեր զիրքերու մէջ մնացած բաները ու փէտատները:

Զուր տեղ փամփուշտ մի վառէք, ձեր արձակած իւրաքանչիւր գնդակը պէտք է նպատակին հասնի: Սխալ յանդիմանութեան և պատիժի պիտի ենթարկուին անոնք, որ զուր փամփուշտ կը մսխեն: Մեղի ղրկեցէք ամեն տեսակ կովաներ:

Օղիի և դինիի չափազանց գործածութիւնը խստիւ արգիււած է:

Թշնամիներուն՝ կրօնք հայնոյելու չէք բնաւ:

№ 7

9 ապրիլի

1. Արարուց շրջանի մէջ գրւած ենք թուրքերու զիրք եղող տէէրցի Սարգսի քովի տունը, ձեռք անցուցած ենք բաւականաչափ փամփուշտ:

2. Մաքսապետեանենց տունէն թուրքերու փախած ասին-
գրաւած ենք 300-է աւելի փամփուշտ:

Համուդ աղայի զշլայի հակ սպանեցինք 2 հրձիգներ (եան-
կունճի):

4. Թօփրաք-զալէի կողմերը մեր տղոց խաբելու նպատա-
կով թուրք փոլիսի մը կողմէ դուած փափախը Հմայեակ անու-
նով 12 տարեկան հայ պատանիի մը կողմէ խլած ու անվտանգ
կերպով հասած է մեր դիրքերը:

5. Նալբանդեան դիրքէն վերաւորած են թուրք ժանգարմ մը:

6. Չաչալ միրզի դիրքէն չէթա մը զարկինք:

6. Փիրումեանի դիրքէն սպանեցինք միւլի մը:

8. Հաջի պէքիրի զշլայի կողմը միւլի մը սպանւած է
է թուրքերու գնդակէն:

9. Առուան ժամը 8-ին (1-ին) 30 թուրքերէ բաղկացած
խուժան մը յառաջացաւ գէպի Յանկոյսների վերի զշլան՝ մեր
դիրքերուն վրա զարու համար, բայց հտ մղեցինք սպանելով 1
թուրք:

10. Երէկայ և այսօրայ կռիւներու ընթացքին, Սահակ
պէյի մեր դիրքէն սպանեցինք 3 թուրք:

Զին. Մարմին

Եւ մինչդեռ կռիւը զրսում շարունակուում էր և տեղեկատու
բիւրօն յապճեկով իւրաքանչիւր յաջող մի գէպք ազդերի միջո-
ցով ժողովրդին էր հաղորդում, բօլգարացի Գրիգորը կատարում
իր իր ստորերկրեա աշխատանքը: Նա զօրանոցի հիմքի տակ
խնամքով տեղաւորում էր պայթուցիկ մեքենան, չափում ու ձե-
ւում էր պատրոյգի երկարութիւնը, և երբ ամէն բան պատրաստ
էր, նա նայեց ժամացոյցին, ուղիղ ժամի 4.5ն էր, պատրոյգը
վառեց ու արագ հեռացաւ:

Տաս բոպէից յետոյ տեղի ունեցաւ մի խուլ որոտ, զօրա-
նոցի մէջ ցնցում առաջացաւ, այնտեղ գտնուող զինւորները ի-
րարանցման մէջ ընկան, մինչև անգամ նրանցից մի քանիսը զօ-
րանոցի տանիքը թռան, իմանալու համար այդ ինչ որոտ ու
ցնցում էր. սակայն զօրանոցը մնաց կանգուն և մեքենան չու-
նեցաւ այն հետեանքը, ինչ որ սպասուում էր:

Արդեօք պայթուցիկ մեքենան էր թոյլ, թէ՛ աւերումներ-

գործելուն, խանդարեց ինքը՝ նախկին ջրանցքի անցքը՝ նրբ ու-
 նէր բացւածքներ՝ յայտնի չեղաւ, փաստը այն էր, որ նա հե-
 տեանք չը տօնց, և նրա յղացողը զայրոյթի շիշտով ձեւը թա-
 փահարեց ու անցաւ:

Բայց նա յուսահատուողներէն չէր. քաշեց ասն ամբերը
 մի փոքր կենդրոնացնելու և մի նոր միջոց յգննելու համար: Եւ
 մինչդեռ նա, թերեւ ամբողջ գիշերը արթուն, յղանում էր նոր
 ծրագիր, կէս գիշերից բաւականին անց, ժամի 3-ին, Այգեստա-
 նը մէկէն լուսաւորեց մի մեծ հրդեհի բոցով. շատերը դուրս
 թափուեցին տներից ու դիրքերից և հիացմունքով ակննատես ե-
 դան, թէ ինչպէս Համուդ աղայի զօրանոցը ճարձատում էր բո-
 ցերի մէջ:

Բոլգարացի Գրիգորի ջանքերը պսակեցին յաջողութեամբ.
 պայթող մեքենան չը կարողացաւ աւերել շէնքը, սակայն հրդեհ
 առաջացրեց յատակի տոխտակամաների շերտերում, և այդ
 հրդեհը աննկատելի ծաւալելով բռնկեց շէնքը. զօրանոցի մէջ
 եղող զինուորները, օգուելով գիշերային խաւարից, վտանգը նկա-
 տելուն պէս փախան դէպի Թոփրադ-կալէն, թողնելով զօրանո-
 ցում մէկ հարիւրասպիտի և 5 զինուորի զիակներ. և բռնակալ
 կառավարութեան զգեակը ընկաւ:

Թէ որքան մեծ էր այդ զօրանոցի բռնկման հմայքը, այդ
 երևում է այն տողերից, որոնք հիւսուում էին այդ խորհրդաւոր
 ժամին մէկ ականատեսի զգացմունքներով:

Ահա այդ տողերը համառօտած(*):

Ապրիլ 9, հինգշաբթի գիշեր

Անհամբեր դարձեր էինք այլևս:

Գործին ուշացումը քիչ մը յուսահատութիւն կը բերէր մե-
 զի, թէպէտև յուսահատութիւնը հեռու վաներ էինք մինչև այն
 գերազանցօրէն երջանիկ բոպէին, երբ հրահանգ ստացանք գիր-
 քերը պահելու, ու երբ մանաւանդ պայթեց առաջին գնդակը
 Ուրբաթ-առուի մեր գիրքերէն՝ թուրքերը խուճապի մատնելով:
 Մեր ուշքն ու միտքը ամբողջովին դրաււած էր Ռուսուզցիին
 ձեռնարկով: Անդուզական Իշխանի ու ընկերներու և մարանչոդ
 Վոսմեանի անմոռանալի կորուստներէն ետք Սրամն ու սուս-
 ճուզցին էին շաղկապ հսկայական գործին: Արամը իր ներկա-

*) Տես «Աշխատանք» № 17:

չութեամբ ու հրահանգներովը, սուսնուզցին իր գործովը: Ինչպէս
քան կը պաշտէինք վերջինիս գործը, երբ այժմ առաւելապէս
պէտք պիտի գար մեզի: Ապրիլ 7-էն սկսած Վանի, հերոսամար-
տին մէջ սուսնուզցիին զերը շատ մեծ կը գտնէինք: Զէ՞ որ հին,
նկուղային օրերու յեղափոխականը, որ շարունակ հասաստուն
հաւատքով մը կառնած էր գործին, անշուշտ լաւագոյն օր մը
պիտի օգտագործէր ասիկա ի նպաստ այն ժողովրդին, որուն
համար տառապել յանձն առած էր:

Սպասողական վիճակէն ետք լուր բերին, որ ստորերկրեա
գործողութիւնը, զօրանոց փճացնելու համար, տակաւին ելք մը
չունեցաւ. տեսնելու էիք մեր տանջանքը այդ բողոքին. գլխիկոր
ու արտում գիրքերնիս վերադարձանք:

Գիշեր է:

Մեր գիրքէն օգնական ուժեր հանեցինք մեր շրջակայքը
մասնաւոր հրահանգներու համաձայն. թշնամիին բուն հրացա-
նաձգութիւնը գաղթած է, անոր փոխարէն կը լսին ընդհատ
ընդհատ թնդանօթի բոմբիւնները, որոնք անարժէք դարձան մեր
գիրքերու ամբողջանց գիմաց: Մեր զրկած օգնական ուժերը
չը վերադարձան: Դիրքապահներս գիրքերուն գլուխը կեցած, կը
հսկէինք ուշի ուշով, մեր անհամբերութիւնը չափ չունէր: Ժամը
3 (8)ն է: Եւ անա գիրքի այգիի հիւսիսային կողմէն պայծառ ու
վառ բոսոր լուսաւորութիւն մը ցրւեց մեր թախիժը: Համուզ-
աղայի զօրանոցը, այդ տարիներու ոճրարոյնը, վերջապէս բոցի
ճիրաններուն մէջ պրկւած կայրի, կը մոխրանայ. գետնի տակ
թաղւած տինամիթի խմորը տեսաւ իր գործը:

Այգեստանը ցնծութեան մէջ է, ամեն գիրքերէն կը լսին
ուբախ հուռաներու և ազգային յեղափոխական երգերու թնդիւն-
ները: Ժամերով կախած կը գիտենք հրդեհուժը բռնութեան որ-
ջին, կը գիտենք ու կ'զմայինք:

— Համուզ աղայի զընան այրում է, կեցցէ Բօլգարացին:

Անա այս աւետումով բացւեց կռի չորրորդ առաւօտը և
մի փօքը անց լոյս տեսաւ տեղեկատու քիւրօի № 8 ազգը, ուր
ք միջի այլոց աււած էր:

— Երէկ իբրիկան դէմ ստորերկրեայ ճամբայով սուսնուզ Գե-
տեղեցաւ Համուզ աղայի զընայի տակ, որը իր փառաւոր ար-

գիւնքը աւաւ՝ գիշերւա ժամը 3-ին (8-ին) հրդեհելով ամբողջ
ղջիւն:

Այո, Համուզ աղայի գորանոցն ընկաւ, ընկան նաև գորա-
նոցին մօտիկ գտնուող տաճկական երեք տնները-դիրքերը: Բոցե-
րք հետ գորքերը դուրս թռան և բռնեցին փախուստի ճանա-
պարհը զէպի Յանկոյաների գետն ու թողարագ-կալէի գորանոցը:
Շահրէնդէրեանը չը կար, որ կանգնեցնէր նրանց փախուստը և
առնէր նրանց խաչաձև կրակի տակ: Տաճիկ զինուորների սարսա-
փը այնքան մեծ էր, որ նրանք թողեցին նոյնիսկ Շահրէնդէ-
րեանի դիրքը, մի բան, որը արժէր այստեղ յիշատակել:

Շահրէնդէրեանի դիրքը լուռ էր, այնտեղից կրակ չէր բաց-
ւում: անշուշտ այս մի թակարդ էր տաճիկների կողմից, մտա-
ծեցին մէկ օր առաջ ուժեղ կրակի տակ Շահրէնդէրեանը թողած
և Դոզոհանի դիրքը քաշած աղաները, և որոշեցին հետախու-
զութիւն կատարել. հետախուզողը նախ պիտի բարձրանար Շահ-
րէնդէրեանի պարտէզը բոլորող բարձր պատը, իջնէր պարտէզի
մէջ և ապա գաղտագողի մօտենար տանը. մի գործողութիւն, ո-
րը անշուշտ աննկատելի չը պիտի մնար երկու յարկանի տան
մէջ թառած որսորդներին: Ո՞վ պիտի լինէր այդ յանդուզն
քայլը յանձն առնողը. հազարից մէկը, և այդ մէկը գանւեց. դա
Շահրէնդէրեանի դիրքում աշխատող մէկ 19 տարեկան սրբորդ
էր, կարճահասակ, նւազ կաղմուածքով, պէպէնտ գէմքով, բայց
սև ու կրակոտ աչքերով—Իսկուհի Համբարձումեանը կամ քեան-
քան Սամբոյի աղջիկը Սևօն: Նա աղաների համար կերակուր էր
պատրաստում, վիրաւորների վէրքերն էր կապում, յաճախ տե-
ղացող գնդակների տակ տեղեկութիւններ էր հասցնում Զին.
մարմինն և փամփուշտ էր բերում աղաներին: Այս բոլորով հան-
դերձ կրում էր վրան մատուցելի ատրճանակ, որով աղատ ժա-
մանակ դիրք նստած կրակում էր թշնամու կողմը:

Ոչ օք հաւատացած չէր, որ տաճիկները թողել էին Շահ-
րէնդէրեանի դիրքը և որ հետախուզութիւն կատարողը կհնդանի
կը դառնա: Այսպէս համոզւած էր նաև Սևօն—վանեցի հայ աղ-
ջիկը, ուստի նա նախ իջեցրեց ուսից ատրճանակը և յանձնելով
աղաներին ասաց:

— Պահէք տասնոցս, եթէ ես դարնւիմ, զէթ ատրճանակս
ազատւած կը լինի, որը ձեզի հարկաւոր է:



ՍԵԻՕՆ

Իսկուսի Հատրարնումնան

Ասաց այս Սեօն ու անհետացաւ. և մինչդեռ տղաները սըր-
տաարով սպասում էին հետևանքին, քաջ Սեօն վերադարձաւ,
յայանելով որ դիրքը դատարկ է: Նա իջել, հետախուզել էր այ-
դին, ապա հրկու յարկանի տունը և հեռւից տեղացող գնդակ-
ների տակ վերադարձել էր, բերելով զգետտի վրա բացւած զըն-
դակի անցքը: Նրա կեանքը վրկուել էր հրաշքով: Շահբէնդէրեա-
նի դիրքը նորից զրաւեցին տղաները: Ետուն կեանքը սկսեց
նորից այգտեղ և Սեօն արժանացաւ պատու խաչի շքանշանին:
Բայց քանի քանի հերոս Սեօններ էր տուել Այգեստանը այգ-
ձանը օրերին:

Համուզ ազայի գործնոցն ընկաւ իր մօտի երեք զիրքերով, տղաները նորից գրաւեցին Շահբէնդէրեանի զիրքը, և այս ակտանքը կհան զէնքին փարած Այգիսաանի հայ ժողովրդի հաւատը զէպի իր ուժերը աւելի ևս ամրապնդելու:

Կուի հինգերորդ օրը նշանաւոր դարձաւ երկրորդ շրջանում գտնուող թշնամու մի ուժեղ զիրքի հրդեհուումով: Դա Համազայի զիրքն էր, ճիշտ Սահակ բէյի զիրքի գէմ ցցւած: Այս զիրքը, որ թշնամու գլխաւոր յենակէտն էր հանդիսանում, փորձեղաւ մի ստորերկրեա անցքով մօտենալ հիմքին և շէնքը զինամէթով պայթեցնել. ու սկսեց մի յախուռն աշխատանք. երեք օր շարունակ ստորերկրեա անցքը առաջ էր տարւում. կտրելով երկու զիրքերի մէջ գտնուող լայն փողոցը. սակայն երբ ստորերկրեա անցքը վերջապէս հասաւ թշնամու զիրքի տակ, գետնափորները զարմացմամբ նկատեցին, որ նոյն ձեռի աշխատանք ըսկսւած էր նաև թշնամու կողմից: Այս նկատելով, տղաները ընդհատեցին աշխատանքը և վճռեցին օրը ցերեկով նետուել փողոց, անցնել հակառակ շարքը և թշնամու զիրքը հրդեհել փողոցի վրա գտնուող դռնից, որը, ինչպէս փողոցներէ վրայի և բոլոր դռները, փակ էր լինում շարունակեալ այդպէս էլ արեցին:

Երկու քաջասիրտ տղաներ՝ Վաղարշակ Շիրվանեանը և Թոմաս Դրեգորեանը առաջինը դուրս թուան փողոց, նրանց հետեւեցին երկու այլ տղաներ և մի ակնթարթում անցան թշնամու զիրքին, պատրաստի նաւթոտ լաթերով վայրկենապէս հրդեհեցին տան դուռը և գնդակների վզվզոցների տակ վերադարձան իրենց տեղը: Այս գործողութեան ժամանակ Սահակ բէյի զիրքի լուսամուտներից տղաները անընդհատ գնդակներ էին տեղում Համզէի զիրքի լուսամուտներին և զբաղեցնելով թշնամուն նաչը կարողացաւ կանխատեսել հրդեհումը:

Մի փոքր անց հրդեհը, բռնեց տունը. թշնամին խոյս տուեց և զիրքը ընկաւ: Այս զիրքի անկումով երկրորդ շրջանը փոքրիկ յաղթանակի մի վայրկեան ապրեց, և այդ փոքրիկ յաղթանակը եկաւ ամբողջացնելու յաղթութիւնների այն շարքը, որ տեղի ունէին այս ու այն տեղ վերջին երեք օրերի ընթացքում:

Թէ կուի երրորդ, չորրորդ ու հինգերորդ օրերում Այգիսաանի հայութեան, առանձնապէս նրա կուռղ ուժերի մէջ ողորութեան հետ միասին հերոսական և խիզախ գործերի ձեռնար-

պոլիս
հայեր

ճշելու որպիսի տրամադրութիւն ստեղծւեց, այդ երեսմ է Զին-
ստրամի հայ ժողովրդին ուղղւած հետեւեալ կոչից:

Հայրենակիցներ,

Չորս օրէ ի վեր մեր մղած հերոսական պայքարին մէջ,
նամէրտ թշնամիի հաղարանոր թնդանօթներու, հարիւր հաղա-
քաւոր զնդակներու և բարբարոս խուժանի յուսահատ և անա-
տնամ սալաւաններու դիմաց՝ մենք կեցած ենք հպարտ ու ան-
ուստան:

Այնօրուէն մինչև Արարք, անկէ մինչև Սաշփողոց ու
Ֆինչև Համուզ աղայի բռնութեան դգեակը, մեր զինուորները
ճիցած են յանդուգն ու յաղթական.— Անոնք համարձակ կը հա-
ջին մահան աչքերուն, որ կը սաւառնի իրենց ու բուրխի սըլ-
խալները:

Այլևս անհաշուելի կը մնայ թշնամիին կորուստը ինկած մեր
հատ հատ զնդակներուն տակ: Այլևս որոշ կը դառնայ մանա-
ւանդ լքումն ու յուսահատութիւնը՝ անոր՝ երբ անիկա տեսաւ
իր դահձապետ Ջէդէտի ծրագիրը—24 ժաման մէջ սպանդ անո-
ցի վերածելու մեր հայրենիքը— լոկ ջնորք մշ եղաւ ու գտան-
ցանք:

Օրէ օր մեր զինուորները կը քալեն յաղթանակէ յաղթա-
նակ: Իրենց հոգիին մէջ կեռայ հայրենիքի պաշտպանութեան
աւսաւածային կրակը աւելի ու աւելի, և անոնք որոշած են մեռ-
նել անպայման, մեռնել քեզ համար, հայ ժողովուրդ, մեռնել քու
կեանքի, քու պաշտպանութեան ու քու վերջնական ազատու-
թեան համար:

Մեզ չեն սարսափեցնիր ոչ թշնամիի թւական առաւելու-
թիւնը, ոչ ալ այն գիտակցութիւնը, որ պիտի մեռնինք մենք
այսօր, կամ վաղը: Ոչ, մենք, կուզենք վայելել մահը իր ա-
ուսածային էութեան մէջ: Ոչ մենք կուզենք ցուցնել ազգերու
համաշխարհային այս գոյամարտին մէջ, որ Արեւելքի խորհրուն
մէջ դարաւոր կաղնին— հայ ժողովուրդը՝ գիտէ մեռնիլ զէնքը
ձեռքին՝ ըայց թշնամիի անհամար կորուստներու և զօրանայնե-
քու ճարճատող աւերակներուն վրա...:

Հայ ժողովուրդ:

Կախիւ զորս սկսած ենք, պիտի տանենք մինչև վերջ, մինչև
Վերջին և գառուձը, մեր արիւնին ու սակայն նաև մինչև վերջ-

նական պարտութիւնն ու անկումը մեր վայրագ թշնամիին:

Հայ ժողովուրդ,

Քաջ հիլը, մերն է յաթանակը ինչ ալ որ ըլլայ:

Մեր զինւորներու գիմադրական կորովը թող փոխանցւի նաև քու մէջդ:

Պայքարի նսկայական ծանրութիւնը մի թողուք մինակ մեր զինւորներուն վրա:

Ամենքը իրենց քաժինն ունին հաս, ձեր թէ մանուկ, կին թէ ազջիկ, հրիտասարդ զինւորներու հետ կողք կողքի թող կըռւին ու բաժնեն աշխատանքը իրենց մէջ:

Այս կոռւք մեր գոյութեան կոռւք չէ մինակ, այլ կոռւ մը ճշմարտութեան ու արդարութեան: Թող ամենքը կռւին ուրիմն արդարութեան համար.— թող ամենքը կարօտն ունենան յաղթանակի սալու ճշմարտութիւնը:

Ողևորեցէք ու արի հղէք, բայց տակալին փարեցէք լուս ու ստեղծագործ աշխատանքի, նոր նոր յաղթանակներ պատրաստելու համար:

Հիացումով գիտեցէք շարունակ մոխրացող կշիւներն ու թշնամիի անհաշիւ կորուստները:

Սքանչացումով մեր զինւորներու զիւցազնական զիմադրութիւնները տեսէք, և յոյսով ու աշխատանքով պատրաստեցէք զիմաւորելու գալիք օրերուն, անոնց ազգային նոր վերածնութեան մեծ տօնին:

Կեցցեն հայ զինւորները,

Կեցցէ հայ ժողովուրդը:

10 ապրիլ վան

Ազգային ինքնապաշտպան մարմին

Կորով, հաւատ և ողևորութիւն, ահա այն, ինչ որ ձեռք բերից հայ ժողովուրդը կռւի առաջին 4—5 օրերի ընթացքում:

Այսպէս էր զրութիւնը Այգեաստանի մէջ կռւի առաջին շրջանում, ապա ինչպէս էր զրութիւնը Քաղաքի մէջ:

Այդ իմանալու համար տյատիկ կընդհատենք մեր պատմութիւնը և առժամանակ կը տեղափոխենք Քաղաք:

ՀԵՐՈՍՍՄԱՐՏԸ ՔԱՂԱՔՈՒՄ

Ի՞նչ գեր է խողում Քաղաքը Վանի հայկական կեանքում: Ահա այն խնդիրը, որը կարևոր է նախ և առաջ լուսարանել:

Քաղաքն ինչպէս տեսանք, Վանի նախնական բնակավայրն էր. նա հիւսիսից պաշտպանւած էր Շամիրամի պատմական քերզով՝ ուղղահայեաց, գահավէժ ժայռերի մի երկար շղթայով, որի վրա մարդու կարող ձեռքը կերտել էր նոր ամրութիւններ, իսկ մնացեալ երեք կողմերից նա շրջապատւած էր երկարուկ ատամնաւոր պարիսպներով: Այժմ մեծ մասամբ աւերւած, բայց մի ժամանակա կայուն ու խրոխտ պարիսպների մէջ դառնում էր պատմական Վասպուրականի քաղաքական կեանքը, դառնում էին նաև անտեսական ու մատուր խնդիրները: Միաժամանակ այստեղ գտնուում էին հին հայկական եկեղեցիները, այստեղ էլ վառուցւեցին նոր տիրապետողների մի քանի նշանաւոր մըդկիթներ:

Այսպիսի ամուր ու հաստատուն պայմաններով շրջապատւած էին լինում առհասարակ երկրի հարստութիւնները իրենց մէջ ամփոփող կենդրոնները հին և միջին դարերում:

Նոր դարը կեանքի ու յարաբերութիւնների նոր պայմաններ ստեղծեց, կուլտուրան նւաճումներ գործեց, ատամնաւոր պարիսպները իրենց նշանակութիւնը կորցրին, աղաքնակութեան ունեւոր ու ազգեցիկ դասերը ձգեցին պարսպապատ ու խեղդող մթնոլորտը, պարիսպներից դուրս արւարձաններ հիմնեցին և նախկին շէն կենդրոնները աստիճանաբար ընկան ու քայքայւեցին:

Ահա միևնոյն վիճակին ենթարկւեց նաև Վասպուրականի մայրաքաղաքը, նա հետզհետէ զնկաւ, կորցրեց իր նախկին փառքը և նրա կողքին հիմնադրւեց բուսական Այդեատանը, որը զնալով ընդարձակեց ու ճոխացաւ:

ձիշտ է, շուկան մնաց Քաղաքում, Քաղաքի մէջ մնացի՞ն
նակ կառավարական հիմնարկութիւններն ու հաստատութիւննե-
րը, ինչպէս և հայոց առաջնորդարանը, բայց նա քաղաքականա-
պէս ընկաւ, որովհետեւ ազգաբնակչութեան խոշորագոյն մասը՝
այն էլ ունեւոր և կարող մասը հայ թէ մահմեդական, դուրս գնաց-
ն և Քաղաքում մնաց չնչին ու չքաւոր մասը: Եւ սրա հետեանքը
եղաւ այն, որ ինչպէս տեսանք, Վանի 41,000 ազգաբնակչութիւ-
նից վերջին տարիներում Քաղաքի մէջ մնացին ընդամենը 4000՝
հոգի, որից 3000 հայ, իսկ 1000-ը մահմեդական:

Այսպէս լինելով բնական է, որ Վանի հայկական կեանքում
Քաղաքը դադարէր դեր խաղալուց, և զազարից դեր խաղալ
մանաւանդ վերջին շրջանում:

Հայկական կեանք ստելով Տաճկաստանում հասկացել
է ազգային-յեղափոխական կեանք: Բռնակալ կարգերում
հայ ժողովրդի նկատմամբ այդ երկու տերմինները
սերտ կապւած են եղել միմիանց, որովհետեւ այն բոլոր
հարցերը, նոյնիսկ անմեղ հարցերը, որոնք ազգային
բնոյթ էին կրում, կառավարութեան կողմից հարձոււում էին:
Եւ հայ ժողովուրդը անկարող լինելով ապրել առանց ազգային
կեանքի, դիմում էր գաղտնի գործնէութեան և ընարում յեղա-
փոխական ճանապարհ: Իսկ նկուղային—յեղափոխական գործ-
նէութեան համար միակ յարմարաւոր վայր հանդիսանում էր
Այդեւստանը—միմիանց հետ ներքին հաղորդակցութիւն ունեցող
պարտէզներով ու այգիներով, հազար ու մի թագասոցներով,
պաշտպանութեան տեղերով օժտւած այդ ծառաստանը. մինչդեռ
կառավարութեան քթի տակ, Քաղաքի կուտակւած աների մէջ
նկուղային-յեղափոխական կեանքը միանգամայն անհնարին էր
դառնում: Այսպէս էր զրութիւնը հին ու ժիմի օրով:

Սահմանազրահան նոր կարգերում Քաղաքը աւելի ևս ա-
նուշադրութեան մատնեց, Առաջնորդարանը, նրա հետ միասին
նակ ազգային քաղաքական ժողովը, որոնք հին ընթացի օրով
ճանաչոււմ էին իբրև հայ ժողովրդի ներկայացուցիչ մարմիններ
և որոնց հետ վարում էր բանակցութիւններ կառավարութիւնը,
գտնւում էին Քաղաքում և այդտեղ էլ դառնում էին ազգային
խնդիրները: Սահմանազրահան կարգերում առաջնորդարանը,
ինչպէս և ազգային քաղաքական ժողովը յետ մղւեցին. Քաղ-
նակցութիւնը իբրև հայ իրականութեան մէջ գործող ուժից

կուսակցութիւն՝ լեզուիդացիայի ենթարկւեց, նոր կառավարութիւնը, որը ամբողջապէս անցել էր երիտասարդ թուրքերի ձեռքը, ճանաչելով այդ կուսակցութիւնը իրրեւ բերան, արտայայտիչ հայ ժողովրդի, այդ ժողովրդի վերարեւելի հարցերում բանակցութիւններ վարում էր յիշեալ կուսակցութեան հետ, իսկ այդ կուսակցութեան գործնէութեան կենդրոն հանդիսանում էր այն Այգեստանը, որը հին բէժմի օրով շատ ու շատ անգամ պատասպարել էր իր ծոցում մատնւած ու վտանգւած յեղափոխականներին:

Այսպիսով Քաղաքը Վանի հայ իրականութեան մէջ դեր չէր խաղում. այսպէս էլ ընդունում էր կառավարութիւնը և նրբան հանգիստ թողնում: Օրինակ, 1895-96 թւերի ջարդերի մամանակ, երբ Այգեստանը զաւառների հետ միասին հրի ու սրի սուպարէզ գարձաւ, աւերի ու սրածութեան ենթարկւեց, Քաղաքի հայ ազգաբնակչութիւնը ջարդերից ազատ մնաց: Ծիշտ է, շուկան հրդեհեց ու կողոպտեց, բայց հայ թաղերը ջարդի չենթարկւեցին:

Եւ Քաղաքը Վանի հայ իրականութեան անց ու դարձի մէջ դեր չունեցաւ մինչև կուլի պայթած վայրկեանը:

Գաւառներում ընդհարումներ էին տեղի ունենում, գրանց արձագանք էր տալիս Այգեստանը: Կառավարութեան հարկաւոր էր այս կամ այն դիմումն անել, դիմումը լինում էր Այգեստանից և եթէ հայոց առաջնորդի ներկայութիւնը անհրաժեշտ էր կամ ազգային քաղաքական ժողով պիտի գումարէր, առաջնորդը հրաւիրւում էր Այգեստան: Կառավարութիւնը բանակցութիւնների կարիք ունէր, նա նոյնպէս դիմում էր Այգեստան, ուր գտնւում էին դաշնակցական գործողները:

Ու այսպէս, մինչդեռ զէպքերը թաւալուում էին կայծակի արագութեամբ և Այգեստանում տեղի էին ունենում խոշոր անց ու դարձեր, Քաղաքը լուռ էր, բայց հէնց որ կոխը պայթեց, Այգեստանի հետ միաժամանակ Քաղաքն էլ շարժեց և շարժեց ինչպէս լաւան լիտան հանգած հրարուխի խառնարանից:

Բայց միթէ Քաղաքը բոլորովին անգործ էր մինչև այդ:

Ոչ, նա գործում էր և գործում էր լռիկ:

Դաշնակցութիւնը Քաղաքում ունէր գործող մի մարմին՝ զուտ տեղացիներից կազմւած. դա եթէ անգամից բազկացած մի

ենթակոմիտէ Էր՝ Այգեատանում գործող կենդրոնական կոմիտէին ենթարկեող: Այս մարմինը սերտ կապւած էր կենդրոնական մարմնի հետ, շարունակ յարարերութիւն էր պահում հետը, այնտեղից ստանում էր հրահանգներ, նրա խորհրդակցութեան զիմում էր շուտ շուտ. մի խօսքով այս մարմինը իր ներշնչումները ըստանում էր կենդրոնական մարմնից:

Այս մէկ:

Երկրորդ, ենթակոմիտէն կազմւած էր ուժեղ, կարող և անձնագոհ անձնատուութիւններից. դրա մէջ մասնակցութիւն ունէր հայ ուսուցիչը, հայ արհեստաւորը, հայ վաճառականը, նոյնիսկ հայ կալւածատէրը: Այն հանդամանքը, որ քաղաքական պայմանները հարւածում էին ամէնքին անխտիր, ուստի հնարաւոր էր դարձել ամեն տեսակ խմբակցութիւն՝ Շահերի գուգորգութիւնը, ցեղային հալածանքը յայտնագործել էր մէկ իդէալ, զա ցեղի պաշտպանութեան, ցեղի գոյութեան իդէալն էր: Եւ ահա այս մարմինը, որը հանդիսանում էր հայ ցեղի գոյութեան իդէալ դաւանող խմբակներից մէկը, զեկալարից Քաղաքի կուլաները, բոլոր խաւերի կուս ջջակցութեամբ տարաւ այդ կուլը պատուով մինչև իր վախճանը և յայտնագործեց հերոսական այնպիսի ակտեր, որոնց առաջ նւաստանում են նոյնիսկ Այգեատանի հերոսութիւնները

Ո՞վքեր էին այդ մարդիկ:

1. Լևոն Գալճեան—ուարտած Երամեան զպրոցը, իրխաւսարդ, զբաղմունքով առևտրական:

2. Մինրան Թորոմանեան—սովորած Երամեան զպրոցում, օճառի գործարանատէր:

3. Դաւիթ Սարգիսեան կամ Դաւօ—մճաւեան մի մարդ, զաղմունքով մանրավաճառ:

4. Հայկակ Կոսոյեան—ուարտած Գէորգեան ճեմարանի գասարանական բաժինը, տեսուչ Յիսուսեան—Շուշանեան վարժարանի:

Սա հանդիսանում էր կուլաները զեկալարող մարմնի տօնաւոզն ու ողին:

5. Մինրգաս Միրզախանեան—կալւածատէր, սովորած Երամեան զպրոցում:



1. Լեւոն Գալճեան
2. Միլեան Թորմանեան
3. Դաւիթ Մալոսեան
4. Հակոբ Կոստեան
5. Մինգաս Միլլախանեան
6. Յարութիւն Նիկողարեան
7. Սարգիս Շահնեան

6. Յարութիւն ներկարարեան կամ Յարօ—արհեստով պը-
ղնձագործ. բնական ընդունակութիւնների տէր և կուող ուժ:

7. Սարգիս Շահինեան— արհեստով վաճառական. աւար-
տել է երամեան դպրոց:

Այս մարմինը, որը կուի առաջին օրից կոչուեց Ձինուորա-
կան մարմին, ունեցաւ իր երկու անբաժան աջակիցները:

Դրանք էին՝

1. Աղթամարի վանահայր Դանիէլ վարդապետը, որը պա-
տահմամբ Քաղաք գալով՝ այլևս վերադառնալ չը կարողացաւ:

2. Իրաւարան Միրզախան Միրզախանեանը, Հնչակեան
կուսակցութեանը պատկանող:

Ձինուորական մարմնի գործունէութեան կենդրոնը որոշուեց
առաջնորդարանը, ուր լինում էր առաջնորդ եզնիկ վարդապետը:

Տեսանք. Քաղաքը վանի հայ ժողովրդի կեանքում կատար-
ւած անց ու դարձի և կասաւարութեան հետ ունեցած բանակ-
ցութիւնների մէջ դեր չունէր և չունեցաւ. այդպէս էին դասա-
ւորւած պայմանները. բայց նա, առանձնապէս նրա ղեկավար
մարմինը անգործ չէր, որքան այդ վերարեբում էր նրա ներքին
կեանքին, առանձնապէս նրա ինքնապաշտպանութեան գործին:

Համակրողական պատերազմը մի կատասարօֆա էր, որը
1914 թւի յուլիս ամսում պայթեց եւրոպայի սրտի մէջ, այդ
կատասարօֆան մոկեղին թափով ծաւալոււմ էր, նորանոր եր-
կիրներ ու ժողովուրդներ էր ոտի հանում և լափում նրանց: Այդ
կատասարօֆայից ազատ չը մնաց նաև Տաճկաստանը, այդ ա-
պիկար կառավարութիւնը. և կատասարօֆան հասցնեալ կերպով մօ-
տենում էր նաև հայ ժողովրդին, այն ժողովրդին, որը խաղաղ
ժամանակ էլ ազատ չէր փոքրիկ կատասարօֆաներից: Այս պարզ
տեսնում էր տաճկահայը, այս տեսնում էր նաև Քաղաքի հայ
ազգաբնակիցները:

Ու հոկտեմբեր ամսից սկսած, երբ կատասարօֆան ծաւալ-
ուեց դէպի ուսու-տաճկահան և տաճիկ-պարսկական սահմանները,
Ձինուորական մարմինը Քաղաքը դրեց ինքնապաշտպանողական
վիճակի մէջ: Ամեն կերպ աշխատում էր զէնք ու փամփուշտ
ձեռք բերել, ժողովրդին հարկադրում էր չնար եղածին չափ
զինւել սեփական միջոցներով, ուսումնասիրում էր Քաղաքի թա-
ղերը, փողոցները, անիւրը և պաշտպանութեան կէտերը ու երբ-

տասարդ ուժերը պատրաստում էր գալիք դէպքերին զիմաւորելու:

Շնորհիւ այս աշխատանքներին, կուի նախօրհակին Զինւորական մարմինը սեղանի վրա դրեց հայկական քաղաքամասի ինքնապաշտպանութեան հետեւեալ նախադիժը:

Հայաքնակ քաղաքամասը իր երկարութեամբ սկսում էր թաւրիղի դռնից և տարածւում էր մինչև կառավարական հացի շահմարանը կամ ամբարը, կոնակին ունենալով բերդի աւելիքան մէկ վերստ երկարութիւն ունեցող վիթխարի քարածայտ արևելեան ամբողջ կէս մասը: Եւ ապա այդ երկու ծայրերից հարաւային ուղղութեամբ կիսաշրջան կաղեկով առաջանում էր դէպի շուկան:

Հայաքնակ քաղաքամասի հարաւ-արևելեան, արևմտեան և հարաւ արևմտեան սահմանների վրա ընկած են թուրքական թաղերը, իսկ հարաւային սահմանի վրա, ինչպէս տեսանք, զբռնւում են շուկան և կառավարական հիմնարկութիւնները: Այնպէս որ խռովութիւնների դէպքում հայկական քաղաքամասը մնալու է կատարեալ օղակի մէջ:

Այս ի նկատի ունենալով, ինքնապաշտպանութեան զիժը սկսւում էր բերդի արևելեան ծայրից և հարաւային ուղղութեամբ կիսաշրջան կազմելով գնում հանգում էր կառավարական ամբարին կամ բերդի միջին տարածութեան խոյացած ժայռերին: Ի հարկէ բերդը իր ռազմական ուժով մնում էր թառած հայաքնակ քաղաքամասի գլխին:

Ինքնապաշտպանութեան շրջագիժը, որ ունէր աւելի քան երկու վերստ տևողութիւն, բաժանւած էր չորս շրջանների, իսկ իւրաքանչիւր շրջան բաժանւած էր մի շարք գիրքերի:

Այդ շրջաններն էին արևելքից սկսած՝

1. Թաւրիղի դռան շրջան:

Այստեղ հինաւուրց ժանիքաւոր պարիսպը զեռ ևս կանգուն էր և նրա մէջ գտնւում էր թաւրիղի դռան անցքը:

2. Թէքեալիֆի-հարպիէի շրջան:

Աստեղ գտնւում էր թէքեալիֆի-հարպիէի վարչատունը և միջնաբերդը:

3. Մանի տակի շրջան:

Այստեղ առաջ գտնւում էր մի քանի խաներ—առևտրական

ձկնհրժաններ, որից և մնացել է անունը:

4. Ամբարի տակի շրջան,

Այստեղ գտնուում էր կառավարական հացի շտեմարանը, մի քանգարձակ, բարձր ու ամուր շէնք, որը իշխում էր թաղամասի վրա:

Կուլի ընթացքում կարևոր դիրքերը հանդիսացան հետևեալ-ները:

Թաւրիզի դռան շրջան,

Նախ գործում էր Մարութեան Մարտիրոսի տունը:

Այս դիրքը 6 օրւա կուլի ընթացքում թնդանօթի հարւած-ներից մեծապէս ֆնտաւեց, աղաները դիրքը հրդեհեցին ու քաշե-ցին, որից յետոյ մնացին.

Դիրք

Յմբապետ

1. Աբբօյի տուն	}	Աւետիս Վարպետեան
2. Շշկօհանի տուն		Հայկավանքցի Բաղդօ
3. Տէր Պօղոսեանի տուն		Մուխսու Վահան
4. Կաղօհանի տունը	}	Սահակ Զանկօհան
5. Լազ Ալիի »		Միհրան Յովակիմեան † Շատախցի Աւօ
6. Շահէն Աղի »	}	Սղերացի Նշան
		Շահէն աղա Կօնտաղչեան Տիգրան

Այս դիրքերի դէմ գործում էին՝

1. Թնդանօթը բերդի զլխից.

2. » Հայկավանքի գերեզմանաանից.

3. Թաւրիզի դռան մզկիթը կամ ջամիլն.

4. Արամ Կաղօհանի տունը. (այստեղ տաճիկ էր նստում.)

5. Կաթրջի մզկիթը.

6. Մահմուդ էֆէնդիի տունը:

Թէքեալիֆի-հարպիէի շրջան

Դիրք

Յմբապետ

1. Կողատի տունը	Կողատի Մարտիրոս և Կարապետ
2. Քեօլօզի »	Թաղէոս Նալբանդեան
3. Վարդապետեանի տունը	Աստուր Մինասեան

- | | | |
|---|---|--|
| 4. Թէքեալիքի
հարպիէի շէնքը | } | Մսկացի Յովհաննէս |
| 5. Ս. Ծիրանաւոր —
Յեցեանի գիրքը | | Արմենակ Միրզախանեան (վիր.)
Լևոն Կոստյան |
| 6. Հիւսեանի տունը
Այս գիրքի դէմ գործում էին, | | Յարութիւն Աշըքեան |
1. Թնդանօթը բերդից.
 2. » մաղաւնիներից (տաճիկ գերեզմանատուն).
 3. Քաղաքապետարանը.
 4. Հարաւ-արեւիկեան մզկիթը.
 5. Զինարանը.
 6. Կայա-չալաբիի մզկիթը:

Սանի տակի շրջան

Նախ գործում էր Միրզախանեանների խանը:

Այս գիրքը 5 օր կուելուց յետոյ թէ՛նամու կողմից հրդեհ-
ւեց, որից յետոյ մնացին,

Դիրք

Մտրապետ

- | | | |
|----------------------|-----------------------|--------------------------|
| 1. Ալէքսանեանի տունը | Կարճկանցի Մանուկ աղա | |
| 3. Բօհախանի գլուխը | Յովհաննէս Փիրկալէմեան | |
| 3. Եագմալուի խանը | Տրդատ Տէր Մանուկեան | |
| 4. Սանի տակի գիրքը | } | Մանուկ Բայլեան (սպանւեց) |
| | | Գարբիէյ Եղիազարեան |
| | | Մանուկ Թորոմանեան |
| | | Զինուոր Զօհրար |
| 5. Սարբերդցանց տունը | } | Մարտիրոս Սարօեան |
| | | Շալջի Յարութիւն |

Այս գիրքերի դէմ գործում էին՝

1. Թնդանօթը բերդի երկու գերքերից.
2. » սօլկընոցից.
3. » Բեամիլի խարաբաններից.
4. Աքիֆի տունը.
5. Գուրշուն մզկիթը.
6. Ագիգիա գօրանոցը:

Ամբարբի տակի շրջան

Նախ գործում էին՝

Տէր Յակոբեանի տունը.

Աթաշկառեանի »

Կարաղէօղի »

Տէր Յակոբեանի դիրքը ընկաւ առաջին օրը, Աթաշկառեանի և Կարաղէօղեանի դիրքերը ընկան չորրորդ օրը, որից յետոյ հասցին,

Դիրք

Քմբուպետ

1. Իւնուսի տունը

Շատախցի Օհաննէս
Քիչմիշեան Յարութիւն

2. Կաքաւեանի տունը

Արմենակ Բաղրիկեան
Սէթ Ասլանեան

3. Ամբարբի տակի Ա. դիրքը

Կարճկանցի Մանուկ
Արմենակ Մեղքոնեան

4. » » Բ. »

Վարդան Տէր Վարդանեան

Այս դիրքերի դէմ գործում էին,

1. Թնդանօթը բերդի Սոսիսո կոչւած դիրքից,

2. » Բեամիլի խարաբաներից,

3. Ուլու-Չամին կամ մզկիթը.

4. Ուլու-Չամիի շարքում գտնուող մի շարք տներ:

Շրջանները ղեկավարելու համար ընտրւեցին շրջանապետներ ու օգնականներ, գլխաւորապէս զին. մարմնի անդամները-գրանք էին,

1. Թաւրիզի դռան շրջան՝

Դաւիթ Սարգսեանը

Լեոն Գալճեանը

Դաւիթը վիրաւորւեց ու նրա տեղ անցան

Սարգիս Շահինեանը

Միհրան Յովակիմեանը

2. Թէքեալիֆի հարպիէի շրջան

Յարութիւն Ներկարարեանը

Սարգիս Շահինեանը

Գաւիթը վերաւորելուց յետոյ Սարգիս նահապետը զնայ
Քաւրիցի դասն շրջանը և նրա տեղ եկաւ Կեան Գալճեանը:

3. Յանի տակի շրջան

Միհրան Քորոմանեանը

Մանուկ Սարգսեանը

4. Ամբարի տակի շրջան

Միհրդատ Միրզախանեանը

Միհրան Ներկարարեանը

Արմենակ Բաղրիկեանը

Զինական ուժը հետեւեալ պատկերն էր ներկայացնում:

1. Հրացաններ—մոտինի, մօղէլ, մարտինի, մաուզէր կա-
փաղլի, բերդան—100 հատ, 30,000 փամփուշտով:

2. Ասրճանակներ մաուզէրի 90 հատ 15,000 փամփուշտով:

3. Ասրճանակներ զանազան տեսակի 120 հատ—15,000
փամփուշտով:

Ընդամենը 310 զէնք 60,000 փամփուշտով:

Քաղաքի կռիւները զեկավարող և այլ կարգի զործեր կա-
տարող մարմինների կազմը այնպէս բարդ չէր, ինչպէս Այդե-
տանում, այստեղ զործում էին ընդամենը երեք մարմիններ,
չրանք էին՝

1. Զինւորական մարմին. սրա կազմի հետ մենք ծանօթա-
ցանք արդէն:

2. Մատակարար մարմին. սա հոգում էր կուռղ ազաների
նաև կարիքաւոր ընտանիքների ապրուստը՝ ղրմելով ժողովարա-
քութեան և վերցնելով կառավարական շտեմարանից հաց:

Մատակարար մարմնի անդամներն էին՝

1. Առաջնորդ Եզնիկ վարդապետը

4. Սամուէլ Գասպարեանը

2. Յովհաննէս Այաղեանը

5. Զանիկ Սամարճեանը

3. Թարղի Մանուկը

6. Մարտիրոս Մայրիկեանը

Կարմիր Յաչի լանճնաժողով: Այս մարմինը ստանձնեց վի-
րաւորների խնամելու հոգը՝ հիւանդանոց զարձնելով Իսաջան-
ճանի տունը:

Տանձնատողութի անգամներն էին

- | | |
|----------------------|------------------------|
| 1. Սուրբէն Եշամեանը | 4. Յեննքերիւմ Շաղթեանը |
| 2. Սուրբէն Արարքեանը | 5. Մանուկ Յովակիմեանը |
| 3. Մելքոն Լաքամեանը | |

Քնն այս ծրագրով, ուժերի այսպիսի քանակով և գործող ժամանակների այս օրինակ կազմով Քաղաքի հայ ժողովարդը գուրս կկաւ կուի՝ ներշնչւած ինքնազարգացման թեան վնճ գաղափարով:

Սակայն նախ քան կախին սնցնելը, տեւեմեր ինչեր տեղի աւելցան Քաղաքում նրա նախօրեակին:


Ապրիլի 4-ի շաբաթ օրու առաւօտն էր, երբ Քաղաքում առաջաւելց Ռշխանի և նրա երեք ընկերների սպանութեան լուրը Վ. Յ. լուրը սարսափ պատճառեց ժողովրդին. քաղաքացի մի քանի խանութպաններ, որոնք արդէն շուկա էին գնացել, վաղկեցին իրենց խանութները և տուն վերադարձան: Իսկ Այգեստանից ոչ մի խանութպան և ոչ մի արհեստաւոր Քաղաք չիջաւ:

Արի երկու ժամ անց, բերնէ բերան թռաւ այս անգամ էլ Վոսմեանի ձերբակալութեան լուրը ժողովրդի վրա կատարեալ յուսահատութիւն կկաւ և յարարերութիւնը Քաղաքի ու Այգեստանի մէջ միանգամայն ընդհատեց:

Այս միջոցին առաջնորդ Եղնիկ վարդապետը, որ Դանիէլ վարդապետի հետ նոր միայն վերադարձել էր Այգեստանից, Վոսմեանի ձերբակալութեան լուրը աննկով, շտապեց Ջէզկափ ձուռ:

Եղնիկ վարդապետի այն հարցումին, թէ ինչպէս է որ Ռշխանը սպանւել է և ինչու է Վոսմեանը ձերբակալուել, Ջէզկեալը—ասիական այդ սատր սատրապը, որը երկու օր առաջ շոգրօրդ դարձւածներով էր ձուռնում հայ ժողովրդի ներկայացուցիչներին, այս անգամ միանգամայն այլ լիզու քանեցրից և առանց այլևայլութեան յայտնեց, որ Ռշխանը սպանւել է իր կարգադրութեամբ, որ Վոսմեանը նոյնպէս ձերբակալուել է իր կարգադրութեամբ և որ տաճիկ պետութիւնը մի քանի տղաներէ մեղքում խաղալիք չը պիտի դառնա:


Ջէզկափ խօսքերը վճռական էին ու թունոտ. Եղնիկը գուրս կկաւ իրա ձօնից խիտա ընկճւած տրամադրութեամբ, երգ



ՄԱՍՏՏԱՐ: ՅՈՏԵ

- Քաղաքային կամ գյուղերի և նշանները:
- Հարկեր
 - Թուրքեր
 - Թաւուրներ շուկայ
 - Պետական հաստատութիւններ
 - † Եկեղեցիներ
 - ☾ Սելիթներ
 - Հայ ինքնապաշտպանութեան սիւրճ
 - Հայ սիւրճեր
 - Թուրք սիւրճեր և շարժական կէտեր
 - ⚓ Թուրանական սելիթներ
 - Հայ քրտած սիւրճեր
 - Պետական կամ հայ բանդարկաններու վաւր

Քաղաքային կամ գյուղերի և նշանները



Legend or key for the plan, listing various symbols and their corresponding descriptions. The text is mostly illegible due to fading and the angle of the page.



նիկի վերադարձին առաջնորդարանում սպասում էին զինուորական մարմինը և մի քանի առաջաւոր մարդիկ, որոնք երբ լսեցին Եզնիկից Ալեգէտի արտասանած խօսքերը և Եզնիկի ստացած տպաւորութիւնը ծանր մտահոգութիւնների մէջ ընկան:

Դրութիւնը ամբողջ շաբաթ օրը լարւած մնաց, նոյնը շարունակեց նաև կիրակի օրը. ժողովուրդը թագամասից բոլորովին չը հեռացաւ, դէպի կառավարութիւնը այլևս վստահութիւն չէր մնացել: Չը նայեա՞ծ այս բոլորին Եզնիկ վարդապետը խորհրդակցութեամբ Զին. մարմնի նորից Ալեգէտի մօտ գնաց, պարզելու ստեղծւած դրութիւնը և խօսելու վստահանի արձակման մասին:

Սակայն Ալեգէտը այս անգամ Եզնիկին ընդունեց աւելի էլ վստահեց. խօսեց նրա հետ սպասնական տօնով, և Եզնիկի մի քանի պնդումներին պատասխանեց.

— Որ այս երկիրը կամ հային պիտի մնայ և կամ թուրքին, երկուսի միտեղ բնակելը այլևս անհնարին է:

Այս խօսքերը Ալեգէտը արտասանեց այն ժամանակ, երբ կազմակերպւած ջարդերի հրահանգները գաւառներն էին հասել և զժոխային գործը սկսւած էր արդէն:

Եզնիկը վերադարձաւ առաջնորդարան աւելի քան ճնշւած տպաւորութեան տակ և այնտեղ գտնուողներին յայտնեց, որ այլևս լաւ բան սպասել անկարելի է: Այս խօսքերը թէև ծանր էին և յուսահատական, բայց ամիսների ու տարիների աշխատանքը վանեց յուսահատութիւնը և Զին. մարմինը անցաւ իր գործին: Նա արեց վերջնական կարգադրութիւններ, բոլոր խմբերը քաշուցին իրենց դիրքերի շրջանը և պատրաստեցին զիմաւորելու այն վայրկեանին, որին սպասում էին ամիսներից ի վեր:

Ժամերը անցնում էին դանդաղ ու տեւական, կարծես զբոսանք ժամեր չը լինէին, այլ օրեր, ամիսներ: Բոլորեց կիրաւակէն, ցերեկը տեղի տեղ գիշերին, գիշերը առաւօտին և սկսեց գործի օրը — երկուշաբթին. բայց շուկան դարձեալ զոց մնաց, Այգեատանից ոչ ոք քաղաք չիջաւ և Բաղաքի հայ ժողովուրդը մնաց պաշարւած գորքի վիճակում, չիմանալով թէ ինչ է կատարուում գուրսը: Թէև պաշարումը գեռ չէր սկսել և զինւած պահակներ չէին երևում, սակայն անվստահութիւնը այնքան ուժեղ էր և յարաբերութիւնները այնպէս սրւած, որ նոյնիսկ Բա-

զաքում հայ ու տաճիկ զրացիական գծի վրա կեանքը բուրբոյլին կանգ էր առել, ի հարկէ մինչև այդ կենդրոնական թաղն էին տեղափոխել թաղածայրերի հայ ընտանիքները: Բայէն խորհրդաւոր էր, բոլորը դարձել էին մարմնացած լսողութիւն, և բոլորը սպասում էին, թէ սրտեզից առաջին անգամ նշանը պիտի տրւի:

Ահա այս վիճակի մէջ բացւեց երեքշաբթի օրւա—ապրիլի 7-ի առաւօտը, և մի փոքր անց Այգեաստանի կողմից լսեցին հըրացանաձգութեան ձայներ:

Այգեաստանի հայկական մասը բաւականին հեռու է, ուստի հրացանաձգութեան ձիշտ տեղը որոշել կարելի չկաւ, մինչև անգամ ենթադրուց որ հրացանաձգութիւնը կատարուած է տաճիկ Շամիրամ թաղում, և որ տեղի ունի ոստիկանութեան և փախստական տաճիկ զինւորների մէջ, սրտնք վխտում էին ամեն տեղ:

Ահա այս ժամանակ Ջէզգէար փորձեց Քաղաքի հայերին խաբել. նա հրկու ժանդարմ ռզարկից եղնիկի մօտ յայտնելու, որ Այգեաստանում թիթե ընդհարում է տեղի ունեցել և որ նըրանք կարող են հանգիստ լինել: Բայց դրութիւնը այնպէս լարւած էր, որ ժանդարմները հասնելով հայաբնակ թաղի սահմանը, չը վստահացան այլևս առաջ գնալ և պատահած երկու հայերի խնդրեցին իրենց խօսքերը առաջնորդին հասցնել, ու իրենք վերադարձան:

Մինչ այս, Այգեաստանի կողմից լսող հրացանաձգութեան ձայները օժեղ համադարկերի բնոյթ ստացան: Սկսեց նաև թնդանութեան խուլ որոտը և շրջանապետները շտապեցին առաջնորդարան, ուր գտնուում էր զին. մարմինը: Շուտով շըրջանապետները վերադարձան իրենց տեղեր՝ արդէն իրողութիւնը պարզւած:

— Տղաներ, գրաւեցէք ձեր զիրքերը, Այգեաստանում կոխն սկսւած է,— յայտարարեցին շըջանապետները և գինւած խմրերը, որոնք մինչ այդ, չը նկատուելու նպատակով, պահուում էին դժած սահմանից ներս եղող տներում, առաջացան և գրաւեցին առաջին շարքի զիրքերը:

Եւ մինչգետ տղաները արագ փակում էին զիրքերի լուսամուտներն ու անցքերը, բացում էին կրակելու համար փոքրիկ

անցքեր և հուն աշխատանքի մէջ էին, Ամբարի շրջանում ան-
գլի ունեցու հետեւալ զէպքը: Գիրքապահ տղաները նոր միայն
քարձրայել էին Կարապետի դիրքը, երբ դիմացի նոյն Կարպե-
տի խարաբաների մէջ նկատուեցին 30-ի չափ զինւած քիւրդեր
և միլիտներ: Այդ արատուովոր էր և տղաները սկսեցին ուշադը-
քութեամբ հետեւել նրանց շարժումներին: Քիւրդերն ու միլիտ-
ները, որոնք երբէք չէին կարծում, որ դիմացի ասն մէջ հայեր
կան և դիտում են իրենց, ինչ որ փոքրիկ խորհրդակցութիւն
ունեցան և ապա երկու մասի բաժանուելով, մէկը իջաւ զէպի
Մելու-Չամին, իսկ միւսը առաջացաւ զէպի կառավարական ամ-
քարը. տղաները նկատելով որ նրանք ուզում են անցնել և ամ-
քարը դրաւել, օդի մէջ երկու փամփուշտ կրակեցին, սա առա-
ջին անվաստն պայթոցն էր, այն էլ օդի մէջ: Քիւրդերն ու միլ-
իտները բոլորեալէս յետ քաշուեցին խարաբաները, դիրքերը գը-
քուեցին և մէկէն համազարկեր տ'ողացին կրակ բացւած ասն
վրա: Գիրքի տղաները պատասխանեցին համազարկով, ապա
համազարկեր լսեցին Ուլու-Չամիից, և ամբողջ Քաղաքը մէկէն
որոտաց:

Այս տեղի ունեցու առաւօտեան ժամի 9-ին, Այգեասանում
պայթած առաջին փամփուշտից ուղիղ երեք ժամ յետոյ:

Կսիւն սկսեց և սկսեց մի ուժեղ թափով, այստեղ էլ
գուրս եկան միմիանց զէմ երկու անհաւասար կողմեր. մի կող-
մը կանգնեց Քաղաքի մի բուն հայ ժողովուրդը ընդամենը 300
հրացաններով ու ատրճանակներով, միւս կողմը կանգնեց տա-
նիկ կառավարութիւնը իր անհաշիւ սաղմական կազմով, թնդա-
նօթիներով և մոլեռանդ մահմեդական ամբոխով: Արեւիհան, հա-
հարաւային և արեւմտեան կողմից գործում էին բազմաթիւ դիր-
քեր՝ բունւած զօրքերով, միլիտներով ու Աւսոյիների ցեղին
պատկանող քիւրդերով, իսկ հիւսիսային կողմից գործում էր
բերդը, այն բերդը, որի կոչումն էր Քաղաքի պաշտպանութիւնը
արտաքին թշնամիների դէմ: Այս անգամ նա, ընդհակառակը, իր
կրակը դարձրել էր Քաղաքի վրա: Բերդի արեւմտեան կէս երկա-
քութիւնը ունի լայնանիստ բարձունք, այդտեղ զանաւում է շը-
Չապարիսողը իր միտերանոցներով, զօրանոցներով ու միլիտ
նարեւով, այդ արձանքի երկու ծայրերից գործում էր Բն. ուն-

Թը: Բերդի արևելեան կէս երկարութիւնը ներկայացնում էր սրածայր մի շղթայ, որի վրա տարւած է մի երկարուկ պարիսպ իր ծակերով: Բերդի այս մասը միանգամայն կախուած է հայաբնակ Թաղերի վրա: Ահա այս պարիսպի յետև թաղնւած դինւորներն ու շէթաները եկան կատարեալ զարձնելու այն հրաշէկ օղակը, որի մէջ գտնուում էր ինքնապաշտպանութեան գիմած մի բուն ժողովուրդ:

Առաջին օրւա կռիւը, որը և ուժեղ էր և միահամուռ, սկսեց ու շարունակեց ամբողջ օրը, բոլոր չորս շրջաններում միաժամանակ, բայց գլխաւոր գործողութիւնները կատարեցին Թաւրիզի դռան, Թէքեալիֆի-հարպիէի և Ամբարի տակի շրջաններում:

Ամբարի տակի շրջանում կարևոր դեր պիտի խաղար Տէր Յակոբեանի երկու յարկանի տունը, որը գտնուում էր Ուլու-ջամիից դէպի հարաւ, տաճկական թաղի սահմանի վրա: Առաջինը պիտի գրաւէր այդ տունը. շրջանագիտը 10 տղաներով հասաւ այդ տան մուտքին այն ժամանակ, երբ կարագեօզի խարտաւներից և Ուլու-ջամիից համազարկերը որոտացին. չը նայած տեղացոյ գնդակներին, տղաները անփորձ գրաւեցին տունը: Բայց սկսեց ծանր կռիւ: Տան յետևի կողմից, պարտէզի պատը քանդելով, ներս թափուեցին քիւրդեր ու միլիտներ, զրանց վրա տղաները կրակ բացին, երկու հոգի սպանուեցին, իսկ միւսները յետ փախան. սակայն դիրքի դրութիւնը չը լաւացաւ, նա միայնակ ընկած էր երեք կողմերից տեղացոյ կրակի տակ: Այդ բաւական չէ, բերդի արևմտեան ծայրից սկսեց հարւածել թնդանօթը: Ռումբեր տեղում էին անընդհատ ու վերի յարկի պատերը քանդում: Երկու ժամից յետոյ վերի յարկը այնքան վնասուեց, որ այնտեղ մեալ անկարելի եղաւ: Իմադրութիւնը շարունակեց մի երկու ժամ ևս և տղաները տունը հրդեհելով, թափուող գնդակների տակ քաշուեցին Իւնուսի տունը: Այս գիրքի անկումը թէև վատ ազդեց, բայց և այնպէս մնացեալ դիրքերը պահուեցին և դիմադրութիւնը ուժեղ թափով շարունակեց:

Յամառ կռիւներ տեղի ունեցան նաև Թաւրիզի դռան շրջանում: Այստեղ առաջնակարգ գիրք հանդիսանում էր Մարութեան Մարտիրոսի երկու յարկանի տունը, որը գտնուելով հայարնակ Թաղամասի ծայրում, պարսպին մօտիկ, իշխում էր մէկ

Վարաւային տաճկական դիրքի վրա և մէկ էլ պարսպից դուրս գտնուող հրապարակի վրա: Այդ պատճառով թշնամու կրակը իր ամբողջ թափով այս շրջանում, վեց օր շարունակ, դարձւած էր Մարութեանի դիրքի վրա: Այստեղը թշնամին ընտրել էր ներս խուժման երկրորդ կէտ:

— Մենք, թաւրիզի դարդեախի շրջանի զինւորներս երեք ժեով յառաջացանք զէպի դիրքերը: Երբ Շշկօհանի տունը մըտանք և անկէ ալ Մարութեանի դիրքը կուգէինք անցնել, բերդէն և արևելիան կողմի արտերէն՝ նախապէս պատրաստուած թուրք դիրքերէն միահամուռ ու սոսկալի հրացանազարկի մը հնթարկեցանք և այդ վիճակով մտանք Մարութեանի տունը: Բարձրացանք վերնայարկը և բաց պատուհաններէն սկսեցինք կրակել թուրք դիրքերի վրա: Այդ բողբոջն արևելիան հարաւային ճակատէն 50—60 ձիաւոր չէրքէզ և ոստիկան ալ ելան հրապարակ և ինքզինքնին խրամի մէջ նետելով սկսեցին 400 մեթը հետուէն անընդհատ կրակ տեղալ մեզ վրա: Եւ այդ օժանդակութեամբ նոր սխտեմի թնդանօթ մը բերին ու զետեղեցին Հայկավանքի հին գերեզմանոցի մէջ: Սկսեցինք այդ ուղղութեամբ էլ կրակել և առաջին սնգամէն երկու թնդանօթածից սպանեցինք: Այդ ատեն ետեւէն—բերդէն հրանօթներ սկսեցին գոռալ և առաջին անգամ երկու սուսը եկան և մեր ետև պաշտպանող պատերը քանդելով մեզի փոշիի և հողի տակ ձածկեցին՝ զմեզ յանկարծակիի բերելով: Այդպէս շարունակեց, երբ մենք տակաւին զրազւած էինք մեր ճակատին զէմ դրւած թնգանօթը փախցնելու: Վերջապէս երկու անգամ տեղը փոխելէն ետքը—կէսօրին մեզմէ անտեսանելի տեղ մը փոխադրեցին թնգանօթը և սկսեցին ճակատէն ալ ոմբակոծել: Թնգանօթին երկրորդ զընդակ մեր անձնուրաց զինուոր վարպետեան Աւետիսի ոտքը տարաւ, որ քանի մը օրէն ետքը մեռաւ: Մարութեանի դիրքը ունէր 3 հրացան և 2 տասնոց (մաուզէր ատրճանակ): Աւետիսը իյնալէ յետոյ օգնութեան պէտք ունեցանք, մանաւանդ թուրքերը երկու անգամ ալ փորձեցին դիրքի դուռը վառել: Վերջապէս շրջանապետ Դաւիթ Սարգիսեանը մէկ զինւորով օգնութեան հասաւ, սակայն գեռ դիրքը չը բարձրացած ցածի անցքի մէջ զէմքէն վիրաւորեց ու ընկաւ: Այս հարածը ծանր էր մեզի համար, բայց շրջանապետի իյնալը մեզի չը վնասեցուց և մենք

կարող եղանք դիրքը պահել, թէպէս գնդակները կը տեղայեւ
կարկուտի պէս:

Այսուիսի անպաճոյճ խօսքերով նկարագրում է Մարտի-
եան դիրքի շուրջը կատարուած առաջին օրու կռիւը, այդ դիր-
քում կուող տղաներից մէկը:

Թէ յարձակումները, դրա հետ միասին նաև դիւտադրութիւ-
նը Մարտիեանի դիրքից որքանյ ամառ էին, այդ երևում է
այն հանգամանքից, որ 5—6 հոգով պաշտպանուող այդ դիրքի
վրա ուղղւած էր երկու թնդանօթի և ըսզմաթիւ հրացանաւոր-
ների յարատևող կրակը:

Սակայն աւելի կարևոր և վճռական անցքեր տեղի ունե-
ցան Թէքեալիֆի հարպիէի շրջանում:

Այս շրջանում ինչպէս տեսանք, շրջանագիտ կարգւեց դիւ-
տարական մարմնի անդամ Յարութիւն ներկարարեանը կամ Յա-
րօն՝ արհեստով պղնձագործ, բազուկներով ուժեղ, իբր արամա-
դրութեան տակ ունենալով ընդամենը 60—70 հրացանաւորներ
ու ատրճանակաւորներ: Սրա վրա դրւած էր մի յանդուգն ձեռ-
նարկութիւն:

Այս շրջանի առաջին շարքում գտնուում էին երկու յարկա-
նի չորս մեծ շէնքեր, որոնցում զետեղւած էին կառավարական
մի քանի հաստատութիւններ:

Այդ շէնքներն էին՝ արեմուտքից սկսած.

1. Արտէշեանի խանը, որի վերի յարկում զետեղւած էր
նահանգական դատարանը, իսկ տակի յարկը ամբողջապէս խա-
նութիւն էին:

2. Յեցեանի տունը, որի վերի յարկում զետեղւած էր Թէ-
քեալիֆի հարպիէի պաշտօնատունը և պահեստանոցը, իսկ տա-
կի յարկը խանութիւն էին:

3. Հիւմի էֆէնդիի տունը, որի վերի յարկում զետեղւած
էր Քաղաքի մասի ոստիկանատունը, իսկ տակի յարկում առա-
ջին մասը խանութիւն էին, յետի մասը Թէքեալիֆի հարպիէի
մթերանոցն էր:

4. Թէրզիպաշեան-Փիրումեանի ընդարձա կիսանը, որի վե-
րի յարկում զետեղւած էին:

- ա. Օտօմանեան բանկը
- գ. Ռէժիս
- բ. Կարանթինայի վարչութիւն
- ե. Փօստ-հեռագրատունը
- զ. Հանրային պարտուց

Իսկ տակի յարկում գտնուում էին բազմաթիւ խանութներ ու ռէժիս-ծխախոտի, և հանրային վարչութեան աղի պահեստանոցները կային:

Ահա այս չորս մեծ շէնքերը կուի առաջին իսկ վարկետնից ֆարօն իր սահմանափակ ուժերով պիտի գրաւէր, որից յետոյ ամբողջ շրջանը կը մնար աղաների կրակի տակ:

Սակայն ծրագիրը վիթխարի էր, իսկ ուժերը քիչ. ծրագիրը սնիրագործելի դարձաւ մանաւանդ վերջին երկու շէնքերի նկատմամբ, ուր գտնուող հիմնարկութիւնների պատճառով շարունակ լինում էին փոխաններ, ժանգարման ու պահակներ: Ուտի որոշեց գրաւել գոնէ Թէքեալիֆի-հարպիէի շէնքը և ձխտէշ-հանի խանը: Բայց գործի ըսպէին այդքանն էլ իրագործել հնարաւոր չիղաւ, որովհետև կոսիւր պայթիլիս երեք շէնքեր արդէն բռնուած էին գորքերով, որի պատճառով էլ կոսիւր այս շրջանում կրեց կատաղի բնոյթ:

Նախ պիտի գրաւէր Թէքեալիֆի-հարպիէի շէնքը, որը յետի կողմից կպած էր հարևան տներին: Թէքեալիֆի-հարպիէի մուտքը գտնուում էր շէնքի արեւելեան կողմում՝ ոստիկանատան զիմաց: Շրջանապես մի խումբ աղաներով գտնուում էր մօտիկ գտնուող Միրզախանեանների տանը, երբ լուր բերին, որ քիւրդերն ու միլիտանները գիրքերն են մանում. շրջանապետը անմիջապէս վերցրեց աղաներին ու շտապեց դէպի Թէքեալիֆի-հարպիէի շէնքը: Բայց տեսնելով որ ոստիկանութեան աչքի առաջ մուտքին մօտենալ անկարելի է, յետ դարձաւ ու մտաւ այդ շէնքի յետև գտնուող մասը, ուր նրան մեծ աջակցութիւն ցոյց տուց մէկ հայ կին:

Դա սուկար Մկրտիչ վարպետեանի կինն էր—տիկին Աղաւնին—միջակ տարիքի, համեստ ու գրաւիչ ղէմքով և աշխոյժ աչքերով: Դա վեց զաւակների տէր էր—4-ը տղա, 2-ը աղջիկ մեծ աղան, Սաչատուրը, 18 տարեկան էր և այդ շրջանի լաւ գինւորներից մէկը: Վարպետ Մկրտիչը իր բազմամարդ ընտանիքով ապրում էր Թէքեալիֆի-հարպիէի կամ Յեցհանի տան յետևի մասում՝ վարձով: Տիկին Աղաւնին լաւ ծանօթ էր այդ

տան բաժանմունքներին, ինչպէս և այն փոքրիկ գոնակի հետ, որը կապիւով իրար հետ այդ տան երկու բաժանմունքները, մեծ մասամբ փակ էր լինում: Եւ ահա տիէին Ազաւնին առաջ ընկնելով, առաջնորդից տղաներին գէպի այդ մտտքը, որը փայտերի մի մեծ կոյտի տակ մնալով բոլորովին չէր երեւում: Փայտերի կոյտը բոպէապէս մի կողմ շարուեց. փոքրիկ դուռը խորտակեց, տղաները ներս թան թէքեայիֆի-հարպիէի փոքրիկ բակը, բարձրացան երկրորդ յարկի պատշգամբը և լուսամուտներից ներս մտնելով, գրաւեցին շէնքը այնպիսի արագութեամբ, որ այնտեղ գտնուող մի քանի պաշտօնեաները հազիւ կարողացան գլուխ ազատել ու դուրս փախչել: Մինչ այս, ուստիկանատնից և այլ կողմերից սկսեցին զնդակներ տեղալ թէքեայիֆի-հարպիէի շէնքի մէջ լուսամուտների միջով, բայց արդէն ուշ էր. դիրքը գտնուում էր տղաների ձեռքում և գիմադիր կրակը արդէն գործում էր:

Թէքեայիֆի-հարպիէն գրաւելու հետ միաժամանակ շրջանապիտը կարգազրեց խմբապետ Արմենակ Միրզախանեանին իր խմբով գրաւել Ճիտէչեանի խանը կամ դատարանը: Այս խանը ենթադրոււմ էր հեշտութեամբ գրաւել, մանաւանդ որ պահապանը մէկ հայ էր՝ մականունը Չուսո:

Սակայն Ճիտէչեանը, այդ հարուստ հայ վաճառականը, նախօրօք պատերիկ էր պահապան Չուսոյին, որ կոխն սկսելուն պէս խանի բանալիները տանի և յանձնի ուստիկանապետին: Միամիտ Չուսոն այդպէս էլ վարոււմ է, չէնց որ պայթում են առաջին փամփռշտները, նա վազ է տալիս ուստիկանապետին, բանալիները յանձնոււմ է ուստիկանապետին և զրա հետ միասին գնում է այգտեղ իր կեանքը. Չուսոն այլևս չի վերադառնում: Սրանից յետոյ էր, երբ խմբապետ Արմենակը իր խմբով մօտեցաւ Ճիտէչեանի խանին. սակայն մինչև որ նա տեղ կը հասնէր՝ վերից բացեցին կրակները և տղաները հազիւ կարողացան առանց գոհի յետ փախչել:

Այսպիսով գեղեցիկ, միևնոյն ժամանակ մեծ ծրարքի միայն մի մասը իրագործեց և թէրզիրաշեան—Փիրումեանի խանի ու ուստիկանապետ հետ միասին տաճիկների ձեռքում մնաց նաև Ճիտէչեանի խանը:

Չը նայած այս քանին, տաճիկները տանել չը կարողացան որ թէ-



Տիկին Արմենի Արարիկյան

Քնադիֆի-հարպիէի շէնքը անցաւ հայերի ձեռքը: Այդ շէնքը բնութեպէս առաջ էր եկիւ և ինչո՞ւ նեղում էր նրանց, ուստի որոշեցին, քննչպէս էլ որ լինի, վերացնեն այդ մէջ տեղից, և մինչդեռ չորս կողմից գնդակը կարկուտի պէս տեղում էր ու տեղում ընդամենը երկու տասնեակ տղաներով պաշտպանուող այդ դիրքի վրա, միւս կողմից թշնամին ձեռնարկեց հրահեղ ամբողջ շէնքը:

Եւ անաւ ուղիղ կէտրին, երբ կոխը յամառ կերպով շարունակուում էր, երբ երկու տասնեակ տղաներ դիրքի երկու յարկերից, փոքրիկ բացւածքների միջով, հագիւ կարողանում էին թշնամու սպառուող զրո՞նք կասեցնել, յանկարծ տակի յարկի խառնութեանից մէկի փակւած դուռը դրսից հրահեղեց: Այժմ թշնա-

մին երկու դարձաւ, երկուսն էլ կոտորի ու սպանալից. դրա-
 թիւնը բարդացաւ. հրդեհը սկսեց արագօրէն ծաւալիլ, դուրս
 դուրս հանել լուսամուտաներից անկարելի էր. հրդեհը շուտով
 անցաւ ներսի կողմը, մի փոքր եւ շէնքը ամբողջապէս կը բռնկ-
 ւէր, հարկաւոր էր ջուր:

Ջուր, — աղաղակում էին ազանները ներսից, որոնք ծխից
 նեղւելով շարունակում էին կրակել ու կրակել: Շէնքի այն բա-
 կում, ուր սօլիար Մկրտիչն էր ապարում, հաւաքւած մարդիկ
 շէնս համարձակում պատերի տակից հեռանալ, գնդակներ էր
 որ սուլոցով գալիս անցնում էին այս ու այն կողմից: Բայց բո-
 պէն թանկ էր, ներսից ջուր էին պահանջում, հարկաւոր էք մե-
 կը, որ առաջ ընկնէք, սք ինքսական գարձի օրինակը գտնաւոր-
 եւ ա՛ա յայտնեց այդ մէկը: Նա վազ աւելց դէպի ջրհորը, վեր-
 ցրեց երկու դարօններ^(*) լցրեց նրանց ջրակը, և կայծակի արա-
 գութիամբ թռաւ դէպի հրդեհի տեղը. ասանց ուշադրութիւն
 դարձնելու սուլող գնդակներին. այդ մէկին հետեւեց երկրորդը.
 երրորդը, չորրորդը. բազմապէս կապուեց ջրկիրների մի շղթայ.
 անընդձառ դառնում էր առաջին մէկը լիք դարօններով, յորդո-
 րում ու խրախուսում էր իրեն հետեւողներին, և հրդեհը հան-
 գրեց:

— Կեցցէ տիկին ազաւնին, եթէ նա չը լինէր մեր դիրքը
 այժմ սօխիք էր զարձակ:

Այս խօսքերը լսեցին աջ ու ձախ, երբ կրակը արդէն հան-
 գիլ էր:

Հրդեհը հանգաւ, դիրքը փրկեց և տիկին Ազաւնին հերո-
 սացաւ. բայց քանի քանի այդպիսի հերոս կանայք հրատարակե-
 բերեց Վանի հայ ժողովուրդը այդ ծանր ճգնաժամին:

Թէքեալիֆի-հարպիէի դիրքը փրկեց, նա շարունակեց իր
 հերոսական դիմադրութիւնը. ամեն փորձ, որ արւում էր թշնա-
 մու կողմից մօտենալու այդ շէնքին, հրդեհելու նրան կամ գրա-
 ւելու, վերջանում էր թշնամու դժեբով. այնպէս որ այդ օր թշ-
 նամին այդ շրջանում աւելց 18 դո՛, իսկ ազանները ունեցան եր-
 կու վիրաւոր, մէկը խմբապետ Արմենակ Միրզախանեանն էր,
 որը ճիտէջհանի խօնը գրաւելու անշաջող փորձից յետոյ վերա-

(*) Գարօ կոչւում են նա թի սպիտակ թիթեղեա խորանայդ արկղները.
 որոնք Վանում փոխադրեւում են սփարական գոյներին:

գարձել էր Թէքեալիֆի-հարպիէի շէնքը, իսկ միւսը սպերզցի Իս-
րայէլն էր:

Սակայն գրութիւնը համարոււմ էր լուրջ ու վաւանդաւոր: Ինչ
կանգուն էին ձիաէշեանի խանը, սուրիկանատունը, Թէքեալի-
քաշահն-Փիրումեանի խանը և վերջնապէս զինարանը, որոնք իր-
բն թշնամու ուժեղ գիրքեր, պաշարիւ էին երեք կողմից Թէ-
քեալիֆի-հարպիէն ու անվերջ տեղում էին նրա վրա կրակ:

Պէտք էր պիմել լափող հրդեհի օգնութեանը, պէտք էր բո-
ցերի մատնել այդ շէնքերը, որոնց երկաթ դիմադրիւ անկարելի
էր, և որոնք սպառնում էին հայ քաղաքամասին աւելի, քան
Ֆեացեալ բոլոր գիրքերը միասին: Պէտք էր հրդեհել նրանց,
ահա այս եղաւ կուի առաջին գիշերուա նշանաբանը, միևնոյն
ժամանակ և զլիւաւոր գործը:

Գիշերը վրա հասաւ, կատաղի հրացանաձգութիւնն ու թն-
դանօթաձգութիւնը մի փոքր մեղմեց. հեազնեակ թանձրացող
մթութեան մէջ այլևս միտք չը կար նոյն թափով վառող սպա-
ռել և խաւարի մէջ գործելու յարմար բոլէն հասաւ:

Ժամի 8-ն էր, երբ շրջանապետը մի քանի հոգով պառչա-
գործեց և դուրս եկաւ ձիաէշեանի խանի հիւսիս-արևմտեան
անկիւնի գիմաց: Հարկաւոր էր բոլորովին մօտենալ շէնքին,
ցածել գոների ու լուսամուտների վրա նաւթ և սպա վառել,
այս էր այդ բոլէի գործը, որը անվաւանդ չէր: Այսպիսի բոլէ-
նեւում է որ հրապարակ են զալիս յանդուգն ձեռնարկողները և
չաճախ այնպիսի անյայտ խոււրից ու վատ անցեալով, որ
միանգամայն անսպասելի է:

Տխուր համբաւ ունեցող մի քնաանիքի դաւակ էր 18 տա-
րեկան Աբրամ Կապարուկիանը, նրա հայրը թուրք սրճարաննե-
րի կապարուկն էր—ծաղրամուն. մեծ եղբայրը մի կատարեալ
սրբիկա էր, որին և զո՞ն էր գնացել: Ենորճիւ քնաանիքի նա գտ-
նւում էր մի վատ ճանապարհի վրա:

Ահա վատ ճանապարհի վրա գտնուող այդ տղան, իր ժողո-
վրդի կրիտիկ բոլէում ուշաբերում է, մի բոլէ մտնում է իր
քնաանիքը, իր ապրած մթնոլորտը և վերցնելով նաւթն ու
լուցկին նետում է առաջ: Սկսում է նախօրօք ծրագրւած հա-
վազարկերը տղաների կողմից, սրան հետեւում են համադարկեր-
խանի վերին յարկի պատահաններից և համադարկերի ուսու-

լող պնդակներն այս ժխորի տակ նա կատարում է իր գործը և անվտանգ վերադառնում է:

Մի քանի բուպէից յետոյ բարձրացան հրեղէն լեզուները, հրդեհը արագ կերպով բռնեց ամբողջ շէնքը, շիրթ ընկաւ այնտեղ եղող զինւորներն ու քիւրդերն մէջ, և նրանք գլուխ կորցրած փրկութիւն որոնեցին փախուստի մէջ: Մէկ ժամից յետոյ ամբողջ շէնքը արդէն վառոււմ էր և ամեն ինչ լափող կրակը, փչող քամու ուժով, անցաւ զիմացը գտնուող Մէարիֆի (տաճիկ գալըոցապատկան) խանութների շարքը ու սկսեց նրանց ևս լափել ու ոչնչացնել:

Իւ մինչդեռ Ճիտէշեանի խանը իբր մի վիթխարի խարոյկ լուսաւորում էր շրջակայքը, իր վրա գրաւելով ամենքի ուշադրութիւնը, շրջանապետը հրձիգների խմբով մի նոր պտոյտ գործեց և դուրս եկաւ Թէրզիրաշեան-Փիրուսիանի խանի հիւսիս արեւելեան անկիւնի դիմաց: Այստեղ էլ առաջ եկաւ Արամ կապարուկեանը նաւթի ու լուցկիի պաշարով և սլացաւ դէպի մեծ շէնքը: Նա կանգ առաւ արեւելեան շարքի դռներից մէկի առաջ, դա կարանթինայի վարչութեան դուռն էր, փորձեց հրդեհել, մէկ երկու, բայց այս անգամ անյաջող անցաւ: Այդ միջոցին յայտնուեցին երկու այլ խիզախ անձեր, զրանք երկու յաղթանգամ եզրայրներ էին՝ մականունները կողատ (ուժեղ), անունները Կարապետ և Մարտիրոս Մուրատեաններ: Գրանք գինւած՝ մէկը նաւթի պաշարով, միւսը կացինով մօտեցան նոյն շարքի վրա գտնուող փօստ-հեռագրատան դռանը, երկաթէ բազուկների ուժեղ հարածների տակ մի քանի բուպէի մէջ խորտակեց փակած դուռը, երկու եզրայրները ներս մտան, նաւթը շող աւին վերին յարկը տանող փայտէ սանդուխտների վրա և վառւած լուցկին մօտեցնելով հեռացան: Հրդեհը բորբոքեց մի անօրինակ արագութեամբ, շոք տախտակամանները մի կողից, այդ գիշերաքամին միւս կողմից իրենց աւերիչ գործը տեսան: Վիթխարի շէնքը իր մէջ պարունակող խանութներով, պահեստատեղիներով, գրասենեակներով ու կառավարական հիմնարկութիւններով մէկտեղ բոցավառեց՝ լուսաւորելով ամբողջ քաղաքը և նրա մէջ եղող զինւորներն ու քիւրդերը նոյնպէս փախան:

Գլորում էր արդէն կէս գիշերը, հրդեհածիգները անցան դէպի ոստիկանատունը: Նրանք արդէն ձեռք էին բերել որոշ

փորձառութիւն, թէ ինչպէս պէտք էր զբաղեցնել թշնամունք գիրքում եղող զինւորներին, և օգտելով դրանից, հրդեհել գիրքը, ուստի այստեղ հեղեմման գործը աւելի ևս արագ կատարուեց:

Ոստիկանատան շէնքը դռներ ունէր թէ հարաւային և թէ հիւսիսային կողմերի վրա. որոշուեց հրդեհել շէնքը հիւսիսային դռներից. այդ տեղի դռներին մօտեցաւ նոյն Արամ Կապարուկեանը և կարողացաւ համազարկերի անց որոտների տակ հրդեհել երկու դռներ միանգամից: Մի փոքր անց նոյն ձևի խարոյկի փոխուեց նաև ոստիկանատունը և այդտեղի կուողները նոյնպէս զիմեցին փախուստի:

Մինչ այս, գիշերը գլորում էր արագօրէն, առաւօտեան առաջին նշանները սկսում էին երևալ, հետքերը թաղցնել անկարելի էր այլևս և զինարանի հրդեհելը յետաձգուեց: Սակայն առանց դրա էլ այդ գիշեր անազին գործ էր կատարուել. աւելի շատ դործ, քան նոյնիսկ ամբողջ նախընթաց օրը. երեք մեծ տներ, թշնամու երեք ուժեղ գիրքեր այլևս չկային: Թէքիալիֆի հարպիէի գիրքը ազատուել էր վտանգից, կուի առաջին գիշերուա մեծ ծրագիրը իրագործուած էր:

Երկրորդ օրուա կռիւը վերսկսուեց վաղ առաւօտից զարնուրիլի թափով, կուի նշանը տեսցին ասճիկները. ըստ երևոյթին կառավարական հիմնարկութիւնների հրդեհումը Ձէւդէտի մէջ Պայրոյթի փոթորիկ էր առաջացրել և նրա խիստ հրամանների տակ ստակալի կրակի հետ միասին բոլոր կողմերից բուռն յարձակման ու խուժման կատաղի փորձեր էին լինում, որոնք սակայն յետ էին մղում կորուստներով:

Տաճիկները վստահ իրենց ուժերի վրա և արհամարելով հայերի զինական կարողութիւնը, յարձակումներ կատարում էին յաճախ առանց մտածելու. իսկ հայերը, որոնք մէկ օր առաջ դեռ անփորձութեան ու վախի տակ անպատահութեամբ էին կրուում, այսօր նրանց դնդակները սուլում էին անվախ ու անշեղ և թշնամին յետ էր փախչում դիակներ թողնելով փողոցների մէջ:

Այս երևոյթը աւելի նկատելի էր թէքիալիֆի-հարպիէի շրջանում, ուր թշնամին այդ օր տեսց 30-ի չափ զոհ, որոնց մէջ էին միլիտաների հարիւրապետ Իսմայիլ Ալթայ օղլին և կօմիսար Մօլլա Կամալին: Թէքիալիֆի-հարպիէի գիրքապահ աղա-

ների գործնէութիւնը այդ օր այնքան ուժեղ ու զնուական էր, որ դիմաց դանուդ ազգային խանութների շարքում ամբացած զինւորները անկարող լինելով դիմադրել՝ հրդեհեցին խանութների այդ շարքը և հետացան:

Երկրորդ օրւայ կռիւը կատաղի բնոյթ կրեց նաև միւս շրջաններում. Մմբարի տակի շրջանում թշնամին փորձեց Բազկանց փողոցով ներս խուժել հայերի թաղը: Մի փոքրիկ սոււն, որը պաշտպանում էր յիշեալ փողոցի մուտքը, կոչւում էր Սատանի դիրք, ահա այս դիրքից երկու տղաներ՝ շաշտօցի Օհաննէսը իր ընկերով մէն մենակ յետ քշեցին թշնամուն, չոյց սալով քաջութեան օրինակներ:

Յոմաա կռիւներ շարունակւեցին նաև Թաւրիզի գոսն շրջանում: Մարութեանի դիրքը, առաջին օրւա սաստիկութեամբ ամբողջ օրը կրեց իր վրա գնդակների տարափ ու թնդանօթների սուսերն, և չը նայած որ վերի հարկը գնալով աւերւում էր, բայց և այնպէս դիրքը շարունակւում էր իր գոյութիւնը և տղաները քաջարար դիմադրում էին թշնամուն:

Երկրորդ օրւա կատաղի կռիւը վերջացաւ երկու հրդեհումներով. երկուսն էլ ի նպաստ հայերի:

Թաւրիզի գոսն շրջանում Շահէն ազայի դիրքի դիմաց, գտնւում էր կառավարութեան հին փոստատունը, այս ծառայում էր տաճիկների համար իբրև դիրք: Երբ մութը պատեց Շահէն ազայի դիրքի տղաները փորձեցին փոստատունը դբաւել, որոշած էր դիրքը գրաւել յարձակումով. տղաները մօտեցան դռանը և ուղեցին դուռը կոտրել, տաճիկները սկզբում փորձեցին դիմադրել, սակայն երբ նկատեցին իրենց անզօրութիւնը, հրդեհեցին դուռը ու հետացան:

Երկրորդ հրդեհումը տեղի ունեցաւ Թէքեալիֆի-հարպիէի շրջանում, սա առաջին օրւայ հրդեհումների վերջաբանն էր: Կառավարութեան գինարանը դեռ մնում էր և նրա առաջ ձգւող քարաշարի յետեից ամենավարձատա կառոյ զինւորները շարունակ կրակ էին անդում Թէքեալիֆի-հարպիէի վրա: Երբ մութը պատեց, հրդեհաձիգների խումբը ոտակականապէս փրատակների միջով գգուշութեամբ մօտեցաւ գինարանին և մէկէն կրակ բացին այստեղ եզոյ զինւորների վրա: Ծեղապոյ կրակը այնպէս անսպասելի էր ու շեշտակի, որ զինւորները գլուխ կորցրած փա-

Քեան: Ահա այդ քո գէին նախի պաշարով մօտեցաւ գինարանին առաջին օրւա հերոսը — Արամ կապարուկեան և դռնէջը հրդեհեցող վերադարձաւ: Զինարանը բռնկեց և կուր երկրորդ գիշերը լուսաւորեց կառավարութեան մի սյլ շէնքի բոցերով:

Երրորդ, չորրորդ, հինգերորդ և վեցերորդ օրերուս կուր շարունակեց նոյն սասակութեամբ, հրացանաձգութիւնն ու ամփակոթութիւնը սկսուս էր վաղ առաւօտից և դադրուս էր ուշ գիշերին: Տաճիկները կրակուս էին անհաշիւ ու անխնայ, որոնք փամփուշտների փնայտութիւն սասաճ բանը չգիտէին ինչ է. կըրակուս էին որքան հնարաւոր էր որքան կրակողի ձեռքը ընդունակ էր դարձնելու հրացանի սուր: Բացի այդ, անընդհատ գործուս էին եօթ թնդանօթներ, որոնցից 3-ը զուս էին քերպի գիրքերի վրա, իսկ չորս նոր ձեի թնդանօթներ զուս էին Քաղաքի պարիսպից դուրս զանազան գիրքերուս: Այս վերջինները փոխադրուս էին մէկ այս և մէկ այն տեղ, ոմբակոծուս էին երբեմն այս երբեմն այն գիրքերի և յաճախ երկու երեք թնթանօթի կրակը դարձնուս էին միևնոյն գիրքի վրա: Այսպիսի գիրքեր առանձնապէս հանգիստանուս էին Մարութեանինը, Թաւրիդի զուս շրջանուս, և Թէքեալիֆի-հարպիէի գիրքը համանուն շրջանուս: Եւ հրացանաձգութեան հետ անընդհատ ամբողջ օրերով գործուս էին այդ եօթ թնդանօթները:

Այլ էր հայերի զրութիւնը, նրանք գտնուս էին պաշարուս Վիճակի մէջ. դրսի հետ յարաբերութիւնը բոլորովին խզուս էր, ուրիշ տեղից ոսղմամթերք ստանալու յոյս ամենեին չուսէին, այդ պատճառով փամփուշտ ինայիլու հարցը առաջին իսկ օրից գարձաւ ամէնքի համար օրէնք:

— Երեկոյեան հաշիւ պիտի պահանջեմ թէ ձեզանից ոմ քանի փամփուշտ է կրակել և քանի թշնամի է սպանել:

Ահա այս խօսքերը անընդհատ կրկնուս էին շրջանապետները իրենց ձեռքի տակ եղող գինարաներին ու աւելացնուս:

— Առանց նպասակի ոչ մի փամփուշտ չը կրակել:

Գրութիւնը այսպէս լինելով համկանալի է որ թշնամու հարիւրաւոր կրակներին պատասխանուս էին տաննակ կրակներով: Բայց չը նայաճ այս բոլորին հայերը պատուով դիմադրուս էին թշնամուն. և եթէ մի քանի տեղերուս նեղուս էին

թշնամուց, մի երկու տեղում էլ նեղում էին թշնամուն:

Այսպէս, օրինակ, բնդհարման երրորդ օրում կռիւը կատարի բնոյթ ստացաւ. Թաւրիզի գոան շրջանում գանուղ կախըջի ջամիի շուրջը, գա թշնամու գիրք էր և նրա մօտ գրում էր մի թեղանօթ, որի կրակից մեծապէս նեղում էին Շայէն աղաջի և Լազ-Ալիի գիրքերը: Այս երկու գիրքի աղաները ներսաբար նետեցին փողոց, հասան մզկիթի գոանը և գուռը հրդեհեցին. հրդեհը տարածեց մզկիթի մէջ, այստեղից տաճիկները փախան՝ իրենց հետ տանելով նաև թեղանօթը: Ասրձակման ժամանակ աղաները տեղին մէկ գոհ, փողոցի մէջ զարկեց թաւրէզի կարպետը 28 տարեկան անգրագէտ մի քաջ երիտասարդ: Ականատեսները վկայութեամբ այդ աղան մեռաւ հայ ազգիկ երգերը երգելով և բնկերներին իրախուսանքներ կարդալով:

Չորրորդ օրը կռիւ կատարի ասպարէզ զարծաւ Ամբարի տակի շրջանը: Այս շրջանում գանուղ Աթաշկառեանի և կարագեօզի գիրքերը ենթարկեցին սոսկալի յարձակումների, թշնամին մեծ բազմութեամբ գրոհ էր տալիս դէպի այդ գիրքերը ու նորից յիս քաշում: կռիւը այստեղ շարունակեց երկար, որի միջոցին աղաները ունեցան մէկ գոհ, բայց լաւ գոհ. կարաւեանի գիրքի աղաներից մէկը— քաջասիրտ վարդան Տէր-Վարդանեանը նպատակ գնելով օգնութեան հասնել նեղն ընկած կարագեօզի գիրքին, նետեց գիրքից գուրս և Ամբարի փողոցով փորձեց արագ անցնել, բայց այդտեղ էլ գնդակահար եղաւ ու ընկաւ: Վարդանի մահը յուսահատութիւն ձգեց աղաների վրա և նրանք մինչև ժամի 4-ը դիմադրելով երկու գիրքերն էլ հրդեհեցին ու յիս քաշեցին: Այդ բաւական չէ, թշնամին սիրտ առաւ և փորձեց առաջանալ ու գրաւել ամբարը, որը, ինչպէս տեսանք, թաղամասի վրա իշխող մի գիրք էր. ամբարի գրաւելը տաճիկների համար կարեւոր հարց էր, ուստի նրանք ջանք չէին ինայում նրան հասնելու, բայց շուտով աղաներին օգնութեան հասաւ գինուորական մարմինը և տաճիկները յիս քաշեցին:

Աթաշկառեանի և կարագեօզի գիրքերի հրդեհումը ծանր տպաւորութիւն գործեց զինք մարմնի վրա, ուստի այդ օր կատարեց կուռղ ուժերի տեղափոխութիւններ: Ամբարի շրջանը ուղարկեցին մի երկու կարող ուժեր, որից յետոյ այդ շրջանը

ապահովուեց:

Հինգերորդ օրը կոխը մեծ չափերի հասաւ դարձեալ Թաւրիզի դասն շրջանում: Մարութեանի զիրքը հինգ օր շարունակ սմբակսուում էր, նրա վերին յարկը ընդորովին աւերել էր, տղաները իջել էին տակի յարկը և ծանր պայմանների մէջ շարունակում էին զիրքը պահել. սակայն գրութիւնը անյուսալի էր:

Սրանից զատ, տաճիկները դէպի բերդ ձգող պարիսպը ծակել էին ու ներս մտել: այստեղ զիրքեր չը կային, այդ պատճառով նրանք իրենց ուշադրութիւնը դարձրել էին այս կէտի վրա: Լուրը գնաց զին. մարմին, և նա օգնութեան հասաւ այն ժամանակ, երբ 20-ի չափ զինւորներ քիչ էր մնում պարիսպին մօտիկ գտնուող Աբրոյի տունը գրաւէին: Սկսեց ուժեղ կրակ. զինւորները զիմադրել չը կարողացան և փախան, թողնելով երկու զիակ: Այս միջոցին Մարութեանի զիրքը յուսահատական կոխ էր մղում՝ հաղիւ կանգնեցնելով թշնամու գրոհը: Շուտով տղաները համողեցին, որ զիմադրել այդտեղից այլևս անկարելի է, ուստի հրդեհեցին զիրքը ու յետ քաշեցին, Մարութեանի զիրքի փոխարէն հաստատելով երկու նոր զիրքեր, որոնք և պահեցին իրենց գոյութիւնը մինչև կուր վերջը: Այս երկուսը Աբրոյի և Շշիտեանի զիրքերն էին:

Կուր վեցերորդ օրը նշանաւոր դարձաւ մի մեծ հրդեհումով, որը տեղի ունեցաւ խանի տակի շրջանում: Շուկայի արեւելեան մասում դեռ ևս կանգուն մնում էր Միրզախանեանների խանը՝ երկշարք փայտեա խանութներ, ծածկւած երկարուկ միջանցքով: Այս խանը իրբև զիրք հայերի ձեռքին էր և վեց օր շարունակ զիմադրում էր թշնամուն. ահա այս զիրքը յաջողեցրեց թշնամին հրդեհել. զուր անցաւ տղաների ջանքը, հրդեհը հանգցնել անկարելի եղաւ, խանը բռնկեց. տղաները յետ քաշեցին ու գրաւեցին երկու նոր զիրքեր. այդ զիրքերն էին Բօհախանի գլուխը և Սազմալուի խանը:

Միրզախանեանների խանի հրդեհումից յետոյ այլևս խոշոր հրդեհումներ տեղի չունեցան. տեղի չունեցան նոյնպէս զիրքային նշանաւոր գրաւումներ կամ պարպումներ, պաշտպանութեան զիծը, այն զիծը, որը մենք տեսանք, մնաց անփոփոխ և կոխը ստացաւ կայուն ու տեւական բնոյթ:

Այս դժւարին շրջանն անցաւ, կոխն ընդունեց կայուն ու

տեական բնոյթ, և Զին. մարմինը իր մի կոչով եկաւ այդ փաստը արձանագրելու: Ահա այդ կոչը:

Զինուոր քնկերներ.

Վեցերորդ օրն է ահա որ կուրծքերնիս թշնամուն տւած՝ արիարար կը մարտնչենք. թնդանօթներ և հագարաւոր հրացաններ ունեցող թշնամին անգօր եղաւ ճեղքել մեզ: Մենք, որ որոշած ենք մեր կեանքը, մեր պատիւը և իրաւունքը հերոսութեամբ պաշտպանել, դեռ շատ անակընկալներու ալ սպասելու ենք: Զէւղէտեան մոհմակը իր զրոհներով, իր յարձակողականներով խայտառակւած է ցարդ ծանր կորուստներով, շշմեցուցիչ հարւածներով: Փաստը ամենուր աչքի առջևն է:

Զինուորներ, սոյն պայմաններու մէջ մեր գիմադրութիւնը երկարու բեղուն լինելու համար կը յորդորենք բոլորին՝ լինելու ստան, շշմեթուող, կարգապահ ու խնայող: Ահա ասոնք են որ մեր գիմադրութիւնը պիտի դարձնեն կանոնաւոր, արժէքաւոր ու հպարտ:

Զինուորներ, ինչպէս միշտ ըսած ենք, այժմ ալ կը կրկնենք խնայողութիւն և խնայողութիւն: Թանկ պահեցէք ձեր կեանքը, խնայեցէք փամփուշտ և զէնք: Ահա կարևոր գործօններ, որով պիտի յարատեւ մեր գիմադրութիւնը. և որքան երկարի, այնքան յոյս և յաջողութիւն կաւելնաւ: Եղէք յանդուգն, խիզախ, բայց զգոյշ և կեանք խնայող: Ասոր հետ խնայեցէք փամփուշտ, փամփուշտ, փամփուշտ: Թող թշնամին վառէ, որքան կուզէ, բայց մենք լինինք քիչ պատասխանող, փամփուշտ պէտք է գտլոց օրերին: Ամէն մի փամփուշտ թշնամիին մէկ կեանքը արժենայ:

Հ. Յ. Գ. Քաղաքի Զին. Մարմին

Կուրի ստաջին վեց օրն անցաւ, դա ստաջին շրջանն էր: շրջան ուժերի շարեւելու, շրջան փորձաքարի և փորձաքար ոչ միայն հայերի, այլև տաճիկների համար: Տաճիկները վերջնապէս կանապէս համոզուեցին, որ բայա և սարուկ հայը այն վախկոտը՝ այն թուլամորթը չէ, որի հետ կարողանային թեզածին պէս վարուիլ: Իսկ հայերը ձեռք բերին փորձառութիւն և հաւատ դէպի իրենց կարող ուժերը:

Կուրի վեց օրը ցոյց տւեց, թէ ինչ դեր են խաղում գիրքե-

քը, պատնէշները և փոքրիկ բացածքները, և այստեղ էլ, ինչպէս Այգեհատանում կազմեցին ամրաշէն—ամալեաների խմբեր, որոնք շտապով հասնում էին կարիք եղած տեղը, նորոգում էին ուժերից վնասւած պատերը, կառուցում էին նոր պատնէշներ, փայտերով ամրացնում էին թափուղ առաստաղները և փողոցների մուտքերը փակում էին պատնէշներով: Այս աշխատանքների մէջ ինքնապաշտպանութեան գիմաձ հայը շատ ու շատ առաջ գնաց. վարպետները իւրացրին գիմացկանութեան պայմանները, բոլոր մարդիկ, նոյնիսկ կին ու երեխաներ թափուած գալիս էին իրենց ծառայութիւնը մատուցանելու ինքնապաշտպանութեան գործին, և մրջիւնի աշխատութեամբ մէկ ժամ առաջ թնդանօթի հարւածներից քանզւած պատը նորոգուած էր և դառնում նախկինից էլ ամուր ու հաստատուն:

Ահա այս միահամուռ աշխատանքի գործ դրած ջանքերի շնորհիւ հայերը անհամեմատ քիչ զոհեր ունեցան քան տաճիկները, աւելի կայուն հանդիսացան, քան կառավարութիւնը և կուէի ընդունակութեան հետ միասին ձեռք բերին բարոյական ուժ, այն է կորով, հաւատ և ոգևորութիւն:

Կորով, հաւատ և ոգևորութիւն Այգեհատանում, այդպեսով իր տեղում: Կորով, հաւատ և ոգևորութիւն նաև Քաղաքում: Ահա այս էր տրամադրութիւնը Վանի հայ ժողովրդի երկու մեկուսացած մասերում:

Ապա ինչպէս էր տրամադրութիւնը Վանի տաճիկ ժողովրդի, կառավարութեան և մասնաւորապէս այդ կառավարութեան ներկայացուցիչ—խարզախ Ջէւղէտի մէջ:

Այստեղ լքում և յուսահատութիւն էր տիրում, և այդ լքումը այնքան ուժեղ էր, որքան ոգևորութիւնը ուժեղ էր հայերի մէջ: Ջէւղէտը անկարողութեան ցասումն էր ապրում մի բուռն ժողովրդի հանդէպ. նա իր զինւորական կազմով, անսահման սպգամթերքով և թնդանօթներով հանդերձ տեսնում էր իր ծրագրի խորտակումը, — մի քանի օրւա մէջ Վանը սպանալանոց դարձնել: Եւ տեսնելով, որ հայերին ղէնքով ընկճելը այնքան էլ դիւրին չէ, դիմեց մի նոր խարզախ միջոցի՝ սկսելով Այգեհատանից:

Նախ նա փորձեց խարհրայութեամբ հայերին զինաթափանել: Ուստի խառնակաւ հիւպատոս Սպորտանին, որի անձնա-

կան քարեկամն էր, ուղղից երեք նամակ, որոնց մէջ յիշելով գաւառներում կատարւած դատումները և միաժամանակ հնազանդութիւն ցոյց տւող գիւղերի խաղաղ կենցաղը, որը գոյութիւն չունէր, նորից ու նորից առաջարկում էր հայերին գէնքիբը յանձնել և հնազանդել կառավարութեանը, հակառակ դէպքում սպառնում էր սպասւող զօրքերով ընդհանուր յարձակում գործել և քաղաքը աւերել: Եւ գրում էր այս Սպօրաօնին, համոզւած, որ նա կը կարգա հայերի մօտ իր նամակները:

Ահա այդ նամակները իրենց պատասխաններովուր յիշւած գէպքերը մեծ մասամբ խեղաթիւրւած են:

Սիրելի Սպօրաօն էֆ.

Խառվարարները, որոնք իրենց պատրաստութիւնները լրացնելու համար ձեռք գիւնցին երեք չորս օր ժամանակ շահելու նպատակով, վերջապէս արժանացան իրենց փափաքներուն: Երկուշաբթի դիշեր իրենց թևերուն վրա նշաններ կրող և մինչև առտու կրկեր երկող երիտասարդները Համիդիէյի զօրանոցին մէջ նահատակեցին պահակը, կարեցին թեղեփօնի թեղեր և յարձակելով Խաչ-փողոցի հեռագրատան վրայ՝ զրաւեցին ու զործի ըսկըսան: Արթուն կեցող մեր շուկաներն ալ ընկանաբար պատասխանեցին: Մէկ ժամ պահակներուն թոյլ չը տւի որ պատասխանեն: Վերջապէս նրր հասկցայ, թէ խառվութիւնը ընդհանուր է և Քաղաքամէջ Ասաջնորդարան գրկածս ուստիկաններուն վրայ կրակ կը բացւի, հրաման տւի: Ահա ամեն կողմ կոխ տեղի կունենայ: Անոնք որ պետութեան այսպիսի կարևոր պատերազմի մը մասնակցած ատեն դաւաճանեցին, անտարակոյս պիտի առնեն իրենց արժանի պատիժը: Քաղաքամէջ հաւաքւած զինւած գիւղացիները այրեցին բոլոր պաշտօնատուները և երէկ իրիկուն ալ շուկան: Ամեն տեսակ խտութիւն ցոյց կուտամ որպէսզի այս ոճրագործներէն և ոչ մէկը ազատւի: Միևնոյն վիճակ պիտի ունենան նաև այն անիժապարաներ, որոնք անամիթով Համիդիէ զօրանոց քանդելու համարձակեցան, և փառք Աստուծոյ անվնաս կերպով պայթող անամիթի առաջ բերած հրդեհի պատճառով մուղիք դարնելով ուրախութիւն յայտնեցին: Մեր գոյութեան դաւողները բնաւ տարակոյս չկայ որ պիտի ճգմախն: Շատ կը ցաւիմ որ գնդակ ինկած է ձեր տուն: Սակայն այդ պարա-

զան մէկ անիծեալ գործն է հայերու, որոնք աշխարհի տաջե
 քնքղինքնին իրաւացի ցոյց տալու համար հազար տեսակ
 սատանայութիւններ կը հնարեն: Ձեզի ծանօթ է՝ անգլիա-
 կան հիւպատոսարանի մէջ գանձող պահապաններէն զատ այդ
 կողմեր ջոկատներ չունէինք: Իսկ պաշարւած խեղճ պահապան-
 ները մինչ վերջ յարգանք ցոյց տւին ձեր դրօշակին:

Պահապաններէն մէկ երկու հոգի նահատակող ապստամբ-
 ները հիւպատոսարանն ալ վառեցին: Իրենց խելքով պիտի կրնա-
 յին օգուել անկէ: Կառավարութիւնը սեղմելու նպատակով իրենց
 դոյութիւնը վտանգի ենթարկող այս դաւաճանները կը խորհն
 թէ ասկէ պիտի կրնան օգուել և համոզւած են թէ բոլորն ալ
 գոհ են: Ձէնք բարձրացուցին և ահա կը տեսնէք որ կը շարու-
 նակւի ամբողջ սաստիկութեամբ: Եթէ կայ միջոց մը այս աղէ-
 տալի խռովութիւնը դադրեցնելու, այդ ալ բոլոր զէնքեր յանձ-
 նելով բացարձակ հնազանդութիւն յայտնելն է:

Ռուսերուն այսօր վաղ զարուն համոզւած, և թշնամու գոր-
 ծողութիւններ գիւրացնելու համար զէնքի վարող ոճրագործները
 թող պիտանան, որ ուսերու ոտքը անդամն ալ սահմանէն ներս
 չպիտի կոխէ: Կը ցաւիմ այն ժողովրդին վրայ, որ հարկադրւած
 պիտի միտաւի ասկէ: Ժամանակ չունենալու համար երկար բա-
 րակ բան մը չպիտի կրնամ գրել: Կուղես տեսնել ձեզ հետ,
 սակայն խորհելով որ հայեր ձեր կեանքին պիտի դաւեն և զօր-
 քին պիտի վերագրեն, յարմար կը տեսնեմ, որ ատօր չձեռնար-
 կւի: Կը խնդրեմ որ միշտ դրօշակ քաշէք, տեղի ունենալիք յար-
 ձակման ատեն պատուհաններէն ալ դրօշակ ցոյց տւէք: Ձեր
 տան տեղ ցոյց տրւած և բացատրւած է ջոկատներուն, բայց կը
 դնահատէք թէ կացութիւնը խառնակ ըլլալուն պատճառով ամեն
 կողմ աչքի դարնելու աստիճան դրօշակ երեցնել կարեւոր է, ո-
 րովհետեւ յարձակումը չափազանց բուռն և վճռական պիտի
 ըլլայ:

Կը խնդրեմ որ հիւպատոսարանի մէջ պաշտպանէք մէօսիօ
 Ալկարտին, Բէթիի տնօրէն և ներս մնացած մեր պաշտօնեաններ:
 Խռովարարներ առաջի զիշեր այրեցին: Հանրային պարտուց պաշ-
 տօնատուն, պանքան և բէժին, ու թէև ուսմբերով մինչև կառա-
 վարչատուն յարձակեցին, բայց հարկադրեցան գետնի վրա փո-
 լելով նահանջիլ: Հանրային պարտուց պաշտօնատան կրակ տըր-

լամ թան ձեռնարկ եղաւ փախցնել պանքայի դրամ արկղ, կա-
 բելի չեղաւ Սակայն դրամ արկղի մէջ բան մը չգտնուելուն համար
 մէջուիս Ալիարտին այս պատճառով մտահոգուելու չէ: Շատախի
 մէջ կառավարութեան վրա յարձակող և մեր ժանդարմները,
 պաշտօնեաները ու իսլամ ժողովուրդ սպաննող գաւաճաններու
 մեծ ժառը ջոկատներու կողմէ ոչնչացան: Եկեղեցիի և մէկ կը-
 կու տեղերու մէջ ամբաստանները պաշարուած են: Այսօր կապահա-
 թտոնց բոլորի արժանի պատիժ կրած ըլլալու լուրին: Պաշտակէն
 և Սարայէն առաջացող մեր ջոկատները ճամբաներ կտրող ազա-
 տամբներ ընկճելով կը մօտենան: Մօտերս զանոնք ճգմել կը
 յուսամ: Տիկիներուն յարգանք և շատ բարեկեր սիրելիս:

10 ապրիլ 334 կուսակալ Ճէւղէտ

Վանայ կուսակալ
 Նորին վսեմութեան Ճէւղէտ պէյին,
 Վսեմ տէր:

Պատիւ ունիմ հաստատելու ձեր երէկեան նամակը: Շատ
 կը ցաւիմ, որ ձեր վսեմութիւն այն համոզում գոյացուցած է, որ
 իբր կոմիտէի միջնորդութիւնը ստացած ըլլալով, նպատակ ունե-
 ցած ըլլամ անոր ժամանակ շահեցնել տալ: Կրնաք վստահ ըլլալ
 որ իմ գիմումներս միայն նպատակ ունէին ծառայութիւն մը
 ընել թէ կառավարութեան և թէ ժողովրդին՝ խափանելով, եթէ
 կարելի ըլլար, ներկայ դէպքերը:

Ձեր վսեմութեան հետ ունեցածս խօսակցութեան միջոցին
 շատ անգամ պատիւ ունեցայ մատնանշելու, թէ կրնան ցաւալի
 դէպքեր առջ գալ—ինչպէս որ պ. Սօրոսին իր նամակին մէջ
 կը յիշէ—միլիսներու անտակաւ վերաբերումէ մը, եթէ անոնք
 ձեր վսեմութեան տւած հրամանները կէտ առ կէտ գործադրելու
 անկարող են:

Սակայն, ես դեռ հաստատ համոզուած եմ, որ ձեր վսեմու-
 թեան մօտ 12 տարիէ ի վեր ճանչցած վիհանձն և մարդասէր
 զգացումներ շնորհիւ, պիտի կարենանք գտնալ համաձայնու-
 թեան գետին մը իրերու դրութիւնը փոխելու, և արգիլելու տ-
 րիւնհեղութիւնը: Վստահ եմ ձեր կարողութեան և մեծ փոճառու-
 թեան վրայ, թէ պիտի կրնաք գտնել և ընել այնպիսի առաջարկ
 մը, որ լաւ ընդունելութիւն պիտի գտնէ հայ տարրին կողմէ:

Գալով այն առաջարկին, որ կընէք հայերու գէնքերը յանձնելու և բոլորովին անձնատուր ըլլալու մասին, իմ կարծիքով, իրերու այս վիճակին մէջ, այդպիսի առաջարկ մը ապարդիւն պիտի մնայ:

Հայերը գէնքի կը գիմեն այն համոզումով, թէ կառավարութիւնը զինուորական հարցի պատրուարկով, կուզէ զիրենք անխտիր բնաջինջ ընել, և առանց սպասելու կամ յուսալու ուսերէն ոնէ օգնութիւն, հաստատ կերպով որոշած են պաշտպանել իրենց ընտանիքներուն կեանքերը:

Ես ալ ձեզի պէս, կը ցաւիմ անզիլական հիւպատոսարանի կործանման, ինչպէս նաև հոն մեհնող ժանդարմներու վրայ, սակայն իմ առած անձնական տեղեկութիւններու համաձայն, հոն գտնուող պահակները առաջին անգամ կրակ բացած են առանց յարձակում կրած ըլլալու:

Կը տեղեկացնեմ նաև ձեր վսեմութեան, որ թնդանօթի ումը մը հանդիպեցաւ ուսական հիւպատոսարանին և հոն պայթեցաւ: Տեղոյն ժանդարմները և գաւազները ստիպւած եղան անկէ քաշուելու: Պէտք եղած միջոցներ ձեռք առի, որ ոչ ոք այդ հիւպատոսարանը չը մտնէ: Հինգ գնդակ ալ իմ հիւպատոսարանիս հանդիպեցան, բայց, բարեբաղդաբար, միայն նիւթական փաստուի: գոնութեամբ իմացայ որ ձեր վսեմութիւնը պէտք եղած հրամաններ պիտի տայ, որ հիւպատոսարանիս ուղղութեամբ գնդակ և ումը չը նետուի:

Ձեր հրամաններու համաձայն հիւպատոսարանիս ամեն կողմերը զորոշակ զնել տի, որ յայտնի երևի: Պատիւ ունիմ ձեզ իմացնելու, որ հպատակներուս և պաշտպանեալներուս, ինչպէս նաև զանազան պաշտօնեաներու և իրենց ընտանիքներուն ապաստան տի, բայց ինչպէս որ ձեզ վսեմութեան ծանօթ է, հիւպատոսարանս ընդարձակ չըլլալով սպտիպւած եղայ տանս կից երկու ուրիշ տունի վարձել. պատիւ ունիմ իմացնելու ձեզ, թէ այդ շէնքերուն վրայ ալ զորոշակ պիտի քաշեմ:

Կը հաղորդեմ պ. Ալիօրտիին ինչ որ իր մասին գրած էիք: Ինքը ձեզ առանձին նամակ մը պիտի գրէ: Նկատի առնելով իմ տունս եղած խճողումը, զժւար է ինձ ապաստան տալ հոն և իրեն մօտ ապաստանած ընտանիքներուն, ուստի իրեն հետ ես ալ կը խնդրեմ ձեր վսեմութենէն, որ թոյլադրէք իրեն, որ իր

տան վրայ դրօշակ քաշէ իր և իր քով ապաստանածներուն պաշտպանութեան համար:

Պ. Լիմին տունս է: Հիւսէյին պէյ ձեզ արդէն գրած է, որ հիւպատոսարանս կը գտնւի ընտանիքին հետ: Հարկ գատեցի ապաստան առ և պաշտպանել զինքը, իր տանը ուժրակոծութենէն և հրդեհումէն վերջը:

Կը խնդրեմ ձեր վսեմութենէն որ պաշտպանէք Ռու ընտանիքը, ինչպէս նաև տիկին Տ. Սանֆօսը (Ֆրանսական նախկին հիւ գատոսին կին):

Ամերիկեան միսիօնը ինձ հաղորդեց ձեր նամակին պարունակութիւնը:

Նեղինակաւ որ աղբիւրներէ առած տեղեկութեանս համաձայն, հոն, ինչպէս նաև գերմանական շրջանակին մէջ, բնաւ զինեալ մարդ չկայ, այլ միայն կին, տղայ և հիւանդկաթ մարդիկ: Ինձի կը վստահացնեն, թէ ոչ մէկ գնդակ չէ նետուած այդ շրջանակներէն, կը խնդրեմ ուրեմն, որ պէտք եղած միջոցները ձեռք առնէք անոնց պաշտպանութեան համար:

Ոչ որ գտնելով որ յանձն առնէր ներկայս ձեզ բերելու, պարտաւորեցայ խնդրել Տօքթ. Աշրէն, որ զայն ձեզ հասցնէ ապաքինեալի մը միջոցով: Այս վերջինս իր կամքովն է որ քաղաք կիջնայ: Կը վստահացնեմ ձեզ որ այդ ապաքինեալին առաքումը նպատակ չունի ամերիկեան հիւանդանոցին մէջ հայ վերաւորներուն համար տեղ բանալ, ի հաստատութիւն խօսքիս կը խնդրեմ որ նամակաբերն վերադարձնէք, ինչպէս նաև, երէկ ձեզ զրկւած ապաքինեալները, ինչ որ ինձ մեծ հաճոյք պիտի պատճառէ. կընայ ձեր վսեմ. վստահ ըլլալ, որ ատոնց տեղերը հիւանդանոցին մէջ բաց են, և թէ միւս զինւորներու պէս պիտի խնամուին:

Թիւրիմացութիւններու տեղի չը տալու և ապաքինեալներու առաքումը զաղբեցնելու համար կը խնդրեմ ձեր վսեմութենէն, որ հաճիք ինձ ցուցնել միջոց մը իրեն հետ հաղորդակցելու համար:

Վանայ խալախան փոխ-գեր հիւպատոս

Իտալական հիւպատոս

Սպորտօն էֆ.

Չեք պատասխանը դարձանքս պատճառեց: Ես չըսի ձեզ թէ աշխատեցիրք ազատամբներուն ժամանակ շահել տալու համար: Ազատամբներ մեր միջև եղող հանգամանքէն օգտուելու համար ինքզինքնին հարստահարեալի տեղ զնկելով և հնազանդելնին յայտնելով՝ ուղեցին Էրեք օր անցունել, այսպէս ըսի ես: Ու որդարև այդպէս եղաւ: Այնուամենայնիւ, փառք տիրոջ իրենց ծրագիրներու մէջ չյտնողեցան: Այժմ մեզ կը բարդեցնեն: Սակայն բոլոր ձամբոսներ բանալ տիւ լեռները, կէտիկները բանողներու մեծ մասը Աստուծոյ շնորհիւ յաղթեցան և պատրճեցան: Կը յուսամ որ հոս ալ մօտ օրէն վերջ պիտի տամ խոսիւթեան:

Մինչև որ զինուած մարդոց հաւաքումը չտեսնելի, մեր թընդանօթաձիգները կրակ չը պիտի ընեն: Այդպէս հրաման ստացան և այդպէս ալ կընեն: Տէր և Տիկին Սանֆօռ կատարեալ հանգարտութեամբ և հանդստութեամբ իրենց տուները կը գտնուին: Կառավարութիւնը զիտէ իր պարտականութիւնը: Յաւարժանի է ձեր այս արտայայտութիւնը, թէ անոնց վրա յարձակում մը տեղի կունենար: Մինչև որ ազատամբներ բոլորն ալ իրենց զէնքերը յանձնելով բացարձակ հնազանդութիւն չը յայտնեն, հարկադրեալ եմ շարունակել պատիժի գործը:

Կառավարութիւնը խոստարարներու հետ պայմանադրութիւն, դաշնագրութիւն չի կրնար կնքել: Ատիկա կը զնահատէք հարկաւ: Բացի հիւպատոսարանէն ուրիշ տեղ զբօշակ բարձրացնել ընդունելի չէ: Այս բան յայտնեցէք ձեր դրացիներուն: Սէրս կը յայտնեմ:

Վան, 13 ապրիլ 334

Ջէւղէս

Վսեմ Տէր,

Պատիւ ունիմ հաստատելու ձեր տոջի օրւան նամակը: Անոր պարունակութիւնը քանի՜ մը անձնաւորութեանց տեղեկացնել օգտակար գատեցի:

Չեք վսեմութեան նամակէն կը հասկցիք, որ խաղաղ ազգարնակչութիւնը կառավարութեան պաշտպանութիւնը և բարեացակամութիւնը կը վայելէ. դժբաղդարար հոս հասած լուրի-

բը կը պատմեն խժգժութիւնները, որոնք ի գործ դրւած են գիւղերու մէջ անդէն ժողովրդի վրայ: Այս լուրերը հայ ժողովրդի վստահութիւնը բոլորովին խախտեցին, անոր մէջ այն համոզում գոյացնելով թէ կառավարութիւնը ընդհանուր ջարդերու ծրագիր մը ունի, և իրեն աւելի անձնապաշտպանութեան փարիլ տւին:

Իսլով ամերիկեան եկեղեցիին վրայ ընկած սուժերուն, ևս ինքս պարտք համարեցի անձամբ հաստատելու այդ, և տեսայ, որ ամերիկեան միախոնարներու ըսածները ճիշտ էին: Ձեր վստահութիւն կրնայ վստահ ըլլալ, որ այս վերջիններս բացարձակ չէզոքութիւն կը պահեն:

Վանայ իտալական փոխ-գեր հիւպատոս
Վան, 3 մայիս (ն. տ.) 1915 Տ. Զպօւտօնէ

Սպօրտօն էֆ.-ին.

Սուլթանի զահակալութեան առթիւ շնորհակալութիւն պարունակող գրութիւնը ստացայ: Ծնորհակալ եմ:

Պիթլիսէն, Կարկառէն յառաջացող մեր ջոկատները կը պատժեն ճամբաներ կտրող ապստամբները, իսկ հնազանդութիւն յայտնող գիւղացիները կը հովանաւորեն ու կը պաշտպանեն: Թիմարէն յառաջացող մեր ջոկատներն ալ Տիրամէրի մէջ հաւաքող ապստամբները ոչնչացնելէ ետք Ալբիւր գիւղը հասան: Ալբիւր գիւղը և շրջակայք գանձող քանի մը գիւղերու բնակիչները հնազանդութիւն յայտնելուն պատճառով հովանաւորեցան պայմանով որ իրենց գէնքերը յանձնեն և հոս հոն թափառող իրենց երիտասարդները զինւորութեան յանձնեն: Աւանուց ժողովուրդը կատարեալ հնազանդութեան մէջ գանձելուն համար շրտորհ և զիւրութիւններ կը տեսնեն կառավարութեան կողմէ: Սարայէն և Արճակէն եկող ուժերը կը պատժեն ապուշ ապստամբները, որոնք ճամբաներու մէջ խրամներ շինելով կաշխատին կարել անոնց ճամբան: Այսօր Տարժան-գիւղի և Կողպանից կողմեր գանձող ապստամբներն ալ իրենց պատիժը պիտի կրեն: Քաղաքամէջ հաւաքւած խռովարարներու մեծ մասը, որոնցմէ շատեր հասկցւած է, որ գիւղերէն հաւաքւած մարդիկ են, ընկճուեցան: Եկեղեցու, Առաջնորդարանի և բերդի տակի մէկ երկու տուններու մէջ ամբացածներու զործը այսօր վաղ կը վերջա-

նայ: Այդ դաւաճանները, որոնք հակառակ կրկին ու կրկին եղած զեկուցութիւններուն, շուտով սուս կուգայ պատասխանելով իրենց ընտանիք դուրս չհանեցին և հրապարակով յայտնեցին թէ թշնամուն օգնելու համար խռովութեան կը ձեռնարկեն, բնականաբար բոլորն ալ պիտի կրեն իրենց արժանի պատիժը: Ամերկացիներու եկեղեցիին սուսը զպչելու մասին եղած արտայայտութիւնը ուրիշ բան չէ, եթէ ոչ խռովարարներուն օգնելու համար ամերիկացի միսիոնարներու մէկ յերիւրանք՝ որուն, ջաւ ի սիրտ, չենք տարակուսեր: Կը տեսնենք որ կրակ կը բացւի Արարքի կողմէն և Սահակ-պէյի տունէն իսլամ թաղերը խուժելու աշխատող խռովարարներու դէմ: Այսու հանդերձ սուսերու գործողութիւնները զիւրացնելու համար խռովութիւն յարուցանող և թշնամու ժամանումին սպասելով հնազանդութիւն չյայտնող այս ոճրագործներու հանդէպ բնականաբար ընդհանուր յարձակում տեղի պիտի ունենայ. ըլլայ ամերիկեան, ըլլայ գերման որբանոց, ուր որ ալ աշխատին ամբանալ, այնտեղի վրայ կրակ պիտի բացւի և պիտի աշխատւի զանոնք յաղթել և պատժել: Աստուծոյ շնորհիւ այս խնդրին վերջ պիտի տրւի: Տիարպէքիբի մէջ շատ մը զէնքեր և պոմպոններ ձեռք բերւած են և ժողովուրդը հաւատարմութիւն յայտնելով՝ քոմիթաճիներ մատնանշած է, որուն վրա այդ շարագուշակ ոճրագործները ձերբակալւած ու բանդարկւած ըլլալով՝ խնդրը հանդարտութեամբ լուծել յաջողւած է:

Իսկ վանեցիները իրենց ամբողջ գոյութեամբ կաշխատին քոմիթաճիներու և մասնաւորապէս սուսերու փափաքներուն համար: Հետեւաբար բոլորն ալ պատիժի պիտի արժանանան: Քաղաքի զբաււած տուններու մէջ թնդանօթի կրակով կտոր կտոր եղած դիակներու տեսարանը բնականաբար բոլորիս ալ ջաւ կը պատճառէ: Սակայն կառավարութիւնը, որ կը տեսնէ թէ իր գոյութեան կը դաւեն, պարտաւոր է մինչև վերջ պայքարիլ, երբ ապստամբներ բացարձակ հնազանդութեան զիմում չկատարեն:

Հիմա Այգեստանի պահականոցէն կը տեղեկացուի, որ Նալբանդեաններու դէմ գտնուող տան մը վրայ օսմ. գրուակ բարձրացուելէն անմիջապէս ետք տունը հրդեհեցաւ: Այնպէս կենթադրեմ, որ այդ տան մէջ գտնուողներ հնազանդութիւն յայտնելուցած են, միայն թէ իրողութիւնը ապստամբներ իմացած են:

ու անմիջապէս տունը այրւեցաւ: Եթէ խնդիրը ենթադրածիս պէս է, դազան ապրտամբնների մէջ խաղաղութեան յոյս չկայ: Գրած էի թէ Ալկարտի էֆ.ն եթէ հնարաւորութիւն կունենայ թող ելլէ գայ: Պատասխան մը չառի: Իր գտնւած տունը վտանգաւոր է, որովհետեւ շուրջը շատ մը խռովարարներ հաւաքուած են: Ծնոր՝ ըրէք հաղորդելու իրեն, որ հոն չմնայ, եթէ չի կրնար այս կողմը անցնել, ձեր քով թող մնայ:

17 ապրիլ 331

Կուսակալ Ջէւզէտ

Իտալական հրապատուին ուղղւած այս նամակների հետ միաժամանակ Ջէւզէտը դիմեց մի այլ միջոցի, այն է, սովի մասնել հայերին

— Հարկաւոր են նոր սպառողներ, հարկաւոր է շրջակա գաւառների կին ու երեխաների բազմութիւնը քշել Այգեստան, որ եղած պաշարը մի քանի օրւա մէջ սպառւի և սով առաջանա,— մտածեց այս Ջէւզէտը և գործի անցաւ:

Եւ ահա գաւառներից սկսեցին թափել գալ մերկ, քաղցած և ջարդերի սարսափը ճաշակած կին ու երեխաների բազմութիւնը՝ տասնեակներով, հարիւրներով: Եկան ու եկան և բազմացրին սպառողների թիւը:

— Կուի առաջին օրերուն նպաստի համար դիմում ընողներու թիւը շատ քիչ էր: Հազիւ 4—5 օր անցած քանի մը հարիւր հոգիի նպաստ տալ պէտք եղաւ: Խնայողութիւնը առաջին պայմանն էր, այնչափ միայն պէտք էր տալ, որ նպաստեկալը անօթի չը մեռնի. որոշւեցաւ օրական մէկ հաց մէկ մարդուն: Օրէ օր կաւելնար նպաստեալներու թիւը անհամեմատ կերպով: 200-ը կըլար 400, յաջորդ օրը 800 հայն, տաս տասնուհինգ օր անցած էր, ահա սկսան ջարդէն ազատւած սովալլուկ կիներու տղաներու և ծերերու խումբերը երեւալ, որք ընդհանրապէս գիշերներ ճամբորդելով, առտու կանուխ կը մտնէին Այգեստան, միմիայն իրենց կեանքը ազատած ջարդարար թուրք և քիւրդ խուժանի ձեռքէն:

Յիշատակագրում է նպաստից յանձնաժողովի անդամներից Ա. Համբարեանը:

Գաւառներից Այգեստան խուժող քաղցած ժողովրդի հոգով



Չրջակայ գիւղերից քաղաք փախչող հոսյ բնասանիքներ

և պաշարի սպառման ինդիքը շուտով այնպէս զգալի դարձաւ, որ թէ Զինւորական մարմինը և թէ հայթայթիչ ու նպաստից յանձնածոցութեանը իրենց ուշադրութիւնը դարձրին այս ինդիքի վրա: Հարցը լուրջ էր. պէտք էր չափաւորուին մտցնել ոչ միայն ժողովրդի, այլև կուռղ տղաների մնունդի մէջ: Կարիքը հրամայողական էր:

Եւ ահա ապրիլ 12-ին լոյս տեսաւ Զինւորական մարմնի հետեւալ ազգը:

Բոլոր խմբերուն

Ընկերներ,

Շրջակայ գաւառներէն բաղմաթիւ գաղթականներ քաղաքս լեցւած են: Եթէ մեր ընկերները ուտեստի մէջ խնայող չըլլան շուտով մենք պիտի հանդիպինք մեր մեծագոյն թշնամիին—սովին:

Ընկերներ, խնայող եղէք,

Ասկէ ետք իւրաքանչիւր խումբ պարտաւոր է նշանակել իր

վատահելի և բարեխիղճ ընկերը, իբր իր խմբի լիազոր մատակարար, որը ամէն օր կհզր. Մատակարար յանձնախումբէն համեօտ չափով ուտեստ պիտի տանէ իր խումբին:

Երբ կողմէն այդ առթիւ լուրջ հսկողութիւններ պիտի ըլլան և անբարեխիղճները խստիւ պիտի պատժւին: Խումբին լիազոր մատակարարին անունն այսօր անմիջապէս զրկելու է կհզր. Մատակարար յանձնախումբին:

Չարտօնւած և գործ չունեցող մարդոց մուտքը դիւրբերուն մէջ բացարձակապէս արգելեցէք:

Չեր քով եղած բան ու փեսատները, եթէ պէտք չունիք անմիջապէս մեզի զրկեցէք:

12 ապրիլ

Զին. Մարմին

Մի օր յետոյ լոյս տեսաւ նպաստից յանձնաժողովի հետեւալ դիմումը:

Հայ ժողովրդին

Ժողովրդեան ներկա հացկարօտ վիճակին դարձան տանելու համար որոշուած է պատրաստի ցորեան, տարեկան, գարբի և ալ իւրիաւելորդ մաս մը գնել կանխիկով և հետեւալ գնելով. —

Ցորեն ըստ տեսակի՝ չափը 60—70 զրշ.: Տարեկան չափը 50: Գարբի չափը 40: ալիւրի լիտրը 10—14 զրշ.:

Կը խնդրուի ամէն անոնցմէ, որոնք կրնան իրենց ունեցածներէն մաս մը վաճառել և կամ որու քով պտուիլը գիտեն, հաճին մարդասիրաբար դիմել յանձնաժողովիս և արձանագրել առ, որ ամեն օր նիստ ունի ժամ 6—5 (2—10) բողոքականաց շրջանակ գեղարանի վերնահարկ, իր գրասենեակին մէջ:

13 ապրիլ

Նպաստից Յանձնաժողով

Եւ մինչդեռ ազգաբնակչութեան որչարի սպառումը չափի տակ գնելու և սնունդի գործը կարգաւորելու ջանքեր էին վճարուած, ժողովրդի մէջ նկատուեցին այլ երևոյթներ: Ապրիլի 10, 11, 12 նոյնիսկ 13-ին թշնամու կողմից շարունակուող յարձակումները բուսականաչափ թուլցան. հայ ժողովուրդը, նաև կառոյ պահները վարժուելով կախարար չափով հանդստութիւն ստացան. կարծես վտանգը անցաւ և տեղի ունեցան սովորական կենցաղին յատուկ մի բանի անսպասելի թելաներ. այսպէս լինում էր

որք թշնամու կողմից նկատուած էր թուլութիւն:

Բնորոշելու համար այդ օրերի անց ու դարձը, որը, կրկնուած ենք, հետեանք էր համեմատական խաղաղութեան, բերուած ենք այստեղ, Զին. մարմնի մի շարք ազդերը, որ լոյս տեսանայ այդ օրերում. ահա նրանք:

Ժողովուրդին

Սասաի կարգիչներք տուններ մտնել և թալան ընել, հակառակ վարւողները անմիջապէն մահուան պատժի պիտի ենթարկուին:

Ապրիլ 10

Զին. մարմին

Բոլոր խմբերուն

Նկատի ունենալով շատ մը անպատեհութիւններ, բացարձակապէս կարգիչներք ձեզի խմիչք գործածելը եթէ շրջակայ տուններէն պիտի կամ օդի առած էք, կամ գիտէք որ կայ. անմիջապէս պիտի շայթայթիչ Յանձնախումբին:

Ապրիլ 10

Զին. մարմին

Ազգարարութիւն

Կը յանձնարարենք մեր բոլոր զինւած ընկերներուն, որ զինւած վիճակի մէջ իրաւունք չունեն Ամերիկեան և Գերմանական շրջանակները մտնելու: Այս հրահանգին անաստողները խիստ պատժի պիտի ենթարկուին:

Ապրիլ 11

Զին. մարմին

Ազգարարութիւն

Կիմանանք որ կարգ մը անհատներ առանց մեր զիտութեան և յանձնարարութեան կը յանգանին ասոր անոր ձեռքէն զէնքեր անել:

Արդ, խտաի կը յայտարարենք, որ առանց մեր կնքւած յանձնարարականին ոչ մէկ անհատ և ոչ մէկ խումբ իրաւունք չունի զինաթմափ ընել զէնքի տէրերը: Միայն պէտք է մեզ հարկեն, թէ որոնք զէնք ունին, բայց զիրքի մէջ չեն դառնիր: ասդին անգին կը թափառին և կամ կը պահեն իրենց զէնքերը:

12 ապրիլ

Զին. մարմին

Կարևոր ազգ

Կը յայտարարենք ժողովրդեան, որ Զին. մարմնի զիտութեամբ միմիայն մատակարարութեան կհղը. Յանձնախումբն է որ իրաւասութիւն ունի պէտք տեսած ապրանքներ և ուտեստ-

դէններ վերցնել, հետևաբար անհատներուն կամ այդ իրաւունք չունեցող մարմիններուն ոչինչ տալու չէք:

13 ապրիլ

Ձին մարմին.

Շրջանապետներուն

Բոլոր խումբերու զինւորները առանց խմբապետի ասորա զբաժ արտօնագրին, իրաւունք չունին զիրքերէն դուրս հլլել, հա- կառակ պարագային զինաթափ պիտի ըլլան և ամենախիստ պատժի պիտի ենթարկուին:

15 ապրիլ

Ձին. մարմին

Համեմատական խաղաղութիւնը ատջ քաշեց և այլ երե- ւոյթներ, օրինակ, ժողովրդի մէջ սկսեցին տեղի ունենալ սովորական վէճեր, տուր ու առի խնդիրներ, յաճախ նոյնիսկ հին վէճեր ու հին պահանջներ, որոնցով զինւորական մարմինը ըզ- քաղուելու ժամանակ չունէր, ուստի կարիք զգացուեց հիմնել դա- տական մարմին, որի պաշտօնն էր լինելու քննել ու լուծել այդ խնդիրները:

Եւ ընտրուեց երեք հոգուց բաղկացած դատական մի մար- մին հետևեալ կազմով:

- | | | | |
|------------------|---|------------------|----------------|
| Նախագահ՝ | Յովհաննէս Կուլօղլիսիան | | |
| Անդամներ՝ | <table border="0"> <tr> <td>Ռուբէն Շատուրիան</td> </tr> <tr> <td>Հրանդ Կալիկեան</td> </tr> </table> | Ռուբէն Շատուրիան | Հրանդ Կալիկեան |
| Ռուբէն Շատուրիան | | | |
| Հրանդ Կալիկեան | | | |

Կարևոր ազգ

Ի գիտութիւն ժողովրդեան կը յայտնենք, որ Ազգ. Ինքնա- պաշտպանութեան կոմիտէի հովանաւորութեան տակ կազմուած է դատական մարմին մը, որու իրաւասութիւնն է քննել ու վճռել բոլոր այն զեղծումներն ու ոճիրները, որոնք զինւորական բը- նոյթ չունին:

Այս մասին ըլլալիք գիմումները պիտի ներկայացուին վերո- յիշեալ դատարանին, որ իր նիստերը կունենայ ամեն օր ժամը 9 կէսէն մինչև 2-ը (4 կէսէն մինչև 9) Շիրվանեան Կարապետի տունը:

Ապրիլ 16

Ձին. Մարմին

Դատական մարմնի հետ միաժամանակ կազմուեցին երկու- այլ մարմիններ, որոնք առնչութիւն ունէին դատական մարմնի հետ:

Դրանք էին.

1. Սատիկանական վարչութիւնը,

2. Քաղաքապետական և առողջապահական մարմինը:

Սատիկանական վարչութիւնը կազմւեց հետևեալ անձերից.
Սատիկանապետ՝ Կարապետ Այճեան

Անդամներ } Գրիգոր Զոնեան
 } Մաշատուր Զէնորեան

Նաև 40 սատիկաններ:

Քաղաքապետական և առողջապահական մարմինը կազմւեց
հետևեալ անձերից:

Քաղաքապետ՝ Պետրոս Մօզկան

Անդամներ } Մամբրէ Մկրեան
 } Յակոբ Եաղօեան
 } Ա. Կաթիք Տէր-Գասպարեան
 } Ռափայէլ Մէլիք-Աղամեան
 } Ղևոնդ Մանջեան

Այս մարմինները կազմելուց յետոյ, Զին. Մարմինը սատի-
կանական վարչութեանը ուղղեց մի հրահանգ, որը ընտրողում է
այդ օրերի անց ու դարձը և կարևոր խնդիրները: Ահա այդ հը-
րահանգը:

Ազգային խնդնապաշտպանութեան սատիկանական վարչու-
թեան:

Պարոններ.

Ներկայ պայմաններու մէջ, անհրաժեշտ է մեզ համար ու-
նենալ ներքին ներդաշնակութիւն մը անհամներու փոխադարձ
յարբերութեանց մէջ: Այս ներդաշնակութիւնը կարելի է երաշ-
խաւորել կանխելով և արգելելով ամեն տեսակի յանցանքների
երևումը:

Պարզ է, որ ժողովրդի ներկայ խնդումի մէջ մաքրութեան
մասին ցոյց տրւելիք ամենափոքր դանցառութիւնը անգամ պէտք
է նկատել կարևոր յանցանք մը, որովհետև այդ տեսակ ընթացք
մը կարող է վատնուել ժողովուրդի կեանքը: Իսկ միւս յանցանք-
ները, պարզ է, որ վերոյիշեալ նկատումով պարզապէս սծիրներ
կը դառնան և կարծանանան ամենախիստ պատիժի:

Ահա թէ ինչու Զին. Մարմինը կընդունի սատիկանական

վարչութեան կազմութեան անհրաժեշտութիւնը՝ հետեւեալ յան-
ցանքներու մասին լուրջ, շուտափոյթ և խիստ կարգադրութիւն-
ներ ընկելու և յարկին յանցաւորները իրենց սեղեկագորով զին-
ատեանին յանձնելու համար:

1. Թնդանօթներու սոււրբերէն աղէտներ առաջ չը գալու
համար, արգիլել փողոցի համախմբութիւններ:

2. Սուս լուրերու (ամեն կարգի լաւ և վատ) տարածողնե-
րու մասին խիստ քննութիւն և պատիժ:

3. Ոճիրները Զին. ատեանին զրկելու պայմանով, մնացեալ
յանցանքներու մասին քննութիւն և որոշում տալ:

4. Միևնոյն տան մէջ բնակող ընտանիքներու ներդաշնակ
կենցաղավարութիւնը ապահովելու համար միջոցներ ձեռք առ-
նել և ի հարկին պատիժներ տնօրինել, և գատարկ տուներու
ապահովութեանը հսկել:

5. Ուտեստի, հագուստի և այլնի մասին շահագործում ընող
ները պատժի ենթարկելով հանդերձ, արգիւնքը յայտնել պատ-
կանեալ յանձնախումբերուն:

Ընդհանուր գծերով ներկայացնելով ձեզ ձեր իրաւասութեան
սահմանները՝ կսպասենք աշխուրջ գործունէութեան:

18 ապրիլ 1915 Ազգ. ինքնապաշտպան Զին. մարմին

Մե այսպէս, մինչդեռ մի կողմից Այդեասանի հայ ժողո-
վուրդը շարունակում էր սկսած ինքնապաշտպանութեան մար-
տական գործը, միւս կողմից ձեռնարկում էր մարմիններ ստեղ-
ծել և իրաւակարգ սահմանել: Այս երկոյթը ինքնատիքեան գա-
լիս էր ապացուցելու, թէ ինչպէս հայ ժողովուրդի մէջ ամբանում
էր հաւատ դէպի իր ուժերը և թէ ինչպէս նա պաշարման վիճակի
մէջ էլ ընդունակ էր շինարար աշխատանքի, ինքնուրոյն կեանքի:

Երբ տեղի էին ունենում այսպիսի կարգադրութիւններ
ու գործեր, չը պիտի կարծել, որ կսիւրը դադարել էր. ոչ, վառ-
դը շարունակում էր խօսել, գնդակներն ու սոււրբերը շարունա-
կում էին տեղալ և աւերումներն ու սպանութիւնները կրկնում
էին ամեն օր, ամեն ժամ, միայն այն տարբերութեամբ, որ նը-
բունք առաջին մի քանի օրերի սաստկութիւնը կորցրել էին և
եթէ չէին էլ կորցրել, յամենայն դէպս առաջին օրերի ստրաս-

քը չէին գործում և հայ ժողովուրդը վարժել էր արդէն անա-
ւար որոտների ձայնին:

Թէ կուի երկրորդ շրջանը ինչպէս էր ընթանում, այդ քոյթ
սալու համար այստեղ կը բերենք զին. մարմնի այն աղբերը,
որոնք լոյս էին տեսնում յաջորդաբար: Ահա նրանք:

№ 9

ապրիլ 13

1. Երէկ իրիկուն Թիւթիւնճեան դիրքէն թուրք մը սպան-
ւած է:

2. Երէկ իրիկուն Արարուց կեդրոնը երէք նոր դիրքեր
գրաւեցինք և սպաննեցինք 4 թշնամի. գիշերը այրեցինք անոնց
յտառաջացած դիրքերը:

3. Ատնականից կամուրջին վրայ մերոնք կարճ կռիւէ մը
կտրեց թշնամիէն գրաւած են 8 սնտուկ ռազմամթերք:

4. Այսօր Շան թաղի մէջ թուրք մը զարկինք:

Զին. մարմին

№ 10

ապրիլ 13

1. Շարաթ օր Հաջի Պէքրի զաւայի առջև թուրք զին-
ւոր մը սպաննեցինք:

2. Երէկ Արարուց դիրքէն սպաննեցինք 2 թուրք զօրք:

3. Վզվզի դիրքէն թուրք մը սպաննեցինք:

4. Սաչ փողոցի դիրքէն թուրք մը սպաննեցինք:

5. Շահպէնդէրի դիրքէն երէկ թուրք մը, իսկ շարաթ օր
Զարեպան մը և միւլի մը սպաննեցինք:

6. Երէկ Այիճ օլու դիրքէն Հաջի Պէքրի զաւայի առջև
քորք մը սպաննեցինք:

Զին. մարմին

№ 11

ապրիլ 14

1. Երէկ Փոս թաղի դիրքէն միւլի մը սպաննեցինք:

2. Երէկ Շմառնեանի մեր դիրքէն միւլի մը սպաննեցինք:

3. Համուզ աղայի զաւայի աւերակներուն տակէն մինչև հի-
մալ գտնուած են տակաւին 6 չէթայի դիակներ:

4. Թիւթիւնճեան մեր դիրքին դէմ գտնուող Թոփուլ մօլա-

յի տունը, որ թուրքերու ամենաուժեղ դիրքերէն մէկն էր, այս
 դիշեր յաջողեցանք ստորերկրեայ ճամբայի և ռումբի միջոցով
 հրդեհել. փոխադարձաբար թուրքերն ալ ջանացած էին ստորեր-
 կրեայ ճամբով թիւթիւնճեան մեր դիրքը քանդել, բայց աստու
 որ... ուշացած էին: Այնտեղէն դրուեցինք 2 հրացան, 2 կա-
 սարթուրա և մեծ քանակութեամբ զանազան իրեղէններ:

5. Օթէյի մեր դիրքէն հինգշաբթի սպաննեցինք 3, ուրբաթ
 1, շաբաթ 1, կիրակի 1 թուրք զօրքեր, իսկ նալբանդեան դիր-
 քէն սպաննեցինք 1 զօրք երեքշաբթի, 1 ալ հինգշաբթի: Մեր
 կողմէ սպաննւած է միայն 11 տարեկան աղջիկ մը:

6. Արարքի մեր Ձին. Ա. շրջանի Դիւանը մեզ կը յայ-
 անէ.— Երէկ թշնամին ոչ մի շարժում ցոյց չէ տւած: Թուրք
 դիրքերու հրկիզման ծրագիրը յաջողութեամբ ի դուխ հանուած
 է: Անվեհեր հրձիգը ստացած է պատուոյ խաչ» մը, հրդեհը ա-
 սաջացած է մինչև քովի սրճարանը, որ թշնամու դիրքն էր:
 Ձին. մարմին

№ 12

Ապրիլ 15

Երէկ Շիրոյիան դիրքէն միւլի մը սպաննեցինք:

Երէկ խալախիան հիւպատոսին կողմէ կուսակալին նամակ
 տանող և ըստ օրինի ճերմակ դրօշակ ունեցող կին սուրճանդա-
 կը հայ խրամներէն դուրս ելլելուն պէս թուրքերու կողմէ զըն-
 դակահար եղաւ:

Այսօր թշնամին թնդանօթածգութեան փորձեր ըրաւ, մօտ
 քսան գնդակներ ձգելով Սահակ պէյի դիրքին վրայ. գնդակներ
 ինչպէս միշտ ոնէ վնաս չեն կրցած պատճառել: Մեր ընկերները
 կրկին կը շարունակեն ծաղրել թնդանօթի հարւածները: Այդ
 դիրքէն թուրք մը սպաննեցինք:

Ձին. Մարմին

Ապրիլի 16-ին կուլի տասնօրեակը բոլորեց և բոլորեց յաղ-
 թութիւններով ու մարտական կորովով. ժողովրդի տրամադրու-
 թիւնը բարձր էր, խուժման ու ջարդերի սարսափը մեծ չափով
 անցել էր և առաջին տասնօրեակի տրամադրութիւնները եկան
 արտայայտութիւն գտնելու դիււորական մարմնի հետեեալ կօշի-
 մէջ:

Տանօրեակ (ապրիլ 16)

Քաջքարը, զոր տաս օրէ ի վեր կը մղենք մեր անարգ թըր-
 նամու դէմ, մեր ազգային ազատագրութեան ամենէն հոյակապ,
 ամենէն նուիրական և ամենէն աւելի ժողովրդական պայքարն
 է: Թշնամին՝ դարանակալ ու գաւազիր, ջարդարար ու բարբա-
 րոս, արիւնկզակ ու վայրենի, կուզէ վերջ դնել մեր գոյութեան
 ազգային ու անհատական: Բայց մենք սրտչեցինք կուել, կուել
 մեր կեանքին համար, մեր ինչքին համար, մեր կրօնին համար,
 մեր պատւին համար, բնարարւած և առեանդւած մեր մայրե-
 րուն ու քոյրերուն համար, ամբողջ ազգային գոյութեան հա-
 մար: Մեր կուիր 600 տարւայ բարբարոս ու ջարդարար կառա-
 վարութեան դէմն է, մեր կուիր ոճրագործ, մարդկային ու քա-
 ղաքակիրթական բոլոր իրաւունքներու, թշնամի ձէլդէտներու
 դէմն է, որոնք ծարաւի հայ արեան ու արցունքին՝ ճիհատ քարո-
 զեցին արտաքին թշնամիներու դէմ, բայց սկսան ջարդել բոլոր
 բրիտանիաները, կին թէ երեխայ, մանուկ թէ ծեր, երիտասարդ
 թէ անգամալոյծ:

Վասպուրականցի հայեր.

Տասը օր եղաւ, որ մենք կը պայքարենք մեր անհատական
 ու ազգային բոլոր ճիգերով, պայքար մը, որ եղակի պիտի ըլլայ
 ոչ միայն հայ ազգային պատմութեան մէջ, այլ նաև համաշ-
 խարհային պատերազմի այս օրերուն պիտի արժանանայ քաղա-
 քակիրթ մարդկութեան սքանչացումին: Թող տեսնէ ամբողջ աշ-
 խարհը, թէ ինչպէս բուռ մը քաջեր, հայ ազգային ամենամեծ
 հերոսներ, անօրինակ խանդավառութեամբ կը մարտին յանուն
 ամենամեծ և ամենաբարձր արդարութեան:

Վրէժի աստուածը թող սաւառնի մեր կտրիճներու զլիւն
 վերև և թող խօսի մեր բոլորիս մէջ հերոսներու զիւցազնական
 ոգին:

Տասը օր բոլորեցինք: Յաղթականօրէն պատրասուինք նոր
 յաղթութիւններու և նոր պայքարներու:

Ձին. մարմին

Մայրիկի 16-ից մինչև 21-ը, որով բոլորում էր կուր երկ-
 րորը շրջանը: Ձին. մարմնի ծանուցումների մէջ պատկերանում
 էր այս կերպ:

№ 13

Ապրիլ 26

ՀրկիրուՄներ.— Մեր զինուորները կը շարունակեն իրենց զիշերային աշխատանքը: Այսպէս, այս զիշեր հայ հրձիգներ այրեցին Շան-Քաղի մէջ Պոճկէ Անմատենց տունը, որ թշնամու գիրքն էր:

Ա. Շըջանի (Արարք) տեղեկատու պիւանը կը ծանուցանէ, որ այս զիշեր ժամը 1-ին (8-ին) Հայերը յաջողեցան հրդեհել Արարուց մէրքէզը, որ թշնամու ամենակարեւոր զիրքերէն մէկն էր: Անվահներ հրձիգը իրեն ընկերացող տասնոցաւորին հետ անգլտանդ վերադարձած են իրենց զիրքերը: Հրդեհը կանգ առած է քովի սրճարանին քով:

Այս զիշեր մեր հրձիգները յաջողութեամբ այրեցին Քալ-փողոցի Սուլի տունը և ձեռք բերին Սաաջեանի գիրքը, որ ձրէկ թշնամու գիրքն էր:

Թշնամու կորուստներ.— Այս առաւօտ Շիրոսանենց զիրքէն մեր նշանաձիգ զինուորները կապանեն միւլի մը:

Շան-Քաղի Իսրոյի գիրքէն ալ միւլի մը զարկինք:

Թշնամու յարձակումը ետ մղւած.— Այսօր ժամ 10-ին (8-ին) բուռն թնդանօթածգութենէ և հրացանածգութենէ կաք թշնամի խուժանը փողոց դուրս գալով, յարձակում գործեց Սաւակ-պէյի գիրքին վրայ, բայց մեր զիրքերէն տեղացած կրակին վրայ երեք սպանեալ թողլով կը փախչի խուճապով. թնդանօթածգութիւնը կը շարունակուի բուռն կերպով:

Մովու վրայ շարժումներ.— Երէկ ծալու վրայ տեսնեցան 5 նաւեր, որոնք կերթային դէպի Դաւուան և 2 նաւեր, որոնք Չան կուգային:

Զին. մարմին

№ 14

Ապրիլ 17

Երէկ իրիկւան զէմ Լաւանդ-օղլիի տան առջև մեր զիրքէն արձակւած գնդակներէն միւլի մը սպանեցաւ:

Փոս-Քաղի մեր զիրքէն նետուած գնդակով միւլի մը սպաննեցինք: Թշնամիները յաջողեցան սպանուածի դիակը փախցնել:

Երէկ Սահակ-պէյի գիրքին վրայ թշնամու կատարած անժիա յարձակումէն ետք, թշնամիի թնդանօթի հարւածները

մեր վերի գիրքի մէկ մասը յաջողեցան քանդել, բայց այսօր կրկին քանդած գիրքերը աւելի հաստատուն կերպով նորոգւած են մեր կողմէ: Այս գիրքէն թուրք մը սպաննեցինք:

Աստուծոյ Սահակ-պէյի գիրքէն թուրք մը սպաննեցինք, ժամը 9-էն (2-էն) ի վեր Այգեստանի և մասնաւորապէս Սահակ-պէյի գիրքին վրայ սկսաւ ուժեղ թնդանօթածգութիւն մը, մեծ մասամբ աննպատակ ու անփաստ: Այս գիրքէն սպաննեցինք 1 թուրք թնդանօթածիգ և 3 զինուորներ, որոնք սպանւածի դիակը վերցնելու կուգային:

Այս առիտն լուսաբացին թշնամին բերդին վրայ գետեղած երկու թնդանօթներով բուն կրակ մը բացաւ Քաղաքամիջի վրայ, երկու ժամ յետոյ թնդանօթածգութիւնը դադրեցաւ:

Այսօր ատուան դէմ 200-ի շափ հեծեալ ու հետեակ թշնամիներ Հաճի-Պէքրի կշլայէն երեք ուղղութեամբ յառաջացան Շուշանից և Վարազի մեր գիրքերը: Մեր ընկերներու բացած քանի մը կրակին վրայ, թշնամին, քանի մը զոհեր տալով, խուճապի մասնւեցաւ և ամբողջութեամբ ետ քաշուեցաւ գէպի կշլան:

Չորովանց.— Այս գիշեր ժամը 10-ին (3-ին) մեր ընկերները մտան Չորովանց: Հոն գտած են թշնամիի հապճեպ փախուստէն թողած հրացան մը իր փամփուշաներով: Տուներու ապրանքները տեղն ու տեղ կը մնան, որոնք բոլորն ալ, ինչպէս նաև ցորենի հորեր գրաււած են: Մեր ընկերները հիմայ մասնակի կերպով պաշարած են Զբւանդանց թուրք գիւղը:

Գիշերւայ անունն է «Տանձ»:

Զին. մարմին

№ 15

Ապրիլ 19

Քանի մը օրէ ի վեր թշնամիի սկսած բուն թնդանօթածգութիւնը Սահակ-պէյի և թովմաղեանի մեր գիրքերուն վրայ ունէ փաստառաջ չեն բերած: Երէկ Քաղաքի և Այգեստանի վրայ թշնամին պարպեց 400-է աւելի զնդակներ, որոնց մեծ մասը ինկան Այգեստանի այս կամ այն կողմ և ժողովուրդէն քանի մը անձինք վնասուեցան: Եկտեմիլի է որ խելագար թշնամիի թնդանօթներ նպատակ ունին զարնելու աւելի ամերիկեան և գերմանական շէնքերուն, որոնցմէ բուն իսն իրենց նպատակին չասած են:

Նալբանդեանենց զիրքէն նեաւած քանի մը գնդակներ երէկ ծառ կտրող թուրք միլի մը սպաննեցին:

Երէկ զիշիր ժամը 1-ին (6-ին) առանց իր զիրքերէն դուրս ելլելու, չորս կողմէն թշնամին սկսաւ բուռն հրացանածգութեան մը մեր բոլոր զիրքերուն վրայ, գնդակները ոնէ մասս չեն տւած:

Այս առաւ ժամը 5-ին (10-ին) Շան-թաղի մեր զիրքերէն միլի մը սպաննեցինք:

Այսօր առտուրնէ թշնամին սկսաւ բուռն թնդանօթածգութեան թաշ-փողոցի մեր զիրքերու վրայ:

Ժամը 10-ին (3-ին) թշնամին կամեցաւ ը՛ գհանուր յարձակողականի ձեռնարկ մը ընել: Թաշ-փողոցի Օթէլի մեր զիրքէն գէպի արեմուտք յաջողեցաւ այրել հիւս նազարէթի խանութք և միւս կողմէ թնդանօթի անհաշիւ գնդակներ նետել: Մեր ընկերները պատասխանեցին, 8 միլի սպաննեցին և յաջողեցան մարել հրգեհր, որմէ ետք թշնամու կրակները դադրեցան: Միհնոյն ժամանակ Սղոյայէն յառաջացող 200-է աւելի հեծեալ և հետակ թշնամին յարձակում գործեց Թաղա-քեանէզի մեր բոլոր զիրքերուն վրայ: Հոն գետեղած էին նաև թնդանօթներ, երբ թշնամին սկսաւ մօտիկնալ, չորս կողմէն բացւած մեր կրակներուն վրայ թշնամին տւաւ 10-է աւելի սպաննալ և խուճապի մասնակիով այգիներու մէջէն փախուտ տւաւ: Հոն պայթեցուցինք երկու սուճեր, որոնք իրենց կարևոր արդիւնքը տւին: Մեղմէ մէկ վիրաւոր կայ միայն:

Կուռուպաշի կողմէ ալ հարիւրաւոր թշնամիներ յառաջացումի փորձեր կընեն գէպի Շուշանից մեր զիրքերը, նրանք բարձրն ալ ետ կը մղուին:

Ժամը 12-ին (5-ին) Չաչալ-միրգի և Տէր-Պաշատուրեանի մեր զիրքերէն մէկ մէկ միլի սպաննեցինք:

Երէկ Սահակ-պէլի և Փոս-թաղի մեր զիրքերէն մէկ մէկ միլի սպաննեցինք:

Բաղարամիջի վրայ թշնամին կը շարունակէ իր թնդանօթածգութիւնը: Այս գիշեր խիստ ուժեղ և տեսական հրացանածգութիւն մը տեսնեցաւ հոն:

Ա. շրջանի (Արարք) զիւանը կը տեղեկագրէ. — Թշնամին

կէս ժամէ աւել սկսեր է թնդանօթով ոմքակոծել Տէհէրցի Սարգիսի դիրքը՝ Կլոր-դարի այգիներէն: Մոռւմբերէն շատերը անսպասակ ցրւած են, իսկ հինգը հանդիպած են նոյն դիրքին և միայն արտաքին պատը ծակելով, միւս կողմ ինկած են, ոեկ վաս շունինք:

Թնդանօթածգութիւնը կը շարունակուի:

Վերջին լուր. — Շահալէնդէրի մեր դիրքէն Աօֆի - Տէհէրցի կողմէն յառաջացող թշնամին մեր կողմէ բացւած կրակներու վրայ 10—12 սպանեալ թողլով փախուստ տուաւ:

Սահակ-պէյի դիրքէն թուրքերը մէկ սպանեած տւին:

Զին. մարմին

№ 16

Ապրիլ 20

Երէկեայ ձախող փորձերէն վերջ թշնամին շարունակելով իր յարձակողականը՝ իրիկեան դէմ կրկին փոճեց Սալ-փոզոցի մեր Օթէլի դիրքը հրդեհել, բայց մեր ջանքերուն շնորհիւ հրդեհը մարած է ասանց ոեկ վաս հասցնելու մեղի: Շիրոյեան դիրքին վրայ թշնամին 8—10 սպանեալ տալով փախաւ:

Իրիկեան դէմ Տարաղիէրօնից դիրքէն Աւաղենց դիրքի առջև թուրք սպայ մը և զինուոր մը զարկինք, թշնամին զիակները շեշերով ներս քաշեց: Գիշերը համեմատաբար բոլոր դիրքերուն վրայ խաղաղ անցաւ:

Այս առտու թշնամին թոյլ կերևնար, թէև առտուան ժամը 10-ին (3-ին) ասեմները փորձեց թաղա-քեանհրէզի մեր դիրքերուն դէն յարձակում գործել, սակայն 4—6 սպանեալ տալով ետ մղւեցաւ:

Ա. շրջանակի (Արարք) տեղեկատու զիւանը կը ծանուցանէ, որ այս գիշեր ժամը 10-ին (3-ին) հայեր յաջողած են հրդեհել Արարուց մէրքէղի մնացեալ մասը, ինչպէս նաև քովի սրճարանը. հրձիգը և իրեն ընկերացողը անվնաս կերպով վերադարձած են իրնց դիրքերը:

Առաջի օր Սմասրեան դիրքէն 2 թուրք սպանեցինք:

Իսկ Հաջի Մալխասի դիրքէն ալ 1650 քայլի վրայ 3 գնդակով թուրք մը սպանեցինք:

Երէկ Շան-թաղի մեր դիրքէն 1, և Շահալէնդէրի դիրքէն 3 թուրքեր սպանեցինք:

Այս առաուն փոս-թագի մեր դիրքէն ձիաւոր մը զարկինք՝
թշնամին դիակը փախցուցած է:

Այսօր թագա-քեահըէդի դիրքէն միւր մը և քօշար զինւոր
մը զարկինք և գրաւեցինք 1 հրացան:

Նաև Տպագիւէրօյի վարի խրամներէն ձիաւոր զօրք մը և
Հիւսեանհնց աչդիի գլուխ միւր մը սպանեցինք:

Զին. մարմին

№ 17

Ապրիլ 21

Երէկ 30-ի չափ քիւրդեր Լաւանդ-օզլիի դիրք մտնել վար-
ձած տտեն՝ Եղեկեան մեր դիրքէն արձակած գնդակներով 3-ը
սպանեցան:

Արարք՝ Ա. շրջանակի դիւանը մեզ կը տեղեկացնէ. — Երէկ
իբրիւան ժամ 6-ի (11-ի) տտեններ թշնամին եկեղեցոյ գերեզ-
մանատան հարաւ-արեւելեան անկեան վրայ ծակ մը բանալով
սկսաւ սմբակոծել իր վազուց լքած դիրքերէն մէկը, սակայն
5 գնդակ ձգելէ յետոյ մեր ընկերներու հիշտ դիրքի ծակի վրայ
բացած կրակէն՝ բոլորովին լուցին: Գիշերք ժամ 9—3 (2—8)
թշնամին սկսաւ ընդհատ-ընդհատ սակայն բուռն հրաձանաձը-
ցութիւն մը հարաւային բոլոր դիրքերու վրայ, առանց երբէք
նպատակի ծառայելու: Մենք ունեցանք միայն մէկ վիրաւոր:

Այսօր ժամը 10-ին (3-ին) թշնամին սկսաւ թնդանօթով
սմբակոծել Ամիրխանհնց դիրքը, չորս գնդակներ ալ զարկին Շահ-
պէնդէրենց դիրքին: Գնդակները բոլորն ալ սայթափելի էին:
Մենք ունէ ֆուսս չունինք: Այդ ընդհարումներու ատեն թշնամին
թիւրոց 10—12 սպանեալներ՝ գետի մէջ և դիրքերու առջև:

Երէկ Սահակ պէյի և թովմաղեան դիրքերու վրայ ար-
ձակուեցան թնդանօթի 100 գնդակներ, որոնք ունէ ֆուսս չպատ-
հառեցին: Առաւան կողմ Սահակ պէյի դիրքէն սուսը մը նետե-
ցինք յիմացի այրած գիրքի մէջ, թշնամի պահակներու վրայ՝
Ռուսթի արդիւնքը աներկբայ է:

Երէկ գիշեր թշնամին ձեռնբակեց բուռն հրացանաձգու-
թեան մը մեր բոլոր դիրքերուն վրայ: Այս հրացանաձգութիւնը
ուէ նպատակ չունենալով, ցոյց տաւ թէ թշնամին կրակ կը նե-
քր վախէն:

Այսօր ժամը 11-ին (4-ին) թշնամին բուռն յարձակու-
մ

դորձեց Շահալէնդէրի դիրքին վրայ: Թնդանօթի հարւածներով քանդելէ վերջ ալգիի պատերը, քիւրդ պաշտպօզուք խուժանը ալգին խուժեց՝ դեկավարութեամբ սպայի մը, որ սուր քաշած կը յառաջանար: Մեր զինւորները սկսան դիրքէն կրակել յարձակող թաւանջիներու վրայ, որոնք կուելէ ետք քաշուցան ալգիէն: Այս յարձակման ատեն թշնամին թողուց մօտաւոր հաշիւով 15—20 սպանեալ: Ասկէ վերջ թշնամին սկսաւ Թնդանօթի և հրացանի հարւածներու ներքև իր դիակները տանել:

Թշնամին այսօր Թնդանօթը զետեղելով կաթովաբանի պատի ետև, սկսաւ ուժակոծել Փոս-թաղի վրդվրդի դիրքը: Նետեց 20-է աւելի պայթուցիկ գնդակներ և քանդեց վերի յարկի պատերը: Մեր զործաւորները արդէն սկսած են ամրացնել վարի պատերը՝ Թնդանօթի հարւածներուն զիմադրելու համար: Թնդանօթի երկու գնդակ ալ հանդիպած է պայթար Պաշկէ Մնօյի մեր դիրքին:

Քիւրդ խուժանը այսօր ալ յարձակեցաւ Հիւսեանենց ալգիի մեր դիրքերուն վրայ՝ գնդակի տեղատարափ մը թափելով: Մեր պահակները դաշտի բերնէն հակայարձակում մը գործեցին խուժանի վրայ: Ընդհարումին ատեն թշնամին թողուց 4 սպանեալ: Մենք ունեցանք մէկ երկու թիթև վիրաւորներ՝ զարնած Թոփրազ-գալէի զօրանոցէն:

Այսօր թշնամին բուռն յարձակում գործեց Մէօլաջի Մարգարենց դիրքի վրայ: Մեր զինւորները մեծ արագութեամբ ետ վզեցին թշնամի խուժանը, սպաննելով 8—10 հոգի, որոնցմէ երկուքի դիակը ինկաւ գետի ջուրերուն մէջ:

Երէկ իրիկուն Սմսարեանենց դիրքէն սպաննեցինք թուրք զինւոր մը, այն պահուն, երբ թշնամին Օթէլը վառելու ձախող փորձէն ետք սկսաւ փախչիլ:

Այսօր Թնդանօթը շարունակեց գնդակներ տեղացնել թողմագեանենց դիրքին վրայ:

S.—Պաշտաուրեանենց դիրքի վրայ ալ բուռն յարձակում տեղի ունեցաւ այսօր: Մեր թշնամու ուժեք 20 քայլ հեռաւորութեան վրայ դէմ դէմի եկան պատերուն ետև:

Զին. մարմին

Զին. որական մարմինը պարբերաբար արձանագրելով գեղ-

քերը կարճ, յաճախ սղմած նախադասութիւններով, շատ անցքեր թողնում էր չը լուսարանւած և շատ հերոսներ անյայտութեան մէջ, սակայն որոնց արժէր, նոյնիսկ անհրաժեշտ էր վերհանել և ուշադրութեան առարկայ դարձնել: Ուշադրութեան արժանի գործերից մէկը, որը տեղի ունեցաւ այդ հինգ օրերի ընթացքում՝ Արարոց հրապարակի ստիկանատան (մարքեազի) հրդեհումն էր:

Արարոց հրապարակի վրայ, ինչպէս տեսանք, կառավարութիւնը անաղին ուժ էր հաւաքել: Նախ այդ տեղի ստիկանատունը, որը գտնուում էր հրապարակի արեմտեան շարքում բաղկացած երկու յարկանի երկու կից տներից, տակի շարքը խանութներ, կուխ նախօրեակին ուժեղացւեց. երկրորդ, Արարոց գալրոցում, որը գտնուում էր հրապարակի հարաւային կողմում, եկեղեցու բակի մէջ, զօրքեր դրեցին. երրորդ, զօրքերի ձեռքն էր անցել հրապարակի հարաւային շարքի խանութները եկեղեցու հետ միասին. այդպիսով թշնամին ստիկանատանից, գալրոցից և եկեղեցու շրջապատից շարունակ կրակ էր տեղում: Արարոց հրապարակի զիրքերի վրայ և սպառնում էր ամբողջ թաղին:

Թշնամու այդ երեք զիրքերից աւելի անհանգստութիւն պատճառող, միևնոյն ժամանակ մօտիկ գտնուող հանդիսանում էր ստիկանատունը, սակայն որը զրոհով գրաւել զժաւր էր. նրան մէջտեղից վերցնել կարելի էր միայն հրդեհով, իսկ այդ իրադրութեան համար հարկաւոր էր մէկ խիզախ, մէկ քմրուտ ոգի, որպիսին տանկահայ իրականութիւնը շատ էր ծնել:

Իէմքի արտայայտութիւնով մեզմ Տիգրան Աքրահամեանը, աւելի ճիշտ Տիգրան վարժագետը մի ժամանակ Աւանց գիւղում վարում էր ուսուցչի պաշտօն: Տաճկական կարդերը հնարաւորութիւն չը տւին այդ մեզմ մարդուն ուսուցչի խաղաղ զբաղմունքով ապրել, նա հալածուեց ու ընկաւ չօրերը. մէկ օր այս, մէկ օր այնտեղ կը տեսնէիք այդ մարդուն: Երբեմն Պարսկաստան ու կովկաս կանցնէր իբրև սուրհանդակ—յեղափոխական, երբեմն գաւառները դուրս կը գար իբրև շրջիկ մանրալաճառ: Ու խաղաղ ուսուցչիչը հալածանքի երեսից ձգեց ընտանիքը, դարձաւ թափառաշրջիկ, անկայուն և իբրև մի ըմբոստացած ոգի եկաւ

ցանկ հալածիչ կառավարութեան տաջ իրրե աւերող մի ուժ:

— Ես պիտի հրդեհեմ մարքեազը, սասայ իր գիրքի տղաներին Տիգրան վարժապետը մի յանդուգն շեշտով ու անցաւ գործի:

Նա ցերեկները հանգստանում էր, իսկ գիշերները գործում. պատրաստում էր հրձիգութեան համար սնհրաժեշտ պարագաներ. կանեփի թելիկները մի խուրձ թաթախում էր նաւթի մէջ, և հէնց որ մուժը թանձրանում էր, շալակում էր կանեփը ու անհետանում: Նրան ուղեկցում էր մէկը, բայց այդ մէկը կանց էր առնում ոստիկանատան շէնքից մի փոքր հեռու ու գիտում էր շրջապատը:

Այսպիսի ցիշերային արշաւանք Տիգրան վարժապետը կատարեց չորս անգամ— ապրիլի 16-ից սկսած մինչև 19-ը, Ի հարկէ փորձը ամէն անգամ յաջող չէր անցնում, և նա ոստիկանատանը հրդեհեց մաս-մաս. վերջին ու մեծ հրդեհումը տեղի ունեցաւ ապրիլի 19-ին:»

Այդ օրը նա մօտեցաւ մնացած վերջին երկու խանութներին խիստ զգուշութեամբ, թշնամու կողմից հակողութիւնը մեծ էր. իջեցրեց շալակը, քրքրեց նաւթոտ կանեփի խուրձը, գիցեց երկու դոնիքի առաջ և լուցկին մօտեցրեց: Կանեփը վայրկենապէս բռնկեց և հրապարակը լուսաւորեց ինչպէս ցերեկ. այլևս թաղնուելու հնարաւորութիւն չը կար, նա նետեց ուղիղ հրապարակի մէջ, ինքն էլ շիմանալով թնշու, և սկսեց երգել ու փախչել: Բացեցին չորս կողմից համազարկեր, վզվզացին աջ ու ձախ գնդակները և այդ տարափի տակ յանդուգն հրդեհածիզը անփորձ իր գիրքը դարձաւ: Նա իր նպատակին հասաւ, ոստիկանատանը վառուում էր, նրա մէջ այլևս զօրքեր չը կային:

Ոստիկանատան հրդեհումը վերջարան հանդիտացաւ այն անկող կրակին, որին ենթարկեց Այգեստանը այդ օր:

Այդ օրւա կրակը շատ էր ահեղ, այնքան ահեղ, որ Զին. մարմինը կարևոր համարեց հետևեալ կողը հրատարակել:

Այգեստանի խումբերուն

Կուռղ բնկերներ.

Տասներեք օրւան խելագար յարձակումներէն յուսահատ թշնամին այսօր ամէն ճակատի վրայ փորձեց բնդհանուր յար-

ձակողականի, որը ստեղծայն ապացոյց եղաւ նախ իր անգորութեան և ապա մեր փառաւոր յաղթանակին: 40-է աւելի սպանեալ թողլով թշնամին ամէն տեղն ալ խուճապի մատնելով փախաւ՝ մեր զնդակներէն հալածական:

Թշնամիի վերջին և յուսահատ յարձակողականն է սա, որուն ամէն զնով դիմադրելու արհուրթիւնը ձեզ է վիճակւած:

Արի եղէք ընկերներ և ամենալուրջ հսկողութեամբ պահեցէք ձեր դիրքերը:

Կուի պարօպային նպատակին պարկէք միշտ, և խնայեցէք ձեր փամփուռաները:

19 ապրիլ

Հայ Ազգ. Ինքնապաշտ. Մարմին

Անա այսպէս էք բոլորում կուի երկրորդ շրջանը, մի շրջան, որի միջոցին պայքարող հայ ժողովուրդը նորանոր փոճառութիւններ էր ձեռք բերում:

Այստեղ մենք մի փոքր կընդհատենք մեր պատմութիւնը և կը դառնանք այն բանին, թէ ինչեր էին կատարում այդ ժամանակ կուի դաշտում, այն է կովկասի սահմանի վրայ և մասնաւորապէս Պարսկաստանում: Այս կարևոր է այն տեսակէտից, որ պատերազմի դաշտում կատարւած դէպքերը գերազանցօրէն անդրադառնում էին Վանի մէջ մղուող կռիւների ընթացքի ու տակտիկայի վրա:

Այն ժամանակ, երբ Վանի մէջ սկսւած կռիւը ապրում էր իր երկրորդ շրջանը, երբ հայ ժողովուրդը կուի առաջին վեց օրւա ընթացքում բռնելով փայլուն քննութիւն՝ թեակոխել էր տոկաւն, յարատե կուի շրջանը, երբ վերջապէս տաճիկ կառավարութիւնը յանձին նենդ Ձէւզէտի նորանոր միջոցներ էր յէզանում ընթատ ժողովուրդը բնկծել և Այդեաստանն ու Քաղաքը սպանդանոց դարձնել, Տաճիկ-Պարսկական սահմանի վրա, Դիլմանի շրջանում սուս և տաճիկ բանակների մէջ տեղի ունեցում էր խոշոր ձակատամարտ:

Իսկտեմբերի անցքերից յետոյ, անցքեր, որոնց ժամանակ տաճիկական բանակը կնկէր փաշայի ղեկավարութեամբ պատանով սուսակոն շրջան, Օլթիի ուղղութեամբ խուճեց միջև Սր-

դահան ու Սարիկամիշ, և ապա սոսկալի Չարդ կրելով քայքայ-
 ւած ու կազմալուծւած յետ փախաւ, և այս խնեօման պատճա-
 րով ուստական բանակը Տաճկաստանի ու Պարսկաստանի մի քա-
 նի շրջաններից առժամանակ յետ քաշուց, պատերազմը երկու ե-
 բեք ամսով դադար առաւ: Ծիշտ է, փոքրիկ ընդհարումներ, զը-
 խաւորապէս առաջապահ գնդերի մէջ, շարունակուում էին, բայց
 խոշոր ընդհարումներ տեղի չունեցան:

Սակայն այդ դեռ չէր նշանակում, որ հակառակ կողմերը
 քնած էին. ոչ, նրանք քնած չէին, այլ պտտրաստուում էին, և
 պտտրաստուում էին լուռ ու մունջ: Արդահանի և Սարիկամի-
 շի մօտ Չարդելուց յետոյ, տաճիկները իրենց ուշադրութիւնը
 դարձրին Պարսկաստանի վրա: Ուրմիի շրջանում նրանք կենդրո-
 նացրին բաւականաչափ զօրք: Պօլսից այդտեղ բերին մէկ դիվի-
 ղիա լաւ վարժւած զօրք. դրան միացրին մէկ զիվիլիայի չափ
 էլ համիդիական գնդեր, և նոր թնդանօթներով ու զնդացիլըն-
 ըով այդ բանակը Խալիլ բէյի ղեկավարութեամբ ապրիլի 14—
 15-ին շարժուց զէպի Դիլման: Տաճիկների ուժը անհամեմատ
 մեծ էր, քան ուստականը, այդ պատճառով էլ նրանց արշաւան-
 քը կատարուում էր մեծ վստահութեամբ: Ապրիլի 18-ին երկու
 բանակները Դիլմանի մօտ հանդիպեցին միմիանց և սկսեց
 զխաւոր սեփերի բաղխումը: Սկզբում յաջողութիւնը տաճիկնե-
 րի կողմն էր, նրանք լաւ կազմակերպւած բանակի շարժումներ
 և յառաջխաղացութիւններ էին կատարում, բայց այդ երկար չը-
 տակեց, շուտով գերակշռութիւնը անցաւ ուստների կողմը և ապ-
 րիլի 20-ին տաճիկներին փառաւոր ջարդ տւին. այս ճակատա-
 մարտում աչքի ընկնող մասնակցութիւն ունեցաւ հայ կամաւոր-
 ների առաջին գունդը՝ Անդրամիլի ղեկավարութեամբ: Ապրիլի
 20-ի ջարդը Խալիլ բէյի բանակի համար ճակատագրական եղաւ,
 նա կուլի դաշտում մի փոքր տարածութեան վրա 3500 զիակ
 թողեց և փախաւ զԱսիկոր՝ հետապնդւած ուստներից:

Այս նոյն միջոցին ուստական մի այլ բանակ, հայ կամա-
 ւորների 3—4 հազարանոց գունդի մասնակցութեամբ Իզդիլ-
 քերկրիի գծով շարժուց զէպի վան:

Զէլզէտը, որ արտաքին պատերազմի այս ճշնաժամին ըդ-
 քալւած էր վանի հայերին ճնշելու գործով, ամեն օր հեռազրէ

միջոցով Սալիլ բէյից ստանում էր տեղեկութիւններ պատերազմի ընթացքի մասին:

Սալիլ բէյի բանակը պարտութիւն էր կրել Դիմանի մօտ և թշնամին հետապնդում էր նրան. ուստի ան մի այլ բանակ Բզդիբի գծով առաջ էր շարժում, այս շուրթերը առել էր Աէզէտը. անպօրնների դէմ յղիորտացող այդ խարզախ ասիացին: Եւ ահա այս դէպքերի ազդեցութեան տակ ստոր ու խարզախ Աէզէտը տեսնելով, որ ամբողջ երկու շաբաթ շարունակող յարձակումները, անհամար կրակն ու ուռմբերը ընկճել չը կարողացան հայերին և ընդհակառակը նրանք փորձութիւն ու տակտ ձևօք բերելով, աւելի ևս անընկճելի էին դառնում, փորձեց վերջին անգամ դիմել խարբրայութեան ստոր միջոցին գործածելով ներման խոստումներ, կին ու երեխաներին մեղքացող դարձւածքներ և հայերին վնասեցնող կեղծ լուրեր ու սպառնալիքներ:

Եւ ահա Աէզէտը նորից դիմեց նամակների օգնութեանը. միաժամանակ ու թեղացնելով կրակը երկու քաղաքամասերում էլ:

Ապրիլի 13-ից յետոյ շարունակող կռիւները քաղաքի մէջ, որոնք տեւական ընոյթ էին ստացել, ապրիլի 19—21-ի ընթացքում նոր թախ ստացան: Ռմրակոծութիւնը ուժեղ չափերի հասաւ. գործող թնդանօթիւնների վրա տեղացան հաւան-թօփի կոչւող հինաուուրց թնդանօթիւնները, որոնք ահագին մեծութեան պայթող ուռմբեր էին նետում: Յարձակումները խստացան առանձնապէս Թաւրիզի դռան շրջանում, որը թշնամու կողմից համարւում էր թոյլ կէտ և որտեղից ներս խուժելը թուում էր դիւրին: Ապրիլի 19-ին մի քանի պատեր ծակելով թնդանօթիւններին ու զրին Կազոյեանի և Տէր-Պօղոսեանի զիւրքերի դիմաց և 15—20 մեկը հեռաւորութիւնից սկսեցին զիւրքերը ուժակոծել:

— Կէս օրին յաջողեցան Տէր-Պօղոսեանի զիւրքի պատը վերէն վար փլցնել և սալաւաթ տալով 30—40 հոգի յարձակեցան զիւրքի վրա, բայց շրջանապետի և հերոս Աւօյի սրտապլունդումներով զինուորները դուրս եկան փլւած պատի փլատակների յետևը և կրակ տեղացին թուրքերի վրա, որոնք 3—4 գիակ թողնելով յետ փախան, — պստմում է այս զիւրքի տղաներից մէկը:

Այս կուում ընկաւ քաջարար գերձակ Միհրան Յօլակիմ

հանը, սակաւախօս, բայց գործի մէջ ետուն մի մարդ: Չը նա-
յած դրան յարձակումը յետ մզեց:

Կռիւները միւս դիրքերում, ինչպէս և միւս շրջաններում
շարունակում էին. կրակը թափւում էր ամեն կողմից անընդ-
հատ, և դիմադրութիւնը հաւասարակշռող չափով ընթանում էր
շարունակ ևրեք օր: Եւ ահա կրակի այս ետուն ժամանակ, ապ-
րիլի 20-ի կէս օրին, թաւրիզի դռան շրջանում տաճիկների բռն-
նած թելօջի դիրքից Տէր-Պօղոսեանի դիրքի տղաներին բանակ-
ցելու նշան տրւեց: Դիրքի բացւած քններից մէկին մօտեցաւ ար-
ղաներից մէկը—Աւօն, քաջ, միևնոյն ժամանակ տարիքաւոր մի
մարդ: *այս 20*

— Ես ուղարկւած եմ Ջէլզէտի կողմից, — հակառակ դիր-
քից այս խօսքերով դիմեց Աւօյին մի դիւնորական, ու աւելաց-
րեց, — Ջէլզէտը կամենում է վերջ տալ կռիւներին և հաշ-
տութիւն կնքել, ուստի ցանկանում է, որ դուք պայմաններ ա-
ռաջարկէք:

— Մենք ունինք առաջնորդ, մենք ունինք Արամ փաշա,
Ջէլզէտը թող նրանց դիմի, մենք ինչացու ենք, որ պայման
առաջարկենք, — պատասխանեց Աւօն:

— Առաջնորդը իր տեղը, Արամ փաշան իր տեղը, դու էլ
իրև խմբապետ քո պայմանը առաջարկիր. — նորից դարձաւ
զինւորականը Աւօյին:

— Ես մէկ կողմիս կուռղ եմ, շատ բան չեմ հասկնայ, եթէ
իմ պայմանը կուզես իմանալ, այս է, բերէք ինձի Ջէլզէտի զը-
լուխը և մէկ էլ կինը, այն ժամանակ մենք կը հաշտուենք. —
պատասխանեց Աւօն և զինւորականը վրդովեց ու հեռացաւ:

Այս դէպքից մէկ օր անց, ապրիլի 21-ին, դարձեալ կէսօրին,
ուղիտակ դրօշակ պարզած երկու կիներ մօտեցան Շահէն տղայի
դիրքին. դրանք տաճիկների մէջ մնացած հայ կիներ էին — մէկը
Հայկազանքցի կիսախենթ մականունը Իօման: Նրանք բերին
առաջնորդի անունով գրւած Ջէլզէտի հեռուեալ նամակը:

Առաջնորդական տեղապահ

Եզնիկ վարդապետին.

Քչն աղատարութիւնը, որ կոմիտէն յառաջ բերաւ Շա-
տաբի մէջ, նոս ալ սկսաւ Համաւտ աղայի գործնացի պահակնե-

բու վրայ կրակ բացելով ու զանոնք նահատակելով: Այժմ ամէն կողմ կրակի մէջ մնաց, բնականաբար մինչև հիմայ շատ արևն թափւեցաւ: Ամբողջ Հայոց-ձորն ու Արճակը, ինչպէ՞ս և Թիմարի մեծ մասը իրենց արժանի պատիժը գտան: Թիմարի Լիմ կղզիի մէջ սպաստանողներուն պայմանաժամ տալիս ի՞նչ յանձնւին, բնականաբար, ամբողջապէս պիտի ազատուին և իրենց կիներ ու զաւակներ չպիտի փճանան:

Պատվութիւն սկսելու օրը բոլոր պահականոցներուն խիստ հրաման տալի, որ սպասամարներու կրակին չպատասխանեն: միայն երբ տեսայ որ նւազախմբով փողոցներ պատելով, կրակ ըրող յիմարներ կանգ չպիտի առնեն, հրամայեցի որ կրակին պատասխանեն: Ահա կը տեսնես, որ կղբազինք: Այդ միջոցին Պուրճանէտին պէյին թէլէֆօճուով խօսեցի, և հաստատապէս ենթադրելով թէ ձեռք միջնորդութեամբ քաղաքի մէջ հերէք կրակ չպիտի պայթէր: ուղեցի շուկայի, Թաւրիզի դուան և քաղաքի զանազան կէտերու վրայ օրահակներ հանել և մուսետիկներ կանչել տալով զարձեւով հասկցնել, թէ կառավարութիւնը պիտի պաշտպանէ խռովութեան չը մասնակցող ժողովուրդը: Պահակները, սակայն, անապահակ կերպով կրակի ենթարկեցան: Մարութեանի տնէն ձրգւած գնդակներէն քանի մը ճամբորդներ և ոստիկաններ սպանուեցան և վիրաւորեցան. հասկցայ որ այդտեղ ալ պատրաստութիւն կար, մենք ալ պէտք եղածի պէս շարժեցանք և սկիսանք թնդանօթով և հրացանով կրակ ընել: Քաղաքամիջի բնակիչներ, ձեռքերնէղ եկածը ըրիք և կրնէք, շատ կը ցաւիմ, որ այսքան քաջութեամբ կուտ հայրենիքի զաւակները օսմանցիութեան զգացումով տագորւած չեն: կը տեսնուի և կը հասկցալի, որ քաղաքի մէջ բաղամթիւ զիւղացիներ կան, համոզեցայ, որ ամենց հարաքիսու նպատակը Բերդի վրա յարձակելն է: Ռուսերու անմիջապէս գալուն համոզւած ըլլալով կազմւած այս ծրագիրը բոլորն ալ խնդրութեան նշան են:

Հայ ժողովուրդի ղեկավարները անտարակոյս պատասխանատու են Աստուծոյ և մարդոց առջև, այս հարցերը վերջէն, բնականաբար, հանգամանօրէն կը բնենք և անոնց մասին կը վիճենք:

Մինչև հիմայ քանի մը անգամ պաշտօնեաներ զրկեցի և անձնատուր լինել տաջարկեցի, բայց գնդակով և վատ խօսքեր

քրով պատասխանեցաւ: Մենք ալ աւելի խիստ վերաբերեցանք
 և պիտի վերաբերինք. նախապէս թէև կիներու և աղաներու
 մասին կը մտածէինք, բայց գործը վերջացնելու համար պար-
 տաւորեցանք ամէն միջոցի դիմել: Հիմա սկսեցի քաղաքի վրայ
 սուսմբեր ձգել. եթէ առաջարկներս չընդունիք այսօր, Գաւաշ ե-
 կող հրետանիներ հոս հասնելուն պէս ամբողջովին քաղաքի վրայ
 պիտի ուղղեմ և ամբողջ քաղաք տակն ու վրայ պիտի ընեմ:
 Յօշ-կէտիւկը բռնել ուզող հրոսախումբը մէկ շարաթ առաջ ամ-
 բողջովին կոտորեցինք: Աւերակիի վերև 385 զինակ թաղել տւի-
 Տարման գիւղ և կողպանց գրաւեցինք, 123 զինւած ապստամբ-
 ներ ալ այնտեղ ընկձեցինք: Այդեստանի վերի կողմը՝ Համուս
 աղայի դօրանոցէն միջև Սաշ-փողոց ամբողջովին առինք և այ-
 բեցինք, Արարքի կողմէն մէկ թաղ գրաւեցինք, Վարազ և Շու-
 շանց փախչող ընտանիքներուն խնայելով, դեռ Շուշանցի վրայ
 յարձակում գործել չը տւի: Սարայի կողմէն եկող երկու վաշտե-
 քը Տարման գիւղի կողմ թողի. պիտի առաջարկեմ անձնատուք
 ղինել, իսկ եթէ յամառին, կուռուպաշ դանուղ ուժերով և Տար-
 ման գիւղի վաշտերով յարձակում գործել պիտի տամ:

Սալիլ պէյի դօրաբաժին՝ իր առաջ գտնուող սուսերը մաք-
 րելով՝ երէկ Սոյ մտած է, ասոր վրայ կօտօլի շուրջ գտնուող մեր
 ուժերը ամբողջովին այս կողմ ուղղեցան: Ահա այս կացու-
 թեան մէջ ձեզ համար փրկութեան հնարաւորութիւն չկայ: Մինչ-
 դեռ մենք վերջին ատեններ այս տարրը կը սիրէինք ու կը
 պաշտէինք իբրև մեր աչքի լոյսը, բայց իբմէ դաւաճանութիւն
 տեսանք: Պիտի պատժին, բայց ընտանիքներ ինչ յանցանք ու-
 նին, եթէ ձեզի դէթ չէք զթար, այս խեղճ անմեղներուն գթա-
 ցէք, հետևարար առաջարկ այս է.

1. Ամբողջ զէնքերը յանձնել.
2. Կառավարութեան շնորհքին սպաւինելով՝ անպայման
 կերպով հնազանդութիւն յայտնել:

Այս առաջարկները ընդունելու պարագային, կը խոստանաս
 որ պիտի կրնամ միջնորդել, որ կայսերական զթութեան արժա-
 նանաք: Ի գուր տեղ աւելորդ արիւն մի թափէք, ձեր ընտա-
 նիքներուն խնայեցէք. եթէ յամառիք, մեղքը ձեր վրդ. վստահ ե-
 գէք, որ օտարոց ալ պիտի փճանաք:

Նամակը կարդացեց Ձին. մարմնի և մի քանի այլ մարդ-
կանց ներկայութեամբ և միևնոյն կանանց ձեռքով ուղարկեց
հետևեալ պատասխանը:

Վանայ կուսակալ

Վեհմ. Ջէլզէալ պէյ էֆէնտին. | *

Ձեր նամակը ստացայ: Ի պատասխան կը՞յայտնեմ, որ Օս-
մանեան կառավարութեան հանդէպ մենք ապատար չենք և կա-
ռավարութեան օրէնքներուն միշտ հնազանդ եղած ենք ու պիտի
ըլլանք: Հետևաբար ձեր առաջարկներուն պատասխան մը տալու
համար շնորհ ըրէք երկու պատուաւոր անձեր զրկել:

Եզնիկ վարդապետ

Գրելով այս պատասխանը և բանակցելու համար պահան-
ջելով երկու մարդ, Ձին. մարմինը մի նպատակ ընտրեց, հարթ
ղնել և հնարաւորութիւն ստանալ մարդ ուղարկել Այդեատան.
պատուակը լինելու էր հաշտութեան մասին խորհրդակցել այ-
դեատանցիներին հետ, իսկ թուն նպատակը իմանալ՝ ինչ է կա-
տարում հետունները, ինչ դրութեան մէջ է Այդեատանը: Ահա
այս էր Ձին. մարմնի նպատակը և ոչ հաշտութիւնը, որին ոչ ոք
չէր հաւատում. բոլորը համոզւած էին, որ Ջէլզէալ խաբերա-
յութեամբ է ուզում Բաղաքը սպանդանոց դարձնել:

Նամակի պատասխանը ուղարկելուց յետոյ թնդանօթածը-
դութիւնը դադարեց և մի փոքր անց նորից երկացին երկու կա-
նայք և բերին հետեալ նամակը:

Եզնիկ էֆ.

Ճիտէջեան Գալուստ էֆ.-ն(*) հազարապետ Անէա պէյ
(**) ընկերակցութեամբ զրկեցի: Հրամայեցի որ կտրեն թնդանօ-
թի և հրացանի կրակը: Ճիտէջեան Գալուստ էֆ.-ի հետ տեսուե-

*) Մա Վանի առաջնակարգ հարուստ վաճառականն էր — մեծ խանի ու-
րը. մտրիկ բարեկամ էր Ջէլզէալին, ինչպէս և նրա հարբ-Քանար վարդապետ
Աստուազաձէ Ջէլզէալի քարեկամութեանը իր ընտանիքով Մաչ առաջիններէ
Քոպուձի, ուր և գտնոււմ էր նրա տունը:

**) Աս Վանի մտրիկէն ժամաւորայի կաճանգարն էր: Կը 1808 թ.ին
Մաչայի մասնաւթեան միջոցին ստակալի բռնութիւններէ ու առնջաճրճեցէ ան-
Քոպուձէն Վանի կտակաւոր հայերէն: Մա Ջէլզէալի ժողաբարջ տնտեսին էր:

քէք և վճարահանապէս վատար ըլլալով դուրս ելէք: Կը վատարեցնե՞մ, որ ձեզի հիւլէի չափ քնաս մը չպիտի պատահի մինչև ձեք տեսնել և հասկնալը: Եթէ ժողովուրդը համոզէք՝ լաւ, իսկ եթէ չկրնաք համոզել, դարձեալ ձեր տուն վերադարձէք և վերադառնալէն ճիշտ մէկ ժամ վերջ նորէն ընդհարումներ պիտի սկսին: Ատոր վճարական խօսք կուտամ:

Կուսակալ Զէւգէտ

Նամակը յաճնելով, կանայք յայտնեցին, որ Զէւգէտի ուղարկած մարդիկ—Փալուստ էֆէնդին և Ահմէդ բէյը Արամ Կազոեանի տան մէջ, որը տաճիկների դիրքն էր, սպասում են առաջնորդին:

Փոքրիկ խորհրդակցութիւնից յետոյ նոյն կանանց միջոցով յայտնեցին Զէւգէտի ուղարկած մարդկանց, որ առաջնորդը գընալ չի կարող, ուստի թող իրենք գան: Մի փոքր անց պատուիրակները երևացին, բայց այլ կազմով. Ճիտէշեանի հետ եկաւ ոչ թէ Ահմէդ բէյը, որը կարող էր իր հին մեղքերի քառութեան դոճը դառնալ, այլ կրթական տեսուչ Շէրիֆ բէյը:

Պատակցութիւնը տեղի ունեցաւ բացօթեայ: Շահէն ազայի Վիրքի առաջ մի նեղ փողոցում զբեցին հինգ աթոռներ, հայերի կողմից այդ բանակցութեանը մասնակցեցին Եղնիկ վարդապետը, Աղթամարի վանահայր Գանիէլ վարդապետը և փաստաբան Միրզախանեանը:

Պատակցութիւնը երկար չը տեւեց, որովհետև հայերի կողմից զբեց առայժմ նախօրօք որոշւած հետևեալ պայմանը:

Տալ հնարաւորութիւն Այգեստան ուղարկելու Եղնիկ վարդապետին և մէկ ուրիշին՝ այնտեղի հայերի հետ խօսակցելու և ըստ այնմ հաշտութեան պայմաններ առաջարկելու համար. իսկ մինչև նրանց վերադարձը պատանդ թողնել երկու պատուաւոր տաճիկներ:

Այս պայմանը լսելով, երկու պատուիրակները դնացին իրենց հետ տանելով հետեւեալ նամակը:

Վսեմ. Զէւգէտ պէյ էֆէնդին.

Քաղաքամէջ գտնուող և ներկայ վիճակին տեղեակ կարգ մը անձեր կանչելով ժողով գումարեցի: Խնդրոյն կարելիութեամբ

խորհելով այս եզրակացութեան եկանք: Անհատաբար քաղաքէ մէջ չպիտի յաջողինք գործ ընել, որովհետեւ եզրայր, հայր և ընտանիք Այգեաստան և գիւղերու մէջ թողով և հոս իր անձ պաշտպանող զինւած մարդէն ոչ մէկ ուժ կրնայ զէնքը առնել: Ասկէ գատ, հնուց անտի մեր ցոյց տւած հաւատարմութեան և անկեղծութեան հակառակ ներկայ կացութեան մէջ ապստամբ բառով որակելուն համար կայսերական ներման արժանանալն իստարակուսելի կը դառնայ:

Ինչպէս որ յայտնի է ձեր բարձր անձնաւորութեան, իմ ունեցած պաշտօնական հանգամանքովս անհատաբար ունէ կը համոզելու կարողութիւն չունիմ: Ասոր վրայ կը հրաւիրեմ ձեր ուշադրութիւնը: Եթէ ձեր նպատակը այս խեղճ երկիրը ներկայ կացութենէն ազատել և բնաւ յանցանք չունեցող կին, տղայ և ուրիշներ չոչնչացնելն է, վստահելով իմ ուղղամտութեանս պատիս և կրօնական արժանապատուութեանս, հրաման ըրէք, որ 12 ժամայ քնթացքին Այգեաստանի հետ յարաբերութեան մըտնեմ: Մեծ մարդիկ պատմութենէն պէտք է վախնան: Ձեր ձեռքն է կրակին վրայ ջուր լեցնել: Ես ինքս պատրաստ եմ կեանքս զոհելու այս դեռ կիսակործան հայրենիքին համար: Վարձատրութիւնս բարձրեալ Աստուած թող տայ: Ձեր առաջարկին համաձայն հարիւրին հարիւր կը վստահացնեմ, որ ընդհանուր կացութիւնը պիտի դիմէ զէպի խաղաղութիւն: Այս մասին կրթական տեսչին և ծիտէչեան էֆ.-ին մտնրամասն բացատրութիւններ տւած եմ, անոնք ալ թող ձեզի հաղորդեն, որով կը զիմեմ ձեր վեհաձեռութեան և կը զրկեմ յատուկ յարգանքներս պէյ էֆ.: Առաջն. փոխանորդ Եզնիկ վարդապետ

Այս նամակից մի օր անց, ապրիլ 22-ին, նորից յայտնուեցին երկու կանայք ու բերին Ձէւզէտի հետեւեալ նամակը:

Եզնիկ էֆէնդի.

Դուք և Դանիէլ էֆ.-ն եթէ չէք կրնար Բաղաքամէջ զբողոքները համոզել, դուրս ոչ մէկ բան կրնաք ընել: Սպորտսէֆ.-ի միջոցով իմ առաջարկներս իմացուցի Այգեաստանի մէջ գտնուողներուն: Ձեր փափաքին վրայ կրթական տեսուչ Եերիֆ պէյը ձեր բով զրկեցի: Կը գնահատէք, որ կառավարութեան

հայաստաններու միջև երկար պայմանագրութիւններ չեն կրնար տեղի ունենալ: Եթէ ապաւինելով սուլթանի շնորհին անձնատուր ըլլաք՝ ըսի թէ պիտի միջնորդեմ. ասիկա նորէն կը կըրկնեմ, հակառակ պարագային հրաման պիտի տրի զօրքին՝ ոչ ընչացնելու մինչև ձեր վերջին զինուորը: Մինչև վաղ ատուածամը 6 (1) կապուեմ ձեր վճռական պատասխանին:

Կուսակալ Ջէզէտ

Ջէզէտի այս նամակին նոր առարկութիւններ բերել աւելորդ համարեց, ակներև դարձաւ նրա խտրդախ մտադրութիւնը և նամակը մնաց անպատասխան:

Այստեղ կարեւոր ենք համարում յիշատակել նետեալ դէպքը:

Այդ նոյն օրերին, այսինքն այն ժամանակ, երբ Ջէզէտի ուղեկում կատարուեմ էր վերը յիշեալ խտրդախ նամակների զարգիւր յղացումը, հայ դիրքերին մօտեցաւ մէկ ժանդարմ, առաջի անգամ նրան ընդունեցին տաճիկի տեղ և ուղեցին գնդակահարել, բայց ժանդարմը մեծ զժւարթութեամբ կարողացաւ հասկացնել, որ ինքը հայ է, և ներս ընդունուեց: Երբ նրան ներս առան, պարզեց, որ նա խնուցի է՝ անունը Յովհաննէս: Նրա հետ միասին Վանի հեծելազօրքի մէջ ծառայում էին վեց այլ հայեր. մինչև այժմ նրանց վտանգ չէր սպառնացել, բայց այդ օրը նրա ընկերները մէկ մէկ անհետացան, նկատելով որ ընկերները այլևս չեն վերադառնում և այդ նրանց ոչնչացման նշան է, մի վայրկեանում առանձնացաւ և իրեն ձգեց հայերի քաղաքամասը: Վանի քանդում, կոխը սկսելիս, կային 180 բանդարկեալներ, որոնց մէջ էին Հնչակեան կուսակցութեան պատկանող մի քանի երիտասարդ ուսուցիչներ—Արքաճամ Բրուտեանը, Գանթօհանը, Արտաշէս Սօրախեանը և Ասուս ժանդարմ Յովհաննէսի պատմելով տաճիկ և քիւրդ բանդարկեալներին վաղուց ուղարկել էին զօրքի շարքերը, քանդում մնում էին միմիայն հայերը: Ապրիլի 16-ին հրաման եղաւ կոտորել հայ բանդարկեալներին:

Նրանց այդ օր կապկպած խուճր խուճր սկսեցին բանդից հանել, տանել քիչ հեռու գանուղ տափարակի վրա և սառը զէնքերով խղիտողել ու դիակները ձգել առաջուց պատրաստած փոսերի մէջ: Գնդակներ չէին գործածում, այլ սառը զէնք—օրեր ու դաշոյններ, այդ պատճառով մօտիկ գանուղ հեծելազօրքի զօ-

քանոցում, ուր լինում էին ժանդարմ Յովհաննէսը իր բնկերնե-
րով, հրացանի պայթոցների փոխարէն լսում էին խողխողուող և
մեռնող հայ բանդարկեալների հոգեարքի ճիչերը, զալարումներն
ու հոնգիւնը: Նրանք լսում էին սիրտ կարատող ձայներն ու
կառանջիւնները, տանջուում էին նրանց տանջանքների հետ և
լուս տանում էին այդ բոլորը, անկարող լինելով նոյնիսկ ար-
տալայտել, որ իրենք լսում էին այդ քարբարոս գործողութեան
տանջանքներն ու ճիչերը:

Ահա այս օրինակ ոճիրներ յղացող Ջէզէտն էր որ նամակ-
ներ էր գրում հայերին, հաշտութիւն էր առաջարկում, ներման
խոստումներ էր տալիս, կանանց և երեխաներին խնայելու մա-
սին էր ճառում:

Ջէզէտը մէկ օր սպասելով և իր եզնիկ վտրդապետին պը-
րան վերջին նամակի պատասխանը շատանալով, հրաման արձա-
կեց և թնդանօթիների որոտը Քաղաքում նորից վերսկսեց նոր
թափով:

Միւս կողմից, չը վճատելով իր խարդախ մտազրուիւննե-
րի մէջ, խաբերայական նոյն միջոցին դիմեց նաև Այգեատանի
վերաբերմամբ: Եթէ Քաղաքը յամառեց, այդ չէր նշանակում, որ
Այգեատանն էլ կը յամառի: Այսպէս մտածեց Ջէզէտը և ուզար-
կեց Այգեատան Օստոմանեան բանկի կառավարիչ Ալկարտին
հետեանալ պատասխան նմակը, համոզւած որ Ալկարտին իտալա-
կան հիւպատոսի և ուրիշների միջոցով Ջին. մարմինն կը հա-
ցնէ իր նամակի բովանդակութիւնը: Թէ Ջէզէտը հայերին խա-
բելու նպատակով որպիսի ստախօսութիւնների ու փաստերը
յեղաշրջելու ճանապարհ էր ընտրել, այդ կրնում է Ալկարտին
գրած նամակից և նրա մէջ հաղորդւած մի շարք տեղեկութիւն-
ներից:

Ահա այդ նամակը:

Ալկարտի էֆ. -ին.

Ձեր նամակ ստացայ, բնականաբար շատ պո՛հ կզայ, որ ա-
ռողջ էք: Բո՛վս պալու հնարաւորութիւն չունենալուս պատճառով
որբանոց երթալնուդ յարմար է:

Բերւած սանդաղներով (հա՛վան թօփի) այսօր ստրակոճե-
ցիւնք Քաղաքումէջը: Կնդակներ իրենց հանդիպած տուներու մէջ

պայտեղով, ամբողջապէս քանդած են զանոնք և այդ պատճառով
 երբ տեսայ, որ երեխաներ փողոցէ փողոց փախչելով սկսած են
 ողբ ու կոծ արձակել, առաջարկեցի անձնատուր ըլլալ: Թօսակ-
 ցելու համար կրթական տնօրէն Շէրիֆ պէյ Սգնիկ վարդապետի
 բով զրկեցի: Կը լուսամ որ իրենց գէնքերը յանձնելով և կայ-
 տերական շնորհին ապաւինելով հնազանդութիւն պիտի յայտնեն:
 Այս կերպով խեղճ կիներ ու երեխաներ այլևս ոտից տակ չպի-
 տի սնչանան: Այգեստանի փառիքարներ կը շարունակեն մուղիք
 դարներ: Տեսնենք մինչև երբ կը շարունակուի:

Հետագրական լուրեր.— Գերմաններ Իփուի մէջ ի գործ դը-
 քած յարձակումով գէշ կերպով պարտութեան մատնած են Անգլ-
 հացիներուն և Պելճիգացիներուն մնացեալ ուժերը և 15,000 դե-
 րի տարած են: Կարօլաթներու մէջ կը հետապնդին Աւստրը և
 Գերման զօրամասերը: Կը շնորհաւորեմ:

Յալիլ բէյի զօրարածին Ուրմիոյ և Սալմասի միջև գտնուող
 ձանձախիթի տեղւոյն մէջ իր հանդիպած ուռա զօրամասերը ցիբ
 ու ցան բրած և երեք թնգանօթ գրաւած է:

Ճամբաներու վրայ կէտիւկներ կարել ձեռնարկող յիմար
 ապստամբ դիւղացիները Աստուծոյ շնորիւ ամբողջապէս պատժ-
 ւեցան և ճամբաներու վրայ սեկ վտանգ չմնալուն պատճառով,
 Յալիլ պէյին ինդրեցի, որ տունւած գերիներ Շէնօի ճամբով
 Մուսուլ չղրկին, այլ հոս ճամբուին: Տօքթ. Աշըրի ամբու-
 թեանց առջև անոնց պաշտօնական անցք ընել պիտի տամ,
 տօքթօրը, որ խռովարարներու պէս միշտ Ռուսերուն կոպակ,
 թող տեսնէ և ուրախանայ:

Կը լուսամ որ Արմենակ էֆ.-ն լաւ մտածող, ազգի իրա-
 կան օգուտը գնահատող պաշտօնեայ մըն է: Երբ տեսնուինք, ընա-
 կան է որ իր մասին դիւրիւթիւններ ցոյց պիտի տամ: Այսօր
 գործ չունիմ, իսկ տրամադրութիւնս շատ լաւ է (իշըմ հօք,
 քէյֆըմ չօք): Ահա ձեզի երկար նամակ մը, սիրելի Ալիարտի էֆ.:

22 ապրիլ Կուսակալ Ձէւզէտ

Այս նամակի հետ միաժամանակ Ձէւզէտը ուղարկեց կու-
 սակալութեան թարգման Արմենակ Սարգսեանին և գերմանա-
 կան սրբանոցի տնօրէն Հերս պէրիին հետեւեալ նամակները:

Արժեհնակ էՖ.—ին.

Ձեզ և Ալիարտի էՖ.—ն անմիջապէս բերելու համար մտրեց զրկած էի, բայց զժբաղդաբար խոռովարարները բոլոր կէտերը բռնելով սկսած էին կրակ բանալ, այդ պատճառով ձեր տան մօտենայ և լուր տալ կարելի չեղաւ:

Շատ լաւ եղաւ, որ որբանոց քաշւած էք: Եթէ հնարաւորութիւն ունենաք, Շանպաղլեան եղբայրներուն բարեւ հաղորդեցէք: Արգարե ցաւի արժանի է, որ այսպիսի մարդիկ կարգ մը թափառաշրջիկներու դատապարտեալ եղած են:

22 ապրիլ

Կուսակալ Ջէլզէտ

Գերմանական որբանոցի անօրէն շէքսպէրիին.

Ձեր նամակը ասի, Շվէտթէր, Մարթէն և միսիս Մէքլարէն ստողջ են, իրենց պաշտօն կը շարունակեն, իրենցմէ շատ գոհ և շնորհակալ եմ: Հիւանդանոցի մէջ ծառայող հայ աղաներ անոնց խնամքին յարձուած են: Խոհարար մը որոշեցի անոնց համար: Ամէն կերպով ապահոված է անոնց հանգստութիւնը: Քննութիւններ ընել հուսամ Ոսկերակի մէջ որբանոցի ունեցած անասուններու մասին: Վստահ եղէք, որ մէկ հատ չպիտի կորուի:

22 ապրիլ

Կուսակալ Ջէլզէտ

Այս երկու նամակների մէջ էլ երևում էր Ջէլզէտի խարդախ մատուցութիւնները և կեղծ մարդատիրութիւնը: Մէկով փորձում էր իր մօտ տանել մարդիկ, որոնցից կարողանար հայերի մէջ տիրող տրամադրութիւնն իմանալ, միւսով ցոյց տալ իմ մարդասէր վերաբերմունքը դէպի հայ ծառայողները:

Սարդախութիւն— կեղծութիւն— խարդախութիւն. անա այն յղացումները, որ կատարում էին Ջէլզէտի մէջ: Սակայն որոնք ոչ մի արդիւնք չը տւին: Հայերը Ջէլզէտի խօսքերին հաւատ չընծայեցին, նրա հետ բանակցութիւնների մէջ չը մտան, իրենց յոյսը գրին իրենց բազուկների վրա և կտրել շարունակեցին:

Կուի երրորդ շրջանն սկսեց, դա Ջէլզէտի կողմից ցատման, իսկ հայերի կողմից յուսոյ շրջանն էր. խտրությալից անջ յաջող փորձերից յետոյ Ջէլզէտը դիմեց օրհասական, յուսահատ

կուին, իսկ հայերը՝ յաղթանակի կուին. կուի եղբն էր արուհի-
լու, կողմերից մէկի յաղթանակն էր պահպելու և գնացին ուժե-
րը վերջնականապէս չափելու:

Կատարի կուր վերսկսեց երկու քաղաքամասերում միա-
ժամանակ, բայց աւելի մեծ թափ ստացաւ Քաղաքում, զա հա-
մարեց հեշտ ընկնելի:

Կուի այս շրջանում եղած ուժերի և արդէն գործող թնդա-
նօթների վրա աւելացան նոր թնդանօթներ, զբանցից մէկը նոր
ձևի և մեծ չափի թնդանօթ էր, որը զբեց հետու, Շամիրամի
թաղից հարաւ գտնուող մի բլրակի վրա և բերանը ուղղեց Քա-
ղաքամէջ. այդ թնդանօթը նետում էր բացառապէս պայթուցիկ
ուռմբեր ու շրպանէլ, և լուրջ վնասներ էր պատճառում գիրքի-
բին: Անա այս թնդանօթի մասին է, որ օպանանալիքներով յիշում
էր Ջէլդէտը Եզնիկ վարդապետին ուղղած նամակում:

Բացի այս, մեծ չափով գործադրութեան հանձնեցին հաւան-
թօփինները, որոնց մասին Ջէլդէտը Ալկարտինն ուղղած նամա-
կում յիշում էր: Իրանք կարճ ու լայնարեքան, աւելի շուտսան-
գածն թնդանօթներ էին՝ վանի բերդում իբրև հնութիւններ ըն-
կած, զբանց հետ միասին բերդում կային հնութեան փոշին կրող
շուգունի խոշոր ուռմբեր, Հաւան-թօփիններով ու խոշոր ուռմբե-
րով կարելի էր կուել մօտիկ տարածութիւնից. այդ ուռմբերը
լցնում էին վառողով, երկաթի կտորներով, նրանց մէջ անց էին
կացնում վառուղ պատրոյց և հաւան-թօփի միջոցով նետում էին
Քաղաքի վրա: Այդ հաւան-թօփիններից մէկ երկու հաւ գրեց
բերդի բարձունքի վրա, իսկ մէկ հաւ էլ գրեց Թաւրիպի գտան
շրջանում, ուղիղ պարապի յետեը, որտեղից ուռմբերը նետում
էին տների վրա: Ռուժբերը երբեմն պայթում էին և երբեմն ոչ.
Պայթողները արձակում էին մի խուլ որոտ և պայթած տեղում
առաջացնում էին ցնցում ու աւեր: Յաճախ ուռմբերը նետում
էին առանց թնդանօթի, զբանք 2—4 փութ կշտող գունդեր էին,
որոնց բերում էին բերդի զահավէժ ժայռերի ծայրին ու այնան-
դից գլորում ցած: Բերդի այդ մասը կախած էր Ամբարի շրջա-
նի թաղամասերի վրա, ուր և ընկնում էին խոշոր ուռմբերը:


Ու այսպէս, Ջէլդէտը հրապարակ բերեց և օգտագործեց
այն բոլորը, ինչ որ գտնուում էին իր արամադրութեան տակ.
Նրանք լինէին գորանոցներում, թէ բերդի մէջ, նոր թէ հին-
լու. թէ վատ:

Իր հերթում համապատասխան միջոցներ էր հնարում նաև պաշարւած ժողովուրդը, հերոսական ակտեր կատարելով՝ փշրելու համար թշնամու ջանքերը: Ամբաշէն—ամալխանների աշխատանքը շարունակեց ու կրկնապատկեց, նրանք ամբոթիւնների նոր ձևեր իւրացրին, դեմանցնքների, պատնէշների, կրկնապատե-րի և վերնածածկերի մի շղթայով պատեցին քաղաքամասը և նրան դարձրին անխոցելի: Ինչ վերաբերում է քարձրից ընկնող և հաւան-թօփիներով նետուղ խոշոր սոււմբերին, որոնք պայ-թում էին վառուղ պատրոյգների օգնութեամբ, զրանց դէմ նոյնպէս միջոց գտաւ պաշարւած ժողովուրդը, և միջոց գտաւ ոչ միտոյն անմխաս դարձնելու, այլ և նրանց միջի վառուղը օգտա-գործելու:

Ռումբերը պայթում էին ընկնելուց մի փոքր յետոյ, մինչև որ պատրոյգը վառելով հասնում էր վառուղին: Այդ տեսում էր այնքան, որ մէկ արագաշարժ ձեռք ընդունակ էր վրա հասնելու և պատրոյգը կտրելու, սակայն այս պայմանաւորւած էր մեծ վտանգի հետ. ով էր երաշխաւոր, որ սոււմբը չի պայթի այն վայրկեանին, երբ խիզախ ձեռքը կը մօտենայ նրան չեղօքացնե-լու: Բայց պաշարւած ժողովուրդը ինչպէս ամեն գործում, այն-պէս էլ այստեղ անձնազոհութեան, հերոսութեան փառաւոր օրի-նակը տեսցուց: Ռումբերին հետեող և նրանց պատրոյգները կրտ-րող — չեղօքացնող հերոսներ գտնուեցին և այն էլ շատ գտնուեցին:

Ո՞վքեր էին զրանք. կոխներում վարժւած մարտիկներ ոչ, դիրքերում փորձառութիւն ձեռք բերած կուսովներ, ոչ, վառ-վառն, սկստուած երիտասարդներ, դարձեալ ոչ: Փոքրիկ տղաներ, 15, 14, 13 նոյնիսկ 12 տարեկան պատանիներ, որոնք ահաւոր կուի ու տեղացող կրակի օրերը ապրելով, իրենց ծնօղների ու ազգականների հոռւն գործունէութիւնը տեսնելով, իրենց կաշու մէջ մնալ չէին կարողանում և առիթ էին փնտռում իրենք ևս մի գործ կատարելու: Աշխատանքների մեծ մասը, որպիսիք էին սուրճանդակութիւնը, դիրքերը պաշար հասցնելը, փամփուշտներ ցնելը և այլն, առանցի այն էլ փոքրիկ տղաներն էին կատա-րում. այժմ նրանց համար աւելի մեծ սուպարէզ բացուեց. հետգ-հետէ աշխատող փոքրիկ տղաների թիւը աճեց, և այնքան աճեց, որ նրանց մէջ սկսեց մի անօրինակ մրցում: Ռումբերի ընկած-ըջաններում գամերով ու օրերով հսկում էին այդ փոքրիկ հե-

Նկատող սուսքերը շեփուսնոյ սղակնի



Ասլան
Ասլանեան
14 տ.

Ոստան
(Անուշի սղան)
14 տ.

Բարկն
Իսախանեան
12 տ.

րոսները. ուսմբը ընկնում էր թէ չէ, վրա էին թափում մի-
բանխը միանգամից, վայրկենապէս կտրում էին պատրոյզը, ա-
յա շաղակում էին, եթէ փոքր էր, կամ սկսում էին անցքը բա-
ցել և միջի վասօղը դատարկել, եթէ մեծ էր, և փոքրիկ տղանե-
քը բարցւած ուսմքերով ու վասօղով, վազ էին տալիս սաղմամբ-
թերքի պահեստը, ուր շարունակ փամփուշա էին լցնում և ջա-
ջալերական խօսքեր լսելով վերագառնում էին: Այսպիսով թշնա-
մու նետած սուսքերը մեծ մասամբ ոչ միայն դադարեցին զնա-
նէր սալ, այլ եկան վասօղի սպառուղ պաշարը աւելացնելու:

Անա սուսքեր սրտոզ այգ փոքրիկ հերոսներից մի քանիսի
նկարները գնում ենք աշտեղ իբրև ամբողջացումն այն հերոսա-
կան կռակի, որ փորձում էր Բաղաթի հայ ժողովուրդը քանակուր
կատարուեան գէմ:

14 տարեկան Աւլանը Անդրանիկ Աւլանեանի որդին էր, Ե-
րամեան դպրոցի Ե. դասարանի աշակերտ: Հայրը ճոթ-
վաճառ էր:

Աւլանը գործում էր Ամբարի շրջանում, ուր գտնւում էր
խրինց տունը և ուր ընկնում էին բերդից նետած խոշոր ուսմ-
քեր. սա կատարում էր նաև սուրհանդակի պաշտօն:

14 տարեկան Սասանը ծուռ Անուշի տղան էր. մականունը
Քուռու: Հայրը—Յարութիւնը վաղուց գաղթել էր Ռուսաստան
և այնտեղ էլ մեռել. նա ազրում էր մօր աշխատանքով, իսկ
մայրը վարում էր շքաւոր կեանք՝ աշխատելով սրա նրա տանը՝
շքաւորութեան պատճառով Սասանը ուսման չէր գնում:

12 տարեկան Բարեկէնը կալւածատէր Կարապետ Իսաջան-
եանի տղան էր, Յիսուսեան դպրոցի Ե. դասարանի աշակերտ:
Սրանց տանը գտնւում էր փամփուշաներ լցնելու և փչացած
ղէնքերը կարգի բերելու արհեստանոցը, ինչպէս և հիւանդանոցը:

Արտաշէս Մարտիրոսեանը հետազրական պաշտօնեայի որդի
էր՝ զբաղմունքով խանութի գործակատար: Սա կատարում էր
յատուկ սուրհանդակի պաշտօն, այցելում էր համարեա բոլոր
գիրքերը: Արագաշարժ էր. վառվռուն, գիրքերը մտնելիս բերում
էր յաղթութեան լուրեր, իրախուսում էր ազաներին ու հետա-
նում: Որ գիրքը մանէր, այնտեղ ուրախութիւն ու ոգևորութիւն
էր առաջ բերում: Այս պատճառով էլ սրան կոչեցին Ռակի:

Քաղաքի այս պատանի հերոսները ունեցան և իրենց գոհե-
րը, սրանք էին փողոցներում աշխատողները, թափուղ գնդակնե-
րի տակ շարժւողները և ընական է, սր նրանք էլ զոհեր առին:
Այդ գոհերից էին.

16 տարեկան Յովհաննէս Ռակերչեանը— Ազգասէրի սղան-
առ սպանւեց Ա. Վարդանի փողոցի մէջ՝ բերդից նետած զըն-
դակով:

14 տարեկան Մարտիրոս Գեօրջեանը— կոշկակարի դասակ
աշակերտ Յիսուսեան դպրոցի Դ. դասարանի: Սա սպանւեց Մար-
թութեանի հրապարակի վրա՝ հրացանի գնդակով:

Եւ մինչդեռ Քաղաքի փոքրիկ մարտիկները իրենց խնայա-

փան գործն էին կատարում, անփաս գարձնելով ընկնող ոււմբե-
քը, հասակաւոր մարտիկները զբաղւած էին զէպի Այգեստան
աւերհանդակ հանելու գործով: Թէ չորս կողմից պաշարւած Քա-
ղաքի հայ ժողովրդի համար որքան անհրաժեշտութիւն էր կապ
հաստատել Այգեստանի հետ, հաղորդել նրանց իրենց դրութիւ-
նը, ստանալ անդեկութիւններ նրանց դրութիւնից և իմանալ թէ
ինչ է կատարում դրաի աշխարհում, այդ երևում է հետեւեալ
փոքրիկ նկարագրից, որ արել է այդ գործով զբաղւողներից մէ-
կը: Ահա այդ նկարագրերը:

— Թաւրիզի դասն (Մարզի գարկխի) շրջանն էր յարմա-
բաւոյն հանապարհը Այգեստանի հետ յարաբերութիւն սկսելու
երկու անգամ մէկը ձիււոր և մէկը ոտաւոր մարդ դուրս հա-
նեցինք Այգեստանէն լուր մը աննելու համար, սակայն պաշար-
ման կրկնակի օգակներու և անդացող գնդակներու պատճառաւ
չը կրցան երթալ ու յետ եկան: Ուղարկեցինք երրորդ անգամ
ևս, ան ալ մէկ հոգի—Ալջուաղցի Սեղրակը ստիժ ատրճանակով
զինւած, սակայն նա ևս ընկաւ թուրք վրաններու մէջ ու վերա-
դարձաւ, ըսյա յաջողեցաւ իր ձեռքի փայտով՝ գետին տապալել
Թուրք գիշերապահը և հրացանը աննելով մեզի գալ: Այլևս յոյս
չը մնաց յարաբերութիւն հաստատելու Այգեստանի հետ, ու Չին.
մարմինը երկար խորհրդակցութենէ ետք որոշեց Ապրօնից տու-
նէն մինչև Մարութեանի տան տակը ստորերկրեայ անցք մը
բանալ, միացնել այն՝ Մարութեանի տան տակ գտնուող ջրանց-
քին և ջրանցքի միջոցով անցնել պաշարման գիծը: Եւ այդ ուղ-
ութեամբ ձեռնարկեցաւ գիշեր ու ցերեկաւ անդուլ աշխա-
տանքի մը: Ստորերկրեայ աշխատանքի մէջ էինք, երբ ասպրիլի
21-ի առաւօտը 4 փթճանոց ոււմբ մը ինկաւ մեր դիրքի բակը
ու պայթեցաւ՝ վեր ու վար քանդելով մօտիկ պատը, մենք յան-
կարծակի եկանք և չը գիտէինք թէ որտեղէն կուգար ոււմբը:
Քանի մը ժամ վերջ մեր լրտեսները լուր բերին, որ հաւան-թօ-
փի մը դրած են պարսպի ետեւը, ճիշտ Թաւրիզի դասն քով և
մեզի կը ումբակոծեն: Իրիկան կողմը ոււմբ մը պայթեցաւ մեր
ստորերկրեայ անցքի մուտքի վրա և մեր տաս օրւա աշխատան-
քի արդիւնքը փչացուց: Այլևս միջոց չմնաց: Այգեստանի հետ
յարաբերելու կը մնար միայն անձնագոհութեան փորձ մը՝ կամ
հասնել Այգեստան և կամ ճանապարհին մեռնիլ:

Ու պաշարւած ժողովուրդը աւելց կրկու նոր անձնագո՛՛մարդիկ. դրանք էին Շալճի Յարութիւն Յոգսէփեանք և կօշկակար Գրիգոր Դաշտօեանք, որոնք յաջողութեամբ ճեղքեցին պաշարման շղթան և նամակ հասցրին Այգեհտան, ինչպէս այդ կը տեսնենք յետոյ:

Այսպէս, Քաղաքի պաշարւած հայութիւնը տոկոսունութեամբ շարունակուած էր դիմադրութիւնը և միւս կողմից փորձեր էր անուս կապ հաստատել Այգեհտանի հետ, երբ Զէւղէտը դիմեց մէկ վերջին միջոցի Քաղաքը ընկճելու համար:

Ապրիլի 26-ին, կէս օր դեռ շեղած, 20—30-ի չափ հայ կիներ ու երեխաներ շղթայ բռնած անհաստատ քայլերով մօտեցան Թէքեալիֆի-հարպիէի դիրքին. սրանք Թիմարի գիւղերից էին՝ սարսափներ ապրած, պատառտած ու ազտու հաղուստով: Դիրքի տղաները նրանց ներս առան. մի փոքր անց նորից կրեւաց կանանց ու երեխաների մի խումբ, որը նոյնպէս ներս առան. սակայն շուտով երեաց մի խումբ ևս, ապա նորից ու նորից: Դիրքի տղաները այլևս ներս չառան և անմիջապէս տեղեկութիւն աւին Զին. մարմին: Զին. մարմինը եկաւ դիրքը և ընկաւ մտատանջութեան մէջ, ներս ընդունէր դրանց վտանգաւոր էր. պաշարի հարցը մի կողմից, գալիք լքումն ու յուսահատութիւնը միւս և զրանց տարազի տակ զաւագրութիւն նիւթելու հնարաւորութիւնը երրորդ կողմից՝ ծանր տարակուսանքներ առաջ բերին, իսկ ներս չընդունել դժւար էր: Երկար խորհրդակցելուց յետոյ որոշեց ներս չառնել և ուժով բոլոր կանանց ու երեխաներին դուրս բռնելն պաշտպանողական գծից: Թշուառ կանանց ու երեխաների այդ քարաւանը մի շրջան կատարեց և մօտեցաւ Թաւրիզի դռներին, սակայն այստեղ էլ թոյլ չը աւին ներս գալու:

— Այս մի դաւադրութիւն է ստոր ու խարդախ Զէւղէտի կողմից, — ստու՛մ էին ամենքը և արգելում նրանց մուտքը: Քաղաքի երկու օր ու գիշեր Թշուաների այդ քաղմութիւնը, մի քանի հարիւր հզուց քաղկեացած, ստլած ու ծարաւ թափւած էր պարիսպների տակ, դրանք ոչ կարողանում էին առաջ շարժել և ոչ էլ յետ դառնալ. երկու կողմից էլ սղաւնում էին գնդակահարելու ճակիկները նկատելով որ ազաների վրտ այդ կերպ

չեն կարողանում ազգել, դիմեցին բարբարոս ձեերի: Օրինակ,
Տէր-Սաչաարեանի փողոցում գանուղ տաճիկների մի դիրքում
քարը տեղն երկու կանանց, լկեցին և ապա սպանելով դիակնե-
րը նեակեցին փողոցի մէջ. այս լպիրը և գազան գործողութիւնը
կատարեց Արթուրի գիրքի տղաների աչքի առջև նման գազիր
գործողութիւններ, որ կատարեցին այդտեղ, մի նպատակ ու-
նէին՝ ազգել հայերի գաղցմունքների վրա և հարկադրել նրանց,
ներս ընդունել այդ բազմութիւնը: Ասկայն Ձին. մարմնի որո-
շումը խիստ էր և բազմութիւնը ներս շտնուեց: Հայ դիրքերից
մէկ-մէկ նրանց հաց էին նետում, բայց այդ շափ բազմութեան
բողոքը յագեցնելու հնար չը կար: Պարիսպների տակ անխնամ
Պալով, նրանցից բաւականաչափ մեռան և մի քանիսն էլ սպան-
ւեցին: դիրքերից նեաուղ զնգակներից, որից յետոյ միայն նրանց
տաճիկները քշեցին դէպի Այգեհասան:

Գոյութեան ծանր կսիւն էր մզում Բաղարքի հայութիւնը.
նա չը գիտէր ինչ է լինելու վաղու օրը և աւելի քան 3000 ժո-
ղովրդի ինքնապաշտպանութեան հօգու իր վրա վերցրած Ձին.
մամլինը, նրա նեա միասին երկու վարդապետներ, բարեք հա-
մարեցին սրտի դառն կսկիծով և խղճի ծանր խայթոցով աղա-
նատես լինել հինաուրց պարիսպների տակ քաղցից մեռնող հայ
կանանց ու երեխաներին. քան ընդունել նրանց և վտանգել
մինչև այդ պաշտպանւած Բաղարքի ազգարնակութիւնը:

Օ, դազիր Քեւէտ, ինչեր չը յղացաւ նա, որպիսի խար-
դախ միջոցների չը դիմեց նա ընկճելու հայերին:

Այսպէս գոյութեան պայքարը այլակերպ ու տարօրինակ
ձեերով շարունակուում էր և կսիւր բոլորում էր իր իրրորդ շը-
ջանը, գրա հեա միասին նաե ազրիլ ամիսը:

Այսպէս էր գրութիւնը Բաղարքում կուի երրորդ շըջանին:
Այժմ էլ տեսնենք, այդ նոյն շըջանին ինչեր տեղի ունեցան Այ-
գեհասանի մէջ:

Սասնին շըջանը կուի առաջին 3-6 օրն էր. այդ շըջանում,
ինչպէս տեսանք, վանի հայ ժողովուրդը իր մարտական քննու-
թիւնը բանեց և իր կարող ուժերի ապացոյցը հրապարակ բերեց:
Քիւրբար շըջանը կուի յաջորդ 7-8 օրուայ շըջանն էր, երբ տե-
սական պիճազութիւնը Քեւէտին հարկադրեց գիմել խարդ-ի

ու իտարեբայական միջոցներն: Երբորդ շրջանը ցատումի և օրնա-
սական ճիգերի շրջանն էր Ձէւղէաի համար. խարեբայութեամբ
հայերին ընկճելու. անյաջող փորձից յետոյ, սպաճական վերջին
խօսքը պիտի հնչէր ու վերջնականապէս ուժերը պիտի չափէին:

Կուի երբորդ շրջանը Այդեատանի համար հանդիսացաւ
կազմակերպած դինակոչի շրջան: Երկու անգամ նա սուրհանդակ
հանեց դէպի Կովկաս, երկու անգամ նա օգնութեան կոչ ուղղեց
իր ցեղակիցներին, բայց սուրհանդակները յետ չեկան, օգնու-
թիւն չստացան և սպառնող ուսական բանակը չերեսց: Այդ
պատճառով կուի վախճանը նախատեսել կարելի չէր լինում.
Ուստի մնում էր միակ միջոցը—յենեւել սեփական ուժի վրայ՝
հրապարակ բերել գիճադրական ամբողջ կորովը և պատրաստել
յարատեւ պայքարի:

Եւ իսկապէս, երբ ուշադրութեամբ հետևում էք այդ շրջա-
նի գործունէութեանը, զարմանում էք թէ ինչպէս մի խաղաղ
ժողովուրդ միանգամից վեր էր ածել մի կուռղ բանակի, թէ
ինչպէս այդ ժողովուրդի ոչ միայն Ֆիզիկական, այլ և մտաւոր ու
ստեղծագործող ընդունակութիւնները ընդունել էին մարտական
բնոյթի:

Այն ժամանակ, երբ իր Ֆունկցիան էր կատարում դասա-
կան մարմինը, երբ գործում էին ոստիկանական ու քաղաքապե-
տական կազմերը. երբ ամենայն լրջութեամբ ու խնայողութեամբ
հայթայթիչ ու նպաստից յանձնաժողովները բաշխում էին կեն-
սական միջոցները, այդ նոյն միջոցին Ձին. մարմինը աշխուրջ
կերպով հետևում էր կուի ընթացքին և արձակում էր հետեւեալ
ազդերն ու հրահանգները:

Բոլոր խումբերուն

Մեր բոլոր խումբերու ուշադրութեան կը յայճաննք հետե-
ւալ հրահանգները, որոց անմիջական գործադրութիւնը կարեւոր
կը նկատենք:

- 1) Խումբի իրենց տարած բանւորները իրիկուն անպատ-
ճառ պիտի վերադարձնեն բանւորներու կեդրոն, անոնց հաց
կերտիւր տալու համար:
- 2) Խումբի իրենց ղեկներու մէջ աւելորդ եղող բան-
բրիները պէտք է ետ գրկեն՝ ուրիշներու պահանջներուն
պահպում տալու համար:

3) Եթէ խումբերը բանւորներու և վարպետներու պէտք
ունին, պէտք է առաջւերնէ պահանջեն, որպէսզի ցորեկ ատեն
վարողանանք գիշերւայ համար պէտք եղած թիւով բանւորներ
հայթայթել:

22 ապրիլ

Զին. մարմին

Շրջանապետներուն և խմբապետներուն

Թշնամին այսօր դաւազրական լուծիւն մը պահեց, գիշեր
մեկ յանկարծակիի բերելու համար: Ուստի յատկապէս այս գի-
շեր խիստ մեծ զգուշութիւն ընկու է:

22 ապրիլ

Զին. մարմին

Կարևոր ազդ

Երկայ յայտարարութեամբ վերջնականապէս կը յայտնենք
բոլոր գաղթական դիւզացիներուն և տեղացի անհատներուն, որ
պարտաւոր են իրենց ունեցած ամէն տեսակի զէնքերը և սաղ-
մական պիտոյքները այսօրուրնէ սկսեալ մինչև վաղ երեկոյ
(որբայ 24 ապրիլ) յանձնել սաղմամթերքի յանձնախումբին:

Պայմանաժամ լրանալէ հտք երևան հանւած զէնքի տէրե-
րուն ամենախիստ պատիժ պիտի տրւի:

23 ապրիլ

Զին. մարմին

Բոլոր խմբերուն

Ընկերներ.

Երկայ ընդհարումների սկսելէն (ապրիլ 7) մինչև այ-
սօր ձեր դիրքին մէջ բոլոր սպանւածներու և վիրաւորներու տ-
եսները տեղեկագրիցէք մեզի, ջանալով մանրամասն պատաս-
խանել հետևեալ հարցերուն.

- 1) Անուն ու մականունը.—
- 2) Հայրենիքը.—
- 3) Տարիքը.—
- 4) Ո՞ր դիրք.—
- 5) Ո՞ր օր և ո՞ր ժամ.—
- 6) Ի՞նչ ձևով սպանուած.—
- 7) Ե՞րբ մտած.—
- 8) Կէնստղաբան և այլ ծանօթութիւններ:—

Գրեցէք մաքուր ու յստակ և մինչև ապրիլի 25-ի իրիկուն
գրկեցէք մեզի, Տեղեկատու դիւանին հասցէով:

Ասկէ ետք օր օրին նոյն ձևով տեղեկագրեցէք:

23 ապրիլ

Զին. մարմին

Ա. Գ. Գ.

Հասարակութեան ամէն անճամ ներկայ ինքնապաշտպան
նութեան գործին մէջ պարտաւոր է սեկ կերպով մասնակցու-
թիւն ունենալ: Ամէն անոնք, որ տուներու կամ սրճարաններու
մէջ անգործ կը կենան, փողոցներու անկիւնները կը խոնարհ
կամ Գերմանական և Ամերիկեան շրջանակներու մէջ պահու-
ած կը խուսափին իրենց ուժերուն յարմար պարտականու-
թիւն մը կատարելէ, յատուկ պաշտօնեաներու ձեռքով պիտի
ձերբակալուին և Զին. ատեանին պիտի ներկայացուին:

24 ապրիլ

Զին. մարմին

Եւ մինչդեռ Զին. մարմինը աշխուրջ կերպով նեւտում էր
կուս ընթացքին և արձակում կարեոր ազդեր ու հրահանգներ
ուղղւած կուող տղաներին և ժողովրդին, ետանդուն կերպով
գործում էին մի քանի արհեստանոցներ, ուր պատրաստում
էին զինուորական պիտոյքներ և սպամամթերք:

Այլ արհեստանոցներն էին:

1. Զինարանը. սա զետեղւած էր Բուսնութեանի փողոցում
գանուղ Նազարեթեանի տան մէջ: Այստեղ աշխատում էին մի
շարք արհեստատուներ, որոնք ետանդուն կերպով նորոգում էին
փշացած զէնքերը և շինում էին զէնքերի անհրաժեշտ մասերը:
2. Փամփուշտարան. սա զետեղւած էր Նորաշէնի հրապար-
ակին կից գանուղ Ճահրաղեանի տան մէջ: Այստեղ աշխա-
տում էին ոչ միայն արհեստատուներ ու հասակատուներ, այլև
փոքրիկ տղաներ ու պատանիներ, որոնք մի շտանձին ետանդով
մաքրում էին զատարկ զիլդաները, լցնում էին վառուղ, ամրա-
ցնում էին գնդակները և դարսում արկզները:
3. Վառօդատունը. սա զետեղւած էր Քաղաքեանհրէզի փո-
ղոցի վրա գանուղ Սաիրիչ Վարդանի տան մէջ: Այս տունը
դարձել էր մի կատարեալ քիմիական կաջինեա և այլևայլ
նի. թիթի շահմարան: Այստեղ հասարակ էին մեծ քանակութեամբ

Փամփուշտարանը



ձծումք, ամուսն և բարակ. տներում, խանութներում և նոյնիսկ
 շարժանների քիմիական կարքիներում գտնուող բոլոր ձծումքն
 ու բարակը այստեղ էին բերել գրգել: Այստեղ աշխատում էր
 Հարժապետանոցի տնօրէն և քիմիկոս պրոֆէսոր Մինասեանը.
 Այստեղ աշխատում էին նախկին որսորդներ Մանուկը և Մկրտ-
 աչը Բազէշցեանը, այստեղ նիւուել էր նաև Բօլղարիայում կա-
 ռապարական վառօգտատան մէջ աշխատած մէկ գիւղացի: Տեղի
 էին ունենում փորձեր, պատրաստում էր ծխաւոր ու անծուխ
 վառօղ: Եւ որպիսի Հանքեր ասէք, որ չէին թափում հարեւո-
 բարակ, որի պաշարը Այգիստանում շատ քիչ էր: Կոխը երկա-
 րում էր, ամեն օր հազարուոր փամփուշտաներ էին կրակում.
 Եղած վառօղի պաշարը մեծ չէր, նա շուտով կը սպառւէր. և


վառօդատունը գերագոյն ճիգեր էր թափում վառօդ մատակարարել:

Մակայն ամենից ուշադրաւը թնդանօթի ձուլարանն էր:

Իս մի սովորական դարբնոց էր, որը գտնուում էր Նորաշէն թաղի Աջէմ-Խաչօհանի փողոցի վրա՝ ունենալով մէկ դուր փողոցի և մէկ դուռ էլ բակի մէջ բացուող Այդ դարբնոցի սիրունը— Թորմաչի Մարգար Կարիբջանեանին վիճակւած էր Արգեատանի Կրուպպը հանդիսանալու: Այս դարբնոցը բերին թափեցին աներից մեծաքանակ դեղին պղնձեայ դործիքներ և առարկաներ: շինւեց թնդանօթի կաղապարը և այդ կաղապարի վրա երկու շարաթւա ջանքերից յետոյ ձուլիցին «հայկական թնդանօթը», նրա հետ միասին նաև բաւականաչափ ուումբեր: Այս թնդանօթի միտքը յղացաւ մեկ ծանօթ Այգեստանի հերոսը— Համուդ-ապալի զօրանոցը պայթեցնել փորձող Բօլշարացի Գրիգորը: Արպիսի ջանքեր ասէք, որ նա չզարծաղրեց մի քանի թնդանօթ ձուլելու համար, թնդանօթ, որը կարողանար հակադրել տաճիկ կառավարութեան թնդանօթներին: Բօլշարացի Գրիգորը, որը հանդիսանում էր ըմբոստ ձեռնարկութիւնների վրին և իր այդ ձգտումներով ընդհանուրի ուշադրութիւնն էր գրաւել, իր նպատակին հասաւ: Ապրիլի 21-ին նորածոյ հայկական պղնձեայ թնդանօթը բերւեց վիցերոզ շրջանը և դրեց Սօլախեանի տանը մօտիկ գտնուող Տէր-Սաշատրեանի դիրքը բերանը ուղղւեց Հաջի-բէքրի զօրանոցին և առաջին ուումբը որոտումով նետւեց. սակայն նա պայթեց ընդամենը 4-500 քալ հեռաւորութեան վրա, օդի մէջ, առանց տեղ հասնելու: Այդ, ի հարկէ, յացողին չէր վնասեցրեց, աշխատանքները շարունակեցին և շուտով ձուլւեց երկրորդ թնդանօթը:

Բայց արդեօք հայկական թնդանօթը հակադրեց կառավարական թնդանօթին, և Բօլշարացի Գրիգորը կարողացաւ իր հնարած թնդանօթի ուումբով ձեղքել թշնամու դիրքը, ի հարկէ ոչ բայց նա հանդիսացաւ Այգեստանի սաղմակաւ սգու սիմբօլը պայքարող ժողովրդին նա ներշնչում էր և սգնորութիւն և յոյս:

Արհեստանոցներում ետուն աշխատանքը շարունակւեց, շարունակւեց նոյնպէս կոխը: Թէ նա ինչպէս ընթացաւ, այդ պատկերօրհիւ է համար բերում ենք այստեղ այն տեղեկատու պարբերականները, որոնք լոյս տեսան այդ շրջանում և որոնք



Հայկական թևղանոցեր

կրում էին երբևէ այդ օրերին յատուկ գունաւորութեւնս զըրանքս:

№ 18

ապրիլ 22

Երէկ այ մեր փառաւոր յաղթութիւնը. — Ենչպէս զրեցինք, երէկ թշնամին կատարեց ամենաբուսն յարձակում մեր հիօսիսարեհեղան ամբողջ գծի վրա, խուժելով այդիներէն ներս Ամբողջ օրը տեղ ընդհարումներէն ետք, թշնամին ետ քաշեցաւ մեծ կրուստաներով: Մեր գինւորական ընկերներու հետախուզութեան համաձայն թշնամին երէկ ուժեցաւ 50—60 սպանեալ՝ մէջը շք հաշիւով վիրաւորները: Յարձակողներէն մեծ մասը քիւրդ թաւանձիներ էին, որոնք թաւան, թաւան պրոսլով կը վազէին հայտարար աշխատանքի արգիւնքը գաղանարար սնչացնելու համար:

Հերոսական մահ մը. — Երէկ Շահպէտեանց զիւրքին մէջ հերոսական տեսարան մը պարզեցաւ: Երիտասարդ մը — Արամ Փոսոգանձեան երեք անգամ բարձրացաւ սանդուխի վրայ զիւրքի առջև և երեք անգամին թշնամիէն 3 հոգի սպանեց: Թնդանօթի գնդակներ ուղղեցան դէպի մեր երիտասարդ նշանաձիգի զիւրքը: Ընկն անխիղ ցարձեալ բարձրացաւ սանդուխը և զիւրքի ձակին

ճատնալով, ուրից չորրորդ մըն ալ գլորել: Զուր անցաւ իր ընկերներուն թախանձանքը, թէ թնդանօթը աղղուած է զէպի իր գիրքը և անզգուշութիւն է զիրքէն կրակել: Արամ հերոսական ժեպով մը դարձեալ բարձրացաւ սանդուխ, բայց թնդանօթի գնդակ մը ջարդեց իր գիտար (տրուսքի) և քաղնկի օսկարնեքը և վարդարեց գինքը: Արամ չկորսնցուց ինքզինքը, պահեց իր պաշարքիւնը և փորրիկ կռակ մը յանձնարարեց իր բնկերներուն: որ իր մայրն ու բոյրը անօթի չթողնելու համար իր տասնոցը ծախեն և անոնց ապրուստին յատկացնեն: Արդիական այս գորովագութ հագացութիւնէն ետք Արամ բաժօրեական խոտեր և բաշններ կը գրկէ իր զեկազար բնկերներուն և ապա քանի մը ժամ ետք կը փակէ իր աչքերը:

Թշնամու թնդանօթը պայթեամ: — Երէկ իրիկան կողմ թօփրազ-գալէի վրայ հաստատուած թնդանօթը, որ պայթեացիկ գնդակներ կը նետէր մեր գիրքերուն վրայ կըր գնդակ մըն ալ պիտի նետէր, միայն մուխ բարձրացաւ: Այս պայթեամբն հետեւածքով 4 թնդանօթամբներ սպաննեցան: Վարի գօրանցէն և ուրիշ կողմերէն զորքեր վազեցին և գիտկներ տարան: Գիտկներէն մէկը պատարակով կը տանէին, ինչ որ ցոյց կուտայ թէ կարևոր անձ մը պէտք է ըլլար:

Ա. Երջանակի գիտան կը գրէ մեզի. — Երէկ թշնամին և կեղեցոյ շրջարակէն երկու տեղերով նարէն սկսաւ ոտքակոծել մեր գիրքերը. մի քանի գնդակներ հանգրիպեցան մեր երկու գիրքերուն վրաներ պատճառելով: Մեր բնկիներու թնգանօթի գիտքերու վրայ բացած ճշգրիտ նշանաուճեթեան վրա, ոտքակոծութիւնը ստիպեցաւ լսել:

Երէկ առաւօտ տեսնեցաւ, որ թշնամու կողմերէն կնոթ հագուստներով մէկի մը գիտակ վերցնելով կը տանէին:

Այս գիշեր թշնամին ժամը 10 կէսին (3 կէսին) դարձեալ սկսեց իր տնտիս հրոցանաձգութիւններ մեր հարսուային բոլով գիրքերուն վրայ: Մեր կողմէն շատ քիչ պատասխանեցաւ:

Տարասնէկէն կը գրեն մեզի. — Քարաշար դարի միլիոնեք այսօր մոգ-առաւօտ հաս-հատ Արքայի տաւր և անկէ վեր զբնում փոսերու մէջ մտնելով, գարանի կը կենան:

Այսօրուան իրենց յատկապատմամբ մէկ արտաւելի մտակցեր են ճամբուն: Գիշերը ժամը 10 կէսին (8 կէսին) խիստ

համազարկ մը բացին մեր վրայ Հաջի-պէքրի գլխայի վրաի Զրա-
դացի առուէն. մեզմէ ոչ մէկ փնաս, իրենց հոգմէն սեւ յառաջ-
խառնացում գէպի մեր գիրքը գեռ եզամ չէ:

Զանթիկեան գիրքէն կը գրեն մեզի. — Երէկ թշնամիի յար-
ձակման ատեն մեր գիրքէն ապանենցիք 2 հոգի, իսկ գիշերուան
յարձակման ատեն մեր խումբը արիարար գիմադրեց: Մեզմէ
մէկ վերաւոր միայն կայ:

Երէկ ժամը 9 Ըն (2-էն) սկսեալ թշնամին գլխայի վերին
գիրքէն թնդանօթի 60 գնդակներ նետեց մեր գիրքին վրայ,
սակայն 5 սուճերը միայն նպատակին հասան, ասանց սեւ փնաս
պատճառելու: Յետոյ բիւրդ խումբանը Տ.-Պաշատուրենց և Զրք-
ւանդանցոց այգիներէն ներս խումբից՝ հազարաւոր գնդակներ տե-
ղացնելով մեզ վրայ: Մենք արիարար գիւտողիցիք և ապանեն-
ցիք 6 բիւրդեր թշնամին համապարկով հազիւ յաջողեցաւ իրմէ
ինկած գիտակները վերցնել: Բոլորիս կորովը լաւ է, ոչ մի փնաս
չունինք:

Երէկ Տամբիկեան Բէտերու գլորոցին մէջ հաստատւած
թնդանօթիերը, որոնք ուզուած էին Փոս-թաղի մեր գիրքերու
վրայ, մեծ մասամբ նպատակէն վրիպեցին: Քանի մը գնդակներ
միայն յաջողեցան պատնէշները թեթեալէս փնասել: Ոչ մի ան-
ձի կորուստ չկայ: Փոս-թաղի մեր օգնական խումբերը քանի մը
կրակ բանալով այգին մտնել ուզող թշնամիի վրայ, միլի մը ըս-
պանենցին, որմէ ետք թշնամին սկսաւ նահանջիլ:

Թշնամիի յարձակողականը ետ մղւած. — Երէկ ժամը 5-ի
(10-ի) առններ թշնամի խումբանը ճաշունի արաի իր գիրքե-
րէն գուրս գալով, այգիի միջով յառաջանալ փորձեց. մեր պա-
շակները ուժեղ կրակներ բացին: Թշնամին խելակորոյս և շփաթ-
ւած սկսաւ այգիներ ապաստանել՝ տալով 4 սպանեալ: 1200
գնդակ վառելէ յետոյ թշնամին թէև փորձեց տանել իր գիտակն-
եր, բայց 3 սպանեալ ալ թողով բոլորովին մաքրեցաւ: Թշնա-
մին գիտակներ տարաւ ժամը 10-ին (3-ին) միտակ կտտաղի հոս-
մազարկերու շնորհիւ:

Սանձարձակ հրացանաձգութիւն. — Երէկ գիշեր ժամը 10-
ըն (3 — 4) մէկ ժամէ աւելի տեղութեամբ մեր բոլոր գիրքերուն
վրայ թշնամին սկսաւ բուսն հրացանաձգութեան մը Առանց
սեւ յառաջացումի, պատերու և գիրքերու ետև ապաստանած

Թշնամիի այդ սանձարձակ հրացանաձգութիւնը ունէ փաստագրուած առէկ չկրցաւ մեզիւ Այդ կարգի պլըֆներու իմաստը այլևս բացորոշ ըլլալուն համար բոլոր մեր դիրքերու ընկերները հեզանքով միայն կը պատասխանէին: Թշնամիի բացած կրակի թիւը մէկ ժաման ընթացքին բոլոր ճակտի վրայ 10,000 կը հասնէր: Կարեոր.— Հասարակութենէն և ընկերներէն կը ինչպէ՞ որ մինչև հիմայ տպւած բոլոր լուրերը և յայտարարութիւնները մեզի զբկեն—Ձինւորական մարմին՝ Տեղեկատու գիւանի հասցէով:

N 19

Ապրիլ 23

Երէկան անցուզարձը

Երէկ ցորեկ մինչև իրիկուն Թշնամին բոլոր դիրքերուն վրայ լսութիւն պահեց, ունէ գինւորական գործողութիւն չԵ կատարուեցաւ:

Տարտանէլէն և Գափա-պոյնէն կը գրեն մեզի.— Երեկոյնան ժամը մօտ 10-ին (3-ին) Թշնամին սկսաւ մէկ ժամի չափ ստակալի համազարկեր տալ մեր դիրքերուն վրայ առանց ունէ փաստալու և քայլ մը իսկ առաջ գալու: Այսօր ալ արշալոյսէն ըսկտեալ Թշնամին սկսաւ իր գորքերը շարժման մէջ դնել, այնպէս որ Բարաշարը թողնելով մէկտեղ սկսաւ դարի բոլորտիք եղող խրամներուն մէջ պահանկներ դնել:

Գիշերս ժամը 2-ին (7-ին) Թշնամու կողմէն սկսաւ խիստ հրացանաձգութիւն մը, որ տեկց մինչև 3 քատորդ: Մինք կը պատասխանէինք ատրճանակներով և հատ-հատ հրացանով: Թշնամին ունէ քայլ առաջ չանցաւ, մեզմէ ունէ փաս չկայ:

Սահակ-պէյի դիրքէն կ'ը գրեն.— Այս գիշեր ժամը 2—3-ի (7—8-ի) մօտեր յարձակելով, այրեցինք Չաչալ-Միլզեան դիրքէ գիմաց գտնւող (Համզի-փոսի) ճարտաւային ակի վրայ Ատալուխեան Հաջիին տունը: Այս առթիւ գրաւեցինք 1 մարթենի հրատն, 1,000 կօվա (մազկէրի և մարթենի), 100 մալզէրի պատրոն, 143 մարթենի պատրոն:

Թշնամիին գոհերը շատ են: Գործողութիւն աւարտած մէկ կէն ժամ վերջ մեր դիրքին ծակէն պտտահարար զարնուկաւ մեծաւ բոպկապէս մեր ընկերներէն մէկը, ուրիշ փաս մը չունինք:

Առաջադրու զորսոցու թիւնը վերջանալէ վերջ, ձեռնարկեցաւ Սահակ պէյլէն շամզի տան յարձակման, որ տեկց մէկ ժամէ աւելի, սպաներ քաջարար պրոս տւին թշնամու գիրքին վերայ, յաջողութեամբ նետեցին տրւած սուսերը և բաւական ալ յառաջացան, սակայն լոյսը վրայ տալով հրամայեցաւ հա քաշել և այդպէս ալ վերջացաւ անհաշու զամազարկերով երկուստեք: Նետուած սուսերը իրենց աներկբայ արդիւնքը ունեցան, սակայն մօտէն չը կրցանք ստուգել: Իսկ մենք ալ ունեցանք 2 վիրաւոր:

Ա. Շրջանակի գիւանէն (Արարք).— Երէկ թշնամին թնդանօթ գետեղելով կ'լորդարի այգիներու մէջ, սկսաւ ոմբակոծել դարձեալ մեր գիրքերը. գնդակներէն շատ քիչերը միայն նպատակին ծառայեցին, ծակելով միայն երկու պատեր առանց վնաս հասցնելու: Մենք յաջողեցանք սպաննել թնդանօթաձիգը, որու գիւղը տարւած ատեն որոշ կերպով նկատեցաւ: Թնդանօթն ալ անկէ յետոյ իսկոյն լսեցր:

Այս գիշեր նորէն կարգ մը տեղերէն հրացանաձգութիւններ լսեցաւ առանց որոշ արդիւնքի:

Տարտանէլէն կը գրեն. — Քարաշորի բոլորաբիթ խրամներուն մէջ հազիւ 20—25 անձեր կան միայն: Այս առաւօտ 60 70 ձիււաւոր-հետակ գորանօցէն իջան դէպի Քաղաք՝ իրենց հետ տանելով բռններ, որոնց պարունակութիւն չենք գիտեր ինչ է: Ուրիշ գիրքէ մը գիտածին համաձայն Քաղաք փոխադրուողները շարկաւոր քիւրդ կին և երիտաներ են:

Զին. մարմին

№ 20

Ապրիլ 24

Աւրախ շուրիք Քաղաքէն

Այս գիշեր Քաղաքէն 2 սուրհանդակներ յաջողութեամբ կողպանց գիւղը հասած և կարևոր տեղեկութիւններ բերած են:

Մեր գահնճապետ Զէյդէտի պոչաւոր սուսերուն համաձայն, իբր թէ Քաղաքամէջը շարաթներ առաջ քանդած ու աներ վիճակի մէջ մեծամեծ կորուստներ առած է, և երեք օր առաջ ալ թէպիմի—հպատակութեան ենթարկուած է ջարդարար կասաճաբութեան, սուրհանդակ ընկերները հակառակը սնդեղով հանդերձ կատեմեն մեզի, թէ Քաղաքը բացարձակ անկասկածեալ:

Տէջ կապրի: Քաղաքի պարիսպէն ներս ամբողջ գիրքերը մեր ձեռքն են: Թշնամիի բոլոր գիրքերն ու շէնքերը վառւած ու փճացած են: Այլոք էն յաջողութեամբ փութ-հեռագրատունն և կառավարական կարգ մը շէնքեր:

Շուշանցէն դիտւածին համաձայն երէկ ժամը 4-էն (9-էն) սկսեալ թշնամիի բերդէն կրկին սկսած է Քաղաքի անօդուս ստրակածութիւնը: Ժամը 5-ի (10-ի) մտերն ալ տեսնւած է, որ Պիթ-պաղարի կողմ ծովի ուղղութեամբ ձուլիներ կը բարձրանան: Թշնամիին շարժումները. — Շուշանցէն կը գրեն. Երկու օր առաջ 200-ի չափ թշնամիներ շայց-ձորի կողմերն անցան:

Հաջի-Պաքրի գորանացէն յառաջանալ փորձող թշնամիի անմիջապէս ետ կը դառնայ մեր պահակներու բացած կրակին վերայ և յայտատանկով կուռուպաշի ձորձորներու մէջ, կակի տնիմաստ և փարիտոս հրացանաձգութեան: Երկու օրէ ի վեր թըշնամիի ուժը պարի կերպով թոյլ է աչղ կողմերը: Երկու օր առաջ թշնամիի աւելի բազմաթիւ էր Սղղայի և Թաղա-քեհնրէզի վերերը: Երկէ աչղ կողմերն ալ շափաղանց թուլցած էր:

Այս իրիկուն 150-ի չափ միլլիոններ կուռուպաշէն բարձրացան լեռը և գորաշարժի ձևով երեք ուղղութեամբ գորանաց վերայարձան:

Թօփրար-գալէն 200-է աւելի գորքեր Շահպաղի կողմերն անցան և ապա առաջացան դէպի Սաշ-կէտիւկ:

Մեր բոլոր գիրքերէն կը գրեն. — Այս գիշեր ժամը 9-էն (2-էն) սկսեալ թշնամիի սկսաւ իր սովորական երկչոտ հրացանաձգութեան մեր բոլոր գիրքերուն վրայ: Ուէ յառաջացումի փորձ յոյց շաւաղ մէկտեղ, թշնամիի թեթի բնդհատումներով շարունակեց փամփուշաներ փճացնելու իր եռանդուն աչխատանքը մինչև արշալոյսը, որմէ ետք յոգնած լոկց: Մեր ընկերները փոքր ատրճանակներով միայն կամ բնաւ կը պատասխանէին:

Երկէ Լալրանգեան գիրքէն գիմացի փուտի աւերակներուն մէջ, թշնամիի գիրքին ծակէն նայող միլլի մը սպաննեցինը:

Տարտանիլէն կը տեղեկացնեն, որ ասուան շուտ Հաջի-Պաքրի գլխային առջեկէն անցան 100-ի չափ անգէն քիւրդեր: Անոնց ետեկէն 29-ի չափ ձիով բեռնուորներ ալ անցան դէպի Քաղաք:

Այսօր ժամը 10 կէսին (3 կէսին) մեր երեք բնկերները յա-
ջօցեցան մտնել Հացհամբուղի դիրքը. որ թշնամու ձեռքը կը
գտնուէր: Թշնամիի բացած կրակները ունէ փնսս չը աւին մեզի:

Տեղե կատու դիւան

№ 21

Ապրիլ 25

Չորս օրէ ի վեր Այգեստանի վրայ թուրքական յարձակում-
ները կանգ առած են: Երէկ Այգեստանի մէջ նեուեցան ընդա-
մենը երեք սոււր առանց ունէ արզիւնդի: Երէկ ժամը 11-ին
(4-ին) Ատալուխի աւերակներուն մէջ ապաստանել ուզող թըշ-
նամիէն սպաննեցինք մէկ միլի և վերաւորեր/նք ուրիշ մը: Այս
գիշեր բոլորովին խաղաղ անցաւ:

Աստուծոյ թշնամին Կուսուպաշի և Աղգայի ուղղութեամբ
առաջացաւ դէպի Շուշանցի մեր դիրքերը: Մեր պահակները
փոքրիկ գիւմարութիւններէ վերջ քշեցին գիւղի վերերը: Թըշ-
նամիի պաշարումէն խոյս տալու համար բնկերները կը պարտա-
ւորին լքել գիւղը և վերի գիրքերը բնկելով կուսել: Թշնամին
այրեց գիւղի քանի մը շէնքերը և Կարմիր գիւմարը խուժանի
ձեռքէն սպրտած են 100-է աւելի անգէն կիներ և ազաններ, ու
յաջողած են քաղաք հասնել: Թշնամիի այդ փոքրիկ անակնկալ
յաջողութիւնը բնաւ չի յուսահատեցներ մեզ:

Աստուծոյ մեր բնկերները Աղգայ գիւղին ուղղութեամբ թըշ-
նամին հետապնդելով, Թագա-քեանրէզի վերի գիրքերէն թշնամին
վանեցինք: 2 սպանեալ տալով թշնամին Աղգայ ապաստանեցաւ:
Ժամը 2—3 (7—8)-ին բուն կռիւնք եղան Շահպէնդէրի և Թա-
գա-քեանրէզի կողմեր: Հուն կը գործէ մեր թնդանօթը: Թշնամին
աւտծ է երեք սպանեալ:

Շան Թաղի մեր գիրքերէն միլի մը սպանեցինք:

Վերջին յարձակումը. — ժամը 6-ին (11-ին) Աղգայէն թուրք զօրքը
80-ի չափ յարձակում գործեց Թագա-քեանրէզի մեր գիրքերուն
վրայ. բնկերները յաջողութեամբ գիւմարելով ժանդարմ մը բո-
ղաննեցին: Աւրբաթ առէ կողմէն յառաջանալ ուզող թշնամիի
վրայ մեր պահակները կռակ բացին և փախուստի մասնեցին:
Աւրբաթն ի վերջէն ժանդարմ մը սպաննեցինք:

Տեղե կատու քիւրք

Երէկ արշալոյսին Շուշանցի և Վարազի գաղթական պիւ-
շացիութիւնը քաղաք լիցեցաւ:

Նոյն վայրերէն գաղթականութեան հոսանք մըն ալ այս
գիշեր հոս դալով պատասպարեցաւ Շուշանցի կոիւնեբուն մէջ
Թշնամիի կորուստը անյայտ կը մնայ տակաւին:

Վարազի մէջ ոչ մէկ կոիւ տեղի չէ ունեցած: Զինւած գիւ-
ղացիութեան մէկ մասը քաղաք եկած է, բաւական մաս մըն ալ
կը շարունակէ լիւսը պահել: Թշնամին օգտուելով զինւած մար-
տոց բացակայութենէն, երէկ ցերեկը, ժամը 12 (5)-ին ատեններ,
վանքը մտնելով այրած է ամբողջովին: Կարևոր իրեղէնները
թալանելով ամբողջ ոչխարները քշած տարած է Հայոց-ձորի ուղ-
ղութեամբ:

Երեք օրէ ի վեր Բաղաքամէջը իրստ ոմբակոծութեան
հենթարկէի թշնամիի կողմէ. միւս կողմէ Այգեստանի վրայ թըշ-
նամին ռեէ շարժում չի ընէր:

Երէկ իրիկեան զէմ թշնամին սկսաւ ոմբակոծել Սահակ-
քէյի և Տէր-Թովմասեանի գիրքերը: Սիւնէթչեանի գիրքէն կրակ
քանալով թշնամիի վրա, թրդանօթը 4 ժամով լռութեան պատ-
պարուեցաւ:

Թութուզի մեր գիրքէն այդ թնդանօթը կառավարող սպան
քնդակահար սպանեցաւ: Սպայի գիակը վերցնել ուզող միլի
մընալ զնդակահար եղաւ:

Երէկ իրիկուն մեր պահակ ընկերներէն մէկը խրամի մջին
Զրւանդանցոց քէօզիի դռան առջև միլի մը սպանեց: Դիակը
միջևն առաւօտ հոն մնաց: Վերջէն յաջողեցան փախցնել:

Մրտեանի (Շան-Թաղ) գիրքէն թուրք մը սպանեցինք
այսօր:

Արարք Ա. շիջանի դիւանը կը դրէ.—Երէկ թշնամին կոր-
չարի կողմէն փորձեց թնդանօթով հարւածել մեր գիրքերը. զըն-
դակներէն ոչ մին իր նպատակին չը կրցաւ ծառայել:

Երէկ առաւօտ կորդ-դարի կողմ Բէյոսթ-բեհնրէզի տասլ
թուրք մը սպաննեցինք:

Այսօր Փէօթիքեան գիրքէն Դաւոյի դռան բով թուրք մը
զնդակահար ըրինք: Դարձեալ Սօլախեաններաւ այգիի պատի
տակ քիւրզ մը սպաննեցինք:

Թշնամին ժամ մը առաջ Հայոց-ձորի և Արտամետի գաղ-
թական կի՛ններ ու երեխաներ բերելով, Արարոց կողմէն մեր կողմ
ճամբեց:

Տեղեկատու դիւան

№ 23

Ապրիլ 28

Այսօր առտու ընէ սկսեալ չորս թնդանօթներ, որոնք զի-
տեղւած էին Թոփրաղ-գալէի մօտեր, անդադար ունակոծեցին
Տէր-Պաշատրեանի, Տպաղ-Խէլոյի, Շիրօեանի, Չանթիկեանի և
Շէկօեանի մեր դիրքերը: Միայն Շիրօեանի և Տէր-Պաշատրեանի
վերին յարկերը քանդուեցան: Չանթիկեան գիրքի վրա խուժող
թշնամին մեր կողմէ նստած ուսմբի հետեանքով փախուստի
մատնուեցաւ:

Մինք ունեցանք սպանեալ երկու զինուոր և մէկ բանուոր,
այ կուռզներէն ալ երկու վիրաւոր: Թշնամին այս բուռն յարձա-
կումներու ընթացքին ունեցաւ 20—25 սպանեալ, բացի վիրա-
ւորներէն: Շահպէստէրի գիրքին վրա ալ թնդանօթի գնդակներ
արձակուեցան, որոնք ունէ կորուստ չպատճառեցին:

Արարոց շրջանի մեր դիրքերէն Տէկրցի Սարգսի տունն ալ
այսօր ունակոծուեցաւ թնդանօթի մը կողմէ, որ արձակեց պայ-
թուցիկ գնդակներ, առանց ունէ վնասի:

Սահակ-պէյի գիրքին վրա ընդհատաբար արձակուեցան թըն-
դանօթի և հրացանի գնդակներ:

Չանթիկեան գիրքէն կը գրեն.— Երէկ և այս գիշեր համե-
մատաբար քիչ մը խաղող անցաւ. սակայն այսօր արշաւոյսէն
սկսեալ թշնամին մեր հիւսիս ուղղութեամբ բոլոր այգիներու
պատերու ետև, քէօշկերու մէջ կրակներ վառեց: Խուժ-խուժ
քիւրդեր և չէրքէզներ կանցնեն ու կը դառնան մեծ թուով: Իսկ
Պօրանոցի վերև հինգ տեղ թշնամին այս գիշեր խրամներ փորե-
ցով հինգ թնդանօթ գետեղած է: Այսօր կսպասուի կուռի:

Ա. Շրջանի դիւան կը գրէ ապրիլ 27 թւականով.— Թշնա-
մին այսօր ժամը 2 (7)-էն սկսեալ երկու թնդանօթներով սկսաւ
Չլոր-դարի այգիներէն ունակոծել մեր հարաւային ճակատի ե-
տեք գիրքերը, մասնաւորապէս Տէկրցի Սարգսի գիրքին տասէն
անկի ռուժեր հանդիպեցան և պատեր ծակեցին, փոցներով կի-
սակեր ախտ մը: Թնդանօթներէն մէկը կը ձգէր պայթուցիկ
գնդակներ:

2

Թագանօթի հարսածներէն յետոյ մեր գիրքի քովի տունէն թշնամին փորձեց ֆուսել մեր ընկերները. պատին մէկ երեսը թշնամին, միւս երեսը մեր ընկերները կանգնած կը կուէին, ոչ մէկ ֆուսու ունինք:

Պնէհանի գիրքէն զարկինք մէկ թնդանօթաձիգ. ընկերները ահտան, թէ ինչպէս ստներէն քաշելով դիակը փրցուցին: Թշնամիէն սպաննեցինք միւր մը:

Երէկ Տարսանէլի մեր գիրքէն սպաննեցինք միւր մը:

Տեղեկատու գրան

Կոխը այս ձևով շարունակեց մինչև ապրիլի 28-ը և մէկէն ապրիլի 29-ին Զին. մարմինը բաց թողեց Տեղեկու գրան մը:

Ընկերներ.

Զանազան տեղերէ կիմանանք, որ թուրքերու մէջ խուճօտ կը տիրէ, և թէ իրենց գիրքերը կը լքեն: Արդ, պէտք է որ բարդ ալ ձեր գիրքերու մէջ ամբանալով մէկ երկու նպով աստ-ջացում կատարէք. իմանալու համար, թէ ճիշտ են ասնուած լուրերը, թէ ընդհակառակը թշնամին ծուղակ մըն է, որ կը պատ-րաստէ:

29 ապրիլ

Զին. մարմին

Իսկ այս գրիմումից մէկ օր յետոյ լոյս տեսաւ նաեւ Տեղեկու հարցազարու թիւնը:

№ 25

Ապրիլ 30

Նալբանդեան գիրքէն.— Երէկ հրահանգուած էր թշնամու գիրքերը ուսումնասիրելու Իզուր գոճ մը չը տալու համար՝ զին-ւորներով գործ մը տեսնելու փախարէն իտալ մը կազմակերպե-ցինք: Կրակով լեցուն աէպօ մը շան ետէն կախելով ուղից Թաշ-փաղոցէն վար փաղեցուցինք, մինևոյն ստեն ուսաներ պո-տալով և յարձակում կանչելով, մեր գիրքերէն 2-ական սիմիթ կրակեցինք: Թշնամին կարծելով որ մենք իրականապէս կը խու-փենք դէպի իրենց գիրքերը, և վազող շան կրակէն ահաբե-կած իրենց գիրքերէն սկսան համազարկեր տալ և մօտ 500 ֆուճֆուշա փակեցին: Նկատելի էր, որ անոնց գիրքերին մէջ մէկ

կամ երկու հոգի կային և թէ համազարկի ձայներ աւելի վարերէն կուգային:

Ե. Շրջանի դիւանը կը գրէ.— Երէկ մեր կողմը բոլորովին լուռ անցաւ, թշնամին երբեմն-երբեմն միայն կը կրակէր: Մեր կողմէն մինչև իրիկուան հազիւ 2—3 պատասխան տրեցաւ: Թըշնամին կատաղեցաւ, երբ Սահակ բէյի դռան առջև ինկած քիւրզի դիակը սկսանք վառել:

Երէկ չէ առջի օր մեր գիրքին թնդանօթի քանի մը գընդակներ զարկին, բայց աննպատակ: Նոյն օր մեր խրամի դիրքին մէջ ձեռքէն թեթևապէս վերաւորեցաւ մեր զինւորներիէն մէկը:

Երեկոյեան թշնամին սկսաւ ուժգին հրացանաձգութեան, առանց գիրքերէն դուրս դալու: Մենք կը պատասխանէինք միայն հատ-հատ ծխաւորներիով: Հրացանաձգութիւնը ընդհատուեցներով շարունակեց մինչև առաւօտ: Առաւօտէն մինչև հիմա լուռ են:

Երէկ և այսօր թշնամին թնդանօթի ոչ մէկ գնդակ չէ պարպած Այգեստանի վրա: Մինչդեռ Քաղաքի սմբակոծութիւնը աւելի խստօրէն կը շարունակուի:

Տեղեկատու դիւան

Տաճիկները թողնում էին Այգեստանը, այս էին ցոյց տալիս նշանները, բարակոծութիւնը դադարել էր այդտեղ:

Տաճիկները թողնում էին նաև Քաղաքը, թէև, ինչպէս տեսանք հաղորդագրութեան մէջ, նրա վրա առատօրէն դեռ ևս տեղում էին սումբեր:

Կռիւր շարունակեց խիստ կերպով մինչև ապրիլի 29-ը, երբ ցորեկին տեսանք, թէ ինչպէս թուրք կանայք և կարգ մը վերաւորներ ու հիւանդներ իրենց հիւանդանոցի հազուսաններով կերթային դէպի Աւանց գիւղը, նաւահանգիստ.— գրում է այս կուրսի մասնակցող մի զինւոր, ու աւելացնում է.— Ապրօնեցիք բարձր խմբապետը վեր կացաւ ու կրակեց, և թուրք կին մը ընկաւ. լուրը անմիջապէս հաղորդեցաւ Զին. մարմինն և Հայկակ Գոսոյեանը ու Դանիէլ վաղապետը եկան ստուգելու փախուստի առաջին նշանը: Փախուստը կը շարունակէր, երբ յաջորդ օրը միւս գիրքերէն ալ լուր տոնք, որ թուրք կանայք և երկուսուր

մեծ թիւերով կը փախչին դէպի Շամիրամա թաղ, այնտեղէն ալ դէպի Արտամեա և Ոստան: Այս լուրը մեծ ոգևորութիւն պատճառեց, սակայն Ձին. մարմնէն հրահանդ եկաւ, թէ չըլլայ թուրքերու փախուստ ձեզ թուլացնէ, աշխատեցէք աւելի աշաւուրջ և ուշադիր լինել, որովհետև այդ փախուստը թերևս նախապատրաստուած ծրագիր մը լինի:

Եւ իսկապէս, տաճիկները փախչում էին, փախչում էին, որովհետև ոուս բանակը շարժուած էր դէպի Վան: Դիմանի մօտ Սալիլ բէյի բանակը ջարդելուց յետոյ ոուսական բանակը, դրա հետ միասին Անդրանիկի գունդը Բաշկալէն գրաւելով, առջանում էին դէպի Վան. մի այլ զօրասիւն հայ կամաւորների միւս գնդի հետ միասին, որի ղեկավարներն էին Վարդանը, Քեռին, Դրօն, Խէչօն, Համազասպը հասել էին Բերկրի:

Ձէւդէտը, սրը ժամ առ ժամ ստանում էր տեղեկութիւններ ոուս բանակի առաջխաղացման մասին, գլուխը կորցրած դատարկում էր Վանը և պատրաստուած էր փախչելու առանց նոյնիսկ ղիմադրութիւն ցոյց տալու: Սակայն հայերը Այգեաստանի ու Քաղաքի մէջ պաշարուած՝ չը գիտէին ինչ է կատարուում դուրսը և այդ փախուստը համարում էին նախամտածուած մի ծուղակ կամ դաւադրութիւն:

Ուշագրաւը այն է, որ նոյն այդ միջոցին Այգեաստանի Ձին. մարմինը ոչ միայն չէր նախատեսուած թշնամու վերջնական փախուստը, այլև շրջաններում հիմնում էր տեղեկատու դիւաններ, շարունակում էր դիրքերը ամրացնելու գործը, կազմել էր տալիս Այգեաստանում գտնուող պէնքի ու սաղմամթերքի վիճակագրութիւն և արձակում էր զգուշացնող կոչեր:

Կարևոր է այստեղ բերել մի քանի թւեր, որոնք ցոյց են տալիս Այգեաստանի այդ օրերի զինական ուժը:

Համաձայն ապրիլի 30-ի կազմուած վիճակագրութեան թէ կուսակցութիւններին և թէ մասնաւոր անհատներին պատկանող զէնքեր կային.

1. Հրացաններ—մօսինի, մաուզէրի, մօզէլ, այնուլի, կափաղի, բերդան 480 հատ 68,000 փամփուշտով:

2. Ատրճանակներ—տաս-հարւածեան մաուզէրի 520 հատ 42,000 փամփուշտով:

3. Ատրճանակներ այլևայլ տեսակի 265 հատ 11,000 փամփուշտով: Ընդամենը 1265 զէնք 121,000 փամփուշտով:

Կուրի սկզբում, ինչպէս տեսանք, եղած ղէնքերի թիւը հաս-
 նում էր 700-ի. այժմ այդ թիւը մեծացել էր, և այդ շնորհիւ նը-
 րա, որ կուրի ընթացքում Հայոց-ձորի, Թիմարի, Արճակի և
 Շուշանց—Վարազի կուտղները տեղի տալով թշնամու գերազանց
 ուժերին, իջել էին Այգեստան, իրենց հետ բերելով ղէնքերը.
 ինչ վերաբերում է փամփուշտի քանակին, այդ արդէն ցոյց է
 տալիս, թէ ինչպէս փամփուշտի խնայողութեան հետ միասին
 նորից ու նորից լցնում էին դատարկ գելզաները ու գործածում:

Ձէւղէտը պատրաստում էր փախչիլու, բայց ոչ մէկէն.
 Նախ սկսեց փախչել ժողովուրդը, և Վանի տաճկական թաղերը
 դատարկւեցին: Մէկէն փախչել հեշտ չէր, փոքրոգի սատրապը
 վախում էր, մի գուցէ հայերը հետապնդեն և ջարդ տան, ուստի
 փախուստի նախընթաց երկու-երեք օրերը կատարել տւեց զօ-
 րաշարժեր. թնդանօթները դարձնում էր երբեմն Քաղաքի և եր-
 բեմն էլ Այգեստանի վրա և ուժեղ ումրակոծութեան էր ենթար-
 կում մէկ այս և մէկ այն դիրքը: Սրանք փախուստը քօզարկող
 դործողութիւններ էին. սրանք մեռնող թշնամու վերջին ջղածիդ
 շարժումներն էին:

Մայիսի 3-ի առաւօտը բացւեց սովորական պայմանների
 մէջ, պաշարած ժողովուրդը ղէնքը ձեռքին դիմաւորեց արևի
 ծագումին և Այգեստանի Զինւորական մարմինը բաց թողեց հե-
 տեհալ լրաբերը:

№ 26

Մայիս 3

2. Շրջանը—դաշտը կը դրէ մայիսի 2-ի թւականով.— Թըշ-
 նամին ժամ 1 կէսէն (6 կէսէն) սկսեալ 2 պայթուցիկ թնդանօթով
 սկսաւ ումրակոծել մեր շրջանի բոլոր դիրքերը, մեծ մասամբ ան-
 նպատակ: Մէկը յաջողեցաւ զարնել Տէր-Սաչատրեանի մեր դիր-
 քի վերնայարկին, չորսը զարկաւ Ամերիկեան շէնքին և դրօշին,
 մէկը Գերմանացոց շէնքին, 8—10 հատ Մալխասի և Սօլխեսանի
 մեր խրամներու ուղղութեամբ: Ընկերներուն ոչ մէկ փնտա: Պա-
 տահարար սպանւեցաւ սղջիկ մը, որ կը պտտէր մեր դիրքե-
 րուն մօտ:

Երէկ, մայիսի 1-ին Շանդհանկրի մեր խրամներէն անցած

պահուն, գլխէն զարնւեցաւ և մեռաւ յայտնի կուռոյ ասորի քահանան — կաշան:

Ա. Նրջանի (Արարք) զիւան կը գրէ. — Երէկ թշնամին Հաջի-պէքրի զօրանոցի առջևի խրամէն պայթուցիկ թնդանօթնի-րով ժամը 11 (4)-էն սկսեալ Այգեստանի արևելեան բոլոր սահմանները ոմրակոծելէ վերջ, ժամը 5 (10)-ի ատեններ իր կրակը ուղղեց մեր գիրքերէն ոմանց վրա և քանի մը տեղեր ծակեց առանց փաս հասցնելու: Երէկուան գիրքերը փրակելէն ետք սուսքեր սկսաւ արծակել առհասարակ բոլոր թաղերու վրա: Պատահական սուսքէ մը սպանուցաւ մեր սուրհանդակներէն Միսաք զիւանի կերակուր բերած ժամանակ: Վիրաւորեցան ուրիշ սպաներ, որոնցմէ մէկը զարձեալ մեռաւ:

Երէկ ժամը 6 (11)-ի ատեններ մեր Զէյթունի գիրքէն թշնամու խրամի մէջ թուրք մը սպաննեցինք:

Է. Նրջանի (Տարտանէլ) զիւան կը գրէ. — Երէկուան թնդանօթաձգութիւնը տեղի ունեցաւ ցերեկ ժամը 10—6 (3—11)-ին: Թնդանօթաձգութեան հետ սկսաւ համադարէր: Նեաւած է 100 սուսք: Մեր կուռոյներէն միայն մէկ կորուստ ունեցանք: Այս գիշեր տեղի ունեցաւ թշնամու անց ու դարձ գէպի Գաղաք և Գաղաքէն գէպի զլլան, ինչպէս նաև սայլերու երթեհեկութիւն: Թշնամու ուժերը նոյն են: Գաշտի մէջ ոչ մէկ շարժում և անցուցարձ:

Ծովի վրա կերելին 10 նաւ, ուղղութիւն առայժմ յայտնի չէ: Գիշեր Լեսիկէն եկողներէ կիմացի, որ թշնամին միմիայն ընտանիքներ կը տեղափոխէ նաւով. իսկ տղամարդկանց փախուստը արգիւլած է առայժմ: Նաւով փոխադրուողները քիւրճ ընտանիքներ են:

Թօփրագ-գալէի զօրանոցի զօրքեր մէկ մէկ կըլայէն կընելով գէպի Աղզայի լիճ կերթան, իրենց հետ առնելով պայուսակներ ու սնդուկներ: Մեր գիմացի թշնամու գիրքերուն մէջ այսօր լոռիփիւն կը տիրէ: Մեր զինուորները թշնամիին գիրք եղող այգին մտնելով, գտած են գիակ մը 20 մաուզերի փամփուշտով և մէկ սուր: Սպանուածի անցադիրը ցոյց կուտայ որ էրզրու մցի թուրք չէթա մըն է:

Այսօր Հաջի-Բէքրի զլլայէն սկսան ոմրակոծել Տէր-նաշատուրեանի գիրքը. քանի մը թնդանօթի զնդակներ անցան Ամի-

քիկեան շրջանակ և ոչ մէկ ֆլաս տւած չեն: Նկատեցինք, որ
Հաջի-Բէքրի գլխին դէպի վեր բեռնակիրներ կառաջանան Հա-
յոց-Չորի ուղղութեամբ կուռուրաշի ճամբով:

Այս գծի խուճապը կը մեծնայ: Նոր-գիւղի զօրքեր և ըն-
տանիքներ՝ թւով 200-ի չափ շարժման մէջ են, թէ ձեր, յայտ-
նի չէ:

Տեղեկատու դիւան

Ահա այս լրարեբը, որ լոյս տեսաւ մայիս 3-ին եղաւ վեր-
ջինը, նա եկաւ կազմելու մեծ պայքարի վերջարանը:

Յաճախ խոշոր երևոյթները կատարոււմ են անսպասելի
կերպով և նրանք ունենում են խորհրդաւոր նախընթաց:

Մայիս 3-ը Վանի հայ ժողովրդի համար մի զարաշուք
էր, այդ օրը նրա պայքարի վերջին օրն էր, միևնոյն ժամանակ
նրա յաղթանակի ու փրկութեան մեծ օրը: Երբայց նա, հայ ժողո-
վուրդը այդ չը գիտէր և չէր էլ նախատեսում: Ձինւորական
մարմինը բաց թողնելով մայիսի 3-ի լրարեբը, չը կարողացաւ
գուշակել անգամ, որ այս լինելու է վերջինը:

Եւ այն միջոցին, երբ Այգեստանի պաշարւած հայ ժողո-
վուրդը կուի օրերին յատուկ կեանք էր ապրում և Ձին. մար-
մնի լրարեբը կարդում, Ջէւղէտը արգէն ժամերը համրած կու-
սակալական բազկաթողի վրա բազմած, հետեւեալ հրածեշտի նու-
մակն էր գրում իտալական հիւպատոս Սպօրտօնին:

Սիրելի Սպօրտօն էֆ.

Պատերազմական հարկադրութեանց պատճառով քաղաք կը
թողում: Ճիշտ որ ցաւի արժանի վիճակ մը կը կեր է, խոտովու-
թեանց մէջ գտնւող երկրի մը մէջ նախագահութիւն ընել: Աչքի
սուջև գտնւող երկխաներուն գթալը արգիլեց մեզ գիշերային
յարձակումներ զործել: Ինուսները կացութենէն օգտուեցան: Աս-
ւած փորձանք հասցնէ գաւաճան քօմիթաճիներուն: Երբ թշնա-
մին երկիրը մտնէ, բնական է, որ ատկէ վերջ անընդհատ կախ-
պիտի տեղի ունենայ: Բարևներս Ալկարտի էֆ.-ին և բոլոր ըն-
կերներուն, յարգանք տիկիներուն:

Գրելով այս նամակը Ձէւդէտը կատարեց վերջին շղատը՝
 գումները. այդ մեծնոց տաճիկ կառավարութեան շղատգումն էր՝
 Թնդանօթաձգութիւնը վերակուեց մի կատաղի թափով. երեք կէ-
 տեր—Հաջի-բէքրի զօրանոցը, Կլոր-դարը և Սահակ-բէյի փոսը
 հանդիսացան բուռն ուսմբեր տեղացող հնոցները: Թնդանօթնե-
 րի սրտը, ընկնող ուսմբերի պայթիւնը այնպիսի չափերի հա-
 սաւ, որպիսին դեռ չէր տեսել Այգեաստանը ամբողջ կոիւնքերի
 ընթացքում: Այդ օր նետուած ուսմբերից սպանւեցին և վիրա-
 ւորւեցին 29 հոգի. մի ուսմբ ընկաւ Սանիկեանի փողոցը, ոչ հե-
 ոսւ շիւսեանի տանից, որից սպանւեցին ու վիրաւորւեցին 10
 հոգի. այդտեղի սպանւածներից էր մէկ երիտասարդ սուրհան-
 դակ: Թնդանօթաձգութեան հետ զօրծում էին նաև համա-
 զարկերը:

Այս շարունակեց մինչև ժամի 4-ը: 4-ից սկսած ումբակո-
 ծութիւնը մեղմեց, ապա սկսեց թուլանալ ու թուլանալ, դրա
 հետ միասին թուլանալ սկսեց նաև հրացանաձգութիւնը և ապա
 արտաները հետզհետէ-հետզհետէ նւազեցին ու նւազեցին և վեր-
 ջին հոգեշունչ պայթոցները խուլ արձագանք դտան Ձմզմ-մաղա-
 քայի ժայտերի մէջ, ինչպէս դաշնամուրի վերջին մարող ա-
 կորդներ:

Մի վայրկեան դիրքերի տղաները ընկան ինքնամոռացու-
 թեան մէջ, մի վայրկեան նրանք, ասես, տարւեցին հմայիչ նը-
 ւազի արբեցութեամբ, և չը կարողանալով գիտակցել թէ ինչ է
 կատարւում իրենց շուրջը, մնացին քարացած վիճակի մէջ: Եւ
 մէկէն նրանք ուշաբուկեցին կարծէք խորը քնից, զգացին անսո-
 վոր լուսութիւնը, տեսան ամայի շրջապատը և մէկէն աղա-
 դակեցին:

— Տղայք, թշնամին փախաւ:

Ահա այս երեք բառերը մայիսի 3-ի երեկոյեան ժամի 6-ին
 հնչեցին Սյգեաստանի դիրքերի մէջ, ինչպէս արևածագի զօղանջը
 տղաները դուրս թոան դիրքերից, ինչպէս վաղըներ, երկու թե-
 ւերով յարձակւեցին Թոփրագ-գալէի և Հաջի-բէքրի զօրանոցնե-
 րի, բոնութեան այդ երկու սիմբոլների վրա. դրանց շուրջը
 տեղի ունեցան վերջին բախումները յարձակողների ու փախչող
 զօրքի մնացորդների մէջ, հնձեցին այդ տեղերում մի քանի
 կեանքեր ևս, և երկու զօրանոցները իբրև երկու վիթխարի խա-

բոյլէնք բոցավառուեցին, աւետելով մարանչող ժողովրդի յաղթանակը:

Սակայն Քաղաքը դեռ ևս անմասն էր առաջին յաղթանակի այդ հրավառութեանը: Վաղ առաւօտից Այգեատանի ումրակոծութեան հետ միասին ումրակոծութիւն սկսեց նաև Քաղաքում: Սակայն ոչ այնպէս բուռն թափով, ինչպէս Այգեատանում: Հրացանաձգութիւնը սլակաս էր, թնդանօթաձգութիւնը նոյնպէս, բայց սկսած կրակը անընդհատ շարունակեց մինչև երեկոյեան ժամի 6-ը: Ժամի 6-ից թնդանօթի որոտները յանկարծ դադարեցին, մինչդեռ թնդանօթաձգութիւնը, ինչպէս և հրացանաձգութիւնը սովորաբար շարունակուում էր մինչև ժամի 7-8-ը, յաճախ աւելի էլ: Այս անսովոր երևոյթը համարեց թշնամուկողմից մի խաղ, մանաւանդ որ այդ երեկոյ բերդի բարձունքում գտնուող զօրանոցը չը լուսաւորուեց:

— Անշուշտ մի դաւադրութիւն պատրաստուում է թշնամին,— մտածեց Աին. մարմինը և կարգադրեց խմբերին չը շարժել իրենց դիրքերից:

Քաղաքը դեռ ևս վարանման մէջ էր, երբ Թօփրաղ-գալէի վերի զօրանոցից ծուխն ու բոցը բարձրացաւ. բայց վարանումը շարունակեց, որովհետև Հաջի-բէքրի զօրանոցը դեռ ևս կանգուն էր, նրանից ծուխ ու բոց չէր բարձրանում:

Անցնում էին ժամերը ծանր ու սպասողական, առաջնորդարանի տանիքից լարած ուշադրութեամբ հետևում էին Հաջի-բէքրի զօրանոցին, վերջնական նշանը նա էր հանդիսանալու: Վերջապէս կէս դիշեր հղաւ և անա Հաջի-բէքրի վիթխարի զօրանոցը բռնկեց, ու հրիղէն բոցերը շառագունեցին խաւար երկնականամարը: Վայրկեհնապէս լուրը հասաւ Աին մարմին, ապա տղաներին, տղաները գուրս եկան դիրքերից, առաջացան դէպի թշնամու դիրքերը և նրանց դատարկ գտան:

— Թշնամին փախել է,— լուեցին բարձրակոչ այս երկու բառերը տաճկական դիրքերից և միաժամանակ ծուխն ու բոցը բռնեց չորս կողմը:

Մայիս 4-ի լուսածագը վրէժի, խենթութեան ու խանդավառութեան լուսածագը հանգիսացաւ: Այգեատանը ծխով էր

պատած և տեղ-տեղ հրդեհի բռնկումները թանձր քուլաներ էին արձակում: Բոցախառն ծխի քուլաները ծաւալում էին նաև Քաղաքի տաճկական թաղերի ուղղութեամբ: Տղաները առաջանալով հրդեհում էին տները ու անցնում, չը խնայելով ոչ մի բան. մէկ օր առաջ սարսափ ազդող թշնամին չը կար, նա անհետացել էր ինչպէս բորենի:

Մայիսի 4-ի արևը ծագեց արտասովոր մի ակտով. դա խենթութեան համրոյրի ակտն էր: Այգեստանից Քաղաք հասան զինւած մի խումբ տղաներ, նրանք գրկախառնեցին դիմաւորող Քաղաքի տղաների հետ և ողջոյնի համրոյրներ գրօշմեցին միմիանց ճակատին: Գնալով Այգեստանի տղաների թիւը աճում էր, աջ ու ձախ համրոյրներ էին տեղում. Վանի մէկ քաղաքամասի հայութիւնը իր ողջոյններն էր առաբւում միւս քաղաքամասի հայութեանը:

Եւ մինչդեռ ցածում բոցերի ու ծուխի ժխորի մէջ տեղի էին ունենում խանդավառ ցոյցեր լի խենթութիւններով, երկու տասնեակ տղաներ երկու ծայրերից բերզը գրաւելով, բերդ, որին հայ ժողովուրդը սարսափով էր նայել՝ այդ բերդի թնդանօթի-քար կոչուող մի դահավէժ բարձունքում, որը կախւած էր ուղիղ Քաղաքի վրա և ուր գրւած էր լինում մի թնդանօթ, և ունդով կանգնեցնում էին մի զրօշակ. այդ զրօշակը արտաքինով շքեղ չէր, բայց շքեղ էր իր իմաստով, նա հանդիսանում էր դարերով ստրուկ հայ ժողովրդի ըմբոստացման նշանը, անհաւատար կուրի փառաւոր յաղթանակը և պատուութեան ձգտող ժողովրդի սիմուլը:

Կողոպուտ ու հրդեհ. ահա այն երկու բառը, միաժամանակ և իմաստը, որը դարձաւ մայիսի 4-ի նշանաբանը Վանի հայ ժողովրդի համար. դարերով կուտակւած վրէժի ժայթքումն էր այդ, որ արտայայտեց արտասովոր կերպով: Երկու օր շարունակ կողոպուտում ու հրդեհում էին Վանի տաճկական թաղերն ու տներն անխնայ: Երկու օր շարունակ խաղաղ աշխատանքի սովոր հայ ժողովրդի ձեռքով կատարում էին աւերմունքներ: Միմիայն շինելու վարժւած հայը այս անգամ քանդում էր, աւերում: Եւ այս վիճակին բերեց ու հասցրեց հայ ժողովրդին տաճիկ բարբարոս կառավարութեան ընթացքը: Հայ ժողովրդի

համար այլ ճանապարհ չէր մնացել և նա դարձաւ կողոպտիչ ու աւերող:

Ահա այս դրութեան մէջ էր Վանը, երբ մայիսի 5-ին, ևրբեքչարթի օր Վանից գնացած երկու սուրհանդակներ ուսւ բանակի առաջապահ հայ կամաւորների մի խմբին առաջնորդում էին գէպի ծխացող Այգեստանը. դրանց մէջ էին ուսւ սպայ Յոզը և խմբապետ Խէչօն:

Ծաղիկներով ու փունջերով դիմաւորեց Վանի հայ ժողովուրդը ուսւ բանակի այդ առաջապահ խմբին, հազարաւոր ժողովուրդը ահագին ցոյցեր կատարեց ի պատիւ նրանց, խանդավառութիւններ տեղի ունեցան Այգեստանի փողոցների մէջ, խանդավառութիւններ, որոնք անջնջելի կը մնան վառեցու յիշողութեան մէջ:

Նոյն խանդավառութեամբ և ցոյցերով մայիսի 6-ին մուտք գործեց Վան նաև ուսւսական բանակը գլխաւորութեամբ գեներալ Նիկոլանի: Միաժամանակ մուտք գործեց նաև հայ կամաւորների խումբը Վարդանի, Քեուռ, Իրօյի և Համազասպի հետ միասին: Իսկ այդ օր երեկոյեան Թիւթիւնջեան Սիմօնի ընդաբձակ աան մէջ ի պատիւ ուսւ բանակի և հայ կամաւորների պնդի Վանի հայ ժողովրդի կողմից ճաշկերոյթ տրեց:

Մայիսի 3-ից մինչև 6-ը, այսինքն տաճիկների փախուստից մինչև ուսւսական բանակի մուտքը Վան, թէ ինչ խանդավառ բողբոջներ ապրեց Վանի հայ ժողովուրդը, այդ գեղուն խօսքերով և բուռն զգացմունքներով արտայայտւած է Ձին. մարմնի վերջին դիմումի մէջ՝ ուղղւած Վանի հայ ժողովրդին, որ լոյս տեսաւ Վայիս 6-ին:

Ահա այդ դիմումը:

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ

Ահա կը բոլորենք մենք ամսօրեակը—ամսօրեակը պայքարի ու փառքի, մահան ու յարութեան մեր ցեղին: Ամսօրեակը նաև հայութեան առաջին և պայծառ դարունին:

Ամիս մը առաջ, այսօր, երբ թշնամին վատաբար կուր յայտարարեց քաղաքակրթութեան և արդարութեան դէմ, մեր դէմ, մենք հաւաքով փարեցինք մեր գէնքին և մեր հոգիի խորերէն զգացինք, որ յաղթանակը մերը պիտի ըլլայ այս կուրին մէջ:

վասնզի մեր կռիւը խաւարի դէմ էր, տղիտութեան ու բռնութեան դէմ՝ ճշմարտութեան և արդարութեան համար:

Եւ վերցուցինք զէնքը, կուրծք տալու համար թշնամիի գնդակներուն ու ռումբերուն, որոնք կուգային վերջնական հարւածը հասցնելու մեր ցեղի կորացած մէջքին, որոնք զեպին ծրուել կուզէին ճակատը մեր երիտասարդութեան և քանզի ակնադրբւրները վերածնուող մեր ցեղին:

Եւ կուրծք տւինք մենք թշնամիի մուկին և ամբարտաւան ժեսթերուն ու յարձակումներուն, և մեր հերոսական ու պատմական մարտնչողներու ընթացքին՝ ոչ մէկ տեղ և ոչ մէկ վայրկեան թշնամին չը տեսաւ մեր զինուորը լքած, մեր զիրքը քանդուած:

Ամսօրեայ պայքարը, զորս տարանք փառքով և պատուով, այսօր իր կատարելութեան մէջ կը վայելենք անա մեր յաղթանակներով արքած հայ ժողովրդի հետ:

Մեր զինուորի արի և անսասան դիմադրութիւնը ամեն տեղ թշնամիին զգացնել տւաւ, որ մեր երականերու մէջ չի դադրած, կը հոսի տակաւին արիւնը ազատութեան և կուր, և այդ Աստուածային արիւնն է, որ աղմկայոյզ և սրբանւէր բռնկումով զիտէ գլխապտոյտ և ակնկոր փախուստի մատնել երեկի ամբարտաւան և ամենազօր, բայց այսօրու վախկոտ և ստրուկ թշնամին:

Երեք օր է անա որ յաղթանակի խենթութիւնը բռներ է մեզի... Զօրանոցներու զեղատեսիլ հրդեհներու և բոլոր դահճապետներու որջերու ճարճատումներուն առաջ մենք կեցած ենք հիացումով և արբած...:

Արբած ենք մենք և աստուածային խենթութեամբ լեցած որովհետեւ հազարաւոր տարիներու մեզի թալանող, կողոպտող խաչողն է, որ գլխապատառ կը փախչի այսօր, և հազարաւոր տարիներու մեզի թալանողին և խաչողին է, որ կը թալանենք: Կը կոտորենք, կը խաչենք մենք:

Վրէժի անողորմ, բայց արդար Աստուածն է, որ նստած է մեր ներքը ու մեր գլխավերեք:

Վրէժի ձայնն է, որ կը լսենք մենք հիմա, և այդ ձայնը կուգայ հազարաւոր տարիներու ընթացքին սրախողող հայ սերունդներու, թոնիրներու մէջ խորովուող մանուկներու և բռնադատուած կոյսերու սասանեցնող և ազեկուոր կանչերու մէջէն...

Այսօր ահա հայկական Դրօշն է, որ հազար տարիներու ընթացքին, առաջին անգամ ըլլալով, կը փալիլի Վանի պատմական բերդի գլխին, հայու ազատութեան պայծառ արևին տակ... Այսօր ահա առաջին անգամն է, որ բռնութիւնը հայ զինուորի գընդակէն հալածական կը փախչի ինչքով, ընտանիքով և իշխանութեամբ... Այսօր ահա առաջին անգամն է, որ հայկական բանակը օգնութեան կը փութայ իր հոգեկից մարտնչոյ հայ երիտասարդութեանը:

Եւ այսօր ահա, երբ փառաւոր պայքարն է մեր ետին, լիակատար յաղթանակն է, որ կապրենք ու վերջնական ազատութիւնն է մեր առաջ, մենք գիտակցութիւն ունինք աւելի պայծառ ու երջանկաբեր հանգրւաններու մեր յուսառատ երազոյ ցեղին համար:

Մեր այս հերոսական կռիւներով մենք արդէն հիմքը դրինք այն հոյակապ ազատութեան, որուն երազեցին մեր հանճարները մեր ժողովրդին հետ, որու համար երեսունամեայ կռիւներով միլիոնաւոր կեանքեր զոհարեցինք և որու առաջին արշալոյսը կը ծագի ահա բաղդաւոր Վասպուրականի հպարտ լեռներու վրա...

Այսօր ուրիմն տօնն է ոչ միայն մեր ամսօրեայ պայքարին և յաղթանակներուն, այլև նախատօնը հայկական ազատութեան բոլոր բռնաւոր լուծերէն, բոլոր յոշոտոյ ձիրաններէն...

Կեցցէ հայկական ազատութիւն.

Փառք ինկածներուն.

Կեցցէ Վասպուրականի մարտնչոյ երիտասարդութիւն.

Կեցցէ հայկական բանակ:

Վասպուրականի հայ ինքնապաշտպանութեան մարմին

ՅՈՒՅԱԿ ԲՄԱՆԵՑՔՆՕՐԵԱՅ ԿՌԻՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ՔԱՂԱՔԱՄԻՋԻ ՍՊԱՆԻԱԾՆԵՐԻ

№	№
1. Գարեգին Աթաշկառեան	23. Մարտիրոս Արտամեացեան
2. Երեանդ Մաքսուտեան	24. Գիւզացի մէկ տղայ
3. Յակոբ Շառօեան	25. Տիկին Գարբիէլեան
4. Միհրան Յովակիմեան	26. Բեռն Խաչօն
5. Փայէլի կինը	27. Տիկին Այազեան
6. Մարկոս Բիւրիկեան	28. Տիկին Ճոնաւէտեան
7. Մանուկ Պալլեան	29. Յակոբիկ Գրիգորեան
8. Վարդան Տէր-Վարդանեան	30. Օր. Եղիսարեթ Գաֆաֆեան
9. Ռմբաձիգ Վահան	31. Օրիորդ Յովակիմեան
10. Մարտիրոս Կէօլօշեան	32. Շէրլանցի Սարօն
11. Յովհաննէս Ազգասէրեան	33. Կարապետ Թաւրէզեան
12. Օրիորդ Կէօլօշեան	34. Խաչիկ Չարչի-Աւէտեան
13. Տնտես Եղիշէն	35. Հայկավանքցի Միքայէլ
14. Տիկին Սերոփեան	36. Գէորգ Ասլանեան
15. Սուրէն Զանօեան	37. Զուռօն (պահապան)
16. Հիւս Մանասը	38. Թովմաս Ղազարեան
17. Սալախ-Թումի աղջիկը	39. Յոնչի Ատոմի տղան
18. Բախկալ Գասպար	40. Աւետիս Վարպետեան
19. Զրինկէր Կարապետ	41. Թովմաս Ղազարեանի կինը
20. Շամամի Փեսան	42. Սիւրիւշի Յակոբ
21. Յովհաննէս Փիրղալէմեան	43. Խ. Մարտիրոսեանի աղջիկը
22. Սիմէօն Սօլթիկեան	

Բացի այստեղ ցուցակագրւած 43 սպանւածներէց, որոնցից 15-ը կուռղ տղաներ էին, Քաղաքի մէջ վերաւորւեցին 71 հոգի՝

Ինչ վերաբերում է Այգեստանում սպանւածներին ու վերաւորւածներին քանակին, այդ անհամեմատ աւելի շատ էր, սակայն որոնց ցուցակը մեր ձեռքը չի անցել:

ՇԱՏԱԽԻ ՀԵՐՈՍՍՄԱՐՏԸ

Այն ժամանակ, երբ Վանի մէջ Այգեատանի և Քաղաքի հայերը մեկուսացած զառ-զատ պայքարում էին Տաճիկ կառավարութեան զէմ և հերոսարար տանում էին այդ պայքարը շարաթներին ընթացքում, այդ նոյն միջոցին զէնք էր վերցրել նաև Շատախը և այստեղ էլ յարատևում էր յամառ դիմադրութիւնը:

Իւրաւոր ճնշումների տակ կազմալուծւած հայ ժողովրդի այս պայքարը, պայքար, որ գայիս էր նոր դարադուրս կազմելու հայ պատմութեան էջերում, եթէ հերոսական գործ եղաւ Այգեատանի ու Քաղաքի մէջ, հերոսագոյնը հանդիսացաւ Շատախի լեռներում, որովհետև նա այստեղ աւելի շուտ սկսեց և աւելի ուշ վերջացաւ, քան Վանի մէջ, և 40 օր տևող անհաւասար կռիւր պատկանց քաջ Շատախյու կայունութեամբ:

Ահա այս տեսակէտից արժէ որ Շատախի կռիւները լուսաբանեն մի փոքր հանգամանքէն:

Ինչպէս տեսանք, Շատախը գտնւում է Վանի լճի հարաւային մասում՝ հանդիսանալով խիստ լեռնային մի գաւառ: Շատախի հետ միասին Մոկսը և Կարկասը ներկայացնում են լեռների ու ձորերի մի մի ժխոր, որոնք մեծ մասամբ մինչև այժմ էլ մնում են կուսական դրութեան մէջ: Իրանք կոչւում են Շատախի, Մոկսի, Կարկասի լեռներ: Յիշեալ երեք գաւառներից ուշագրաւը Շատախն է:


Շատախի հիւսիսային սահմանը կազմում է Արառս կատարը իր թեկերով: Արևմտեան կողմում ընկած է Մոկսը՝ սահման սեննալուով Առնոս կատարը, արևելեան կողմում գտնւում նոր-գույրի գաւառը, իսկ հարաւային սահմանը կազմում է Արևելեան Տիգրիսը իր օժանդակ հովիտներով:

Շատախը անառիկ լեռների և բազմաթիւ ձորերի մի գան-

գլած է. գաւառի ամբողջ երկարութեամբ ձգուած է մի վիթխարի ձոր, որի միջով բացել է իր հունը Արեւելեան-Տիգրիսը. այդ ձորին գալիս միանում են երկրորդական պատուածքներ: Երկու ձորեր սկիզբ են առնում գաւառի հիւսիսային և հիւսիս-արեւելեան սահմանից. մէկը սկսւում է Արտոսի լեռան հարաւային թեւերից և ընթանում է դէպի հարաւ. միւսը սկսւում է Բաշէտ լեռան հարաւային թեւերից և ընթանում է հարաւ-արեւմտեան ուղղութեամբ: Առաջին ձորը կոչւում է Սիւտկնա ձոր, նրա միջով հոսում է Սիւտկնա գետը. երկրորդ ձորը կրում է զանազան անուններ. դրա միջով հոսում է վերին Տիգրիսը: Այդ երկու ձորերը գալիս Շատախի կենդրոնում միանում են, միանում են նաև Սիւտկնա գետն ու վերին Տիգրիսը և ուռճացած ու վրիճքած մանում են աւելի խորացած մի ձոր ու ընթանում դէպի հարաւ:

Շատախը հաշււում է 110 գիւղ, որից 50-ը հայաբնակ են. գաւառի կենդրոնավայրը կոչւում է Թաղ. դա 220 տնից բաղկացած զուտ հայաբնակ մի աւան է, որը գտնւում է Սիւտկնա գետի և վերին Տիգրիսի խառնուրդի վրա, երեք ամենի ձորերի միացման տեղում. այստեղ նստում են գաւառի վարչական մարմինները և գայմագամը:

Հայ գիւղերը ընկած են մեծ մասամբ գաւառի հիւսիսային մասում—Սիւտկնա գետի և վերին-Տիգրիսի հոսանքների վրա, մինչև Թաղը ու մինչև Խլքտուն կոչուող տեղը, ուր գտնւում է գաւառի հարաւային մասի հաղորդակցութեան գլխաւոր կամուրջը: Հիւսիսային մասում կան նաև քիւրդ գիւղեր, իսկ հարաւային մասում, Խլքտան կամուրջից ցած առաջացել է շիրաւորուհի: Տիգրիսից դէպի աջ ընկած են հայաբնակ գիւղեր, իսկ Տիգրիսից ձախ՝ քիւրդաբնակ գիւղեր: Ահա այս շրջանում գտնւում են նաև մի քանի քիւրդ ցեղեր, որոնք և հանդիսացել են գաւառի մշտական չարիքը. այդ ցեղերն են Սալիլանցիները, Սաւաշտանցիները, Եղլիլանցիները և Ալանցիները: Եւ եթէ այդ չորս ցեղերին աւելացնենք Նորդուզի ու Շատախի սահմանի վրա բուն գրած Քրաւցիների ցեղը, սրի ցեղապետները—աւագակ Շաքիրն ու Միրմըհէն մի ժամանակ ազատ ասպատակութիւնների ասպարէզ էին դարձրել Շատախն ու Նորդուզը: հասկանալի կը լինի թէ որպիսի տալուսութիւն պիտի հրապար-



См. также в атласе "СССР"

բակ բերէր Շատախի հայութիւնը, որ կարողանար իր գոյութիւնը պահել այս լեռներում:

Եւ իսկապէս, անառիկ լեռներին ու անանցանկի ձորերին փարած Շատախի հայ ժողովուրդը կրեան է հանել այնպիսի քաջութիւն, այնպիսի տոկունութիւն, որ նոյնիսկ տաճիկ կառավարութեան հալածանքների տակ կարողացել է այնքան դիմադրել քիւրդ ցեղերի արշաւանքներին. և ոչ միայն չի ձգել իր տուն ու տեղը, ոչ միայն պահել է իր ձեռքում իր ազատ լեռները, այլև մնացել է հպարտ, ինչպէս Շատախի հպարտ լեռներն են, յաճախ սարսափ ազդելով թէ քիւրդ ցեղերի և թէ նոյնիսկ տաճիկ պաշտօնեաների վրա:

Ահա թէ ինչու Վանի կուսակալութիւնը ամենից առաջ իր ուշադրութիւնը դարձրեց Շատախի վրա և ուղեց քանդակ նախ այդ բոյնը, ինչպէս կը տեսնենք յետոյ:

Իրանակցութիւնը, ինչպէս տեսանք, վերջին սահմանադրական հինգ տարիներում կաղձակերպչական տեսակէտից ահապիսի գործ կատարեց գաւառներում: Այն հանգամանքը, որ այդ կուսակցութեան պատկանող մարդիկ այլևս չէին հալածուած, սկսեցին մի ազատ գործունէութիւն, նրանք բացում էին դպրոցներ, պաշտպանում էին ժողովուրդը կեղծումներից, միջամտում էին տրեստեական հարցերին և հողային վէճերին՝ բանակցութեան մէջ յաջողում գաւառներում, դիմում էին կենդրոնական մարմիններին և նրանց միջոցով կուսակալներին էին մէջ քաշում խնդիրը շահելու համար: Իրանակցութեան աշխատանքը բոլորովին այլ կերպ դարձաւ, երբ սկսեց համարեւոյական և ապա սուս-տաճիկական պատերազմը. ինչպէս տեսանք, միևնոյն մարդիկ այժմ էլ սկսեցին կաղձակերպել ինքնապաշտպանութեան գործը, նախատեսելով ամեն տեսակ անակընկալներ:

Ահա այս աշխատանքները կատարում էին գաւառներում կոմիտէները և հնթակոմիտէները: Ընդհանուր է, ինքնապաշտպանութիւնը գաւառներում վիժեց, բայց Վանի ու Շատախի կախներն էլ քաւական էին համոզուելու, թէ այդ ուղղութեամբ որքան փանքել են գործ դրել:

Շատախի կոմիտէն իր գործունէութեամբ բաւականին աչքի բնկ սւ վչ միայն հայկական, այլև կառավարական շրջաններ:



Уауа мкк Утупуулуа



Внфуккк Зоролуа

րում, նա պատերազմից առաջ և նոյնիսկ սէֆէր-բէրլիկի շրջանում անազին ազդեցութիւն ունէր գաւառի վարչութեան և գայմագամի վրա. օրինակ, այդ ազդեցութեան շնորհիւ ինքնապաշտպանութեան մի քանի կարևոր ուժեր ազատեցին զօրաժողովից և պատերազմական տուրքերը մի քանի գիւղերի նկատմամբ չափաւորեցին, թէև միևնոյն կոմիտէն՝ կառավարութեան վերաբերմունքը գէպի հայ ժողովուրդը մէկէն փոխելուց յետոյ աչքի փուշ դարձաւ:

Շատախի կոմիտէի մէջ իրենց գործնութեամբ աչքի էին ընկնում.

1. Յովսէփ Զօլօեանը՝ բուն թաղեցի երիտասարդ. սա աւարտել էր Վանի պետական վարժապետանոցը — Գարիւլ-մուսլիմին, նախ սոսկ ուսուցիչ էր, վերջերում վարում էր թեմական տեսչի պաշտօն: Հանդիսանում էր կազմակերպութեան ղեկավար ուժ:

2. Սամուէլ Մեսրոպեանը՝ ընդ թաղեցի երիտասարդ: Սա նոյնպէս աւարտել էր Վանի պետական վարժապետանոցը: Գաւառական վարչութեան մէջ վարում էր գանձապահի պաշտօն (սանդղ էմինի): Լինելով մօտիկ աջակիցը Յովսէփ Զօլօեանի, միևնոյն ժամանակ կոմիտէի կողմից պահում էր յարաբերութիւն գայմագամի հետ:

3. Բաղդիկ Սիմօնեանը կամ Ազատը Սիւտկին գիւղացի, կրթութիւնից զուրկ երիտասարդ. սա կոմիտէի շրջիկ, միևնոյն ժամանակ զինուորական ուժն էր, որ և հանդիսացաւ գլխաւոր ղեկավարը ինքնապաշտպանութեան գործի և թաղի կռիւնների:

4. Տիգրան Բաղդասարեանը դարձեալ ընդ թաղեցի երիտասարդ. աւարտել էր Վանի կաթօլիկեան դպրոցը և ապա վարել ուսուցչական պաշտօն: 1908 թւին գնաց Պօլիս, մտաւ զինուորական դպրոց և սպայի պաշտօնով պատերազմը սկսելիս ուղարկեց կովկասեան ճակատը. Գեօփրի-փօօյի կռուում վերաւորւեց ոտից և մարտի 1-ին տուն վերադառնալով, մասնակցեց Շատախի ինքնապաշտպանութեան կռիւններին:

Շատախի մէջ կռիւններում դեր խաղացող տանիկ պաշտօնեաներն էին.

1. Գայմագամ Համդի բէյը, պօլսեցի կրթւած տանիկ, ներոպայում եղած, հարեցող: Սա Շատախ եկաւ 1913 թ.ի սկզբին և առաջին շրջանում շատ լաւ դիրք բռնեց. օրինակ, մի հո-



Տիգրան Բաղդասարեան
Ցանկախան սպայ

դային վէճ, որ գոյութիւն ունէր կազպի, Կոսովանք, Յինննց, Ճընուկ և Ծիծանց հայ գիւղերի ու Սօքանց քիւրդ գիւղի մէջ, վարչական կարգով լուծեց յօգուտ հայերի:

2. Քարտուղար (Թահրիրաթ քեաթիպի) Շէֆքէթ բէյը, հայատեաց մի տաճիկ:

3. Դատախազ (մըզայի-ուժուժի) Ահմադ-թէֆֆիկը, գոնեացի, դարձեալ հայատեաց:

4. Մուֆթի Հասանը, կիսակիրթ հայատեաց մի մարդ: Շատախի գայմագամի տրամադրութեան տակ բացի բաւականաչափ ժանդարմներից ու միլիտաններից զործուժ էին:

1. Գրաւցիների ցեղապետ Լադզին—աւաղակ Շաքրի տղան, Կօրաը բէկը և Քեաւաշը:

2. Խաւաթանցիների ցեղապետ Բրախմը:

3. Խալիլանցիների ցեղապետ Հասան բէկը և Շաքրը:

4. Եղզինանցիների ցեղապետ Մստաֆան և Սայդօն:

Թւիլով այս ցանկը, կարևոր ենք համարում յիշել և այն, որ պատերազմի սկզբում, երբ հայկական ջարդերը դեռ ևս չէին ծրագրւած, գայմագամը յիշեալ ցեղերից ու ցեղապետներից կազմելով մի չեթայական մեծ խումբ, զնաց պատերազմի դաշտադէպի Պարսկաստան և մի երկու ամսից յետոյ վերադարձատուն: Նշանակալից է այն, որ չեթայական խումբը զէնքը ստացաւ Բաշկալէում և սուն վերադարձաւ զէնքը ձեռքին:

Ահա ուժերի այս յարաբերութեամբ Շատախի մէջ պայթեց կոխը:

Ձէւղէտը մարտի 19-ին սահմանազլխից վան վերադառնալով և ձեռնարկելով դիւային ծրագրերը ի կատար ածելու, իր առաջին գաղտնի հրահանգը ուղարկեց Շատախի գայմագամին, և մարտի 29-ին Թաղի մէջ, օրը ցերեկով, առանց որևէ առիթի, ձերբակալեցին Յովսէփ Զօլօեանը—հայերից յարգւած այդ երէտասարդը և աւրիշ հինգ թաղեցի երիտասարդներ—Պետրոս Սաբօեանը, Սահակ Գիւլամիրեանը, Պօղոս Պեարոսեանը, Աւետիս Միլքոնեանը և Պայլօզ Մաֆօեանը:

Սամուէլը, որ Յովսէփից յետոյ առաջին հեղինակաւոր մարդն էր Շատախի կազմի մէջ, մէկ շաբաթից ի վեր, իբրև պաշտօնեայ, արձակուրդ վերցրած գտնուում էր վանում, և թող

վերադարձաւ այն միջոցին, երբ նոր միայն Յովսէփը միւս հինգ տղաներով ձերբակալուել էին ու Թաղի երիտասարդները այս ու այն կողմն էին փոխել:

Այս տեսնելով, Սամուէլը աւմիջապէս գնաց դատարան իր պաշտօնատեղին և ստաջին զորձը եղաւ դիմել գայմագամին՝ իմանալու Յովսէփի ձերբակալման պատճառը: Գայմագամը ձերբակալումը համարեց թիւրիմացութիւն, մեղադրեց այդ բանում ոստիկանապետին—կօմսէրին, ու խոստացաւ մէկ ժամից յետոյ արձակել տղաներին: Այս խոստման վրա Սամուէլը դարձաւ տուն առանց պաշտօնը ստանձնելու: Մէկ ժամը լըրացաւ, բայց տղաները չարձակուեցին: Երկու ժամ սպասելուց յետոյ Սամուէլը գնաց գայմագամի տունը, բայց նրան չայտնեցին, որ գայմագամը քնած է. նա ուղեց գայմագամին տեսնել իր տան մէջ երկրորդ անգամ, պատասխանը նոյնը եղաւ: Սամուէլը, որ ազատ մուտք ունէր գայմագամի մօտ, այն գայմագամի որը առանց նրա խորհրդի ոչ մի քայլ չէր կատարում իր գաւառում և ժամերով նրա հետ խորհրդի ու զրոյցի էլ նստում իր տան մէջ, այս նոյն Սամուէլը այս անգամ ներս չընդունուեց գայմագամի կողմից: Խնդիրը Սամուէլի համար միանգամայն պարզուեց, Յովսէփը ձերբակալուել էր կուսակալի կարգադրութեամբ և կառավարութեան ու հայ ժողովրդի յարաբերութիւնները վերջնականապէս խզուել էին:

Սամուէլը երկրորդ անգամ դառնալով տուն, անմիջապէս հաւաքեց իր ընկերներին ու Թաղի մի քանի հասակաւոր մարդկանց և նրանց պատմեց իր տպաւորութիւնը: Այդ ժողովում միևնոյն տպաւորութիւնը պատմեց նաև Տիգրանը, որը իբրև պատերազմի զաշտում վէրք ստացած սպայ ընդունելութիւն ունէր գայմագամի և միւս պաշտօնեաների մօտ, սակայն որը այժմ որ, փորձելով միջամտել և Յովսէփին արձակել տալ, միանգամայն այլ վերաբերմունքի էր արժանացել նրանց կողմից:

— Կոմիտէն անւանել Զինուորական մարմին, շրջանը յայտարարել ինքնապաշտպանողական վիճակի մէջ և սուրհանդակ հանել զէպի քաղաք, լուր տանելու կատարւած զէպքերի մասին:

Այս կզրակացութեան եկաւ ժողովը. տղաները գործի անցան և յարաբերութիւնը կառավարութեան և հայ ժողովրդի մէջ խզուեց:

Միայն թաղի պաշտպանութեան հարցը չէր, որ պրագեցնում էր տղաներին, այլև ամբողջ դաւառի. 50-ի շափ գիւղեր փուած էին ահագին տարածութեան վրա—լեռների ու ձորերի մէջ. նրանց երթևեկութեան ճանապարհները պէտք էր պաշտպանել, միևնոյն ժամանակ թշնամու ճանապարհը պէտք էր կըտրել: Սյս ուղղութեամբ աշխատանքներ արդէն կատարել էին, մնում էր վերջին ձևակերպումը և դրան էլ անցան տղաները:

Թաղը—սշխարարութեամբ և շալագործութեամբ յայտնի շրջանի այդ սիրտը հանդիսանում էր կուռի կենդրոն, այստեղ զանուում էին երկու կողմերի գլխաւոր ուժերը:

Հայերը ունէին 70 կուռղներ, իսկ կառավարութիւնը, որը մինչև այդ ունենում էր 2—3 տասնհակ ժանգարման, վերջին շաքաթների ընթացքում նրանց թիւը հասցրեց 150 հոգու հաշւելով նաև միլիտները:

Թաղը, որ ունէր 220 տուն բնակիչ, բաժանւած է երեք թաղամասերի, դրանք են Վերին, Ներքին և Ջրաղացի թաղերը: Վերին և Ներքին թաղերը երկար գծով ընկած են Սիւտկին գետի և միացեալ Տիգրիսի աջ ափին՝ կոնակին ունենալով Բիւրէկ կոչւած կատարը: Այդ երկու թաղերի մէջ գետի եզերքով ընկած է շուկան, իսկ Ջրաղացի թաղը գտնւում է Սիւտկին գետի ձախ ափին, դէպի հիւսիս-արևելք, Ջամլամբէկի լանջին, իջնելով մինչև Տիգրիսի աջ ափը ու գետերի խառնուրդը: Բացի այս, Տիգրիսի (ոչ միացեալ) ձախ ափին ընկած են կառավարական երեք շէնքեր—կառավարատունը, ուր գետեզւած էին դաւառի պետական հիմնարկութիւնները, հեռագրատունը և զօրանոցը:

Սիւտկին գետի վրա ձգւած են երեք կամուրջներ. դրանք կրում են Ջրաղացի, Գարէ և Տախտակէ կամուրջ անունները, իսկ Տիգրիսի վրա՝ երկուսը. դրանք կոչւում են Կառավարատան և Հեռագրատան կամուրջներ: Ջրաղացի կամուրջը կուռ սկզբում հայերը քանդեցին, այդ մասում թոյլ զգալով իրենց:

Ջրաղացի թաղը ունէր լաւ դիրք և իշխում էր Վերին ու Ներքին թաղերի վրա, այստեղ ապրում էին աւելի քան 60 տուն հայեր և գտնւում էր տղայոց դպրոցը—երկու յարկանի մի նոր մեծ շէնք: Ահա այս թաղում ապրում էին սաճիկ պաշտօնեաները, վարձած ունենալով թաղամասի լաւ տները:

Երբ Յովսէփը միւս հինգ տղաների հետ ձերբակալեցին,

Ջրադացի Թաղի հայերը տեղափոխւեցին Վերին և Ներքին Թաղերը, ու այդ Թաղը բացի մի երկու տնից մնաց տաճիկներէ ձեռքը. իսկ Վերին ու Ներքին Թաղերը մնացին հայերի ձեռքը՝ Այս բանից յետոյ յարաբերութիւնը երկու մասերի մէջ խզւեց և երկու կողմերն էլ անցան զիրքային աշխատանքների:

Հայերի զիրքերից նշանաւոր էին.

1. Տէր-Մարգարեանի տունը, Տիրքիսի աջ ափին: Սրա զիմաց Տիրքիսի ձախ ափին գտնուում էր կառավարատունը, որը թշնամու ամենատուժեղ զիրքն էր:

Այս զիրքը յանձնւեց 16 հոգուց բաղկացած մի խմբի՝ զեկավարութեամբ Յովսէփ Գարունեանի: Սա բնիկ թաղացի էր, աւարտել էր Վանի Արարոց դպրոցը, բռնակալութեան օրով իբրև յեղափոխական ձերբակալւեց ու աքսոր ուղարկւեց, իսկ սահմանադրութեան օրով ազատւեց ու հայրենիք վերադարձաւ:

2. Գարունեանի տունը. այս զիրքը հսկելու էր Վան տանող ճանապարհի և տաճիկ զիրքերի վրա: Սրա պաշտպանութիւնը յանձնւեց 14 հոգուց բաղկացած մի խմբի՝ զեկավարութեամբ Զօլօ Տէր-Պետրոսեանի. սա Յովսէփ Զօլօեանի հայրն էր՝ տարիքաւոր մի կուռղ մարդ:

3. Հաջի Միրզիկի (հայ) տունը. այս զիրքը հսկելու էր Քարէ կամրջի վրա և կանգնեցնելու էր թշնամու շարժումը ու կոչւեց Քարէ կամրջի զիրք: Սրա պաշտպանութիւնը յանձնւեց 14 հոգուց բաղկացած մի խմբի՝ զեկավարութեամբ Գրիգոր Յարութիւնեանի: Սա բնիկ թաղացի էր, երեք տարի զինւորական ծառայութիւն վարած և 25-ապիսի պաշտօն ստացած: Սա դժբաժողովից խոյս տւեց և մտաւ ինքնապաշտպանութեան գործի մէջ:

4. Այվազեանի տունը, ընկած Վերին թաղի արևմտեան կողմը: Այս զիրքը կարևոր դարձաւ Սօզւանց գիւղը կորցնելուց յետոյ. սրա պաշտպանութիւնը յանձնւեց 15 հոգուց բաղկացած մի խմբի՝ զեկավարութեամբ Պետրոս Գեալզօեանի: Սա բնիկ թաղացի էր, սովորած տեղական դպրոցում և մասնակցած արհեստակցական միութեան աշխատանքներին:

5. Ամրկի Յակօի տունը. այս զիրքը հսկելու էր Տախտակէ կամրջի վրա, որը հանգիստնում էր գլխաւոր անցք երկու թաղամասերի մէջ, և կոչւեց Տախտակէ կամրջի զիրք: Սրա

պաշտպանութիւնը յանձնեց 12 հոգուց բաղկացած մի խմբի՝ զեկավարութեամբ Շահէն Կուժիկեանի. սա տարիքաւոր մի մարդ էր զբաղմունքով շրջիկ առևտրական:

6. Գլխանց տունը: Այս զիրքը հսկելու էր կառավարատան և Բերդ կոչւող բլուրի գիրքերի վրա: Սրա պաշտպանութիւնը յանձնեց 13 հոգուց բաղկացած մի խմբի՝ զեկավարութեամբ Միլան Մուրադեանեանի՝ տաճկական պաշտօնեա:

7. Ազգային այլը: Սա մէկ այլ է, գտնոււմ էր ներքին թաղի կոնակում, Քիւրէկ լեւան հարաւ-արեւելեան լանջին, թաղից 100 մետր բարձրութեան վրա: Այս զիրքը մեծ ծառայութիւն արեց, արեւելով տաճիկ մի երկու գիրքերի, ինչպէս և միացեալ Տիգրիսի ընթացքով ձգւող զխաւոր ճանապարհի վրա: Գիրքի պաշտպանութիւնը յանձնեց երկու հերոս տղաների, զըսնք էին Զիրո Մուրադեանը՝ Տղասպատ գիւղից և Մուրադ Յակոբեանը՝ Հաշկանց գիւղից, երկուսն էլ երիտասարդ տղաներ, երկուսն էլ զբաղմունքով հովիւներ: Սրանք իրենց շեշտակի կըրակով սարսափ էին ազգում թշնամուն:

Թաղի կառավարական զիրքերից նշանաւոր էին.

1. Կառավարութեան տունը,
2. Տղայոց դպրոցը,
3. Կլանդէի տունը, ուր ապրում էր քննիչը (մուսթանդիք),
4. Միքոյի տունը, ուր ապրում էր մարդահամարի պաշտօնեան (նֆուս մամուրի),
5. Ռաշիդի տունը,
6. Կեօրօղի տունը, ուր ապրում էր մուֆթին:
7. Զօրանոցը:

Տաճիկների կողմից կոխը զեկավարում էին գայմազամը, Կօմսերը, գատախազ Թէֆֆիկը, սպա, ինչպէս կը տեսնենք այդ յետոյ, նորդուղի գայմազամ Սալըտը և թնդանօթաճիգ սպայ Զէլալէդդինը երկու թնդանօթով:

Թաղի մէջ զիրքային աշխատանքներին անցնելու հետ միաժամանակ Զինւորական մարմնի կողմից հրահանգեց խմբեր հանել և զբաւել նախօրօք որոշւած գաւառի կարևոր կէտերը: կէտեր, որոնք պիտի հանդիսանային բաժանման զիմ հայ և մահմեդական տարրերի մէջ:

Այդ կէտերը հետևեալներն էին:

1. Շահբուրա բերդը. սա մի գազութէ գաւառի հիւսիսային մասում, Արտոս կատարի հարաւային լանջերի վրա ընկած: Երկու դեռակներ երկու ձորակների միջով գալիս միանում են և ազմում Սիւսկին գետը. այդ երկու գետակների ընթացքով ձգւում եկու ճանապարհներ, մէկը Ոստանի ճանապարհն է, որ գալիս է Փեսանդաշտի վրայով, միւսը Վանի ճանապարհն է, որ գալիս է Խորղանքի վրայով: Այս երկու ճանապարհները գալիս միանում են և Սիւսկին գետի ընթացքով ձգւում են դէպի Թաղը: Փեսանդաշտը և Խորղանքը երկու հոցառատ լեռնադաշտեր են, որոնք կազմում են գաւառի հիւսիսային սահմանը: Փեսանդաշտի վրա կան չորս գիւղեր, չորսն էլ հայաբնակ. Խորղանքի վրա կան մի շարք քիւրդ գիւղեր և ընդամենը 22 աւու հայեր, որոնցից 12-ը ապրում են Գեօրանդաշտ գիւղում, իսկ 10 տունը՝ Մուսկաւէն գիւղում: Երկու գետակների, ինչպէս և երկու ճանապարհների զիւտայի վրա բարձրանում է Շահբուրա բերդը: Այս դիրքը հսկելու էր Վանից և Ոստանից եկող ճանապարհների վրա և Սիւսկնա ձորը դարձնելու էր անվտանգ:

Շահբուրա բերդի պաշտպանութիւնը յանձնւեց 15 հոգուց բաղկացած մի խմբի՝ ղեկավարութեամբ Բագիկ Պետրոսեանի: Սա տարիքաւոր մի մարդ էր Սիւսկին գիւղից:

2. Խլքտան կամուրջը: Այս կամուրջը, ինչպէս տեսանք, գտնւում էր Տիգրիսի վրա երկու ժամ հեռու Թաղից դէպի հարաւ և հանդիսանում էր գաւառի հարաւային մասի հազարգտկացութեան գլխաւոր կէտը. կամրջի պաշտպանութիւնը կարեւոր էր այն տեսակէտից, որ այդ տեղից սպառւում էր Խալիլանցիների, Խաւշտանցիների, Եզդինանցիների և Ալանցիների, ինչպէս և Բարվարի շրջանի քիւրդերի խուժումը, խուժում, որը սպառնում էր ոչ միայն գաւառի հարաւային հայ—Արմշատ, Կաճէթ Ծիծանց գիւղախմբին, այլև Թաղին: Այս կամրջի պաշտպանութիւնը յանձնւեց 35 հոգուց բաղկացած մի մեծ խմբի՝ ղեկավարութեամբ Յարութիւն Գրջօեանի—Կոսովանք գիւղից և Ազօ Յարութիւնեանի Յիննից գիւղից:

Խլքտան կամրջից բացի Տիգրիսի վրա, դէպի հարաւ կային երկու այլ կամուրջներ, նրանք Ջալկանց և Հէշաթի կամուրջներ էին, որոնք լինելով փայտէ, կռի սկզբում հեշտութեամբ մէջտեղից վերացւեցին:

3. Բօլս գիւղը Այս գիւղը գտնւում է Թաղից դէպի հիւսիս-արեւմուտք՝ Մոկսի սահմանին մօտիկ, Վարէսար կոչւող լեռան լանջին: Սա երկու պաշտօն ունէր, նախ որ պիտի նսկէր Մոկսից եկող ճանապարհի վրայ, երկրորդ պահակներ պիտի հանէր ձեւատան գիւղին կից Սիւտկին գետի վրա գտնւող կամուրջը պահպանելու, որտեղից սպառնում էին մի շարք քրդական գիւղեր: Բօլսի պահակը բաղկացած էր 15-ի չափ կուռղներից՝ զեկավարութեամբ Ծիծանց գիւղացի՝ արհեստով երկրագործ, միաժամանակ ուսուցիչ Աէթ Բօղօհանի:

4. Հաշկանց գիւղը: Այս գիւղը գտնւում է Թաղից հիւսիս մի ժամ հեռու Սիւտկին գետի ձախ եղերքի մի բլրի վրա: Սա պիտի փակէր Ծառնոս և նրան մօտիկ գտնւող քիւրդ գիւղերի խուժանի ճանապարհը, որ ձգւում էր Կասր կոչւող կամրջի վերայով: Այս գծի պաշտպանութիւնը յանձնեց Չաթօն 20 աղաներով:

Չաթօն կամ Արշակ Պետրոսեանը Սիւտկին գիւղացի մի քաջ ու յանդուգն մարդ էր: 1911 թիւն Վանի շրջանում մեծ աղմուկ հանեց Աղթամարի թեմական տեսուչ Ռաֆայէլ Երիցեանի սպանութիւնը, որ տեղի ունեցաւ Կարկառի մէջ Դախմանց գիւղացի Հիւսէյին աղայի և նրա եղբայր Հաջի Եաղուբի գաւաղութեամբ: Այս ոճիրը վրէժխնդրութիւն էր պահանջում, և ահա մի գեղեցիկ օր Կարկառի Խորթանց գիւղում Հաջի Եաղուբը զոհ գնաց մի վրիժառու գնդակի վրիժառու այս ակաթի մէջ ահա մասնակցութիւն ունեցաւ Չաթօն:

5. Սօզւանց գիւղը: Այս գիւղը գտնւում է Թաղից դէպի արեւմուտք, կէս ժամ հեռու Քիւրէկ լեռան լանջի վրա: Սա մի շատ կարևոր կէտ էր, նախ պաշտպանում էր Թաղի կոնակը, պահելով իր ձեռքում բանուկ գծերից մէկը, երկրորդն ու զըլխաւորը նա հանդիսանալու էր միակ կէտը, որտեղից պիտի յարարերութիւն պահպանէր շրջանների հետ: Թաղից արձակւող բոլոր հրահանգները գիշերով ուղարկւում էին Սօզւանց և այդտեղից լեռնային կածաններով գաւառի բոլոր կէտերը, ինչպէս և Փետանդաշտ ու քաղաք: Միևնոյն ճանապարհով ստացւում էին տեղեկութիւնները քաղաքից ու շրջաններից: Չը պահէր Սօզւանցը, ահհարին կը լինէր հաղորդակցութիւնը կենդանի ու շրջանների մէջ. բնկնէր Սօզւանցը, կը դադարէր հաղոր-

դակցութիւնը, ինչպէս և եղաւ մի անգամ: Ահա այս կարեօք դիրքի պաշտպանութիւնը յանձնւեց 20 հոգուց բաղկացած մի խմբի՝ ղեկավարութեամբ Սահակ Զօլօեանի:

Այս կարևոր կէտերից բացի, գոյութիւն ունէր նաև մէկ թոռացիկ խումբ աւելի քան 30 հոգուց բաղկացած, որի ղեկավարութիւնը յանձնւած էր Զինուորական մարմնի անդամ Աղատին:

Իբրև սուրհանդակներ աչքի բնկան.

1. Տիգրան Մարգսեանը բնիկ թաղացի՝ պարսպմունքով ուսուցիչ՝ զգայուն ու քաջ երիտասարդ:

2. Մարգար Մովսէսեանը բնիկ թաղացի՝ պաշտօնով ուսուցիչ:

3. Մարտիրոս Պետրոսեանը Վերին-Իարինց գիւղացի—հերոս երիտասարդ:

4. Կարապետ Գալիկեանը Սիւտկին գիւղացի:

Առաջ եկան սուրհանդակներ նաև իգական սեռից, սակայն որոնց կը պատահենք իր տեղում:

Զգուշական միջոցներ ձեռք առաւ նաև կառավարութիւնը, և այն էլ ղեռ ևս մէկ ամիս առաջ, Այսպէս, օրինակ, Շահրուբ բերդի մօտ եղող Պանի պահակը հասցւեց մինչև 15 հոգու. այդ նոյն շրջանի Գոմեր կոչւած տեղում դրւեց 20 հոգուց բաղկացած մի պահակ. այդպիսի պահակներ դրւեցին նաև Սիւտկին գիւղում և հարաւային շրջանի գիւղերում. վերջին պահակը շրջում էր գիւղերը հարկահաւաքութեան պատրւակի տակ:

Բացի այս, պատրաստ գտնւելու հրահանգներ ստացան նաև քիւրդ ցեղապետները, որոնք, ինչպէս տեսանք, պատերազմի դաշտից զինւած վերադարձան հայերի դէմ գործելու նպատակով:

Ահա այսպիսի պատրաստութիւններով դուրս եկան դէմ առ դէմ Շատախում հայերն ու կառավարութիւնը, վարելու անհաւասար մի կռիւ: Հայ ժողովուրդը թոյլ իր քանակով, բայց ուժեղ իր որակով դուրս եկաւ մի հերոսական ակտ կատարելու:

Մենք տեսանք, Յովսէփ Զօլօեանը թաղի ամենայարգւած երիտասարդը որբիչ հինգ երիտասարդների հետ անսպասելի կերպով ձերբակալւեց. այս դէպքի վրա երիտասարդները քաշու-

ցին հրապարակից. Վանից նոր եկած գանձապահ Սամուէլը և պատերազմից տուն վերադարձած սպայ Տիգրանը գիմեցին գայմազամին, պանանջելով Յովսէփի արձակումը. այս միջնորդութիւնը չը յարգւեց. բացի այս, Սամուէլը երկու անգամ գայմազամի տունը գնաց, նրան չընդունեցին, մի երևոյթ, որը հրէք տեղի չէր ունեցել. դրանից յետոյ ժողով կազմւեց, ուր որոշւեց կոմիտէն անւանել Ձին. մարմին, նրան տալ աջակից մի մասնախումբ պտրեհաւորումը կարգաւորելու համար, շրջանը յայտարարել ինքնապաշտպանողական վիճակի մէջ, սուրհանգակ հանել դէպի քաղաք ու հրահանգներ ուղարկել շրջանները:

Այս բոլորը տեղի ունեցաւ մարտի 29-ին, կրկնապատկի կիւրակէ օրը, երբ շուկայում կեանքը դադրած էր: Յաջորդ օրը, մարտի 30-ին, երբ կեանքը պիտի վերսկսէր, գրութիւնը ֆնաց անորոշ, շուկան չը բացւեց, երիտասարդները ծածկւած ֆնացին և երկու կողմից էլ անվտանգութիւնը կատարեալ եղաւ: Ջրագացի թաղի հայ ընտանիքները արագ կերպով քաշուած էին կենդրոնական թաղը, երբ լուր հասաւ, որ Բարվարից վերադարձող 9 արմշատցի հայեր սպանւել են քիւրդերի ձեռքով: Այս լուրը աւելի ևս լարեց դրութիւնը և տղաները անցան դիրքային աշխատանքների, նման աշխատանքների սկսւեցին նաև կառավարութեան— ժանդարմների ու միլիտների կողմից, որով և երթիկելութիւնը համարեայ դադարից գլխաւոր փոզոցում:

Իրերբային աշխատանքները սկսւեցին և կանայք եռանդուն մասնակցութիւն ունեցան այդ աշխատանքների մէջ: Քարէ կամբըր ղիւրքը, որը տախտակեա խանութներ լինելով շատ թոյլ էր, մի քանի ժամաւ մէջ վերածւեց խոշոր քարերից շինւած մի պատուարի. այդ խոշոր քարերը հետու տեղերից կրում էին թաղի կանայք, և նրանք իրենց աջակցութեամբ եկան անսկուն գարձնելու ինքնապաշտպանութեան գործը:

Ձին. մարմնի օրագիրը, ուր ամփոփ կերպով արձանագրուում էին դէպքերը, այդ օրու մասին հետևեալն է ասում:

Մարտ 30. Յովսէփին այցելութեան գնացինք. բռնւած առւարի համաձայն կոմսէրը կը պահանջէ զէնքերի յանձնումը, մի բան. որ անհնարին է: Քաղաք սուրհանգակ ուղարկեցինք, յայտնելով որ գրութիւնը շատ ձանր է և դէպքերը անխուսափելի:

Միլիտաների մէջ սոսկալի շարժում կայ: Ջրադացի թաղի դիրքերը թշնամին սկսեց գրաւել:

Մարտ 31. գրութիւնը մնաց անփոփոխ. ներսում աշխատանքները շարունակեցին, իսկ դուրսը լուռ էր և ոչ մի կողմ չը վստահացաւ խանգարել այդ լուռութիւնը, գնալով անվստահութիւնը ուժեղանում է:

Այդ օր դայմագամը 15 ժանդարմներով շուկան իջաւ և այնտեղից էլ առաջացաւ գէպի Գրկանց տունը: Այդ տան մէջ, ուր հաւաքւել էին Ջրադացի թաղի մի քանի ընտանիքներ, արդաները զինական աշխատանքներ էին կատարում, իսկ դռան առջ հսկում էր մի զինւած երիտասարդ: Գայմագամը հասնելով երիտասարդին, հարց տւեց, թէ ինչո՞ւ նա զինւած կանգնել է այդտեղ, երիտասարդը պատասխանեց, որ այդտեղ ժողովուրդ է հաւաքւած և որ ինքը կարգւած է սահպանելու այդ տունը. դայմագամը լսելով պատասխանը յետ դարձաւ՝ չը համարձակւելով երիտասարդին զինաթափ անել: Ըստ երևոյթին դայմագամը եկել էր պահակ զնելու այդ տան մէջ, բաց նկատելով, որ զիմարդութիւնը անխուսափելի է, տեղի տւեց: Այս գէպը, որ եկաւ կառավարութեան կողմից ծրագրւած դաւադրութեան գոյութիւնը ապացուցելու, հարկադրեց Ջին. մարմինն մի քանի գործնական քայլեր անել, որի մասին օրագրութեան մէջ հետեւեալն է արձանագրւած:

Մարտ 31. Յովսէփի ձերբակալութեան երկրորդ օրն է. այսօր ընդհանուր կերպով մեր կուի փլանը կազմեցինք: Խմբերի, դիրքերի և գէնքերի բաշխումը կատարւեց: Կէս օրից յետոյ հրահանգ արւեց վարի շրջանը, դադրեցնել ամեն աշխատանք և շարժել: Հրահանգ արւեց և վերի շրջանի հեռագրաթերերը կտրել և ձամբաները փակել: Այժմ կիմանանք, որ Հաշկանից մօտ 3 տեղով հեռագրաթերերը կտրւած, 3 տեղով ձամբաները փակւած են:

Ապրիլի 1-ը բոլորից հիտեւալ միջնադէպով: Ջինւորական մարմինը որոշել էր Տէր-Մարգարեանի և Ռաշիդի աները, որ գտնուում էին միլս մասում գրաւել, այս աների բնակիչները

արդէն քաշել էին կենդրոնական թաղը: Երեկոյեան ժամը 8-ին Տէր-Մարգարեանի դիրքի խումբը յաջող կերպով անցաւ Տախտակէ կամուրջը և գրաւեց դիրքը: Դրանից անմիջապէս յետոյ 10 աղաներ նոյն ճանապարհով առաջացան դէպի Ռաշիդի տունը, որը գտնուում էր տաճիկների դիրքերի մէջ: Բայց խումբը դեռ դիրքին չը հասած հանդիպեց գիշերային պահակին. պահակը կրակ բացեց, սրան ձայնակցեցին տաճկական դիրքերը, սըղաները մի համազարկ տւին ու վերադարձան, որոնցից մի քանիսը մտան Տէր-Մարգարեանի տունը, իսկ մնացեալները անցան Զինւորական մարմին տեղեկութիւն տալու: Միջնագէտը սրանով էլ վերջացաւ և Զինւորական մարմինը նկատելով Ռաշիդի դիրքի վտանգաւոր լինելը, նրան գրաւելու մտադրութիւնը թողեց:

Զինւորական մարմինը նման աշխատանքների մէջ էր. նրման աշխատանքների մէջ էր նաև թշնամին, երբ գայմագամը զիմեց արդէն մեզ ծոնօթ Ձէւդէտեան մեթոդին: Նա ուղարկեց հայերի մօտ պաշտօնիւններից մէկին—հարկահաւաքների գլխաւոր (սար-թահսիլտար) Մանսուրին, համոզելու շուկան բացել և դուրս գալ սովորական աշխատանքի:

Զինւորական մարմինը պատասխանեց, որ հայերը պատշատ են սովորական աշխատանքներին զիմելու, միայն թէ ապահովութիւն լինի, իսկ այդ հնարաւոր կը լինի այն դէպքում, եթէ.

1. Յովսէփ Զօլօեանը արձակուի.

2. Ժանդարմների ու միլիտանների գրաւած դիրքերը դատարկուին և

3. Միլիտանները թաղից հեռացնին:

Ի հարկէ, գայմագամը այս պայմանը չընդունեց, բայց, չը նայած գրան, բանակցութիւնները շարունակեցին և այդ յտակապէս ժամանակ շահելու և օգնական ուժեր ստանալու համար:

Առաջին օրերի այս իրադարձը աւելի ևս լուսարանելու համար, մէջընդմէջ առաջ կը բերենք այն պաշտօնական գրութիւնները, որ փոխանակուում էին Շատախի գայմագամի, Վանի կուսակալի և պաշտօնական անձանց մէջ՝ կոիւնների նկատմամբ և որոնց մի մասը տաճիկների փախուստից յետոյ գտնուեցին կառավարական դիւանում:

Ահա այդ գրութիւններից առաջինը, որ գայմագամը ուղ-
գել է կուսակալին:

Կուսակալութեանը

Մեր գաւառի ներկայ գրութեան մասին տեղեկութիւններ
կուտամ:

1. Ձեր հրահանգի համաձայն, բռնւած ցուցակի համեմատ,
նշանաւոր անձերից հրացան ուղելու պարագային, պայման մէջ-
անդ գրին:

2. Այս բանի անկարելիութիւնը իմանալով, առաջին օրւա-
ցոյցերը եղան խանութների փակումը և գանձապահ Սամուէլի
հետանալը: Հետեւեալ օրը գաւառի ամբողջ տղամարդիկ անհետա-
ցան և միևնոյն զիշեր հողադրաթելերը կտրւեցին: Նորոգելու
զացոյց մեր ջոկատի վրա յարձակում գործւեց: Նոյն զիշեր՝ թըղ-
թատար Ռաշիգի տան մէջ գիրք հաստատելու համար նրանց
ճամբած մարդիկ մեր շրջանի պահակներին հանգիստիով, կրակ
բացին:

3. Այսօր բոլորովին ապստամբական ձևով թաղի ու կա-
ռավարատան իշխող զիւրքերը բռնելով՝ մի քանի տան պատու-
հանների մէջ զիւրքեր շինեցին: Քանի որ հողադրաթելերը խըզ-
ւած են, այս շարժումը զսպելու համար պէտք եղած ուժը և
հնարաւոր միջոցները ձեր վսեմութիւնից կը խնդրուի: Մեր ձեռքի
տակ եղած հրացանների ու սաղմանիւթի պակասութիւնից շատ
կարճ ժամանակ պիտի կարողանանք մեզ պահել:

31 մարտ

գայմագամ Համդի

Ապրիլի 1—3-ը գրութիւնը մնաց անփոփոխ. փողոցներում
մարդիկ չէին երևում, երթեկեկութիւնը Ջրաղացի և միւս թաղե-
րի մէջ խզւած էր, շարժումը փոխադրւած էր ներսը և այդ շար-
ժումը սաղմական էր. զիւրքերը երկու կողմից էլ ամբացւում էին,
ամբացրին հայերը նաև Տէր-Մարգարեանի զիւրքը, որը իշխում
էր թէ կառավարատան կամրջի և թէ գլխաւոր երթեկեկու-
թեան գծի վրա:


Գոյմագամը տեսնում էր այս բոլորը, բայց չէր վստահա-
հում արգելել, որովհետև արգելքի մի փոքրիկ փորձը բաւական
էր, որ կախը գոյթէր, իսկ այդ նա չէր ցանկանում, նա սղա-

ՄԵԻՏԻԿԻՆ ԳԻՒՂՂՊԱՀԱԿԱՏԱՆ ԿՌԻՒՒ


(Քարտեզ N13)



Եղի՞ր



Քարե սարահանձն



սում էր ուժերի և հրահանգի, ուստի հարկահաւաքների գլխաւոր Մանսուրի բանակցութիւնները շարունակուում էին:

Ջինեորական մարմինը իր հերթում նոյնպէս շարունակուում էր բանակցութիւնը, թէև նա համոզուած էր, որ դրանից ոչինչ չի գուրս գայ, շարունակուում էր, որովհետև նա նոյնպէս ժամանակ շահելու կարիք ունէր: Սուրհանդակ էր գնացել քաղաք, բայց դեռ չէր վերադարձել, իսկ նրանից շատ բան էին սպասուում:

Եւ մինչդեռ թաղում ժամանակ շահող բանակցութիւնները շարունակուում էին, շրջաններում, համաձայն զինեորական մարմնի հրահանգների, տեղի ունեցան մի շարք ուշադրաւ դէպքեր, որոնք և հանդիսացան կուլի աղղակները:

Միւտկին գիւղում, ինչպէս տեսանք, գրւած էր 20 հոգուց բաղկացած կորդօն, այդ կորդօնի գլխաւորն էր օնրաշի Բահրին, կառավարութեան համար մի կարեւոր ուժ:

Գիւղը ընկած է ձորի մի պտոյտի վրա, Միւտկին գետի աջ ափին, որտեղից սկսուում են կատար կոչող լեռան փէշերը. գետի ձախ ափով ձգւում է Վան—Քաղի ճանապարհը: Գիւղի ծայրում գետի աջ ափին գտնուում է մի տուն, ուր նստում էր կորդօնը, իսկ նրա գիմաց գետի ու ճանապարհի միւս կողմում ընկած է գերեզմանատունը և նորակառոյց հայոց դպրոցը գետի շուրջը:

Միւտկնա կորդօնը պէտք էր մէջտեղից վերացնել, այդպիսի մի դործ մենք տեսանք գեկտեմբերի դէպքերի ժամանակ: Թէև Միւտկինը ունէր հրկու առանեակ զինւած տղաներ, բայց որոշոււմը հիշտութեամբ կատար ածելու համար, օգնութեան հասաւ նոյն ձորի վրա գտնուող Հաշկանց գիւղի դիրքը պաշտպանող Չաթօն իր մի քանի տղաներով: Բայց մինչև այդ Միւտկնա տղաները արդէն Վանի ճանապարհը փակել էին, որտեղից հնարաւոր էր ժանդարմների փախուստը:

Ժանդարմները նկատելով ինչ որ խորհրդաւոր շարժումներ գիւղում, վերցրին զէնքերը և գուրս եկան ճանապարհի վրա իրեն վարժութիւններ կատարելու. սակայն այդ միջոցին Չաթօն աննկատելի կերպով մտնեցաւ գիւղին, գրաւեց գերեզմանատան վրա իշխող ժայռերը և մէկէն բղաւեց.

Այս անսպասելի էր ժանդարմների համար, բայց նրանք բռնապետներն իրենց ձգեցին դպրոցի շէնքը և հրացանների որոտը բարձրացաւ: Սկսեց սաստիկ հրացանաձողութիւն երկու կողմերից, որը տեւց ամբողջ մէկ ու կէս ժամ: Ժանդարմները յամառ կերպով դիմադրում էին, մինչև որ տղաները առաջանալով, պաշարեցին դպրոցը: Առաջինը ժանդարմներից սպանեց Օնրաշի Բահրին, մի քաջ կուռղ ուժ. նրա հետ սպանեց նաև մէկ այլ ժանդարմ. այս յուսահատութիւն պատճառեց ժանդարմներին և շուտով նրանք զէնքերը վար դրին ու անձնատուր եղան: Այստեղ տղաները ունեցան մէկ վիրաւոր:

Յանդուզն Չաթօն Սիւտկնա կօրգօնը գերելուց յետոյ, իբխմբով առաջացաւ դէպի Շահրուբա բերդը, այդ լեռան ստորտում գտնուող Քանի և Գոմերի կօրգօնները նոյնպէս վերացնելու համար. բայց մինչև որ նա տեղ կը հասնէր, Սիւտկին գիւղի հրացանաձողութեան ձայնը առնելով երկու կօրգօններն էլ փախել էին ու այդ փախուստը այնպէս հապճեպ էր կատարել, որ շատ իրեր, ինչպէս և բաւականաչափ փամփուշտ բաժին էին թողել Չաթօին և նրա տղաներին:

Այն միջոցին, երբ կատարուում էին Սիւտկին գիւղի կօրգօնի վերացման դէպքերը, նման դէպքեր տեղի ունեցան նաև գաւառի ներքին շրջանում:

Այդ ժամանակ Կաղպի—Կաճէթի շրջանում տուրքեր գանձելու պատրաստի տակ շրջում է հարկահաւաք պաշտօնեայ Արիֆը: Սովորաբար հարկահաւաքները իրենց հետ վերցնում էին մէկ ժանդարմ, այն ինչ Արիֆը այս անգամ շրջում էր 20 ժանդարմներով: Ապրիլի 2-ին Արիֆը հասնելով Կաղպի, վերցրեց իր հետ 6 ժանդարմ և ուղևորեց Թաղ, իսկ 14 ժանդարմները այդտեղից քնացին Սակ և իջան ուն Նամիրի տունը: Այս իմանալով, Միւրճանց գիւղացի Գիւլամիր Մուրադեանը, որը շրջանում յայտնի էր իր քաջութեամբ, մի քանի տղաներով եկաւ Սակ և գիւղերով ուն Նամիրի տունը պաշարեց ժանդարմների այս խումբը մէջ տեղից վերացնելու գործը յանձնւած էր սրան: Գիւլամիրը նախ առաջարկեց ժանդարմներին անձնատուր լինել, նրանք մերժեցին և սկսեց երկուստեք հարացանաձողութիւն: Տան մէջ պաշարւած ժանդարմները երկար ժամանակ դիմադրում էին, մինչև որ Գիւլամիրը ձեռնարկեց հրդեհել տունը: Ժանդարմները ստիպւած ե-

դան փախչելու ճանապարհ որոնել, նրանցից երկուսը տան յետևի պատը ծակելով փախան դէպի Խլքտան կամուրջը և ընկնելով պահապան տղաների ձեռքը սպանւեցին: Մի քանիսը դուրս թռան փողոց և տեղն ու տեղը գնդակահար եղան. իսկ մի քանիսն էլ պատը ծակելով մտան գոմը և սկսեցին այդտեղից կուել: Կոխը այստեղ կատաղի բնոյթ կրեց, տաքարիւն Գիւլամիրը, նրա հետ միասին նաև կաճէթցի Աբրեօն գրոհ տալով սպանւեցին: Այս միջոցին օգնութեան հասաւ Խլքտան կամուրջը պահպանող Ազօն մի քանի տղաներով, կատաղած յարձակւեց գոմի վրա և այդտեղ եզող ժանդարմներից միայն երկուսը փախան տղատւեցին, մնացեալները սպանւեցին: Այստեղ սպանւեց նաև տղաներից մէկը. զա կաղպեցի Յովիկն էր: Այսպիսով սպանւեցին ժանդարմներից 12-ը, տղաներից 3-ը, բացի այդ, տղաների ձեռքն անցաւ 14 լաւ հրացան, որը մեծ աւար էր այդ օրերի համար:

Մինչդեռ դաւառի վերին և վարին շրջաններում գինւած հայ խմբերը վերցնում էին մէջտեղից կառավարական կորգօնները, արևելեան շրջանում սկսեցին քրդական յարձակումները:

Արևելեան շրջան կոչուում է Թաղի ուղղութեամբ Տիգրիսից դէպի արևելք ընկած մի շարք հայկական մանր գիւղեր, որոնք զուրկ են պաշտպանելու յարմարութիւններից: Այդ գիւղերն էին՝ Վախրով, Առիզում, Աքքուս, Բրմենց, Շեղջանց, Առօսկի, Կվերս, Պաղկ և Պապոնց, Բաղչկանց, Շինօ, Շամօ, Երիցու մըղբաները, ընդամենը 100 տուն ժողովրդով: Այդ շրջանի քիւրդերը լուր աննելով Թաղում ստեղծւած զրուսեան մասին, ուղեցին յարձակւել հայերի վրա: Հայերը ստիպւած եղան ձգել գիւղերը և զալ համախմբւել Բրմենցում և Պապոնց-Մզրայում:

Այս օրերի անց ու դարձի մասին Զին. մարմնի օրագրութեան մէջ արձանագրւած է հետևեալը:

Ապրիլ 1. Զաթօն կը գրէ, որ Սիւտկնում կորգօնը վերցըւած է. 20 հոգուց 2-ը սպանւած, իսկ միւսները անձնատուր են եղած:

Ապրիլ 2. Պապոնց-Մզրէից կրպօն եկաւ, նրա պատմելով այդ շրջանի հայերը հաւաքւել են Բրմենց և Պապոնց-Մզրէն,

քառականաչափ քիւրդեր Առօսկիի վերեւից ուղեցեր են յարձակելը սակայն գիւղացիներէ ընդդիմութեամբ ետ են քաշուր:

Ապրիլ 3. Սէթ կը գրէ Գիւլամիր իր ընկերներով գիշերանց կը պաշարէ Սակը, կոիւ կսկսի իր և ոստիկաններու մէջ, մերոնք ձեռք են բերած 14 հրացան—9-ը մարթիւնի, 5-ը մաւղէր:

Այս գէպքերը տեղի ունէին մինչև ապրիլի 3-ը, իսկ ապրիլի 3-ը նշանաւոր է: Ինչպէս տեսնոք իր տեղում, Յովսէփ Զօլօհանի և միւս հինգ տղաների ձերբակալման լուրը հասել էր քաղաք, երիտասարդների մէջ իրարանցում կար, ղեկավար շէրջանը պատրաստուում էր մարդ ուղարկել Շատախ մտքերը խաղաղացնելու. այդ ցանկանում էր նաև Ալէզէտը, իսկ երիտասարդները ոչևորում ու համոզւած քաջ շատախցիների յաջողութեան վրա, հակառակ էին մարդ ուղարկելուն: Վերջապէս Իշխանը իր երեք ընկերներով ճանապարհ է ընկնում գէպի Շատախ, լուրը հասնում է Սիւտիին, և տղաները այդ լուրի վրա վերցնում են գէնքերը ու 18 գերւած ժանդարմներին արձակում են: Այդպիսով այն միջոցին, երբ Սիւտիին տղաները սպասելով խաղաղարար մարմնի գալուն, արձակում էին գերւած ժանդարմներին, այդ նոյն միջոցին Իշխանը իր երեք ընկերներով գոհ էր գնում դաւադրութեան:

Բացում է ապրիլի 4-ի առաւօտը. թաղեցիք ոչինչ չը գիտեն չիրճում կատարւած դաւադրութեան մասին և անհամբեր են դարձել, չունենալով քաղաքից որևէ լուր: Միւս կողմից արբամադրութիւնը բարձրացել է շէջաններից հասնող լուրերի ազդեցութեան տակ:—Պէտք է լուծել տևողական սպանիչ գրութիւնը,—որոշում է Ջին. մարմինը և հրահանգ է ուղարկում գիրքերի տղաներին՝ արգելել ժանդարմների ու միլիտանների անցուղարձը փողոցներով:

Առաւօտեան ժամի 10-ն էր, երբ կառավարատնից մէկ միլիտա դուրս գալով, եկաւ և ուղեց կամրջով անցնել գէպի Ջրագացի թաղը: Տէր-Մարգարեանի գիրքից կամրջի վրա հսկող ղինտըրը—Դաւիթ Գիւլամիրեանը, համաձայն այդ օրւա հրահանգի, ձայն տւեց միլիտին, որ կամրջով անցնելը արգելւած է: Միլիտը ուշադրութիւն չը դարձրեց տղայի խօսքերին, տղան ձայն տւեց երկրորդ անգամ, միլիտը շարունակեց իր ճանա-

պարհը, տղան ձայն տւեց երրորդ անգամ ու կրակեց: Գնդակը ծակեց միլլիտր կուրծքը, նա յետ փախաւ և կառավարատան շէմքի վրա վայր ընկաւ:

Ահա այս եղաւ Թաղի կռիւների ազդանշանը և երկու կողմի զիրքերից միաժամանակ սկսեց նրացանաձգութիւնը: Հրացանաձրգութիւնը շարունակեց մինչև երեկոյ, կրակը երկու կողմից էլ տեղում էր անընդհատ, բայց ոչ նոյն չափով. Ձին. մարմինը հրահանգել էր ամեն կերպ խնայել փամփուշտը և հայ զիրքերը պատասխանում էին թշնամու 5—6 գնդակին մէկ գնդակով:

Թէ ապրիլի 4-ից սկսած մինչև 22-ը Թաղի մէջ կռիւր ինչ ընթացք ստացաւ, թոյլ տանք պատմելու Ձին. մարմնի օրագրութեանը, նաև այն պաշտօնական գրութիւններին, որ փոխանակում էին գայմազամի, կուսակալի և Թաղի ու շրջանի կռիւնները ղեկավարող պաշտօնեաների մէջ, որոնք աւելի պերճախօս կերպով լուսարանում են կուր ընթացքը:

Ահա Ձին. մարմնի օրագրութիւնը:

Ապրիլ 4. վարից փախչող ոստիկան մը Գելկանց զիրքի առաջ ձերբակալեց. 6 և կէս (11 և կէս)-ին հրահանգ արւեց մեր զիրքերի առջևից թշնամու երթևեկութիւնը կտրել. հրացանաձգութիւնը սկսեց: Չաթօն տեղեկացնում է, որ Սանի ոստիկանները փախուստ են տւած. Սանը այրւած է մեր կողմից և զրուււած է 240 մաւզէրի ծայր և այլ զինւորական իրեր: Այսօր, ինչքան կարողացանք ճշտել, թշնամին 5 զո՛հ միայն տւած է, մեզանից ոչինչ:

Ապրիլ 5. արշալոյսէն առաջ Ձիրօն և Մուրօն Ազգային այրը բարձրացրինք, որտեղից կարելի է թշնամու երթևեկութիւնը խափանել:

Ապրիլ 6. կռիւը այսօր շատ դանդաղ է, երթևեկութիւնը թշնամու զիրքերի միջև բուրովին կտրւած է մեր կրակից, իսկ մեր կողմ երթևեկութիւնը լաւ կընթանայ՝ տնից տուն բացած ներքնանցքների շնորհիւ: Թաղի մի ծայրից միւսը կարելի է հեշտութեամբ գնալ առանց փախուելու, և այս աշխատութեան մեծ մասը կատարած են կանայք: Յիշելու . արժանի է երկու կողմի մէջ եղած «կար-կարօնները»:

Ապրիլ 7. կէս օրից յետոյ Գոմերի կողմ ծուխը պալան-

պալան բարձրացաւ, մեր տղաները յաջողեր են ուրեմն: Գիշեր ջաղացի կամուրջը վառել տւինք, կը կասկածէինք, որ գիշերուայ մթութիւնից օգտուելով, այն տեղից թշնամին ուժեր կարող է անցկացնել մեր կոնակ, այդ կասկածն էլ մէջտեղից վերացուեց:

Արևելեան շրջանը ձեռքէ գնաց, խուժանը այնտեղ: Բաւական աւերներ գործելէ յետոյ, բաւականաչափ ընտանիքներ գերի է տարել:

Ապրիլ 9. Ժամը 2 (7)-էն մինչև հիմա խաղաղ անցաւ. Սօղւանից նամակ առինք, որ Հաշկանց հայ գեղը վառած է: Բօլս կոխ է. ուժեղ խուժք մը օգնութեան գնաց այնտեղի ընկերներին: Երեկոյեան իմացանք, որ Գումերի շուրջ հաւաքւող քիւրդերը թողել են իրենց տուն ու տեղ և փոխադրուել են Ծառնուս: Գիշեր ժամ 2 (7)-ին բանդից փախչող Պայլօզը լուր բերեց, որ Յովսէփ և իր ընկերները բանդում սպանուեցին:

Ապրիլ 10. այսօր 3 հոգի ճամբեցինք թշնամու դիրքերը հետազօտելու, մերոնք ամենայն յաջողութեամբ մինչև նրանց դիրքերի առաջ կը գնան և կը կրակեն, սարսափեցնելով մնացած բոլոր դիրքերը:

Ապրիլ 12. Վարպետ Մանուկը մի քանի բանուորների հետ ճամբեցինք Պլքտան կամուրջը քանդելու, 10 օրից ի վեր կաշխատեն այդ անտէր կամուրջի վրա, դեռ չը քանդեցին: Մեր ամբողջ մտահոգութիւնը այդ գծից է, պիտի ասել, որ այդ գիծը պահպանողներ թոյլ են:

Ապրիլ 14. Բէշատի դահակալութեան օրն է, քիւրդերը իրենց լուսավառութիւնը գնդակների բոցով կանեն: Հարուստներին վրա զինուորական տուրքերի բաշխումը կատարեցինք, զինուորների կարիքները հոգալու համար:

Ապրիլ 16. թշնամու դիրքի առաջ Սահակ ուսմբ մը պայթեցուց, ամբողջ Մէզնքարը դղրդաց: Հարսանիք լինի կարծես, ամէն կողմից կերգեն, կը պօտան, հուսա կը կանչեն. ոգևորութիւն շատ լաւ է:

Ապրիլ 17. ձեռնարկեց թնդանօթ մը շինել, այս գործը գլուխ պիտի հանի Վարպետ Կարապետը:

Ապրիլ 18. Ապատ կը գրէ. — Ծառնուցիների Հաշկանց կամուրջից անցնելու փորձ կանեն, սակայն այնտեղի մեր պահակութեան զինուորական վրա չեն յաջողի և 5 զո՛ւ տալով կը հեռանան:

Ապրիլ 20. մեր շինած թնդանօթները այսօր սկսեցին գործել, թշնամու դիրքեր հրաշալիօրէն կը քանդեն, ամբողջ ցերեկը քրեկնց դիրքեր կը լքեն, բայց գիշերը նորէն կը վերաշինեն: Ծիծանից կը գրեն, որ Մոկաց խումանը անցել է մեր սահմանը. հրահանգեցինք մեր այն կողմերի ուժերին՝ կենդրոնանալ Մոկո — Շատախ սահմանի շարմար դիրքերի վրա:

Ապրիլ 22. ուշագրաւ է արհեստանոցի աշխատանքը, եկեղեցու բակը ճշմարիտ արհեստանոց է դարձել: Այստեղ թնդանօթ, այնտեղ վառօդ կը շինեն, մէկ ուրիշ տեղ պարապ փամփուշաներ կը լիցնեն և քանդում հրացանները կը սարքեն. տը պաւորութիւնը մխիթարօական է:

Փամ 3 (8). Ազատ և Չաթօեան եկան մեզ հետ խորհրդակցելու, որոշեցինք Չաթօեանին ճամբել վարի շրջան, այնտեղի գործերը կարգադրելու: Նրա պարտականութիւնը պիտի լինի կազմիի հովիտի զիւղերը փոխադրել Ծիծանց և շրջակայքը. պզտիկ ամփոփում կուզենք անել, որովհետև կը նկատենք, որ այսքան երկար ճակատի վրայ մեր դիմադրութիւնը տեսկան չը պիտի կարողանայ լինել:

Ապրիլ 23. այսօր նոր թնդանօթ մը շինուց քալիբր 4 սանտիմէտր, երկարութիւն 1 և կէս մետր: Այդ թնդանօթով այսօր 4 ումք արձակեցինք:

Այժմ էլ տեսնենք, ինչ տեսակ զրութիւններ վարում էին տաճիկ պաշտօնեաները այդ նոյն օրերի նկատմամբ:

Կուսակալութեան

Երէկ առաւօտ Փամ 6 (11)-ին, կառավարական կամրջից անցնող կրաւցի Կուռտ պէկի ծառայողներից Չալանկը՝ Յովան էֆ. դիրքից նեւուղ գնդակներից ծանրապէս վիրաւորուց: Կըօիւր մինչև հիմա սաստիկաբար կը շարունակէի, կրակը կառավարատան վրա աւելի ուժեղ է, միւս կողմից էլ միւսիւլման պաշտօնեաների ապաստանած վերեի թաղը վտանգի տակ է: Ամէն տեղ մեր դիրքերը պահելու մէջ ենք, սակայն դրութիւնը շատ ծանր է, ռազմանիւթ՝ միայն 1,200 մաւզէրի փամփուշտ մնացել է: Այս հէրիֆներին իրենց դիրքերից հանելու համար, լուրջ զինւորական ուժի ամենախիստ կարիք կայ: Փիւղերից անընդ-

հատ իրենց օգնական ուժեր կը հասնեն: Մեր ուժը անպայմանորէն չը պիտի բաւականանայ: Ամէն պարագային ամենայն արագութեամբ օգնութիւն ուղարկելնիդ կը խնդրելի:

4 սպրիլ

Գայմազամ Համդի

Գայմազամին

1. Գպրոցի մէջ եղող ժանդարմներ երեք օրից ի վեր անօթի են, եթէ Հէշաթ—Շատախ հաց և ոչխար կայ, իրենց պէտք եղածի չափ ուղարկեցէք, նոր եկող ուժերից, եթէ կարելի է, 4 զինուոր էլ այնտեղ ճամբէք:

2. Գպրոցի և մեր զիրքի մէջ եղած զինուորները անպակաս են, ոչ մի կորուստ չունինք:

3. Գպրոցի և մեր զիրքի փամփուշտները բոլորովին սպառուելու վրա են:

4. Մեր զիրքի մէջ եղած զինուորներից 2-ի մարթինին աւերած է, հետևաբար մինչև նորոգելը կը խնդրել փոխել:

5. Զրադացից լուր չունինք, ջրադացսաններ և օստիկաններ քանիցս կանչելով հանդերձ, ոչ կը պատասխանեն և ոչ էլ դուռ կը բանան:

6. Մեր զիրքի թէ ժանդարմներ և թէ պաշտօնէութեանց ընտանիքներ երկու օրու ցամաք հացէն ի դատ ոչինչ ունին, ինչ որ պէտք է հրամայեցէք:

7. Զեր հրամանի համաձայն 2 օստիկան Զարէի դռան առաջ թէ երէկ և թէ այսօր զիրքից դիտելու մէջ են. փամփուշտի խնայողութիւն կարելի եղածին չափ կանենք:

8. Եթէ ուշադրաւ լուր մը ունիք, հաղորդեցէք:

Գատախաղ Մահմադ Թէֆիկ (*)

Գայմազամին

Գիշերուա ժամ 7 և կէս(կէս)-ին Վախրովից և Աքրուսից 15 զինուոր ճամբուած է. նոյնիսկ սուրհանդակ Իւսուֆ ճանապարհին հանդիպած է նրանց, չը լինի թէ ուրիշ տեղ են փախած. զրանցից զատ 5 պահասախ զինուոր էլ ճամբուած հմ. այստեղ աւելորդ ուժ չը կայ. այստեղի ուժերը Թազին տիրող զիրքերի

*) Այս պաշտօնեան դանուտ էք Թազի տանիկ զիրքերից մէկում և այլ տեղից էք նամակ գրում գայմազամին, չը համարձակելով դուրս դուր գիրքից:

վրա բաժանած եմ, մինչև Հաշկանից վրա պահապաններ դրած եմ, այնպէս որ, եթէ նոր ուժեր չը գան, այս կարևոր դիրքերից մարդ չեմ կարող ճամբել ձեզ: Այժմ իմացայ, որ Սիւսիկիւում ձերբակալուած Մանուսա իմամի սղան թողնուած է և այս գիշեր կուգայ:

5 ապրիլ

Շէֆքէթ(*)

Գայմապամին

Փառք Աստուծոյ, այսօր էլ անփաս անցուցինք. 50 մազէքի, 50 մարթինի փամփուշտ ճամբեցէք, հակառակ դէպքում ամօթապարտ պիտի մնանք: Փամփուշտ չը կայ, մեզի չենք կարող պաշտպանել. դպրոցի և մեր դիրքի համար մի քիչ ալիւր և ոչխար ճամբեցէք, երէկ ալ պաշար—փամփուշտ, հաց, ոչխար չեկաւ: Ի՞նչ էլ այս էլ անկարելի է, Թօյսուն պէլին հրամայեցէք, որ մէկ երկու շաբ հացահատիկ յանձնեն էմին էֆ. ի տունը, երկայնքով ազալու համար: Իրերի գրութիւնից այնպէս կերնի, որ այս ինդիրը դեռ կը երկարի. թնդանօթի մասին եթէ լուր ունիք, սրտի մխիթարանքի համար հաղորդեցէք: Ձեր հրահանգի համաձայն Այվազի տունը թէ և կը պահպանենք, սակայն այնտեղ մշտական և անկախ ուժ մը հաստատել անհրաժեշտ է: Գպրոցի համար որոշած 4 ժանդարմները դեռ չեն եկած: Գարունհանի և Կամուրջի դիրքերը երէկ գիշերուանից ուժ է եկած: Այս առաւօտ մեր դիրքի վրա անզպար կրակած են: Մօլլան Այվազի տան համար այստեղից ուժ չի կարող ուզարկել: Այս իրիկուն եթէ փամփուշտ չը ճամբէք, այստեղից այդ դուռը չի կարելի պաշտպանել. ասոնք կանոնաւոր զօրք չեն, հրաման և հրամանատար չեն ճանաչի, զքեանքի չեն զիմանայ, որտեղ հանգիստ, որտեղ հաց լինի, այնտեղ էլ կը վազեն, հետևապէս սըրանց հետ վարւել պէտք է:

6 ապրիլ

Գատախաղ թէֆիկ

Կուրա բէյ և Քեալաշ աղաներին

Այստեղի և դպրոցի զինուորներին փամփուշտ չէ մնացել, հաց երբէք չկայ արդէն, երկտողս առնելուն պէս 2 ոչխար, ա-

*) Սա Ալանցիներէ միգիրն էր, պաշտպանում էր Մանուսի դիրքը և այդ տեղից էր նամակ գրում:

զիւր և փամփուշտ անմիջապէս ճամբեցէք, եթէ ուշացնէք, այս
երկու զիրքերի ուժը չը պիտի կարողանայ սպասել:

Կամուրջի գլուխը (Այվազի տունը) բռնելու համար Սալէհ
աղային մի քանի հոգով անմիջապէս ճամբիր գայ:

6 ապրիլ

Իստախազ Թէֆիկ

Փայմագամին

Կիմանամ որ Նորդուզի դայմագամ Խալլտ բէյ 60 հոգով
Վախրով հասած է, սակայն Առիգոմ և Քրմինց ապստամբներէ
կողմից բռնւած լինելու պատճառաւ, այնտեղեր մաքրելուց յե-
տոյ նոր Թաղ պիտի հասնի:

6 ապրիլ

Շէֆքէթ

Ֆրգա(*) կօմանդան Քեամիլ բէյին

Աւթ օրից ի վեր զիրքերի մէջ պահւած Թաղի ապրս-
տամբների ղէմ կը կուենք: Թաղի զիմադրութեան յարատևու-
թիւնը աշխրէթների բարոյական կորովը կը մեռցնէ: 500-ի շափ
ֆիրգայի առններու մէջ ապաստանած են: Շրջակայ աւերւած
գիւղերից էլ անդադար կուզան, եթէ մինչև մի քանի օր Թա-
ղին և շրջակայ բլուրներին չը տիրանանք, այլևս ոչ մի բան
չի կարելի անել: Սորա համար մի թնդանօթ և պատերազմական
գիտութեան հմուտ մի սպայի ղեկավարութեան տակ կարևոր
ուժ մը անհրաժեշտ է: Թէև տարիներից ի վեր իրենց ծրագրած
ապստամբութիւնը մէկէն ի մէկ երևան հանեցին և միջոց չը
տւին մեզ պատրաստելու, բայց և այնպէս կառավարութեան
պատիւը պաշտպանելու մէջ ենք:

6 ապրիլ

Փայմագամ Համդի

Կուսակալութեան

Ալանցիների, Եղզինանցիների և Սաւաշանցիների հրացան-
ներ պակաս են: Այսօր հրացանաւոր ճիւղին Կուրտ բէկի 60 մար-
դիկ են, որոնք բոլորն ալ այստեղ պատրաստ են: Թշնամիին
անհաւասար, կամ նոյնիսկ նրանց մէկի ղէմ հինգ գէնք ալ
ուսնեանք, յամենայն ղէպս 50 հատ լաւ հրացան ուղարկելիւ կը
խնդրւի: Հակառակ մեր ձեռք առած ամեն զգուշաւոր միջոցնե-

*) Ֆրգա նշանակում է գրիգոր

բին, Հայոց-ձորից և Ոստանից մազապուրծ հողոյ և լեռների մէջ պահուող հայերը մեր շրջակայքը լեցելու մէջ են: 4 սնդուկ մաւզէրի և 4 սնդուկ մարթինի փամփուշտների առաքումը կը խնդրէի:

6 ապրիլ

Գայմազամ Համդի

Կուսակալութեան

Կռիւր զիրքերի հտեից անդադար կը շարունակւի թէ զիշեր և թէ ցերեկ, զինւորների և աշիրէթների մօտ 2000 փամփուշտ է մնացիր: Այլւամ զիւղերի ապստամբները կը միանան կենդրոնի ուժերին: Քիւրդերի կողմից շրջակայք տեղի ունեցող թալանին մասնակցելու համար, աշիրէթական զինւորներ իրենց զիրքերը թողնելով՝ մեր ուժը կը պակսի: Զինւած հայերի թիւը այսօր 600 կենթադրւի: Զաղացներ ամբողջապէս գրաււած են: Զեռքի տակ հղած պաշար մի շարթւան հազու բաւականանայ: Եթէ ներկայ զրութիւնը շարունակւի, սով առաջ պիտի դայ: Աշիրէթ և աշիրէթապետներ ալ միեմտյն մաքի մէջ են, կանոնաւոր ուժ, ռազմանիւթ և երկու լեռնային թնդանօթի արագ առաքումը կը խնդրէի:

7 ապրիլ

Գամազամ Համդի

Կուսակալութեան

Թաղի կռիւր տւելի լուրջ կերպարանք կատանայ և կը սաստիկանայ, ապստամբների օգնութիւնը օրից օր կաւելնայ: Նօրդուզի մալը միւտիւր այսօր շէհիտ (նահատակ) եղաւ: Հայոց-ձորի, Գեաւաշի և Մոկոսի ուժերից տեղեկութիւն չը կայ, մեզի ամենից շատ գրաղեցնող խնդիրը ռազմանիւթի պակասութիւնն է: Կուռի սկզբից մինչև հիմա ոչ մի տեղից ռազմանիւթ չիկաւ: Ճանապարհ ընկած ռազմանիւթ կարող է գրաււած լինել, գրա համար նօրից մարթինի և մաւզէրի ռազմանիւթ և կանոնաւոր թնդանօթ մէկ օր առաջ ճամբելնիդ անհրաժեշտ է, որպէսզի թալը կարողանանք մաքրել և ամբողջապէս մաքրել:

Երէկ զիշեր հայերի կողմից պաշարւած Գոմեր քիւրդ զիւղը պաշարումից ապստուհց: Նրա մօտ հողոյ Հաշիանց հայ զիւղը փանդուց:

10 ապրիլ

Գայմազամ Համդի

Հեռագիր

Շատախի դայմագամին

Այսօր այստեղից 10 սնտուկ ռազմանիւթ Կոստայանի ճանապարհով ճամբեցի, այստեղից էլ մէկ ջոկատ կը մեկնի:
11 ապրիլ Հայոց-Չորի միւտիր Րիֆաթ

Շատախի դայմագամ Համդի և

Նորդուզի դայմագամ Խալըտ պէյերին

Ձեր ապրիլ 8-ի թւակիր ծածկագիրը ստացւած է, ապրիլի 9-ին 10 սնտուկ մաւղէրի ռազմանիւթ Շատախի համար Հայոց-ձոր դրկւած է, այնտեղի միւտիրը կը տեղեկացնէ, թէ ստացւած և ուղարկելու վրա է, բոլորովին վատահ եմ, որ այդ ռազմանիւթը այսօր այդտեղ կը հասնի. հաստատակամ շարժէք, այս ապստամբներին ճնշել և խորտակել կարեօր է: Իրենց ապաստանած դիրքերը քանդելու համար գրեցի Ֆրդա կօմանդան Բամիլ բէյին, որ թնդանօթ մը ճամբէ: Կը յուսամ, որ թնդանօթը այժմ այդտեղ հասած է:

Վալի Զէւզէտ

Գայմագամին

1. Երեկոյեան ժամը 4 (9)-ին մեր դիրքի վրա շատ սաստիկ և տեական կրակ բացին, բայց սպարդիւն, փառք Աստուծոյ, կորուստ չունինք:

2. Այսօր ժամը 12 (5)-ին տասնապետ Օսմանի կողմից կամօւրջի դիրքի շրջակայք յարձակող հայերից մէկը սպանուցի:

3. Ձեր երէկւա հնչողրգած աւետիսից բոլորս էլ շնորհակալ ենք, ինչպէս այս իրիկուն թնդանօթ կը հասնի:

4. Ձեր երէկւա զրկած մարթինի փամփուշտներ չենք ստացեր, ինչրիւմ երեկոյեան ուղարկեցէք:

5. Զինւորներին ցրելու համար 4 տուփ էլ մաւղէրի փամփուշտ ճամբեցէք:

14 ապրիլ

Գատախաղ Թէֆիկ

Կուսակալութեան

Թշնամու քւժը աւելանալու, իսկ մերը, դժբախտաբար

Թալանի երեսից պակասելու մէջ է: Թալանը մեր ձեռքի տակ եղած ուժի մեծ մասը զատելով, զիւրազրուելի հայ գիւղերին տիրանալու արգելք կը դառնան:

Նորդուզից հեղոյ Լազգին իր պանապարհի վրա դառնող Քրմենց և Աոիզոմ գիւղերը գրաւելուց և քանդելուց յետոյ, կենդրոնի պաշտպանութիւնը ստանձնող քիւրդերը իրենց գիրքերը թողնելով, Թալանի գիմեցին և մի քանի օր մեր զիրքը զժւարութեամբ կարողացանք պահել:

Արդէն յեղափոխութեան առաջին հարածը եղաւ մեր ամենաընտիր սատիկանների նահատակելի ու ցրելի Սիւտէնա և Մակի մէջ: Այս կերպով կառավարութեան կանոնաւոր և պործազիր ուժը ջախջախեց: Եւ որովհետև յեղափոխութիւնը մէկէն ի մէկ պայթեց, պահակախմբերի մէջ գտնուող սատիկանները անկանոն ու ցրւած վիճակի մէջ գտնւելով, քրդական աներեսութեան արգելք լինելիք կանոնաւոր ուժ մը համարեա չկայ: Ինչպիսիք երբ այս խնդիրները վերջանան, իրենց զիրքերը թողնող և անպաշար կեղծ հիւանդ ձեացող տասնապետ և չաւուշներէ ցանկը ձեռք պիտի տրւի: Կարող էք վստահ լինել, որ մենք մեր հաստատակամութիւնը չը պիտի կորսնցնենք, և այդ հաստատակամութեան ու պաղարիւնութեան շնորհիւն է, որ հակառակ հայերի ծրագիրներին և իրենց թափած զոհուցութիւններին, կենդրոնի Վերին Թաղը յազատեցինք և 15 օրից ի վեր այնտեղի մեր զիրքերը, չը նայած օրից օր թշնամիի ուժերը կաւելանան, պահպանելու կը յաջողինք:

Այսօր մեր ուժը 250 հոգիէ կը բաղկանայ. սրանցից 100-ը հազիւ մաւղէր են, մնացածներից 50-ը մարթինի են և մնացած էլ կափաղլի և յունական կրակներ են: Մաւղէրից զատ մնացած հրացանների ռազմանիւթը ամբողջապէս սպառւած է: Նրեսուն տարիներից ի վեր այս նենդ ծրագիրը իրագործելու համար իրենց ձեռք բերած, որպէս թէ քրդական Թալանին դէմ դնելու համար, վերջին սխտեմի հրացան և առատ վամփուշտը կառավարութեան դէմ դարցուցին: Այս գաւաղիրներին իրենց արժանի պատիժը վայրկեան մը առաջ տալու համար, պէտք եղած թնդանօթ և անդործութեան մատնւած մարթինի և կափաղլի հրացանների համար առատ ռազմանիւթի առաքումը մէկ անգամ ալ կը համարձակենք խնդրել:

Շատախի գայմազամ Համդի և

Նորդուզի գայմազամ Խալլաւ բէյերին

Թնդանօթը ճամբւած է, մինչև այժմ հասած կը լինի ի հարկէ: Վանի ապստամբներին ամեն օր կը ճնշենք, մինչև մի քանի օր գործը կը վերջանայ: Շատ նպատակայարմար է, որ Լազգին ձեզ մօտ մնայ: Իրմէ շատ գոհ եղայ, այդտեղ էլ մեծ ծառայութիւն կը յուսամ իրմէ: Բոլոր աշխրէթապետներին կը բարևեմ, հաղորդեցէք: Թրդա կօմանդան Քեամիլ բէյին զրեցի, որ անմիջապէս 10 սնտուկ ռազմանիւթ արագօրէն Շատախ առաքէ, շուտով տեղդ կը հասնի: Ձեր բոլորից ծառայութիւն և զոհարերութիւն կապտեսիմ, այս քաֆիրներին բնաջինջ անելու է: Մինչև Թազի գործը չը վերջանայ, Լազգին թող ոչ մի տեղ չերթայ:

22 ապրիլ

Վալի Զէլդէս

Հետեւելով Զինուորական մարմնի օրագրութեանը և տաճիկ պաշտօնեաների մէջ փոխանակւած այս գրազրութիւններին, տեսնում ենք, որ հայ ժողովրդի դրութիւնը շրջաններում գնալով վատանում էր:

Շատախին օգնութեան հասաւ Նորդուզի գայմազամ Խալլաւ բէյը 60 ժանդարմներով և մի քանի պաշտօնեաններով: Այդ պաշտօնեաներից էր մալը-միւզիրը—տնտեսական մարմնի նախագահը, որը, համաձայն պաշտօնական գրութիւնների, սպանւեց Թազի մէջ:

Օգնութեան եկաւ Գրաւցիների ցեղապետ Լազգին—աւագակ Շաքիրի տղան իր հրոսակախմբով՝ աւարտելով Հայոց-ձորում սկսած աւերը:

Խալլաւ բէյը ճանապարհին յարձակւեց արևելեան շրջանի հայ ժողովրդի վրա և դիւղերը աւերեց. ապա վրա հասաւ Լազգին իր հրոսակախմբով և լրացրեց Խալլաւ բէյի պակաս թողածը:

Այստեղ կարևոր է արձանագրել հետեւեալը: Ինչպէս տեսանք, դէպքերի սկզբում արևելեան շրջանի հայերը նեղւելով քիւրդերից, եկան համախմբւեցին Քրմենց և Պապոնց-Մզլաւ դիւղերում: Քիւրդերը եկան պաշարեցին այս երկու դիւղերը՝ նրանց զուրս եկան դիմադրելու երկու քաջ հայեր. դրանք էին՝ Քրմենց գիւղացի Յակօն և Աղէկի Մանուկը. դիմադրութիւնը

շարունակեց երեք-չորս օր: Յակօն, որը միայնակ ամբողջած մէկ այրի մէջ քաջաբար շարունակում էր զիմադրութիւնը, զո՞ն պնտց խաբերաշուքեան, նենդ կերպով դուրս բերւեց այրից, սպանւեց շարաշար տանջանքներով և ժողովուրդը անպաշտպան մնալով, ենթարկւեց խուժանի վայրագութիւններին և 130-ի շափ սպանւածներ ու գերիներ տալով, փախաւ դէպի Թազը և այլ կողմեր:

Միայն պաշտօնէութիւնը չէր, միայն ժանդարմներն ու միլիտները չէին, որ դուրս եկան հայերի գէմ, այլև ցեղապետ-Տերը քիւրդ խուժանով ու հրօսակախմբերով հանդերձ:

— Լազգիէն շատ դո՞ն եղաջ, այդտեղ էլ մեծ ծառայութիւն կը յուսամ իրմէ, բոլոր աշիրէթապետներին կը բարևեմ,— գրում էր Ալեղէտը Շատախի գայժագամին:

Մովսի խուժանը շարժւեց Շատախի սանձանից ներս և արեմտեան շրջանը վտանգւեց, վտանգւեց նաև հարաւային շրջանը, քիւրդերի շարժումը այստեղ էլ ծաւալւեց և Ձին, մարմինը վարպետներ ուղարկեց Սլքտան կամուրջը քանդելու:

Թապի մէջ դրութիւնը նոյնպէս ծանրացաւ. Յովսէփը իւր բնկերներով պիշերանց բերւեց Հեռագրատան կամըջի վրա ու սպանւեց. նրանցից մէկը— Պայլօզ Սափօեանը մի հրաշքով կարողացաւ գետը նետուիլ և հոսանքից քշւելով ու քարերին զարկ-ւելով կիսաշունչ իրեն ձգել հայ թաղամասը: Տղայոց զպրոցի շրջանից նեղւելով, Ձին, մարմինը կարգադրեց Ջրաղացի կամուրջը վերցնել:

Չը նայած այս բոլորին, հայ ժողովրդի կորովը Թաղի մէջ ոչ միայն չը խուլացաւ, այլ ընդհակառակը սպառնացող վտանգի ազդեցութեան տակ նոր թափ ստացաւ: Հայոց եկեղեցիին վերածւեց մի բարդ զինական զարբնոցի: Այստեղ բերին թափեցին թօռերի վրա եղած արճիճը, կշիռի քարերը և այլ մետաղէ իրեր: Աշխատանքը եռալ սկսեց. մի տեղ վառօղ էին պատրաստում, միւս տեղ փչացած գէնքերն էին նորոգում, երրորդ տեղ փամփուշաներ էին լցնում: Այս բաւական չէ, շատախցին այդ նեղ օրերին ստեղծագործեց իւրայատուկ թնդանօթ. դա մի բաւականին երկար խողովակ էր հինգ շերտ սպիտակ թիթեղից շինւած և վրայից երկու շերտ հեռագրական երկաթաթելերով պատած ու փայտի խոռոչի մէջ ամրացրած: Մի պրիմիտիւ,

նոյնիսկ զաւելջտական թնդանօթ, սակայն որք սարսափ էր ազդում թշնամուն:

— Թնդանօթը գետեղեցիէնք Օխիկեանի տան մէջ և սկսեցինք հարւածել Գլանկէի դիրքը, յաջող է, պատուհանի փեղկերը ամբողջ քանդեց, թշնամին անաբեկամ պարպեց այդ դիրքը և անցաւ կողքի տունը, — ահա թնդանօթի վերաբերեալ տողերը, որ բերում ենք Զինւորական մարմնի օրագրութիւնից:

Եւ չը պիտի զարմանալ, երբ Շատախի զայմագամը Ֆրգա կօմանդանին ուղղած իր գրութեան մէջ գրում էր.

— Թագի դիմադրութեան, յարատեութիւնը աշիրէթներէ բարոյական կարողը կը մեացնէ, 500-ի չափ Ֆիլղայի տուներու մէջ ապաստանած են:

Իսկ կուսակալին գրում էր.

— Թշնամիին հաւասար կամ նոյնիսկ նրանց մէկի դէմ մենք հինգ զէնք ալ ունենանք, յամենայն դէպս, 50 հատ լաւ հրացանի ուղարկելը կը խնդրի:

Մէկին հինգը դարձեալ քիչ էր համարում զայմագամը ըմբոստ շատախցուն զսպելու համար: Եւ այս կողմում էր տաճիկ պաշտօնէութեան հոգեբանութիւնը կուի ընթացքում:

Սակայն մենք դիմենք կուի ընթացքին:

Կսիւնների ամբողջ քանն օրւս ընթացքում, ինչպէս տեսանք, դրութիւնը հայերի համար բարդացաւ, չը նայած հայ կուտղների հերոսական ճիգերին, արևելեան շրջանի գիւղախումբը աւերեց. արևմտեան շրջանում, Մակսի սահմանի վրա քիւրդեր երեացին, Հաշկանց գիւղը հրդեհեց, քիւրդերի մասսայական շարժում նկատեց հարաւային շրջանում:

Այսպիսով արևելեան, արևմտեան և հարաւային կողմերից թշնամին սկսեց նեղել, հիւսիսային շրջանն էր միայն, որակից վատ լուրեր չէին հասնում և որք Զինւորական մարմնին չէր զբաղեցնում:

Այս, հիւսիսային շրջանը Զինւորական մարմնին չէր զբաղեցնում, և ոչ միայն չէր զբաղեցնում, այլ և հանդիսանում էր մի ուժեղ պատուար, պաշտպանելով դաւառի հիւսիսային սահմանը կառավարական զօրքերի խուժումից: Այստեղ կատարւած դէպքերը և ապաստան գտած ժողովրդի բազմութիւնը

որ շատ աւելի մեծ է, որ կարելի լինէր նրա մասին լու-
սեցնել անցնել, ուստի մի փոքր կընդհատենք մեր պատմու-
թիւնը և կանցնենք հիւսիսային շրջանում կատարւած անցքե-
րին, որոնք, ինչպէս տեսանք սկզբում, խիստ առնչութիւն
ունէին թագի և շրջանների անցքերի հետ:

ԿՌԻՒՆԵՐԸ ՓԵՍԱՆԴԱՇՏՈՒՄ

Հիւսիսային շրջան ասելով Շատախի կոիւնքի մէջ պիտի հասկանալ Փեսանդաշտը: Ծիշտ է, Փեսանդաշտը կազմում է հիւսիսային շրջանի մի փոքրիկ տարածութիւն և այդ շրջանում գոյութիւն ունի մի այլ սիրուն դաշտ, ինչպէս է Սորգանքը, սահայն կոիւնքի ընթացքում իր աշխարհագրական դիրքով գլխաւոր վայր այդ շրջանում հանդիսացաւ Փեսանդաշտը:

Փեսանդաշտը մի սիրուն աւազան է 12 վերստաչափ երկարութեամբ և 7 վերստաչափ լայնութեամբ՝ շրջապատւած լեռներով: Ղրանք են հսկայ Արտօսը, Զմէնը, Կարաբլախը և Բարաղօտիկը: Այս աւազանը գաբնան ժածկում է ջրով, իսկ մայիսին ջուրը ցամաքում է թողնելով տիգմի մի շերտ. որի մէջ ձգած սերմը շատ առատ բերք է տալիս: Այսպիսով Փեսանդաշտը որքան էլ փոքր մակերևոյթ ունի, այնու ամենայնիւ, համարում է առաջին հացառատ շրջանը: Յաճախ պատահում է, որ ջուր շատ է հաւաքում և ուշ էլ ցամաքում է, այս դէպքում սերմանելու ժամանակը անցնում է և ժողովուրդը մնում է առանց ցանքի:

Այս սիրուն աւազանի մէջ զետեղւած են չորս հայկական գիւղեր. Ղրանք են՝ Առեղը, Կայնէմէրանը, Շիղանը և Կաղազիսը: Փեսանդաշտը վարչական բաժանումով թէև պատկանում է Շատախի գաւառապետութեանը, բայց ինքնապաշտպանութեան տեսակէտից միացւած էր Գեաւաշին ու նրա ենթակոմիտէն կախում ունէր Գեաւաշի կոմիտէից: Ուստի կոիւնքի միջոցին Փեսանդաշտը դարձաւ Գեաւաշի ժողովրդի ապաստան, միաժամանակ Գեաւաշի կուռղ տղաների գլխաւոր կայանը:

Վանի գաւառների մէջ Շատախից յետոյ, պէտք է ասած, կոմիտէական ուժից կազմով և անձնէր երիտասարդներով առաջին տեղը բռնում էր Գեաւաշը: Սրան ապացոյց կարող են



Էդուարդ Գաղոբյան

ծառայել Աթանանի դէպքերը, որոնք տեղի ունեցան զհիտեմբեր ամսին, հանդիսանալով պատասխան Բէլուի աւերման:

Գեաւաշի կազմի մէջ իբրև գինւորական ուժ և յանդուգն կուռղ առանձին տեղ զբաւեց Լեոն Շաղոսանը. սա Աթանանի կոխները ղեկավարող Լեոնն էր:

Ծնւելով ծովափնեայ Խարականց գիւղում և մանկութիւնից հետաքրքրւելով ալիքների հետ խաղացող Աղթամարով, նա իրեն ձգեց Աղթամարի դպրոցը, բայց Ե-րդ դասարանից արձակւեց: Բանը նրանում էր, որ ուսուցչական խումբը բաժանւած էր երկու մասի, որոնք «Ծովակ» և «Կոտոշ» խմորատիպ թերթների էջերում իրար դէմ սկսել էին մի անվայել պայքար. մի քանի հասուն աշակերտներ ի նկատի ունենալով ուսուցչիչների կըրքոտ վէճերը, հրատարակեցին իրենց թերթը «Կոխ» անունով և զբա էջերում սկսեցին յարձակումներ ուսուցչական ամբողջ կազմի դէմ. այս խնդիրը բարդացաւ, դպրոցական կեանքը ազմկւեց, Ե-րդ դասարանը փակւեց և բարձր դասարանի աշակերտները, ինչպէս և Լեոնը արձակւեցին: Այսպիսով, դեռ դպրոցական նըստարանից Լեոնը հրապարակ բերեց պայքարող ուրի: Իրանից երկու թէ երեք տարի անց իրենց արտերը ջրելիս Լեոնը կուխ բռնեց ջուրը կարող մէկ քիւրդի հետ և սպանեց նրան, այնուհետև դարձաւ փախստական, սակայն միաց շրջանի ինքնապաշտպանութեան գործի ետանդուն ղեկավարը:

Լեոնին աջակից ուժեր հանդիսացան.

1. Ասպօ Գրիգորեանը՝ Գեաւաշի Ընձակ գիւղից: Սա շէքաւոր ընտանիքի գաւակ էր, կիսազրոյգէտ մի մարդ, որը տարւելով ժողովրդի ինքնապաշտպանութեան գործով, ձգել էր նոյնիսկ իր ընտանիքը: Քաջ, անձնազոհ և մաքուր տիպ: Սա առաջ վարում էր Կարճկանի ինքնապաշտպանութեան գործը:

2. Մկրտիչ Մանուկեանը՝ Կարկառ գաւառի Յաղթ գիւղից: Սա աւարտել էր Աղթամարի դպրոցը և վարում էր ուսուցչական պաշտօն:

3. Արշակ Ալլահվերդեանը՝ Կարկառ գաւառի Եղէկիս գիւղից. սովորել էր Աղթամարի դպրոցում և պարապում էր ուսուցչութեամբ: Սա 1913 թւի դարնան Մկրտիչ Մանուկեանի հետ Կարկառ գաւառի Բերկրի գիւղի Աբաս աղայի երկու շաբաղործ տղաներին— Հասոյին և Քեարթմին սպանեց ու այնուհետև փախստական դարձաւ:

4. Մինրան Չաթօեանը:

5. Նոր գիւղի Աբրահամը:

Ահա այս անձնաւորութիւնները գործում էին Փիաւաշում իբրև այդ շրջանի ինքնապաշտպանութեան մարմնի անդամներ:

Երբ Թաղում Յովսէփ Չօթօեանը ձերբակալեց և յարաբարութիւնը հայ ժողովրդի ու կառավարութեան մէջ խղւեց, Թաղի Զինւորական մարմինը սուրճանդակ հանելով դէպի քաղաք, սուրճանդակ հանեց նաև դէպի Ստան, այնտեղից օգնութիւն ուղկում: Լեոնը լուրը աննելով վերջրեց անմիջապէս 40 տղա և Փեսանդաշտի վրայով իջաւ Թաղ՝ չը նախատեսելով, որ նման գաւազրութիւններ լարում էին նաև Փիաւաշում:

Ապրիլի 3-ին Լեոնը Փեսանդաշտից անցաւ դէպի Թաղ և նոյն օրն էլ Փեսանդաշտում տեղի ունեցան գէպեր:

Ստանից Թաղ տանող ճանապարհը ձգում է Փեսանդաշտի վրայով, այդ տեղով էլ տարւած է նաև հետագրաթիւր: Փիաւաշից դէպի Փեսանդաշտ երկու գիծ կայ, մէկը սկսում է անմիջապէս Ստանից և ձգում է Ասկանի քարքարոտ ձորի միջով, միւսը ձգում է Յիլի գիւղի վրայով: Երկու դժերն էլ զժարին են ու վերելք և հասնելով Բարադօտիկի լեռնանցքին, միանում են և զլխիվայր իջնում Փեսանդաշտ: Այսպիսով Բարադօտիկը, որը Արաօսի լանջից ճիւղ աննելով ձգում է դէպի արևմուտք, կազմում է Փեսանդաշտի հիւսիսային սրտաւարը, միաժամանակ պաշտպանութեան գիծը, փակելով անցքը կառավարութեան առաջ:

Առաջին բնդհարումը, որ տեղի ունեցաւ Փեսանդաշտում հետևեալն է. ապրիլի 3-ին Ստանից 7 ժանդարմներ ճանապարհ բնկան դէպի Թաղ, երբ նրանք հասան Բարադօտիկին, լեռնանցքը բռնւած գտան. Լեոնը այստեղից անցնելով, Փեսանդաշտի աղաներին կարգադրել էր ճանապարհը փակել: Ժանդարմները փորձեցին առաջանալ, աղաները արգելեցին, սկսեց հրացանաձգութիւն, կարճատև կրակից յետոյ ժանդարմներից մէկը ըստպանեց, իսկ միւսները յետ փախան դէպի Ստան:

Մի քանի ժամ չանցած Ստանից ուղարկեցին 50 ժանդարմներ յանդուպն հայերին պատժելու համար, բայց մի բուն պաներ սրանց առաջն էլ փակեցին ու սկսեց մի յամառ կռիւ,

որը անկց մինչև երկեոյ, ժամդարմաները ոչինչ չը կարողացան անել, Բարադոտիկը մնաց հպարտ ու կանգուն և ժանդարմները մուխը պատելուն պէս քաշեցին Յիլի։ Ապրիլի 4-ին կոխը վերսկսեց. նախկին օրւա 50 ժանդարմների վրա աւելացան Ոստանից ուղարկւած 30 նոր ժանդարմներ. կոխը, երկուստեք տեղացող կրակը շարունակեց մինչև երկեոյ և Բարադոտիկը դարձեալ մնաց յաղթող։ Կոխը վերսկսեց նաև ապրիլի 5-ին, ժանդարմները Ոստանից նոր օգնական ուժեր ստացան, այնպէս որ նրանց թիւը հասաւ 100-ի. չը նայած այդ բանին, ժանդարմները ոչ մի յաջողութիւն չը գտան, կոխը ընդունեց տևական բնոյթ, մէկ օրը եղաւ երկու, երկուսը երեք և այլպէս շարունակեց մինչև ապրիլի 7-ը. և մէկէն ժանդարմները յետ կանչեցին։ Նրանք հեռացան կորակուիս, նրանք գնացին իրենց քաջութիւնը թոյլերին ու անզէններին ցոյց տալու։

Եւ մինչդեռ Բարադոտիկում կոխը շարունակւում էր, Հայոց-ձորում տեղի ունեցան մեկ ծանօթ անցքերը։

Ապրիլի 3-ի գիշերը Հիրճում սպանւեց Իշխանը իր երեք ընկերներով. ապրիլի 5-ին նոյն տեղում սպանւեցին Հիրճի արգամարդիկ 50 հոգու շափ։ Ապրիլի 6—7-ին տեղի ունեցան վերին Հայոց-ձորի աւերները. Կեմի և Անպղի ջարդերը, Իշխանի գոմի կոխները։

Տեսանք թէ ինչպէս կառավարութիւնը խրատւած զեկտեմբերի զէպքերից, զօրքեր ուղարկեց մի կողմից Ապիտակ վանքի, միւս կողմից Պլթենցի վրա, և թէ ինչպէս այդ երկու գիւղերի ժողովրդի հետ միասին քաշեց նաև Աթանանի ժողովուրդը ու զեղերը աւերեցին։

Մինչդեռ Հայոց-ձորում այսպիսով կոտորածն ու աւերը մեծ չափերի էր հասել, Գեաւաշը դեռ համարիտ էր, ի հարկէ այդ հանգստութիւնը խարուսիկ էր։ Ոստանի գայմազամբ մի կողմից, Դախմանց գիւղի Հիւսէին ազան միւս կողմից զրում, յորդորում էին Գեաւաշի ազգեցիկ մարզկանց, գլխաւորապէս Պատականցի Աեդրակ էֆէնդուն, նոր-գիւղի մուխաի Մուրազին՝ հաւաքել շրջանի զէնքերը, բերել յանձնել կառավարութեանը և գաւառը փրկել կորուստից։ Միամիտ մարդիկ հաւատացին այդ մարդկանց նենգութեանը, հաւաքեցին 20-ի շափ զէնքեր և տարան յանձնեցին կառավարութեանը։ Ինքնապաշտպանութեան

կարող ուժեղ ձևաբը—Լեւոնը չը կար. մեծերը զէնքեր էին յանձնում կառավարութեանը. երիտասարդները ժողովներ էին անուժինքնազուտպանութիւնը ձեւկերպելու, համախմբելու և զիմազրութիւն ցոյց տալու կէտերը որոշելու, բայց համաձայնութեան չէին գալիս. մէկը այս էր տաջարկում, միւսը այն. ու այդպէս էլ ուժերը երկուսի բաժանելով ցրեցին, մինչդեռ կառավարութիւնը լսիկ իր պատասխանութիւնն էր տեսնում, ուժեր էր հաւարում Գեաւաշի համար:

Այս տեղ մի քանի օր. և ապրիլի 11-ին Հաջի Դարւիշը մէկէն բաւականաչափ ժանդարմներով, որ կարասուից էին եկել, ու քիւրդերով յարձակեց Փայխնի գիւղի վրա Գեաւաշի բոլոր ուժերը որ միացած կարող էին զիմազրել Հաջի Դարւիշին, երկու մասի բաժանեցին. մի մասը 40 հոգուց բաղկացած՝ զեկազարութեամբ Միհրան Չաթոեանի քաշեց Փայխնի սպրը, միւս մասը՝ զեկավարութեամբ Նոր-գիւղի Մուխսի Մուրադի և Մոխրաբերդցի Պետրոսի տանելով ժողովուրդը քաշեց Բալաքեօր լեռան կատարը. և թշնամին սրանց երկուսի հետ էլ ջոկ-ջոկ գարձ ունեցաւ:

Փայխնի շուրջ ուժեղ կռիւ սկսեց, սաշում ամբացած տղաները զիմազրեցին թշնամուն, կռիւը տեղեց ամբողջ օրը, որի ժամանակ տղաներից սպանեցին երկու երիտասարդներ. զրանք էին Նարեկ զիւղացիներ Քաջօն և Կարօ Գրիգորեանը. զօհեր տեղեց նաև թշնամին և այն էլ երկու-երեք անգամ աւելի, քան տղաները. սակայն յարտակ զիմազրութիւնը համարեց անկարելի, նոյն օր գնալով թշնամին ուժեղանում էր, և երկրորդ օր վաժմարու թիչ կար. ուստի երբ մուխը վրա հասաւ, տղաները նշան տուին և ժողովուրդը շարժեց զէպի Փեսանդաշտ, շարժեցին նաև տղաները և զիւղերը մնացին քիւրդերի ձեռքը. բաւականաչափ կանայք և երեխաներ մնացին զիւղերում:

Յաջորդ օրը, ապրիլի 12-ին, կէսօրից յետոյ Հաջի Դարւիշը գնաց Նոր-գիւղի և Մոխրաբերդի վրա. այստեղ էլ տղաները լեռան գիրքից զիմազրութիւն ցոյց տուին, բայց այդ երկար չը տեղեց. երբ մուխը վրա կռիւց, տղաները գիրքերը թողեցին և զիմեցին զէպի Փեսանդաշտ, իսկ կանայք ու երեխաներ մնացին Գեաւաշ կոչուող լեռնադաշտի գոմերի մէջ:

Թշնամին մի կողմից յարձակեց կանանց ու երեխաների

բազմութեան վրա և սկսեց վայրագութիւններ գործել, իսկ միւս կողմից խուժեց զիւրերը և սկսեց կողոպուտ ու հրդեհ. ժողովրդից սպանեցին 100 հոգու շափ: Այս վիճակին ինթարկեցին ոչ միայն Նոր-գիւղն ու Մոխրաբերդը, այլև Գանձակը, Վառնցը, Անձակը և այլ գիւղեր:

Լեոնը այդ միջոցին գտնուեմ էր Սիւտկին գիւղում: Նա նոր միայն վերադարձել էր Թաղից, ուր խորհրդակցելով Զինամարմնի հետ, գալիս էր դաւառի հիւսիսային շրջանի և Գեաւաշի ինքնապաշտպանութեան գործը ղեկավարելու: Լուր ատնելով, որ Գեաւաշում սկսել են յարձակումներն ու կռիւները, Լեոնը վերցրեց իր տղաները և շտապ ճանապարհ ընկաւ զէպի Գեաւաշ, բայց Փեսանդաշտ հասնելով պատահեց Գեաւաշի փախչող ժողովրդին, ինչպէս և կաւոյ տղաներին, ու ինքն էլ այդտեղ կանգ առաւ. այլևս օտաջ դէպք միտք չունէր, շրջանը քանդել եկել էր և թշնամին հետապնդելով հասել էր Փեսանդաշտի սահմաններին:

Լեոնը այլևս Փեսանդաշտից չը շարժեց, ամէն օր փախտականներ էին գալիս և այն էլ ոչ միայն Գեաւաշից, այլ և Հայոց-ձորից ու Նոյնիսի Թիմարի կողմերից, այնպէս որ ազրիւի վերջերում Փեսանդաշտի փախտականների թիւը հասաւ 6000 հոգու: Հարկաւոր էր Փեսանդաշտը պաշտպանել. Փեսանդաշտը պաշտպանելով ոչ միայն պաշտպանւած կը լինէր այդ ահագին բազմութիւնը, այլ և պաշտպանւած կը լինէր Թաղը, որովհետեւ կառավարութիւնը այդ կողմից պիտի օգնութեան հասնէր Թաղի գալմադամին և այդ տեղի վրայ պիտի դարձնէր իր ուշադրութիւնը, ինչպէս և եղաւ:

Լեոնը անցաւ գործի: Նախ նա տեղաւորեց ժողովուրդը Փեսանդաշտի գիւղերում, ընդամենը 112 տան ունեցող չորս փոքրիկ գիւղեր սպաստան պիտի տային 6000 փախտականներին, և պիտի կերակրէին նրանց. սա ինքնատիկնքեան մի բարդ գործ էր, որը կապաւորելու համար հարկաւոր էր մի կարող ձեռք, այդ կարող ձեռքը ինքը: Լեոնն էր իր արամադրութեան տակ եղած տղաներով:

Ապա կարգաւորեց իր ուժերը և ընտրեց զիմադրութեան կէտեր: Փեսանդաշտում հաւաքւած ուժը հանդիսանում էր 150-ի շափ հրացան և 70-ի շափ մասուզէր ատրճանակ, ի հարկէ փամ-

փուշտի պաշարը սահմանափակ էր և խիստ խնայողութիւնն էր: որ պիտի հնարաւոր դարձնէր յարասն զիմադրութիւնը:

Փեսանդաշտի ուժերը դասաւորուեցին այս կերպիւ

1. Բարազօտիկ. սա հանդիսանում էր անուջին կարևոր զիրքը, միաժամանակ Սասանից—Քաղ տանող գիծը և թշնամու յարձակման կէտը. այս զիրքի պաշտպանութեան համար յստակացւեց 80 հրացանաւոր և 40 ատրճանակաւոր, ու պաշտպանութեան զեկաւարութիւնը ստանձնեց ինքը—Լեոնը:

2. Շահբուրա բերդ. այս զիրքը, ինչպէս տեսանք, հակում էր Վանից Քաղ տանող ճանապարհի վրա և նրա պաշտպանութիւնը յանձնուած էր Քաղի կազմակերպութեան 15 ազաների՝ զեկաւարութեամբ Բազիկ Պետրոսեանի: Այդ խումբը ուղարկուեց Քաղի Զինարանն մտրձի տրամադրութեանը, իսկ նրասեկ զրեց 30 հրացանաւոր և 15 ատրճանակաւոր՝ զեկաւարութեամբ Առեկցի Մեարտպի:

3. Կարաբախ. այս զիրքին յստակացւեց 25 հրացանաւոր և 10 ատրճանակաւոր՝ զեկաւարութեամբ Նոր-գիւղիցի Մարաղի:

4. Նառ Գիւղի զիրքը. սրան յստակացւեց 15 հրացանաւոր և 5 ատրճանակաւոր՝ զեկաւարութեամբ Հասան Չաւուշի (*) և Ծըկորցի Մանուկի:

Այս վերջին երկու զիրքերը, որոնցից առաջինը քնկած էր Ղէպի արևմուտք. իսկ երկրորդը՝ Ղէպի հարաւարևմուտք զիմադրելու էին Մակսի և Կարկառի վրայով առաջացող խուժանին: Այս տեղերում լուրջ զէպքեր տեղի չունեցան շնորհիւ նրա, որ ձգուած հայ զիւղերը ներկայանում էին կողոպուտի լայն սուպարէզ և քիւրդերը երկար ժամանակ զբաղուած էին կողոպուտով:

Ինչ վերաբերում է առաջին երկու զիրքերին, այն է՝ Բարազօտիկին ու Շահբուրա բերդին, այս զիրքերի վրա արդէն յարձակումներ չատ եղան, մանաւանդ Բարազօտիկի վրա:

Շահբուրա բերդի շուրջը տեղի ունեցած յարձակումներից նշանաւոր հանդիսացաւ ապրիլի 16-ի յարձակումը: Գեաւաշի Գախմանց զիւղի Հիւսէին ազան, այն Հիւսէին ազան, որը իր

*) Աս Կարկառի կիճի զիւղացի էր՝ անունը Ատոմ. 1896 թւի կտորածին ժանկեղանութիւն ընդունեց և կաշեց Հասան, ստանձնելով ժողովարմի պաշտօն հասա շուրջութեան (25-ապիտ) ստիճանի. մի քանի ասրուց յետոյ նաքից ընդունեց Քրիստոսեանութիւնը, բայց անունը մնաց Հասան Չաւուշ:

ազգական Հաջի Եաղուբի սպանութեան պատճառով սասանիկ լըցւած էր թոյնով դէպի հայերը, 70 միլիոնների գլուխ անցած և յետեից քարշ տալով Խորպանքի քիւրդ խուժանը, Գեօրանդաշա դիւղի կողմից յարձակուեց Շահրուբա բերդի վրա: Երկու օր յամառ կռիւ տեղի ունեցաւ, Հիւսէին սպան ահագին ջանքեր թափեց դիրքը պրաւելու, բայց անկարող եղաւ և 10-ի չափ զոհեր տալով ստիպւած եղաւ ամօթանար յետ քաշուի:

Աւելի տեսական և տեղի յամառ էին յարձակումները Բարադօտիկի վրա: Ապրիլի 7-ին ընդհատուած յարձակումները վերսկսուեցին ապրիլի 14-ին: Փայտներ, Նարեկ, Նոր-գիւղ, Մոխրաբերդ և այլն գիւղերը աւերելուց յետոյ, Հաջի Գարեխչը ժանդարմներով ու ահագին խուժանով եկաւ Փեսանդաշաի վրա, բայց դէմ առաւ Բարադօտիկի կրակին: Ապրիլի 15-ին նոր ուժեր հասան և թշնամին յարձակում գործեց մեծ թափով, բայց Բարադօտիկը չընկճուեց: Ապրիլի 16-ին հասան նոր ուժեր, եկաւ նաև մէկ լեռնային թնդանօթ, թշնամու ուժը հասաւ 500 հոգու: Բարադօտիկի ժայռերը և շաղ անցած քարակոյտները դարձան մի մի ամբութիւն ընդդէմ սահմանափակ թւով կուռզներին: Կոխը հանդերձ ամբակոծութեամբ տեսց ամբողջ օրը, բայց դարձեալ ապարդիւն, կոխը ունեցաւ տղաների համար յաջող վախճան. թշնամին այդօր ունեցաւ 25-ի չափ սպանուած ու վիրաւոր:

Կոխը վերսկսուեց նաև 17-ին: Թշնամին Բարադօտիկում գրազեցնելով տղաներին, փորձեց անցնիլ նրանց թիկունքը, 100-ի չափ ժանդարմներ բարձրացան Արաօսի կատարը և այնտեղից իջան տղաների թիկունքը, բայց այդ խաղը նրանց չը յաջողուեց. տղաները մէկէն իրենց կրակը դարձրին դէպի նրանց այն ժամանակ, երբ ժանդարմների մի մասը բոլորովին մօտեցել էր տղաներին, բուն համազարկերի տակ թշնամին դիմեց փախուստի՝ կրակի տեղում թողնելով 6 դիակ: Այս վերջին այնպիսի փորձից յետոյ զօրքի մի մասը յետ կանչուեց, և թէպէտ այնուհետև ապրիլի 16—17-ի պէս ուժեղ յարձակումներ այլևս տեղի չունեցան, բայց և այնպէս այդտեղ բաւականաչափ ուժեր թողնուեցին, որոնք մինչև վերջն էլ զբազեցրին տղաներին:

Այստեղ կարևոր ենք համարում առաջ բերիլ Շատախի գայմազամի մի նամակը՝ ուղղուած Ֆրգա կոմանդան Բեռտիլ քէյին: Ահա այդ նամակը:

Ֆրգա կոմանդանտն Քեամիլ բէյին

Քաղի մէջ ապաստանող ապստամբները ամիսէ մը ի վեր գիմազբելու մէջ են: Շրջակայ գիւղերը գրաւելով մէկտեղ, Քաղի մէջ մեր անյաջողութիւնը, մեր բոլոր շարժումները ցուալի կերպով անարդիւնք թողեց: Կառավարատան առջևի դիրքը թնդանօթով միայն կարելի է քանդել: Կառավարութեան դուռը մի քանի դիրքերի կողմից, առաւօտից մինչև երեկոյ համազարկերի ենթակայ լինելու համար, գիշերով միայն կարելի է կառավարատուն մտնել ու ելնել և սա պատճառ կը դառնայ կառավարութեան վարկաբեկման: Տերեկով ոչ ոք չի համարձակի դուրս ելնել այնտեղէն. այս մասին քանիցս կուսակալին գրած է, բայց մինչև այժմ ոչ մի բան դուրս չեկաւ, և այս իսկ պատճառով այստեղ կենդրոնացող և բաւականին կարևոր ուժը մի քանի հայերի ղէմ վարանոտ գրութեան մէջ են: Կարևոր ուժ մը երկու թնդանօթով այստեղ գալու համար կուսակալը ապրիլ 25 թւականով ձեզ հրամայած է:

Վերև յիշւած լուրջ պատճառները նկատի առնելով, կը խնդրւի ձեր շարժումը արագացնել:

27 ապրիլ

Փայմազամ Համդի

Այսպիսով ահա այն ժամանակ, երբ Շատախի գայմազամը շարունակ գիմում էր Ջէւղէտին և Ֆրգա կոմանդանտին, պահանջելով օգնական ուժեր ու թնդանօթ, այդ նոյն միջոցին կառավարութեան առջջ փակւած էին Շատախի երկու ճանապարհները: Եւ կառավարութիւնը ստիպւած եղաւ թողնել այդ բանուկ ճանապարհները, ընտրել Մուսկաւէն գիւղի լեռներով Տիգրիսի Վերին ձորերը իջնող դժւարանցանելի ճանապարհը և այդտեղով ուղարկել թնդանօթներ, որոնք հասան Քաղ միմիայն մայիսի 5-ին, ինչպէս այդ կը տեսնենք իր տեղում:

Ահա Փիսանդաշտի ինքնապաշտպան խմբերը Բարադօտիկում և Շահրուրա բերդում յաջող կերպով յետ էին մղում թըշնամու յարձակումները, միանգամայն անվտանգ դարձնելով գաւառի չիւսիսային շրջանը, երբ գաւառի միւս շրջաններում թըշնամու ուժը գնալով ծաւալուած էր և դրութիւնը դառնում էր լուրջ:

Արեւելեան շրջանի գիւղերը աւերելի էին, Մոկոսի սահմանի վրա սկսել էր քրդական շարժում, նման շարժում տեղի էր ունեցել նաև հարաւային շրջանում, Թաղը նոյնպէս անհանգիստ զրուծեան մէջ էր. և այս տեղի ունէր ապրիլի 23—24-ին:

Գրանից յետոյ գրութիւնը աւելի ևս բարդացաւ, և այդ արձանագրեց Ջինւորական մարմնի օրագրութեան մէջ հետեւեալ ձևով:

Ապրիլ 24. Լուր եկաւ, որ Ջալիկանից կամուրջը կապած և խուժանը անցած է Արմշատ հայ գիւղը: Ազատ իր խմբով ճամբեցինք օգնութեան. մեր կուրի բաղվը երևի այդտեղ կը սրուչի. եթէ այդտեղ յաջող դուրս գանք, դժւար թէ սերիշ տեղ խուժանը իր գլուխը ցոյց տայ:

Այսօր առաջին անգամը լինելով, Թաղի գիրքերից մէկի մէջ տւինք մէկ գոհՄահակ Ափրիկեանը—բաջ կուող գինւոր մը՝ Պզտիկ յուսահատութիւն մը կը նշմարուի ժողովրդի մէջ, իբր արտայայտիչ մեր զրուծեան բաց թողինք հետեւեալ թուուցիկը:

Ընկերներ.

Մեր կուրի առաջին գոհը եղաւ Գիւլամիր և իր երկու ընկերներ, որոնք Սակի մէջ հերոսական կռիւէ մը յետոյ ինկան քաջաբար և նրանց կեանքը 12 ոստիկանի մահ արժեց:

25 օրւա տեական կռիւէ մը յետոյ տւինք մեր երկորդ գոհը, նրանց արիւնը սրսկւած է այլևս մեր դիրքերի ժայտերի վրա և պիտի հաշուել, որ արիւնոտ կռիւը նոր է որ կսկսի: Չը ցանկանք բնառ առանց արիւնի և առանց զոհաբերութեան յաղթական դուրս գալ. իւրաքանչիւր յաղթութիւն իր փոխարժէքը՝ իր գինը կը պահանջէ, և մեր փայփայած յաջողութեան ու ազատութեան գինը պիտի լինի մեր արիւնը. եթէ ինայնչք մեք արիւնը, սերիշներն էլ մեզ ազատութիւն պիտի խնային:

Մինք մինչև հիմա շտեմուած ու չը յուսահատուած կռիւն է որ կը մղենք, զարեօրից ի վեր տանջւող և հալածւող ժողովրդի կռիւն է մեր կռիւը: Վերջին ժամուն դեռ ապրիլ ուղող ժողովրդի կռիւն է մեր կռիւը, և ինչքան սոսկալի պէտք է լինի այս կռիւը, ինչքան կատաղի, ինչքան և յուսատու մեզ համար՝ մեզքը մերն էր, մեր սարկութեան, որովհետև դանակը մենք պեկի թանկագին գտանք, քոն մեր կսկորղը, և այսօր մեզքը

մերը պիտի լինի նորից մեր անյաջողութեան այս օրհասական կռւի մէջ, եթէ նորից խնայենք մեր արիւնը:

Ո՞ր ժողովուրդը իրա փոթորիկը չունի, և ո՞ր վարդը իր փուշը. ո՞ր կռիւր իր արիւնը չունի, և ո՞ր ազատութիւնը իր գոհարերութիւնը: Մենք կուզենք ազատել առանց արիւնի, անհնար է այդ, ոճիր պիտի գործենք, եթէ այդպէս մտածենք:

Այս օրւա կռիւր սկիզբ և վերջ պիտի գնի բոլոր ժողովուրդների կեանքին. մեր թշնամին իսկ ամենայնուսահատական կռիւն է սա, որ կը մղի. նա համոզւած է, որ իր կեանքի թելը կտրուելու վրա է, և իրանից առաջ կուզէ մերը կտրել:

Թշնամին որոշած է մեզ կոտորել, բնաջինջ անել. մենք որոշած ենք ապրել, պիտի յաջողուի մեզ այդ, թէ ոչ, մենք չը գիտենք. հաւատք ունինք միայն և գիտենք, որ մեր առաջ երկու ճանապարհ է գրւած:

Կամ այն է որ վնաս պիտի լինինք և թոյլ տանք, որ թըշնամին մեզ մեր արմատից կտրէ, կամ այն է որ պիտի լինինք անվնաս, անսասան և մեր ժողովրդի մէկ մասի արիւնով մնացած մասը փրկենք: Այլ ճանապարհ չը կայ, ընտրենք երկուսից մէկը և յուսահատ չը կուենք:

Զին. մարմին

Ապրիլ 25. Ըմբոստ կը գրէ, որ քիւրդերը Ճւկատան կամուրջը կապած են և անցած Բոլս-Թաղի կոնսկը. լաւ լուր մը չէ:

Ապրիլ 26. Ջամլան բէկի թեի վրա քիւրդերի անդադար երթեկեկութիւն տեղի կունենայ: Սօզւանից մեր պահակը կարմիր գրօշակով լուր տեց, որ Բոլս կռիւր կը շարունակուի:

Գրիշեր ժամ 8 (1). սուրհանդակ եկաւ, երկու գծի վրայ (Ճւկատան և Հաշկանց կամուրջներ) բունն կռիւ կայ: Թշնամու ուժը 400-ի կը հասնի այգտեղ: Արծիւին և Շըջիկին 20 հոգով ճամբեցինք Սօզւանց. այնտեղից կուի վայրը գնալու համար: Արմշատի կռիւր վերջացած է, գիւղը թալանւած, սակայն զոհ չեն տւած: Գրեցինք Ազատին անմիջապէս անցնի Սօզւանց:

Ապրիլ 27. Բոլսի կռիւր կը շարունակուի. քիւրդերի երթեկեկութիւնը Ջամլան բէկի թեի վրա շարունակեց մինչև երեկոյ:

Իրշեր ժամ 8 (1). սուրհանդակ եկաւ, Բոլսի մասին լուր չկայ, իբր պաշարւած է քիւրդերի կողմէն: Փայլակ կը գրէ, որ խճրերից տեղեկութիւն չունի, բայց տեսեր է, որ կէսօրից յետոյ կռիւը փոխադրւած է դէպի ձոր — ձեկատուն: Նշանակելի է 10 տարեկան պզտիկ աղջիկ Սրբիկի քաջութիւնը, որ ցերեկով Քշնամու համադարկերի տակ բարձրացաւ մինչև Սօզւանց ու լուր բերեց մեզ:

Այժմ տեսնենք Ձին. մարմնի օրողրի համառօտ յիշատակութիւնից զուրս որպիսի ուշագրաւ անցքեր տեղի ունեցան հարաւային շրջանում և առանձնապէս Բոլսի շուրջը:

Հարաւային շրջանում Տիգրիսի վրա գտնուող Չալկանի փայտէ կամուրջը, որը կռիւների սկզբում հայերը քանդեցին, Քալիլանցի, Քաւշտանցի և Եղպրնանցի ցեղերին պատկանող քիւրդերը կապելով՝ անցան գետի աջ ափը և յարձակեցին Սարկէթ հայ գիւղի վրա. տեղի ունեցան մի շարք վայրագութիւններ, աւելի քան 40 հոգի հայերից սպանեցին, ժողովուրդը փախաւ դէպի Կաղպի, և գիւղը ենթարկեց կողոպուտի. Ապա քիւրդերը առաջանալով քշեցին Արմշատի ոչխարի հօտը: Այս միջոցին դէպի Կաղպի փախաւ նաև Արմշատի ժողովուրդը: Ազատը, որը Ձինուորական մարմնի կարգադրութեամբ 50 տղաներով գնում էր օգնութեան, Կաճէթ հասնելով կանդ տաւ և իմանալով որ Սարկէթի ու Արմշատի ժողովուրդը քաշում է Կաղպի, ինքն էլ տղաներով վերագարձաւ այնտեղ՝ ժողովուրդը համախմբելու և Կաղպիի դիրքերը պաշտպանութեան տակ առնելու նպատակով:

Այդ նոյն միջոցին, այն է տպրիլի 25-ին, Մտանոսի և նրա շրջակայ գիւղերի քիւրդերը մեծ բազմութեամբ գիշերով առաջացան և Թաղից վեր Սիւակնա գետի ձեկատան կամուրջը, որը հայերը նոյնպէս քանդել էին, կապեցին և յարձակեցին Բոլսի վրա:

Արևնոյն գիշերը ձեկատան կամրջի մօտ Թաղից Սիւակին նամակ տանող երկու սուրհանդակներ — Բզեցի Մալխաս Պետրոսեանը և իր բնկեր Հոսիկը բնկան քիւրդերի ձեռքը և սպանեցին:

Քիւրդերը եկան և երեք կողմից Բոլսը պաշարեցին, Բոլսը՝

որք համարուած էր արեւմտեան շրջանի առաջնակարգ գիրքը և որի անկումով ընկնելու էր Սօղանցը ու վտանգելու էր թագը: Ահագին թւով քիւրդերի դէմ գուրս եկաւ Սէթը, ընդամենը 15—20 տղաներով և սկսեց մի անհաւասար կռիւ: Սէթը մի քանի տղաներով բարձրացաւ գիւղի վերեւում գտնուող գիրքը, իսկ միւսներին թողեց գիւղի յարմարաւոր տներէ մէջ: Կռիւը որ կատաղի բնոյթ ունէր, տեւեց մինչև կէսօր, բայց քիւրդերը գիւղը գրաւել չը կարողացան: Կռիւը նոր թափ ստացաւ կէսօրից յետոյ, քիւրդերը նոր ուժ ստանալով, առաջացան և գիւղը առան օդակի մէջ, շուտով նրանց ձեռքն անցաւ նաև գիւղի մի մասը. ահա այստեղ մի քանի տղաներ հերոսական կռիւ մղեցին և հերոսաբար էլ ընկան. զրանցից մէկն էր Արմշատցի Շահէնը, որը մի տան մէջ ամրացած տապալից մի քանի քիւրդ և ինքն էլ սպանւեց. մի այլ տան միջից կուոււմ էր Սուսկաւէնցի Տիգրանը, սա նոյնպէս սպանւեց, բայց սպանւեց երեք քիւրդ զընդակահար անհուց յետոյ: Շուտով թշնամու ձեռքն անցաւ ամբողջապէս Վերին թագը. մի քանի տղաներ, որոնց թւում նաև Գիւրգիւն ու Աբէթը կարողացան թշնամուն դիմադրելով ժողովուրդը քաշել Ներքին թագը: մինչև որ մութը կռիւց և մըթութիւնից օդաւելով ժողովուրդը քաշեց գէպի Ծիծանց գիւղը, իսկ տղաները բարձրացան ու գրաւեցին Վարխաղի գիրքերը: Այսպիսով Բոլսը ամբողջովին անցաւ թշնամու ձեռքը ու հրդեհեց:

Բոլսին օգնութեան կանչող սուրհանդակը Կաղպի հասաւ այն ժամանակ, երբ Ազատը դեռ ևս այդտեղի ինքնապաշտպանութեան գործը չէր վերջացրել: Բոլսի շրջանում զրութիւնը լուրջ էր, Ազատն ուշանալ չէր կարող, ուստի նա թողեց Կաղպին և շտապեց գէպի Բոլս:

Ազատի հեռանալուց յետոյ Կաղպիում յուսահատութիւն տիրեց, կուռղ ուժերը առանց ղեկավարի մնալով չը կարողացան ժողովուրդը սրահել իր տեղում: Արմշատի ժողովուրդը նորից գարձաւ իր տեղը. քիւրդերը այս միջոցին զրաւած էին Սարկէթը թալանելով, նրանք շարունակ Տիգրիսի միւս ափն էին կրում գիւղի հարստութիւնը: Արմշատի մի քանի ղինւած տղաներ իջան Սարկէթ, պատահեցին կողոպտիչ քիւրդերի, նրանցից երկուսին սպանեցին, միւսներին թւով

10--12 հոգի փախցրին, բայց սրանք մասնակի բնայթ սնէին. այս շրջանը Տեաց առանց զեկավարի, Բօլսը դէպի իրեն զբրանեց ուժերը և այգտեղ էր որ կատարեցին խոշոր դէպքեր:

Ազատը իր խմբով հասաւ Սէթին այն ժամանակ, երբ Բոլսի ժողովուրդը քաշել էր Ծիծանց, գիւղը անցել էր թշնամու ձեռքը ու հրդեհել և ազաները հրեք զո՛ւ տալով բարձրացել էին Վարիսագ: Միաժամանակ Բոլսին օգնութեան հասան Գեաւաշի ինքնապաշտպանութեան ուժերից Միհրան Չաթօեանը, որը այդ միջոցին գտնուում էր Ծիծանցում, Քաղից Յովսէփ Գարունեանը 20 ազաներով և Սօզեանց գիւղից Սահակ Չօլօեանը իր ազաներով: Այսպիսով այստեղ հաւաքեցին շրջանի գլխաւոր ուժերը Բոլսը և Սօզեանցը փրկելու համար: Բացակայ էր միմիայն Չաթօն, նա իր խմբով պահպանում էր Հաշկանց գիւղի կամուրջը:

Բոլսը գտնուում է Քաղից դէպի հիւսիս արևմուտք 1 և կէս ժամ հեռաւորութեան վրա, և ընկած է ձորի մէջ: Բոլսից դէպի արևմուտք բարձրանում է Վարիսագը—մի խոշոր բարձունք, որը պայտածե թևերով հարաւային ուղղութեամբ գալիս միանում է Քիւրէկ լեռան կատարին՝ առաջացնելով մի քանի ձորակներ, իսկ հիւսիսային ուղղութեամբ առաջանում է դէպի Սիւսկնա ձորը, ձեկատան կամըջից մի փոքր վեր: Այս երկու թևերի մէջ ընկած է նաև մի փոքրիկ շղթայ, դա Ծուղի շղթան է:

Պայտածե լեռնաշղթայի հիւսիսային թևը բռնեցին Ազատն ու Միհրանը 60 ազաներով՝ Միհրանը առաջացաւ դէպի ձեկատան կամուրջը, իսկ Ազատը պահեց գլխաւոր բարձունքը:

Հարաւային թևը բռնեցին Յովսէփ Գարունեանը և Սէթը՝ Յովսէփը առաջացաւ դէպի Սօզեանց տանող ճանապարհը, իսկ Սէթը պահեց Ծուղի վերին բարձունքները:

Թշնամին աւելի քան 400 հոգով բռնել էր Ծուղ գիւղը ի՞ր շրջակայ դիրքերով:

Այս տեղի սնէր ապրիլի 26-ի պիշերը: Ապրիլի 27-ին կախւթ վերսկսեց մի նոր թափով, թշնամին սիրտ առած առաջին օրէս յաջողութիւնից, ոչ մի ջանք չը խնայեց զբաւելու գլխաւոր դիրքերը և կախւթ ընդունեց կատաղի բնայթ: Չը նայած թշնամու գերազանց ուժերին, ազաները նրանց նեղեցին և քիւրզերը մի քանի անգամ փորձեցին յետ փախչիլ, սակայն նրանք հանդի-

պիցին կամուրջը պահպանող Միհրանի տղաներին և մի քանի զոհ տալով, նորից վերագործան իրենց նախկին գիրքերը: Թըշնամու կողմից յուսահատ կռիւը տեւց ամբողջ օրը:

Ազգբիլի 7-ը բուրբեց տղաների համար միանգամայն յաջող պայմանների մէջ, բայց վերջնական յաղթութիւնը տղաները կորցրին շնորհիւ մի խոշոր սխալի: Բուրբովին վստահ, որ քիւրդները յուսահատ ու ընկճւած առաջ գալու ոչ մի փորձ չը պիտի անեն մինչև յաջորդ առաւօտ, Յովսէփ Գարունեանի տղաները յոգնած ու սառած իջան Սօզւանց գիշերը հանգստանալու համար, միանգամայն մոռանալով, որ պաշարւած քիւրդները կարող են յուսահատ ճիգեր գործ դնել և որևէ կողմից շղթան պատռել:

Յովսէփը մի քանի տղաների հետ մնաց գիրքերում մինչև գիշերւա ժամի 9-ը, և նկատելով որ տղաները քաշուկ են, ինքը նոյնպէս իջաւ Սօզւանց: Շատախի լեռների սառնամանիկները իրենց գործը տեսան, թշնամուց անյաղթելի տղաները տեղի տըւին սառնամանիկներին ու քաշեցին:

Թշնամին, որը չորս կողմից պաշարւած էր, գիշերը յուսահատ ճիգեր թափեց, հետախուզումներ կատարեց և նկատելով որ իր ձախ թևի հակառակ կողմի գիրքերը դադարկ են, իր ուժերի մի մասը ուղարկեց դէպի աջ լեռնաշղթայի հիւսիսային թևը պահող տղաներին զբաղեցնելու համար, իսկ մնացեալ ահագին ուժով յարձակեց և դեռ լոյսը չը բացւած դատարկ գիրքերը գրաւեց: Չարարաստիկ լուրը Սօզւանց հասաւ այն ժամանակ, երբ Յովսէփը իր տղաներով դեռ քնած էր:

Յովսէփը դուրս թաւ քնաթաթախ խելագարի պէս, տղաներից մի մասը ուղարկեց դէպի աջ, միւս մասը դէպի ձախ, իսկ ինքը կենդրոն կազմելով առաջացաւ դէպի երեկուս գիրքերը: Բայց մինչև այդ, քիւրդները արդէն բաւականին առաջացել էին ու նոյնիսկ դէպի Սօզւանց ընկած մի քանի գիրքերը գրաւել: Եւ Յովսէփը միայնակ առաջանալով ընկաւ կրակի տակ, իրեն ձրգեց մի քարի յետև և սկսեց կուել: Նրա այստեղի կռիւը հանդիսացաւ մի հերոսական գործ, կուեց մինչև վերջին փամփուշտը և ապա սպանեց, ու իր մահով նա քաւեց այն սխալը, որ գործել էր իր խմբով:

Յովսէփի ընկած տեղից ոչ շատ հեռու, դէպի աջ, սպանուեց նաև տղաներից մէկը—քաջ եփրեմ Մարկոսեանը. սրանից յետոյ



Մարոն (Մարտիրոս)

Հասոյի սուրհանդակ պղծիկը

12 տարեկան

Քչնամին մեծ ուժով առաջացաւ դէպի Սօզանց, ձախ թիւի տը-
րաները քաշեցին Տղասօսար, աջ թիւի տղաները իջան դէպի
Քաղ. ժողովուրդը լիտխաւ Միծանց, Սօզանցի պայմանակամ
ըրօշակը երեք անգամ դուրսը իջեցրեց, այդ դիտում էր Քաղի
Զինւորական մարմինը եկեղեցու տանիքից, որտեղից պարզ ե-
րևում էր գիւղը, սպառ զըրօշակը վայր ընկաւ և դնս կէսօր չեղած
Սօզանցը Գրաւեց Քչնամին:

Սէթը իր տղաներով այդ միջոցին իր դիւրքերն էր պանսած,
իսկ Ազանն ու Միծրանը զրաղւած կամրջի աննպատակ պահ-
պանութեամբ չը դիտէին ինչէ կատարուած ամենակարևոր կէ-
տում — անսխալութեան Սօզանցի շուրջը:

Այժմ ահանհոջ, ինչեք կատարւեցին այգօր Քաղի մէջ:

Առաւօտեան ժամի 7-ն էր, Քաղում անհամբեր սպասում էին խաղաղութիւն աւետող սպիտակ գրօշակին և ժամերը խիստ նրկարում էին. վերջապէս բարձրացաւ գրօշակը, բայց աւագ բարձրացողը սպիտակ գրօշակը չէր, այլ կարմիր և նա մէկ անգամ գլուխը իջեցրեց. այդ նշան էր, որ թշնամին մօտենում է և գրութիւնը անյուսարի է: Քաղի մէջ շփոթ առաջացաւ: Հարկաւոր էր սուրհանդակ հանել և մանրամասն տեղեկութիւններ ստանալ: Քաղից Սօզւանց մէկ ժամի վերելք է, սակայն ցերեկով անհնարին է այդ տեղով բարձրանալ, թշնամու կրակը իջ թում էր այդ վերելքին, բայց սուրհանդակ անհրաժեշտ էր:

Շուտով կանչեց ծանր բողէնների փոքրիկ հերոսուհին: Շատախի լեռների այժեհամը, Գուքօյի Աւետարի 12 տարեկան ազջիկը—Սրբօն, Նիհար ղէճքով ու կազմւածքով և լսիկ բնագօրութեամբ: Նա առաւ նամակը ու սլացաւ: Քաղի մէջ սովորական հրացանաձգութիւնը շարունակուած էր, գիրքերից ոչ ու մախ զնգակներ էին սուլում, Շատախի փոքրիկ հերոսուհին աներկիւզ, նայնիսկ անտարբեր այս բոլորին կտրում էր ու կըտրում գժւարին վերելքը, քարից քար ու թմբից թումբ ցատկուած ինչպէս այժեհամը և նամակը տեղ հասցնելով իր միտքիս կատարում:

Փոքրիկ սուրհանդակը դեռ չէր վերագարձել: Ջրնւորական մարմինը իր գիրքից շղագրգրու կերպով գիտում էր Սօզւանցի գրօշակին: Քաղը անհանգիստ բողէններ էր ապրում: Կայրը խիստ ճնշւած էին, իսկ տաճիկները մեծ շարժողութեան մէջ էին: Բողէնները երկարում էին, ժամերը տարի թւում, բայց լուր չը կար, վատ մտքերը սկսում էին պաշարել: և ահա գրօշակը երեք անգամ շարժեց, նա երեք անգամ գլուխը իջեցրեց և մէկէն վայր ընկաւ: Սօզւանցը այլևս չը կար, Քաղը պաշարուած էր շորս կողմից:

Յովսէփ Գարունհանի ազանների աջ թևը թւով ութ հոգի դիմեց զէպի Քաղ, այլ կողմով հանապարհ չուներ: յետեից ձեռնում էր քիւրդերի կրակը, առջևից Ջրողացի Քաղի առեկիկները կրակը: զնգակները թափւում էին կարկառի պէս և զնգակները ատրափի տակ նրանք իջնում էին ցած: Այս ժխօր վիճակում վայրէջքի կրծքին ազաններին միացաւ Շատախի այժեհամը, սուր-

հանգսկ Սրբոն, նա վերադառնում էր նամակի պատասխանը
 փոքրին: Քաղաքացի գեո հետո էր, բայց զնայով գնդակներին
 տարափը սաստկանում էր, բոլոր դիրքերից կրակը ուղղւած էր
 այդ կողմը: Վայրէջքի տակ, թագամասին չը հասած, այդինների
 ծայրում գտնուում է Ասուածածնի վանքը, այդ կողմն էլ դիմե-
 ցին տղաները կրակի տակ: Վաթին մտեցած թշնամու կրակը
 աւելի սաստկացաւ, այստեղ զարկեց տղաներից մէկը — Զարար
 Յունակեանը, վիրաւորեցին Յաշատուր Մխոեանը, Քումաս Իսա-
 ջանեանը, Բիսմարկ Լիզիզեանը և հաղպեցի Մկրտն, և արնա-
 քամ վրաւոր ու սողով միտսին հազիւ իրենց նեակեցին վանքի
 դուռից: Զրադացի թագի տաճիկները գետն անցնելով, եկան
 պաշարեցին վանքը և այստեղ ներսից ու գրսից սկսեց մի յա-
 մաւս կռիւ, սրբ տեկց մի քանի մամ, բայց տաճիկները վանքը
 մտնել չը կարողացան, սուտի վանքի գոան սառջ խոտ գարսե-
 լով այրեցին ու հեռացան: Սուտի հեռ միտսին բռնկեց զուռիցը,
 փոխին ու բոցը հրեղէն սխմի պէս ցցեց օդի մէջ, այդ ժամա-
 նակ միայն Ապտան ու Միհրանը իրենց հետաւոր դիրքերից նը-
 կառեցին հրգեղը ու նոր միայն իմացան Սօգւանցի տեղուքը:

Քաղը իրարանցման մէջ էր, ժողովուրդը համախմբուում էր
 կենդարոնական ծառում, Զին, մարմինը թէև սանաւարաւ թիւնը
 չէր կորցրել, բայց մտառանջ բողկներ էր տպում, մանաւանդ
 որ զլիււար ուժերը Յապել էին դուրսը, մինչդեռ թշնամին աւել
 էր Քաղը օղակի մէջ, ճնշող ու յուսահատ գիշեր էր, խիտ խաւար
 գիշեր, և ահա այս միջոցին եկեղեցու բակը մաու: Եովսէփի ար-
 դաներից մէկը, Քովմաս Իսաջանեանը ձեռքից վիրաւոր, ու
 յարանեց, որ Ասուածածնի վանքը այլուում է և սր նրա մէջ
 գտնուում են իր ընկերները:

Մարդ պիտի ուզ սրկել պնտիկեան, բայց ով այդ յուսա-
 հատ բողկին, այդ խաւար ու վառեղաւոր գիշերին գէպի վանքը
 կը գնայ:

Ընկաւ սուաջ Քաղի կրթւած երիտասարդներից մէկը —
 Յունակ Մկրտչեանը, հեռեկց նրան Պոզոս Իանիէլեանը և ուզա
 մի քանի այլ աղաներ և շարժեցին գէպի կարիքի տեղը: Յա-
 ւարի ու մահւան շունչ գգաց Սահակը, երբ ներս մաու ծխով
 լցւած վանքը: Յատակի վրա փաւած էին աղաները անզգայ
 գրութեան մէջ, ծանր խոցն էր, սր խանգարում էր Թիբոց

լուսի՞նը, խեղդող ծախք մահւան թևերն էր տարածել նրանց վրա, մի ժամ ևս և նրանցից ոչ մէկն էլ կենդանի չէր մնալ: Այլուեղ էր նաև սուրհանգակ Սրբոն անգղայ վիճակի մէջ: Վանքի գաւիթը դեռ վառում էր և դռնից ներս թափանցող բացերի ձառագայթների ազատ լոյսը երևան էր հանում խառցող զինակները: Օգնութեան եկողների ձայնից ասաջինք աչքերը բացից սուրհանգակ փորրիկ Սրբոն, ապա ուշքի բերեց տղաներից մէկը — Արամ Կանիէլեանը, որը ընդունելով նրանք աստճիկների տեղ, ուժասպառ ձեռքերով բարձրացրեց ձեռքի ճրագածն ու կրակից, զնդակը ցցեց վանքի յաաստաղի մէջ: Անդրոզ գոյ ու վիրաւոր շնչակիցին իր բարանչիւրը մէկին ու արտաստճոր բարաւանը անհետացաւ խառքի մէջ: Այսպիսով փրկեցին մի քանի հետնքեր, նրանցից մէկը միայն չը փրկուէր, որս Աստճատար Միննիեանն էր, որը մեռաւ ծանր վէրքից:

Այստեղ, Միննիեանը, Սեթը և Բազիկը իրենց յողմեղքով փորձեցին յարձակել Սողանցի վրա, գրաւել զիւրը և յիջնել թագաբայց անկարելի եղաւ այդ, ուստի նրանք անժամանակ բաշխեին Սիւակին:

Սողանցի անկուտը յաստատութիւն ձգեց նաև Կանէթի և զՍեթշառ գիւղերի ժողովուրդի մէջ: Այս երկու տեղերի ժողովուրդը բաշխեց զէպի Կաղպի, բայց մինչև այդ, Կաղպիի ժողովուրդի մի մաս բաշխել էր զէպի Մոկու: Այս տեսնելով Արմշատի ժողովուրդը նորից զարձաւ իր տեղը, զհրադատելով իր զիւրը մէջ ապրել կամ մեռնել: Վերագարձաւ իր տեղը նաև Կանէթի ժողովուրդը, բայց սա Էանց կոչւող զովերի մօտ կենթարկեց բխոր դերի յարձակման և բաւականաչափ զոհեր տուց, մինչև որ վրա հասաւ Կոսովանքցի Արբոն մի երկու տղաներով և քիւրդերին զշեց:

Թէ Սողանցը ընկնելուց յետոյ ինչիւր կատարեցին թագում, այդ իմանալու համար պիմենք Ջին մարմնի որպպին: Ահա նա.

Ապրիլ 28. Կիսորէն ասաջ Սողանից մեր զրօշակը գլխի վայր ծուեց և ամէն ինչ վերջացաւ. քիւրդերը լցեցին Սողանց մեր Լիւմն ընկաւ, մենք պաշարւած ենք այլևս ամէն կողմից:

Որոշեցինք անմիջապէս ժողովուրդը կենդրոնացնել 3 կէտե-
քի վրա՝ եկեղեցին, Դիկանց տունը և վարի դպրոցը, ու այդպէս
էլ եղաւ: Եկատելի է ժողովրդի պաղարիւնութիւնը, մէկ ու կէս
ժամուայ մէջ ամբողջ ժողովուրդը այս 3 տեղը լիցւեց: Քիւրդերը
Սողանից չիջան թագ, անսրոշ դրութեան մէջ մնացինք: մինչև
երեկոյ:

Ապրիլ 30: անորոշութիւնը շարունակուած է, քիւրդերը
մեզ օղակի մէջ են տաւած, դրսի խմբերի մասին ոչ մի անդե-
կութիւն չունինք, Սիւտկիս հետ մեր յարաբերութիւնը կարւած
է բոլորովին: Որոշեցինք սուրճանդակ մը ձամբել, այս բանը
յանձն տանց Ասմար անունով կին մը:

Այսպիսով թագը միանգամայն պաշարւած էր չորս կողմից.
ժողովուրդը համախմբել էր երեք կէտերում, տղաները թողել
էին Աղզնային այրը, որ այնքան նեղուած էր թշնամուն. թողնել
էին նաև Տէր-Մարգարեանի ու միւս դիրքերը, և թշնամին
առաջացել էր մինչև Վերին թագի ծայրը: Իսկ թէ ինչ էր կա-
տարւում դարսը, այդ մասին ոչինչ չգիտէր Ձին. մարմինը:

— Մէկ սուրճանդակ դէպի Սիւտկիս, — ան այն պահանջը,
որ դրեց Ձին. մարմինը և որից կախւած էր թագի բազուր:

Սողանցը չկար, յետները բռնւած էին քիւրդերով, գլխա-
ւոր ճանապարհը որ ձգւում էր Սիւտկիսի Խորխորատ ձորի մի-
ջով նոյնպէս բռնւած էր քիւրդերով, ով յանձն կաններ ուղից
մահւան գերկը նետել, ոչ ոք: Բայց պաշարւած ժողովուրդը
պահանջում էր, պահանջում մէկ զոճ ևս, մէկ հերոս և այդպիսի
հերոս տեղ թագը. դա մի կին էր, մի թոյլ արարած, լայն երե-
սով, սև ու անճամպիտ աչքերով և առաջին շարք ատամները
չորցրած 50 տարեկանի մօտ Ասմարը — դանակ շինող Մարտի
կինը՝ չորս զաւակների տեր:

Այս կինը ճանապարհ պիտի բնկնէր ուշ երեկոյան, այն
էլ Սիւտկիսի ձորի միջով: Սիւտկիսի ձորը նոյնիսկ ցերեկը
զարնուրելի է, ուր մնաց գիշերը: Այդ ձորը շարունակ որոտում
է Սիւտկիսի գետի շտաշուումով, շաշկանց վիթխարի ջրվէժի գա-
հալէժ դղրուումով, իսկ գիշերները խոշոր ծաները և ցից-ցից ծայ-
տերը մի մի ուրևականներ են, որ բուսնում են ձեր առաջ ա-
մեն քայլափոխում:

Անա այս ևորի միջով գիշերւած ժամին, տարբերքի որոտնորի և թշնամոս. սարսափի տակ պիտի շարժւէր Ասմարը, Շատախի այգ վերջին, բայց ոչ հաաիկ հերոսուհին, և շարժւեց:

Միրելի Ազատ.

Չորս կողմից պաշարւած ենք: Քս պարտականութիւնը պիտի լինի՝ ա) թագի մեր պարսոյ գիրքերը լիցնելու համար 10—15 դրնւոր անմիջապէս համբել. բ) հաւաքել բոլոր գինւորնեքը և Միւտկնա ու թագի աւրած գիծը ապահովել ու Սողանցը վերագրուելի. գ) գրոի խմբերի գրութիւնը հազորդել մեզ և մեր դրութեան ժառն հազորդել Փետանդաշտ ու քաղաք:

Ձերմ բարեկներով՝ Ձինւորտական մարմին

Անա այս նամակը թագցրեց հագուստի ձալքերի մէջ Ասմարը, մի փոքր հաւաքեց փէշերը, երեսը զարձրեց զէպի Ատաւածածնի վանքը ու իտաշակնքեց և ժամի 8-ին մէն-մենակ սրչացու իտարի մէջ:

— Գիշերւած ժամի 2 (7)-ին սուրհանդակ կինը վերադարձաւ, — արձանագրւած է Ձինւորական մարմնի օրագրումս վեց ժամում Ասմարը հասել էր Միւտկին՝ կարելով 15 վերստի շափ սարածութիւն և անփորձ թերեց նամակի պատասխանը, անմահացնելով մի անդամ ևս Շատախցի կնոջ տիպը: Ասմարի շուտ վերադառնալը և բերած պատասխանը հունդիւտացու մի ոգևորիչ երևոյթ:

Այնուհետև թագի գրութիւնը օրագրութեան մէջ այսպէս է արձանագրւած:

Մայիս 1. Յ կեզրոնտական կէտերի վրա գիրքային աշխատանքները գեւ չեն վերջացած, չաւ է սր թշնամին մեզ միջոց կուտայ ամբանալու:

Ժամը 1 (6). թշնամին մինչև հիմա շահտւած համազարկ աւեց Տէր-Սարգարեանի գիրքի վրա, երևի նկատել է, որ մենք պարտած ենք այդ գիրքը և կը փորձեն այնտեղ մտնել:

Ժամը 1 (6) գիշեր. նորից անկ համազարկ մը տեղաց մեզ գիրքերու վրա թշնամին, ինչ նպատակ ունի, արգետք իրազան շարձազուս մը պիտի զօրձէ, թէ՛ մեզ կզբազեցնէ ի՞նչ ուժերը զէս ու զէն փոխադրելու համար:

Մայիս 2. Գերզեքը ժամ 3 (8)-ին պարաւզներէ կազմից յարձակում գործեցին Գարունեանի ասն վրա և յաջողեցան Դաւթի սրճարանը մտնել, մեր բոլոր կուսիները այդ գծի վրա կեդրոնացրին նրացանաձգութիւնը, որ մինչև երեկոյ տեսց, վերջապէս մեր տղաների արագաշարժութեան շնորհիւ թշնամին 7 զո՛ւ տալէ յետոյ նահանջեց:

Մայիս 3. Երթեկութեան պատճառաւ վերաւոր կանանց և երեխաների թիւը օրէ օր կաւելանայ, դրանց հոգատարութիւնը կը գժւարանայ դեղի ու բժշկի պակասութիւնից:

Ժամ 11 (4) գիշեր. Սրահկոյ սուրճարանի եկաւ, Ազատ 40 հոգով ուղեցել է շրթան ճեղքի և Թաղ մանկ, բայց չը յաջողելով էա է դարձեր:

Մայիս 4. Իրկու գծի վրա թէ պարաւզներէց և թէ Տախտակ կաժուրջից ջերզեքը փորձեցին յարձակում գործել, բայց 6 զո՛ւ ապով նետացան:

Գիշեր ժամ 10 (5). Բազիկ 10 հոգով Թաղ մտաւ: Ազատ դարբ զինուորներ կը պատրաստէ՝ Սալանց վերադրուելու համար:

Առաջ բերած օրագրութեան մէջ սուշարաւ է այն երեսիցը, որ պաշարուած վիճակում էլ Թաղը շարունակոււմ էր զիմադրութիւնը, իսկ դրսի տղաները պաշարման շրթան պատուելով, օգնութեան էին գալիս Թաղին:

Ստեփան սեւի սուշարաւ այն է, որ թշնամին այս վիճակում էլ ընդհանուր յարձակման չէր դիմում, վճռական քայլ չէր ածում, և այս բաւական չէ, նրա շարքերում տեղի սւնէր կազմաւորումն ու նա օգնական ուժ էր պահանջում կենդանից:

Ահա այս են ապացուցում այն երեք գրութիւնները, որ այդ օրերին փոխանակեցին դայժագամի ու Ջէլզաբ և դայժագամի ու զիրքապաների մէջ: Ահա նրանք:

Կուսակալութեանը

1. Այսօր Մոկսի գծով եկող ջօկօտի նրամանատարը կը տեղեկացնէ, թէ Մոկսի միւզիք Մուրթուլա բէկը^(*) հայոց զի-

^{*} Ան հոնարում է եզել հայերէն գաւազան գնա ևս 1890 թ.ի կուսակալութեան օրէջ:

մութի վրա իրենց քնակարանի և ինչքի անձեռնմխելութիւնը
 քննուեա՞ծ ու հրացաններին ձեռք չը տալ հրամայած է: Թուր-
 թուլա բէկի այս քմահաճոյքը ա՛նա թէ ինչ վառ հեռեանքներ
 պիտի ունենայ մեր գաւառի մէջ: Փետանդաշա և Սիւսկին հո-
 վիտների մէջ գանուղ հայկական գիւղերից մինչև Բարվարի
 սահմանների մօտ եղող Արմշառ, Կաղպի, Կաճէթ ու շրջակայքի
 բոլոր հայկազօն գիւղեր, որոնք աղբիւր են եղած վիլայէթի
 թշուառութեան, Սսկսին սահմանակից լինելուն պատճառով մեր
 շրջանի մէջ գործ դրած հովապառակների հեռեանքով, ապստամբ-
 անիք օրին մէկ Մոկս պիտի աղաստանեն և մեր ճնշողական
 չարժամանքը բնայն բռն նշանակութեամբ անպոտոզ պիտի մը-
 նանս Անգեղանք մեր շրջանի Կաճէթ գիւղից նմանօրինակ դի-
 մու՛մ մը եղաւ, բայց կարեւորութիւն չը տալի:

2. Թագմանիւթի պակասութիւնից շատ կը նեղուինք. մաւ-
 զէրի ռազմանիւթ կրքէք չէ մնացած, այնպէս որ Թաղի կրօն-
 անիքի մէջ մարթիւնից և կաթաղիից գամ վաճառուշտ չենք
 գործածեր: Զիւրկերը, մասնաւորաբար Պաշտանցիները եղած
 կրաններով վաճառուշտ սպասելու պատճառով մաւզէրի փոճ-
 փուշտ կը գործածեն: Թագմանիւթի պակասութիւնից մի քանի
 հայկական գիւղերի վրա պէտք եղած յարձակումը կուշանայ:
 Ինչ էլ որ լինի 20 սնտուկ մաւզէր և 10 սնտուկ ռազմանիւթի
 առարու՛մը կը խնդրուի:

3. Չորս օր առաջ Թագին ախոզ Բոյս, Այգի և Սօզեանց
 հայկական գիւղերը դրաւած ենք. առով Թագին աղաստմքները
 ամբողջապէս պաշարման առած և նրանց մէջքը կոտորող այս
 յարձակութիւնը, թալանի և եսխց, ողբերգական պատկերի փոխ-
 ւած է: Թալանի շնորհիւ ապրանք ձեռք ձգող ամեն քիւրզ իր
 զիրք թողնելով դէս ու դէն վախշելու մէջ է. աւարի բաժա-
 նումն էլ լուրջ խուճուճիւնների տեղիք կուտայ: Բնականաբար
 այս աներեսութիւններին կը գիմանանք: Սակայն այս տեղեկու-
 թիւններով նպատակ չունինք մեր սիրեցեալ էֆէնդիին անհան-
 գիստ քնելու, այլ եթէ երբէք կուպակալութիւնը վիճակի է, կա-
 նանաւոր ուժի մը առարձան համար, զիմու՛մ կատարելու պէտ-
 քը կը յիշեցնեն:

4. Զինուորների տւած պարէնը ամբողջապէս սղաւուած է,
 եզանակի պատճառով առուները յորդեր են, այսպիսով Թաւը՛

տանցիներէ մէջ եղած ազահանքերից՝ մէկ ամիս վերջ միայն կարելի պիտի լինի օգտուել: Մինչև որ Թազին չը տիրանանք և շարժումներէ մէջ ազատ չը լինինք, պաշարի անաբուժը չը դադարեցնէք: Արդէն մէկ քանի օր է, որ լուսավառութեան համար պատերազմական տուրքի տեղ հաւաքած իւրերից կօզար լինք: հետևաբար մի քիչ էլ մտի անաբուժը կը խնդրուի:

5. Մեր բարոյական կարգը բոլորովին տեղն է: Չեր վերջին տեղեկագրած վանեցիների փախուստը մեկ մօտ ոչ մի կերպով չի ազդի: Խնդիրը ձեր հրահանգի համաձայն աշխրեթներին յայտնեցինք: Մեր հաստատակամութիւնը տեղն է, կառավարութեան պատիւն ու փոքրը պիտի պաշտպանենք:

2 մայիս

Գայմազամ Համզի

Գայմազամին

Կառավարութեան փառքն ու պատիւը պաշտպանելու համար իմ 24 զինուորներով 35 օրից ի վեր կառավարատան դիրքը պահելու մէջ եմ: Չեր հրամանի համաձայն 10 հոգի էլ չեթաշութեան ճամբած էի, սակայն Սօզանց հաւաքուող բազմաթիւ տաւար և ոչխարները իրենց մէջ բաժանած և մեր մարդկանց ոչինչ չեն տւած. խնդրեմ այս մասին կարգադրութիւն անէք:

2 մայիս

Կառավարատան դիրքաօրհան Ապին

Գայմազամին

Ձինուորների թիւը 38 է, եղած հրացանները 2 մազկեր, 9 մարթինի, 9 իւնանի, 2 կափաղլի, միւսները շէշանա են: Սըրանց ամէն մէկի հետ հազիւ 10 փամփուշտ է ֆնացեր: Անհանգիստ լինելուս պատճառաւ ինքս չեմ կարող գալ, խնդրեմ անմիջապէս փամփուշտ ճամբեցէք: Դիրք շինելու ատեն քար ինկաւ մէջքիս վրա, այժմ հիւանդ եմ:

Ապին

Մայիսի 5-ը Շատաթի կռիւների ընթացքում նշանաւոր օր հանդիսացաւ. Թազը, չը նայած պաշարման օգակին, շարունակուեմ էր գիմադրութիւնը վերջին երեք գիրքերից: Պաշարման օգակից զուրս ինքնապաշտպան խմբերը հռահողուն աշխատանքի մէջ էին, նրանք պատրաստուեմ էին Սօզանցը յետ գրաւելու: Ա-

զատը 130 հազով եկել էր Մուզ, Միհրանը գնացել էր Կազգի և վերջնելով այդտեղ գանուզ ուժերը, անցել էր Փեսանդաշտ այն տեղից էլ ուժեր վերջնելու: Բոլորը պատրաստուած էին մի ուժեղ և վճռական յարձակման: Պատրաստութիւնների այս միջոցին լուր հասաւ, որ ռուսական բանակը մտանցել է, տաճիկները սխալել են և հայ կամաւորների մի ժաւը Վան է մտել: Այս լուրը չը տեսնուած ոգևորութիւն առաջ բերեց տղաների մէջ և նոր զարկ տւեց պատրաստութիւններին:

Մինչդեռ թաղը պաշարուած լինելով, այդ մասին ոչ մի լուր չունէր: Եւ այդ բաւական չէ, թշնամին նոր օգնական ուժ էր ստացել, ուժի հետ միասին նաև երկու լեռնային թնդանօթ:

Ճաշից յետոյ, ժամի 3-ին թնդանօթներից մէկը գրեց Բանիհ կոչւող բլուրի վրա, և բերանը Գարունհանի դիրքին ուղղելով սկսեց ուժակոծութիւնը: Սակայն թաղում յուսահատութեան փոխարէն ոգևորութիւն էր տիրում: Բազիկի մուտքը 10 տղաներով մեծ սպաւորութիւն էր գործել և թաղը գիմադրութեան նոր եռանդ էր երևան բերել:

Տարօրինակ երևոյթներ, զրսից տղաները պատրաստուած էին Սողանցը վերագրաւել, տաճիկները ճիգ էին թափում թաղն ու Կաղպին տւերել, իսկ պաշարուած հայերը թնդանօթի ռումբերի տակ խրախոյսի կոչ էին արձակում: Եւ այս վիճակը արձանագրում էր Ձին. մարմնի օրագրութեան և տաճիկ պաշտօնեաների մէջ փոխանակուած գրութիւնների մէջ: Ահա դրանք՝

Մայիս 5, ժամ 3 (8). Մինչև հիմա խաղաղ էր, երբ յանկարծ այդ խաղաղութեան մէջ որոտաց թնդանօթի առաջին ռումբը. թշնամին գաղտնի ճանապարհով երկու թնդանօթ բերեց. այսօր 30 ռումբ արձակեց, անձի քննա չը կայ, բայց մեր գիրքերը կը բանդէ, սակայն գիշերը կը վերանորոգենք: Սուրհանդակ ճամբեցինք Սիւսիին, որ Սողանից վերագրաւումը արագացնեն:

Մայիս 6. Ռմբակոծութիւնը շարունակեց, այսօր 45 ռումբ արձակեց: Տղաների մէջ տարօրինակ ոգևորութիւն կայ: Հեռեհալ թռուցիկը բաց թողինք:

Ընկերներ.

Բոլոր դիրքերից մեր ստացած տեղեկութիւնները մեզ

կուրտիացնեն, զսասհ հնք ձեր յարատեութեան վրա և այդ
զսաստութիւնը մեզ մեծ յոյս կը ներշնչէ:

Թնդանօթը մինչև այժմ անձի Քասս չէ տւած, տունք
թող քանդէ, ինչքան որ կուզէ, գիշերուա մէջ կարող ենք նորից
վերաշինել: Յուսահատուելու կարիք չը կայ երբէք, մենք էլ ձեզ
պէս այն հուսալքն ունինք, որ թշնամին իր վերջին ճիգն է որ
կը թափէ: Թշնամին ինչ կուզէ, թող անէ, մտանալու չենք, որ
ամենն օր մեր պատմական կուսի էջերը կը զարդարենք:

Աշխատենք ուրի՛ն մեր սերունդին փառաւոր պատմութիւն
մը թողնել:

Զին. մարմին

Մայիս 7. Ռմրակոծութիւնը շարունակեց մինչև ժամ 7
(12) և լոց, այսօր 25 ումբ արձակեց: Անձի կորուստ չու-
նինք: Գիւրդերի մէջ փախուստի նշաններ կերևան: Երեկոյեան
երկու սուրհանդակ էլ ճամբեցինք Սիւտկին և գրեցինք, որ
վաղ ցերիկ Սօզւանից վրա գործողութիւն կատարեն:

Գիշեր ժամ 10 (3)-ին լուր առինք, որ կամաւորները մտել
են քաղաք:

Լսենք նաև թշնամուն. ահա:

Կուսակալութեան

1. Յիսնապետ Աէլալէդզին էֆ. հրամանատարութեան տակ
այսօր երկու թնդանօթ եկաւ, որոնցից մէկը չի աշխատի. նրա
չգործելու պատճառի և միւս խնդիրների մասին Աէլալ էֆէնդին
բացատրութիւն տւեց:

2. Մեր էֆէնդիի նման գլխաւոր պետի մը հրամանի տակ
բոլորս ամենայն անձնւիրութեամբ և պաղարիւնութեամբ մեր
շրջանին պատկանող հայրենասիրական պարտականութիւնների
մէջ անթերի պիտի մնանք:

3. Թնդանօթ շատ ուշ եկաւ, բայց և այնպէս մէկ-երկու
ժամաւ եղած ռմրակոծութեան շնորհիւ, տպատմքների կարեւոր
դիրքերից մէկ-երկուքը քանդուց: Այս գիշեր սպասելիք անոնց
փախուստը արգիլելու համար Թաղի շրջակայք և ճամբաներ բըռ-
նւած են:

4. Մեր ռազմանիւթը ամբողջապէս սպառուած է, 100-ը մազէրի և 200-ը մարթինի փամփուշտ հալիւ ֆնացած է, կապիտի վրա ձրագրած յարձակումը իրագործելու համար, ինչպէս որ առաջ գրած եմ, 20 սնտուկ մազէրի և 10 սնտուկ մարթինի փամփուշտի առաքումը կը խնդրուի:

5. Երբեմն-երբեմն ընդհանուր դրութեան մասին տեղեկութիւն:

6. Ձէլալէզդին է.Ֆ. ռափօրդի մէջ յիշուած քափսօլների աւրագ առաքում:

5 մայիս

Գոյմագամ Համդի

Գոյմագամին

Հիմա հաւան մեր ոմրակօծելիք նպատակակէտը պիտի լինի՝ վաճառու ճանապարհի վրա գտնուող երկյարկանի (Գարուն-հանի) դիրքը: Հետեակ ուժեր ճիշտ ժամին յարձակման պատրաստութիւններ պէտք է տեսնեն, որպէսզի շարժումների մէջ ներգաշնակութիւն լինի, առնձը գրաւելէ յետոյ դրոշակով նշան պէտք է տալ: Այս պարագային երբ հայերի ուշադրութիւնը այս կողմը գտնուայ, մեր երկրորդ նպատակակէտը պիտի լինի կամուրջի գիմացի դիրքը: Ինչպէս որ առաջ գրած եմ, հետեանքնեմէ միշտ զգոյշ պիտի լինին, երբ դիրքի պարպումը հաստատուի, յարձակումով գրաւելու համար պէտք եղած մարդկանց հրահանգները կը խնդրուի:

6 մայիս

Թնդանօթաձիք Ձէլալէզդին

Ահա այսպիսի պատրաստութիւնների մէջ բացեց մայիսի 8-ի առաւօտը. զա Շատախի հայութեան երկունքի օրն էր: Թըշնամին այդ օր լուռ էր և ներսը խաղաղ, իսկ գուրսը, լիսան յետեւում պատրաստուում էր հայ մարտիկների յարձակումը Սօզւանցի վրա: Ահազանգը հնչեց, երկար սպասումը պսակեց համազարկերի խուլ որոտներով, Սօզւանցի բարձունքից լաւից փախչողական զինուոր Առեղցի Մեսքուպի տաճկական փողի ձայնը: Թաղից արձագանքեց եկեղեցու զանգակը, համազարկերը շարունակեցին: Բարձունքում ուռաներ, Թաղում ցնծութեան ձայներ: Իսկ երրորդ կողմից համազարկեր և Թնդանօթի որոտներ:

— Ճշմարիտ պատերազմի տպաւորութիւն կը թողնէ վրաս ալսուրա մեր կուրը, սկսածա կը յիշեմ Բասենի ճակատամարտը և ուստիսկան թնդանօթները,— գրում է սպայ Տիգրանը:

— Սօզւանից կողմէն խուլ հրացանաձգութիւն մը սկսեց, ձայները գնալով կը մօտենան, մերոնք են... Մեր սուած հրահանգի համաձայն, Ազատի խումբը փողը զարկեց Սօզւանց. թաղից պատասխանեց եկեղեցու զանգակը, էլ կասկած չկայ, մեր Լիէժը վերազրուեց... Ոգևորութիւնը ծայր առաւ,— արձանագրում է Ջինւորական մարմնի օրագիրը:

Ու այսպիսով Սօզւանցը գրուեց, բայց գրուեց մի յամառ կուրից յետոյ, որի ժամանակ քիւրդիքը փախան 30-ի չափ գոհեր տալով:

Եւ մինչդեռ թաղը Սօզւանցի գրուումը աւետում էր ոգևորեած ցոյցերով և զանգակների զօղանջով, Շատախի գայմագամի ձեռքը տւին հետեհալ նամակը:

— Կը լսենք, թէ Վալի բէյ Փեսանդաշտի կողմից Սիւտըկիւնի վրա գալու է, այս մասին ձեզ պաշտօնական տեղեկագիր բերող ոստիկան, իբր թէ, հասած է: Եթէ ձիշտ է, խնդրեմ, աւետիքը հաղորդէք:

Ալանցիները միւղիք Շէֆքէթ

Աւելի ծաղրելի կացութիւն և աւելի կծու հեզնանք, քան այն, որ Սօզւանցի անկման հետ միւղիք Շէֆքէթը հասցնում էր գայմագամ Համդիին, այն Համդիին, որը դժգոհ Մոկսի միւղիք Մուրթուլա բէկի խաղաղասիրական վարմունքից, ուզում էր իր անգորութիւնը նրա հակակառավարչական գործնէութիւնով պատճառարանել, լինել չէր կարող:

Եւ Շատախի գայմագամ Համդին Ալանցիների միւղիք Շէֆքէթին մայիսի 10-ին աւետիս տուց, հաւաքեց իր թնդանօթներն ու զօրքերը ու բռնեց փախուստի ճանապարհը, այն փախուստի, որով գնացել էր նրա էֆէնդին, պոռոտախօս Աէւդէտը:

Այս նոյն օրը կամաւորների վաշտը Դրօի առաջնորդութեամբ հասաւ Սիւտիին, իսկ 12-ին մեծ ցոյցերով իջաւ թաղահաղարանոց վաշտը աշխոյժ ու առողջ, ցնծութիւնների աղաղակ-

ներով ընդունւեց մի քանի տասնեակ մաշւած ու տանջւած կըստող շատախցիները կողմից, շատախցիներ, որոնք իրենց անպաճոյճ արտաքինով հպարտ լեռների պարծանքն էին կազմում:

Այդ նոյն միջոցին Շատախը թշնամուց մաքրում էր, լեռների լանջերով շտապ իրենց սուբուններն ու քօչերն էին քարշտալիս քիւրդերը:

Տաճիկների փախուստից և Քաղի յաղթանակից յետոյ Շատախը հետեւալ պատկերն էր ներկայացնում:

Արևելեան շրջանի հայ գիւղախումբը աւերւած էր և ժողովուրդը փախիլ էր միւս շրջանները:

Արևմտեան շրջանի գիւղերը նոյնպէս աւերել էին և ժողովուրդը այս ու այն կողմն էր քաշւել:

Աւերել էին գիւղերի մեծ մասը նաև հարաւային շրջանում: Ժողովուրդը համախմբել էր Կաղպիի ձորում՝ Կաճէթ և Արմշատ գիւղերում, մի մասն էլ անցել էր Մոկս, Քաղ և Սիւտիկն:

Սակայն ժողովրդի մի մեծ քաղմութիւն գտնւում էր Փեսանդաշտում: Այդտեղ, ինչպէս տեսանք, կային չորս հայկական գիւղեր՝ ընդամէնը 112 տուն ժողովրդով: Ահա այստեղ եկաւ սպաստանեց անազին ժողովուրդ Գեաւաշից, Հայոց-ձորից, Թիմարից և Ներքին Շատախից, որը տեղական ժողովրդի հետ միասին կազմեց մօտաւորապէս 7000 հոգի:

Այդ 7000 հոգին սպառեց Փեսանդաշտի ամբողջ պաշարը՝ Նախ սպառեց հացը, ապա կենդանիները. ոչինչ չը մնաց, ոչ տաւար, ոչ ոչխար, ոչ հաւ, ոչ աքաղաղ: Ազ որ բոլորովին ըսպառւեց:

Պաշարը սպառւելու վրա էր, իսկ կռիւների վերջը չէր նախատեսնւում, ուստի կազմակերպւեցին պաշար հայթայթող արշաւանքներ: Մայիսի օրերում հինգ արշաւանք գործւեց Յիլի, Պատականց, Տըշոզ, Մուշիկ գիւղերի վրա: Այդ հինգ անդամին 100 փթի չափ հաց բերւեց: Արշաւանքներից մէկը, որ ուղղւած էր Յիլիի վրա նշանաւոր դարձաւ նրանով, որ այդ գիւղում եղող 20-ի չափ զօրքերը մի փոքրիկ գիմադրութիւնից յետոյ, թողեցին գիւղը արշաւողների ձեռքը ու փախան:

Պաշարը վերջում այնպէս սպառուեց, որ երբ տաճիկները
փախան, Փետանդաշտում համարեա ուտելու ոչինչ չէր մնացել
և 7000 ժողովուրդ դուրս եկաւ պաշարման վիճակից ազադակող
ստամոքսով. սակայն հոգ չէր, նա ազատութիւն էր գտել, նա
ազատ օդ էր շնչում:

ՎԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

(Մայիսի 3-ին, 27 օրւա յամառ կռիւներէց յետոյ, տաճիկները քաշւեցին Վանից, Աէւզէտը իր զօրքերով ու թնդանօթներով բռնեց փախուստի ճանապարհը և քաղաքն անցաւ զէնքին փարած հայերի ձեռքը:)

Մայիսի 5-ի երեկոյեան ուսս բանակի առաջապահ հայ կամաւորների մի խումբ, Յէչօյի ղեկավարութեամբ, մտաւ Քաղաք, իսկ մայիսի 6-ի առաւօտեան տեղի ունեցաւ ուսսական բանակի մուտքը՝ գլխաւորութեամբ զեներալ Նիկօլանի:

Բանակի մուտքը և հայ ժողովրդի զիմաւորումը ցնծապի՛ն աղաղակներէ, ուրախ բացականչութիւններէ և բռնո՛ն ողջոյններէ մի ցոյց էր, որպիսին Վանը չէր տեսել երբէք: Զօրքի մուտքը քաղաքի սահմանից ներս ողջունեցին միջնաբերդից որոտացող տաճկական թնդանօթները, որոնցով երէկ տաճիկները հայ թագերն էին ոմբակոծում. երկու սեռի մանուկները իրենց երգերով շուք էին տալիս ահագին բազմութեան խոնոււմին. աջ ու ձախ նետող ծաղկեայ փուռջիւրը զարդարում էին Սաչփողանի հրապարակը, որտեղից բանակն էր անցնում և իրենց շքախմբերով դիմաւորելու էին զուրս եկել հայ հոգևորականութիւնն ու Վանը պաշտպանող հերոսները:

Ռուս զօրքին Սաչփողանի հրապարակի վրա ողջոյնի խօսք արտասանեց Արամը. իր ընկերներից նրան էլ վիճակւած կենդանի մնալ ու Վանի հերոսների ներկայացուցիչը հանդիսանալ Վանը, որը հկաւ հայ ժողովրդի նորագոյն պատմութեան ամենագեղեցիկ էջը կազմելու:

Թէ Վանի գրաւումը և հայ ժողովրդի ուսս բանակին ցոյց

ուած խանդավառ ցոյցերը ինչ ազաւորութիւն գործեցին ուս-
չինւորական կադմի վրա, այդ երեւում է այն հեռագրից, որ գե-
ներալ Նիկօլանը ուղղեց զօրաբանակի հրամանատարին:

Ահա այդ հեռագիրը:

10 մայիսի 1915 թ. Վան

— Շնորհիւ զինւած հայ ժողովրդի և ղեկավարութեամբ
ուսահապատակ Արամի, Վանը մէկ ամիս պաշտպանեց և երեք
օր առաջ միայն հայերը գերակշռեցին ու տաճիկները սկսեցին
նահանջել: Քաղաքը այրւած է, ազատ են մնացել մի քանի հա-
յարնակ թաղեր և ուսական հիւպատոսարանը: Քաղաքին մօտե-
նալիս միջնաբերդի վրա տաճիկներից զբաւած վեց թնդանօթ-
ներից տեղի ունեցաւ ողջոյնի թնդանօթաձուլութիւն (САЛЮТЪ)
և հայերը յանձնեցին ինձ բերդի բանակիները: Ժողովուրդը և
Վանի պաշտպանները եպիսկոպոսի ու հոգևորականութեան ա-
ռաջնորդութեամբ կազմակերպեցին հանդիսաւոր ցոյցեր, բանա-
կին ղիմաւորեցին «Տէր պահեա ղկայարն» երգելով: Ժողովուր-
դը և քաղաքի պաշտպանները շղթայ կազմած աղաղակում էին
կեցցէներ և նետում էին ծաղիկներ:

Ահա այսպէս էր պատկերը Վանի, այն Վանի, որի գոնբրի
առաջ տաճկական թնդանօթների փոխարէն ուսւ բանակին ղի-
մաւորում էր հայ ժողովուրդը յաղթական փառքով, ողջոյնի ցոյ-
ցերով:

Եւ բնական է, որ Վանը պաշտպանող հայ ժողովուրդը
բանակի հրամանատարի կողմից ճանաչւէր տոկուն, կարող, շի-
նարար ժողովուրդ, որին կարելի կը լինէր յանձնել երկրի ժա-
մանակաւոր կառավարութեան գործը: Ու այդպէս էլ եղաւ:

Մայիսի 7-ին գեներալ Նիկօլանը Արամին նշանակեց ժա-
մանակաւոր նահանգապետ, յանձնելով նրան Վանի և Վանի
շրջակայ գաւառների կառավարութիւնը, ու յանձնարարելով
կազմել հայերից կառավարական մարմին ու պահակներ:

Ահա այն երեք զրութեան պատճէները, որով Արամը նշա-
նակւում էր Վանի ժամանակաւոր կառավարիչ:

I

Կօրպուսի շտապից գեներալ Նիկօլակին

Հեռագիր № 5452

Համաձայն ձեր նշանակումի, հաստատում եմ Արամին Վանի ժամանակաւոր նահանգապետ, յանձնելով նրան Վանի շրջապայքի կառավարութիւնը: Նա կազմելու է վարչութիւն միմիայն հայերից և յենւելու է հայ երկրապահներէ վրա: Հիւպատոս նշանակելու առթիւ հեռագրեցի բանակի հրամանատարին և Քաւրիզի հիւպատոսին, որ ուղարկի ժամանակաւոր ներկայացուցիչ:

Գեներալ Օգանովսկիյ

II

Վան, գեներալ Նիկօլակին

Հեռագիր № 1709

Հրամանատարը հաստատեց Արամի նշանակումը Վանի համար, միայն այն պայմանով, որ նա լիովին ենթարկւի զինւորական իշխանութեանը, այն է բերդապահ զօրքի գլխաւորին, որը նշանակւելու է, և որ Արամի միջոցով արւին զինւորական իշխանութեան բոլոր կարգազրութիւնները:

Գեներալ Օգանովսկիյ

III

Հրաման Բայազէտի Զօրաբանակին

№ 24 1915 թ. 18 մայիսի

Կովկասի զօրաբանակի հրամանատարը Արամին նշանակեց Վանի ժամանակաւոր նահանգապետ, այն պայմանով, որ նա ենթարկւի զինւորական իշխանութեանը, այսինքն բերդապահ զօրքի գլխաւորին, և որ զինւորական իշխանութեան բոլոր կարգազրութիւնները արւին Արամի միջոցով:

Զօրաբանքի կառավարիչ գեներալ-մայօր Նիկօլակ

Այս էր բնական ընթացքը այն բոլորի, ինչ որ տեղի ունեցաւ Վանի մէջ մէկ ամսւա ընթացքում: Յաղթական կռիւն յաջորդում էր կառավարելու և շինարար աշխատանքի շրջանը:

Հեշտ էր ասել, — գնա կառավարի, — բայց հեշտ չէր նրա իրազործումը:

Դարերի ստրկութիւնը շալակած, վարից վեր նայած մի ժողովուրդ ժամանակաւոր կառավարութիւն պիտի հիմնէր, մարմիններ կազմէր, կառավարող ուժեր առաջ քաշէր և աւերած երկիրը ու յոշուած ժողովուրդը խնամէր, և այն էլ դեռևս վրատացող քիւրդ ցեղերի ու նրանց հետապնդող զօրքերի ներկայութեամբ:

Այո, հեշտ չէր իրագործել այդ բոլորը մի ժողովրդի, որը պետական կեանք չէր ապրել, որը իր բաղդը տնօրինելու հնարաւորութիւնից զրկւած էր եղել դարերով:

Եւ այս տեղ է, որ հայ ժողովուրդը հրապարակ բերեց իր բնածին ընդունակութիւնները: Ընդհանր է, նա պետական կեանք չէր ունեցել, իր բաղդը տնօրինելու հնարաւորութիւնից զրկւած էր եղել, բայց և այնպէս ունենալով սովորելու, առաջ գնալու և կուլտուրական ժողովուրդների հետ շփուելու ձգտում, ունեցել էր իր ներքին կեանքը, լինէր զա կրօնական, դպրոցական, ազգային-երեսփոխանական կեանք, որի շնորհիւ նա դաստիարակւել էր և լուսաւոր աշխարհից շատ ու շատ բան վերցրել ու իւրացրել:

Ահա այս կարող յատկութիւնների շնորհիւ Վանի մի բուն ժողովուրդ՝ նրա երիտասարդութիւնը գեներալ Նիկոլասի ապրիլի 7-ի գրութիւնն ստանալով անցաւ գործի, ձեռնարկեց հիմնել համապատասխան մարմիններ:

Ժողովրդական ֆունկցիաներ կատարող մարմիններ մենք տեսանք դեռ ևս 27 օրւա կռիւների ընթացքում: Դրանք էին՝ Զին. մարմինը, Ռազմամթերքի, Նպաստից և Մատակարար յանձնաժողովները, Կարմիր խաչը, Քաղաքապետական ու Առողջապահական մարմինները, Ոստիկանական կազմը, Դատական մարմինը: Այս մարմինների գործնականութիւնը պայմանաւորւած էր կռիւների տեսողութեան հետ և նրանց գործնականութիւնը, բնականաբար, կռիւների հետ էլ դադարեց: Այժմ հարկաւոր էր կառավարական մի ամբողջ կազմ իր մարմիններով, խաղաղ ու շի-

նարար աշխատանք սկսելու համար, և կազմեց այդ կառավարութիւնը, կազմեց ընդօրինակութեամբ կառավարական այն ձևի, որ գոյութիւն ունէր տաճիկների տիրապետութեան օրով: Մինչև լաւ ձևերի անցնելը պէտք էր առժամանակ եղած ձևով առաջնորդել, այդ էր գործնականը, դրան էր վարժուած ժողովուրդը:

Սաչ-փողանի շարունակութեան վրա, գէպի վեր, Փոքր-Քեանտրչի կոչւող մասում գտնուում է Ֆրանսիական Դոմինիկեան քոյրերի որբանոց-դպրոցը, սա երկու յարկանի մի ընդարձակ շէնք էր, իր ընդարձակ պատշգամբով ու յարժարութիւններով շինւած 1910 թւին: Ռուս-տաճիկական պատերազմից յետոյ տաճիկ կառավարութիւնը այս շէնքը դրաւեց, իսկ Վանի կուրնի ժամանակ անցաւ հայերի ձեռքը:

Ահա այս շէնքի մէջ զետեղեց հայկական կառավարութիւնը Պատշգամբների վրա քաջւոյ դոճների ճակատներին փակցուեցին ցուցանակներ հետևեալ մակագրութիւններով «Շրջանային վարչութիւն», «Տնտեսական մարմին», «Գաւառային վարչութիւն», «Քաղաքապետարան» և այլն և այլն և այլն:

Այդ ցուցանակները ներկայացնում էին քառակուսի կարմիր կտուներ՝ վրաները սպիտակ զլխատառերով գրւած: Ծօնը կարմիր էր, գրւածքը սպիտակ: Հայ ժողովուրդը անհաշիւ դօհեր էր աւել, արեան լճեր գոյացրել ու անբացատրելի մղումով նրա առաջին կառավարութեան ցուցանակները հրապարակ եկան կարմիր գոյնով: Այդ գոյնը դարձել էր հայ ժողովրդի գոյութեան սիմբոլը և այդ սիմբոլով առաջին անգամ դուրս եկաւ նա աշխարհի առաջ:

Ժամանակաւոր հայկական կառավարութեան հիմքը դրեց, նշանակեցին պաշտօնեաներ, քաջւեցին հիմնարկութիւնները և այս մասին յայտարարեց մի կոչով, որը իր սօժով, իր տոնով կը մնայ իրրև պատմական մի փոստաթուղթ:

Ահա այդ կոչը:

Հայ ժողովրդին

Քաղաքացիներ.

Ռուսական յաղթական բանակի առաջխաղացումը նոր գա-

քաղաքի և իրաւակարգ կը բանայ մեր քաղաքի ու գաւառների իրաւագուրկ ժողովրդի համար: Դարերու ստրկութեան և քաղաքական ճնշումներու վախճանն է, որ մենք կապրինք այս օրերուն, հայ ժողովրդի շինարար և ստեղծագործող ողբի ծնունդն է, որ մենք կը տօնենք այժմ:

Ռուս զօրքերու հրամանատարը, գեներալ Նիկօլաե գնահատելով Վասպուրականի հայ ժողովրդի հերոսական ջանքերը՝ թուրք կառավարութիւնը անզօր դարձնելու իր ազգասպան քաղաքականութեան մէջ և հաւանելով հայ ժողովրդի ազգային կուրտուրական ձգտումները, բարեհաճեցաւ 7 մայիս 1915, № 16 մասնաւոր հրամանագրով ինձ նշանակել քաղաքի և շրջանի կառավարիչ, և կազմակերպել նոր գործը իր բոլոր ճիւղերով:

Այսօր արդէն կազմակերպւեցան Ոստիկանական, Գաղթականական, Քաղաքապետական և այլ վարչութիւններ:

Ասով կը յայտարարեմ ամբողջ ժողովուրդին, որ նոր կառավարութիւնը կազմակերպւած ըլլալով, անհրաժեշտ է բոլոր գործերու համար դիմել նոր կառավարութեան յանձնախումբերուն, քաղաքի և շրջակայքի մէջ բնականօրէն վիճակ ստեղծելու համար:

Ներկայ պատմական պատասխանատու օրերուն մէջ հայ ժողովուրդը միայն մէկ նշանարան պիտի ունենայ— համախմբել ամբողջ եռանդով կառավարութեան շուրջը, վերակազմակերպելու համար կեանքը քաղաքի ու շրջանի մէջ, արժանի լինելու քառորդ դարէ աւելի մզած պայքարի մէջ բնկած հերոսներու յոյսերուն և յիշատակին, ու միշտ բարձր պահելու համար հայ ազգի կուրտուրական, պաշտօնի պիտակցութիւնը Փոքր-Ասիոյ այս ծայրապաւտին մէջ:

Ռուս գեներալը մեր այս յոյսերու լիակատար գիտակցութեամբ էր, որ հայ ժողովրդի և իմ հանդէպ ցոյց տաւ այդ մեծ վստահութիւնը:

Քաղաքացիներ, ձեզ կը մնայ մեր այդ յաւակնութեանց և յոյսերուն ընդառաջ գնացող յաղթական բանակի և գեներալի վստահութիւնը բացարձակապէս արդարացնել և աւելի լաւագոյնին արժանի և պատրաստ գտնելի:

Այս կոչի տակ դրւած էր մի հատիկ անուն—«Արամ», բայց նա անհատի կոչ չէր, այլ մի ժողովրդի. դա մի հաւաքական կոչ էր, որի մէջ խօսում էր հայ ժողովուրդը իր հետ, որի մէջ տասնեակ տարիներ գոյութեան ու մահի կոիւր մողոյ պայքարող ժողովուրդը կոչ էր ուղղում իր բոլոր տարրերին՝ գալ համախմբել ընդհանուր գործի շուրջը և իրականացնել երէկաւ երազանքները:

Ու բացւեցին հիմնարկութիւնները, տեղ գրաւեցին նրանց մէջ պաշտօնեանները, սկսեց դիւանական կեանքին յատուկ դրբագրային աշխատանք գուտ հայկական լեզուով, պատերը զարգարւեցին քարաէզներով, ցուցանակներով, գրութիւնների գարսերով: Կառավարական շէնքի դրսի պատերը նախշեցին զանազան բովանդակութիւն կրող ազդերով ու ծանուցումներով: Խընդրատու ու բողոքաւոր հասարակութիւնը խոնկեց կառավարութեան շէնքի դուրան ու ներսը և սկսեց եռուն կեանքը:

Ահա վանի հայ իրականութեան մէջ տեղի ունեցած այս ազդը արձանագրում ենք, տալով նրան պատմական արժէք:

Հայկական կառավարութեան շէնքը բակի կողմից ունէր հետեւեալ տեսքը. պատշգամբի վրա բացւող մի շարք սենեակները փողոցից սկսած նախ ձգւում էին արևելեան ուղղութեամբ, ապա անկիւն կազմելով թեքւում էին դէպի հարաւ և բաւականին առաջանալով նորից թեքւում էին դէպի արևելք բակի խորքը, կազմելով բեկուն մի շարք: Շէնքը, ինչպէս տեսանք, երկու յարկանի էր, տակի յարկը միացած էր վերի յարկի հետ երկու փայտեա լայն սանդուխտներով:

Վերի յարկում գետեղւած էին շարքով հետեւեալ հիմնարկութիւնները.

1. Նահանգային վարչութիւն
2. Նահանգապետի դիւանատուն
3. Դաւառային վարչութիւն
4. Տնտեսական մարմին
5. Դատարան
6. Ընդհանուր դատախազութիւն
7. Հաշտարար դատարան
8. Բանդային վարչութիւն

Տակի յարկում զետեղւած էին

1. Քաղաքապետարանը
2. Քաղաքապետի զիւանատունը
3. Ոստիկանական տեսչութիւնը
4. Ոստիկանապետի զիւանատունը
5. Ոստիկանների կացարանը
6. Բանդը

Բացի այս, քաղաքի մասերում գոյութիւն ունէին ոստիկանական բաժանմունքներ իրենց ոստիկաններով:

Հայկական կառավարութեան գործող մարմինները աւելի շատ էին, քան առջ քերած ցանկը: Կառավարութեան շէնքը բաւականաչափ ընդարձակ չէր, որ կարելի լինէր բոլոր մարմիններին զատ-զատ դանլիճներ յատկացնել. կային մարմիններ, որ դեռ իրականութիւն չէին գտել. գործը նոր էր, աշխատանքի սկիզբը և հայկական կառավարութիւնը իր բոլոր մարմիններով գեռ չէր ցուցադրւած ժողովրդի առաջ: Չը նայած զրան, այն, ինչ որ արւել էր մի քանի շաբաթների ընթացքում, այդ էլ ահագին գործ էր:

Հայկական կառավարութիւնը իր ամբողջ կազմով հետեւեալն էր.

1. Նահանգային խորհուրդ

Սա հայկական կառավարութեան գլխաւոր մարմինն էր, որը քննում ու հաստատում էր նահանգի էլ և մտից նախահաշիւը, պատասխանատուութեան էր կանչում պաշտօնեաներին, ինչպէս և նշանակում էր նրանց իրենց պաշտօնների մէջ, կամ արձակում պաշտօններից. կարգադրում էր նահանգի հողային, կրթական, ոստիկանական և սահմանների ապահովութեան հարցերը, ինչպէս և հարկերի վերաբերեալ խնդիրները: Այս մարմինը հանդիսանում էր նահանգի, այսպէս ասած, օրէնսդիր և միաժամանակ գլխաւոր կարգադրիչ մարմինը, որը տնօրինում էր նահանգի ընդհանուր խնդիրները:

Նահանգային խորհրդի անդամներն էին.

Արամ Մանուկեան — Նահանգապետ

Կարապետ Այճեան — Ընդհանուր քննիչ

Միրական Տիգրանեան — Փոխ-նահանգապետ
 Աղարէկ Համբարեան — Դատարանի նախագահ
 Պետրոս Սոյեան — Քաղաքապետ
 Միքայէլ Մինասեան — Կրթական տեսուչ
 Պարոյր Լեոնեան — Նահանգապետի օգնական
 Հրանդ Գալիկեան — Ընդհանուր դատախազ
 Սաչատուր Զինորեան — Երկրագործական տեսուչ
 Գէորգ Ծիտէչեան — Տնտեսական մարմնի նախագահ
 Դաւիթ Փափաղեան — Ոստիկանապետ
 Աւետիս Թէրզիրաշեան
 Կոստանդին Համբարձումեան
 Սարգիս Արարատեան

2. Նահանգային վարչութիւն

Սա հանդիսանում էր նահանգի զլխաւոր գործադիր մարմինը:

Սրա կազմը հետեւեալն էր.

Արամ Մանուկեան — Նահանգապետ
 Միրական Տիգրանեան — Փոխ նահանգապետ
 Պարոյր Լեոնեան — Նահանգապետի օգնական
 Արտակ Դարբինեան — Դիւանապետ
 Կարապետ Աճէմեան — Հաշուակալ
 Տիգրան Թէրլէմէզեան — Գանձապահ
 Յովհաննէս Մխիթարեան — Քարտուղար
 Եւրսէս Պատեան
 Արփիար Սաֆրատեան
 Մաղաք Շալջեան
 Վաղարշակ Կզարթմեան
 Երկոզայոս Հայրապետեան
 Գարբրէլ Շահինեան

Գործաւարներ

3. Տնտեսական մարմին

Սա հանդիսանում էր նահանգի ամբողջ տնտեսական մասը վարող, ինչպէս և տասանորդի տուրքը անուրդի դնող ու այլ եկամտային խնդիրները կարգադրող ու գանձել տւող զլխաւոր մարմինը:

Այս մարմնի կազմը հետևեալն էր:

- Գէորգ ձիտէչեան — Նախագահ
- Արմենակ Սարգսեան — Վերաքննիչ
- Յարութիւն Շալջեան — Գանձնապահ
- Յակոբ Տէր-Յակոբեան — Հաշուակալ
- Գալուստ Թորգոմեան — Ատենապետ
- Կարապետ Զաքարեան — Քարտուղար
- Վարդան Դարբինեան — Գործավար
- Կարապետ ձիտէչեան — Գործակատար

4. Քաղաքապետական վարչութիւն:

Այս մարմինը ժողովրդապէս կատարում էր այն ֆունկցիաները, ինչ որ մուսաստանում քաղաքային խորհուրդներն իրենց վարչութիւններով:

Այս մարմնի կազմը հետևեալն էր.

- Պետրոս Մոզեան — Քաղաքապետ
 - Արմենակ Վուվունիկեան
 - Վահրամ Տ. Պողոսեան
 - Մկրտիչ Հիւսեան
 - Վահան Մարութեան
- } Անդամներ
- Լեոն Բուլղարացի — Երկրաչափ
 - Լեոն Գրիգորեան — Առողջապահական քննիչ
 - Ղարիբջան Դեղյիրեան — Գանձապահ
 - Գալուստ Բարաջանեան — Ճարտարապետ
 - Տիգրան Յովհաննիսեան — Քարտուղար

5. Կրթական Տեսչութիւն

Այս մարմինը վարում էր նահանգի կրթական գործը: Մարմնի կազմը հետևեալն էր.

- Միքայէլ Մինասեան — Կրթական տեսուչ
 - Եղիազար Ռշտունի
 - Մարտիրոս Նալբանդեան
 - Հրաչիա Տէր-Յովհաննիսեան — Քարտուղար
- } Անդամներ

6. Երկրագործական Մարմին

Սա գորգացնելու էր երկրագործութիւնը, հայթայթելու էր

երկրագործական նորագոյն գործիքներ և կազմակերպելու էր փոխառութեան գործը երկրագործ դասի մէջ.

Այս մարմնի կազմը հետեւեալն էր.

Սաչիկ Զենորեան — Տեսուչ, աւարտած Բրուսայի երկրագործական վարժարանի:

Արշաւիր Աւետազայեան — Տեսչի օգնական, շերամապահ:

7. Առողջապահական Մարմին

Սա հսկում էր նահանգի առողջապահական պայմաններին, ինչպէս և քաղաքի մաքրութեան վրա:

Այս մարմնի կազմը հետեւեալն էր.

ԲԺ. Արտաշէս Բարալեան — Նախագահ

Մամբրէ Մկրեան

Յակոբ Եագօեան

} Աանդամներ

Սաչիկ Գալստեան — Վերաբոյժ

8. Առևտրական մարմին

Սա կարգաւորելու ու զարդացնելու էր վաճառականութիւնը նահանգի մէջ, զարկ էր տալու արդիւնաբերական ձեռնարկութիւններին, ինչպէս և լուծելու էր դանազան խնդիրներ, որ կարող էին ծագել վաճառական դասի մէջ:

Այս մարմնի կազմը հետեւեալն էր.

Համազասպ Տէր-Պօղոսեան — Նախագահ

Աւետիս Երամեան

Յովհ. Շահբաղլեան

Մկրտիչ Հիւսեան

Յովհ. Փիրումեան

} Անդամներ

9. Ոստիկանական Տեսչութիւն

Սա հսկում էր յատկապէս քաղաքի վրա:

Ոստիկանական տեսչութեան կազմը հետեւեալն էր.

Դաւիթ Փափազեան — Ոստիկանապետ

Ղևոնդ Խանջեան — Ոստիկանապետի օգնական

Պետրոս Գրիգորեան — Օգնական սուսական բաժնի

Հրանդ Կարինեան — Քարտուղար

Յովսէփ Քարտաշեան — Քարտուղարի օգնական

Ոստիկանական մարմինը ունէր քաղաքում հինգ շրջանային քաժանմունքներ, ուր պաշտօնավարում էին.

- 5 Շրջանապետներ
- 5 Շրջանապետների օգնականներ
- 5 Քարտուղարներ
- 60 Հետևակ ոստիկաններ
- 12 Հեծեալ »

Յիշեալ շրջանապետներն էին.

1. Գրիգոր Ճոնեան — Կենդրոնական թաղում
2. Արմենակ Դեղձունեան — Նորաշէնի թաղում
3. Արմենակ Տէր-Թովմասեան — Մեծ Քեանարչիում
4. Մկրտիչ Գարասէֆէրեան — Արարքում
5. Ռուբէն Առեղցեան — Քաղաքում

Ոստիկանական կազմի մէջ հաշուում էին նաև,

- 1 Բանդապետ
- 1 Օգնական
- 1 Քարտուղար
- 2 Դռնապան

10 Դատարանական Կազմ

Ա. Հաշտարար Դատարան

- Ռուբէն Շատուրեան — Դատաւոր
- Ենօք Պուրանեան — Քարտուղար
- Միհրատ Բրուտեան — Գործավար

Բ. Հարցաքննիչ դատաւորութիւն

- Պօղոս Զիթչեան — հարցաքննիչ դատաւոր

Գ. Շրջանային Դատարան

- Աղաբէկ Համբարեան — Նախագահ
 - Եղիշէ Քաջունի — Դատարանի անդամ
 - Արսէն Հացազործեան — Դիւանապետ
 - Խաչատուր Գէորգեան — Քարտուղար
 - Մարգար Ազնաւուրեան
 - Բարուսակ Դարբինեան
- } Գործավարներ

Գ. Ընդհանուր Գատախազութիւն

Հրանդ Գալիկեան — Ընդհանուր գատախազ
Մարկոս Պալտօշեան — Քարտուղար

Ե. Գործադիր Պաշտօնէութիւն (գատարանի որոշումները
գործադրող)

Դերջան Սինանեան — Գործադիր պաշտօնեա
Գրիգոր Քաջբերունի — Քարտուղար

Զ. Ընդհանուր Քննիչութիւն

Սա հսկում էր բոլոր մարմինների գործառնութեան վրա:
Կարապետ Այճեան — Ընդհանուր քննիչ
Պետրոս Աշխիպաշեան — Քարտուղար

11. Գաւառային Վարչութիւն

Այս մարմինը կազմում էր շրջանային վարչութեան մէկ
ծիւղը և վարում էր գաւառապետութիւնների գործը:

Այս մարմնի կազմը հետեւեալն էր.

Արմենակ Փոխանեան — Դիւանապետ
Միհրան Մուրադեան — Քարտուղար
Սարգիս Սիմօնեան — Գործավար

12. Գաւառապետութիւններ

Ամբողջ նահանգը բաժանւած էր 4 գաւառների և 12 գաւառակների, որոնց կառավարում էին գաւառապետները: Ժողովուրդը մեծ մասամբ գաւառապետներին կոչում էր պայմագամ, իսկ գաւառակների կառավարիչներին մուղիբ, ինչպէս որ գործ էին անում տաճիկ կառավարութեան օրօք:

Գաւառներն ու գաւառակները հետեւեալներն էին.

1. Շատախի գաւառ

Գաւառապետ — Սամուէլ Մեսրոպեան

2. Գեաւաշի գաւառ

Գաւառապետ — Լեոն Շաղօեան

3. Արճէշի գաւառ

Գաւառապետ — Նշան Ժամապործեան

4. Ալջաւաղի գաւառ

Գաւառապետ — Փանոս Մարութեան

5. Հայոց-ձորի գաւառակ
Գաւառապետ — Նալբանդ Նշան
6. Բերկրիի գաւառակ
Գաւառապետ — Գազիկ Թոխմախեան
7. Արտամետի գաւառակ
Գաւառապետ — Յովհաննէս Գեամշեան
8. Շահբաղիի գաւառակ
Գաւառապետ — Արէլ Աղաւնեան
9. Ալիւրի գաւառակ (Թիմար)
Գաւառապետ — Յարութիւն Հիւսեան
10. Զանիկի գաւառակ (Թիմար)
Գաւառապետ — Արգար Աէմէր ճեան
11. Արճակի գաւառակ
Գաւառապետ — Շիրին Յակոբեան
12. Խօշարի գաւառակ
Գաւառապետ — Արմենակ Տէր-Պօղոսեան
13. Մոկսի գաւառակ
Գաւառապետ — Գրիգոր Նահապետեան
14. Նորղուզի գաւառակ
Գաւառապետ — Պետրոս էֆ.

Երկու գաւառակներ, որոնք պիտի կազմէին Կարճկանում, դեռ չէին կազմուի, որովհետեւ այդ շրջանի ժողովուրդը շարունակուող կռիւների պատճառով դեռ չէր վերադարձել իր տեղը:

Ուշագրաւ է այն երևոյթը, որ Հայկական Կառավարութեան կազմի մէջ մտել էին գլխաւորապէս ինտելիգենտ ուժեր, խոշոր մեծամասնութեամբ ուսուցիչներ ու տեսուչներ, թէև այդտեղ տեղ էին գրաւել նաև տաճիկ կառավարութեան օրօք հղած հայ պաշտօնեաներ ու բաւականաչափ վաճառականներ: Մի խօսքով Հայկական Կառավարութիւնը իր կազմով ներկայացնում էր Վանի գիտակ երիտասարդութիւնը:

Կարևոր է յիշել նաև այն, որ Հայկական Կառավարութեան մէջ գործելու հրաւիրւեցին մի շարք կովկասահայ ինտելիգենտ ուժեր, ինչպէս և մի քանի բարձրագոյն կրթութիւն ստացած մարդիկ, և այս հարկադրում էր կարիքը: Նահանգը գտնուում էր ռուսական բանակի գործողութիւնների շրջանում, ամէն քայլա-

փոխում կարիք էր լինում դորձ ունենալ ուսւ զօրքերի հետ, հարկաւոր էին ուսւներէն լեզու գիտցողներ, և կովկասահայ ինտելիգենտ ուժերի ներկայութիւնը այնպէս անհրաժեշտ զարձաւ, որ շատ գաւառապետների տրեցին կովկասահայ օգնականներ:

Գաւառապետութիւնները հեռոճեաէ կազմակերպւեցին, մէկ-երկու գաւառներում նոյնիսկ վարչական կազմը բարդ կերպարանք ընդունեց, ընդօրինակելով կենդրոնական կառավարութեան ձեւը: Գաւառական այդ ձեւի մասին գաղափար կաղմելու համար, կը բերեճք այստեղ գաւառական վարչութիւններից մէկի պատկերը: Ահա այդ:

Շատախի գաւառապետութիւնը կաղմւած էր հետեւեալ մարմիններից ու պաշտօնեաներից:

1. Գաւառական Վարչութիւն

Սամուէլ Մեսրոպեան — Գաւառապետ
Հմայեակ Բաղդասարեան — Քարտուղար
Հմայեակ Չօլօեան — Գանձապահ

2. Տնտեսական մարմին

Մինաս Մուրադեան — Նախագահ
Սահակ Մարտիրոսեան — Քարտուղար
Արամ Գանիէլեան — Գանձապահ

3. Կատական Մարմին

Միհրան Չօլիկեան — Նախագահ
Դաիթ Պաշաւարեան — Անգամ
Յակոբ Թամասեան — Քարտուղար
Տիգրան Սարգսեան — Գործավար

4. Քաղաքապետութիւն

Շահէն Կուժիկեան — Նախագահ
Ասպատուր Աղիգեան — Անգամ

5. Ոստիկանական կազմ

Տիգրան Բաղդասարեան — Ոստիկանապետ
Ազատ Սիմօնեան — Օգնական
Սահակ Թրշօեան — Քարտուղար
Տիգրան Մկրտչեան — Գործավար
Պօղոս Գանիէլեան — Շրջանապետ
Մարգար Մովսէսեան — Քարտուղար

Գաւառական վարչութիւններէ հետ միաժամանակ կազմա-
վերալեց նաև գաւառական ոստիկանութիւնը — երկու, հրեք
յաճախ չորս տաննակներից բաղկացած իւրաքանչիւր գաւա-
ռում, այնպէս որ գաւառական ոստիկանութիւնը իր ամբողջ
կազմով բաղկացած էր 360 ոստիկաններից և 40 տանապետնե-
րից, որոնց կէս մասը հետեակ էր, իսկ կէս մասը հեծեալ:

Անա այսպիսի բարդ կազմութիւն ստացաւ ժամանակաւոր
Հայկական Կառավարութիւնը Վանի ու գաւառների մէջ ընդամե-
նը մի քանի շաբաթների ընթացքում:

ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԲԻՒԴԺԷՆ

Ժամանակաւոր Հայկական Կառավարութիւնը իր բարդ կազմութեամբ ձևակերպեց, և նրա ձևակերպման հետ միասին ծագեց նաև բիւզժէի ինդիրը: Պիտի պահպանէին մի շարք մարմիններ, պիտի հոգացէր բազմաթիւ պաշտօնեաների, ինչպէս և ոստիկանական կազմերի ապրուստի միջոցը, վերջապէս կառավարութիւնը ունենալու էր իր անհրաժեշտ ծախքերը: Ո՞ր տեղից պիտի հոգացէր այդ բոլոր կարիքների համար պահանջւող անհրաժեշտ դրամը, եթէ ոչ նոյն հայ ժողովրդից, որի շահերին ծառայելու կոչւած էր հայկական կառավարութիւնը:

Եւ Հայկական Կառավարութիւնը իր գոյութեան հէնց առաջին օրերից ծրագրեց ու գործադրութեան մէջ մտցրեց հարկատուութեան այն միջոցներն ու ձևերը, որ գոյութիւն ունէին տաճիկ կառավարութեան օրով: Ինչպէս կառավարական կազմը, այնպէս էլ բիւզժէն ձևակերպւեցին նախկին—տաճիկ կառավարութեան ժամանակ գոյութիւն ունեցող ձևերով, այդ ժամանակաւոր բնոյթ էր կրում, այդպէս վարելու էր երկիրը, մինչև որ կարելի կը լինէր անցնելու նոր ձևերի, նոր կարգերի, որոնց համար պահանջւում էր և ժամանակ և փորձ:

Այդ տեսակէտից Հայկական Կառավարութեան բիւզժէն կամ ելեմտացոյցը ներկայացնում էր մի հետաքրքիր պատկեր, որը աւելորդ չենք համարում ամբողջովին առաջ բերել այստեղ:

Նախ պիտի ասենք, որ բիւզժէն կազմւած էր ութ ամուս համար, սկսելով այդ Հայկական Կառավարութեան օրից, այն է 1915 թւի մայիսից մինչև տարւա վերջը:

Եկամուտի գլխաւոր աղբիւրներ համարում էին հետևեալները.

1. Կալւածատուրքը, որ գանձւելու էր համապատասխան կալւածքների արժէքի:

2. Վաստակի տուրքը, որ գանձւելու էր զլիսաւորապէս առևտրականներից:

3. Տասանորդի տուրքը, որ գանձւելու էր հացահատիկների ու բերքերով, ութից մէկի հաշւով:

4. Կրթական տուրքը.

5. Ոչխարի տուրքը.

6. Դատական տուրքը.

7. Դրոշմաթղթերի տուրքը.

8. Քաղաքապետարանի տուրքը.

Բացի այս, եկամուտներ սպասւում էին նաև դատարկ մնացած գիւղերի ցանքերից, ինչպէս և ձգւած կալւածքներից:

Ահա Հայկական Կառավարութեան բիւզժէն:

Վանի նահանգի ելեմտացոյցի նախատեսւած մուտքը

1915 մայիսի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը

Կալւածատուրք

Քաղաք և արւարձաններ

100 տուն	Ա.	կարգի	16 ը.	—	1600
300 »	Բ.	»	8 »	—	2400
600 »	Գ.	»	5 »	—	3000
700 »	Դ.	»	3 »	—	2100
1000 »	Ե.	»	2 »	—	2000
Արտ և այգիներ	100-ին	2 և կէս	—	1200	— 12,300

Գաւառներ

Թիմար	34 դիւղ	2000 տ.	2 ը.	40 կ.	—	4800
Հայոց-ձոր	31 »	1488 »	2 »	40 »	—	3571,20
Արճակ	21 »	1055 »	2 »	40 »	—	2532
Շատախ, Մոկս, Գեաւաշ						
	60 գիւղ	1800 »	2 »	40 »	—	4320

Ընդամենը

27,523,20

Վաստակի տուրք
Քաղաք և արևարձաններ

50 տուն	8 ր.	—	400
100 »	6 »	—	600
500 »	4 »	—	2000
600 »	2 »	—	1200—4200

Տասանորդի տուրք

Ութի՞ն մէկ գանձելով — 51,200

Կրթական տուրք

Տասանորդի չորրորդական մասի չափով — 12,800

Ոչխարի տուրք

100,000 հատ, իւրաքանչիւրից 32 կ. — 32,000

Դատական տուրք

100-ին 2 և կէս — — 4000

Դրոշմաթղթեր

Վճռագիր	400 հատ	50 կ.	—	200
Կոչնագիր	3000 »	8 »	—	240
Ազգեսագիր	10,000 »	8 »	—	800
Վարձագիր	200 »	8 »	—	16
Պայմանագիր	800 »	40 »	—	240
Անցագիր արտաքին	500 »	3 »	—	1500
» ներքին	600 »	40 »	—	240
Սմական մուրհակ	4000 »	8 »	—	320
Զէնքի արտօնագիր	200 »	40 »	—	80
Նամակի ծրար	4000 »	5 »	—	200—3836

Լքւած գիւղերից մուտք

Հաւանական ենթադրութեամբ — 16,000

Քաղաքապետարանի տուրք

Մաքրութեան համար	—	—	1665
Վաստակի տուրք 100-ին 20-ը			840
Սրճարաններու արտօնագիր	—		240
Լճերի ջրերից (ստոգումն)	—		320
Սերկիներից (բացօթեա վաճառատներ)	400		
Կառքերից 2-ական բուրլի	—		80
Սայլերից 1-ական բուրլի	—		80
Կալածական եկամուտ	—		320
Շինութիւններու արտօնագիր	—		160
Քարիւղի (նաւթ) տուրք	—		160
Շինման տուրք	—	—	2400
Անասնոց առուծախի տուրք	—		384
Ձափ ու կշիռի տուրք	—		288
Տուգանք	—	—	400
Նաւերի երթեկութեան տուրք			240
Վարձքերու վաւերացումի տուրք	80	—	8057

Պատահական մուտք

Համաձայն տնտեսական մարմնի տեղեկագրի — 16,000

Խնայողութիւն

Պաշտօնեաներու ուշ գործի կանչելուց	2723,80
Ընդհանուր մուտք	178,340 ր.

Վանի նահանգի ելեմտացոյցի նախատեսուած ծախքք

1915 մայիսի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը

Նահանգային վարչութեան ծախք

Նահանգապետին ամսական	—	300
Նահանգապետի օգնականին	—	200
Դիւանապետին	—	100
Ռուսական մասի դիւանապետին		100
5 գործավարներին	—	180

3 ուսական մասի գործավարների	160	
Գաւառական մասի դիւանապետին	60	
2 գործավարների	—	65
Գանձապահին	—	70
Հաշուակալին	—	70
Հաշւապահի օգնականին	—	30
4 դռնապաններին	—	80 — 1415
8 ամուանը միասին		11,320 ր.

Չը նախատեսնւած ծախք	—	5000
Գաղանի ոստիկանութեանը	—	2000
Պաշտօնատուներու վարձ	—	1000
Պաշտօնատան կահաւորման ծախք	—	2000
Դիւանական ծախք	—	1500
Վառելիքայտ և լոյս	—	350 — 11,850
Ընդամենը		23,170 ր.

Տնտեսական մարմնի ծախք

Նախագահին ամսական	—	100
Դիւանապետին	—	70
5 գործավարներին	—	300
Դռնապանին	—	20 — 490
Ութ ամուանը միասին		3920 ր.

Տասանորդը և ոչխարի տուրքը		
զանձելու ծախք	—	3000 ր.

Ոստիկանութեան ծախք

Ոստիկանապետին ամսական	—	100
Օգնականին	—	80
Թարգմանին	—	80
Հաշուակալին	—	40
Քարտուղարին	—	30
5 շրջանապետներին 50-ական ր.		250
5 օգնականին 40 » »		200

5 քարտուղարի — 25-ական	ր.	125	
60 հետևակ ստտիկանի	20 » »	1200	
12 հեծեալ	30 » »	360	
Բանդապետին	— — —	40	
Բանդապետի օգնականին	— — —	30	
2 դանապանի	20-ական	ր.	40 — 2575
<u>Ութ ամուանը միասին</u>			20,600 ր.

Գատարանի ծախք

Նախագահին ամսական	— —	100	
Ընդհանուր գատարապին	— —	100	
Հաշտարար գատաւորին	— —	100	
Գատարանի 2 անդամին	— —	140	
Գործադիր պաշտօնեային	— —	65	
Հարցաքննիչ գատաւորին	— —	65	
Գլխաւոր պետին	— —	60	
Հինգ քարտուղարի	— —	180	
Երեք կոչնակի	— —	60	
Երկու հեծեալ կոչնակի	— —	60	
Երկու դանապանի	— —	40	— 970
<u>Ութ ամուանը միասին</u>			7760 ր.

Քաղաքապետութեան ծախք

Քաղաքապետին ամսական	— —	100	
Երկրաչափին	— —	70	
Սպանականին	— —	40	
Գանձապահին	— —	50	
2 քարտուղարի	— —	70	
Գործադիրին	— —	25	
5 գործակատարի	— —	125	
Կանապանին	— —	20	— 500 ր.
<u>Ութ ամուանը միասին</u>			4000 ր.

Քաղաքի մարտութեան ծախք — 800

Ճամբաներու և կամուրջներու ծախք 400

Պաշտօնեաներու կառքի ծախք	—	160
Ընկեցիկներու սնունդ և անտէր մեռնչների թաղման	—	250
Աստղջապահական և բժշկական	—	2000
Չբ նախատեսուած ծախք	—	40—3850
Ընդամենը		<u>7850 ր.</u>

Ընդհանուր քննիչութեան ծախք

Նախագահին ամսական	—	100
Քարտուղարին	—	40—140
Ութ ամսուանը միասին		<u>1120 ր.</u>

Կրթական տեսչութեան ծախք

Նախագահին ամսական	—	100
Քարտուղարին	—	30—130
Ու ամսուանը միասին	—	1040
Կրթական նպաստ	—	5000
Ընդամենը		<u>6040 ր.</u>

Երկրագործական մարմնի ծախք

Նախագահին ամսական	—	70
Քարտուղարին	—	40—110
Ութ ամսուանը միասին	—	880
Յերմացուի և զործն. դասընթացքին		1000
Ընդամենը		<u>1880 ր.</u>

Յումնակատան ծախք

Պաշտօնեային ամսական	—	40
Ճր. իշին	—	25—65
Ութ ամսուանը միասին		<u>520</u>

Շաքարի գաւառապետութեան ծախք

Գաւառապետին ամսական	—	100
---------------------	---	-----

Քարգմանին	—	—	60
Քարտուղարին	—	—	40
Գանձապահին	—	—	40
Հաշտարար դատաւորին	—	—	70
Դատարանի քարտուղարին	—	—	40
Կոչնակին	—	—	20
Դանսպանին	—	—	20
Դիւանական	—	—	30—420
Ութ ամսւանը միասին			3360

Գեաւաշի գաւառապետութեան ծախք			3360
Արճէշի	»	»	3360
Ալջաւաղի	»	»	3360
Ճ գաւառների ծախքը			13,440

Հայոց-ձորի գաւառակի ծախք

Գաւառապետին ամսական	—	70	
Քարգման-քարտուղարին	—	40	
Դիւանական ծախք	—	15—125	
Ութ ամսւանը միասին			1000

Բերկրիի գաւառակի ծախք	—	1000
Արտամետի	»	1000
Շահբաղիի	»	1000
Ալիւրի	»	1000
Ջանիկի	»	1000
Արճակի	»	1000
Մարայի	»	1000
Խօշարի	»	1000
Մոկսի	»	1000
Նորքուղի	»	1000
Կարճկանի	»	1000

12 գաւառակների ծախքը 12,000

Ոստիկանութեան ծախք

Հրամանատարին ամսական	—	100
Թարգման-օգնականին	—	60
8 յիսնապետի	—	480
20 հեծեալ տասնապետի	—	800
20 հետևակ	»	600
180 հեծեալ ոստիկանի	—	4500
180 հետևակ	»	6300—12,840
Վեց(*) ամսուանը միասին		77,040
Ընդամենը ծախք		178,340

Այսպիսով, Վանի ժամանակաւոր Հայկական Կառավարութեան ութ ամսուա հիմնուաքը կամ բիւզժէն հաշւած էր 178,340 բուբլի, մի գումար, որը մեծ չէր, եթէ երկիրը ենթարկւած չը լինէր աւերմունքներին, կողոպուտներին ու ջարդերին:

Ասել թէ Վանի Հայկական Կառավարութիւնը կազմւած էր օրինակելի ձևով և ազատ էր թերութիւններից, միանգամայն սխալ կը լինի, միմիայն այն հանգամանքը, որ նրա հիմքը ծառայում էր սաճիկ կառավարութեան սխտեմը և նա փոխ էր վերցրել մի քանի անընդունելի ձևեր այդ փաստ կառավարութիւնից, այդ բաւական էր, որ մանուկ կառավարութիւնը ազատ չը լինէր թերութիւններից:

Օրինակ, ընդունւած էր տասանորդի տուրքը, որը արւում էր աճուրդով, ինչպէս այդ դոյութիւն ունէր սաճիկ կառավարութեան օրօք, ու առաջւա պէս տասանորդ զանձելու համար վիւզիրը պիտի մտնէր միւթիւնների դատակարգը, մի դատակարգ, որը տաճկական կարգերի ամենացաւուտ ախտն էր հանդիսացել և որի ձեռքից մասնաւորապէս հայ ժողովուրդը այնքան տառապանքներ էր կրել:

Անընդունելի ձևերից էր նաև գաղանի ոստիկանութեան գոյութիւնը, որ փոխ էր առեր Հայկական Կառավարութիւնը տաճիկ կառավարութիւնից: Միթէ մանուկ կառավարութիւնը կարիք ունէր դադանի ոստիկանութեանը, միթէ ամբողջ աշխար-

*) Ոստիկանութիւնը կազմուեց յուլիս ամսից:

հի կողմից արհամարեած այդ ինստիտուտը դեր ունէր կատարելու նոր սկսւող կառավարութեան մէջ, ի հարկէ ոչ: Բայց նա ընդունել էր միւս մարտիներէ շարքում նաև այդ մասին գոյութիւնը, անշուշտ, անգիտակցօրէն, առանց խորը մտածելու:

Այո, Հայկական Կառավարութիւնը կատարեալ չէր, նա ունէր թիրութիւններ, նոյնիսկ խոշոր թիրութիւններ, որից և առաջացել էր գժգոհութիւն նրա գէմ:

Սակայն այդ բոլորով հանգերձ Վանի Հայկական Կառավարութիւնը իր թարմ երիտասարդական կազմով, իր ձգտումներով կարճ օրերի մէջ ներշնչեց մի հաւատ, նա տեղի գրաւական, որ հայ ժողովուրդը ընդունակ է իր ինքնուրոյն կեանքն ունենալու, իր բաղդը անօրինելու:)

Պէտք էր տեսնել մանուկ կառավարութիւնը իր դերի մէջ, պէտք էր ակնատես լինել նրա գործառնութիւններին, գաղափար կազմելու, միաժամանակ ոգևորիչ տպաւորութիւններ ստանալու համար:

Մանուկ կառավարութիւնը ձգտում էր ընդունուած ձևերից դուրս ձգել ժողովրդական շահերի տեսակէտից անընդունելին և հակադիրը, ընդունել զեմօկրատիկ կարգեր և կանգնել այն ճանապարհի վրա, որ տանում էր գէպի բարօրութիւն, և այս իրականացնելու համար գիմել էր նաև կովկասահայ մտաւոր ուժերի աջակցութեանը:

Ահա այս ձգտման արդիւնքն էր մի շարք կովկասահայ մշտաւորականների ներկայութիւնը Հայկական Կառավարութեան մէջ, որոնք տեղական ուժերի հետ ձեռք ձեռքի տւած գիշեր ու ցերեկ աշխատում էին ուժ տալ ու բարձրացնել մանուկ կառավարութիւնը, ազատել նրան թիրութիւններից, մտցնել նրա մէջ նոր ու ժամանակակից ձևեր, կատարելութիւն տալ նրան, որքան էլ շրջապատող հանդամանքները աննպաստ էին և որքան էլ աւերած երկրի վերաշինութեան գործը ծանրացած էր այդ կառավարութեան վրա:

Հայկական Կառավարութիւնը առանձնապէս զեմօկրատիկ էր իր ներքին ու արտաքին յարաբերութիւնների մէջ. բիւրօկրատիկ ձևերը գոյութիւն չունէին այդից, շատ աշխատանքներ, շատ բանակցութիւններ կատարուում էին պարզ ու անպաճոյճ ձևերով և այս միանգամայն հասկնալի է: Կառա-

վարութեան գլուխ անցել էին երէկուս սոսկ քաղաքացիները, դիրքերի մէջ կողք-կողքի կուտղ մարդիկ, երէկուս պարզ ընկերները: Երանք ժողովրդի աչքում ոչ թէ պաշտօնեաներ էին, այլ երէկուս Արամները, Արտակները, Տիգրանները, սրտնոց դիմում էին վստահութեամբ, ստանց քաշելու դնում էին իրենց հորցիւրը յաճախ պահանջի ձեով, և այս անընդունելի չէր համարուում: Անշուշտ Հայկական Կառավարութիւնը, ինչպէս իւրաքանչիւր կառավարութիւն, պիտի բռնէր դէպի քիւրտիստիկ կարգերը տանող ճանապարհը, բայց այն, ինչ որ գոյութիւն ունէր, իրստ գիտօղբատիկ էր:

Հայկական Կառավարութիւնը գեմօղբատիկ էր և իր արտաքինով, նա համազգեստ չուներ և հաւանօրէն երբէք էլ չունենար. ինչ վերաբերում էր ոստիկանական կազմին, նրան համազգեստ սահմանելու հարցը կառավարութեան մէջ քննուում էր և թերես մի փոքր ժամանակից յետոյ ոստիկանութիւնը ունենար իր համազգեստը, եթէ Հայկական Կառավարութեան գոյութիւնը այդպէս կարճատե չը լինէր:

Ոստիկանութեան համազգեստը անհրաժեշտութիւն էր համարուում երկու պատճառով. նախ՝ ժողովուրդը պիտի իմանար թէ ում հետ գործ ունի, երկրորդ՝ երկիրը գրաւած լինելով սուս զօրքերով, ամեն տեղ ոստիկանութիւնը գործ էր ունենում նրա հետ. զօրքը հագուստով պիտի ճանաչէր ոստիկանութիւնը, մանաւանդ որ տաճկանացիքը սուսերէն արտայայտել չը գիտէին:

Ոստիկանութիւնը որնէ նշանով ցուցադրելու անհրաժեշտութիւնը այնքան ուժեղ էր, որ Հայկական Կառավարութիւնը հէնց սկզբից սահմանեց թևերի նշանը: Քաղաքում գործող ոստիկանները թևերին կրում էին սպիտակ կտորի վրա կարմիր տառերով գրւած ՈՍՏԻԿԱՆ մակագիրը, մի մակագիր, որը գործադրութեան մէջ մտաւ դեռևս Ապրիլեան կոնիւնքի օրերում: Իսկ գաւառական ոստիկանները, դարձեալ սպիտակ կտորի վրա կարմիր տառերով գրւած, թևերին կրում էին *B. A.* մակագիրը, որ նշանակուում էր *Вандская Дружина*: Այս, համազգեստ չը կար, բայց այդ պարզ մակագիրները փոխարինում էին համազգեստին, միաժամանակ հանդիսանալով սիմվօլը հայ ժողովրդի սիմվօլը անթիւ գոհերի ու անհասնում արեան գնով ձեռք բերւած այդ փոքրիկ ազատութեան:



Հայ գրաստանապետ
Գաղիկ Թորմաթեան
Քեզեքի



Հայ ստեղծարար
Հաննի Թորմաթեան
Քաղաքում

Թե կեանքը Վանի Հայկական Կառավարութեան մէջ հոռւմ էր, հոռւմ էր անօրինակ կերպով, ամեն ինչ ընթանում էր դէպի գործ, գէպի շինարար աշխատանք, Կառավարութիւնը փայփայում էր հայ ժողովրդին իբրև իր թանկագին զանձը, իր հարազատ միջավայրը՝ քաղցր, սիրելի։ Իսկ հայ ժողովուրդը նայում էր այդ կառավարութեան վրա իբրև իր նորածին մանուկի, որի համար այնքան տառապել էր ու այնքան գրկանքներ կրելու մինչև հասել էր նրան։ Մի հարազատ ընտանիք — ընդհանուր շահերով կապած, ընդհանուր սիրով վառւած մի մեծ գերզաստան, որը ընթանում էր դէպի երջանիկ ապագան։

Ետում էր կեանքը կառավարութեան մէջ, հոռւմ էր նաև ժողովրդի մէջ. արագօրէն շինւում էին աւերւածները, կորգի էին բերւում հրդեհւածները, մաքրւում էին փողոցներն ու հրապարակները, բոցւում էին վաճառատներ ու շուկաներ։

Եւ ահա այսօրինակ համերաշխ ու շինարար հոռւն աշխատանքի մէջ Հայկական Կառավարութիւնը բոլորում էր իր գոյութեան 70-օրեակը, երբ մէկէն շանթահարւեց նա, շանթահարւեց ու կայծակնահար ընկաւ։ Թուսական բանակը պատրաստւեց նահանջել, հայ ժողովուրդը բռնեց դադարի ճանապարհը ձգելով ամեն ինչ, դիմեց դէպի Կովկաս՝ ճանապարհին կեթարկելով սովի, ծարաւի, ցրտի, արևի և նոյնիսկ քիւրդերի յարձակումներին։ Հասաւ Կովկաս՝ ճանապարհին թողնելով դիակներ տասնեակներով ու հարիւրներով և գնաց պապադեւելու Արարատեան գաշար յուլիսեան սօթիւրին, բացելու նրա տափարակների վրա շիրիմներ հարիւրներով ու հազարներով, շիրիմներ անգարդ ու անյիշատակ։

Արաւելց Հայկական Կառավարութեան թիւը միայն 70 օր գոյութիւն ունենալուց յետոյ, կարւեց անօրինակ կերպով՝ Հայ ժողովրդի նոր կրած տառապանքները մոռացնելու և Հայ Կառավարութիւնը և նրա գոյութեան քաղցր ամիսները։ Ներկայ կեանքը աւելի դառն հղաւ, քան երբ եիցէ, և այդ դառնութեան մէջ մոռացւեցին թէ Ապրիլեան հերոսները, որոնք՝ ոսկի տաւերով կարճանագրւեին հայ ժողովրդի տարեգրութեան էջերում, և թէ 70-օրեա Հայկական Կառավարութեան գոյութիւնը, որը նոյնպէս իր պատաւոր տեղը կուենայ հայ ժողովրդի տարեգրութեան էջերում, իբրև հետևանք Ապրիլեան հերոսական կռիւնիրի։

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՄԵՐ ԳԱՂԹԸ

Ապրիլեան կռիւներից յետոյ, որից անցել էր ընդամենը երկու ամիս ու կէս, Վանը կերպարանափոխուել էր ու արագօրէն կերպարանափոխուեալ էր: Երկու քաղաքամասերի—Այգեստանի ու Քաղաքի տաճկական թաղերը հրդեհուած էին ու աւերուած, հայ ժողովրդի սրտում դարերով կուտակուած վրէժը անխնայ կերպով գործել էր աւերմունքներ: Այդ երկու քաղաքամասերում հրդեհուել ու աւերուել էին ինքնապաշտպանութեան գծի վրա գտնուող տներն ու զիրքերը, ենթարկուելով անհամար ռումբերի հարուածներին: Ռուսական բանակը գրաւելով Վանը ու առաջ անցնելով, սկսել էր մի շինարար աշխատանք ամեն տեղ. շինում ու շինում էին արագօրէն ամենքը:

Շինարար աշխատանք կատարւում էր առանձնապէս Այգեստանի մեծ փողոցի վրա՝ Սաչ-փողանի հրապարակից սկսած մինչև Փոքր-Քեանարշին:

Ինչպէս գիտենք, Վանի շուկան գտնուում էր Քաղաքում, առևտուրը ամբողջովին այդ տեղ էր կենդրոնացած: Քաղաքը վաղուց դադարել էր ընակութեան վայր համարուելուց, տների կուտակումը և բուսականութիւնից զուրկ լինելը անհրապոյր էին դարձել նրան, և ով հնարաւորութիւն ունէր, ձգում էր Քաղաքը և տեղափոխուում Այգեստան: Այսպիսով Քաղաքը հեռագետէ ընկնում էր, իսկ Այգեստանը ճոխանում: Քաղաքի գոյութիւնը պայմանաւորուած էր շուկայի և մասամբ կառավարական հիմնարկութիւնների հետ: Ապրիլեան կռիւների ընթացքում շուկան, որ պատկանում էր զլխաւորապէս հայերին, հրդեհեց ու ոչնչացաւ, ապրանքների մեծ մասը կողոպտեց, քիչ առևտրականներ միայն կարողացան կռիւների նախօրեակում իրենց ապրանքները քաշել թաղերը ու պահել: Այսպիսով կուէից յետոյ շուկան վերաշինել ու կեանքը այդտեղ վերականգնել ոչ հնարաւորութիւն և ոչ էլ

ցանկութիւն կար: Այգեստանը պիտի դառնար կենդրոն աչ միայն ապրելու, այլև առևտրի: Վաճառական և արհեստաւոր դասակարգը ամեն անգամ, երբ տեղի էր ունենում խռովութիւն կամ կոտորած, շուկայի հեռաւորութեան պատճառով ընկնում էր նեղ վիճակի մէջ և տուժում:

Այժմ առիթը ներկայացել էր ինքնին և հայերը հեշտութեամբ որոշեցին շուկան տեղափոխել Այգեստան: Իսկ Այգեստանում շուկայի յարմար տեղ հանդիսանում էր Խաչ-փողանի հրապարակը և այդ հրապարակի շարունակութիւն կազմող լայն փողոցը մինչև Մեծ-Քեանտըշին: Այս համարեց շուկայի յարմար տեղ առանձնապէս այն պատճառով, որ լինելով Այգեստանի ամենաբանուկ, միաժամանակ լայն փողոցը իր լաւ շէնքերով, այգտեղ գտնւում էին մի երկու հիւպատոսարաններ, հիւրանոցներ, իսկ կուրց յետոյ այդ շրջանում հաստատեց հայկական կառավարութիւնը, ուր համախմբւում էր ժողովրդի ահադին բազմութիւն:

Եւ ահա Խաչ-փողանի հրապարակից սկսած մինչև Փոքր-Քեանտըշին սկսել էր մի ետուն կեանք: Կանգնեցնում էին լայն դռներ փողոցի երկու կողմերի վրա, շտապով շինում էին խանութներ, ծաղում էին գոյութիւն ունեցող պատերը, բացում նրանց մէջ դռներ և սենեակները վեր էին ածում խանութների: Շինում էին այդ փողոցի երկու կողմերի վրա խանութներ ամենքը, ով տեղ ունէր կամ յարմարութիւն: Վանի հայ ժողովրդի տոկունութեան և մասնաւորապէս յունիս, յուլիս ամիսների շինարար աշխատանքի մասին գաղափար կազմելու համար, այդ օրերին պէտք էր Վան գտնւել, պէտք էր տեսնել, թէ ինչպէս այդ երկայն ու լայն փողոցը կերպարանափոխւում էր, ինչպէս միապաղաղ պատերը ընկնում էին, նրանց տեղ դռներ դրւում, խանութներ շինւում ու նրանցում ապրանքներ լցւում կամ արհեստաւորների դաղդիաները բազմում: Մի խօսքով այդ մի ետուն աշխատանք էր, մի շարժուն գործ, որ ցոյց էր տալիս վանեցու ընդունակութիւնը:

Այս ետուն աշխատանքի մէջ էր Վանը, երբ ուռւական բանակի երկու զօրամասերը Վանի լճի հարաւային և հիւսիսային կողմերից առաջանալով, Գատւանի մօտ միացել էին և արշաւում էին դէպի Բիթլիս ու Մուշ: Ընդ տ է, զօրամասերի միացման տեղում

ընկել էր հայ կամաւորների շարքերից Խէչօն և յուլիսի 11-ին Վանը Արարոց թաղի գերեզմանատան մէջ հողին էր յանձնում նրա դիակը. անագին ժողովուրդը երկար շարքերով, Վանի ինքնապաշտպան հարիւրակները իրենց համազարկերով ու հայկա-էան ֆանֆարր իր տիուր նւագով վերջին յարգանքն էին մատուցանում՝ շուք տալով տխուր հանդիսին, բայց ընդհանուր տրամադրութիւնը բարձր էր, որովհետև ժամէ-ժամ սպասում էին Բիթլիսի և Մուշի անկման լուրերին:

Ահա այս եռուն կեանքը և ուրախ սպասելիքները շարունակում էին Վանի մէջ, երբ յուլիսի 14-ին դրութիւնը մէկէն փոխեց: Լուր հասաւ, որ սուսական զօրքերը Բիթլիս ու Մուշ չը մտած յետ են քաշել մինչև Սորբ և Ախլաթ. միաժամանակ չուր հասաւ, որ Մոկսի ու Շատախի սանձանների վրա քիւրդեր են շարժուում: Այս լուրերը Վանի հայ ժողովրդի վրա ցնցող տպաւորութիւն գործեցին: Այդ օր Վանի երիտասարդների մի մեծ ժողով գումարեց և նրանց առաջ դրեց զբուժեան լրջութիւնը. անմիջապէս գրեցին 300-ի չափ երիտասարդներ Մոկսին ու Շատախին օգնութեան հասնելու նպատակով. յուլիսի 15-ին արդէն մէկ հարիւրակ հանապարհ ընկաւ զէպի Շատախ: Ապրիլեան կռիւների մէջ վանեցին շատ էր փորձել, շատ էր ներսացել, որ մի բապէ մերժէր իր օգնութիւնը Շատախցուն. նա գնաց, գնաց հաւատացած, որ ինքը զսպելու է քիւրդերի շարժումը: Սակայն փոխել էին վանեցու համար պայմանները: Ապրիլեան կռիւների մէջ նա մենակ էր ու ինքնուրոյն, նա հանդիսանում էր իր բաղդի տնօրինողը, և տնօրինեց: Այժմ նա զրկւած էր ինքնուրոյնութիւնից. ներկայ էր սուսական բանակը, ներկայ էին հայ կամաւորական շտապները իրենց կազմերով, վերջապէս գործում էր Հայկական Վառավարութիւնը իր հեղինակաւոր պոլութեամբ: Անշուշտ այս բոլորը միասին գիտէին ինչ է կատարում պատերազմի դաշտում. ինչ է հարկաւոր անել և ինչ է պահանջում հայ ժողովրդի շահը: Այսպէս մըտածեց Վանի երիտասարդութիւնը և խոնարհեւելով այդ մարմինների հեղինակութեան սուսջ, ինքը շեղօքացաւ, գտաապարտեց անգործութեան:

Պատերազմի դաշտում ինչեր էին կատարում, այդ հարցովն իմանալ հնարաւոր չէր լինում. պատաններից համեղ լուրե-

բը լաւ բաներ չէին գուշակում, առանձնապէս վատ լուրեր հասնում էին Ալջաւազից, ուր ուսական զօրքերի հետ տեղ էին հասել փախստական հայեր Մուշի գաշտից: Մի անգամ արդէն կոտորածի ենթարկւած Ալջաւազի ու Արճէշի ժողովուրդը սկսեղ էր դաղթել, հւր, ինչու, չէր հասկացում. տաճիկներէ առաջ-խաղացութեան մասին լուրեր էին հասնում քաղաք անորոշ ու ալլազան ձևերով և Վանի մէջ արագօրէն ստեղծուած էր տարտամ ու մտահոգ մի վիճակ:

Յուզիչ դրուժիւն ստեղծւեց Վանի մէջ առանձնապէս յուլիսի 15-ից մինչև 17-ը, երբ, յայտնի չէ թէ ինչ ազբիւրից, ժամէ-ժամ տարածուած էին լուրեր Կովկասի վտանգաւոր զբրութեան մասին:

— Տաճիկները Օլթիի ուղղութեամբ մտել են Կովկաս:

— Թշնամին հասել է Արդահան:

— Տաճիկ զօրքերը գրաւել են Կաղզւանը ու Կոզալը և շարժւում են դէպի Երևան:

— Տաճիկները մօտեցել են Թիֆլիսին և Կովկասը լուրջ վտանգի մէջ է:

Ահա այն լուրերը, որոնք երկու-երեք օր միմիանց յետևից տարածուած էին Վանի մէջ ու բերնէ-բերան անցնում:

Ի՞նչ կը լինէր Վանի և Վասպուրականի հայ ժողովրդի դրութիւնը, եթէ իսկապէս տաճիկները հասնէին Թիֆլիս: Պարզ է, որ ուսական զօրքը պիտի նահանջէր և տաճիկներէ վրէժ-խնդրութեան թոյնը թափւէր հայ ժողովրդի գլխին, որից յետոյ հայութեան ոչ մի կենդանի շունչ չը պիտի խնայէր:

Այս հարցը ցցւած էր Վանի հայ ժողովրդի առաջ և նրան դրադեցնում էր հոգեմաշ կերպով, երբ յայտնի դարձաւ, որ ուսական զօրքը պատրաստուած է նահանջել:

Ի՞նչ պիտի անէր հայ ժողովուրդը. այս խնդիրը ահա հր-բապարակ եկաւ: Ռուսական շտապը խորհուրդ էր տալիս գաղթեցնել օր առաջ ժողովուրդը, քանի որ զօրքը դեռևս տեղից չէր շարժուի:

— Գաղթեցնել, հրին, հւր, ինչպէս, — դրեց այս հարցը Վանեցիին, — մենք չենք գաղթի, մենք կը մնանք ու մեր երկիրը կը պաշտպանենք այնքան, որքան այդ հնարաւոր կը լինի, իսկ եթէ կամաւորութիւնը մի երկու թնդանօթով մնայ, մենք վըս-

տահ ենք, որ ոչ մի տաճիկ կամ քիւրդ չը պիտի ստք դնէ մեր սահմանը:

Ահա այս միտքը յայտնեցին Վանի երիտասարդութեան ներկայացուցիչները, այն երիտասարդութեան, որը այնպէս պատուով տարել էր Ապրիլեան կռիւները ու փրկել տասնեակ հազարաւոր ժողովրդի գոյութիւնը:

Այս որոշման համաձայնեցին նաև կամաւորական, շտապների ներկայ գտնուող ղեկավարները, ինչպէս նաև Հայկական Կառավարութեան ղեկավարները: Այս որոշումը ունէր իր հիմքը, զէնքի ու ռազմանիւթի կողմից Վանը այժմ աւելի պատրաստ էր, քան Ապրիլեան կռիւների ժամանակ. նա կարող էր երկուերեք անգամ աւելի ուժ հանել, քան առաջ, ուստի գարմանալու չէր, որ տեղացիները գերազանուէին մնալ ու կուել, քան բռնել աւերիչ գաղթի ճանապարհը:

Որոշումը վերջնական էր, պէտք էր դիմել զօրքի հրամանատարին, նրա համաձայնութիւնը խնդրելու կամաւորների մը նալու համար: Այս վիճակի մէջ էր հարցը յուլիսի 17-ի գիշերը: Ինչպէս և սպասելի էր, կամաւորների մնալու վերաբերմամբ զօրքի հրամանատարը մերժողական պատասխան տւեց: Ինչ վերաբերում է ժողովրդին, նա նորից խորհուրդ էր տւել գաղթեցնել նրան՝ յայտնելով, որ մի երկու օրից յետոյ զօրքը նահանջելու է, — իսկ եթէ ժողովուրդը չուզենայ գաղթել, այդ էլ իր գործն է, — աւելցրել է զօրքի հրամանատարը:

Այսպիսով ժողովուրդը գաղթեցնելու վերջնական խնդրը մնում էր լուծելու հայ ղեկավար շրջաններին:

Կովկասը ձեռքից դնալու վտանգի մասին տարածւած լուրերը, ինչպէս յետոյ պարզւեց, անհիմն էին, ճիշտ է, տաճիկները այդ միջոցին բաւական ուժեղացել էին Օլթիի, Սարիկամիշի ու Ալաշկերտի ուղղութեամբ, բայց Կովկաս ներս խուժելը այնքան էլ դիւրին չէր տաճիկների համար. բայց թէ ինչու և ինչ աղբիւրից տարածուում էին յուզող լուրերը, կամ ինչու ժողովրդին գաղթեցնելը անհրաժեշտ էր համարուում, այդ արդէն մի գաղտնիք է, որի բանալին պիտի փնտուել այն դիւանագիտութեան մէջ, որը սկիզբն էր առնում «Հայաստանը առանց հայերի» նշանաւոր դարձւածքը արտասանւած օրից:

Եւ յոզող լուրերը իրենց գործը տեսան. սարսափը ընդհա-

նուր եզաւ, զեկամար մարդիկ, որոնք աւելի պաղարին պիտի զանւէին և գաղթելու հարցը նորից Վանի երիտասարդութեան ներկայացուցիչներէ վճռին պիտի յանձնէին, պատասխանատուութիւնն էլ նրանց վրա ձգելով, հակառակ առաջին օրւա պնդումին, — թէ մենք կը մնանք ու մեր երկիրը կը պաշտպանենք, — յուլիսի 18-ի առաւօտեան մէկէն յայտարարեցին:

— Գատրաստել 5—6 օրւա պաշար և ճանապարհ ընկել:

Ծանր մի վայրկեան. այդ յայտարարումը դարձաւ գաղթի առաջին նշանը. սկսեց տարեբային մի շարժում, և նա կոչուեց «Վասպուրականի գաղթ», որը իր ահաւոր հետևանքներով — ճանապարհին թողած իր բազմաթիւ դիակներով և ապա Արարատեան արևակէզ դաշտում ցանած անհամար շիրիմներով կը մնայ էայ ժողովրդի տարեգրութեան ողբալի էջը:

Գաղթ. հեշտ է արտասանել այդ բառը, բայց դժւար է երևակայել անգամ պարունակութիւնը նրա, եթէ մտրդ չէ աղբեք այդ դրութիւնը գէթ մէկ ժամով: Ի՞նչպէս սոսկալի են լինում հեղեղներից աւերւած պճնագարդ պարտէզները, կամ հողմերից քշւած արմատախիլ փթթուն տունկերը, որոնք քարերին գարկելով, ձորից-ձոր նետուելով, ընկնում են ճղնակոտոր, ջարդ ու փշուր, ինչպէս չոր խռիւր: Ընդհանրապէս արմատախիլ եղած, հողմերից քշւած և ճղնակոտոր տունկերի նման ընկնում, լուծւում է գաղթող ժողովուրդը, դիակներ փռելով այն ուղիի վրա, որով անցնում է նա: Այսպէս լինում է խուճապի գաղթը առհասարակ և այսպէս էլ եղաւ Վասպուրականի գաղթը:

Սոսկումով լսեց վանեցին գաղթի որոշումը, և կսկիծք սրբտունւ, ապուշ կտրածի պէս հնազանդուեց դառը ճակատագրի անոզոք ծաղրին: Այլաւազն ու Արճէշը գաղթել էին, ռուսական զօրքերը յետ էին քաշուել, Վանում եղող զօրքը շուտով շարժուելու էր և Բերկրիի գիծը երեք օրից յետոյ փակուելու էր, ահա այս լուրերը յաջորդում էին միմիանց արագօրէն և գաղթը դարձնում խուճապային:

Այս վիճակում այլևս մնալու և երկիրը պաշտպանելու հարց լինել չէր կարող. տեղացող լուրերի շնորհիւ ստեղծւած սարսափը շատ աւելի մեծ էր, որ կարելի լինէր յամառել նախորդ օրւա որոշման մէջ, մանաւանդ որ զեկամար մարդիկ, որոնց կար-

ծիքը հեղինակութիւն էր համարուած, զազթելու վճիռը արդէն արձակել էին:

Եւ երէկեա խաղաղ քաղաքը մի վայրկեանու՞մ կերպարանափոխուեց, խանութները փակուեցին, ժողովուրդը քաշուեց, անհանգիստ անցուղարձը և շփոթն ու իրարանցումը կատարեալ եղաւ: Կանայք սկսեցին ճամբի պաշար պատրաստել, իսկ տրգամարդիկ արժէքաւոր իրերը թագստոցները տեղափոխել: Եղան շատերն էլ, որ նոյնիսկ իրեր թագցնելու ժամանակ շունեցան: Բերկրիի գիծը երեք օրից յետոյ փակուել էր, ո՞վ գիտէ, որպիսի անակընկալներ տեղի էին ունենալու այնուհետև: Ահա թէ ինչ միտք զբաղեցնում էր վանեցուն այդ վայրկեանին և թէ ինչու տուն, տեղ, գոյք, հարստութիւն մէկ ժամաւ մէջ կորցրին իրենց արժէքը ու միայն գոյութեան խնդիրը ցցուեց նրա տուայ:

Տարերային էր խուճապը և խելակորոյս, ոչ ոք ուրիշի վերայ յոյս գնել չէր կարող, իւրաքանչիւրը մնաց իր բաղդի կամքին. ոչ գաղթը կազմակերպուեց, ոչ փոխադրութեան միջոցները գրաւուեցին ու անկարողներին յատկացուեցին և ոչ էլ եղած զէնքերը կազմակերպուած պահակներ յանձնուեցին ճանապարհները պահպանելու համար: Կաղմակերպուած աշխատանք չը կատարուեց. կոչում ու պարտականութիւն ստանձնած շրջանները ենթարկուեցին պանիկայի ոչ պակաս շափով, քան ամբոխը և տասնեակ հազարաւոր ժողովուրդը ընկաւ ճանապարհ ինչպէս ոչխարի հօտը անզուրի ու ճակատագրին թողնուած:

Յուլիսի 18-ի արևը թեքուեց գէպի վանի լճի բացերը, այրող ճառագայթները տեղի տւին վանին յատուկ երեկոյեան դով հովին, հետզհետէ սոււերները ծաւալուեցին (և գաղթը սկսուեց):

Ազմուկով փակուում էին դռները ծանր ու ծանր, կարծես այլևս չը բացուելու համար, հապճեպ անցնում էին մարդ, կին, երեխայ քեանաւորած իրերով, երբեմն բարձրանում էին ծանրաշարժ սայլի թաւաւող ազմուկը ու գալիս անցնում. դա սակաւթիւ բաղդաւոր ընտանիքներն էին, որոնք ունէին կամ ձեռք էին ձգել վարձով մի սայլ. մէկ էլ լսուում էր փոքրիկ երեխայի ճիչը ու նրան յաջորդում մէջքին կրող մօր հանգստացնող կոչը կամ ակամայ նզովքը: Ահա և փոքրիկ էշը, որը ծանր քեռի տակ շարժուում էր, յետեից քարշ տալով 5—6 հոգու շրջ-

Թան՝ Գնում էին շտապ, բայց մտահոգ ու ծանրադէմ: Շարժումն ու աղմուկը չէր դադարում, ծանր փողին բարձրանում էր ու բարձրամում, և վանը, որը այդ ժամին սովորաբար քաշւած ու տուն մտած էր լինում, այսօր աղմկւած էր, անհանգիստ ու նոյնիսկ ջղային: Կամաց-կամաց անպիրի հետ մրցող կազմախիւսերի յետևից բարձրացաւ լուսինը, կարծես սգաւոր ու վշտաւ, նրա հետ միաժամանակ մի փոքր հեռու, ծառերի միջից երևաց հրդեհը մէկ գորշ, մէկ լոցոս, այրում էր մի մեծ շէք ծանր ու անաւոր: Ըստ երևոյթին այդ շէքը կառուցող ձեռքը նախ մտեցրել էր չոր տախտակամածին բռնկող լաթը, ու ապա բռնիք գաղթի ճանապարհը: Այդ հրդեհը բնորէր երթի ծաղրն էր, նա լափում էր երէկւա շէն տունը, նրա հրդեհն լիզունիքից ընկնում էր երէկւա զարդը, նրա հետ միասին մեռնում էր վանը:

Բացւեց յուլիսի 19-ի առաւօտը. կիրակէ էր, փողոցները չէին ջրում, մայրերը չէին մաքրում, դռների առջ կանաչ չէին երևում և դռները մեծ մասամբ կողպ էին: Փողոցի միջով ձգում էր երկար շարանը, ամբողջ դիշիրը շարունակել է գալթը և նրա հոսանքը դեռ վարար է: Ժողովրդի մեծ մասը չը կայ, հեռացել է արդէն, մնացել են գլխաւորապէս այնպիսիները, որոնք զուրկ են թէ փոխադրութեան միջոցներից և թէ օգնող ձեռքերից: Սրանց դրութիւնը սուսկալի է:

Անցնում է մի փոքրիկ ընտանիք—մի կին երեք երեխաներով, նրանք տանում են իրենց մէջքերի վրա ուժից վեր ծանրոցներ և այժմեանից արդէն յոյնած են:

Անցնում է մի այլ ընտանիք առաջը ձգած կթի կովը ծանր բեռի տակ: Կովը անսովոր է բեռ կրելու, իսկ ընտանիքը անսովոր է բեռը կապելու, և անա կովը քացի-քացի է անում, բեռը վար ձգում ու ոտները կապերի մէջ խճճում:

Անցնում է մի ուրիշ ընտանիք. փոքրիկ սայլակի վրա դարսել են իրեր ու վերան դրել երկու փոքրիկ երեխաներ, այդ սայլակը քարշ են տալիս մէկ ջահիլ տղա ու մէկ հասակաւոր մարդ:

Անցնում է էլի մէկ ընտանիք՝ փոքր ու աղքատ տառապանքի կնիքն է զրոշմւած վախ կնոջ դէմքին, նա տանում է

մէջքի վրա ինչ որ իրեր ու լաթեր, իսկ նրա յետևից քարշ է գալիս մի 12 տարեկան աղջիկ իր փոքրիկ քրոջը շալակած:

— Ո՛ւր են գնում սրանք, վարձոգ, վարդապատի տօնը տօնելու, — մտածում էք ակամայ:

Նրանք գնում են, իրենք էլ չիմանալով ուր, գնում են, որովհետև բոլոր են գնում և գնում են իրենց դիակներով ճանապարհները զարդարելու:

Սակայն նրանք էլ քաղաւորներ են, բաղաւորներ, որ կարողացել են տեղից շարժել ու ճանապարհ ընկնել, կան ընտանիքներ, որոնք հիւանդներ ունին և մի քայլ անել չեն կարող. քաղաքը դատարկոււմ է արագ կերպով, փողոցները ամալանում են, կեանքը մեղմում է և ահաւոր դատարկութեան մէջ, սպասուող թշնամու սարսափի տակ, մնում են հիւանդատէրերը, շարժելու միակնգամայն անկարողները:

Մի դռան պռաջ երկու կիներ և մի 18 տարեկան երիտասարդ լացում են ազիսպրմ և լացացնում անցորդին. հիւանդ պառկած է տանիքը. քայլել չի կարող. սայլ չը կայ. երկու կիներ համոզում են երիտասարդին ճանապարհ ընկնել, աղատել իր դուխը, բայց երիտասարդը չի ուզում թողնել նրանց, սըրտաշարժ տեսարան. նրանք գրկախառնուում են ու ողբում:

Բաղաքը, միջնաբերդի տակ, բոլորովին դատարկւել է, փողոցները ամալացել են, աւերակների շուռն է թագաւորում ամին կօղմը. և ահա միտած քաղաքի մի լուսամուտից գլուխը հանել է մի 14 տարեկան աղջիկ ու լացում է. ներսը սուկալի է. մի պռոսա կին, ստները քամոտ, նստած փաշ-վուշ է անում, մի երիտասարդ կին անկողնի մէջ հազիւ շնչում է, իսկ նրա անկողինը բոլորած աղիոգորմ լացում են հիւանդ կնոջ վեց երեխաները — մեծը 16 տարեկան գեղեցիկ աղջիկ է. դա մի սղի արուն է, ուր ոտ դնողը նոյնպէս սգում է: Ընտանիքի հայրը — Սաչատուր Նալբանդեանը սպանւել է աշնանը քաղաքից դուրս, թողնելով իր երեխաները անսիրտ աշխարհի բերանը, հողմերին ենթակայ:

Ահա այսպէս մնում էին ընտանիքներ անճար, անօգնական, աւերակների մէջ, բւերին ընկեր:

Օրանք նմուշներ են, փոքրիկ նմուշներ այն ահաւոր անց-

քի, որ կոչուեց Վասպուրականի գաղթ: Գաղթը տանելի է, երբ ժողովուրդը ծախում է իր գոյքը, վերցնում է անհրաժեշտ իրերը, ձեռք է բերում փոխադրութեան միջոց ու ճանապարհ ընկնում դէպի մի նոր երկիր: աս այդպիսի գաղթ չէր, այլ փոխուստ, խուճապ, շփոթ: Վանեցիքն չը վերցրեց իր հետ և ոչ մի իր, նա ձգեց ամեն ինչ՝ տուն, տեղ, այգի. նա թողեց իր կահաւորւած բնակարանը, վերցրեց 4—5 օրու պաշար ու ճանապարհ բնկաւ, գնաց զարդարելու անշուք շէրիմներով Արարատեան գաշաւ:

Այսպէս էր գաղթի երկու օրերին քաղաքի գրութիւնը, իսկ գաւառն՝ բինը, չէ՛ որ նրանք նոյնպէս պիտի գաղթէին: Վանի մօտակայ և Վանից դէպի հիւսիս ընկած գաւառները շարժեցին վաղօրօք, Վանի հետ միասին, սակայն Հայոց-ձորը, Գեաւաշը, մանաւանդ Մոկան ու Շատախը յետ էին մնացել, և նրանք քաղաք կը հասնէին երեք-չորս օրից յետոյ: Թէ ինչ վիճակ կը տեղիւնէր այդ հեռաւոր գաւառներում և որպիսի խուճապ առաջ կը գար քրդական սրսափը թիկունքում ունեցող այդ վայրերում, երբ լուր հասաւ որ Վանը գաղթում է, այս հասկանալի կը լինի նրանց, որոնք ճաշակել են խուճապ ասած բանը:

Գաղափար կազմելու համար կը բերենք այստեղ ականատես—Շատախի հերոսներից մէկի—Տ. Բաղդասարեանի մի փոքրիկ նկարագիրը:

Ահա նա:

— Յուլիսի 17-ն է. եկած տեղեկութիւններից կիմանանք, որ քրդերը մտել են Մոկա և ժողովուրդը քաշուել է Ոստան: Կիմանանք նաև, որ ուստական բանակը, ինչպէս և հայ կամաւորական զոււղը Բիթլիսից կը նահանջեն դէպի Ոստան: Գուրաք ինչ որ բաներ կը դառնան, և մենք ոչինչ գիտենք և Շատախի զինւորները ճակատմի՛ն բարձք, իրենց գիրքերը կը պահեն, սակայն ժողովուրդը զգալով ահաւոր ժամը, կուզէ գաղթիլ:

— Յուլիս 18-ին, կէսօրից յետոյ, Ոստանից եկած մէկ նամակ հետևեալը կը յայտնէ,—Արամը կը տեղեկացնէ, որ ընդհանուր նահանջ կայ, շուտով Շատախը թող կենդրոնանայ Թաղ և այնտեղից փոխադրուի Վան: Կայծակը, կարծես, շանթահարեց մեզ, փշաքփղեցին միւր մագերը և մենք մի բոպէ շատրած մը նացինք: Ի՞նչ անել, նահանջել, գըր, ի՞նչու: Այս բոլորը մեզ մնաց

անձանք: Մեքենայաբար մեր ձեռքերը գրեցին նահանջի ազդը և մէկ ժամաւ մէջ լուրը տարածւեց ամբողջ շրջանը:

— Կէսօրից յետոյ, ժամը 4-ին պատերին փակցւած էր նահանջի այդ սև ազդը և ժողովուրդը սկսած էր շարան-շարան գաղթել: Սաւարը կամաց-կամաց իջաւ և Թաղը ամայի դարձաւ: չէր լսւեր այլևս մանուկներու աղաղակը, կտուրներու վրա հաւաքւած կանանց անոյշ զրոյցը, լուսն էր նոյնիսկ քաջ զինուորի երգը-այդ խորհրդաւոր լուսնեան մէջ կը լսւէր երբեմն պահակների սուլոցը, գիշերային ազդանշանը: Սեւագարի նման կը Թափառիմ դէս ու դէն, կը մտնեմ կառավարատունը, կանցնեմ զօրանոցը, ոստիկանների հետ կը զրուցեմ, կը գնամ սենեակ ընկիրնիներու հետ գրապահու. տխուր են բոլորը և ընկճւած. կաշխատինք խօսել, բացատրել նահանջը, բայց խօսքը կընդհատւի. կարգը հոգիներին, որտեղին է այժմ:

— Ինչ երկար գիշեր էր յուլիսի 19-ի գիշերը: Առաւօտ եգաւ, արևի ցոլքերը կամաց-կամաց սկսեցին թափւել նախ մեր գիրքերի վրա և ապա ողողեցին ամայի հովիտը: Օ՛, ինչքան գարնունիկ կը գառնայ մեզնից յետոյ այս հովիտը:

— Կէս օրին, մեկնելուց առաջ, Թաղի փողոցներն ու տների բնակարանները էլ նայել տւինք, չիցէ թէ մնացողներ լինին: Իմացանք, որ մնացեր են մէկ կոյր, մէկ հիւանդ կին ու մէկ հիւանդ ատոգի: Ե հրահանգեցինք անմիջապէս երեքին էլ գնդակահարել: Շատախի այդ պատմական և ամայի ձորի մէջ վերջին անգամ լսեց մեր հրացանի ձայնը երեք անգամ, սար ու ձոր արձագանքեց երեք անգամ և մեր խուճրը շարժւեց: Մնաք բարով լեռ, ձոր, ծմակ. մնաս բարով դու քաղցր Շատախ. մնաք բարով նահատակ ընկերներ, երանի ձեզ, որ չը տեսաք այս օրը:

— Կանցնենք կամաց-կամաց ճանապարհին գնդակահարել օտար ծերերին, հիւանդներին. քարացած ենք այլևս: Մերոնք ճիշտ այնպէս կը գնդակահարէին իրենց հայրենակիցներին, ինչպէս կը գնդակահարէին թշնամուն երկու ամիս առաջ:

Ահա այսպէս էր պատկերը գաղթի օրերին, գաղթ, որը դեռ նոր էր տեսնելու տառապանքը ճանապարհների ու օտար հորիզոնների—գեռ նոր էր տեսնելու անաւորը տառապանքներից:

Ինչ էր ներկայացնում գաղթը այն երկար ճանապարհին:

որը ձգոււմ էր Վանից մինչև ուսուական սահմանը—մինչև Բգ-
դիր, էջմիածին, Երևան:

Վան—Աւանց—Սև-գետ—Գեղու—Ջանիկ—Փանդ—Բերկրի—
Բայազիտազա—Սուրգատու—Կեաւրէշամէ—Քափարիզի լեռ-
նանցք—Կարաքէնդ—Կլլիլիէ—Կարաբուլախ—Չուլի լեռնանցք—
Օրգով—և վերջապէս Բգդիր: Ան այն երկար զիծը ելևէջնե-
րով, աւերած գիւղերով, գուրկ անտառներից ու ամառի, աւելի
քան 200 վերստ երկարութեամբ, որով պիտի անցնէր խուճապի
մատնուած գաղթականութիւնը. կնթակոյ՛ ըրապի ու ծարաւի,
չոգի ու ցրտի:

Գլուխների մի ծով, յորդացած մտրդկային մի հեղեղ էր:
որ հոծ շարքերով բռնել էր լայն ճանապարհը ու հասում էր Հո-
սում էր դանդաղ, յամրաքայլ, նոյնիսկ ծանր, երբեմն, բայց
հոսում էր անընդհատ, անանց կանգ աննելու, անանց հանգըն-
տանալու, մի տարերային մղումով: Ինչպէս շարժուն մի կուռ
սև շղթայ նա ձգոււմ էր դաշտերի միջով, բլուրների կողերով,
բարձրանում էր, իջնում, անհետանում էր և մէկէն յայտնուած
հեռուն ձգող լանջերի վրա ու պտոյտ գործելով մանում լեռան
թիկունքը ու այդպէս անվերջ: Գնում էին կողք-կողքի, շարք-
շարք հարուստ ու աղքատ, մեծ ու փոքր, մարդ ու կին, տղա
ու աղջիկ շատերը բարձւած ուժից վեր, շատերը շալակած ու
զրկած իրենց երեսաներին: Այդտեղ էին պաշտօնեայ, ուսուցիչ,
վաճառական, արհեստաւոր՝ նոյն հազուատներով, նոյն տարա-
զով, ինչպէս սովորական ժամանակ, և շարժոււմ էին դանդաղ
ու ծանր, շալակած իրերի և փոքրիկ մանուկների հոգսով տար-
ւած. շարժոււմ էին փոշիի ու քրտինքի մէջ կոթած, շարժոււմ
էին ծանր թուի տակ անքալով: Բաղաքի ժողովուրդն էր այդ
դուրկ սայլերից, կենդանիներից: Շարժոււմ էր խայտարղէտ
շղթան. կարծես ուխտի էր ելեր, Ոլիմպիական խաղերին մատ-
նակցելու. էր գնում մարդկային այդ հեղեղը: Բայց նա լուռ էր,
խոհուն ու մտաղբաղ, յոգնած ու յոգնած. կանգ էր առնում տ-
մեն տեղ. կանգ էր առնում մի թարմ խոտուէտ լանջի վրա,
ուր փոքրիկ աղբուրն էր հասում. մի ժամից յետոյ աղբուրը
ինքն էր ծարաւում ու կանաչի տեղ լանջը ոտի տակ չո-
րանում:

Անա Սև-գետը առատաջուր ու լայնահոս. նրա խոտաւէտ
երկու ափերի վրա մեծ տարածութեամբ հանգիստ է առել
մարդկային հեղեղը ուսճացած, գալիս են ու գալիս, տեղ բռնում
խրար կողքի, այլևս անկարող շարժելու: Հազար-հազարներ են
դրանք, Ոլլիմպիական խաղերը, կարծէք, այդտեղ են կատարել-
ու: Եւ յոգնած, ուժասպառ բազմութիւնը՝ մարդ ու կին, մեծ
ու փոքր կկզմ գետի ափերին կամ նոյնիսկ մտած ջրի մէջ խը-
մում են անյագ, անկշտում. հոգ չէ, որ յուլիսեան արևի տակ
հոսող ջուրը տաք է, հոգ չէ, որ գետի մէջ մի հսկայ շան զիակ
լուծւած դրութեամբ դէմ է առել ծանծաղուտին ու ապականում
է ջուրը, հոգ չէ, խմում են ու ծարաւը յագեցնում:

Անա Գիօլուն, Թիմարի տաճկախառն այդ զիւղը, որը կի-
սով չափ աւեր է, երեկոյեան սոււերները թառնլ են արդէն ան-
շուք գիւղի վրա, սւերակ աներն ու փողոցները կենդանութիւն
են ստացել, ամեն կողմ ժողովուրդ. գիւղի առատահոս աղբիւրը
և նրա ընթացող ջրի ափերը միմեանց հրճող կին ու աղջիկնե-
րով է պաշարւած: Ծանապարհը բռնւած է սայլերով, անցնելու
տեղ չկայ. մօտեցող ու մօտեցող ժողովուրդից որը կանգ է առնում
և հանգստանալու տեղ որոնում և որն էլ շարունակում է ճա-
նապարհը առանց կանգ առնելու. շիտթ ու աղմուկ է չորս կող-
մը: Մթնում է շուտով, այս ու այն տեղից խարոյկների բոցն է
երևում. դա սայլեր ունեցող բաղդաւորներն են, մեծագոյն մասը
կպչում է գետնին ու մնում: Շարժումը կանգ չէ առնում, աղ-
մուկը չի դադարում. այդ Ժխորի միջից առանձին տալաւորու-
թիւն են գործում արտասովոր կանչերը, մէկի 4 տարեկան տղան
է կորել, միւսի 3 տարեկան աղջիկը կայլն, կանչում են, անուն-
ներ տալիս, նշաններ պատմում և կանչերը կրկնում են երկար
ու երկար, մինչև որ կէս գիշեր է լինում և աղմուկը մի փոքր
հանդարտում է. բայց դա երկար չի տևում, մի ժամ, երկու
ժամ և անա նորից աղմուկ, նորից հեղեղ, այս անգամ հեղեղը
հոսում է արդէն անեղագոչ:

Ծանապարհը լեցուն է, նրա երկու կողմերի վրա մարդ-
կային կոյտեր են դիզւած, շատերը փուռել են գետնի վրա բնոր
շալակներին, նրանք քնած են, աւելի շուտ դադարած. իսկ նրանք,
որոնք ստի վրա են, շարժում են տնքալով, քայլում են տնքա-

դով, որոնց միախառնուում է յոգնած, անհանգիստ եղած փոքրերի ճիչն ու աղաղակը, և թւում է, որ ամբողջ ճանապարհը ոտնում է ցաւից, ոտնում են ցաւից սար ու ձուլ, ոտնում է ցաւից նոյնիսկ երկիրը:

Ահա և Բերկրին իր տներով ու շրջաբոլոր փոքրիկ շուկայով մեծ մասամբ աւերակ. շրջապատը բռնւած է զօրքերով, այդ տեղ են նաև Անդրանիկն ու Դրօն իրենց խմբերով: Փողոցներում, լայնաբերան անդուռ բացւածքներում երևում են մարդկային էակներ՝ հիւանդոտ ու դունատ, գզգզւած ու պատառոտած հագուստներով. դրանք Ալշաւազի ու Արճէշի զաղթող ժողովրդի թափթփուկներն են: Երեք օր առաջ կկել անցել է այդ երկու շրջանների մարդկային հեղեղը, թողնելով ճանապարհին յոգնածների ու հիւանդների մի շղթայ՝ երերուն ու անշարժ: Եւ գալիս է մեծ հեղեղը Վանից, գալիս է աւելացնելու թիւը յոգնածների ու հիւանդների, գալիս է հետք թողնելու իր անցած զծով, գալիս է ճանապարհը դարձաբելու իր թափթփուկներով:

Ահա և Բերկրիի ձորը, որի միջով անեղաշունչ հոսում է արիւնարբու Բանդէ-մահուն, այն Բանդէ-մահուն, որը Ապրիլեան օրերին ականատես եղաւ անօրինակ ոճիրներին ու լուռ ֆնաց: Տեղ-տեղ քարքարոտ ու անհարթ նեղ ճանապարհը ձգւում է գետի աջ ափով հոսանքի հակառակ ուղղութեամբ: Արևը նոր միայն ծագում է, բայց նա ծածկւած է թուխպերով, և փոթորկոտ քամին հող ու աւազ է քշում քերում: Հեղեղը ճամբա է ելեր սայլերով, էշերով, ահագին շալակներով. և հոժ շարքերը շարժւում են յոգնած ու դանդաղ: Մէկէն յիտեից բարձրանում է աղմուկ, և հեղեղը գալարւում է, ճապաղում. գալիս է զօրքը շարուն-շարան նախ հեծեալ, ապա թնդանօթների մի խումբ, ապա բեռնակիր սայլակների երկար շղթան, ուղտերի քարաւանը երկար ու երկար բոլորը մթերքով բարձած:

— Ծանապարհ, ճանապարհ, — լսում են հրամայական այս բառերը. տանջւած շայկատորների հազիւ այս ու այն կողմն են քաշւում, քարձւած եղներն ու կովերը հազիւ մի փոքր տեղ են քացում, իսկ ծանրաշարժ սայլերը բարձւած ու բարձւած հազիւ մի փոքր ծուռւմ են ու կանգ առնում, քարանձամբ Աղմուկով

մօտենում են թնդանօթներն ու սայլակները մասսիւ ու թեթե, զարկում են սայլերին ու անցնում, հարւածը ուժեղ է, խորտակիչ, սայլապանը ջանք է թափում սայլը մի փոքր էլ տեղից շարժել, բայց քարին դէմ առած սայլը տեղից չի շարժւում: Դալիս զարկում ու անցնում են ծանր անիւնները երկաթապատ ու ամրակուռ, յաճախ փշրելով քարացած սայլը, մարդիկ ճանապարհից դուրս են փախչում, բարձւած եզներն ու կովերը անկարգ այս ու այն կողմն են ծուռում, և բարձրանում է մի չը տեսնւած աղմուկ, լաց, շփոթ, քասու:

Ահա Դաւտրըը, Արաղայի դաշտը, Սուդ-սուն, Թափարիզի վերելքն ու վայրէջքը, Կզլդիդէն և վերջապէս Չնզլի վերելքն ու վայրէջքը: Ամեն տեղ նոյն սոսկալի տեսարանը, սրբտաճմիկ պատկերը: Ծանապարհը, որ տեղում էր 4—5 օր, մարդկային հեղեղը լուռ, բայց յամրաքայլ անցնում է հազիւ 10 օրում: Նա ոչ թէ հոսում է մոնշալով, այլ դալարում ու սռնում է ինչպէս ցաւագարը և շարժւում է հիւժւելով, քայքայւելով: Օրերը աւելի են տեկել, պաշարը սպառւել է, քաղցը նեղում է ուժգնօրէն և հեղեղը շարժւում է այժմ ստամոքսի ունոցով: Այլևս ուժ չի մնացել, մարդիկ նիհարել են, նւագել, այլակերպւել: Ծանապարհի վրա ընկած են ուժասպառ մարդիկ, երբեմն ձգւած երեխաներ. կայարաններում խմբւած են որբեր, հիւանդներ, անկարողներ: Մի կտոր հացը, մի բաժակ ջուրը մի կեանք կարող է փրկել, բայց չը կայ ոչ այն և ոչ այն. պապակման ու ուժասպառութեան սոսկալի տեսարանը բացւում է առանձնապէս Չնզլի վերելքի վրա, ուր կիզող ճառագայթները այրում են անողոք կերպով և դժւարին վերելքը դարձնում տունջանքի մի ուղի: Այդ վերելքի կրճքին, նախկին տաճկական մաքսատան տեղում մի աղբիւր կայ, ուր այժմ գօրքեր կային, այդ աղբիւրը փակւած էր գաղթականութեան առաջ և մարդիկ ծարաւից թափւում են կիզիչ լանջերի վրա:

Նկարագրել այն բոլորը ինչ որ տեղի ունեցաւ, ինչ որ կատարւեց գաղթի ճանապարհին անկարելի է, գրիչը դեռ չի հասել այն կատարելութեան, որ կարողանար նկարագրել այդ իր իսկական պոյներով:

Բայց գաղթականութեան այն մասը, որը թէկուզ սոսկալի տանջանքներով, թէկուզ հիւժւելով ու մաշւելով, անցել էր

Բերկրիի ձորը, Արաղան, Թափարիզը ու մօտեցել ուսական ասհմանին, երջանիկ էր, որովհետև նրա մի ծայրը դեռևս գանուում էր Վանում, որը հասնելու էր Բերկրիի ձորը Կրկու- երեք օրից յետոյ և հնթարկելու էր քիւրդական յարձակումսի- րի ու վայրագութիւնների, ինչպէս և եղաւ Դա Գեաւաշի, Մոկ- սի ու Շատախի գաղթականութիւնն էր:

Յուլիսի 24-ին տաճիկ զօրքերը Արճէշից շարժւեցին դէպի Բերկրի. ուս զօրքերը թէև նահանջում էին, բայց նահանջում էին թշնամուն զիմադրելով, և ծովափով շարժւող Վանի գաղթա- կանութիւնը զիմում էր Բերկրի շարունակւող թնդանութեան- թեան խուլ սրտաների ազաւորութեան տակ: Շրջակայ քիւրդ ցեղերը սիրտ առնելով տաճիկ զօրքերի առաջխաղացումից, եկել բռնել էին Բերկրիի ձորի վրա իշխող լեռները և մի քանի ան- գամ յարձակումներ էին գործել գաղթականութեան վրա:

Յարձակումներից մէկը տեղի ունեցաւ Բերկրիի ձորի մէջ- տեղ յուլիսի 24-ի կէսօրին: Յարձակւող քիւրդերը շատ չէին, բայց փոքրիկ յարձակումն էլ բաւական էր խուճապ և շփոթ ա- ռաջ բերելու գաղթականութեան շարքերում: Գաղթականները յետ վախան դէպի Բերկրի ձգելով սայլերը, իրերը և նոյնիսկ երեխաները, մի քանի կանայք ու երեխաներ սարսափահար ա- հարկու գետը նետեցին, բայց հասան մի քանի զինւած տղա- ներ ու կամաւորներ և քիւրդերին վախցրին:

Սակայն զլիտւոր յարձակումը Բերկրիի վրա տեղի ունե- ցաւ յուլիսի 25-ին, երբ ուսական զօրքերն ու կամաւորական վաշտերը դեռ շարունակւող գաղթականութեան հոսանքի ներ- կայութեամբ նահանջեցին Արաղա: Բաւականաչափ գաղթակա- նութիւն ընկաւ կրակի տակ. քիւրդերը բռնեցին Բերկրիից վեր գտնւող Բանդէ-մահու գետի քարէ կամուրջը և սկսեցին բարբա- րօտութիւններ: Ականատեսների պատմածով սոսկալի ոճիրներ զորժւեցին այդտեղ. զարկւեցին անխնայ ամենքը, բռնաբարե- ցին ու առեանգւեցին կանայք ու աղջիկներ, սարսափահար ժո- ժովուրդը յետ վախաւ դէպի Բերկրի, Պատիկ-գիւղ և զաշար. մի քանի կանայք իրենց նետեցին աճարկու գետի ալիքների մէջ, այդ օրինակը վարակիչ դարձաւ և բազմաթիւ կին ու երեխա- ներ խոյացան գետի ալիքների մէջ, միայն թէ չընկնէին վայ-

րագ քիւրդերի ձեռքը: Գաղթականութիւնը, որի մի ծայրը գետ
Վանու մն էր, յետ վախճաւ դէպի Զանձիկ, ճանապարհին մեքե-
լով դիակներ քաղիակներ՝ անքնդճար ճանապարհներով քիւրդերից,
և սուկալի ջարդը կանգ առաւ Զանձիկի մոտ: Բերքերից մինչև
այդտեղ սրախողխող գնդակահար ընկաւ և գետի ափքներին զօճ
գնաց, շատերի վկայութեամբ, 1000-ի չափ ժողովուրդ:

Բերկրիի գիծը փակեց, գաղթականութեան մի մասը բանեց
Պարսկաստանի ճանապարհը և սկսեց մի նոր մարտիրոսացրու-
թիւն. քիւրդերը ամեն տեղ բախ էին կանգնել, նայմիկ այն
քիւրդերը, որոնք ճանապարհներին էին ցոյց տել սուսներին և
մնացել էին իրենց անզերու մոտաների նստանջը մեծ օղբորու-
թիւն առջ բերեց քիւրդերի մէջ, և տնտեսան Բերկրիի յարձակ-
ման տեղի ունեցաւ յարձակում քիւրդերի կողմից նաև Սարալի
մոտ: Նորից ընկան սրախողխող ու դնդակահար ու ժառայառ զող-
թականութեան շարքերից, նորից անհանգիստ շանի կանայք ու
աղջիկներ և 600-ի չափ զոհեր էլ այնտեղ ընկան ու ոչնչացան:

Յուլիսի 28-ին սուսական զօրքը թողեց Վանը, բայց քնգա-
մենը 2—4 օրով: Այդ կարճ միջոցին Վան մտաւ Վասպուրական-
նի մեծ սծրագործ Ղէզէար 400—500 չէթաներով և քաղաքում
ու Աւանցում մնացած հարիւրաւոր ժողովուրդն աւ հիւանդները
ենթարկեցին նոր բարբարոսութիւններից բայց շուտով Օլթիի,
Սարիկամիշի ու Ալաշկերտի ուղղութեամբ տանձիկները նոր
պարտութիւն կրեցին, սուս զօրքերը յետ դարձան, նորից որո-
տացին սուսական թնդանօթները Վանի պարխայների տակ,
Ղէզէարը, ուսեղների գեմ վախկաւ այդ արարածը, արանց դի-
ժաղբութիւն ցոյց տալու քաշեց և սուս զօրքերը գրաւեցին
Վանը, բայց այս անգամ արդէն տանց հայերի:

Վանը վերագրաւեց տանց հայերի, Վասպուրականի մե-
ծագոյն մասը նորից անցաւ սուսների ձեռքը, բայց հայ ժողո-
վուրդը գնաց դեղերեւելու ճանապարհներին, գնաց հիւժուկու մաշ-
ւելու Արարատեան դաշտի խորշակներէ մէջ և այն ինչ որ
կրեց գաղթականութիւնը Արարատեան դաշտում իր զարհու-
րանքներով եկաւ նսեմացնելու այն կորուսաները, որ կրել էր
այդ ժողովուրդը իր օջախի մէջ մէկ տարւա ընթացքում: Ու
դիւային ծրագիրը եկաւ նոր զօրձաղբութիւն գտնելու:

Պաղթականութիւնը եկաւ կուտակեց նախ Սուրմալուի տափարակներում, դուրկ մաքուր ջրերից ու օդից, եկաւ կուտակեց էջմիածնի շրջակայքում, անտառի մէջ ու վանքի արեւակէզ հրապարակների վրա, ապա անցաւ հեղեղելու Երևանի հրապարակները, եկեղեցիների գաւիթներն ու նոյնիսկ բնուէկ մայթերը՝ ժեռուտ ու կիզիչ: Այո, եկաւ կուտակեց աւելի քան 150,000 գաղթականութիւն՝ Թնուսից, Բուլանուխից, Մանազկերտից, Մուշի դաշտից, Ախլաթից, Ալջուաղից, Արճէշից ու Վասպուրականի մնացեալ գաւառներից, ինչպէս և Մոկսից ու Շատախից: Եկաւ կուտակեց հիւժւած ու մաշւած, հիւանդ ու անկարող, ինչպէս ուրւտականը: Եկաւ կմախքների այդ զանգւածը դիզւեց, լեռնացու այնպիսի չափով, որ չը նայած բազմաթիւ ընկերութիւնների գործնէութեան, անկարելի եղաւ մի քանի օր շարունակ հարկաւոր քանակութեամբ հաց հասցնել, և սկսեց սովը, ապա վարակիչ հիւանդութիւններն ու մահացութիւնները էջմիածնի, Իգդիրի, Երեանի, մանաւանդ էջմիածնի հրապարակներում ու պատերի տակ, և սկսեց նոր աղէտը անաւոր ու ահռելի:

Այդ աղէտի մասին գաղափար կազմելու համար բերում ենք այստեղ մի երկու նկարագիրներ, որոնցով լցւում էին այդ օրերի հայ մամուլի էջերը անհաշիւ չափերով:

Ահա այդ նկարագիրները, որոնք տեղ գտան «Նորիզոն» թերթի էջերում:

1. Իգդիր

Ինչպէս աշիան ցրտից ու ստուք քամուց գետին թափւած թռչուններ հաւաքում ենք նրանց ճանապարհի վրայից, որով անցել է տարաբաղդ քոչը:

Մերկ, քաղցած—համարեայ կիսամեռ կտատրեալ կմախքներ՝ նայեցէք դրանց դէմքերին, ոչինչ մանկական: Աչքերը տըխուր, նահատները կնճռոտ, նիհար, դժգոյն:

Հազարներով են դրանք... Փոքրիկ երեխաներ—մի ամսականից սկսած:

2. Իգդիր

Շատերը բռնւած փորակարիներով՝ ուժասպառ ընկած են

ծառերի տակ՝ ապականւած, գարշահոտ ցնցոտիների վրա։ Ամառան արեգակը դաժանօրէն այրում է ծառերի տերևների տրանքից. նրանք տենդային մարած աչքերով մեզ են նայում և շարժում իրենց ոսկրացած ձեռքերը։

Ահա միջին տարիքով մի կին, նա գերմարդկային ճիգեր է գործ դնում մօտ քաշելու իր փոքրիկ ծծկեր մանկանը. նա ադերսական հայեացքով հասկացնում է օգնութեան հասնել իր փոքրիկին։ Մենք վերցնում ենք մանկան և տանում յանձնում որբանոց, որը գտնւում է հէնց հիւանդանոցի մօտ, դարձեալ ծառերի տակ։ Թշուառ մայրը երեսի վրա է ընկնում, նա գիտէ, որ էլ չի տեսնելու իր դուստկին...

Մի կողմ ցնցոտիների մէջ, համարեայ, մերկ պառկած է մի դեռատի աղջիկ, որքան փարթամ են նրա խճճւած մազերը, որքան նազելի նրա դիմազծերը նոյնիսկ տանջանքի գալարումների մէջ. նա ընկած է անխնամ, մենակ, անտէր։ Միթէ ոչ ոք չունի, միթէ նրան ոչ ոք չի փայփայել, միթէ նա չի զգացել կեանքի բերկրանքը, ուր են նրա հարազատները... Նա մեռնում է։

Ահա չորս փոքրիկ երեխաներ շրջապատած իրենց մօր ստառած, փէտացած դիակը, հեկեկում են։ Մենք իզուր ենք համոզում և բացատրում, որ մայրիկը քնած է, որ լաց չը լինեն. օ, նրանց զգայուն մանկական հոգին ամեն բան հասկացել է... Մենք գրկած նրանց տանում ենք որբանոց, նրանք չեն լռում։ Իսկ այստեղ, որբանոցում, որքան մոլորած, որբացած երեխաներ կան. զուլումն ու սարսափը դրել է նրանց զգայուն հոգիների վրա իր կնիքը. նրանց դէմքերին ժպիտ չը կայ։

Յ. Էջմիածին, 28 յուլիսի

Մարդկային երևակայութիւնից վեր դարհուրելի տեսարան է ներկայացնում այժմ Էջմիածինը իր շրջականերով։ Ձէք դանի ոչ մի արշին տեղ, ուր կուտակւած չը լինեն զանգւածները։

Բազմահազար գաղթականութիւնը բռնել է շեմարանի բակը, վանքի գաւիթը, Ղազարապատը, լճի չորս կողմը, նոյնիսկ շուկան ու փողոցները։ Հաց, ազազակում են ամենքը, հաց չը կայ, հիւանդացողներն ու մեռնողները բազմաթիւ են,—իմ բալաս հաց բղաւելով աւանդեց հոգին,—արտօսանում են սղբի մէջ սգացող մայրերը. կարիքը ծով է։

Վիշմիածին, 28. օգոստոսի

Փոքրիկ պտոյտ «Եանտէի» յժոխքումս:

Ճեմարանի մուտքի առաջ ընկած են մի քանի կանայք ու երեխաներ, որոնք վերջին կտիւն են մղում մահւան դէմ: Նրանց կողքին մի քանի անչափահաս աղջիկ ու աղաներ կեկու զիակի վրա ընկած տկանը են խոցնում կրնոց ողորդ:

Եկրս եմ ծանուծ Ճեմարանի բակը: գորշահասութիւն է տիրում այստեղ: այդ գորշահասութիւնս մէջ թափւած են մեր հարազատների քոչկոր: Մեռածից մինչև Ճեմարանի առջև համրում եմ զանազան հասակի վեց զիակներ:

Անցնում եմ վանքի բակը: ուղիղ մուտքի առջև երկու կին մի երիտասարդ զիակի վրա կրնոց ողորդ են ածում ու պատան կարուծ: Տարբանի և տիրում Թեան խցիքի առաջ փափւած են իրար վրա մահւան ճանկերում զապարտող ձերուներներ կանայք ու երեխաներ, իսկ ճանապարհի երկարութիւնս մինչև եկեք տրական: կայտանը ընկած են բազմաթիւ զիակներ:

Ահա վարանիչ հիւսուցութիւնների ողբեր դարձած ներսուեան լիճը, աջ ափուսի իտնու գետնին ընկած կեանքի հետ իրենց հանդէս են մտքում մարդակերպ արարածներ ի բազմաթիւ խմբեր, իսկ լճի ձախ ափը ամբողջ փրկարութեամբ բռնած է զանազան հասակի զիակներով: զատանած և անպատան:

Իջում եմ անտառը: մի քանի քայլի վրա, դէպի ձախ, աչքին է դարձնում մարդկանցին ադատութիւններով լի փայտ մէջ ընկած մի պատու կնոջ զիակի պնդող զայես ճանճերի ու միջպաների մէջ կորուծ: զիակից երեսմ է: որ նա շափազանց երկար է կտիւ մղել մահւան դէմ:

Ահա և մի սիրտ կտրատող տեսարան: մի կին ընկած է դիտնին երեք փոքրիկ երեխաներով, որոնցից մէկի զիակը դեռ նոր է ստուել իսկ ինքը: մայրը հոգեվարքի մէջ զգալով ձձկեր մանկան նուցը, բնազգօրէն աշխատում է մի կերպ դէպի ինքը քաշիլ մահւան ճանկերում: Հարչարող մեծ որդուն, որ ծածկէ նրան փայտի կտորով, բայց վայր է ընկնում ձեռքը անզպայ:

Իսկանէի առաջ շարէշարան իրար վրա են թափուել բազմաթիւ զիակներ: որոնց յցնում են «կանչկեքը» և անտառի պիտուր ծանուղիով վերև քշում: Հետևում եմ այդ զիակառքերից մէկին:

Ճանապարհին անտառի աջ ու ձախ կողմերից վազվզում են և կառքի առաջը կարելով աղիողորմ խնդրում,— աղբէր ջան կանգնեցրու, իմ մօր դիակն էլ առ, իմ երեխայիս դիակն էլ բերեմ, իմ ամուսնուս դիակն էլ վերցրու,— ու այսպէս անվերջ, և մինչև անտառի ծայրը «կաշկուռ» արդէն 19 դիակ է լցւած, որոնց ծանրութեան տակ մի հատիկ ձին հազիւ է ոտները փոխում:

Համակելով անտառի ծայրը, յանկարծ, առաջս բացւում է մի դժոխային տեսարան, յիսուսի չափ մշակներ գիրեզմաններ են փորում, իսկ մի ահագին տարածութիւն պատած է 6—7 հարիւր անթաղ մեանկներով, բոլորը այլակերպւած, ուռած այն աստիճան, որ շատերի պատանն է պատուելի, շատերը նեխելի են, որգերի մէջ կորել ու գարշահոտութիւնը չորս կողմը սրփուել. բաւական է յիշել, որ հարիւրից աւելի զիակներ հինգերորդ օրն է ինչ ընկած են էջմիածնի կիդիչ արեգակի տակ անթաղ:

Երկաթէ նեարդեր են հարկաւոր հանգիստ դիակելու այդ ստակալի տեսարանը, մտնումնդ շնչելու այդ գարշահոտութիւնը, և ես շտապում եմ, որքան կարելի է, շուտ թողնել այդ ստուրոկ-ցուցիչ մահուան վայրը...

Անողոք մահը սրած մանգաղը աջ ու ձախ հնձում է մեր թշուառ փախստականների շարքերը, առանց խնայելու սեռն ու հասակը:

Գրում է էջմիածնի թղթակիցը երկու օր յետոյ նոյն «Հօրիզոն»-ի էջերում, և սպասելով նկարագրելու կարողութիւնն ու բռտերի պաշարը դիմում է թւերին, չոր ու ցամաք, բայց պերճաբօս թւերին:

Օգոստոսի	21-ին մեռել են	131 հոգի
»	22 »	168 »
»	23 »	204 »
»	24 »	234 »
»	25 »	280 »
»	26 »	268 »
»	27 »	347 »
»	28 »	357 »
»	29 »	300 »
»	30 »	314 »

Այսպիսով Էջմիածնի գաղթականութիւնը ընդամենը 10 օրում աւելց 2613 զոհ: Այսքանը միայն Էջմիածնում, իսկ Իգդիրում, Երեւանում և բազմաթիւ դիւղերում:

(Այո, հնձւեց, հնձւեց անողոք մանգաղով Վասպուրականի և այլ գաւառների փախստական ժողովուրդը անթիւ, անհաշիւ)

Միտքը կանգ առաւ, ուղեղը քարացաւ հայութեան, դաւալուկ ու յուսահատ շունչը մի վայրկեան թառեց նոյնիսկ հայ քնարի վրա և սիրոյ փոխարէն ունայնութիւն նա սկսեց երգել:

Ահա այդ օրերի մի նւագը՝ երգւած վշտոտ հայ քնարի լարերի վրա Վարսենիկ Աղասեանի շնչով դնում ենք այստեղ, իբրև հայ վշտի մեղեդին:

Շարան-շարան եկան կրկին,
Կորաքամակ, դող ի դող.
Միծաղ չ'կայ նրանց դէմքին,
Ոչ էլ ժպիտ հրկնաշող...

Ջահիլ ու ծիր, տխուր տրտում,
Արտասււում են լուռ-լուին,
Նրանց շուրթեր վիշտ են պատմում՝
Անցւոր մարդին, աշխարհին...

Հարսը կորած հարն է փնտրում,
Մայրը՝ անուշ գաւակին.
Յրկններն են անխօս մարում,
Հեռուներում անմեկին...

Միրտ է մաշում, հոգի տանջում
Այդ սև դաղթը արիւննոտ.
Էլ հիմա ես չեմ ճանաչում՝
Ոչ սիրոյ երգ, ոչ կարօտ...

ՎԵՐՁԻՆ ԽՕՍԳ

Այժմ, երբ աւարտուում է մեր ներկայ աշխատութեան տը-
պագրութիւնը, անցել է Համաերոպական, ներկայումս Համաշ-
խարհային պատերազմի սկզբնաւորութիւնից ուղիղ երեք տարի,
իսկ Վասպուրականի Մեծ Գաղթից ամբողջ երկու տարի: Տան-
կաստանի հայկական գաւառները մեծ մասով փնում են թափուր,
ամայի, աւերակների կոյտեր, իսկ գաղթականութիւնը աւելի
քան 200,000 շունչ գտնուում է կովկասում, տարագիր վիճակի
մէջ, աչքերը յառած իր ծննդավայրին:

Գաւառութեան մէջ նմանը չունեցող պատերազմը մօտենում
է իր վախճանին: Մօտենում է իր վախճանին սոսկումների այս
պատերազմը մի մխիթարիչ նշանաբանով—միապետական կար-
գերի խորտակման, աշխատաւոր դասակարգերի ազատագրման
ու ճնշած ժողովուրդների ինքնաօրոշման մեծ նշանաբանով:

Եւ թւում է, որ հետու չէ այն օրը, երբ քշւած ու տարա-
գիր հայութիւնը պիտի դառնա իր ծննդավայրը, երբ աւերակ-
ների միջից պիտի ծագի մի նոր կեանք ազատ ու անկախ, որը
բերելու է բազմատանջ ցեղին խաղաղ կուլտուրական մի շրջան:

Այս յոյսով, ահա, լոյս ենք հանում սոսկումների, միաժա-
մանակ հերոսական ակտերի հայ ցեղի պատմութեան այս նոր
էջը, որը թերևս կազմելու է նրա տոռապանքների վերջին դրւագը:

Մեր ներկայ աշխատութիւնը, որ լոյս է տեսնում Ռուսա-
կան Մեծ Յեղափոխութիւնից յետոյ, մամուլի լիակատար ազա-
տութեան ներկայ օրերում, գրւած էր մէկ տարի առաջ և տը-
պագրութեան յանձնած նախքան Ռուսական Մեծ Յեղափո-
խութիւնը:

Այդ պատճառով շատ մտքեր մեր այս աշխատութեան մէջ
նկատել են քօզարկւած, կրելով իրենց վրա միապետական ընթացի-
մի կաշկանդող պայմանների կնիքը:

Իր կնիքն է թողել մեր աշխատութեան վրա նաև Համաշ-
խարհային պատերազմը իր հետևանքներով:

Հրատարակութիւնը սոսկալի արժէքներով հանդերձ, թողի
յատկութեամբ և տպագրութեան մաքրութեամբ չի հանդիսա-
նում այն, որը ցանկանում էինք:




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. Երկու խօսք	—	—	—	—	3
2. Փոքրիկ ծանօթութիւն Վասպուրականի	—	—	—	—	5
3. Վիճակագիր Վանի վիլայէթի հայ ժողովրդի	—	—	—	—	11
4. Նոր Թուրքիան	—	—	—	—	31
5. Համաերոպական պատերազմը	—	—	—	—	56
6. Սէֆէր-Բէրլինը կամ Զօրաժողովը	—	—	—	—	63
7. Տաճիկ կառավարութեան որոնումները	—	—	—	—	70
8. Կամաւորական շարժումը	—	—	—	—	84
9. Ռուս-տաճիկական պատերազմը	—	—	—	—	93
10. Առաջին գաղթը	—	—	—	—	107
11. Զարդերի առաջին շարքը	—	—	—	—	115
12. Դիմադրութիւններ հայերի կողմից	—	—	—	—	122
ա. Բէլուէի դէպքը	—	—	—	—	130
բ. Աթանանի դէպքը	—	—	—	—	131
գ. Դէպքերը Կարկառում	—	—	—	—	134
դ. » Ալշաւազում	—	—	—	—	136
ե. » Թիմարում	—	—	—	—	141
13. Ահաւոր դէպքերի նախընթացը	—	—	—	—	146
14. Ահաւոր ջարդերը	—	—	—	—	161
15. Դիմադրութիւնները ահաւոր ջարդերի ժամանակ	—	—	—	—	191
ա. Դիմադրութիւնները Արճակում	—	—	—	—	192
բ. » Հայոց-Չորում	—	—	—	—	197
գ. » Թիմարում	—	—	—	—	208
դ. » Վարազի շուրջը	—	—	—	—	216
16. Վանի հերոսամարտը	—	—	—	—	221
17. Հերոսամարտը Այդեստանում	—	—	—	—	237
18. » Քաղաքում	—	—	—	—	261
19. Շատախի հերոսամարտը	—	—	—	—	365
20. Կոնիւնները Փեսանդաշում	—	—	—	—	404
21. Վանի ժամանակաւոր Հայկական Կառավարութիւնը	—	—	—	—	436
22. Ժամանակաւոր Հայ Կառավարութեան բիւզժէն	—	—	—	—	452
23. Վասպուրականի մեծ գաղթը	—	—	—	—	465
24. Վերջին խօսք	—	—	—	—	487

Վ Ա Մ Պ Պ Ո Ւ Ր Ա Կ Ա Ն Ը







1670

2013

